Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԱՍՍԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ



ՍԱՄԱԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ

ՆԱՏԱՇԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ

ՄԱՍ 1

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2017

ՀՏԴ 821.19-94Պողոսյան
ԳՄԴ 84(5Հ)-4
Պ 797

Գիրքը հրատարակվում է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորությամբ

Նվիրում եմ մանկավարժ դստերս՝ Սոֆյա Պետրոսյանին

Պողոսյան Նատաշա
Պ 797 Մանկավարժի օրագիր/ Ն. Պողոսյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2017. Մաս 1.- 456 էջ:

Արցախի Հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի «Մանկավարժի օրագիր» գիրքը արտացոլում է նրա՝ աշակերտների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքի ամբողջական նկարագիրը: Ուսուցչուհին ժամերի ու օրերի միջով կերտած օրագրի մեջ փորձել է լուծել, կանխել ժամանակի արժեքների անտեսման, աշակերտների ինքնաորոնման և ինքնադրսևորման խնդիրը, կյանքի ու գոյության իմաստը: Գեղարվեստական զարգացման տրամաբանությամբ են կառուցված օրագրի բոլոր ստեղծագործությունները, որոնցում կան մտավորականի մտահոգությունից ծնված հարցադրումներ, որոնք նրա հմուտ գրչով հետաքրքիր լուծումներ են ստանում: «Մանկավարժի օրագրի» բովանդակությունը կարելի է համարել այժմեական, ամբողջական, հետաքրքիր, իսկ երբեմն նաև սպառիչ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու գործում: Գիրքը հասցեագրվում է ոչ միայն դպրոցի մանկավարժներին ու աշակերտներին, այլև՝ ծնողներին և ընթերցասերների լայն շրջանակներին:

ՀՏԴ 821.19-94Պողոսյան
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-9939-1-0603-8
. Նատաշա Պողոսյան, 2017

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ. «ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳՐԻՆ» ՀԸՆԹԱՑՍ

Ասում են՝ բոլոր ճանապարհները տանում են դեպի դպրոց: Տարածության ու ժամանակի բոլոր հանգուցակետերում ծագող խնդիրները բեկվում են դպրոցի և ուսուցչի աշխատանքի միջով: Եթե դիվանագիտության ու քաղաքականության մեջ հաղթանակներ են կերտվում, եթե սահմանում կանգնած զինվորը հաղթել է, եթե տնտեսությունը շահեկան վիճակում է, եթե մշակույթը տեսակ է պահպանում, ուրեմն դպրոցի ուսուցիչը հաղթել է: Ժամանակը, դրանից ածանցվող դեպքերն ու իրադարձությունները բեկվում են մանկավարժի մասնագիտության, համոզմունքների ու աշխարհայացքի, նրա գործունեության արդյունքների՝ աշակերտների բոլոր ստեղծագործությունների միջով և դառնում մանկավարժի օրագիր:

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Նատաշա Պողոսյանը վաղուց հասցրել է նվաճել Արցախի, ինչու չէ, նաև հայկական ուսուցչական հանրույթի սերն ու հարգանքը: Ընթերցողներն արդեն ծանոթ են նրա «Ուսուցչի իմ թղթապանակը» ուսումնամեթոդական ձեռնարկին, իսկ այսօր, հիրավի, ուախությամբ կարող ենք խոսել նրա ստեղծագործական եռանդուն աշխատանքի պտուղը դարձած ևս մեկ աշխատանքի՝ «Մանկավարժի օրագրի» մասին, որը յուրօրինակ ու եզակի է իր ձևի ու բովանդակության մեջ:

Ակնառու է ուսուցչուհու գեղարվեստական խոսքի բովանդակային կառույցի ինքնությունը, որի հասունացումը երևում է նրա մանկավարժական գործունեության ստեղծագործական աշխատանքին զուգընթաց: Ուշագրավ է թերևս այն, որ մանկավարժը սոսկ կրթադաստիարակչական աշխատանք իրականացնող չէ: Նա հասարակական ակտիվ կենսադիրք ունեցող մտավորական է, որը բնավ չի մեկուսանում հանրային նշանակության խնդիրներից: Ավելին՝ նա դրանց յուրատիպ լուծման մասնակիցն է դարձնում նաև աշակերտներին:

Նրա գեղարվեստական մտահղացումների ու ստեղծագործելու ջանքերը հանրայինից վեր են ածվում ազգայինի՝ արտածելով մարդկային հոգու խորքային բոլոր ճշմարտությունները: Սա է մանկավարժի գեղարվեստական խոսքի օրինաչափությունը: Փնտրել ու գտնել ճշմարիտը ամենուր, ամեն տեղ՝ դպրոցում, բակում, աշակերտների ու գործընկերների, փողոցում քայլող մարդկանց մեջ ու նաև՝ անդին: Ու նրա

ներքին խոսքի պայքարը հանգեցնում է ցանկալի իրողությունների. նրա բոլոր աշակերտներն էլ զինվորագրվելուն պատրաստ հայրենասերներ են: Սա պայքարի օրագիր է՝ միտված հայեցողականության, կրավորականության ու անտարբերության համընդհանուր դարձած ախտին: Այստեղ կա համընդհանուր բարոյական սկզբունքների պահպանման գաղափարը, որը բնորոշ է ուսուցչուհու հումանիստական ըմբռնմանն ու աշխարհընկալմանը:

Ուսուցչուհին ժամերի ու օրերի միջով կերտած օրագրի մեջ փորձում է լուծել, կանխել ժամանակի արժեքների անտեսման, աշակերտների ինքնաորոնման և ինքնադրսևորման խնդիրը, կյանքի ու գոյության իմաստը: Գեղարվեստական զարգացման տրամաբանությամբ են կառուցված օրագրի բոլոր ստեղծագործությունները, որոնցում կան մտավորականի մտահոգությունից ծնված հարցադրումներ, որոնք նրա հմուտ գրչով հետաքրքիր լուծումներ են ստանում:

Պետք է նաև արժանին մատուցել Լոս Անջելոսի «USArmenianews.com» լրատվական կայքին, որի «Մանկավարժի անկյուն» խորագիրը դարձել է ուսուցչուհու ինքնաարտահայտման հարթակը: Լեզվական միջոցների ընտրության գեղագիտական նրբանկատությամբ նա կառուցել է օրագրի բոլոր էջերը: Եվ դա հաջողվել է նրան իր հարուստ ու զգայական մեծ ներաշխարհ ունենալու միջոցով: Ուսուցչուհին մանկավարժի հմտությամբ խթանում է իր սաների հետաքրքրությունը՝ բարձրացնելով նրանց բանականության ու բարոյականության սանդուղքներով: Նրան հաջողվում է աշակերտների մտքում ու հոգում վառ պահել կատարելության հասնելու կրակը: Մանկավարժական ոգևորություն ու էնտուզիազմ, խորը մարդասիրություն ու ալտրուիզմ, հոգևոր արժեքներ... Թերևս սա է ուսուցչուհու ասելիքի հոգեբանական խորքը, ինքնաճանաչման ու ինքնահաստատման, հոգևոր դիլեմայի հանգրվանը: Համոզված ենք, որ «Մանկավարժի օրագիրը» տաղանդավոր ուսուցչուհու ստեղծագործական աշխատանքի հերթական արդյունքն է, և որ նա բոլորին կշարունակի հաճելիորեն զարմացնել իր մտքի ու երևակայության փայլատակումներով:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԼՂՀ ԿԳՍ նախարարության մասնագիտական
կրթության և գիտության բաժնի վարիչ

03.09.2015

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



Մանկավարժիս մտորումները սերնդափոխության ու մեր անցնելիք ճանապարհի մասին են: Զրույցս դստերս՝ Սոֆյա Պետրոսյանի հետ է, ով նույնպես մանկավարժ է՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի, Մարտակերտից ոչ այնքան հեռու Կարմիրավան գյուղի հիմնական դպրոցում:

Թոռնիկիս՝ Նարեկի նկարներն ենք նայում, բայց նաև խոսքս յուրաքանչյուր ուսումնական հաստատություն մտնող մանկավարժի մասին է, ով դպրոց է մտնում առանձնակի պարտավորվածությամբ, որ պիտի իր նվիրական աշխատանքով մի նոր եռանդ ու ջերմություն փոխանցի սերնդին ու սրբորեն իրականացնի նրանց կրթության ու դաստիարակության դժվարին գործը:

Ամեն տարի բազում բարեմաղթանքների ներքո մեզ համար սկսվում է ուսումնական մի նոր հույսերով լի տարի, և հավատացած ենք լինում, որ այդ տարին էլ հագեցած կլինի մեծ հաջողություններով: Թերևս դա այն է, ինչ ուզում է լսել ուսումնական հաստատություն մտնող յուրաքանչյուր անհատականություն: Ամեն անգամ ուսումնական տարվա սկզբին սրտի թրթիռներով են դպրոց հաճախում առաջին դասարանցիները, և այդ փոքրիկներից ամեն մեկը մի պատմություն է դառնում ուսումնառության երկարուձիգ տարիներին ու ավարտում դպրոցը՝ հպարտության զգացման հետ մի անսովոր թախիծ թողնելով մեր հուշերում:

Ամեն սերունդ ոսկեղենիկ հայերենն է հնչեցնում բարության ու վեհ զգացումների երանգներով, և հրաշք է դառնում նրանց շուրթերից հնչող հյութեղ խոսքը, որ հնչում է որպես հայրենի հող, սուրբ օջախ, հազարագանձ մասունք, կյանքի պատմություն: Եվ ամենուր, որպես մեր գոյությունն իմաստավորող հավերժության խորհուրդ, դասարանից դասարան փոխադրվող մեր դպրոցականների սերնդափոխության ճանապարհն է շողարձակում:

30.09.2015

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՈԳԵՂԵՆ ԶԳԱՑՈՒՄ

«Երազանքս է՝ դառնալ դիպուկահարուհի, լրացնել հայոց բանակի շարքերը»:

Զարմանքը պատեց ինձ, քարացած նայեցի նրան, իսկ 11-րդ դասարանի իմ աշակերտուհին հանգիստ ավելացրեց. «**Գուցե արտասովոր է, բայց մի երազանք է, որի համար պատրաստ եմ ամեն ինչի: Դեռ մանկուց սեր եմ ունեցել դեպի զինվորական համազգեստը, բայց երբևէ չեմ պատկերացրել, որ առիթ կունենամ այն հագնել: Մի անգամ փորձել եմ... Երբ այն կրում ես, կարծես ներսումդ մի ուրիշ աշխարհ է բացվում, այդ պահին մտովի տեղափոխվում ես սահմանագիծ...Կամ գուցե երազանքիս պատճառն այն է, որ մեծացել եմ զինվորականի՞ ընտանիքում, չգիտեմ»:**

Այդ բարեհամբույր, մեղմիկ ժպիտը դեմքին բարակիրան աղջիկը միանգամից կերպարանափոխվեց իմ աչքին, իսկ անսովոր այդ «դիպուկահարուհի» բառն ինքնին փոխեց իր իմաստը: Երևում էր, որ դասարանի մյուս աշակերտների համար դա նորություն չէր, իսկ ես սևեռուն աչքերով նայում և անհագ կարոտով ուզում էի լսել նրան. «**Արցախ եկած հատուկջոկատայինների շարքում զինվորական համազգեստով կանգնած աղջիկն էր երազանքիս պատճառը, հենց որ նրան տեսա, ընդամենը մի քանի րոպե. որոշված էր արդեն: Իսկ երբ ամեն անգամ լսում եմ զոհերի ու վիրավորների մասին, թեկուզ չեմ ճանաչում, սիրտս կտոր-կտոր է լինում: Ճիշտ է, հիմա չեմ կարող զինվորի նման զենք բռնել և կանգնել սահմանում, բայց այստեղ ամեն օր աղոթում եմ նրանց համար: Երազանքս է դա, որի համար պատրաստ եմ ամեն ինչի, և թող սրանք զուր խոսքեր չթվան.»:**

Դասաժամին զգացի, որ իմ առջև մի նոր կերպար էր կանգնած, բայց ոչ գեղարվեստական, սա իրական էր, որը հիացրեց ինձ՝ հոգու կատարյալ մաքրությամբ, բնավորության գեղեցկությամբ, աղջկական հմայքով և կշռադատվող բանականությամբ: Հասկացա՞վ նա ինձ, չգիտեմ, բայց հուսով եմ, որ այս տողերը կկարդա ու կգտնի իրեն, դիտավորյալ անունը չեմ գրում: Խոսքերն ավելորդ են՝ բացատրելու, թե որքանով եմ հպարտ մեր դպրոցի այդ աշակերտուհու հայրենասիրական պարտքի գիտակցությամբ, որն այդ դասաժամին նա վեր բարձրացրեց ու հասցրեց մինչ հոգեկան կերտվածքի: Նրա հայրենասիրությունն զգալ ու շոշափել կարելի էր, որովհետև ոգեղեն էր ու եզակի:

http://www.dzaynhayoc.com

09.10.2015

ԾՈՎԱՀԵՆՆԵՐՆ ԱՐՅՈՒՆ ԵՆ ԹԱՓԵԼ ԳԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ԻՍԿ ԵՍ՝ ԱՌԱՆՑ ԱՐՅՈՒՆ ԹԱՓԵԼՈՒ, ԳՏԵԼ ԵՄ ԻՄ ԳԱՆՁԻՆ

11-րդ հումանիտար դասարանում հանկարծակիի եկա իմ աշակերտուհու առաջարկությունից. «**Տիկի՛ն Պողոսյան, մի վերնագիր ասե՛ք, խնդրում եմ, ուզում եմ իմ մտքերը շարադրել**»: Զարմացա, Թումանյանի «Անուշը» տեսնես առնչություն ունի՞ իմ աշակերտուհու հոգում տեղի ունեցող տեղաշարժերին: Հիշեցի նաև, որ երեկ նա հայոց լեզվի դասին անպատրաստ էր եկել, պատճառը իմանալու իմ հարցումի պատասխանը նրա աչքերից թափվող անխոս արցունքներն էին: Միայն հարցրի. «**Դու այսօր նորի՞ց հուզված ես, կարծում եմ քեզ հետ ինչ-որ բան է կատարվում, քեզ կարո՞ղ եմ օգնել**»:

Հաստատակամ գլուխն օրորեց՝ ի համաձայնություն իմ խոսքերի, ապա նորից ավելացրեց՝ ուզում եմ գրել, ուղղակի վերնագիրը չգիտեմ: Պահի տակ, ինձանից անկախ ծնվեց վերնագիրը. «**Ես հոգու խաղաղություն եմ ուզում**»: Չնայած դասարանը շնչում էր Անուշի տողերով ու իմ աշակերտուհիներից մեկի՝ երգի մեղմ հնչյուններով, մտովի ես նրա ձեռքի՝ գրչի շարժումների հետ էի...

Զանգը հնչեց, մոտեցավ և ինձ հանձնեց շարադրանքը. «**Հոգիս տառապում է, սակայն այլևս արցունք չկա թափելու: Երբեմն ինձ թվում է, որ ես գժվում եմ և կուչ եմ գալիս մի անկյունում ու սկսում դողալ: Հոգիս խաղաղություն է ուզում, ես ուզում եմ ապրել, բայց տառապում եմ սիրո լաբիրինթոսում: Ես հպարտ եմ, որ նա հսկում է սահմանը, որպեսզի ես հանգիստ քնեմ: Սակայն ես գիշերները չեմ քնում, ամեն պահ լսում եմ նրա խոսքերը. «Հին ժամանակներում ծովահենները կռվել են ու արյուն թափել գանձերի համար, իսկ ես առանց կռվելու և առանց արյուն թափելու՝ գտել եմ իմ գանձին»: Ես ու նա այնքա՜ն մոտ ենք իրար և այնքա՜ն հեռու, որ նույնիսկ բան չեմ հասկանում, միայն գիտեմ, որ ես զօրուգիշեր նրա համար աղոթում եմ**»:

Դասից հետո մենք երկուսով մնացինք, նա հուզված խոսում էր, հոգում ծնված սիրո անհանգիստ ապրումները դրոշմվել էին դեմքին, այլևս այն աշխուժությունը չկար այսքան տարիների իմ ճանաչած աշակերտուհու մոտ: Մենք բաժանվեցինք, բայց երկուսս էլ հասկացանք,

որ միմյանց ասելիք ունենք դեռ... Նաև հասկացանք, որ երբեմն խոսքերի կարոտ ենք զգում, խոսքեր, որ կարող են սպեղանի դառնալ սրտի անհանգիստ տրոփյուններին:

Սահմանի մոտ կանգնած զինվորին թև է տալիս սիրո զգացողությունը, հենց այդ համոզմունքով էլ այս թեման դարձրի հանրային՝ համոզված, որ սիրելն էլ արվեստ է, մարդուն տրված ամենամեծ հրաշքը, որով վեր է հանվում աստվածային վեհն ու կատարյալը: Թո՛ղ այս գեղեցիկ զգացողությունը նաև այս հրատարակությամբ ամենուր իր թևերը փռի, որ իր հետ բերում է ազնվություն, բարություն, նվիրվածություն և այլ հրաշալի որակներ:

http://karabakh-life.am

20.10.2015

ՄԱՅՐԸ ՀԱՐՑՆՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ԳՐԵՄ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՏՂԱՅԻՍ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻՆ

2015թ.-ի ապրիլի 7-ին հակառակորդի գնդակից զոհվել էր զինծառայող, 1995թ. ծնված Լևոն Մուշեղի Միրզոյանը: Նախագահ Բակո Սահակյանն ապրիլի 8-ին ստորագրել էր հրամանագիր, համաձայն որի՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս՝ ցուցաբերած արիության համար, ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի զինծառայող Լևոն Միրզոյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Նա Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ էր, այն դպրոցի, որտեղ դասավանդում եմ հայոց լեզու և գրականություն: Ամեն անգամ մեծագույն հուզմունքով եմ գրում Լևոնի մասին: Կորստյան ցավը մի նոր կսկիծով արձագանք տվեց հոգումս նրա մայրիկի հետ մեր այս հանդիպման ժամանակ: Նրան ճանապարհելուց հետո հոգուս ալեբախությունը շարադրեցի՝ որպես ամոքում զինվոր կորցրած մոր տառապանքին: **«Լևո՛ն, սիրելի՛ս, մայրիկիդ հետ վաղուց նախատեսված մեր հանդիպումը կայացավ: Անխոս գրկախառնվեցինք, սիրտս ճաք տվեց ցավից, ուզում էի գլուխս խոնարհել քո նման զինվոր կորցրած այդ չքնաղ գեղեցկությամբ, ցավից առնական դարձած, արցունքախառն աչքերով կնոջ առջև: Գիտե՞ս, ես չգիտեի, որ տարիներ առաջ՝ դեռ մինչև Արցախյան պատերազմը, իմ առջև նստած այն սիրուն, նիհարիկ աղջնակը, որին հիշեցի, հիմա իմ առջև նստած քո մայրիկն է, ում դասավանդել էի: Նա թախծոտ պատմում էր քո մասին, հիշողությո՛ւն դարձած իմ հերոս...**

Քեզ սիրում էին բոլորը, ընկերներդ՝ առավել, ժպիտդ գերել էր շատերին, բայց գովեստը քեզ համար չէր, համեստությունը քողարկում էր քեզ, պարտքի գիտակցությունը՝ պարտավորեցնում:

«Մի վերջին անգամ տեսել եմ զինվոր որդուս պատահական՝ մայ-

բաքաղաք տանող ճանապարհին, երբ զինվորական մեքենայում էր՝ իր զինվոր ընկերների հետ: Դիրքեր գնացող որդուս տեսնելով՝ թպրտացող սրտով վազել եմ մեքենայի հետևից, ձեռքերս թափահարել...Հետո արտասվել եմ, դա իմ վերջին հանդիպումն էր նրա հետ: Դեպքից ամիս առաջ էր»:

Արցունքները խեղդում են նրան, հազիվ զսպելով հեկեկոցը՝ նա պատմեց ինձ այն տառապալից վերջին օրվա մասին, այն օրվա, երբ բոլորս Գեղեցկության տոն էինք նշում:

«Այդ օրը նա կեսօրին զանգեց, բոլորի մասին հարցումներ էր անում, շնորհավորեց իմ և քրոջ Ապրիլի 7-ը, ժամեր անց լսեցինք բոթաբեր լուրը»:

Ամեն բառ արցունքով էր շաղախված, իսկ ես, լսողություն դարձած, հետևում էի նրա ամեն մի խոսքին, բայց մտովի քեզ հետ էի: Գիտե՞ս, Լևո՛ն, մայրիկիդ խոստացա՝ կատարել նրա խնդրանքը՝ ընդամենը մի քանի տող, իսկ մայրդ ուզում է, որ դու խոսես աշխարհի հետ, քո չասված խոսքերն ասես մի վերջին անգամ, որպեսզի դրանք էլ գրվեն գերեզմանաքարիդ»:

http://hraparak.am

22.10.2015

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ՝ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՍԱԿՐԱՄԵՆՏՈ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ «ՄՌԱՎ ՍԱՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ

Հարգարժա՛ն Սվետլանա Ղուլյան, այս կայքի՝ ինձ շատ մտերիմ դարձած ընկերների մի մասը օտար ափերում ապրող իմ հարազատներն են և մեր այն հայրենակիցները, ովքեր այս կամ այն պատճառով հայտնվել են հեռավոր եզերքներում: Ես գիտեմ կարոտի գինը, քանի որ Արցախյան պատերազմի տարիներին իմ ընտանիքն էլ հանգրվանել էր հեռավոր ափերում, բայց հայրենիքի կարոտը սուր էր և ընտանեկան խմբանկարից պակասած իմ հարազատների երեք շիրիմներ պահ տվի այնտեղ ու տարիներ առաջ վերադարձա իմ հայրենի հողը՝ ինչ-որ չափով այստեղ օգտակար լինելու ակնկալիքով:

Երբ տեսա այս կայքում հայրենի Շահումյանով օտարության մեջ հոգեպես տառապող հայուհուդ, օրեր առաջ մեր շրջանային թերթում հրատարակված իմ հոդվածն ուղարկեցի Ձեզ: Խոսքս Ձեր հայրենակից նահատակ ազատամարտիկի ու նրա որդու մասին էր, այն մասին, որ մեր օրերում դժվար է ուսուցիչներիս գործը, երբ դասավանդում ենք հայրիկներ կորցրած երեխաներին:

Գնահատանքի է արժանի Ձեր ազգանվեր գործը օտար ափերում, երբ այդտեղ հայ խոսքն եք կարողանում հնչեցնել, իսկ ես՝ Արցախի ուսուցչուհիս, հոգուս խորքում երախտապարտ եմ Ձեզ, որ իմ ուղարկած հոդվածն արժանացել է Ձեր ուշադրությանը՝ հայերեն հնչողությամբ Ձեր թերթում հրատարակելու համար, չնայած այն Ձեզ էլ հուզել է իր բովանդակությամբ: Թող կորսված հայրենիքի վերհուշը միշտ ապրեցնի Ձեզ, ու մեր բոլորի կարոտը գրկած՝ հայկական շունչը թևածի ամենուր:

Նատաշա Պողոսյան

Վերջերս ֆեյսբուք-ով մի շատ հուզիչ նամակ ստացա: Հեղինակը Արցախի հայոց լեզվի և գրականության վաստակավոր ուսուցչուհի Նատաշա Պողոսյանն էր: Արցունքախառը բարձրաձայն կարդացի իմ ընտանիքի անդամների համար, ներկայացնում եմ ձեզ և կարծում եմ շատ համապատասխան հոդված է իմ «Մռավ սար» թերթում տպագրելու համար:

Սվետլանա Ղուլյան

ԱՅԼԵՎՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԻՄ ԱՌՋԵՎ ՆՍՏԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԱՅՐԻԿՆԵՐ ԿՈՐՑՆԵՆ

Այդ օրը սահմանին շատ մոտիկ օրը շնչում էր բնությամբ, իսկ ես գյուղական այդ թարմ բնության գրկում ոտնահետքերն էի փնտրում նրա… Իմ վեցերորդ դասարանի սանիկի նահատակված հայրիկի՝ Դավիթ Պետրոսյանի հարազատ գյուղում էի…Դասարանում խոստացել էի բոլորին, որ Գևորգի մայրիկի և մյուս հարազատների հետ կգնամ այնտեղ, ծաղիկներ կխոնարհեմ նրա հուշաքարին, կպատմեմ որդու մասին, հավերժության ճանապարհը կավետեմ և կշնորհավորեմ ազատամարտիկ հերոսի 45-ամյա տարելիցը:

Տոնաշե՛ն, գուցե նաև՝ Եղնիկնե՛ր, զարմանահրաշ բնության գեղեցկությամբ օծված մի գյուղ, սահմանին շատ մոտ, բարձունքի վրա է թառած ու գիշերուզօր հսկում է այդտեղ ապրող պարզ ու շիտակ մարդկանց անդորրը, որ ամեն պահ կարող է խաթարվել: Այդ անապական բնաշխարհի մարդկանց հոգու գեղեցկությունների ու լուռ ողբերգությունների պատմությունները միահյուսվում են իրար: Այստեղ մարդու և բնության կապը կարծես մի նոր ինքնավար աշխարհի հավերժության դաշինքն է ամրագրում, ու ժամեր տևող իմ ներկայությամբ դառնում եմ հյուլեն այդ ուրույն աշխարհի: Սահմանին շատ մոտիկ, և մարդիկ ապրում են բնությամբ, ժամանակն էլ հավերժական է այնտեղ, և ես էլ դառնում եմ բնության հավերժական հոլովույթի մի մասնիկը և զգում, որ վախենալու բան չկա, երբ ապրում ես սահմանին շատ մոտիկ:

Ասելիք ունեի հոգումս, որ պիտի կուտակվեր, ու օրեր անց նվիրյալ ազատամարտիկի տարելիցին նվիրված իմ միջոցառմանը՝ հանդիսատեսի հայացքի ներքո, դպրոցի դահլիճում այդ կուտակված հորձանքը պիտի ալիք տար, ու ինձ բարձրացներ բեմ: Երբևէ չէի մտածել այդ օրերին, որ պիտի ելույթ ունենայի: Բայց վերջին պահին հաստատակամ քայլերով

բեմ բարձրացա, որ խոսեմ, ընդամենը զրուցեմ Արցախյան ազատամարտի երկար մարտական ճանապարհ անցած, բայց մեր օրերի նահատակ հերոս Դավիթ Պետրոսյանի հետ:

Ես խոսում էի իմ սանիկի մասին, հայրիկին էի պատմում, բոլոր-բոլորին, որ օրեր առաջ դասարանում զոհված հայրիկի անունով անկյուն էինք ձևավորել, իսկ Գևորգը հայրիկի համար ծաղիկներ էր բերել՝ սև ժապավենով կապված. մոտակա ծաղկանոցից էր գնել: Հուզմունքից խեղդվում էի, հազիվ զսպեցի ինձ, որ արցունքներս աշակերտները չնկատեն...Հաջորդ օրը դասագրքում տրված առաջադրանքի համաձայն՝ տնային աշխատանք էի հանձնարարել՝ գրել որևէ գրողի՝ մորը նվիրված բանաստեղծություն: Իրար հերթ չտալով՝ համարյա բոլոր աշակերտները կարդացին տարբեր բանաստեղծություններ, բայց Գևորգը՝ այդ սակավախոս, ինքնամփոփ, թախծոտ հայացքով իմ սանիկը, ձայն չէր հանում: Կողքին նստած աշակերտուհին ասաց, որ նա իր հայրիկի մասին է գրել: Փորձեց կարդալ, բոլորս լսողություն դարձած՝ սպասում էինք, միայն առաջին տողը հազիվ լսելի եղավ մեզ, ապա լռեց: Մոտեցա նրան, գլուխն օրորեց՝ ի համաձայնություն իմ առաջարկությանը՝ գուցե ե՞ս կարդամ: Շարադրանքը վերնագիր ուներ, կարդացի՝ «Հայրս», մի պահ կանգ առա, ապա շարունակեցի...Դասարանի քար լռությունը հանկարծ ճեղքվեց թղթին հանձնված նրա տողերով. «Չգիտեմ ինչու, բայց ես միշտ ուզում եմ հայրիկիս մասին գրել, երևի դա նրանից է, որ նրան շատ եմ կարոտում: Հայրս ինձ համար մեծություն էր, ես նրան միշտ հիշում եմ: Երբ գալիս էր տուն, միշտ ինձ հետ խաղում էր, ես կարոտում եմ այդ խաղերը: Ինչքա՜ն կուզենայի՝ հայրս մեզ հետ լիներ: Քույրս միշտ ասում է. «Մա՛մ, պապան ե՞րբա գալու»: Ես գիտեմ, որ երբեք չի գալու, բայց չեմ կարող քրոջս ասել այդ մասին, նա դեռ շատ փոքր է, երբ մեծանա, ամեն ինչ կհասկանա»:

Անզորությունից սպառված՝ ազատություն տվեցի արցունքներիս...Այս անգամ չստացվեց, չկարողացա թաքցնել...Դասարանում հա-

մատարած տխրությունն էր իր թևերը փռել...

Թող աշխարհը մեղադրի ինձ, որ ես արտասվել եմ, ինձ հետ նաև՝ մի ամբողջ դահլիճ: Բեմ բարձրացած մանկավարժիս զրույցը ուսուցչի և աշակերտի մի նոր հարաբերության արտահայտություն էր, որ լցված էր դահլիճում գտնվող ներկաների արցունքախառն աչքերով, բեմում գտնվող իմ սանիկների զսպված հեկեկոցով: Ես արտասվում էի բեմում՝ ի տես բոլորի, չէի ամաչում իմ այդ արարքից, բայց ասելիք կար, որ կուտակվել էր հոգումս, ու նորից կերկերուն ձայնով շարունակում էի խոսքս՝ ուղղված նահատակ հերոսին…

Պատմում էի, որ օրեր առաջ մտել էի իրենց հարազատ օջախը «Եղնիկներ» կոչվող այդ հրաշալի լեռնաշխարհի գողտրիկ անկյունում, ծաղիկներ խոնարհել իր հուշաքարին, եղել այն ծառի տակ, որտեղ ինքը սիրել է նստել, բայց երբ սեղանի շուրջն եմ նստել նրանց օջախի, փնտրող աչքերս չեն կարողացել գտնել իմ թախծոտ սանիկին, որ չգիտես ամաչելուց, գուցե նաև հայրիկի բացակայությունից չուզեց երևալ սեղանի շուրջ: Մեզ համար մեծություն դարձած հայրիկին բեմից հայտնում էի, որ իր արտացոլանքը միշտ տեսնում եմ նրա որդու տխրամած հայացքում, և որքան ծանր է ուսուցչիս գործը հայրիկ կորցրած երեխայի հետ...

Պատերազմ հրահրող և գայլի ախորժակով մեր ոխերիմ թշնամիները երբեք դա չեն հասկանա, իսկ ես ուզում էի աղաղակել ամբողջ աշխարհով մեկ, որ այլևս չենք ուզում մեր առջև նստած երեխաները հայրիկներ կորցնեն...

Մարտակերտ, «Ջրաբերդ», 16-31 հոկտեմբեր, 2015
Կալիֆորնիա, ք. Սակրամենտո, «Մռավ սար»,
հունվար, 2016, թիվ 1 /23/

09.11.2015

ԲԱՅՑ ՉԷ՞ ՈՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ

Աշնանային մեկշաբաթյա արձակուրդից հետո դպրոցական կյանքը վերսկսվեց: Նորից անակնկալներ, դպրոցականի մի նոր մոտեցում դասագործընթացին, որը պիտի ուսուցչիս կանգնեցներ նորօրյա աշակերտության նորովի տեսակետներին դեմ առ դեմ: Առաջին դասաժամին մտա 12-րդ դասարան: Մեծ էր հիասթափությունս, երբ շատերը դասին անպատրաստ էին ներկայացել: Դասաժամը վերջացավ՝ այդ դասարանի դասղեկին հրավիրելով դասարան և նրանց նախատելով:

Հաջորդ դասը 11-րդ դասարանում էր: Մտածում էի՝ գոնե այստեղ գոհ կլինեմ, սովորաբար այս դասարանի աշակերտներից ոմանք նույնիսկ վիրավորվում են, եթե այդ օրը չեմ հասցնում նրանց դաս հարցնել: Ավելի մեծ հիասթափություն ապրեցի, երբ նույնիսկ լավ սովորող աշակերտները միանգամից հրաժարվեցին, որ դասը չեն սովորել: Իմ հարցին. «**Սա ի՞նչ է նշանակում, 12-րդ դասարանում էլ այս նույն պատկերն էր»,** գրատախտակի մոտ կանգնած աշակերտն ինձ արձագանքեց. «**Տիկի՛ն Պողոսյան, բայց չէ՞ որ դպրոցական արձակուրդները հանգստանալու համար են, չնայած ես սովորել եմ դասը»:**

Երբևէ մտքովս չէր անցնի նման մեկնաբանություն, այդ պահին հոդս ցնդեցին իմ՝ մինչ այդ ասված խոսքերն իրենց նշանակությամբ, թե ինչու այս հանգստյան օրերին չեն սովորել դասանյութը:

Հաջորդ դասաժամին մտա 7-րդ դասարան: Մեծամասամբ տղաները կանգնեցին ու միանգամից ասացին, որ չեն կատարել տնային հանձնարարությունը: Հարցնում եմ պատճառը, բոլորը լուռ են... Ես եմ խախտում լռությունը. «**Եթե իմ փոխարեն դուք լինեիք, ինչպե՞ս կվարվեիք նման դեպքում»:**

Շատ թույլ կարողությունների տեր իմ աշակերտներից մեկի ձայնն եմ հանկարծ լսում. «**Եթե ես լինեի Ձեր փոխարեն, տիկի՛ն Պողոսյան, մեկ անգամ էլ հնարավորություն կտայի...»:**

Զարմացած նայում եմ նրան, ավելի շատ նա ինձ հանկարծակիի է բերում իր խոսելով, որ մինչ այդ նա իր լռությամբ դասարանում տարբերվում էր մյուսներից: Անթարթ հայացքով նայում եմ նրան, երևի զգում է, որ քարացած եմ, նորից շարունակում է. «**Թեկուզ ինձ միշտ եք**

հնարավորություն տալիս, երբ հաճախակի անպատրաստ եմ ներկայանում, բայց այս անգամ էլ կարելի է...»:

Չնայած հիասթափությունս մեծ էր այսօր, բայց նրանց անկեղծ խոսքերը՝ արձակուրդներին հանգստանալու և դաս չսովորելու համար մեկ այլ հնարավորություն տալու մասին, նորից հիշեցնում են ինձ, որ մանկավարժությունը մարդու մեջ ազնիվ որակներ է դաստիարակում, և հուսադրվում եմ նրանով, որ իմ աշակերտներն ինձ չեն խաբում, ու մտովի կրկնում եմ բազմաթիվ անգամ ասված հայտնի տողերը. «Նյութը, որի մասին կխոսի ուսուցիչը, կպահանջի դերասանություն: Դերասանությունն արվեստ է, բայց խաբող է: Ուսուցչությունն էլ արվեստ է, բայց խաբող չէ»:

03.12.2015

ԻՄ ԿՅԱՆՔԻ ԱՄԵՆԱՀՐԱՇԱԼԻ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Այսօր ես ուզում եմ հիշել իմ գիտակցական կյանքի բոլոր դեկտեմբերի երեքները, և հանկարծ դրանց մեջ այս վերջինն առանձնացավ: Նորից դասարաններում աշակերտների կողմից գեղեցիկ անակնկալներ՝ բարեմաղթանքների հիանալի խոսքերով, բուրումնավետ ծաղկեփնջերով, ուսուցչուհուն նվիրված սրտահույզ երգերով: Բայց այս տարի կային այլ անակնկալներ, որ նախորդ տարիներին չկային: Դասամիջոցներին միջանցքով անցնելիս ուսուցիչների և դպրոցականների բազմաթիվ շնորհավորական խոսքեր են հնչում: Հանկարծ լսում եմ, որ արագ քայլերով ինձ մոտեցող աշակերտուհին կանչում է: Չհասցրի շրջվել, բարեմաղթանքների տարափ ու հանկարծակի գրկախառնություն: Զարմացած նայում ենք իրար՝ դեմքերիս ողողված ժպիտներով: Այդ օրը պիտի գեղեցկանար նաև իմ աշակերտներից մեկի անկեղծ խոստովանությամբ. «**Իմ պարտքն է, տիկի՛ն Պողոսյան, որ հետագայում հարստանամ, անպայման մի տուն առնեմ Ձեզ համար**»:

Ուրախ անցկացված օրս սեղանի շուրջ պիտի գեղեցկանար մեկ այլ անակնկալով: Մերթընդմերթ հանգչող էլեկտրական լույսերից անձրևի միալար կաթկթոցը մոմերից առկայծող լույսի հետ պար էր բռնել, իսկ մենք շատ ուրախ էինք: Իմ կյանքում այս տարեդարձին մեկ այլ ուրախություն կար նաև... Երբ լույսերը վառվեցին, մոտեցա համակարգչին...Սա մի հիանալի աշխարհ էր՝ լի շնորհավորական բազմաթիվ մաղթանքներով, առատ ծաղիկներով, ջերմագին խոսքերով...Եվ տեսնում եմ, որ այնքան շատ են, նույնիսկ չեմ հասցնում հիմա բոլորին պատասխանել, թողնում եմ վաղվան, նաև համոզված, որ դրա համար ոչ մեկն էլ ինձանից չի նեղանա:

Մի նոր օրվա լուսաբացի եմ սպասում սենյակիս մենության մեջ: Հրաշալի օրս վերջացել է, բայց սիրտս թրթռում է անհանգիստ սպասումներով: Սահմանից եկող կրակահերթերի ուժեղ արձագանքից պատուհանների ապակիներն են զրնգում, լապտերը ձեռքս առած՝ բացում եմ դուռը, գիշերային մթության մեջ վախվորած փորձում եմ հասկանալ, թե որտեղից են լսվում այս ահասարսուռ դոփյունները: Ապա զանգում եմ հիվանդանոց. այնտեղ բոլորն արթուն սպասում են, բայց փառք տանք, բոթաբեր լուր չկա: Փոքրիկ բնակավայրս չի քնում...Աստծուն

ուղղված աղաչանքներով սպասում ենք լուսաբացին:

Մանկավարժի աշխատանքի նկատմամբ գեղեցիկ զգացողության մի նոր դրսևորում էր օտար ափերից եկած շնորհավորանքը, որ ջերմություն բերեց ինձ և երախտագիտությամբ լցրեց հոգիս: Լոս Անջելեսի USArmenianews.com լրատվական կայքի խմբագիր Գայանեե Մանուկյանի և ամբողջ խմբագրակազմի կողմից շնորհավորական խոսքը մի հիանալի անակնկալ էր՝ մատուցած մանկավարժիս: Նման ուշադրությունը պարտավորեցնում էր ինձ մի նոր հայացքով վերանայելու իմ անցած ու անցնելիք հետագա ճանապարհը, և շատ ուրախ եմ, որ այդ ճանապարհին իմ նոր օրերի հիշողություններում կլինեն նրանք, նաև մեր բոլոր այն հայրենակիցները, ովքեր օտար ափերում կարողանում են սրբորեն պահպանել հայկական շունչն ու ոգին:

Հարգելի՛ Նատաշա Պողոսյան, Դուք յուրաքանչյուր օր պատասխանատվության մեծ գիտակցումով եք մոտենում ձեր գործին՝ մանկավարժի բարձր կոչմանը, և ձեր գիտելիքներն ամբողջությամբ նվիրում եք երեխաների կրթության և դաստիարակության սուրբ գործին:

USArmenianews.com կայքի խմբագրակազմը սրտանց շնորհավորում է Ձեզ՝ տարեդարձի առիթով՝ ցանկանալով առողջություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ Ձեր շնորհաշատ և հայրենանվեր առաքելության ճանապարհին:

Ուրախ տարեդարձ Ձեզ:

http://usarmenianews.com/am-n-129.html

12.12.2015

ԱՄԵՆ ՕՐ ԼՈՒՍԱԲԱՑՍ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՄ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՁԱՅՆՈՎ

«**Ի**մ կարծիքով թանգարանային նմուշ կդառնա մեր քաղաքը»,- 10-րդ դասարանում իմ դասի մուտքն ազդարարող այս մեկ նախադասությունը հնչեց աշակերտներից մեկի կողմից: Դեռ ուշքի չէի եկել, երբ նա ավելացրեց, որ իր տնային առաջադրանքը, թե ինչը կդառնա թանգարանային նմուշ հիսուն տարի հետո, սահմանափակվում է այդ մեկ նախադասությամբ:

Նայում եմ այդ տողին, սարսռում եմ, հարցական հայացքով, զարմանքից լայն բացված աչքերով սպասում եմ նրա մտքի հաջորդ «թռիչքին», իսկ նա շարունակում է. «**Արդեն տանկերով են գալիս մեզ վրա, ամեն օր կրակոցներ ու զոհեր, տարիներ հետո միայն կհիշվի, որ Մարտակերտ է եղել երկրի երեսին...**» (Մանասյան Սերգեյ):

Կարծես փրկություն եմ ուզում, միանգամից հայացքս շրջում եմ, նայում մյուսներին...Այն մեկը, որ շատ էր ուզում կարդալ իր գրածը, գուցե լավատեսության երանգնե՞ր կան նրա մոտ, մի փոքր հույս փայփայելով՝ առաջարկում եմ կարդալ. «**Ամեն օր վախը սրտումս լուսաբացս դիմավորում եմ կրակոցների ձայնով, իսկ մայրամուտս՝ մորս արցունքները սրբելով ու անմեղ զոհերի մահը ողբալով: Դժվար է ապրել այսպիսի պայմաններում և ունենալ այսպիսի դաժան մանկություն... Չգիտեմ՝ տարիներ հետո ինչը մոռացության կտրվի, բայց մեր թանգարաններում օր օրի ավելացող նահատակների դիմանկարները չէի ցանկանա, որ երբևէ դառնային միայն թանգարանային նմուշ, ամեն քայլափոխի նրանք պետք է հիշվեն**» (Հայրիյան Նելլի):

Նայում եմ առաջին նստարանին նստած, նաև իր ստեղծագործական մտորումներով միշտ ինձ զարմացնող աշակերտուհուն և մտածում՝ գուցե մի նոր շրջադա՞րձ կնկատեմ նրա մոտ՝ մեզանից հեռու վանելով այս հոռետեսական տրամադրությունները: Նրա վերջին տողերը

փլուզում են հույսերս. «**Եթե մարդը չկարողանա զսպել իրեն, մեր կապույտ մոլորակը ինքը կդառնա թանգարանային նմուշ կամ էլ հենց ինքը՝ մարդը, կվերանա երկրի երեսից...**» (Գրիգորյան Սեդա):

Չգիտեմ, անհանգիստ եմ, վերջին սահմանային լարված իրադարձություններ՞ն են հոգեպես ճնշել աշակերտներիս, թե՞ երանության զգացողություն էր ծնվել ամերիկյան քոլեջներ ընդունվող դիմորդների նկատմամբ, որ նրանց կյանքը սահմանից հեռու երևի անհոգության քողով է պատված: Բայց հոգուս խորքում շնորհակալական զգացում է ծնվում հեռավոր Նյու-Յորքում ապրող ինձ շատ մտերիմ դարձած ֆեյսբուքյան կայքի՝ իմ լավագույն բարեկամուհի Գոհար Բաղալյանի նկատմամբ, որ այս վերնագիրը տրամադրեց ինձ, որով և տեղեկացա իմ աշակերտների հոգու տեղատվությանը և հասկացա, որ վաղվանից անելիք ունեմ ինձ: Չէ՞ որ հուսահատությունը մեզ համար չէ, մենք սահմանի մոտ ենք ապրում:

http://usarmenianews.com/am-n-320.html

30.12.2015

ԱՐՑԱԽԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏՈՎ ԵՆ ՏՈՆԱԾԱՌ ԶԱՐԴԱՐՈՒՄ, ԻՍԿ ԵՍ ՏԽՐՈՒՄ ԵՄ

Ամենքը սիրով սպասում են այդ օրվա հերթական հրաշքին, իսկ ես ուզում եմ այդ օրը դիմավորել անհանգիստ Արցախիս՝ իմ խաղաղ օջախում: Ուզում եմ Նոր տարում խաղաղությունը կեցության ապահով օրրան դարձնել, որ մեզանից ոչ հեռու սահմանից եկող կրակահերթերը լռեն: Սիրում եմ Ամանորի այս տոնը, ժամանակի սահմանն է այն, իսկ ես երբեմն մոռանում եմ ժամանակը, երբ սահմանամերձ բնակավայրում ապրող արցախցի ուսուցչուհիս հերթական հրետակոծության տակ սերնդին հայրենասիրության դաս է տալիս:

Արցախի երեխաները զինվորական համազգեստով են տոնածառ զարդարում, իսկ ես տխրում եմ: Լույս մանուկները տոնածառի մեջ լույսեր են փնտրում, խաղաղ օրեր...Կանաչ տերևների մեջ մի նոր ճանապարհ եմ ցույց տալիս, հրավառ մի կյանք՝ սպասումով լեցուն: Տոնածառի խաղալիքների մեջ ճերմակն են ընտրում՝ լույս-լուսավորը, երազանքների եզերքին կանգնած՝ կապույտ խաղալիքն են փնտրում, որ խաղաղ կյանքի հեքիաթը պատմեն: Նոր տարվա գալստյան օրերն են հաշվում, երազանքների ամրոց կառուցում, հնչող զանգերի ղողանջների մեջ հույսեր են փնտրում, ծիծաղկոտ օրեր: Շատ բան չեն ուզում մեր մանուկները՝ Ձմեռ պապիկից հայրենական տան հավերժությունը, տոնածառի շուրջ շուրջպարի բռնած՝ ամբողջ աշխարհից անամպ երկնքի մի փոքրիկ կտոր, անհոգ մանկություն:

Ես ի՞նչ եմ ուզում... Բարությամբ լեցուն սրտեր եմ ուզում ամբողջ աշխարհում, որ պատնեշ դառնան ու մեզ սատարեն, հայությամբ լեցուն երգեր եմ ուզում, որ կողքիս հնչեն խրոխտ ձայներով, մեծ Տոն եմ ուզում կարոտով լեցուն հայերիս համար, հայրենիք եկող քարավանների ղողանջն եմ ուզում լսելի դարձնել համայն աշխարհին…

Ամանորի գիշերը իմ տանն եմ ուզում Նոր տարին նշել, խաղաղ հարկիս տակ, որ ուրախ-զնգուն ծիծաղը հնչի, կապույտ երկինքն էլ մի նոր լուր բերի, ավետիս դառնա բոլորիս համար, Նոր տարին դառնա համայն հայության տունդարձին սպասող մի նոր տարեդարձ:

http://usarmenianews.com/am-n-567.html

31.12.2015

ԱՄԱՆՈՐԻ ԻՄ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԸ ԳՈՒՆԱՎՈՐ ԵՆ

Այդ գույների մեջ դեղինը լույսի երանգն է, ու ես ոսկեգույնը տալիս եմ ամենքին, որ ավետաբեր այս Նոր տարին բոլորի սրտերը անհոգությամբ լցնի: Մտովի կապույտ երազանքների ամրոցն եմ կառուցում ու կապույտի մեջ լուսավոր երազանքներ եմ ցանկանում ամենքիդ: Կարմիրը գրկում եմ դողով, լույս երազանքներ կան կապույտից զրկված, կարմիրով ներկված լույսեր կան մարած, հողին պահ տված կիսատված կյանքեր ու դրանց կողքին որդիների տունդարձին ապասող քաջարի մայրեր: Այդ արջնագույնը, որ սև է կոչվում, ուզում եմ հանել բոլոր գույներից, նարնջագույնն եմ սփռում ամենուր, երջանիկ կյանքի լույս-ավետաբեր, ծիրանին հագած հայրենյաց սիրո կարոտն եմ ուզում ամենքին բաշխել, օտար ափերում ապաստան գտած ազգիս սերուցքի կարոտի գույնն եմ ուզում ես ընտրել: Մոխրագույնի մեջ հարազատ եզերք կորցրած հայերի կարոտի գույնն եմ տեսնում ամենուր: Կանաչ ուղի եմ մաղթում բոլորին, զմրուխտով պատված լուսե ճանապարհ, ճերմակն եմ ուզում փռել ամենուր՝ իր սուրբ մաքրությամբ, ձյունե ծիծաղով, որ ճերմակության մեջ ամպերը ցրվեն, աստղերն առկայծեն սիրո գույներով:

Իմ գույների մեջ բարություն կա շատ, կարոտի մրմունջ, բերկրալից կյանքի սիրո ղողանջներ, անթիվ-անհամար կենսուրախ ձայներ: Շնորհավորանքներս երփներանգվում են, երբ ցանում եմ այն անսահմանության մեջ, գունեղ-գունավոր լույս-երազներ են՝ սրտանց ու անկեղծ բոլորին ուղղված:

03.01.2016

ԵՍ ԱՄԱՉՈՒՄ ԵՄ ԵՎ ՉԵՄ ԱՄԱՉՈՒՄ ԱՅՍՊԵՍ ԱՊՐԵԼՈՒՑ

ԻՆՉ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ, ԹԵ ԻՆՉԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ԱՄԱՉԵԼ:

Արցախիս խաղաղությունն եմ վայելում ու այդ անդորրության մեջ մոռանում եմ իմ մտերիմների զգուշացումները՝ երբ դուռը ծեծում են, դեռ հարցրո՛ւ, տե՛ս՝ ովքեր են: Իսկ ես երբեմն մոռանում եմ, գոնե երեկոյան ժամերին պետք է հարցնել, բայց ամաչում եմ, որ պիտի հարցնեմ: Հարևանի տուն եմ մտնում, դուռս չեմ կողպում, հավատացած եմ՝ ոչինչ չի լինի, շուտով ետ կգամ, բայց ամաչում եմ, որ ասեմ՝ դուռս բաց եմ թողել: Ամանորի շնորհավորական խոսքեր եմ լսում հեռախոսով, երբեմն չեմ կողմնորոշվում՝ ում հետ եմ խոսում, բայց ամաչում եմ, որ հանկարծ հարցնեմ: Պատահում է՝ ծանոթ դեմք եմ տեսնում, դուռը ծեծում է, խնդրանքով դիմում, ուզում եմ սպեղանի դառնալ ցավատանջ հոգուն, բայց ամաչում եմ անունը հարցնել: Եվ ես գոհ եմ իմ ամաչելուց, երբ ամաչկոտ չեմ և ոչ էլ՝ վախկոտ: Եվ ես ուրախ եմ, որ ամաչում եմ նվեր ստանալիս, ես ամաչում եմ իմ մասին ասված գովեստից անգամ, բայց չեմ ամաչում ոտքով քայլելիս: Համեստ ապրելուց ես չեմ ամաչում, չեմ էլ ամաչում արդար խոսքերից, ես չեմ ամաչում բարձր խոսելիս, երբ դիմացինս խուլ է ձևանում, չեմ էլ ամաչում արդար խոսքերից, երբ գիտեմ՝ ճիշտ եմ: Ու ճիշտը գրկած ապրում եմ այսպես, պետք եղած դեպքում բարձրաձայնում եմ, որ ինձ չխաբեն, ես չեմ ամաչում իմ ըմբոստ ոգուց, բայց ամաչում եմ զազիր խոսքերից, իմ կողքին հնչող հերյուրանքներից...Ես ո՞վ եմ, մի մարդ, որ ամաչում եմ և չեմ ամաչում այսպես ապրելուց...

http://usarmenianews.com/am-n-600.html

07.01.2016

ԱՄՈՒՐ ԳՐԿՈՒՄ ԵՄ ՕՐԵՐԸ ԽԱՂԱՂ

Ռոպեներ առաջ թոռնիկս խաղալիք զենքը ինձ է հանձնում, երեխաները «պատերազմ» չեն ուզում խաղալ, բայց զինվորական համազգեստը չի ուզում փոխել, այդպես իրեն ազատ է զգում: Երկիրս հանգիստ է, կրակոցներ չեն լսվում հեռվից, Արցախի երեխաները չեն ուզում նորից «զենքեր» վերցնել, ու այսպես հանգիստ երգով ու պարով ապրել են ուզում:

Այս ձմռան օրն էլ արևոտ է, երկինքը՝ կապույտ, իսկ ես հանգիստ եմ, երանության մեջ օրս եմ վայելում: Օրեր ենք ուզում՝ ազատ, անխռով, օրերն ուզում ենք ամիսներ դառնան, գլորվեն այսպես տարիների մեջ, ու տարին այսպես գեղեցիկ դառնա: Մեր անցած տարին ժամով ենք ապրել, ժամեր գլորել, օրով ենք ապրել, երբ օրը օրի ամիս է դարձել, մեզ թափ ենք տվել, ուրախ զգացել, որ կանք, ապրում ենք, այս օրն էլ անցավ ու ամիս դարձավ...Ու ամիս ամսի մեզ հույս ենք տվել, որ տարին կգա, բարին էլ հետը, ու եկավ տարին...Եկավ, որ ապրենք, ու ապրում ենք մենք արդեն քանի օր...

Ապրել ենք ուզում, հենց այսպես ապրել, որ կարողանանք միմյանց ողջունել, սիրառատ հոգով օրը վայելել...

Լուսավոր օրս գրկում եմ հանկարծ, վաղը մեկ ուրիշ օր էլ կգրկեմ, ամուր կպահեմ օրերը խաղաղ, որ ամիս դառնան, ապրած ամիսը նոր կյանք կդառնա, երեսը քողով կծածկեմ հանկարծ, ես բաց չեմ թողնի անդարձ նա գնա...Ու այսպես օրեր՝ ամիսներ դարձած, ամուր կպահեմ, որ տարի դառնան, որ այս Նոր տարվա գունեղ-գունավոր իմ լուսե բոլոր երազանքները հաջորդ Նոր տարում իրական դառնան Արցախիս համար:

09.01.2016

ՄԵՆՔ ԾԻԾԱՂՈՒՄ ԷԻՆՔ՝ ԵՍ ՈՒ ՆԱ, ԲԱՅՑ ԾԻԾԱՂՍ ՑԱՎՈՏ ԷՐ

Գիտեի, որ նա անտեսված է բոլորից, բայց միշտ բարևում եմ նրան, իսկ նա հպարտ է...

Ձեռքիս ծանրոցը օգնեց տուն հասցնելու: Նա խնդրեց ինձ՝ պետք է վկաներ լինեն, որ ինքը ոչ մեկին չի խանգարում, իրեն հոգեբուժարան տանելու կարիք չկա: Իսկ նա չէր խանգարում ոչ մեկին, ուղղակի անխնամ է, մենակյաց, ինքնիրեն խոսում է՝ իր դարդ ու ցավով, իր հետ կռվելով:

Ես համաձայնվեցի գրել և ինձ օգնելու համար վարձահատույց եղա: Սկզբում նա չէր ուզում վերցնել, չէ՞ որ ես իր համար գրելու բան ունեի... Ոոպեներ հետո բնակարանիս դուռը ծեծում են: Ցավոտ էր հայացքս, բայց ծիծաղեցի: Նա ուրախ կանգնած էր, ինչպես մի երեխա՝ ձեռքին մի քանի սպիտակ թղթեր: Իմ տանը այդ թղթերից շատ կային, բայց նա ուզում էր իր բերած թղթում գրվեր, դա իմ լավության դիմաց «պարտքի» հատուցում էր: Թղթերը ճմռթված էին, նույնիսկ կեղտոտված, բայց վերցնում եմ ես, և նա ուրախ է:

Ես ծիծաղում եմ, նա՝ նույնպես, մենք միասին ծիծաղում ենք՝ ես ու նա, ու իմ ծիծաղը ցավոտ է... Նա արդեն ինձ չի լսում, բայց զրուցում է... Ուրիշ է նրա զրույցը, ինչ-որ մեկի հետ, որ անտես է, իր նման անտեսված, իր կողքին չկա: Հայացքս նրա ձեռքի երշիկի վրա էր, մյուս ձեռքին՝ մի կիսատված հաց: Նա սպասում է ինձ, ու ես գրում եմ, սպիտակ թղթի վրա տղամարդու մի նոր անուն է ստանում նա: Հպարտ է շատ, այդպես էին իրեն կոչում դեռ տարիներ առաջ...

ԻՐ ԱՆՈՒՆՈՎ ԹՈՒՂԹՆ իր հետ բերած թղթերի հետ հանձնում եմ նրան: Մանկան պես ուրախ է նա, ես էլ եմ ուրախ, բայց ուրախությունս ցավոտ է...

11.01.2016

ԱՊՐԵԼ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ ԱՌԱՆՑ ԶՈՀԵՐԻ, ԹՈ՛ՒՅԼ ՏՎԵՔ ԱՊՐԵՆՔ

Արցախում դպրոցական կյանքը ձմեռային արձակուրդից հետո այսօր սկսվում է: Հուսով էի, որ ուրախ տրամադրությամբ պիտի մտնեմ դասարանները՝ մեր գալիք խաղաղ օրերի մասին Նոր տարվա լուսավոր երազանք-բարեմաղթանքներով շաղախված: Սակայն սահմանային լարվածությունը կարծես մեզ հավերժ ուղեկցող ստվեր լինի, որ ամեն անգամ ամեն մի զոհի հետ բոլորիս հոգու թրթիռն է սպանում: Մեր հոգու արշալույսներն ամեն անգամ արցունքոտվում են, երբեմն փրկության ճանապարհ չենք տեսնում, բայց նորից ձգտում ենք խաղաղ օրերի մասին հույսի կայծեր փնտրել անգամ խավար գիշերվա մեջ: Այս ծանր հոգեվիճակն ընդհանրապես իր հետքն է թողնում դասերի վրա: Մեր անհանգիստ մարդկային ապրումները մտնում են դասարան, միահյուսվում դասերի թեմաներին, բնության զարթոնքն այդ պահերին չեմ զգում, մայրական թեման արտասվախառն է լինում, սիրո երգերում իր զինվորին սպասող հայուհուն եմ տեսնում, հայրենիքը ցավից աղաղակում է, պանդխտության երգերում հեռավոր եզերքներում ապրող մեր օրերի հայությունն է երևում: Այդ օրերին իմ ծաղիկները չեն ժպտում, բնապատկերներն անգամ իրենց երանգներով ներդաշնակում են մարդկային հույզերիս, գունային լուսավոր երազանքներս գունատվում են, կորցնում եմ գեղեցկությունն իմաստավորելու կարողությունս, ընդհանրական են դառնում ապրումներս, անանձնական մի ցավ է սողոսկում հոգիս և փորձում փշրել բոլոր երազանքներս: Այդ պահերին մարդասիրության մի հրովարտակ եմ ուզում ուղարկել աշխարհին, որ ապրել ենք ուզում առանց զոհերի, թո՛ւյլ տվեք ապրենք...

Հարցս գուցե անսովոր էր 11-րդ դասարանում, բայց Նոր տարվա առաջին դասի ու իմ աշակերտների ապրած զգացողության մասին հարցումս կարծես նրանց հոգուց էր բխում, և զարմանալի չէր ամիսներ առաջ սահմանի մոտ հարազատ կորցրած իմ աշակերտուհու երկու տողի մեջ սահմանափակված ափսոսանքը. «**Իմ համար սովորական օր է, երանի թե կարողանայի ետ տալ ժամանակը և ապրել Արցախիս այն խաղաղ ու երջանիկ օրերում**» /Վարդուհի Ջավադյան/:

Շատ լռին, մեղմ բնավորությամբ մեկ ուրիշ աշակերտուհու խոսքում իր այդ օրվա զգացողությունն ամփոփված էր երկու տողում. «**Ծանր ապրումների մեջ եմ, նորից զոհ ունենք, ամբողջ սրտով ու հոգով ատում եմ այդ զոհեր բերող արարածներին**» /Կարապետյան Սյուզաննա/:

Դասարանի երկու տղաների խոսքում ցավը մեկ ուրիշ երանգ է ստանում. «**Դատարկություն է հոգումս, ամեն անգամ մի վատ լուր լսելիս ուզում եմ գնալ ու սահմանի մոտ նրանց կողքին լինել**» /Աղաբեկյան Սեյրան/: «**Մտածումների մեջ եմ, ինձ թվում է՝ ամեն մի երիտասարդի տասնութը ակնթարթ է՝ ծնվեց, ապրեց ու զոհվեց: Իսկ ես շատերի նման ամեն զոհի հետ իմ ապրած տասնվեցի հետ մեռնում եմ, իսկ հաջորդ օրը լույս աշխարհ եկած ամեն մի հրաշամանուկի հետ՝ ապրում**» /Հարությունյան Դավիթ/:

Այս վերջին տողերից սարսռում եմ, բայց արտաքուստ հանգիստ եմ երևում և ուզում եմ լսել մյուսներին. «**Հոգումս ամեն ինչ իրար է խառնված, Նոր տարվա տրամադրությունս կորած է, անգամ տխրել է Ամանորի շունչը...**» /Կարապետյան Արմինե/: «**Ամենևին հեշտ չէ լավ տրամադրությամբ ապրել, երբ գիտես, որ մի քանի կմ հեռավորության վրա թշնամիդ է գտնվում: Հոգուս խորքում հույս ունեմ, որ մի օր այս ամենը կվերջանա, բայց...**»/Բաղրյան Իննա/:

Աշակերտուհիներից մի քանիսի հարազատ եղբայրները սահմանի մոտ են ծառայում, առանց նրանց խոսքը լսելու էլ արտաքուստ երևում էր դեմքերին դաջված հոգու ալեկոծությունը, ու գրականության դասանյութի՝ Շանթի ստեղծած երազային կերպարների կողքին հայտնվում են իմ նոր օրերի հերոսները՝ այդ դասաժամի մուտքն ազդարարող և իրենց զգացած Նոր տարվա դպրոցական կյանքի առաջին օրվա անհանգիստ մտորումներով:

14.01.2016

ԱՅԴ ԴԱՍԱԺԱՄԻՆ ԻՆՁ ՄԵԾԱՑԱԾ ԵՄ ԶԳՈՒՄ

Թղթի վրա կապույտով գրված տողը նորից եմ ընթերցում, զարմանքը պատում է ինձ, որ 7-րդ դասարանում գրականության դասաժամին այս համեստ աշակերտուհին՝ Ալինա Ավետիսյանը, իրեն մեծացած է զգում: «Ըզգալ» բառի գրության սխալն աչքիս չի երևում, բայց մի քանի տողում նոր միտք եմ տեսնում. **«Ժամանակը շատ արագ է անցնում, միայն ես չէ, մենք բոլորս արագ ենք մեծանում այդ դասաժամին»:**

Այս ուստարվա ամիսների ընթացքում, որ դասավանդում եմ այդ դասարանի աշակերտներին, միշտ էլ նա առանձնացել է իր լռությամբ, ոչինչ չի խոսում, երբեմն այնքան ցածր, որ ձայնը չի լսվում անգամ: Նորից նայում եմ դասամատյանի նրա գնահատականներին, բազմաթիվ անբավարար գնահատականներ՝ դրանց արանքում երբեմն երևացող մեր օրերի գնահատման համակարգի նվազագույն դրական համարվող «4»-երով: Եվ ես հարցնում եմ նրան. **«Դա լա՞վ է, որ քեզ մեծացած ես զգում»:**

Նա չի խոսում, միայն գլխով հաստատում է: Եվ ես նորից եմ հարցնում. **«Կարո՞ղ ես ասել մեծացած զգալու պատճառը»:**

Նա շատ կամաց խոսում է, իսկ ես չեմ լսում, իմ զարմացած հայացքին ի պատասխան, նորից կարծես ինքն իր համար մի քանի բառեր է ասում, ու դրանց մեջ ես տեսնում եմ ինձ՝ իրեն դասավանդող ուսուցչուհուս: Եվ ահա առաջարկում եմ. **«Մեկ նախադասությամբ գրի՛ր, այլապես խոսքերդ չեմ լսում»:**

Ու նա ավելացնում է տողեր շատ արագ, և նորից իմ աչքին չի երևում նրա գործածած բառի սխալը. **«Ձեր խոսելաձևը, ասած մտքերը..., աշխարհն այդ պահին փոխվում է աչքիս»:**

Գրականության դասաժամին աշխարհն իր աչքին փոխվող և դասարանի վերջին նստարանին նստած աշակերտուհին իմ աչքին էլ փոխվում է: Եվ ես ուզում եմ ամեն անգամ իմ խոսքով բոլորի աչքին փոխել աշխարհը, այն դարձնել հրաշալիք և ապրել բոլորի գեղեցիկ ու լուսավոր կյանքով, որ իմն է նաև...

http://usarmenianews.com/am-n-764.html

19.01.2016

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ... ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ

Շնորհավորում եմ նոր սերնդի հայրենաբաղձ խոսքով ստեղծված երաժշտական նոր տեսահոլովակի ծնունդը, որը նպատակ ունի օտարության մեջ գտնվող մեր հայրենակիցներին հրավիրելու տուն: Սիրով ողջունում եմ, նաև հպարտ եմ, որ այն նկարահանվել է Արցախի մեր սահմանամերձ բնակավայր Մարտակերտում:

Տեսնում եմ ծանոթ դեմքեր, նրանց մեջ կան նաև մեր դպրոցի շրջանավարտներից, առանձնապես ճանաչեցի Սպարտակ Հովսեփյանին, ով երաժշտության ասպարեզում հանդես է գալիս B58 անվամբ, նույնիսկ դպրոցականներ կան, ովքեր այս օրերին մեր առջև նստած են դեռ աշակերտական նստարանին: Ռեփեր Սպարտակ Հովսեփյանի հարցազրույցն եմ ընթերցում «Արցախպրեսի» թղթակցի հետ, նաև ես եմ զրուցում նրա հետ: Պարզվում է, այս տեսահոլովակը կոչվում է «Յէ Տու», որը նշանակում է՝ արի տուն, այն նկարահանվել է «Օրինակ» խմբի հետ: Նաև նրա խոսքերում զգացվում է նոր սերնդի մտահոգությունը. «Սոցիալական դժվարություններից ելնելով՝ մեր երիտասարդների մի մասը նախընտրում է հեռանալ օտար ափեր՝ այնտեղ բախտ որոնելու նպատակով: Իսկ հայրենիքում ապրելու, ստեղծագործելու և մի կտոր հաց վաստակելու պայմանները կան: Ի վերջո, այստեղ դու միայնակ չես, այստեղ են քո ընկերները, հարազատները, որոնց հետ ավելի հեշտ է հաղթահարել ամենօրյա դժվարությունները և միասին ավելի լիարժեք է դառնում կյանքը»:

Թեման արդիական է, և այն հարցին, թե ինչով է պայմանավորված երգում բարբառային բառերի օգտագործելը, երգիչը նշեց, որ այն կոչ է՝ ուղղված առաջին հերթին ղարաբաղցի երիտասարդներին, նաև հաշվի

է առնվել ռեփի ոճին հարազատ մնալու հանգամանքը՝ այն է՝ խոսակցական լեզուն:

Իրոք, ողջունելի է, որ սահմանի մոտ մեր կողքին ապրող սերունդն իր մտահոգությունը երգի ելևէջներով է արտահայտել, որը կարելի է համարել՝ հեռուներում ապրող հայերին ուղղված հայրենի հրավեր:

http://usarmenianews.com/am-n-897.html#sthash.nuvWR5wn.gbpl
Տեսահոլովակ՝ *https://www.youtube.com/watch?v=qOoDaxU16DM*

19.01.2016

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՍ ԱՆԳՐԱԳԵՏ ԵՄ



Իմ աշակերտի այս պատասխանն ինձ անակնկալի բերեց: 6-րդ դասարանում բոլորիս կողմից սիրված, բայց երբեմն դասերին անպատրաստ ներկայացող իմ սանիկին հարցրի, թե ինչն է պատճառը, որ գոնե այդ օրը տնային առաջադրանքը չէր կատարել: Երբ լսեցի նրան, մի պահ ինձ կորցրի ու նորից ուշքի եկա. «**Բայց ինչո՞ւ այդքան խիստ քո նկատմամբ»:**

Նա լուռ էր, ինձ չպատասխանեց, իսկ ես շարունակում եմ. «**Հոգուս վրա նստվածք տվեց ասածդ, ինձ թվաց՝ ես մեղավոր եմ այդ հարցում»:**

Այստեղ արդեն նա ինձ արձագանքում է. «**Այդ ես եմ մեղավորը, որ ոչինչ չեմ ուզում անել»:**

Մի անսովոր թեթևություն զգացի, երբ հաջորդ օրը նա ներկայացավ տնային առաջադրանքը կատարած, նույնիսկ նախորդ օրվա առաջադրանքն էլ էր կատարել՝ ավելի գեղեցիկ, ընթեռնելի ձեռագրով գրված: Չնայած գովում եմ նրան, բայց նորից հոգումս արձագանք է տալիս նրա խոսքը՝ որովհետև ես անգրագետ եմ...

Այսօր աշակերտներին առաջարկում եմ մայրենի լեզվի մասին յուրաքանչյուրը մի լավ ձևավորված միտք արտահայտի: Համարյա բոլորին լսում եմ, իսկ նա լուռ է, կողքի աշակերտուհին բարձրաձայնում է, որ նա գրել է, բայց չի ուզում ասել: Եվ ես ընթերցում եմ այդ տողը, ընդամենը երեք բառ, ու ես հիացած սկսում եմ սիրել այդ բառերը... Իմ աշակերտի գրչի շարժումներով այն միտք էր դարձել, ու ես չնկատելու եմ տալիս նույնիսկ բառերից մեկի սխալ գրությունը: Իրար կողքի եմ դնում միմյանց հակասող այն երկու միտքը, որ իմ սանիկն է ասել, և հանկարծ գլուխ է բարձրացնում այս մեկը. «Հայոց լեզուն սխրանքիս բույնն է»:

Եվ ես ուզում եմ նրան նորից լսել, ու դրա կողքին մի նոր միտք է ծնվում, որ նա ավելացնում է այդ տողին. «**Հայոց լեզուն իմ հոգու ճիչն է, նա կյանքն է ամեն մի հայի...»:**

Մի ամբողջ դասարան հիացած է, ու ես ուզում եմ ասել, որ իմ հոգին էլ ճչում է ուրախությունից, երբ ինքդ հաստատեցիր, որ դու անգրագետ չես:

Հետաքրքիրը վերջաբանն էր...Արարատ լեռան մասին տրված նոր դասանյութին զուգահեռ՝ կամաց լսվում է նրա երգեցիկ ձայնը, ու միանգամից ամբողջ դասարանը ձայնակցում է նրան. «**Արարատը մեր լեռնա, Եղեռնը թուրքի բեռնա, Պիտ ճանաչեն աշխարհով, երդվենք անմեղ զոհերով...»:**

Հիացմունքս հազիվ եմ զսպում, զգում եմ, որ իմ աշակերտներն իմ ձեռքից այս դասաժամը վերցրել են, իրենց երգով իրենք են առաջ տանում այն, իսկ ես ուրախ եմ, նայում եմ իմ երգող սանիկին և մտածում՝ երևի Գևորգն այսուհետ իրեն անգրագետ չի համարի:

20.01.2016

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՅՍ ՆՈՐԸ, ՈՐ ԿՅԱՆՔ Է ԿՈՉՎՈՒՄ, ԵՎ ԱՆՈՒՆՆ Է՝ ՍԵՐ

12-րդ դասարանում եմ, աշակերտներից մեկը ներկա էր եղել նախորդ դասերին, բայց այդ պահին չկար, հասկացա, որ շուտով կգա...Այդ պահին գուցե նրա բացակայությո՞ւնն էր պատճառը, որ աշակերտները ցանկացան նրան դասավանդող ուսուցչուհին լսի մեր բացակա աշակերտի կատարմամբ ձայնագրված երգը: Որքան զարմանալի էր, որ նա երգել գիտի, նույնքան էլ զարմանալի էր, որ նա վերջերս երգ է ձայնագրել, ու

ես հետաքրքրությամբ ուզում եմ լսել...Ընթացքում հարցեր ունեմ, որ պիտի ուղղեմ նրանց, բայց հիացած լսում եմ: Չնայած այդ ոճի երգերը շատ չէին հոգուս հարազատ, բայց այդ պահին ես տեսնում եմ իմ աշակերտին, և նա ինձ երևում է մի նոր կերպարով, հոգուց բխած երգի տողերում ես տեսնում եմ մեկին, որին նոր եմ ուզում ճանաչել: Այդ մեկը, որ ՆՈՐ է կոչվում, շատ գեղեցիկ է երևում ինձ, անկեղծ սիրով լեցուն, բայց հիշեցի, որ օրեր առաջ իմ աշակերտի պապիկը եկել էր դպրոց, և ես դժգոհում էի, որ այդ ընդունակ աշակերտը ծուլացել է, այլևս դաս չի սովորում: Պապիկը հուզվեց, նրա աչքերում արցունքներ տեսա, հանգստացրի ու հրավիրեցի ինձ հետ գալ դասարան... Իմ այդ դասաժամին նրան առաջարկեցի առաջին նստարանի ազատ տեղում նստել: Թոռնիկը կցկտուր դաս էր պատմում, և նա նորից հուզվեց, բայց չիմացա՝ այս անգամ հուզմունքի պատճառը թոռնի՞կն էր, թե՞ նա այդ պահին վերհիշեց իր դպրոցական տարիները...

Նորից գալիս եմ իրականություն, և ես ուրախ եմ, որ այդ դասաժամին հայտնաբերում եմ մի նոր Էդիկ Գրիգորյան անուն-ազգանունով աշակերտի, ով երգում է, և իմ հարցին, թե արդյո՞ք նա սիրահարված է, աշակերտների արձագանքը թնդում է նրանց հաստատական խոսքերով:

Իմ ուշացած աշակերտը մտնում է դասարան, ու ես մի նոր հայացքով եմ նայում նրան՝ նոր երգով հայտնաբերված ու նոր սիրով լցված, ու ես սիրում եմ այս ՆՈՐԸ, որ դասից մի քիչ հեռացած է, բայց կյանք է իրական: Եվ ես խոսում եմ նրա հետ, որ մի նոր աշխարհ է դարձել, այս անգամ դեմքին հայտնված շառագույնը նոր ժպիտներ է բերում, և ես ուզում եմ նորից լսել այդ երգը, որ կյանք է իրական:

22.01.2016

ՄԱՅՐԻԿՍ ԱՍՈՒՄ Է՝ ԱՐԻ՛ ԴԱՍ ՍՈՎՈՐԻ՛Ր, ԻՍԿ ԵՍ ՉԵՄ ՀԱՍՑՆՈՒՄ

Երբեմն այսպես էլ է լինում... Արձակ խոսքս հանգավորվում է, մի քիչ հումորիկ են դառնում տողերս, բայց իրական են: Վեցերորդ դասարանում նայում եմ նրան՝ Գեորգի Գևորգյանին, նա ինձ ժպտում է… Երկու շնիկ ունի, օրերն անցնում են նրանց հետ, իսկ ես հարցնում եմ նորից՝ հիմա ի՞նչ անենք, որ դաս սովորես: Ուսերն է թոթվում, ինքն էլ չգիտի… Ու ես մտորում, փորձում եմ գտնել «գաղտնիքը» այն մեծ, թե ես ի՞նչ անեմ, որ օգնեմ նրան, դասը սովորի:

Շների լեզուն չգիտեմ անգամ, բայց պարզվում է, որ մեկը խելոք է, մյուսը՝ անկարգ, ինքն էլ՝ հոգատար նրանց նկատմամբ: Մինչ մտածում ենք, թե ինչպես անենք, նա ինքն է գտնում գերազանց միջոց: Տատիկին կտամ, ու նա կպահի, իմ աչքից հեռու նա միշտ կլինի, բայց նրան կտամ միայն անկարգին, որ այն խելոքին գլորում է ցած, չի թողնում անգամ ափսեից օգտվի:

Եվ հաջորդ օրը, դասը սովորած, նա դպրոց եկավ...Նորից ծիծաղում, պատմում է հանգիստ, որ դասը սերտել, եկել է դպրոց, ձեռագիրն անգամ փոխված է նրա, բայց «աշխարհի» մեջ հ-ն էր բաց թողել, «զայրույթ» բառի մեջ յ-ն չի երևում, իսկ երբ Մասիսը փոքրատառ տեսա, ժպիտս հանգավ, և նորից դժգոհ նայում եմ նրան. «Մասիսը գիտեմ, այն մեծատառ է, ես շատ լավ գիտեմ, բայց թե ինչպես եմ փոքրատառ գրել, ես այդ չգիտեմ...»:

Նայում եմ նրան, նա ինձ ժպտում է, նորից մտքերով շների հետ է, անուններով է նա նրանց դիմում, մեկը անկարգ է, մյուսը՝ խելոք:

Այսօր իմ դասը շատ աշխույժ անցավ, շների մասին մի նոր պատմությամբ, Մասիսն էլ հանկարծ փոքրատառ դարձած: Տեսնես տատիկը այն անկարգի հետ ինչպե՞ս կվարվի…

30.01.2016

ՄԻ ՊԱՏԱՀԱԲԱՐ ԴՈՒՐՍ ԹՌԱԾ «ՀԵ՞ ՋԱՆ»

Դասամիջոցին դպրոցի երրորդ հարկի աստիճաններով բարձրացող տղաներին կանչում եմ: Նրանք միանգամից շրջվում են, բայց մեկի կողմից հանկարծակի հնչած բառը՝ ՀԵ՞ ՋԱՆ, մի այլ հնչողություն ստացավ հոգումս: Կարծես կասկածում եմ այդ երկու ձայնարկության գործածության ճշմարտացիությանը, նորից հարցնում եմ, թե ինչ ասաց, իսկ նա այլայլված մեկընդմեջ ժպտում է, փորձում գլուխը թաքցնել մյուսի թիկունքում: Ուրեմն ճիշտ եմ լսել, և որքա՞ն քաղցր է հնչում այդ պատահաբար լեզվից դուրս թռած բառը... Եվ այն ինձ անչափ գեղեցիկ մի նոր զգացողություն է բերում, երբ նորից կրկնում է մի ամոթխած ՀԵ՞ ՋԱՆ.. Եվ պատմում եմ նրանց, որ ինձ մոտ էլ այդպես պատահել է, երբ մի այլ դասարանում աշակերտին արձագանքել եմ այդ հիասքանչ ՀԵ ՋԱՆ-ով, բայց իմ դեպքում աշակերտներն են այլայլվել, իսկ ես չեմ ցանկացել արդարանալ: Իմ կողմից էլ պատահաբար արտահայտված այդ խոսքը թողել եմ աշակերտները վայելեն՝ բացատրելով, որ երբեմն այդպես էլ կարող է լինել...Ու նրանց զարմանքը փոխվել է ժպիտների, և հասկացել են, թե ինչքան լավ է, որ երբեմն այդպես էլ կարող է լինել:

Այս երկու տասներկուերորդցիները լսում են իմ պատմությունը, որ նպատակ ուներ թեթևացնել այս մեկի «հոգու բեռը», և տեսնում եմ, որ Հակոբը միայն ժպտում է, ու ես ուրախ եմ, որ նա այլևս չի ամաչում, երբ պատահաբար դուրս թռած բառն այնքա՞ն գեղեցիկ է, որ կարող է նույնիսկ իրական մի փոքրիկ պատմություն դառնալ:

Բայց հիշում եմ նաև, որ օրեր առաջ մի դասարանում աշակերտուհիներից մեկն ասաց, որ այլևս չի ուզում ցուցափայտի ձայն լսել, զարմացա, իսկ նա ասաց, որ երկու ուսուցչուհի ամբողջ դասաժամին ցուցափայտով սեղանին խփում են անընդհատ, որ երեխաները լռեն: Աշակերտներին առաջարկեցի շուտ այդ ցուցափայտը գցել վառարանի մեջ, իրենց էլ պատվիրեցի, որ անպայման իմ անունից նրանց ասեն եղածի

մասին: Այսօր այդ աշակերտները ծիծաղելով են պատմում, թե ինչ վիճակի մեջ են եղել այն ուսուցիչները, երբ փնտրում էին ցուցափայտը, բայց չգտան...

Մեր օրերում աշակերտակենտրոն ուսուցման համաձայն՝ աշակերտը առաջնային դերում է, իսկ ուսուցիչն ուղղորդում է նրան, երբեմն հավասարվում են նրանց իրավունքները, այն առանձնապես նկատելի է լինում բարձր դասարանի աշակերտների հետ ունեցած հարաբերություններում: Ես համոզված եմ, որ երբեմն ուսուցչի հոգուց բխած խոսքը նոր թևեր է տալիս աշակերտներին, մի նոր մտերմիկ հարաբերություն ստեղծում նրանց միջև, որը, կարծում եմ, ոչ ոք իրավունք չունի արգելելու:

01.02.2016

ԻՆՉ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ Է

7-րդ դասարանում դասի թեմային համահունչ տրված տնային առաջադրանքը՝ գրել փոքրիկ շարադրություն՝ «**Ես շատ հետաքրքրասեր եմ**» վերնագրով, աշակերտներին մեկ այլ տեսանկյունով տեսնելու հնարավորություն տվեցին, նաև ուշադրությանս արժանացավ աշակերտներից մեկի՝ իմ մասին գրած տողերը:

Օրեր առաջ նրա «6» և «7» գնահատականների կողքին հայտնվեց մի անհաջողակ «4», նա անմիջապես հարց ուղղեց ինձ. «**Տիկի՛ն Պողոսյան, Դուք մյուս տարի՞ էլ մեզ դասավանդելու եք**»: Հարցական հայացքով նայում եմ նրան. «**Երևի ցածր գնահատական ես ստացել, այդ պատճառով այլևս չես ուզում, որ ես դասավանդեմ**»:

Անպատասխան մնաց իմ խոսքը, նա անտրամադիր նստեց, բայց զգացի, որ ինձանից դժգոհ է, չնայած հիշեցրի, որ նորից կրկնի «Դերանուն» թեման:

Այս օրերին ես անընդհատ մտքերով նրա հետ էի՝ տեսնես կարիք կա՞ր նրան բացատրելու, որ ով էլ դասավանդի, անպայման պետք է դաս սովորի: Եվ ահա ընթերցում եմ նրա գրած տողերը. «**Ինձ հետաքրքիր է, թե ինչպես և ինչ զգացողությամբ է ապրում սահմանին կանգնած զինվորը: Ինձ հետաքրքիր է, թե ինչպես է մեր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհին այդքան գիտելիքները մտապահում: Ինձ այս աշխարհում ամեն ինչ հետաքրքրում է... Ինձ համար նաև հետաքրքիր է քիմիայի դասը, որը ես միշտ էլ չեմ հասկանում**» /Հարությունյան Հարություն/: Եվ ես ուրախ եմ, որ սահմանին կանգնած զինվորի զգացողությամբ հետաքրքրվող և աշխարհի ամեն ինչի նկատմամբ ունեցած հետաքրքրասիրությամբ իմ աշակերտին հետաքրքրում է նաև իմ ունեցած գիտելիքների մտապահելը, հետևաբար նա հասկացել է, որ պետք է դասերը միշտ սովորի և մտապահի, բայց ցանկալի է, որ նա հասկանա նաև քիմիայի դասը, որը նրա համար նույնպես հետաքրքիր է: Բայց որքա՜ն հիացած եմ նրա պարզ ու անմիջական բնավորությամբ:

05.02.2016

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դառը խոստովանություն, որից ցնցվում եմ. «**Աշակերտը պետք է խելոք լինի, կարգապահ, ինձանից ի՞նչ աշակերտ**» /Պետրոսյան Գևորգ/:

Չգիտեմ՝ ուրախանա՞մ, որ իմ դասղեկական վեցերորդ դասարանի աշակերտներն այսօր այդքան անկեղծ էին, պարզ ու հասարակ, թե՞ տխրեմ, որ նրանց ուղղված իմ հարցի արդյունքում, թե ինչ թերություններ ունեն, և ցանկալի է, որ դրանք վերացնեն, նրանց մեկ-երկու տողով արտահայտած մտքերը մի նոր անհանգստություն բերեցին ինձ: «**Փոքրուց ինձ թվացել է՝ ես աշխարհի ամենաբարի մարդն եմ, բայց այդպես չէ: Իրականում մի փոքր կոպիտ եմ, երբեմն այնպես եմ կոպտում ընկերներիս, որ հետո զղջում եմ**» /Սամվելյան Անժելիկա/: «**Ուսուցիչների կարծիքով ես շատ հանգիստ եմ, բայց դա միայն դասերին, դասամիջոցներին շատ եմ աղմկում**» /Պետրոսյան Դավիթ/: «**Չեմ կարողանում գաղտնիքներ պահել, նաև շատ նեղացկոտ եմ**» /Մկրտչյան Անի/: «**Ես կարգապահ չեմ, տեղի-անտեղի շատերին խփում եմ**»/Գևորգյան Գեորգի/: «**Ես այդքան էլ օրինակելի աշակերտուհի չեմ, ինչ լինում է, անմիջապես ուսուցիչներին հայտնում եմ՝ առանց իմանալու դրա լրջությունը**» /Մելքոնյան Սոֆյա/: «**Դասարանում բոլորը կարծում են, թե ես խելոք եմ, հանգիստ, բայց դա այդպես չէ, տանը ես ուրիշ եմ**» /Խաչատրյան Արսեն/: «**Որպես աշակերտ՝ ես անթերի չեմ, ժամանակ առ ժամանակ մոռանում եմ դասարանի ավագի՝ իմ պարտականությունները**» /Բաղրյան Նարեկ/: «**Գրավորների ժամանակ երբեմն թաքուն արտագրում եմ, խոստանում եմ վերացնել...**» /Իսրայելյան Միլանա/: «**Ես չարաճճի աշակերտուհի եմ, երբեմն ուզում եմ խանգարել դասերը**» /Առուշանյան Արիաննա/: «**Չնայած միշտ էլ դասերս սովորում եմ, բայց այդքան էլ կարգապահ**

չեմ, երբեմն ինձ թաքուն նկարում եմ, սիրում եմ «սելֆի» անել» /Հովհաննիսյան Լուսինե/: «**Երբեմն ձեռքերս եմ թափահարում, որ ինձ դաս հարցնեն, հուսով եմ՝ կկարողանամ վերացնել, որ դիտողության չարժանանամ**» /Հակոբջանյան Լյուբա/:

Մեր ծնողները, թե ինչպես կընկալեն իրենց երեխաների ինքնախոստովանությունը, ես չգիտեմ, բայց որոշ արձագանքներ շատ ցավոտ են ինձ համար, մի նոր անակնկալ, որից ուշքի գալու համար ինձ ժամանակ է պետք:

07.02.2016

ԻՄ «ԽԵԼՔԻ ԵԿԱԾ» ԱՇԱԿԵՐՏՈՒՀՈՒ ԻՆՔՆԱԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած օրը կիրակի է, բայց նորից դպրոցի, մեր աշակերտների հետ եմ, նրանց գրավոր աշխատանքներն եմ ստուգում: Եվ հանկարծ ուշադրությանս է արժանանում այս մեկը՝ Սոֆյա Մելքոնյանի գրած շարադրությունը: Վեցերորդ դասարանի ազնիվ, համեստ, շատ կարգապահ աշակերտուհիներից է, ով յուրովի տարբերվում է մյուսներից իր մեղմ խոսելաձևով, նրանց հետ շփվելու վարվելակերպով: Նա անցած ուսումնականից էր մայր Հայաստանից տեղափոխվել մեր դպրոց՝ հայրիկի զինվորական ծառայության պատճառով: Ամեն անգամ դաս պատմելիս ես լսողությունս լարում եմ, խոսում է շատ կամաց, ամեն մի բառ արժեք ունի, նա զուսպ է, սիրված բոլորի կողմից: Ես հանկարծակիի եմ գալիս, երբ ընթերցում եմ նրա տողերը, չնայած իմ հանձնարարած շարադրության վերնագրի հետ այն առնչություն չուներ: Թե իր առօրյան ինչպես է կազմակերպում, այդ շարադրանքում ես չտեսա, բայց կար մի նոր բան, որ հիացրեց ինձ. «**Այս տարիներին ես նոր բաներ բացահայտեցի ինձ համար: Միշտ սիրում էի ճամփորդել, գնալ ուրիշ երկրներ ամիսներով: Երբեք չեմ ցանկացել իմ արձակուրդը հայրենիքում անցկացնել: Երբ իմ մայրենիի ուսուցչուհին դեռ անցած ուսումնականում հանձնարարեց հայրենիքի մասին գրել շարադրություն, մտորումների մեջ ընկա: Հաջորդ օրը, երբ լսեցի իմ ուսուցչուհու և իմ համադասարանցիների շարադրություններում արտահայտած մտքերը, նրանց շնորհիվ, կոպիտ ասած, ես խելքի եկա: Հիմա ես գիտեմ, թե որտեղ պիտի անցկացնեմ իմ լավագույն օրերը»:**

Եվ ես ուզում եմ ասել իմ «խելքի եկած» աշակերտուհուն, որ չնայած այս ինքնախոստովանությունն անցած ուստարվա տպավորությունից հետո ուշացած էր, բայց այն նոր հնչողություն ստացավ ինձ համար, և ես հպարտ եմ, որ այս կոկիկ աղջնակն իր ասած կոպիտ բառով է իրեն որակել, չնայած կոպտությունը նրա բնավորության մեղմության կողքին երբևէ իր տեղը չի գտնի...

12.02.2016

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 20 ՏԱՐԻՆ

Չգիտեմ՝ ինչպես անցան այս տարիները, բայց մի անցյալի հուշ ամեն օր իր ուրախ և տխուր պահերով կանգնում է կողքիս: Երբեմն հարցնում եմ ինքս ինձ, թե ինչո՞ւ գերազանց գնահատականներով բարձրագույնն ավարտելուց հետո՝ խորհրդային տարիներին, համարյա մեկուկես տասնամյակ դպրոցի դռները փակ էին ինձ համար:

Դպրոցի տնօրեն Լիդիա Պետրոսյանը համարձակվեց բռնագաղթից հետո օտար ափերից հայրենիք վերադարձած իր հայրենակցուհուն մի քանի դասաժամ տրամադրել: Բայց նաև եղան մարդիկ, որ ինձ հասկացրին՝ դու հինգերորդն ես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիների մեջ, տե՛ղդ իմացիր...

Արտաքուստ հանգիստ էի, բայց հոգիս ըմբոստ էր, այս զգուշացված հերթագրությունն ինձ դուր չեկավ, երբեմն ուզում էի խախտել այդ սահմանը, բայց ինձ սաստում էին: Ապրած տարիներս կոփեցին ինձ, ձեռքերս առաջ մեկնելը քիչ էր, ուզում էի ցույց տալ նրանց, որ կարող եմ հանկարծ մի օր թևեր առնել, թռչել...Բայց թռչելու համար ժամանակ էր պետք, նաև համբերություն, չնայած երբեմն կապանքներից դուրս էի գալիս և ազդարարում իմ արդար ցասումը: Եվ մի օր էլ իմ առջև նստած դեռահաս թևավորներն ինձ սկսեցին թևեր տալ, ու այդպես շարունակվեցին օրեր, ամիսներ, տարիներ...Թևավորներս բեմեր էինք բարձրանում, հաղթական ծափահարությունների տակ՝ ուրախությամբ բեմերից իջնում:

Քանի՜-քանի անգամ օդում սավառնելիս նետահարվել եմ, նորից իմ փոքրիկ թևավորներն ինձ թևեր են տվել, որ ի տես բոլորի՝ նոր բեմեր բարձրանամ և ցույց տամ իմ արդար ոգին: Հիմա հանգիստ եմ, նետաձիգները լռել են, էլ արձակելու տեղ չկա, ինձ խոցած բոլոր նետերը հանված են, բայց հետքերն են մնացել ու այդպես էլ կմնան:

Մի նոր հիանալի անակնկալ իմ կողմից արժանվույնս գնահատվող այս հայկական լրատվական կայքի խմբագրակազմի կողմից: Սա առանձնահատուկ ուշադրություն է Արցախի սահմանամերձ բնակավայրում ապրող ուսուցչուհուս աշխատանքային գործունեության նկատմամբ, որը երախտագիտության անսահման զգացումով է լցնում հոգիս: Անչափ շնորհակալ եմ՝ ինձ այսպիսի հիանալի զգացողություն

փոխանցելու համար:

Հարգելի Նատաշա Պողոսյան, USArmenianews.com լրատվական կայքի խմբագրակազմը ի սրտե շնորհավորում է հետպատերազմյան տարիների Ձեր 20-ամյա մանկավարժական գործունեությունը:

Մաղթում ենք ամուր առողջություն, երկար տարիների կյանք՝ շրջապատված սիրելի աշակերտներով ու հավատարիմ մարդկանցով: Երջանկությունը, բարեկեցությունն ու հաջողությունները թող ուղեկցեն Ձեզ ողջ կյանքում:

http://usarmenianews.com/am-n-1274.html

13.02.2016

ՍԱ ԻՄ ԱՆՑՆԵԼԻՔ ՃԱՆԱՊԱՐՀՆ Է, ԵՎ ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՅՆ

Սա այն ճանապարհն է, որտեղով ամեն առավոտ դպրոց եմ գնում, երբեմն ուրախանում, որ մի ծանոթ անձնավորություն մեքենա է կանգնեցնում աշխատանքի շտապող ուսուցչուհուս համար: Երբեմն մենակ եմ քայլում մենախոսելով, երբեմն մտամոլոր նայում եմ կողքովս անցնող մեքենաների հետևից, որոնք շտապով մեր աշակերտներին դպրոց են հասցնում, որ հանկարծ դասից չուշանան: Բայց երբ իմ առջև գլխիկոր կանգնած աշակերտ եմ տեսնում, որ փորձում է արդարանալ, թե դաս չի սովորել, կողքովս անցնող մեքենաների սլացքն եմ հիշում և ափսոսում, որ մեր ծնողներն իրենց դաս չսովորող երեխաներին ավելի ապահով են պահում, քան մենք ենք ապրել մեր ժամանակներում, որ դաս էինք սովորում:

Եվ ի՞նչ է փոխվել իմ կյանքում այս տարիների ընթացքում, երբ ես դպրոցական եմ եղել, և հիմա, երբ ես եմ դասավանդում: Գուցե շատ բան, բայց նույնն է մնացել իմ այս ուրախությունը, երբ հանկարծ կողքիս մեքենա են կանգնեցնում, ես նորից ուրախանում եմ, որ հանկարծ դասից չուշանամ:

14.02.2016

ԱՅՍ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԻՄ ՄԵԿ ՏԱՐԻՆ

Համացանցում գտնվելու իմ առաջին օրը չգիտեի ինչ անել: Ընկերության հայտեր ընդունեցի. մի որոշ ժամանակ լռություն, ապա ոչ այնքան համարձակ գրեցի. «**Գիշերային լռության մեջ մտովի աստղազարդ երկնքին «խաղաղություն» եմ ասեղնագործում, որ արշալույսները նորովի բացվեն»:**

Հավանությունների տարափ. ուրեմն ինձ սպասում են, բայց չգիտեի՝ ինչպես շարունակել:

Ես լուռ եմ, բայց ծաղիկներ են հղում ինձ ճանաչողները, ողջույնի խոսքեր...Անհրաժեշտ է ինչ-որ բան գրել, նորից չէի համարձակվում, և հաջորդ օրը մի նոր տող է ավելանում իմ էջում. «**Ամեն մի գունաթափված օրվա ցավի փոշիներն եմ հավաքում, խնդրում Աստծուն՝ ամենուր լույս տա»:** Նորից հավանություններ, և ես սկսում եմ գիտակցել, որ այստեղ ընթերցողներ կան, պետք է գրել...Եվ այսպես ավելանում է իմ ընկերների շարքը, և ես սիրով ընթերցում եմ նրանց գրառումները՝ ամեն մեկը յուրովի տարբեր և շատ հետաքրքիր:

Ես ուրախանում եմ ինձ հղած ծաղիկներով, գեղեցիկ խոսքերով, օր օրի ավելացող ընկերական ջերմ միջավայրով...Ուրեմն ի՞նչ, ինձ տարիներ շարունակ անհրաժեշտ էր արտահայտվելու և լսելու ասպարեզ, այն կողքիս էր, բայց ես չգիտեի այդ մասին ու կամաց-կամաց սկսում եմ համոզվել, որ գտել եմ այն: Այո՛, գտել եմ մի գեղեցիկ միջավայր, և ես ուրախ եմ, որ գտել եմ նրանց կամ իրենք են ինձ գտել, իմ շրջապատը մաքուր է շատ, ազնիվ ու անաղարտ, գտել եմ մի տարածություն, որտեղ երբեմն նրանց շատ մոտիկ եմ զգում ինձ, երբեմն ապրում նրանց ուրախությամբ կամ տխրությամբ...Եվ ես ուրախ եմ, որ այս կայքում իմ մեկ տարին մի գտած երազ է դարձել:

14.02.2016

ՍԻՐՈ ԵՎ ՎԱՍԱՀՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՇԱԲՈՒՅՐ ԾԱՂԻԿՆԵՐԸ ՁԵԶ

Ընդամենը մի քանի բառ, որ ստանում և վայելում եմ ինձ հարազատ դարձած անձնավորության՝ Վիոլետա Մնացականյանի կողմից, ով իր հրատարակվելիք գրքում իրավունք էր վերապահել տեսանելի դարձնել նաև մանկավարժիս: Բայց նաև մտածում եմ՝ մի՞թե Սիրահարների օրը վերաբերում է նաև մեզ՝ կենսասեր տարիքավորներիս: Կասկածամտությունս փարատվում է, երբ նորից մի հրաշալի երկտող եմ ստանում. «**Եթե գիտես նեկտարի արժեքը, ուրեմն ունես անարատ սիրո ծաղկեփունջ**»:

Իմ մտերիմների կողմից այդ օրվա կապակցությամբ ստացած շնորհավորական ծաղիկները նույնպես հաստատում են, որ տարիքը նշանակություն չունի, սերը գեղեցիկ զգացողություն է, դրանով ապրելը՝ հրապուրիչ: Սեր, որով ողողված են իմ դասերը, մի լուսավոր տանջանք, որ երբեմն պատում է իմ առջև նստած դեռահասներին, սեր, որ իր հետ արևածագի ցնծություն է բերում, գարնանային զարթոնքի նոր ապրումներ, հոգու արթնացում, նվիրական երազանքներ, բայց երբեմն նաև՝ անհանգիստ գիշերային լուռ անքնություն...

Եվ իմ հոգում հնչող սիրո երգը ուզում եմ փոխանցել բոլորին ու ասել, որ ինձ համար սերն այն կենարար օդն է, որը շնչում եմ, սերը հիշողություն դարձած իմ անցած կյանքն է, որ անդարձության քողով է պատված, սերը իմ անցնելիք այն ճանապարհն է, որ գալիքի մեջ եմ տեսնում և պիտի ապրեմ: Սերը իմ թոռնիկի՝ ինձ փոխանցած համբույրն է, որ վայելում եմ ես: Ինձ համար սեր է դառնում այն գեղեցիկ բնանկարը, որտեղ արևի կենսատու շողեր կան, մեղմ երաժշտությունը, որ լսելիս կարոտ եմ զգում, իմ բոլոր աղոթքները, որ ուղղում եմ վերին բարձրյալին... Իմ հոգում ծնված լուսավոր տոնը սիրով են լցնում իմ մտերիմները, բոլոր հեռու և մոտիկ ինձ հարազատ դարձած մարդիկ, նրանք, ովքեր ինձ հետ եմ միշտ: Եվ ես այս Սիրահարների օրը՝ սիրո գեղեցիկ բույլերով լցված, փոխանցում եմ բոլորին, որ կյանք է կոչվում, սիրառատ մի կյանք՝ ջերմությամբ լցված:

20.02.2016

ԻՄ ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԸ ՁՈՆՈՒՄ ԵՄ ԲՆԱՇԽԱՐՀԻՍ

Շնորհավորում եմ բոլորիս Մայրենիի միջազգային օրը, որը նշվում է 1999թ.-ից, երբ հաշվի առնելով անցած դարի կեսերին մայրենի լեզվի իրավունքների դեմ մի շարք ընդվզումներ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակեց Մայրենի լեզվի միջազգային օր՝ ի նպաստ լեզուների իրավունքների ճանաչման և գործածության աջակցման:

Այսօր աշխարհում լեզուների ապագան անորոշ վիճակում է, քանի որ միջազգային մի քանի լեզուներ աստիճանաբար ստիպում են մարդկանց հրաժարվել սեփական մայրենի լեզվից: Բայց անկախ դրանից՝ երկլեզվությունն ու բազմալեզվությունը ավելի շատ տարածում ունեն:

Օրվա առիթով մրցույթին ներկայացրած գրավորների մեջ 10-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Հակոբյանի ստեղծագործական շարադրությունը լավագույնների շարքում էր:

«Երեկո էր: Մի քանի սարյակներ հեռացան եղևնու կատարից: Նստեցի եղևնու տակ: Մեղմ քամին շոյում էր ուսերս: Այս բարեհաճ ճյուղերի տակ մեղմ զեփյուռին հանձնեցի մանկությունս: Գետակի ջրերը ծղոտի մի հատիկի, ծառի մի տերևի նման տարան իմ մանկությունն իրենց հետ և տիղմի պես կուտակեցին իմ հիշողության մեջ:

Նայում եմ շուրջս: Հեռվում՝ ավազուտներում, մի մանուկ շարունակ կանչում էր քամուն, խաղում քամու նվագի տակ պարող թիթեռների հետ ու ինչ-որ երգ մրմնջում: Նրա երգը ձուլվում է թիթեռների պարի հետ: Խելահեղ մի պար՝ ծնված նրա մրմունջներից: Այն տանում է նրանց դեպի վեր, ապա նորից վար, մի զվարթ երգ, որ մանկան խենթ ազատությունից է ծնվում: Այստեղ ամեն մի կենդանի ու անկենդան շունչ իր բարբառն ունի… Ծառերը խշշում են, մանուկները՝ երգում, թիթեռները՝ թռվռում…Տեսնես այդ ինչպե՞ս է ստացվում, որ լեզուն, բարբառը միավորում է մարդկանց, կենդանիների, բնության երևույթների

մի խմբի ու դառնում է նրանց ինքնության, գոյության գրավականներից մեկը… Իսկ եթե բոլորը մի լեզվով խոսեի՞ն…Մտածում եմ ինքս ինձ, երբ հանկարծ հիշեցի Սահյանի տողերը. «Հինավուրց ու նորոգ դու իմ հայո՛ց լեզու, դու ավելի փարթամ պիտի ծաղկես, երբ մեր երազն անգամ հայերեն է հյուսվում, էլ կարո՞ղ ենք ապրել մենք առանց քեզ: Ոչ մի մրրիկ ու հողմ մեզնից քեզ չի պոկի, և քեզ չի խափանի ոչ մի աղետ, մեր գոյությա՛ն արև, մեր ինքնությա՛ն ոգի, հավիտենից ի վեր և առհավետ»:

Այս տողերն իմ մտքերի մեջ ամփոփեցին մեր դարավոր պատմությունը, երբ շատ անգամ մեր ազգային գոյության երաշխիքներից մեկը մեր լեզուն դարձավ:

Ամպերի ետևում օդի երակներն են երևում՝ լի գարնան եղրևանիների բույրով, որոնք իրենց բարբառով ամենահեռավոր բլրին ավետում են գարնան մասին ու արթնացնում նրան՝ հանելով խոր ձմռան տաք վերարկուն՝ թույլ տալով, որ նա շունչ առնի, կրկին կանաչի, ծաղկի ու իր հարազատ լեզվով ետ կանչի իր վրա ապաստանած թռչուններին՝ ևս մեկ անգամ նրանց դայլայլը վայելելու ակնկալիքով: Այստեղ ամեն մի ծառ ու ծաղիկ, ամեն մի թռչուն, ամեն մի գույն իր բարբառն ունի, իր մայրենի լեզուն՝ երփներանգ, ծիծաղախիտ ու ծիածանառատ: Նրանց լեզուն իր մեջ է պահածոյացնում շինականների հորովելը, արևի ճաճանչափայլ ճառագայթների փայլը, կածանների ոլորքները, ջրի մեջ օծված սարյակների վեհությունը… Վարդավառի ջրցանի շիթերը կան նրա մեջ, գուսանների նվագն ու թմբուկների զարկերը կան նրա մեջ… Տաք և թարմ ալյուրի փափկություն կա նրա մեջ, երիտասարդ աղջիկների մեջքի սլացիկություն կա նրա մեջ… Պաղ աղբյուրի սառնություն կա նրա մեջ և անամպ երկրի թափանցիկություն…

Ավազուտներում ձիերի պայտերի հետքն է, որոնք ցայգալույսին վեր սլացան գարնան ծաղկունքից համբարձված բլրի գագաթը: Նրանց հետքերը տանում են դեպի ազատություն, դեպի հոգու անվախ թռիչք, թույլ տալիս նրանց սավառնել առասպելական երամակների պես: Նրանց թռիչքը նույնպես ծնված է իրենց բարբառից: Լեզո՛ւ… մայրենի՛ լեզու, որ այդքան հզոր ուժ ունի իր մեջ, որ ժայթքում է հրաբխի պես, իր հետ բերում բոցաշունչ թռիչք, ճախրանք, ապա՝ խաղաղություն… Եվ մինչ կսուզվի զեփյուռի ծարավը ինչ-որ տերևի խորքում, հնչում է զանգն անձրևի առաջին կաթիլների: Այստեղ միայնակ է մարդը, և այս մենության մեջ մինչև հավերժություն ձգվում է ստվերն իր լեզվի՝ կարծես հորդորելով անձրևին. «Իմ ետևից եթե գաք, եկե՛ք հանդարտ, որ

չճաքի հանկարծ նուրբ ճենապակին իմ խաղաղության»:

Հանդարտ բարբառում է անձրևը՝ կաթ…կաթ… Առավոտյան երկինքն իր ազատությունն է վայելում: Գիշերը ձերբազատվել էր իրեն ծանրություն պատճառող ամպերից: Եղևնուտի վրա եղյամն է պատել: Նոր արթնացած ագռավների երամը ճանապարհ է ընկնում կեր հայթայթելու: Այս երամի մեջ լսվում են ձայներ, բարբառի հնչյուններ, լեզվի տարրեր: Մի հին ծփենի՝ հպարտ ու սիգաճեմ, արևի ճառագայթների հետ էր խոսում և նրան անձրևի կաթիլների լվացած իր կատարն էր ցուցադրում: Երևի բնությունն ընդհանուր լեզու ունի, ընդհանուր բարբառ, որ կարծես միջազգային լեզվի նման հասկանալի է բնության բոլոր երևույթներին և դարձել է նրանց հաղորդակցության միջոցը: Արևի առաջին ճառագայթներն օծվում են գետակի ջրերում, ապա ամոթխած նորահարսի դեմքի նման կարմրաներկով են պատում երկինքը: Նայեցի դեռևս թաց ապակուն: Դրսում բաղեղի կանաչ տերևներն են բարձրանում դեպի տանիք, դեպի վեր՝ կարծես ձուլվելու արևի ճառագայթներին: Աքլորի առավոտյան աղոթքն է լսվում: Տեսնում եմ մարդկանց՝ մեկը տրտում է, մեկը հյուսում է, մեկը հաշվում է, մեկը՝ երգում: Ամեն մեկն իր բարբառով, իր լեզվով, իր ձևով…

Մի սարյակ թռավ բաղեղի տերևներից իր բարբառից ծնված հորդորով դիմելով այն տրտում մարդուն. «Ինչո՞ւ ես տրտմել, քի՞չ են ուրախությունները, օրինակ՝ այս արևը, այն ավազներում խաղացող մանկիկը, այն աղավնին»:

Մի ծեր գյուղացի՝ բահը ուսին, իր թելից հյուսած հնամաշ կոշիկները քարշ տալով, դեպի այգին էր գնում՝ քթի տակ ինչ-որ բան էր փնթփնթում: Երևի հնամաշ կոշիկների հետ էր խոսում՝ բողոքելով նրանցից: Մի փոքր տղա՝ ցեխոտ կոշիկներով, որոնք չորացել և սպիտակել էին, վազելով դուրս ցատկեց դռնից և վազեց դեպի գետակի ափին գտնվող ծփենին: Ապա բարձրացավ ծառը և հողին հավասարեցրեց հարավից նոր վերադարձած ծիծեռնակի բույնը: Չհասցրեցի նրան ետ պահել չարագործությունից: Ես դեռևս նրա չարագործությունից ապշած էի, երբ մի ճիչ լսեցի: Ծիծեռնակին տեսա, որ գնացել էր կեր փնտրելու և վերադարձել էր իր տան հույսով: Սահմանին զոհված որդու մայր տեսե՞լ եք, լսե՞լ եք կանանց լացը իրենց ամուսիններին սգալիս, տեսե՞լ եք գյուղացու, որի կուտակած խոտի դեզը քամին ոչնչացրել է: Այս ծիծեռնակի բույնը քանդվել էր, և նա նույնպես սգում էր այս վշտահարների լեզվով: Իսկ ես մտածում էի, թե որտեղի՞ց այս երեխայի մեջ այսքան չարություն: Չար միտքն էլ չար լեզվից է ծնվում: Չէ՞ որ միտքը ծնում է գործ, որի մասին

վկայում է անգամ մեր գրաբարյան «բանել» բառը, որը նշանակել է և՛ գործել, և՛ խոսել, այսինքն՝ «խոսքն» ու «գործը» նույնացվել են:

Աստվա՛ծ իմ… Այս բնության, այս տիեզերքի մեջ, ամեն մի ագռավ, ամեն մի եղյամի ցող, ամեն մի ջրի հյուլե, ամեն մի թիթեռնիկ, ամեն մի չարագործ երեխա, ամեն մի սգացող մայր, ամեն մի քամու քշած տերև, ամեն մի ծաղկի թերթիկ իր բարբառն ունի, որ հյուսվում են իրար և, երկարածամ աղջկա վարսերի պես նոտաներ դարձած, ստեղծում են զարմանահրաշ, ապշեցուցիչ մի նվագ:

Ու ես գրկում եմ այդ ձայնային ելևէջները, և, իմ բարբառին միահյուսված, ձոնում եմ բնաշխարհիս... Արցախ է անունը նրա՝ մի հրաշք բարբառ շուրթերին առած...»:

http://usarmenianews.com/am-n-1441.html

21.02.2016

Այսօր Մայրենիի միջազգային օրն է, հարմար գտա այս հոդվածն ուղարկել Լոս Անջելեսի հայկական usarmenianews.com լրատվական կայքին

Սովորեցնելով ուրիշներին՝ սովորում ենք մենք ինքներս:
Սենեկա

ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼՆԵՐՈՒՄ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵ՞Ր, ԹԵ՞ ՄԵՐ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս թեմայի շուրջ աշակերտներին առաջարկեցի կարծիքներ հայտնել: Եղան տարաձայնություններ, բայց մեծ էր նաև անակնկալը, երբ այսպես արտահայտվողը համեստ աշակերտուհի էր. **«Դպրոցում որքան էլ գրական լեզուն պարտադիր լինի, որպես այս հասարակության անդամ և հեռուստադիտող, իմ ականջները կամաց-կամաց սովորում են «Էս ի՞նչ ցենտր շոր ես հագել» արտահայտությանը: Նույնքան հարազատ են դարձել նաև «Էրեխե՛ք, գնանք մի քիչ տժժանք, ի՞նչ եք թթվել» կամ «Չգնա՞նք մի քիչ լռվենք» արտահայտությունները, չէ՞ որ այդ նույն ժարգոնով են խոսում նաև մեր շրջապատում շատ-շատերը, նույնիսկ՝ որոշ հեռուստասերիալների տարբեր հերոսներ»:**

Դպրոցում գրական լեզվի անաղարտության համար մաքառող ուսուցիչներս անելանելի վիճակում ենք հայտնվում: Հանրության մեծամասնության համար ախորժելի է հնչում շրջապատի և հեռուստասերիալների (խոսքը բոլորի մասին չէ) կերպարային լեզուն, նույնիսկ այսօրվա դպրոցականը փորձում է նմանվել այս կամ այն հերոսին՝ վերջինիս խոսակցական արտահայտություններով.

*Իմ **ախմախ** սանիկներին տեսե՛ք:*
***Ջհանդամը,** թե տանում են:*
*Չենք **զոռում:***
*Էլ **զահլես** չտանես:*

Այդտեղ հնչող կերպարային լեզուն, որ գրական լեզվի հետ չի կարելի նույնացնել, իր մեջ է առնում և՛ բարբառներ, և՛ ժարգոններ, և՛ օտա-

բաբանություններ, նույնիսկ՝ գռեհկաբանություններ:

Խոսակցական լեզվում ևս օգտագործվում են բառեր և արտահայտություններ, որոնք կոպիտ, գռեհիկ իմաստ ունեն: Կարելի է ասել, դրանք ընկալվում են որպես այդպիսին, բայց առանձին դեպքերում թափանցում են նաև գրական հայերենի, նույնիսկ գեղարվեստական գրականության մեջ, որտեղ իրենց բացասական ոճական ուժեղ երանգի պատճառով օգտագործվում են հերոսների խոսքի անհատականացման համար: Այդպիսի արտահայտությունները համարվում են գռեհկաբանություններ, որոնց գործածության հարցում կարող է լինեն տարբեր կարծիքներ, բայց իրականում դրանք էլ աղավաղում են մեր անաղարտ մայրենին: Որքանո՞վ են հաճելի հնչում այսպիսի արտահայտությունները:

Շան բուլա, հերդ *եմ անիծել:*
Մեր ***լակոտները*** *էդպե՞ղ են:*
Հորդ քյալլեն, *բա որ ասո՞ւմ էի:*
Էս փչացածի *պատճառով մեր տունը քանդվեց:*

Այսպիսի բառերը հանրորեն կոպիտ, գռեհիկ համարվող արտահայտություններ են, որոնք սովորաբար հասարակության մեջ հատկապես անկիրթ մարդկանց կողմից են հնչում:

Ղարաբաղցու համար էլ իր բարբառը, որ մի ուրույն երաժշտություն ունի՝ համ ու հոտով, մեղեդայնությամբ, գրավում է բոլորին որպես ժողովրդական լեզվի արտաբերում: Այն գրական լեզվի հզոր ակունքներից է: Բայց **գրական լեզվի** մեջ տեղ չունեն հայերենի բառապաշարի որոշ շերտեր, այդ թվում նաև բարբառները: Գրական լեզուն պարտադիր է դպրոցում, մամուլում, ինչո՞ւ չէ, նաև՝ եթերում, իսկ **գրականության լեզուն** անհամեմատ լայն շրջանակներ ունի: Քանի որ գրականությունը կյանքի արտացոլումն է մարդկային ամենատարբեր բնավորություններով, ապա այդ արվեստի ճշմարտությանը դավաճանած կլինեին գրողները, եթե իրենց ստեղծած կերպարներին նրանց հարազատ լեզվով չխոսեցնեին: Գեղարվեստական խոսքի մեջ գրողները երբեմն դիմում են բարբառային բառերի և արտահայտությունների կամ որևէ խոսվածքի՝ տվյալ վայրի կենցաղային, ընտանեկան և այլ կարգի առանձնահատկություններն ավելի ցայտուն կերպով արտահայտելու, ինչպես նաև հերոսների խոսքը ավելի բնական, ընթերցողի համար ավելի համոզիչ դարձնելու նպատակով: Այսինքն, գեղարվեստական խոսքում գրական լեզվով չխոսող անձանց կերպավորելու և անհատականացնելու նպատակով են օգտագործվում բարբառային բառերն ու

արտահայտությունները, որոնք, ցավոք, այսօր հանդիպում ենք նույնիսկ լուրջ սյուժեներով հագեցած որոշ հեռուստասերիալների ճանաչված և հայտնի դերասանների խոսքում, անկախ նրանից՝ նա գրական լեզվին է տիրապետո՞ւմ, թե՞ որևէ բարբառի:

Էրեխես *չեկավ:*
Մենց *չի լինի,* ***ախպե՛ր:***
Եքա *մարդիկ են դարձել:*
Ինադու *եմ թողել նրան մենակ:*

Մայրենի լեզվում անհարկի հաճախ գործածվում են օտարամուտ բառեր, արտահայտություններ և խոսքային կառույցներ, որոնց համարժեքները գոյություն ունեն: Դրանք օտարաբանություններ են, որոնք դժվարացնում են խոսքի հասկանալիությունը, խախտում ոճի միասնությունը և լեզվի մաքրությունը: Այդ հերոսների մոտ չափազանց շատ են նման արտահայտությունները:

Կակրաշ *ես ու դու գնում ենք Մոսկվա (հենց, իսկապես):*
Մալադեց, *տղա՛ս (ապրես, կեցցես):*
Կոնկրետ *ինչի՞ մասին է խոսքը (մասնավորապես, հստակապես):*
Համարդ ***ֆիքսել*** *եմ (նշել, արձանագրել, գրանցել):*

Այսպիսի բառեր սովորաբար գործածում են մարդիկ, ովքեր կրթություն են ստացել ոչ մայրենի լեզվով, լավ չեն տիրապետում հարազատ լեզվին կամ չգիտեն օտար բառերի ու արտահայտությունների հայերեն համարժեքները:

Դարմայեղների *պես ապրում են (պորտաբույծ, ֆրիակեր):*
Էս ***պերիոդում*** *դու իրավունք չունես այդպես անելու (շրջան, փուլ):*
Ռազվեդկիա *գնացել, ասում են (հետախուզություն):*
Նրան ազատելու ***օպերացիային*** *պետք է մասնակցեինք (ռազմական գործողություն):*

Եթե ուշադրություն դարձնենք վերոնշյալ օտար բառերին, նկատելի է, որ դրանք հայերենի նման հոլովվել են: Օտարաբանությունները հաճախ հանդիպում ենք ոչ միայն առօրյա խոսակցականում, այլև գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքի ոճավորման նպատակով: Բայց յուրաքանչյուր ոք պետք է հատուկ հոգածության առարկա դարձնի իր խոսքը, հետևի նրա մաքրությանը, հրաժարվի դրանց գործածությունից: Պետք է հիշել, որ մարդ ինչպես խոսում, այնպես էլ մտածում է:

Չափազանց շատ են նաև քերականական անճշտությունները, հատկապես բայի խոնարհման հետ կապված աղավաղումները:

Խոսքն այստեղ հումորային կերպարների մասին չէ:

Չկատաղացնաս *ինձ (չկատաղեցնես):*
Դու ***մի՛ խոսա*** *(մի՛ խոսիր):*
Պա՛պ ջան, ***չլսա՞ր*** *(չլսեցի՞ր):*
Տղերքին ***զգուշացրա՛*** *(զգուշացրո՛ւ):*

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ մայր Հայաստանի սրտում ապրող և խոսող որոշ հերոսների մոտ է առօրյա-խոսակցական ոճը: Հետաքրքիր է, այդ ո՞ւմ են կերպավորում կամ ո՞ր բնակավայրի բարբառային խոսակցությունն է անհատականացվում նույն հարկի տակ ապրող հերոսների՝ հայերենի տարբեր խոսակցություններով:

Տղու *համար եմ ասում (տղայի):*
Արագի մեջ էրեխու *թղթերը դասավորում ես (արագ, երեխայի):*
Ես ***տունն եմ*** *(տանն եմ):*
Դու ինձ ***մահու*** *չափ վախեցրիր (մահվան):*

Շատ են նաև դերանունների աղավաղված արտահայտությունները:

Քավորն ինձ ***ընդեղ*** *մենակ չէր թողնի (այնտեղ):*
Չի կարող ***տենց*** *բան լինի (այդպիսի):*
Արի ***ատեղ*** *(այստեղ):*
Սենց *որ մնա (այսպես):*
Ե՞րբ են իրանք գնում (իրենք):

Հետևենք «կարող» բառի գործածություններին:

Կարողա *ինչ-որ բան սխալ****ա*** *(կարող է):*
Չեմ կարա *նստեմ (չեմ կարող):*
Կարա՞մ *վերցնեմ (կարո՞ղ եմ):*

Հերոսների խոսակցություններում մի նոր ոճական երանգ է նկատվում **<u>ա</u>** ձայնավորի գործածության մեջ, որը նրանց խոսքում փոխարինում է **<u>եմ</u>** օժանդակ բայի եզակի թվի 3-րդ դեմքին:

Ամեն ինչ ***լավա*** *լինելու (լավ է լինելու):*
Ձեր հիվանդանոց գնալն ***անիմաստա*** *(անիմաստ է):*
Էդ ***հարցնա,*** *որ ինձ* ***տանջումա*** *(հարցն է, տանջում է):*
Աղջիկդ ***թոռա*** *պարգևել ինձ (թոռ է պարգևել):*
Նա ***վերևումա*** *(վերևում է):*

Հայերենում «լինել» բայը գործածվում է որպես օժանդակ բայ: Սակայն այս բայն ունի եմ օժանդակ բայից տարբեր մի դեր ևս, այսինքն՝ կազմում է հարադիր բայեր՝ լաց լինել, բաց լինել... Այն ունի բոլոր եղանակաժամանակային ձևերը, անկանոն բայ է, որոշ դեպքերում

դառնում է եղել:

Լսում ենք որոշ հերոսների խոսքեր, ուղղակի զարմանք են պատճառում այսպիսի արտահայտությունները:

Պիտի կանգնած ***ըլենք*** *իրար թիկունքի (լինենք):*
Այդ հարցը ճակատագրական ***կըլնի*** *(կլինի):*
Ինչքա՞ն նստեմ պատի տակ, լաց ***ըլեմ*** *(լինեմ):*
Ազատ ***ըլնեմ,*** *կմտնեմ (լինեմ):*
Հնարավոր է ինչ-որ բանով պետք ***ըլեմ*** *(լինեմ):*

Մտորելու տեղիք է տալիս այսպիսի խոսակցությունը: Ո՞րն է պատճառը: Գուցե գրական հայերենի երկու տարբերակներն էլ (արևելահայերեն և արևմտահայերեն) ստեղծվել են բարբառային հիմքի վրա և դժվա՞ր է հեռանալ արմատներից:

Բալե՛ս*, ես քեզ համար միշտ էլ ժամանակ ունեմ (բալաս):*
Տղես *չեկավ (տղաս):*
Մինչև մամայի ոտի ***հեվնեելը*** *... (եվնելը):*

Չնայած փորձում եմ մի կողմից արդարացնել այդպիսի խոսակցական արտահայտությունները, որ գուցե արևելահայ գրական լեզվի համար հիմք է ծառայել Արարատյան բարբառը և հատկապես Երևանի խոսվածքը, և ա՞յդ պատճառով են այդպես արտահայտվում: Արդյո՞ք արցախցու համար էլ սովորական չեն այդպիսի բառերի գործածությունները, չէ՞ որ նա էլ իր բարբառին ամուր կառչած է, ինչպես իր արմատներին: Բայց նորից գալիս եմ այն համոզման, որ եթե խոսքը վերաբերում է մեր և՛ լեզվի, և՛ մտքերի ու զգացմունքների գեղեցկությանը, ապա պայքարենք լեզվական խաթարումների դեմ: Կարծում եմ կարիք չկա փնտրել, թե խոսքս որ մի սերիալի մասին է՝ այս օրերին ցուցադրվո՞ղ, թե՞ արդեն մի քանի անգամ նախկինում ցուցադրված, փաստն այն է, որ այս մեջբերումները, նույնիսկ ավելին, գրի եմ առել՝ ընդամենը մի քանի սերիաներ նայելով: Ըմբռնումով մոտենանք իրողությանը. լեզվական անկարգությունն ամենուր է, չմոռանանք, որ լեզուն աղավաղում են ոչ միայն օտարամուտ, այլ նաև մայրենի լեզվի բառերը, երբ դրանք ձևախեղման են ենթարկվում: Որքան էլ ախորժալուր հնչեն գրական հայերենից շեղված բառերն ու արտահայտությունները, միևնույն է. «**Եթե վաղ թե ուշ մարդ չազատվի լեզվական կեղտից, վերջիվերջո դա կկեղտոտի նրա հոգին ևս»:** (Լ. Կասիլ)

http://usarmenianews.com/am-n-1467.html

24.02.2016

ԴՈՒՔ ԱՅՆՔԱՆ ԵՔ ՄԵԾԱՐԵԼ ԻՄ ՀԱՅՐԻԿԻՆ, ԵՍ ԱՐԴԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՆԱ ԿԱ ՈՒ ՄԻ ՕՐ ԿԳԱ

6-րդ դասարանում եմ, իմ սանիկի ծննդյան օրն է, շնորհավորում ենք, լավագույն բարեմաղթանքի խոսքեր են հնչում...

Բոպեներ անց աշակերտուհիներից մեկը, մի քիչ վախվորած, ձեռքիս դրեց մի ճմռթված թուղթ: Նայում եմ զարմացած, իսկ նա բացում է թուղթը, փորձում բացատրել ինչ-որ բան, որ ինձ էլ անհասկանալի էր:

Մի ճմռթված թուղթ, մի ծննդյան օր, մի համեստ աղջիկ ու դրանց կողքին իմ նույն սանիկը, որ նայում է ինձ ամաչկոտ, անգամ չի ուզում ասել, որ իր ծննդյան օրն ինքն է գրել, գուցե փոշմանել, գուցե ամաչել, փորձել է ճմռթել, որ ես չտեսնեմ: Բայց փրկվել է թուղթը, և այսպես կողքիս այս համեստ աղջիկը ինձ ցույց է տալիս. «**Գևորգն ամաչեց Ձեզ ասել, բայց գրեց նա, հետո ճմռթեց, իսկ ես վերցրի, որ ցույց տամ, թե ինչպես նա սիրում է Ձեզ**»:

Բացում եմ թուղթը, նայում գրածին ու սոսկում եմ. «**ԴՈՒՔ ԱՅՆՔԱՆ ԵՔ ՄԵԾԱՐԵԼ ԻՄ ՀԱՅՐԻԿԻՆ, ԵՍ ԱՐԴԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՆԱ ԿԱ ՈՒ ՄԻ ՕՐ ԿԳԱ**»:

Այդ պահին թուղթը մոռանում եմ, որ ճմռված է, նայում եմ իր հայրիկին սպասող իմ սանիկին: Նա լուռ է, գլխահակ, իսկ ես խեղդվում եմ իմ հոգու ցավից, ուզում եմ գոռալ, ուզում եմ կանչել, որ հայրիկը գա, որ այս բալիկը անհայր չմնա: Նա լուռ նստում է, բայց ինչ-որ մեկը կողքիս ասում է. «**Էլի կա գրված, այն էլ կարդացե՛ք**»:

Նորից տողերին անձայն նայում եմ. «**Ձեզ միշտ կհիշեմ, մեծատառո՛վ մարդ, իմ ուսուցչուհի՛**»:

Մտքերի մեջ եմ, անձայն նստած, ես նրա հետ եմ իմ մտորումներում, բայց չգիտեմ էլ, թե ինչպես ասեմ, որ իր հայրիկը հավերժացել է, որ մենք Արցախում երջանիկ լինենք:

http://usarmenianews.com/am-n-1562.html

26.02.2016

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

7-րդ դասարանում հայոց լեզվի դասանյութի հերթական առաջադրանքը՝ գրել փոքրիկ շարադրություն «Անկեղծ զրույց» վերնագրով, իմ աշակերտի շարադրանքի մեջ ինձ կերպարանափոխված տեսա: Արդյո՞ք, ինչպես ինքն է գրում, ես կարողանում եմ հիպնոսացնել նրանց և շարունակում եմ կարդալ տողերը. **«Տիկին Պողոսյանը կարծես ունի կախարդական ուժ, կարողանում է մեզ հիպնոսացնել, նրա բառերը միշտ լռեցնում են մեզ»:**

Ուշադիր նայում եմ բոլոր աշակերտներին, նա բոլորի անունից է գրել, հոգնակիով, ուրեմն պետք է պարզել, թե որքանով է լավ, որ այդպես են զգում իրենց: Բայց պարզելու կարիք չկար, երբ նորից կարդում եմ տողերը. **«Նա միայն այս ամիսներին է, որ դասավանդում է մեզ, ու կարծես մենք նրա զավակները լինենք»:**

Անլուծելի մի խնդրի առջև կանգնած ուսուցչուհու կերպարի մեջ եմ մտնում, ես ինքս էլ մտածելով, թե որտեղի՞ց է ծնվել փոխադարձ հարգանքի ու սիրո անկեղծ զգացողությունն այս դեռահասների հանդեպ, մի դասարան, որտեղ ամենից շատ թույլ կարողությունների տեր աշակերտներ են ընդգրկված: Բայց թվում է՝ պատասխանը չեմ գտնում և նորից հայացքս սահեցնում եմ իմ աշակերտի՝ Արմո Մարտիրոսյանի գրած տողերով, փորձում գտնել բանալին, և ահա գտնում եմ կարծես. **«Մենք չգիտենք, թե ինչու, բայց նա միշտ վստահում է մեզ...»:** Ու ես փորձում եմ գտնել այդ ինչու-ն, թե իրոք, ինչո՞ւ եմ վստահում նրանց: Եվ իմ փնտրտուքների մեջ գտնում եմ մի բառ, որ միշտ էլ գեղեցիկ է հնչում, և ես այդ վստահության կողքին ավելացնում եմ մի մեծ սեր, որ կապում է մեզ իրար հետ ամեն օր: Եվ ես ուզում եմ, որ իմ այս տողերը կարդան այդ «ինչուները» իրենց հոգում կրող իմ բոլոր աշակերտները, ովքեր միշտ ինձ հետ են ու այդպես էլ կմնան:

Վստահություն ու սեր. սա է իմ մանկավարժական վարվեցողության ոսկե բանալին: «Ամենադժվար» համարվող աշակերտին կարելի է փրկել սիրո և վստահության միջոցով:

28.02.2016

ԵՍ ԵՐԵԿ ԱՆԿԱՐԳ ԷԻ, ԴԱՍՂԵԿՍ ԲԱՐԿԱՑԱՎ

Երբեմն դպրոցական կյանքում փոքրիկ միջադեպեր են լինում, որ ուշադրության են արժանանում, և դրանք երբեմն դաստիարակչական հիանալի դեր են կատարում, եթե ճիշտ ուղղվածությամբ են տարվում, որի արդյունքում աշակերտն ինքը գիտակցում է իր սխալը և փնտրում «հաշտության» ձևը:

Ուսուցիչներից մեկը դժգոհեց, որ իմ դասղեկական 6-րդ դասարանի աշակերտուհիներից մեկը՝ Արմինե Մանուկյանը, խանգարել է դասը, դիտողությունն անգամ չի օգնել նրան:

Ես առաջարկում եմ՝ միասին մտնենք դասարան, պարզենք, թե ինչու է խանգարել դասը: Նա չէր ուզում, իսկ ես պնդում եմ, և մեր ուսուցչի ներկայությամբ «պատժում եմ» այս դեռահասին: Սաստող մի քանի խոսքեր, վարքի անբավարար գնահատական, վերջին նստարան, որտեղ այս փոքրահասակը հազիվ էր երևում: Զգացի, որ նա էլ զարմացած է, «պատիժը» խիստ թվաց նրան: Իսկ ես հանգիստ եմ, գուցե նաև զայրացած, բայց արտաքուստ հանդարտ եմ ինձ պահում:

Այդ օրն անհանգիստ էի, խոհերիս շղթայում մի վերջին նստարան էր, մի փոքրիկ աղջիկ, որ դաս էր խանգարել: Բայց հետո զարմանում եմ, երբ իմ հաջորդ օրվա դասաժամին երկար ցողուններով, կարմիր ժապավենով կապած, երեք վարդ ձեռքին՝ մոտեցավ ինձ:

Ժպիտ կար դեմքին, քողարկված թախիծ, իսկ ես զարմանքից նայում եմ նրան, բայց հիշում մի վերջին նստարան:

Մի ամբողջ դասարան խնդրում է ինձ, որ տեղափոխեմ այս փոքրահասակ աղջկան: Նայում եմ վարդերին, և հետո հենց իրեն, որ վերջին նստարանին նա գլխահակ ինչ-որ բան էր գրում: Կարդում եմ տողերը այս փոքրիկ աղջկա, մի փոքր կցկտուր, բայց անկեղծություն կար այնտեղ. «**Ես երեկ անկարգ էի, դասղեկս բարկացավ, իսկ այսօր խելոք եմ, ծաղիկներ նվիրեցի նրան»:**

Նայում եմ վարդերին, ժպտում են ինձ, նայում եմ աղջկան, ուրախ է նորից... Հույսով, որ իմ աշակերտուհին նոր սխալներ չի գործի, ընդառաջեցի աշակերտների խնդրանքին...Նա նորից իր տեղում՝ առաջին նստարանին էր նստած:

http://usarmenianews.com/am-n-1681.html

01.03.2016

ԻՆՁ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՆՇԱՆԱԿԵ՛Ք

6-րդ դասարանում եմ, դեռ դասամատյանը սեղանին չդրած՝ աշակերտուհիներից մեկը օրագիրը իմ առջև՝ սեղանին, դրեց: Անուշադրության մատնեցի, երևի ուզում է, որ իրեն դաս հարցնեմ, բայց մի քանի րոպե անց նա կանգնում է: Իմ հարցումին, թե ինչու է կանգնել, նա անվարան պատասխանում է. «**Ինձ անբավարար նշանակե՛ք**»,-ապա զարմացած հայացքս նկատելով՝ ավելացնում է. «**Ես այսօր Գոռին վիրավորել եմ, այն էլ՝ այդ բառերը գրել եմ այստեղ, իսկ նա կարդացել է**»:

Գոռը դասարանի փոքրահասակն է, մի սիրուն անմեղություն, նրա՝ դասերին անպատրաստ ներկայանալը երբեմն անտեսում եմ, որ հաճախակի մասնակցում է ընբշամարտի մրցումների, ու քանի՞-քանի հաղթանակներ է բերել մեզ համար: Հայացքս ուղղում եմ Գոռին, նա շատ հնազանդ, կամացուկ ձայնով, մի քիչ խեղճացած, մանրիկ մի ժպիտ դեմքին խաղացնում, նայում է ինձ ու խոսում կամաց. «**Ես չեմ բողոքում ասված, մոռացված բառերի համար, որ ինձ էր ուղղել... »**:

Իսկ այն «անկարգը» նորից է պնդում. «**Իմ վարքն անբավարար նշանակե՛ք, տիկի՛ն Պողոսյան...**»: Ու ես բացում եմ օրագիրը, բոլորի հայացքներն ուղղված են ձեռքիս: Տեսնես գրիչը զորեղ կլինի՞, որ կարողանա ինձ համոզել, որպեսզի իմ զղջացող աշակերտուհու՝ Արմինե Կարապետյանի վարքն անբավարար նշանակեմ: Հասկանում էի, որ դրանով թերևս իմ աշակերտուհու հոգին մի փոքր գուցե կթեթևանար, բայց նորից փակում եմ օրագիրը, ուշադիր նայում նրանց հայացքներին:

Իմ փոքրիկ ընբշամարտիկը ժպտում է ուրախ, այն փոխանցվում է մյուսներին, նայում եմ իմ աշակերտուհուն, ապա հարցնում. «Կարո՞ղ ես մի նկար ուղարկել ինձ»:

Զարմացած հարցնում է՝ թե ինչո՞ւ համար, իսկ ես ժպտում եմ ու չեմ պատասխանում, բայց հուսով էի, որ իմ աշակերտուհին մի օր կտեսնի իրեն ու չի զարմանա, որ այսպես տեսանելի դարձավ:

http://usarmenianews.com/am-n-1754.html

04.03.2016

ՆՈՐ ԵՐԳ ԱՐՑԱԽԻ ՀՅՈՒԹԵՂ ԲԱՐԲԱՌՈՎ

Շնորհավորում եմ հարազատ Մարտակերտին ձոնված այս հրաշալի տեսահոլովակի ծնունդը, առավել ուրախալի էր, երբ ինձ շատ հարազատ դարձած այս տղաների կողքին տեսա նաև մեր դպրոցի 12-րդ դասարանի երկու աշակերտների՝ Սերգեյ Զաքարյանի ու Էդիկ Գրիգորյանի մասնակցությունը, իսկ վերջինիս այս օրերին էլ դասավանդում եմ:

Ոգևորիչ է, երբ Արցախի բարբառը հյութեղ է դառնում մեր երիտասարդների ստեղծած երգի հրաշալի խոսքերում: «Լափ լյավ ինինք» վերնագիրն ինքնին լավ տրամադրություն է ստեղծում, այնքան անմիջական, պարզ էր ասելիքը, որ լսում ես ու նորից ցանկություն է ծնվում նորից ունկնդրելու այս երգը: Անկախ նրանից, թե ինչ ոճի մեջ է այն, ես տեսա, որ իմ կողքին ապրող այս սերունդն ասելիք ուներ, և այն արտահայտել է այս երգով: Ողջունում եմ և ստեղծագործական գեղեցիկ ճանապարհ ցանկանում երգարվեստի ուղին ընտրած իմ կողքին ապրող այս երիտասարդներին:

Տեսահոլովակ՝
https://www.youtube.com/watch?v=On8WWOhrXqY&feature=share

09.03.2016

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՛, ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ

Օրեր առաջ էր: Աշակերտների հետ վերջին օրերի միջոցառումներից էինք խոսում, նորից նրանց ուշադրությունը սևեռվեց մեր համերկրացի արձակագիր Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» գրքի քննարկմանը: Մի տեսակ լարված և շատ ուշադիր լսում էին:

Իմ զրույցից հետո անխոս հայացքներ եմ նկատում, կարծես ուզում են նորից լսել: Լռությունը խախտում եմ ես. «Ինչ եք զգում այս պահին»: Անհասկանալի շարժ նկատվեց դասարանում, յուրաքանչյուրը յուրովի մտքերի մեջ ընկավ, բայց ուշադրությանս արժանացավ այս մեկը, որ ասված էր հոգով, սրտի անկեղծ թելադրանքով. «**Շնորհակալ եմ Ձեզ, տիկի՛ն Պողոսյան, որ այս օրերին պատմեցիք մեզ մի մարդու մասին, ում նկատմամբ կյանքը դաժան է եղել և իր ստեղծագործություններով սիրված է բոլորի կողմից: Ես չեմ տեսել գրողին, բայց ընդունում եմ նրան իմ պապիկի պես»:**

Ընդհատում եմ ընթերցումս, ուշադիր նայում աշակերտիս, հոգիս բերկրանքով է լցվում, բայց նաև անհանգիստ մտորում եմ, իսկ գուցե նա կյանքից նոր հեռացած իր պապիկի՞ն է կարոտում: Այդ պահին աշակերտների այս ու այն կողմից լսվող ձայներն եմ լսում...Իմ սաստող հայացքը նրանց լռեցնում է, բայց ոոպե առաջ ուզում եմ կարդալ մյուս տողերը. «**Ես ինձ հանգիստ եմ զգում Ձեր դասերին, զգում եմ հոգու հանգստություն, անսահման պարզություն եմ տեսնում: Անշա՛հ ուսուցչուհի, Ձեր նման երկուսը կան իմ կյանքում՝ Աստծված և մայրս: Ես սիրում եմ Ձեզ, տիկի՛ն Պողոսյան»:**

Անսահման սիրով նայում եմ նրան, ուզում եմ ինչ-որ խոսքեր մրմնջալ, կարծես չի ստացվում, բայց լռության մեջ գրկում եմ նրան անխոս, անշշուկ...

Հաջորդ օրը 7-րդ դասարանում հայացքս ուղղում եմ դեպի իմ աշակերտ Արեգ Ստեփանյանը, ուշադիր նայում է ինձ, իսկ ես, գուցե և զարմանալի դասարանի մյուս աշակերտների համար, նրան շնորհակալու-

թյուն եմ հայտնում: Բոլորն ուշադիր նայում են մեզ, իսկ նա՝ ձեռքերը դրած նստարանին, ուղիղ կեցվածքով նստած, հանկարծ բարձրաձայնում է. «**Ես երեկ ճիշտ եմ ասել, տիկի՛ն Պողոսյան, շատ անկեղծ, իրոք, սիրում եմ Ձեզ...»:**

«**Ինչքա՜ն լավ է, որ ես ուսուցչուհի եմ, և նա սիրում է ինձ**»,-ներքուստ մտորում եմ... Նույնքան լավ է, որ ես 5-րդ դասարանում արտասվել եմ, երբ «Գիքոր» եմ ընթերցել: Այո՛, շատ լավ է, որ այդ օրվանից էլ որոշել եմ ուսուցչուհի դառնալ, և ինչքան շատ բաներ կան, որ ինձ ուսուցչուհի են դարձրել ու շարունակում են ուսուցչուհի պահել...

http://usarmenianews.com/am-n-1905.html

12.03.2016

ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՍ

«**Դպրոցական կյանքում ինձ ամենից շատ դուր է գալիս դասղեկիս ժպիտը և աշակերտների հետ նրա վերաբերմունքը**»,-ընթերցում եմ 6-րդ դասարանում իմ աշակերտուհու այս տողերը ու մի պահ կանգ եմ առնում:

Որքան զարմանալի, նույնքան հրապուրիչ էր արտահայտությունը, որ լսեցի այս շատ սիրուն, համեստ աղջնակից, որ անվերջ ինձ էր նայում անմեղ, շատ քնքուշ ժպիտով:

Անցած ուսումնական տարվանից նա սովորում է մեր դպրոցում, հայրիկը զինվորական է, մեր հայրենիքի սահմաններն է պաշտպանում, մեզ մոտ են տեղափոխվել Հայաստանից:

Խոսքը դրանով չի ավարտվում, նա շարունակում է. «**Դասղեկս մեզ հետ շատ ջերմ է, նույնիսկ եթե երբեմն բարկանում է, մեկ է, էլի նա ինձ դուր է գալիս, նա ամենալավ ուսուցչուհին է**»:

Սոֆյա Մելքոնյան... Շատ կոկիկ է նա, գեղեցիկ, հանգիստ, ու ես հիշում եմ, երբ օրեր առաջ ինձ հարց էր տվել. «**Տիկի՛ն Պողոսյան, Դուք Փարիզում եղե՞լ եք**»:

Գլխի շարժումով հասկացնում եմ նրան, որ չեմ եղել այդ քաղաքում, իսկ նա նորից է խոսք ավելացնում. «**Դուք կցանկանայի՞ք այնտեղ ապրել**»:

Մի պահ լռում եմ ու նորից ասում. «**Իմ տուն-օջախը Արցախն է, որ կա, ուրիշ տեղ երբեք չեմ կարող ապրել**»:

Այս անգամ ես եմ նրան ասում, թե ինչո՞ւ է նա այդպես հարցնում: «**Իմ ուսուցչուհին շատ բարձրակարգ է ու նաև՝ շատ կիրթ, կարծես այս տեղը իրեն հարմար չէ**»:

Զարմացած եմ ու չեմ էլ հասցնում ինչ-որ բան ասել, երբ նա հանկարծ իրենն է պնդում. «**Հայաստան գնալիս ուզում եմ անպայման Դուք էլ գաք մեզ հետ**»:

Ուրախ եմ անչափ, որ իմ աշակերտուհին հայոց աշխարհի բույրերն

էր բերել Արցախ և իր ուսուցչուհուն ուզում է տանել մի նոր աշխարհ, որ իմն է նաև:

Դասարանցիների հետ բար-սրճարան ենք ուզում գնալ...Քարքա-ռոտ, փոշոտ փողոցն ենք անցնում, իսկ նա հանկարծ նայում է ինձ ու այսպես ասում. «**Մեր տունն այստեղից մոտիկ է շատ, գնանք մեզ մոտ, հայրիկս մեքենայով Ձեզ տեղ կհասցնի**»:

Մտովի գրկում եմ այս սիրուն աղջնակին, արտաքուստ հանկարծ ժպտում եմ նրան. «**Ինչ լավ է, որ ես ապրում եմ այս փոշոտ, քարքարոտ քաղաքում, կողքիս անվերջ պատերազմի հետքեր կան, բայց նաև այսպես՝ հոգով գեղեցիկ, սիրուն բալիկներ**»:

http://www.usarmenianews.com/am-n-2006.html

14.03.2016

ՁԵՐ ՇՆՈՐՀԻՎ ԵՍ ՇԱՏ ԵՄ ՓՈԽՎԵԼ

Այդ օրը 12-րդ դասարանում նկատեցի նրա հիացած, մի տեսակ վերացած հայացքը, որ սևեռված էր ինձ: Մի անսովոր ու անհասանելի կարոտի զգացողությամբ ինքնաբուխ խոսում էի, դասարանի քարացած վիճակը դուրեկան էր, ինձ ուղղված հայացքները՝ աննկարագրելի: Սա այն պահն էր, որ երբեմն հոգիդ թախծում է, և ուզում ես խոսել, ու այդ պահին տեսա, որ իմ խոսքը թևեր է առել... Բայց նրա հայացքը սավառնում էր հեռուներում: Զանգը հնչեց, ինձ թվաց՝ նա դեռ մտքերով անտես ու անհայտ տարածքներում է, նա ինձ շատ դուրեկան էր, այդ պահին մենք միասին էինք, և ես մեղմորեն ասում եմ նրան. «**Դու ինձ հետ էիր թե հեռուներում, ես այդ չգիտեմ, բայց ինչ-որ մի բան ուրիշ էր կարծես»:**

Ուշքի է գալիս հանկարծ այդ պահին, մեղմիվ ժպտում է, գլխով հաստատում, որ խոսքս նրան հեռուն էր տարել, ինքն էլ չգիտեր, ինչպես պատահեց, հուշերով տարված, անտես ու անհայտ մտքերի մեջ էր:

Եվ հաջորդ օրը նա ինձ հանձնեց թղթին հանձնած մի սիրուն կարոտ. «**Դուք այնքան հետաքրքիր եք խոսում, Ձեր դասերին հիացմունքից բացի ուրիշ զգացողություն չեմ ունենում, այդ օրն էլ բացառություն չէր, գրականության դասը շատ հետաքրքիր անցավ: Դուք աշակերտասեր, մարդասեր ուսուցչուհի եք, շատ եմ սիրում Ձեր դասերը: Այն պահին, երբ խոսում էիք, ես մտքերով դասարանում չէի, կարծես դարձել էի կապույտ երկնքի խելագարամոլ աղջիկը, որ փողոցով քայլելիս հանկարծ ընկել է մի խոր փոսի մեջ: Իմ գլխավերևում Ձեզ պատկերացրի, որ այդ մութ տեղից ինձ հանում եք...Իմ շուրջը կարծես ամենուր մթություն էր, իսկ Դուք փոքրիկ, սպիտակ աստղիկներ էիք շաղ տալիս ամենուր, կարծես բառերն էին Ձեր փոխվում փայլող աստղերի, որ լուսավորում էին իմ ճանապարհը: Բայց լույսն աստիճանաբար շատանում էր և տարածվում ամենուր, որ բոլորին հասանելի լիներ: Ես այդ պահին վազում էի լուսավոր աստղերի հետևից, բայց երբ իմ անունը լսե-**

ցի, կարծես սթափվեցի, երևակայական աշխարհից հայտնվեցի նորից դասարանում: Շնորհակալություն Ձեզ, իմ ուսուցչուհի՛, Ձեր շնորհիվ ես շատ եմ փոխվել, ամեն քայլ անելիս, մտածում եմ՝ երանի իմ ուսուցչուհին կողքիս լիներ»:

Գարնանային արձակուրդի օրեր են, դասեր չկան, հենց հիմա էլ կարոտում եմ իմ աշակերտուհուն, այն թախծոտ, սիրունիկ աղջկան, որ մտքերով երբեմն ինձ հետ է, երբեմն՝ հեռուներում, իսկ հիմա ես եմ նրա հետ մենախոսում. «**Ես կարոտում եմ քեզ, Գայանե՛ Հայրապետյան, որ կարոտդ իմն ես դարձրել, ու ես սիրում եմ այն: Սիրում եմ ժպիտդ մեղմիվ, որ հանկարծ աստղերի պես շողում է պայծառ: Այս պահին իմ հոգում մի անտես կարոտ էր հայտնվել, տողերդ աստղեր դարձան, որ անցնելիք ճանապարհս լուսավորեն»:**

http://www.usarmenianews.com/am-n-2029.html

18.03.2016

ԿԱՊՈՒՅՏ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Նա շատ լռակյաց է, հազվադեպ է խոսում, երբեմն ուրախանում եմ, երբ արտահայտվում է թեպետ մեկ բառով... Միշտ էլ ուշադրությանս կենտրոնում է, երբեմն ինձ թվում է՝ նա երազանքների մեջ է, կլանված լսում է ինձ, նույնիսկ, ի զարմանք շատերիս, հիացմունք արտահայտող խոսքը նա օրեր առաջ ինձ էր բաշխել. «Ձեր դասերին ես ինձ մեծացած եմ զգում»:

Այդ օրվանից զգում էի, որ ընկալունակությունը շատ սուր է այս աղջնակի, ուղղակի ամաչում է արտահայտվել: Եվ ես սկսեցի նրան «խոսեցնել», կարծես ուզում էի բառեր կորզել նրանից և օր օրի համոզվում էի, որ ասելիք ունի, բայց չի համարձակվում բարձրաձայնել: Ես նրան առաջարկեցի՝ եթե ամաչում է՝ ի տես բոլորի ինչ-որ բան ասել, ապա թող գրի, ես այն կկարդամ... Եվ շուտով իմ ձեռքին հայտնվեցին այդ լռակյաց աշակերտուհու գրած տողերը. «**Շուրջս տարբեր գույներ են, այն տեսնում եմ բոլորի հագուստների վրա, նույնիսկ մարդու մաշկն էլ տարբեր գույների է լինում, անգամ նրանց աչքերի գույներն էլ տարբեր են, ծաղիկներն էլ բազում գույներ ունեն, բայց ես սիրում եմ կապույտ գույնը և ուզում եմ իմ ձեռքին ունենալ մի կապույտ վարդ: Ես ուզում եմ կապույտ վարդ, որովհետև երբ նայում եմ լուսավոր օրվա երկնի կապույտին, ուզում եմ թևեր առնել ու թռչել վերև ու այնտեղից տեսնել երկիրը մեր: Ուզում եմ այդ կապույտ վարդը ձեռքիս նստել ծովափին, այն էլ կապույտ է, և ինձ թվում է՝ հոգիս էլ կապույտ է և շատ է հանգիստ, երբ ես նստած եմ հենց ծովի ափին: Ես՝ ծովափին, վարդն էլ՝ իմ ձեռքին, վարդի բույրն եմ ուզում զգալ ու նաև՝ լսել այդ ծովի ձայնը...Իմ երազանքն է այդ կապույտ գույնը...**»/Ավետիսյան Ալինա, 7-րդ դասարան/:

Տողերն ընթերցում եմ, մի քիչ կասկածամիտ նայում աշակերտներին, հարցս գուցե զարմանալի էր, բայց առաջարկում եմ կապույտ

վարդ գտնել, որ նվիրենք կապույտ երազանքների մեջ թևածող իմ լռակյաց աշակերտուհուն:

Նա զարմանում է. արդյո՞ք այսքան շուտ երազանքներն իրագործվում են, ու ես հաստատուն ասում եմ նրան, որ իր խոսքերը կկարդան ոմանք, ովքեր ապրում են երկնքին մոտիկ և կամ ծովի մոտ, հեռու՜-հեռավոր ափերում անգամ, իսկ կապույտ վարդը մենք էլ կգտնենք, միայն թե նրա այդ երազանքն իրականանա:

http://www.usarmenianews.com/am-n-2133.html

21.03.2016

ՍԱՀՄԱՆԻ ՄՈՏ ՍԵՐՈՒՆԴԸ ԱՆԴԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ Է ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՒՄ

Ստեղանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա սահմանն է, իսկ մենք զինվորական դիրքերից մեզ հասնող կրակահերթերի արձագանքների տակ դասերը չենք ընդհատում: Արթուն անցկացրած գիշերներից ու մեկընդմեջ կրկնվող ցավալի լուրերից հետո ամեն օր յուրաքանչյուր դասարանում ասելիք եմ ունենում՝ դառը հույզերով շաղախված: Երբեմն ցավը հոգումս ճչում է աղիողորմ, և անցյալի հուշերիս երկարատև շղթան հրետակոծությունների ծանր շղարշով է պատվում, նկուղային ծանր կյանքի պատկերներն են ուրվագծվում իմ հայացքում, գիշերվա կեսին հարազատ բնակավայրից հեռացած և հայրենի գյուղում փրկության հույս փայփայող փախստականի տեսքով եմ երևում աշակերտներիս:

Տարբեր գյուղերից մեզ միացած բռնագաղթվածներիս քարավանը ձգվում էր դեպի մայրաքաղաք տանող անտառային արահետներով, ուր ոտնահետքեր էի փնտրում բոբիկ ոտքերիս համար՝ դեռ թարմ հիշողությանս մեջ ունենալով ժամ առաջ հրետակոծությունից մշուշապատված հայրենի գյուղս և վիրավորների հառաչանքները: Փախստականներիս մեջ սովի մատնված փոքրիկ դստերս համար ճանապարհին մի կտոր հաց հայթայթեցի մի կնոջից՝ կես բռանս չափ, այն նորից կիսեցի: «Սա էլ մեզ սպասվող ավելի վատ պահի համար, որ ավելի շատ սովածանաս, այն ժամանակ»,-ասացի ես, բայց երեխայիս աչքը իմ թաքցրած հացի երկրորդ կեսի վրա էր:

Դասաժամն աննկատ անցնում էր, կիսատ թողեցի պատերազմական տարիների ցավատանջ հիշողություններս, տպավորությունները ծանր էին, ինձ սևեռված հայացքները՝ քարացած: Բոլորս լուռ էինք, այդ լռության մեջ մենք գիտակցում էինք, որ Աստված չարասցե, եթե այս անգամ էլ նման բան լինի, գնալու տեղ չունենք, սա մեր տունն է, և մենք կառչած ենք արմատներով մեր նահատակների արյամբ հեղված արցախյան այս սուրբ հողին:

Սերնդին ուսանել է պետք, խուճապը մեզ համար չէ… Ու օրվա թախծոտ տրամադրությունը կամաց-կամաց տեղի է տալիս, և համոզվում եմ, որ միայն հող հայրենիի նկատմամբ անսահման սիրո զգացողություն ունեցող դպրոցականը կարող էր այսպես գրել. «**Իմ հայրենիքը տիեզերքն է, մարդկային ողջ ցեղը, իմ եղբայրները, իմ հավատամքը: Հայրենասիրությունն ինձ համար սեր է մի ամբողջ հողի, մայր հայ-**

ռենիքի, պետականության ու եռագույնի նկատմամբ: Սիրում եմ իմ հայրենիքը և ինչ-որ չափով համարում եմ ինձ հայրենասեր, քանի որ չեմ պատկերացնում իմ առավոտը մեկ ուրիշ երկրում»:/Ջավադյան Վարդուհի/

Թեթևանում է հոգիս, ուրեմն այս նոր սերունդն անդառնալի կորուստների հիշողությամբ է դաստիարակվում և ոգեկոչվում մեր հինավուրց ցեղի պատմական արժանապատվությամբ: Իսկ հայրենասիրության զգացումն ուղեկցում է սերունդներին՝ որպես անմնացորդ նվիրում, որպես ազգային տեսակը չկորցնելու հոգեկան կերտվածք. «**Ակամայից գալիս եմ այն մտքին, որ Արցախն իմ հոգին է, և այդ մտածումներով «Զոհվի՛ր, միայն փրկի՛ր հայրենիքդ» կարգախոսն է իմ սրտում: Հայրենիք, որ սուրբ է, և որի ազատության համար բազում քաջեր վճարեցին իրենց արյամբ՝ թողնելով մեզ միայն իրենց շիրմաքարերը՝ որպես հաղթական կամար, որպես հայի ոգու անպարտելի խորհրդանիշ**» /Կարապետյան Արմինե/:

Հրետանային կրակոցների տակ սերունդը հայրենասիրության դաս է սերտում. «**Սահմանին այսքան մոտ ապրելով՝ մենք ուրիշ ենք դառնում: Մեր կենդանի պատվար լինելու գիտակցումը վախի հետ նաև հպարտության գիտակցում է ծնում: Մենք ավելի ենք արժևորում մեր ամեն մի խաղաղ լուսաբացը և հասկանում, թե մեզ շրջապատող օդի պես որքան կարևոր է խաղաղությունը**» /Գրիգորյան Սեդա/:

Լռում եմ, բայց անխոս լռությունս աղաղակում է հոգումս, սիրտս տառապում է ցավից, մտքերս նորից սավառնում են դեպի հեռուները… Տեսնես՝ աշխարհի մարդիկ գիտե՞ն, որ հայի համար կյանքը հավերժական տոն չէ: Սա սահմանն է, իսկ սահմանի մոտ մեզ համար մահվան խորհուրդը բեկվում է հավերժության ու անմահության հաղթանակով և առ Աստված ուղղված մեր աղոթք-մրմունջներով:

http://usarmenianews.com/am-n-2193.html

21.03.2016

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ՝ ՀԵՌԱՎՈՐ ԱՓԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Արցախում ապրող ուսուցչուհիս, արձագանքելով մեր հայրենակիցներին, տպագրության համար մեծագույն սիրով մի փոքրիկ հոդված է ուղարկում Վորոնեժի հայկական համայնքի «Անի» թերթին՝ համոզված, որ տարիների ընթացքում թերթը սրբորեն է կատարել իրեն վերապահված առաքելությունը՝ հայկական շունչը, հայերենն ու հայեցին պահպանելու գործում: Գիտեմ, որ հայրենիքի կարոտը երբեմն օտար եզերքներում ապրող հայերի հոգում ստեղծում է մի նոր հոգևոր հայրենիք, որը լեցուն է անցյալի հուշերով ու հիշատակներով: Հուսով եմ, որ մանկավարժիս հոգում ծանրացած ցավը նոր հիշողություններ կարթնացնի մեր այն բոլոր ընթերցասեր հայրենակիցների մոտ, որոնց հոգում դեռ ապրում է մեր հայրենի փոքրիկ Արցախն իր մայր Հայաստանով:

ՀՈԳՈՒՍ ՄԵՋ ԾԱՆՐԱՑԱԾ ՑԱՎՆ ԱՇԽԱՐՀԻՆՆ Է ՈՒ ՄԵՐ ԲՈԼՈՐԻՆԸ

Այդ օրը առավոտյան դպրոցի հարակից փողոցի մի մայթից մյուսն անցնելիս անսովոր թեթևություն զգացի, ինձ թվաց՝ օդում սավառնում եմ: Նկատեցի, որ ինձանից ոչ շատ հեռու կանգնած երեք ոստիկան հայացքներն ուղղել էին դեպի ինձ: Չնայած նրանցից միայն մեկին ճանաչեցի, բայց իմ ողջույնից հետո խոսքս ուղղեցի նրանց. «**Չեք պատկերացնի, թե ինչ թեթևություն զգացի, երբ անցա այս նոր ասֆալտապատված փողոցով: Սա ուղղակի հրաշալի զգացողություն է, որ տարիներ շարունակ մենք չենք վայելել**»:

Իմ խոսքի արձագանքը նրանց զարմացական ժպիտն էր, իսկ երբ բարձրացա դպրոցի երկրորդ հարկ, մոտեցա պատուհանին, որպեսզի մեկ անգամ ևս հեռվից վայելեմ ջրափոսերից ազատված փողոցը, որի ասֆալտապատումով մի նոր շունչ էր տրվել նախկինում փոշու մեջ կորած իմ բնակավայրի այդ տարածքին: Հետաքրքիր էր, ափսոսայի՞, որ շատերը չեն ունեցել այսպիսի զգացողություն, թե՞ երանի տայի նրանց, ովքեր ծնված օրվանից դարուփոսերով չէին անցել:

Մտորումների շղթան ինձ տարավ 10-րդ դասարան... Նայում եմ իմ

առջև նստած աշակերտուհու ձեռքի արագ շարժումներին: Ընդամենը տաս րոպե, առաջարկել էի աշակերտներին՝ շարադրել իրենց մտքերը՝ տեղավորվելով այդ րոպեների մեջ: Ուսուցման այս մեթոդի համաձայն՝ եթե գրելու բան չունես անգամ, փակագծերում պետք է գրել՝ չգիտեմ:

«Սևագրություն է, չհասցրի մաքրագրել»,- ինձ հանձնելով՝ ասաց նա: Մի պահ նայեցի շարադրանքին, փակագծերում դրված բառ չգտա, բայց կարծես իր սերնդակիցների կոչն էր թերթին հանձնած. **«Ցանկանում եմ գոռալ, դիմել աշխարհի բոլոր մարդկանց՝ մի՛ փակեք ձեր աչքերը ուրիշի ցավի վրա, անտարբեր մի՛ եղեք անմեղ կյանքերի կորստյան հանդեպ: Գուցե կգտնվեն մարդիկ, որ կդատապարտե՞ն ինձ, որ մեղադրանքի խոսք եմ ուղղում անտարբեր դարձած աշխարհին: Իսկ դուք գիտե՞ք ես ինչպես եմ ապրում: Ամեն օր տագնապած սպասում եմ վատ լուրերի: Եվ շատ անգամ գույժը մեզ սպասեցնել չի տալիս: Ավելի հաճախակի են դարձել փոքրիկ երկրիս՝ սահմանից մեզ հասնող կրակոցները: Ամենաահավորն այն է, որ դրանք մեզ համար սովորական են դարձել, և մենք շատ ժամանակ դրանց չլսելուց ենք տագնապում և ապրում մեծածավալ հարձակումի սպասումով: Ամեն մի կրակոց լսելով՝ միտքս բթանում է, հոգիս՝ տակնուվրա լինում: Բայց իմ մտահոգությունը միայն մեր փոքրիկ Արցախում ապրողներիս մասին չէ: Ամբողջ աշխարհը բախվել է մահվանը, ամեն տեղ ահաբեկություն, պատերազմ, անմեղ զոհեր... Նույնիսկ սովորական լրահոսն է միայն տխուր լուրեր հաղորդում: Մեր կապույտ մոլորակը էլ չի կարող տանել չարիքի այս բեռը, ու մարդիկ ծանրացնու՛մ, ծանրացնու՛մ են մոլորակի սիրտը»:**

Ս ե դ ա՛ Գ ր ի գ ո ր յ ա ն , այս հասուն մտքերով աղջնակին որտեղի՞ց եկավ նաև իմ հոգին ծանրացնող այս խոսքը: Միտքը անսովոր էր, բայց զորեղ ու թախծալի... Այս տողերը ինձ մտովի տանում են դեպի հեռուները...Ուզում եմ աշակերտներիս խոսքերում ամեն անգամ բանաձևել բառը, արտահայտությունը, նրանց հուզական վիճակը, ցանկանում եմ ասել այն գերբնական զգացողությունն արտահայտող միտքը, որ կարող է նրանց հուսադրել, բայց կարծես չեմ գտնում, ու ես էլ, հոգուս մեջ ծանրացած, կուտակում եմ այն մեծ ցավը, որ աշխարհինն է ու մեր բոլորինը: Ու ժամեր հետո նստում եմ հեռուստացույցի առջև և

ուշադիր հետևում աշխարհում տեղի ունեցող վերջին իրադարձություններին… Կսկիծով անջատում եմ հեռուստացույցն այն մեծ համոզմամբ, որ աշխարհի ամենալավ վայրը Արցախն է, իմ սուրբ օրրանը, որտեղ պատերազմի հետքերն են ամենուր… Իմ և բոլորի Մարտակերտը՝ փոշու մեջ կորած և քարուքանդ եղած մեր քաղաք կոչված այդ փոքրիկ բնակավայրը, որի կենտրոնական փողոցի մի մասն արդեն ասֆալտապատել են: Դա իմ բնակավայրն է, որտեղ սահմանին մոտ ապրող ուսուցչուհիս ամեն օրվա լուսաբացի շտապում է ոտքով հասնել դպրոց, երբեմն ուրախանում, որ այդ օրն իր ծանոթ որևէ ծնողի մեքենայի ուղևորուհին է դարձել: Դա մարտով կերտված իմ աղքատիկ ծննդավայրն է, որտեղ երբ էլեկտրական լույսերն են հանգչում, գիշերային մթության մեջ սենյակի պատերը խարխափելով՝ մի նոր լույս եմ փնտրում: Դա այն վայրն է, որտեղ առանց իմ բնակարանի դուռը կողպելու՝ մտնում եմ խանութ, երբեմն մոռանում, որ այն բաց եմ թողել: Դա իմ բնօրրանն է սուրբ, առանց որի չեմ կարող ապրել, որովհետև բոլորը մեկը մյուսին ճանաչում են ու հավատում միմյանց, իսկ երբ սահմանին մոտ կրակահերթերի արձագանքներն են լսվում, դառնում են մեկ ՄԱՐԴ ու մեկ ՀՈԳԻ, որ կարողանան միասին «մեռնել», որպեսզի նորից հարություն առնեն:

Վորոնեժի «ԱՆԻ» Մշակութային-լրատվական թերթ,
հունվար - մարտ N 1-2 (69-70) 2016 թ.

22.03.2016

ՍԱՀՄԱՆԻ ՄՈՏ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԿՐԱԿՈՑՆԵՐ ԵՆ, ԻՍԿ ՍԱՀՄԱՆԻՑ ՈՉ ՇԱՏ ՀԵՌՈՒ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԵՆ ԵՐԳՈՒՄ

Այդ օրը սահմանից եկող հրետանային կրակահերթերի արձագանքները մեզ էին հասնում, և ամեն մի դասարան մտնելով՝ ձգտում էի խուսափել դեմքիս հայտնված տագնապի ու անհանգստության արտահայտությունից:

12-րդ դասարանի դռան շեմին դասղեկ Նունե Գասիյանն ասաց, որ դասարանի աշակերտուհիներից մեկի ծննդյան տարեդարձն է, բայց քանի որ դասի ներսի զանգը հնչել էր, չի ուզում գրականության դասը խանգարել, դասերից հետո կմնան՝ շնորհավորելու...Իսկ այդ դասարանը դասղեկի հետ արդեն նախապատրաստվում էր ավարտական միջոցառման, բայց մտքերի մեջ եմ. հանկարծ չխանգարվի:

Գուցե և ստեղծված իրավիճակն էր պատճառը, ես առաջարկեցի

այդ շնորհավորական փոքրիկ արարողությունը, որ ընդունված էր նշել դասերից հետո, հենց իմ դասաժամին էլ անցկացնել:

Կարինե՛ Աղասյան, մի սիրուն աղջիկ, խելոք, շատ ուշիմ, սիրում է երգել, հմայել սրտեր...

Աշակերտներն իրենց բարեմաղթանքներով բարձրաձայն շնորհավորեցին, իսկ նրա աչքերում արցունքներ կային... Զարմացած նայում եմ, պատճառը չեմ հասկանում, բայց այդ պահին անչափ սիրեցի այդ արցունքները, որոնք ժպիտով էին միախառնված, ու միանգամից հարցրի աշակերտներին. «**Երբ կրակոցների ձայներ եք լսում, վախենո՞ւմ եք**»:

Հարցն անսպասելի էր, այդ արարողության հետ ամենևին կապ չունեցող, զարմացած ինձ նայեցին, ապա աշակերտուհիներից մեկն արձագանքեց. «**Մի ներքին տագնապ, վախի զգացողություն ծնվում է յուրաքանչյուրիս մեջ, բայց որպեսզի մյուսները խուճապի չմատնվեն, ձայն չենք հանում**»:

Հայացքս հառեցի մյուսներին, ու միանգամից մեկը մյուսին լրացնելով՝ նրանք բարձրաձայնեցին. «**Բայց ո՞վ է ասում, որ մենք վախենում ենք...**»:

Ապա արցուքախառն աչքերով մեր համեստ աշակերտուհին դասղեկի և մյուս աշակերտների առաջարկությամբ սրբեց արցունքներն ու սկսեց երգել:

Այնքա՜ն հմայիչ, գերող էին երգի ելևէջները, որ մոռացել էի Շիրազի հայրենասիրական քնարերգությունն ամփոփող այդ օրվա իմ դասանյութը: Նրա երգին միացան մյուսները. հիացմունքը պատել էր հոգիս...

Սահմանի մոտ հրետանային կրակոցներ են, իսկ սահմանից ոչ շատ հեռու դպրոցի աշակերտներն են երգում:

Քիչ հետո անցնում եմ հիմնական դասանյութին՝ Շիրազ մեծ հանճարի ստեղծագործություններին, բայց նաև մտորում եմ՝ էլեկտրոնային մատյանում գնահատականներ պետք է դրվեն, այս դասաժամին ո՞ւմ կհասցնեմ դաս հարցնել:

Խախտե՞լ եմ իմ դասաժամը, օրենքների ու չափորոշիչների սահմանների մեջ չտեղավորված ուսուցչուհիս ո՞ւմ պիտի պատասխան տար, որ այդ դասաժամից մի քանի րոպեներ օծել էր գեղեցկությամբ, այն մեծ հավատով, որ երբ թնդում են թնդանոթները, մուսաները չեն լռում, նորից թափ են առնում ու հնչեցնում երգը՝ միախառնված սահմանային կրակահերթերին:

http://www.usarmenianews.com/am-n-2216.html

23.03.2016

ՀԻԱՑՄՈՒՆՔ ՊԱՐԳԵՎՈՂ ԱՅՍ ԳԻՐՔԸ ՄԻՇՏ ՄՏՔԻՍ ՄԵՋ ԿՄՆԱ

11-րդ դասարանում եմ, ձեռքիս միակ գիրքը իմ աշակերտուհին վերցրեց, որ ընթերցի: Հաջորդ օրը, մի քիչ հուզված, ինձ հանձնեց գիրքը: Իմ հարցական հայացքը նկատելով՝ նա բացատրեց. **«Կարդալով Լևոն Աղյանի «Անձրևից հետո» արձակ ստեղծագործությունների ժողովածուն՝ շատ հուզվեցի: Ես հասկացա, որ ամեն ինչ փոխվում է, և երբեմն արծաթը ոսկու տեղ է անցնում: Արտասվում էի, հոգիս տակնուվրա եղավ, ամբողջ օրը գիրքը ձեռքիս շրջում էի: Հասկացա, որ սերը սահման չունի, այն ծնվում է ակամա, անսպասելի, և ոչ մեկը չպիտի թերանա, պիտի սրտի ջերմագին խոսքն ասի նրան, ով թանկ է իր համար: Եվ ինչպես ասում է գրողը՝ միգուցե այլևս չենք տեսնելու նրան: Պետք է ներել նաև մեղքերը, բայց ով դավաճանել է, բազում անգամ, նույնը կանի նաև հետո, մոռանալ է պետք նրան: Ես շատ եմ ուզում, որ բոլորը կարդան և հասկանան իրական կյանքի արժեքը»:**

Անուշ Դանիելյան, իմ սիրելի աշակերտուհի… Շատ հանդարտ, ազնիվ բնավորությամբ, նուրբ հոգու տեր աղջիկ: Նա հետո նստեց, ես ուշադիր նայում եմ նրան շատ հիացած, ինձ թվաց՝ ասելիք ունի դեռ, և նրան ասում եմ. «**Եթե ինչ որ բան կա, որ չես ասել, կարող ես թղթին հանձնել…»:**

Որոշ ժամանակ անց նա ինձ հանձնեց մի սևացրած թուղթ. «**Հիացմունք պարգևող այս գիրքը միշտ մտքիս մեջ կմնա... Այն ինձ հուզեց, կերպարներ կային, նրանց հետ էի ես, բայց ինչպե՞ս բացատրել այս գրքի հաջողությունը, որ այսպես տխրեցրեց ինձ, այստեղ միայն դառը ճշմարտություն կա: Գրողից բացի, կարծում եմ, ոչ ոք ավելի լավ չէր կարող գրավել ընթեր-**

ցողի ուշադրությունը, այս գրքում պատմվում է մարդկային տառապանքի, ցավի, սիրո, հավատի մասին: Նրան հաջողվում է մի քայլ անել և ոգեշունչ կոչ հղել բոլորին: Ես վստահ եմ, որ այս գիրքը ոչ մեկին անտարբեր չի թողնի…»:

Նայում եմ թղթին հանձնված նրա տողերին, նորից նայում իմ աշակերտուհուն, զարմանում եմ նույնիսկ, հոգում ծանրացած ցավը տեսնես ինչի՞ հետևանք է՝ ապրած իր անձնական հուզական վիճակի՞, թե՞ գրքի որոշ հերոսների ծանր ճակատագրի... Ինչ էլ որ լինի, գիրքն ընթերցող ունի, այն էլ հուզառատ, հոգուն հարազատ, սրտի կսկիծով, արցունքն աչքերին…

http://usarmenianews.com/am-n-2253.html

29.03.2016

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԱՐՋԱԿ, ՈՐ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԵՏ Է

Ո՞Վ ԵՄ ԵՍ...

Մի մարդ հասարակ, որ ապրել գիտի, սիրել ու սիրել: Սիրում եմ կյանքը, որ փարվում է ինձ, սիրով գուրգուրում, սիրում եմ կյանքը, որ հարվածում է, երբեմն գոռում, երբ չեմ ենթարկվում: Ըմբոստ եմ ոգով, հաշտվել չգիտեմ անարդարի հետ, բայց սաստել գիտեմ, երբ ինձ չեն լսում, ու այսպես անվերջ պայքարել գիտեմ, մաքառել գիտեմ, միայն թե ապրեմ: Մռայլ դեմքերից ժպիտ եմ քաղում, ու խոսքս երբեք անդուր չի լինում դուրալի մարդկանց: Արտասվել գիտեմ ծիծաղի միջից, անտեսված մարդուն բարևել գիտեմ, ու սիրում եմ ես անվերջ կրկնել՝ կյանքը հրաշք է, միայն թե ապրենք, մեր ապրած կյանքը մարդու պես ապրենք:

Ապրում եմ հոգով, հոգիս անմեռ է, շնչում եմ կյանքով, կյանքս աշխարհ է, ու ես աշխարհում՝ մի փոքրիկ հյուլե, որ այս աշխարհում իր տեղը գիտի: Երբեմն խոսքս թևեր է առնում, երբեմն միտքս ցավոտ է լինում, բայց փակված, անտես երբեք չեմ պահում, ասում եմ բարձր, շատ հնչեղ ձայնով: Երազել գիտեմ ու այդ երազում սավառնել գիտեմ, կարոտել գիտեմ, ու այդ կարոտից արտասվել գիտեմ, ու այսպես անվերջ աշխարհը գրկած՝ ապրում եմ մի կյանք, որ ինձ է տրված: Ու դար է դառնում ինձ համար կյանքը, իսկ այդ դարերում ես կամ և չկամ, ու սեր է դառնում այս կյանքն ինձ համար, որ անտես-անհայտ բաժանում եմ ես, ու հող է դառնում այս հրաշք կյանքը, որ ապրեմ այսպես մեր հողին կառչած: Այսպես է կյանքը և այսպես եմ ես՝ մի մարդ հասարակ, որ ապրել գիտի, նաև չգիտի լավ կյանքի մասին, բայց միշտ էլ գոհ է իր ապրած կյանքից:

Այո՛, գոհ եմ ես իմ ապրած կյանքից, երկու բառով չէ, որ պիտի ասեմ, երջանիկ մի կյանք ապրելու համար պետք է անցնել իմ անցած ճամփան: Այնտեղ քարեր կան ու շատ տատասկներ, բայց պետք է անցնես, որ սիրես կյանքը, հարվածներ կան շատ՝ տեղի-անտեղի, որ կուլ ես տալիս, միայն թե ապրես: Լինում է նաև, որ պետք է լինում, աշակերտներիս խորհուրդ եմ տալիս. «Սովորի՛ր ապրել երջանիկ պահով, երջանիկ եմ ես, երբ մեղեդին եմ լսում իմ հոգու և այդ մեղեդու հնչյունների տակ ապրում եմ կարոտ կամ ինչ-որ հուզմունք, որ ինձ հետ է

միշտ: Սեփական Ես-դ մի կողմ ես դնում, սկսում ապրել նաև ուրիշով, բառդ կշռում ես ու սեր ես դնում կշռած բառիդ մեջ, շռայլել պետք չէ ավելորդ բառեր, աղ պիտի լինի ամեն բառի մեջ, կյանք պիտի լինի ամեն մի խոսքում, որ ապրած կյանքդ երջանիկ լինի...»:

Միշտ էլ գոհ եմ ես իմ ապրած կյանքից, նույնիսկ երջանիկ, որ կամ այս կյանքում իմ լինելությամբ, իմ ապրած կյանքով, լսած խոսքերով, ստացած դասերով, իմ այս խոհերով: Համարձակներին ես շատ եմ սիրում, բայց պետք չէ սերտել տված դասերս. «Ապրե՛ք ձեր կյանքով, որ ձեզ է տրված, հիշե՛ք լավ խոսքս, որ ձեզ է ուղղված, երջանկության մեջ օրեր մի՛ փնտրեք, երբ ամեն պահը երջանկություն է, որ մեզ է տրված»:

Սիրում եմ բառը տեղին գործածել, միայն թե խոսքս իր տեղը գտնի: Երբ հասցեատերը զարմանքով նայում, չի ուզում հանկարծ ինքն իրեն տեսնել, չնայած ցավոտ, բայց և ճշգրիտ սիրում եմ կրկնել ասած խոսքերս: Կեղծ ժպիտներին չեմ ուզում նայել, չեմ էլ շռայլում ավելորդ բառեր, անկեղծ խոսքերին ես տեղ եմ տալիս, երբեմն նույնիսկ խորհուրդներ տալիս: Պաշտամունք դարձած արդարն ու ճիշտը հպարտ սյուներ են՝ իմ կողքին կանգնած, երբ կողքով անտես ուզում են անցնել, իբր չեն տեսնում, սաստում եմ ոմանց: Երբեմն եթե ուզում են կանխել ոգու թռիչքը մի շատ թույլ բառով կամ կծու խոսքով, մի հատիկ բառս օդ է բարձրանում, խոսքս թև առած թռչում է հեռուն: Պարզ եմ, հասարակ՝ իմ ապրած կյանքով ու իմ տեսակով, վերևից նայել երբեք չգիտեմ, երբեմն նույնիսկ սաստում եմ նրանց, ովքեր թև առած ուզում են թռչել, երբ թևեր չունեն, այլ ունեն թիկունք: Զգույշ են ոմանք, իսկ ես ժպտում եմ, ժպտում են նրանք, իսկ ես լրջանում, լռության քողը զենք եմ դարձնում: Ատում եմ սուտը, երբ գունավորված կողքիս կանգնում է, իբր չի ստել, այդպես է ստացվել: Շողոքորթ դեմքեր չեմ ուզում տեսնել այս կյանքում երբեք, բայց սիրել գիտեմ, երբ սիրում են ինձ, երբ հավատում եմ, պաշտում եմ նույնիսկ, ես հարգել գիտեմ, երբ հարգում են ինձ: Ու այսպես սիրված և այսպես հարգված կամ գուցե ատված ապրում եմ այսպես: Անտե՞ս եմ, անհա՞յտ, թե՞ տեսանելի, կարևոր չէ դա, ուրախ եմ միայն, որ ապրում եմ ես շատերի նման մի կյանք հասարակ:

Լինում է նաև, որ ըմբոստ հոգիս լռում է հանկարծ, և լռությունը բռունցքված պահում, չի ուզում ճչա: Ու ես լռում եմ, երբ կողքիս մեկը բարձրաձայն խոսում, գունավորված է ամեն ինչ պատմում, լռում եմ նաև, երբ գիտեմ՝ խոսքս պիտի կրկնեն, իբր իրենք են այդպես մտածում: Նույնիսկ լռում եմ, երբ գիտեմ խոսքս հասու չէ նրան, ով խելամիտ

է ձևանում հանկարծ, և կամ լռում եմ, երբ իմ հոգու հետ մենախոսում եմ: Վատ լուրից հանկարծ կարող եմ լռել, չեմ ուզում խոսել, երբ փոթորկված եմ, հոգիս՝ ցավատանջ: Ծառի, ծաղկի հետ կարող եմ խոսել նույնիսկ շշուկով, բոլորի հետ էլ խոսում եմ անձայն, տառերով շարված բառերս են խոսում, իսկ ես լռում եմ, անձայն ծիծաղում, անգամ ժպտում եմ: Իմ մտքերի հետ էլ խոսում եմ անձայն, անցած հուշերս թերթում եմ անձայն, միայն թե թերթեմ, անձայն եմ գնում անցնելիք ճամփաս, միայն թե անցնեմ, արևին անգամ փարվում եմ անձայն, միայն թե շողա, իմ բաժին լույսը գրկում եմ անձայն, միայն թե գրկեմ: Բայց ես այդքան էլ լուռ չեմ իմ կյանքում, սիրում եմ խոսել, երբեմն լռել, այս ինչքա՞ն անձայն լռություն ունեմ, որ չեմ իմացել...

Ես ինչ եմ սիրում… Սիրում եմ ժպտալ, երբեմն նույնիսկ դեմքիս լույս սփռող ժպիտն եմ սիրում, երբ գալիս է առանց հարցումի, ուրախ թե տխուր ինչ-որ պահերի, մեղմ հովի պես շոյում է դեմքս, թախծոտ հոգուս պարուրում կամաց և ուզում հանել ծանր թմբիրից: Սիրում եմ ժպիտը, երբ արցունքաբեր ծիծաղից հետո հանդարտվում եմ ես, և հանկարծ կամաց իջնում է դեմքիս կամ թե շշնջում: Բոլորի նման ես կյանք եմ սիրում, սիրում եմ ապրել, այս կյանքով ապրել, սիրում եմ երգել, չգիտեմ, սակայն, ինչպես են երգում այնքան հմայիչ ու շատ դուրեկան: Սիրում եմ նայել մարդկանց աչքերին, երբ հանկարծ նրանք սուտ են հորինում, սիրում եմ արդար իմ խոսքը պնդել, երբ ինչ-որ մեկը երես է թեքում, իբր չի լսել, թե ինչ է ասվել: Լուսավոր մարդկանց ես շատ եմ սիրում, պաշտում եմ նույնիսկ մաքուր, անաղարտ պարզ հոգիներին, սիրում եմ լսել, երբեմն ժպտալ, երբ ինչ-որ ձևով առիթ են փնտրում, որ մտերմանան, միայն թե ցույց տան, թե իբր իրենք ամեն ինչ գիտեն: Երբեմն լռին մենությանս մեջ խոսում եմ ինձ հետ, ուրեմն նաև սիրում եմ այսպես խոսել Ես-իս հետ, երբ ինչ-որ թախիծ անտես թևերով ինձ հյուր է գալիս: Մանկան զրնգուն ծիծաղն եմ սիրում, սիրառատ սրտեր՝ անկեղծ, վախվորած, հոգուս մեջ լցված կարոտն եմ սիրում, անցած օրերիս հուշերն եմ սիրում, երբ չեմ մոռանում: Խավարի միջի լույսերն եմ սիրում, լուսավոր օրվա ամեն մի պահը, սիրում եմ մարդկանց, որ ինձ հետ են միշտ, հոգով ու սրտով ինձնից անբաժան, սիրում եմ նրանց, որոնց չգիտեմ, բայց Մարդ են կոչվում: Ես չեմ իմացել, որ այսքան շատ սիրելու բան կա, ուրեմն այսպես՝ սիրում եմ հողս, որով քայլում եմ, սիրում եմ տունս, որտեղ ապրում եմ, իմ գործն եմ սիրում, իմ ապրած բոլոր օրերն եմ սիրում ու նորից այսպես էլի կսիրեմ, միայն թե ապրեմ:

Ես մանկավարժ եմ, բայց պատահում է, որ երբեմն նույնիսկ տո-

ղը տողի տակ, արձակ խոսքերով փորձում եմ հանգիստ բացատրել ոմանց, թե զարմանալի ի՞նչ կա այստեղ, երբ հարցնում եք, ու ես անվարան պատասխանում եմ, որ իմ դասերին ոչ մեկն էլ երբեք չի վախել ինձնից: Ինչո՞ւ վախենան, երբ սիրում եմ ես շատ խելոքներին, որ բառս անգամ ուշադիր սերտում, ինձ հարց են տալիս, որ շատ իմանան: Տարբեր են նրանք, իսկ ես նրանց մեջ սիրում եմ նրան, ով խեղճացած է, դասից հեռացած կամ նստած վերջում, մի բառ է ասում, ոչինչ չի խոսում, երբեմն նույնիսկ կառչում եմ նրանց մեկ ասած բառից, երբ ճիշտ են ասել ու այդպես լռել: Առջևս նստած համարձակ մեկին կարող եմ սաստել, որ ձայն չհանի, երբեմն ձայնս բարձր է հնչում, չեմ ուզում ներել ծուլության համար: Անկարգների հետ զրուցել գիտեմ, ներում եմ նաև դեռահասներին, երբ անգիտակից սխալ են գործել: Երբեմն նույնիսկ անտեսում եմ ես, երբ գիտեմ հանկարծ սուտ են հորինում, թե իբր գրքում թերթը պոկված էր, դասը չի եղել: Չեմ սիրում երբեք հուշարարներին, որ հանկարծ թաքուն խոսք են փոխանցում դաս չսովորողին, ու ասում՝ ես չեմ... Երբեմն նույնիսկ զրուցում եմ ես, մեկ-մեկ առանձին, երբ հուսահատված, սերը կորցրած՝ նրանցից մեկը խորհուրդ է հարցնում: Թևեր եմ տալիս, որ նա սավառնի, ժպիտ եմ տալիս, որ նա ծիծաղի, երբեմն նույնիսկ խորհուրդներ տարբեր: Եվ համբուրում եմ ճակատը նրա, ով արդարացնում, բարձրանում է վեր իր իմացածով, և առիթ տալիս, որ հպարտանամ: Կարո՞ղ են նրանք, թե՞ անկարող, կարևոր չէ դա, բայց զարմանալի ոչինչ էլ չկա, երբ նրանց հանկարծ ես հարց եմ տալիս, թե վախենո՞ւմ են նրանք ինձանից, ժպիտն է նրանց դեմքը ողողում, և պիտի դառնա մի մեծ օվկիանոս, այդ պահից նույնիսկ դեռ ուշքի չեկած՝ նրանց փոխարեն ես եմ վախենում և կանխում նրանց մի փունջ ժպիտով:

Երբեմն նույնիսկ իրար կողքի եմ դնում ես հանկարծ կին և մայր ու նորից մայր ու կին, կարծես ուզում եմ ինչ-որ բան փոխել... Իսկ ես սիրում եմ երկուսին անկեղծ, մեկն իրական է ու շատ բնական՝ մայրական սիրո գորովանքով լի, խայտանքով լեցուն, կյանքի թրթիռով, մանկան ծիծաղով... Մյուսն՝ անիրական, որ կին է կոչվում, ապրում է իմ մեջ շատ սիրուն տեսքով, երազի թևով գալիս է ինձ մոտ, ջերմությամբ արբած պատմում իր մասին, ու այսպես անվերջ ես նրա հետ եմ: Իմ տխուր պահին ինձ հյուր է գալիս, իսկ երբ ուրախ եմ, կարկաչում է նա: Սիրում եմ անկեղծ զրուցել հետը, իսկ նա թև առած թռչում է հեռուն, տեսիլքի նման նորից հետ գալիս...Մի հրաշք մայրիկ ու մի ցնորք կին հավերժ ինձ հետ են ու միշտ անբաժան: Երջանիկ եմ ես, երբ նրանց հետ եմ:

Այսպես է կյանքը, այն իրական է և անիրական, ու ես նրանց հետ այսպես անբաժան:

Մեր կյանքն էլ գիրք է, երբ թերթում ենք այն, ջնջված էջեր կան, չենք ուզում հիշել: Բայց ինչ-որ տեղից, թեկուզ և ջնջված, բառը բառի հետ իրար կապակցում, հիշողության մեջ երևում է այն, կամ ինչ-որ մի դեպք չես ուզում հիշել, քո դեմ է հառնում՝ ինչպես մի տեսիլք: Ու նորից ջնջում, ջնջում ես անվերջ, միայն չհիշես: Եվ կամ լինում է, որ էջ ես բացում, կյանքիդ լուսավոր օրերն ես հիշում, դեմքեր ես հիշում, որ կան և չկան, դեպքեր ես հիշում, լիառատ շնչում, ուզում ես նորից այդ օրերն ապրել: Գրքի մեջ հանկարծ բացում ես մի էջ, ոչինչ չի գրված, ունայն է եղել կարծես այդ օրը, հոգիդ դատարկված, որ բառեր անգամ չեն եկել մտքիդ, ու այդպես դատարկ թերթել ես էջդ: Էջ էջի վրա գրված տողեր կան, երբեմն դրանք չես ուզում կարդալ, վիրավոր հոգիդ չես ուզում պոռթկա, երբեմն արագ թերթում ես, թերթում, չես ուզում անգամ այդ օրը հիշել: Լուսավոր օրվա փոշին ես սրբում, տառ առ տառ կարդում գրածդ խոսքը, դեմքդ լուսավոր քողով է պատվում, ուզում ես նորից այդ օրով ապրել: Եվ ամեն անգամ այսպես թերթում ես, չես ուզում երբեք այդ գիրքը լցվի անցած օրերով, և այսպես անվերջ էջեր ես ուզում, որ ավելանա: Թերթում ես գրքի սպիտակ էջերը, որ պիտի լցվեն գալիք օրերով, չես ուզում հաշվել մաքուր էջերը, երբեք չես ուզում այդ գիրքը փակվի: Մի կյանք է այնտեղ ապրած օրերով, բոլորս այսպես մեր գիրքն ունենք՝ յուրովի տարբեր մեկը մյուսից, բայց միշտ էլ մեր այս գիրքը փակելիս ափսոսանքով ենք այն մի կողմ դնում, ինչպես հին տարին, որ անդարձ գնաց, նորից չի գալու:

http://usarmenianews.com/am-n-2372.html

Տեսանյութ՝ *https://www.youtube.com/watch?v=L8oUgCoTX94*

30.03.2016

ԵՍ ԱՅԴ ՕՐԸ ՄՏՈՎԻ ՀՈԼՈՎՈՒՄ ԷԻ ԲԱՌԸ, ՈՐ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԴԱՌՆՈՒՄ ԷՐ ԶԻՆՎՈՐ

Նա սկսել է ամեն օր դաս սովորել, ու հիշողության մեջ այդ օրն է:

7-րդ դասարանում, դեռ դասամատյանը չբացած, նկատում եմ նրան, որ ձեռք էր բարձրացրել: Ուրախացա, որ այդ թույլ կարողությունների տեր աշակերտը դաս էր սովորել, բայց ձեռքով ու հայացքով հասկացրի, որ մի քիչ սպասի, կհարցնեմ: Նա նստեց ու հանկարծակի սկսեց արտասվել: Բոլորս զարմացած նայում ենք նրա կողմը: Կողքին նստած աշակերտն ասաց, որ այդ օրը նրա քեռու ծննդյան օրն է: Էլ ավելի զարմացա… Որքանո՞վ կապ ուներ հայոց լեզվի դասը այս երեխայի քեռու ծննդյան տարեդարձի հետ: Բարձրաձայն լսելի էր արդեն նրա հեկեկոցը, իսկ կողքին նստած աշակերտը նորից պարզաբանում է՝ քեռին զոհված է: Համատարած լռություն է տիրում, բայց բոլորիս հայացքներում անհասկանալի հարցականներ կան: Վերջապես սպառվում են մեզ հետաքրքրող հարցերը. նա տնային հանձնարարությունը չէր կատարել:

Ծաղիկ, գարուն, երիտասարդ, զինվոր և նման տիպի մի քանի գոյականներ, որ պիտի գործածվեին նախադասությունների մեջ, այդպես էլ մնացել էին տետրում գրված: Հանգստացնում եմ նրան, ոչինչ, որ չի գրել, բայց մտածում եմ, իսկ գուցե ծաղիկ հասակում նահատակված զինվորի՞ մասին է ցանկացել կազմել նախադասությունները, զինվոր, որ դեռ քանի՞-քանի գարուններ պիտի ապրեր:

Գրատախտակի մոտ եկած աշակերտները տարբեր գոյականներ են հոլովում, իսկ ես նայում եմ գլուխը նստարանին հակած իմ աշակերտին և մտովի հոլովում եմ բառը, որ ինձ համար դառնում է ԶԻՆՎՈՐ…Ես տեսնում եմ աչքերի արցունքները սրբող իմ աշակերտին, ու նորից ԶԻՆՎՈՐ-ը գործածվում է նախադասությունների մեջ: Ուղղական հոլովում՝ ԶԻՆՎՈՐ-ը դառնում է երկրի այունը, սեռականում՝

ԶԻՆՎՈՐ-ի ձեռքին զենք կար, տրական հոլովում՝ հանդիպում ենք ԶԻՆՎՈՐ-ին, հայցականում անչափ սիրում ու պաշտում ենք ԶԻՆ-ՎՈՐ-ին, բացառական հոլովում՝ ԶԻՆՎՈՐ-ից է սկսվում հայրենիքը, գործիականում՝ հպարտանում ենք ԶԻՆՎՈՐ-ով...Չնայած ներգոյա-կան հոլովում ՆԱ չկա, բայց բառը նորացվում է, ու ապագա ԶԻՆՎՈ-ՐԻ կերպարի մեջ տեսնում եմ իմ այս աշակերտին:

Դասաժամը վերջանում է, նայում եմ նրա կողմը, զգում եմ, որ արդեն հանգիստ է, ու մտովի ես նրան տեսնում եմ տարիներ անց՝ զինվորա-կան համազգեստով... Բայց գիտեմ նաև՝ նա չի մոռանա հայոց լեզվի այդ դասաժամը, որ ողողել էր իր սրտաբուխ ու մաքրամաքուր ար-ցունքներով...

Դուրս եկա դասարանից՝ օրեր առաջ նահատակներին ուղղված մեր աշակերտների խոսքերի արձագանքն իմ հոգում:

Հայրենիքը կապույտ հորիզոնների անսահմանությունն է ու երկնա-կարկառ լեռների քարեղեն հավերժությունը:

Հայրենիքը մեր նախնիների հերոսապատումներով հարստացած հնօրյա մագաղաթ է ու Արցախյան ազատամարտի նահատակների արյունով սրբագործված նշխար:

Հայրենիքը մեր բոլոր ազատամարտիկների անցած հերոսական ճանապարհն է, նրանց մասին հիշողությունն ու սահմանում կանգ-նած մեր նորօրյա ԶԻՆՎՈՐԸ:

Հայրենիքը մեր սիրելի զավակների թարմ շիրիմներն են ու նրանց տունդարձին սպասող քաջասիրտ մայրերը...

http://www.usarmenianews.com/am-n-2400.html

01.04.2016

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԻՍ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԽՈՀԵՐԸ

Երբեմն պատահում է, որ խաթարվում է մեր խաղաղ կյանքը: Գիշերվա կեսին հանկարծակի սկսվող հրետակոծության արձագանքից սիրտդ կծկվում է, հոգիդ՝ ալեկոծվում անհանգստությունից, ուզում ես սփոփել ինքդ քեզ, ու խաբուսիկ մի պատրանք ես ստեղծում քեզ համար, որ իբր ամեն ինչ լավ է, պետք չէ հուսալքվել, բայց երբ թվում է, թե ևս մեկ անգամ՝ տունդ ահա փուլ կգա գլխիդ, ուզում ես աղաղակել, աշխարհին ի տես՝ բոլորին ասել, որ խաղաղ ապրել ես ուզում...Երբեմն դռան թակոցից վեր ես թռչում, գիշերվա կեսին հեռախոսի զանգից հանկարծակիի ես գալիս, ուզում ես խլանալ, ոչինչ չլսել, ոտպեներդ ծանրանում, ժամեր են դառնում, իսկ դու անհագ կարոտով սպասում ես լուսաբացին, որ ժպիտը դեմքիդ մտնես դասարան: Իսկ աշակերտներից ոմանք հարցնում են. «Այն ի՞նչ էր այս գիշեր, կրակոցներ լսեցի՞ք...»:

Արտաքուստ հանգիստ ես ձևանում, բայց չես էլ թաքցնում, որ այդ պահերին ուզում ես իրենց հետ լինել: Նայում ես նրանց, խաղաղ են, անհոգ, անսովոր չես տեսնում ոչինչ և ամաչում ես հոգուդ ալեկոծումից, սրտիդ անհանգիստ տրոփյուններից ես ամաչում, որ գիշերային կրակոցների արձագանքների տակ այնքան արագ են խփում… Այդ պահին ամաչում ես ինքդ քեզնից և որոշում ես՝ այսուհետ գիշերային հրետակոծությունների ժամանակ մտովի նրանց հետ լինել, որպեսզի չվախենաս այդ մահ սփռող հրետանային կրակահերթերից:

Ամեն անգամ օջախների լույս է մարում, իսկ դու, սահմանային բոթաբեր լուրերից կուչ եկած, չես կարողանում անգամ սրտանց ուրախանալ: Տառապանքի ահազանգի կողքին երբեմն հայտնվում է մի փոքրիկ վախվորած ժպիտ, որ չի համարձակվում անգամ իր գոյության մասին ազդարարել: Ցավը հոգումդ աղաղակում է ու չի թողնում անգամ վայելել փոքրիկ ուրախալի լուրը: Ամեն անգամ սպանում ես դեմքիդ հայտնված ժպիտը, որ երբեմն հայտնվում է անկախ քեզանից, սպանում ես ծիծաղդ, որ ասում են՝ երբեմն առողջարար է այն, բայց ոչ քեզ համար… Սպանում ես հոգումդ ծնված ամեն մի բերկրանք, բայց պահում ես հույսդ, հավատդ ես պահում, կառչում ես լույսից, միայն թե ապրես...Եվ ապրում ես դու, այսպես ես ապրում՝ ճաք տված սիրտը չես

թողնում կանգնի, տառապած հոգուն չես թողնում ճչա, միայն թե ապրես...

Եվ այսպես է միշտ իմ օրն ավարտվում… Ու ամեն անգամ իմ գունաթափված օրվա ցավի փոշիներն եմ հավաքում, որ կարողանամ լավ օրերի հեքիաթը հյուսել: Անցյալի դառն օրերի հուշերի փոշին սրբում եմ, որ նորերի հետ խնամքով զետեղեմ ցավի հուշամատյանում: Խնդրում եմ Աստծուն՝ ամենուր լույս տա և գիշերային լռության մեջ մտովի աստղազարդ երկնքին Արցախիս համար «խաղաղություն» եմ ասեղնագործում, որ արշալույսները նորովի բացվեն: Եվ եթե հանկարծ ամպի թելեր եմ տեսնում երկնքում, դողում է սիրտս, տրոփում անձայն, թախծի շիթեր են երևում հանկարծ, և ես քրքրված արև եմ փնտրում: Եվ լուսաբացին արևի թախծոտ աչքերն եմ շոյում, իսկ կեսգիշերին՝ ձեռքերս եմ պարզում աստղի թևերին: Ուզում եմ անվերջ լույսեր տարածել, բայց համրացած մի ծառ լռում է անվերջ... Ծառի ծաղրանքն եմ նկատում հանկարծ, ծաղկուն բառերի շուրջպար եմ բռնում, որ ինքն էլ ժպտա: Խավարի միջից աստղերն եմ հաշվում մանկան քրքիջով, ծիծաղն եմ գրկում արևոտ օրվա, ջինջ առվակների կարկաչն եմ լսում, մտքիս ճախրանքը՝ լռին ու խոսուն: Խաղաղված հոգով լույսեր եմ ցանում, որ ժպիտներս տարածեմ անվերջ այդ ճանապարհին: Ու հանկարծ անտես ինչ-որ տեղերից հարցեր են գալիս, հոգուս մեջ թառում:

Բայց մենք, մենք պի՞նդ ենք, թե՞ ընդհանրապես երես ենք առել, որ լուռ տանում ենք ցավերն աշխարհի...Չե՞նք հավատում, թե՞ հարմարվել ենք մեզ բաժին հասած այս ճակատագրին...Սպասում ենք լռին, անհասկանալի մի խոր լռություն լռեցնում է մեզ, որ պիտի սպասենք...Ինչի՞ ենք սպասում, որ ռումբը պայթի ու նո՞ր հավատանք, որ սարսափելի օրեր ենք ապրում: Էլ ձայներ չկան, ուրախանում ենք այդ պահով միայն, ու հանկարծ նորից շառաչուն ձայներ, որ շունչդ պահած լսում ես լռին, որ տեսնես հետո դու կա՞ս, թե՞ չկաս...Երեխաների «պատերազմ» խա՞ղն է, որ ասենք ահա հանկարծ վերջանա, ծափով-ծիծաղով կանցնի-կգնա...Ամանորի մեծ, շքեղ հանդեսի արձագանքների վաղուց սպասվող ուրախ ձայնե՞րն են, որ պիտի սպասենք մեր հերթն էլ հասնի, մենք էլ ողջունենք ու բարին մաղթենք ամբողջ աշխարհին: Դպրոցի զանգի սուր ղողանջնե՞րն են, որ շտապենք մտնել դասարանները, դասից չուշանանք... Մեր տան դռների զանգերի ձայն չէ, որ ուրախանանք զանգերի ձայնով, հյուրընկալ դեմքով մեր դուռը բացենք: Այդ խուլ ձայները բարի լուր բերող նոր ավետիս չեն, որ ուրախանաս, սրտիդ բերկրանքը ամենքին հայտնես գոռում-գոչյունով, հոգուդ ցնծությամբ...

Սպասում ենք, սպասում, գոռ, ահեղ ձայները ե՞րբ պիտի լռեն: Մի ամբողջ ցերեկ, մի ամբողջ գիշեր, լույսի-ստվերի խաղով բռնված, երիցուկ ծաղկի թերթերի նման թերթում ենք, թերթում, մեր ժամն ենք թերթում, որ սա էլ անցավ, մեր օրն ենք թերթում, որ օրն էլ անցավ, բայց մենք ողջ ենք դեռ, թերթում ենք այսպես օրեր շարունակ... Ամիսն ենք թերթում, ամիսներն անցնում, սպասում ենք նորից, տարին գլորենք, տեսնենք տարի՞ն էլ պիտի մենք թերթենք...Երբեմն նույնիսկ մեզ էլ ենք թերթում, մեզ թափ ենք տալիս ու սպասում նորից, մենք կա՞նք թե՞ չկանք...Ուրախանում ենք, երբ թերթել գիտենք, ուրեմն մենք կանք, ուրախանում ենք, որ ապրել գիտենք, բայց մենք չենք ապրում...Օրացույցի թերթերի նման օրերն անցնում են, իսկ մենք ուրախ ենք՝ այս օրն էլ անցավ, օրը թերթեցինք, նորից սպասում ենք մի նոր թերթիկի, միայն թե թերթենք... Թերթում եմ նորից… Այս անգամ շարադրանքի թերթերն եմ թերթում, իմ աշակերտուհու մտքերն եմ թերթում՝ զինվորին ուղղված, որ ոգեղեն են՝ ի սրտե գրված: Այսօր իմ օրը չեմ ուզում թերթել, անցյալ է դառնում ապրածդ օրը, երբ այն թերթում ես...Այսօր ապրում եմ թերթի էջերով՝ ջերմությամբ լեցուն, հստակ խոսքերով... Նորից նայում եմ տողերին հակիրճ, և ինձ մատուցված անակնկալից բերկրանք եմ ապրում... Թերթի էջերը միայն կթերթեմ, այս օրը երբեք չեմ ուզում թերթել:

http://www.usarmenianews.com/am-n-2449.html

02.04.2016

ԱՊՐԻԼԻ 2-Ի ԱՌԱՎՈՏՎԱ ԻՄ ԳՐԱՌՈՒՄԸ

Արցախում բնակվող մանկավարժ Նատաշա Պողոսյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է...

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԱՐՎԱԾ Է...

ԱՀՍԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՍ ԹԻՐԱԽ Է ԴԱՐՁԵԼ, ՀՐԵՏԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ... ԳՆԴԱԿՈԾՈՒՄ ԵՆ... ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՑ ԱՌԱՅՍՕՐ ՆՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՉԷԻՆՔ ՀԱՅՏՆՎԵԼ: ՀՈՒՍԱՆՔ՝ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԽԱՂԱՂՎԻ՝ ՉՆԱՅԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՉ Է..

ԱՍՏՎԱԾ ԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՉԼԻՆԵՆ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵՆՔ ՄԵՐ ԿՈՂՔԻ ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ... ԲԱՅՑ ԱՅՍ ՊԱՀԻՆ ԼՍԵՑԻ, ՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՈՒՆԵՆՔ: ՑԱՎԱԼԻ Է, ՈՐ ԱՅԴՔԱՆԻՑ ՀԵՏՈ ԿՐԱԿԱՀԵՐԹԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՍ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏԻ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ... ԲԱՅՑ ԻՆՉ ՄԽԻԹԱՐՈՒՄ Է ԱՅՆ ՄԻՏՔԸ, ՈՐ ՍԱՐՍԱՓԸ ՀՈԳՈՒՄՄ՝ ԵՍ ՇԱՏԵՐԻ ՀԵՏ ԱՅՍՏԵՂ ԵՄ՝ ՄԵՐ ՀՈՂԻՆ ԿԱՌՉԱԾ:

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ՈՐ ԿԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԱՊՐԵԼ, ՄԻ ՆՈՐ ՏԽՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԵՂԾՎԻ ԱՅՍ ՏԱՌԱՊԱԼԻՑ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ:

http://www.usarmenianews.com/am-n-2465.html

05.04.2016

ԳՆԴԱԿՈԾՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՍ ԱՎԵՐԱԿՆԵՐՆ ԻՆՁ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ

Արտակերտից ոչ շատ հեռու գտնվող գյուղում եմ, որտեղ այս օրերին ապրեցի հրետակոծության տակ գտնվող բնակավայրիս կրակահերթերի խուլ արձագանքները: Տարհանված բնակչուհու ծանր ողբերգությունն ապրեցի այս օրերին՝ զոհվելով ամեն մի զոհի հետ, ուրախանալով ամեն մի հաջողությամբ: Վիրավորների տառապալից հառաչանքների արձագանքն է սրտումս՝ բնակավայրիս ավերակների ճիչերն են կանչում ինձ, սպասում եմ անհամբեր, թե երբ պիտի վերադառնամ իմ վիրավոր բնակավայրին այցելության: Գիտեմ, որ ծանր կլինի հանդիպումը, չափազանց ցավոտ, բայց հուսով եմ, որ այս մեկին էլ բոլորս կդիմանանք:

Արցախի պատմության մեջ մի նոր ողբերգական օրերի տարեգրություն կավելանա, որ մեր զոհերի անմահության ճանապարհով, այս օրերի մեր ապրած ցավալի ու տառապալից խռովքով, բազմաթիվ ավերածությունների միջով անցնելով՝ ամրագրվեց հայության անկոտրում կամքը, նորից ու նորից հաստատելով այն մեծագույն ճշմարտությունը, որ հաղթանակների ձեռքբերման ճանապարհին կարևորը քանակը չէ և ոչ էլ զենքերի տեսակը, այլ միասնականությունն ու հաստատակամությունը, հող հայրենիի նկատմամբ տածած մեծագույն սերը, որ այս օրերին մեր քաջարի ազատամարտիկներին կանգնեցրին սահմանին կանգնած զինվորի կողքին՝ ոգեկոչելով բոլորիս՝ լինենք անսասան, դիմակայենք ամեն մի դժվարության՝ արցախցուն հատուկ համառ կամքով ու քաջությամբ:

Հուսանք, որ հաստատված երկկողմանի հրադադարը հնարավորություն կտա նորից արցախցիներին անցնելու իրենց խաղաղ կյանքին, բայց երբեք չեն մոռացվի անմահների անցած հերոսական ուղին, այն բոլոր տառապանքներն ու վշտաբեկ օրերը, որ ապրեցինք այս օրերին:

http://usarmenianews.com/am-n-2581.html

07.04.2016

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ ՄԵՐ ՄԵՋ ԽՈՍՈՒՄ Է ՀՈՂԻ ՁԱՅՆԸ

Ամբողջ հայությունը մեզ հետ է, պատերազմ տանող երկրիս մի փոքր հատվածի հետ, իսկ այդ չար աղետը իր բերած ավերածություններով, մանավանդ մարդկային կորուստներով ու բարոյական փլուզումներով մեզ համար այս օրերին ստեղծեց մի ահեղ սպառնալիք:

Սա մարդկային գոյության ամենածանր իրադրությունն է, երբ մտածում ես միայն՝ հաջորդ րոպեին դու կլինես, թե չես լինի քո կենդանի գոյությամբ, երբ ամեն տեղից հրետակոծության է ենթարկվում այն փոքրիկ տարածքը, որտեղ ապրում ես դու:

Փրկություն ես գտնում այդ հողի վրա մի ուրիշ անկյունում, բայց հողի՝ արկերից ճաքճքած հառաչանքներն են քեզ հասնում և զգում ես, որ այդ պահին մարդը հերոսանում է ոչ միայն պատերազմի առաջին գծում, այլ իր հարազատ հողի վրա, և մարդու մեջ խոսում է հողի ձայնը, որ այնքան տխուր է, տառապած, բայց նաև հերոսացած, համառ ու անսասան:

Հայրենական հողը ամեն պահ մասնակցում է մեր տրամադրությունների խմորմանը և դառնում այն կետը, որտեղից սկսվում է մեր գիտակցության բեկումը: Ու այդտեղից էլ գլուխ է բարձրացնում մի մեծ թախիծ: Երբեմն թախիծդ բռնում է ամբողջ աշխարհը, համատարած շառավղով փռում է իր թևերը, այդ պահին այնքան է տարածվում, որ ժամանակ ու տարածք չի ճանաչում, հոգումդ բույն է դնում մի անծայր ու խոր տխրություն, բայց երբեմն ուզում ես խավարի մեջ լույս գտնել ու ողողել շուրջդ պայծառ երազանքով:

Հրետակոծության տակ մի անորոշ սարսափ է պատում քեզ, բայց ներքուստ ուզում ես հաստատել աշխարհի հավերժության ու մեծության միտքը, հույսի մեղեդին ձուլում ես հոգուդ մրմունջներին, աղերսանքի նման տարածում ամենուր և փորձում մարդասիրության զգացում տարածել ամենուր:

Պատերազմը մեզ համար այս օրերին դարձավ մարդու ճանաչման մի մեծ փորձարան՝ տագնապներով ու ողբերգական անցքերով, մարդկանց հերոսական բնավորություններով, որտեղ ազատության, սեփական հողիդ վրա ապրելու իրավունքի համար անկոտրում կամքով ու արիությամբ հերոսներ են անմահանում, և կողքիդ քայլող մարդիկ դառնում են խիզախության ամրակուռ ոգի ու լեգենդ:

Այս պատերազմը մեզ պոկեց մեր խաղաղ աշխատանքից, իր հետ բերեց ավերածություններ, մեր այս ապրած օրերի սարսափի մասին դեռ կկարողանանք խոսել, բայց այս պահին երազում եմ՝ բոլորս վերադառնանք մեր բնակավայրը, նորից վերականգնենք մեր օջախները և անցնենք խաղաղ աշխատանքի:

http://www.usarmenianews.com/am-n-2660.html

08.04.2016

ՎԵՐՋԱՊԵՍ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ ԵՆՔ, ՄԵՐ ԳՆԴԱԿՈԾՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

Երբ քաղաք մտանք, մութ էր, որքան հայացքս փնտրում էր վիրավորված քաղաքիս ավերակները, այնքան խավարը խանգարում էր, մշուշապատված հայացքս ոչինչ չտեսավ, առավել ևս երբ հատուկենտ երևացող լույսերն ասում էին, որ քաղաքում բնակիչներ կան, ուրեմն մարդկային շունչ կա, պետք չէ հուսահատվել:

Հնգհարկանի բազմաբնակարանոց շենքի առաջին հարկում ենք, լույսերը վառել եմ, շուրջս անչափ խաղաղ է, այսպիսի անդորրություն տարիների ընթացքում երբևէ չէի նկատել:

Կարևորը, որ քաղաքս հանգստանում է երկարատև հրետակոծությունից հետո, իսկ ես իմ բանալիով կարողացա բացել բնակարանիս դուռը:

Մտովի ողջունեցի իմ քաղաքին հարազատության զգացումով, ձեռքերով շոյեցի բնակարանիս պատերը... Դժվար է բացատրել ամեն ինչ...

Այս պահին թոռնիկս քնած է հանգիստ, դուստրս հեռուստացույցն է միացրել. այս օրերին մենք զրկված էինք դրանից: Լսում ենք անունները զոհվածների, խեղդվում ենք ցավից...

Այս պահին ուզում ենք նույնքան սարսափ ապրած այս պատերի ներսում արտասվել՝ սրտանց արտասվել մեր ապրած օրերի, ունեցած կորուստների, բոլոր վիրավորների տառապանքների, այն բոլոր ապրումների համար, որ ունեցանք այս օրերին...

http://www.usarmenianews.com/am-n-2692.html

09.04.2016

ՀՐԵՏԱԿՈԾՎԱԾ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ ԵՄ՝ ԱՊՐԻԼԻ 2-Ի ՍԱՐՍԱՓԵԼԻ ՕՐՎԱ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՄԲ

Գիշեր էր, սարսափելի դղրդյունից վեր թռա տեղիցս: Կարծես տունը փուլ եկավ գլխիս, պատուհանների ապակիները զնգզնգում էին, անհանգիստ վախ մտավ ներսս, սողոսկեց հոգիս, սենյակից սենյակ անցա՝ չիմանալով անելիքս: Նորից ու նորից ահեղագոչ ձայներ, որ խլացրին մտածումներս, ինձ անջատեցին իրականությունից…

Արդեն լուսացել էր, բացեցի բնակարանիս դուռը, դուրս եկա բակ: Անհանգիստ խլրտուք կար, հնգհարկանի շենքի վերևի հարկերից իջած, մուտքի մոտ գունատված դեմքերով մայրեր են՝ երեխաներին գրկած:

«Նրանք պատերազմ չեն տեսել, շատ են վախեցած»,-անցավ մտքովս…

Զարմանալի է, ես արդեն մեկ անգամ տեսել էի այդ պատերազմը, բայց անհանգիստ հոգով մի քանի մխիթարող խոսքեր ասացի նրանց, նորից մտա տուն, որ տան պատերի ներսում այդ դաժան սարսափն ապրեմ, ուրիշները չտեսնեն:

Հիշեցի 92-ի ծանր տարիները: Այն ժամանակ նկուղում էինք ամիսներով ապաստան գտել, գրադի ամեն մի հարվածից սարսափած գոռում էի: Այսօր ես չգոռացի, ուրեմն ամուր եմ, կոփված, բայց ինքս իմ ասածի վրա քմծիծաղ տվի…Ի՞նչ կոփվել, երբ այդ պահին խլանում ես, բթացած հայացքդ հառում տան պատերին և փրկություն աղերսում, որ հանկարծ տունդ փուլ չգա գլխիդ:

Այս մեկը շատ մոտիկ էր, գուցե մեր բնակելի շենքի հարակից պուրա՞կը գնդակոծվեց, մշուշապատ էր այդ տարածքը, հաջորդն այստեղ կլինի, ուրեմն պետք է մի բան մտածել: Նկուղի բանալին եմ փնտրում, չեմ գտնում, ձեռքիս տակ եղած տարբեր բանալիների մեջ եթե կա անգամ, չեմ տեսնում, անիմաստ վերցնում եմ, նորից ցած դնում: Բայց մութ է այնտեղ, անմխիթար վիճակ: Ոչի՛նչ, կարգի կբերեմ, միայն թե գտնեմ այս բանալիների մեջ այն մեկը, որ կարմիր գույնով մի քիչ ներկել էի՝ մյուսներից տարբերելու համար: Աչքիս կարմիրն էլ կորավ, չեմ գտնում…

Կրակահերթերն արագացան, լույսերն էլ հանգան, վիրավոր թռչունի նման պատեպատ էի զարկվում….Ծանր ապրումներս եռապատկվե-

ցին…Դուռը ծեծում են, բացում եմ, հարևանն է դիմացս, մի կարմիր ներկված բանալի կա ձեռքին: Նա ինձ հանձնեց այն, ո՞վ է իմանում, վաղը, մյուս օրը դիրքերում կլինի, բանալին պետք է թողնի այստեղ, որ օրեր առաջ վերցրել էր ինձանից:

Նորից դղրդոց, անդադար հրետակոծություն, ու ես փորձում եմ բացել նկուղի դռան կողպեքը: Կարծես այն փոքրիկ անցքն էլ կորավ իմ աչքին: Չգիտեի՝ ինչ եմ անում, բայց վերջապես բացում եմ: Ներսից փչող բորբոսի ու խոնավության հոտը ինձ հետ վանեց մի պահ, բայց մութ էր, պատերն եմ շոշափում, զգացի, որ ոտքերս ջրի մեջ են, ինչ-որ բան անցավ ոտքերիս քսվելով….Երևի կրծողներից են, երանի՜ նրանց, գոնե նրանք այստեղ ապահով են…Ոտքս ինչ-որ բանի դիպավ, լավ է, որ չընկա, բայց հիշեցի՝ այստեղ խողովակներ կան թափված, ջրի հին խողովակները, որ նորերով փոխարինվել էին, հինը մնացել էր այստեղ: Մթության մեջ խարխափելով՝ դեպի բաց դռնից ներս մտնող լույսն եմ գնում, նորից ափսոսանքով փակում եմ դուռը՝ մտածելով, որ այստեղ մնալ հնարավոր չէ:

Խլացնող դղրդյունը շարունակվում էր, այդ պահին հիշեցի…Այն ժամանակ բռնագաղթի ճանապարհին փոքրիկ երեխայիս համար մի կնոջից բռանս չափ հաց խնդրեցի, ուրեմն հարկավոր է հաց գնել: Ռոպեներ հետո մեզանից ոչ հեռու գտնվող հացի փուռում եմ, իսկ այնտեղ կանայք կան քարացած, տղաներից մեկն ինձ տվեց մեկ հաց, ամենօրյա իմ առնելիք մեկ հացը: Ասացի՝ թող շատ կարմիր չլինի, մի քիչ գունատված, բայց ոչ թե մեկը, այլ՝ մի քանիսը: Զարմանալի էր, հաց գնող չկար: Գունատված հացերը ձեռքիս՝ բանալին եմ փնտրում, որ բնակարանիս դուռը բացեմ: Չեմ գտնում, հայացքս հառում եմ մուտքի աստիճաններին….Երևի կորցրել եմ. հանկարծ նորից դղրդոց, և դուռը բացվում է: Հասկացա, որ բանալիով դուռը չէի կողպել, բայց ուշ էր արդեն, նորից վերացա իրականությունից. «Սա մեր կողքին ընկավ, ուրեմն վերջ, ևս մեկ ուրիշը, այլևս չենք լինի…»:

Տեսնես ինչո՞ւ ավելը վերցրի, ձեռքից ձեռք եմ փոխում, սկսեցի մուտքի աստիճանները սրբել, բանալին փնտրելիս նկատել էի, որ այնտեղ մաքուր չէր: Ի՞նչ անեմ, անելիքս չգիտեի, մի դույլ ջուր բերեցի, սկսեցի լվանալ այդ աստիճանները:

Հարևանն էր, նկուղի բանալին էր ուզում, մի քանի կարկամած խոսք, ապա նրան է հանձնվում բանալին: Հեռախոսազանգից վեր թռա. ծանոթ ձայն է, բայց գլխի չեմ ընկնում: Շատ հարազատ է ձայնը, անհարմար է հարցնեմ նրա ով լինելը: Ուշացումով հասկացա, երբ լսեցի. «Նա-

րեկին ուղարկում եմ քեզ մոտ...»: Աղջկաս ձայնն է, ի՜նչ լավ է, որ չեմ հարցրել հարազատիս ով լինելը...Րոպեներ հետո մեկ ուրիշ հեռախոսազանգ, չգիտեի՝ ով է, բայց հուսադրում եմ՝ ոչինչ չի լինի, չվախենաք, ու ծամածռված, մի կոտրատված ժպիտ դեմքիս՝ բացում եմ դուռը. ուժեղ թակոցից էի վեր թռել: Անծանոթ մեկն է, ուրիշի է փնտրում: Մի քանի հարց, ապա՝ ի՞նչ եք մտածում: «Ոչինչ չի լինի, հանգիստ եմ, շուտով կդադարի, կտեսնես, ամեն ինչ կխաղաղվի»:

Նա անհույս գնաց, իսկ ես իմ սարսափի հետ նորից մնացի մենակ: Լույսերը եկան, մտածեցի՝ գուցե վերջին անգամ բացեմ համակարգիչը ու գրեմ մի քանի խոսք, ու ապրիլի 2-ին ՖԲ-ի իմ էջում գրվեց, որ Արցախում լարված իրավիճակ է... Այն այդ օրն անմիջապես տեղ գտավ Լոս Անջելեսի հայկական լրատվական կայքում՝ ի տես աշխարհի, որ Մարտակերտ սահմանամերձ բնակավայրս գնդակոծվում է:

http://www.usarmenianews.com/am-n-2693.html

10.04.2016

ՍԱ ՄԻ ՓՈՔՐԻԿ ՀԱՅՐԵՆԻՔ Է, ԱՌԱՆՑ ՆՐԱՆ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՊՐԵԼ

Արտակերտում եմ, և իմ տան պատերի ներսում վայելում եմ մի անսովոր հանգստություն, որ մինչ այդ երբևէ չէի զգացել: Քաղաքիս հանդարտությունն եմ վայելում՝ խուսափելով նայել այն ավերածություններին, որ ապրիլյան պատերազմական օրերին ենթարկվել էր մեր սահմանամերձ բնակավայրը: Առավոտյան պատուհանիս տակ ծլվլացող թռչունների ճռվողյունից արթնացա, մի պահ ինձ թվաց՝ ոչինչ էլ չի եղել…Ժամեր տևող հանդարտությունը մի անորոշ անհանգիստ վիճակ ստեղծեց հոգումս, երբ դուրս եկա բակ ու այդտեղ էլ զգացի մեր շենքի հարակից մյուս տների խաղաղ անդորրը:

Կարոտում եմ մարդկանց ձայներին, բակում խաղացող երեխաների աղմուկ-աղաղակին ու այդ կարոտով փարվում եմ իմ անցյալ օրերին ու նորից հիշում ապրիլի 2-ը, երբ հեռախոսազանգից հնչող ձայնը մեզ համոզում էր, որ բոլոր կանայք ու երեխաները պետք է տարհանվեն:

Բոպեներ հետո բակում կանգնած մեքենայի վարորդը շտապեցնում է մեզ: Տառապանքի դրոշմը դեմքիս, հոգիս ալեկոծված՝ փակեցի բնակարանիս դուռը, բայց նորից այն բացեցի ու մտա տուն:

Հարափոփոխ մտքերի մեջ, թե ինչ կարող եմ ինձ հետ վերցնել, հայացքս գամվեց սեղանին դրված գրքերին: Լսում եմ դրսից եկող ձայները, որ շտապեցնում էին ինձ, նույնիսկ այդ պահին հրետակոծությունից կարող էր մեքենան օդ բարձրանար, բայց ես ինձ հետ վերցրի մեր հայրենակից գրող, արձակագիր Լևոն Ադյանի՝ այս վերջին ամիսների իմ ձեռքի գրքերը:

Ինչո՞ւ վերցրի դրանք, գուցե այնտեղ տառապանք կար ու սարսափներ տեսած մարդու կերպա՞ր, որ իր մարդասիրությունն էր հակադրել ադրբեջանական ոճրագործությանը, որ կատարվեց անցած դարավերջին Բաքվում և Սումգայիթում/«Հեռացող եզերք»/: Կամ գուցե այնտեղ հայրենի լեռների, հովիտների, ծառ ու ծաղկի հարազատ ու մտերիմ գույնե՞րը կային, որոնց մասին օրեր առաջ գրել էի իմ վերլուծությամբ ու գնահատանքի խոսքերով… /«Իրիկնային աղջամուղջ»/:

Միշտ էլ մեր սերունդները խնամել, թաքցրել ու պահել են գիրքը, ավանդել հաջորդ սերունդներին, գուցե այդ պահին այդպիսի զգացողությո՞ւն էր արթնացել ինձ մոտ, կամ գուցե մեր օրերում շատ գրքեր

կան, որ գրադարակներում շարված, լռված են այդպես էլ, իսկ այս գրքերը վերջին ամիսներին ամենաշատ ընթերցողնե՞րն էին ունեցել մեր աշակերտների և ուսուցիչների շրջապատում:

Մի բան պարզ էր, որ հայ ժողովուրդն իր կենսասիրությունը պահպանել է ոչ միայն հերոսամարտերով ու ռազմական մաքառումներով, այլ կյանքի սիրով, աշխատանքի ու գեղեցիկ արվեստների պաշտամունքով, հոգեկան ազատության ծարավով: Բոլորս էլ գիտենք, որ գիրքը միշտ էլ լի է եղել լույսով ու իմաստությամբ, միշտ էլ մեր ժողովուրդը աներևակայելի զոհողությունների գնով փրկել է գիրքը: Սև դարերի խորքից այն մեզ է հասել՝ խավարի միջից թափառող լույսի նման դողդողալով, վտանգների ենթարկվելով: Ո՞վ գիտի, հրա՞շքն է պահում նրան, թե՞ ինչ-որ պատահականություն, բայց սերունդները խնամում են նրան, որ այն ճառագի ամենուր, ինչպես մեր տառապալից օրերին: Եվ մենք նորից ու նորից հավատացինք մեր ապրելու ու հարատևելու անհողդողդ կամքին ու հաստատակամությանը՝ համոզված, որ սա մի փոքրիկ հայրենիք է, այն մեզ ամուր թելերով կապում է այս հող ու ջրին, առանց որի չենք կարող ապրել:

ՀԳ. Այդ տառապալից օրերին, երբ բնակավայրս արկակոծվում էր, ապաստան էինք գտել մեզանից ոչ հեռու մի գյուղում: Այնտեղ այդ գրքերն ինձ չափազանց օգնեցին... Անհասկանալի մի լռություն էր ինձ պատել, միայն հեռախոսազանգերին էի պատասխանում...Չգիտեի անելիքս և ահա վերցնում, նորից կարդում եմ անցած դարավերջի՝ հայերի նկատմամբ Բաքվում և Սումգայիթում ազերիների իրականացրած դաժան ոճրագործության մասին, ապա սկսում եմ գրել ականատես գրող Լևոն Աղյանի «Հեռացող եզերք» վեպի գեղարվեստական վերլուծությունը... Գրիչս չէր լռում այդ օրերին, կարծես դրանով վրեժ էի լուծում սահմանը հատած թշնամուց: Այդ օրերի միակ փրկությունս գիրքն էր, թուղթն ու գրիչը, դրանք օգնեցին ինձ, ես ճգնաժամից դուրս եկա ժամանակին ու սկսեցի ապրել՝ գիտակցելով, որ շուտով նոր արշալույսներ կբացվեն մեզ համար:

http://www.usarmenianews.com/am-n-2719.html

11.04.2016

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԷԼ ՊԱՏԵՐԱԶՄ ՏԵՍԱՆ

Արտակերտում սկսվեց մեր առաջին աշխատանքային օրը: Ի տարբերություն ուսուցիչների, որ գնացել էինք դպրոց, աշակերտներ չկային: Ծնողների մտավախությունն առկա է այս օրերին, ուստի չեն համարձակվում տարբեր տեղեր ապաստանած իրենց երեխաներին նորից ետ բերել, հուսանք, որ կարճ ժամանակում այս տրամադրությունները տեղի կտան, և նորից կանցնենք դպրոցական կյանքին:

2-րդ դասարանում սովորող թոռնիկս այստեղ է, նա սպասում է իր համադասարանցիների վերադարձին, բայց նաև չի մոռանում անցած սարսափելի օրերը:

Ապրիլի 2-ի հրետակոծության օրը մոռացա իմ անհանգիստ ապրումները, երբ տեսա Նարեկիս գունատված դեմքը: Նա ձայն չէր հանում, հանկարծ նստեց հատակի գորգին ու մնաց նույն դիրքում քարացած: Ձեռքը դրված էր դպրոցական պայուսակին, որտեղ էլ լիներ, իր հետ պիտի տաներ այն, բայց հանկարծ ինչ-որ բան հիշեց, բարձրացավ տեղից, փնտրեց, բայց այն չգտավ: Սկսեցի խոսեցնել, իսկ նա պատմում էր, որ օրեր առաջ բակի տղաներով «պատերազմ» էին խաղում, ինքը վիրավորվել էր...

Ուժեղ գնդակոծումից նա հանկարծ սեղմվեց ինձ, իսկ ես հուսադրում եմ՝ մերոնք են, չվախենաս...Իր սովորած երգերից ու մանկական ոտանավորներից եմ հիշեցնում, թե ո՞րը կարող է երգել կամ արտասա-

նել: Նա տողեր է հիշում մեր հարազատ քաղաքին նվիրված երգից.

Թե՛ արքուն, թե՛ քնած, անունդ եմ տալիս,
Դու ամրոց անառիկ...

Ինչ-որ տողեր մոռացել էր, դեռ նոր էին սկսել սովորել, նախապատրաստվում էին մի նոր միջոցառման, բայց չհասցրին... Եվ ահա նորից հիշեց.

Իմ հերո՛ս Մարտակերտ, անվե՛րջ իմ կարոտ...

Ես ուզում եմ նրան համոզել, որ նա պիտի իր մայրիկի հետ գնա այստեղից, գյուղում ապահով կլինի, իսկ նա հաստատակամ պնդում է, որ տատիկն էլ պիտի իրենց հետ լինի, ևս մի քանի րոպե, նա սկսեց արտասվել: Մի պահ լռվեց ամեն ինչ, կարծես ոչինչ չէր եղել, ու հանկարծ հիշում է բանաստեղծության տողերը: Չնայած տխուր, բայց մի տեսակ ոգի առած սկսեց արտասանել.

Իմ մա՛յր հայրենիք, սիրում եմ ես քեզ,
Սիրում եմ հոգով, սիրում եմ սրտով,
Սիրում եմ՝ ինչպես հարազատ մորն իմ,
Ու եթե հանկարծ թշնամին վայրագ հարձակվի վրադ,
Իմ կյանքը կտամ, իմ շունչը կտամ,
Իմ Մարտակե՛րտ, օտարին քեզ չեմ տա:

Հպարտությամբ գրկում եմ նրան, բայց այդ պահին նորից հրետակոծություն: Նարեկիս մայրիկն էլ եկավ, բոլորս լուռ ենք, մենք չենք վախենում, այսպես ենք մեզ հուսադրում: Մեր դեմքերի վրա դրոշմված էր անհուն տառապանք, իսկ մեր թափանցող սուր աչքերը ասես թե տեսնում էին մեկս մյուսի հոգու խռովքը:

Մեր լռությունը խախտեց նրա մայրիկը. «**Պատերս համբուրեցի, հետո դուրս եկա տնից...**»:

Հազիվ զսպեցի արցունքներս, այդպես էր նաև 92-ին, իսկ աղջիկս թոռնիկիս տարիքին էր, այն ժամանակ ես էլ համբուրեցի բնակարանիս պատերը և դուրս եկա տնից...

Երանի՜ այսուհետ չհամբուրենք մեր տան պատերը, Արցախի երեխաներն էլ պատերազմ չտեսնեն...

http://www.usarmenianews.com/am-n-2740.html

13.04.2016

ՆԵՐԿԱՅԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳԱԼԻՔՈՒՄ ԼՈՒՅՍԵՐ ԵՄ ՓՆՏՐՈՒՄ

Այսօր դստերս ծննդյան օրն է, առավոտյան շնորհավորեցինք, թոռնիկս հրաշալի խոսքեր ուղղեց մայրիկին, բայց հետաքրքիրն այն է, որ սրտանց չկարողացանք ուրախանալ:

Վերհիշում եմ 84-ի այս օրը… Որքան արտաքուստ խաղաղ էր կյանքը, այնքան ոտնահարված էին մեր իրավունքները: Անցյալի ու ներկայի մեջ մտորումներս խեղդում են ինձ, գնում եմ դեպ անցյալ ու նորից գալիս ներկան: Գալիքի մեջ լույսեր եմ փնտրում, բայց ներկայի անորոշությունը պարսպի պես կանգնում է դիմացս, ու նորից ինձ են հառնում բնակավայրիս ավերակները, այս տառապալից օրերի մարդկային կորուստները, այն բոլոր սարսափները, որ ապրեցինք մենք:

Քառօրյա պատերազմն իր հետքն է թողել մեր հոգում, ամեն ինչից վեր ենք թռչում, սովորական հեռախոսազանգն անգամ իր հետ կարծես անհանգստություն է բերում, ոչ մի բանի չես կարողանում կցվել, բայց ահա քայլերս ինձ տանում են մեր բնակելի շենքի ապաստարան կոչված նկուղը, որ մի քիչ կարգի եմ բերել այս օրերին: Դարշահոտ կա այնտեղ, բորբոսնած պատեր, անչափելի խոնավություն, նույնիսկ կրծողներ, բայց մթության մեջ պատերն եմ խարխափում, որ գտնեմ այն լույսը, որը մեզ պահում է այստեղ:

Այն լույսը, որ սիրում ենք այնքան, այն նոր տունը մեր, որ գետնափոր է, բայց տխուր այնքան, ու ես գրկում եմ մեր այսօրվա խաղաղ օրը, որ հենց ինքը լույսն է, խաղաղ օրերի անդորրության մեջ եմ լույսեր տեսնում: Լույսերի փոքրիկ մի փունջ եմ ուզում, որտեղ կյանք կա, ապրելու երազանք, այդ լույսերի մեջ լիառատ սեր կա, բարու հաղթանակ: Լույսի այդ փունջը մտովի հանկարծ գրկեցի այսօր, որ շաղ տամ անտես ամե՜ն-ամենուր, բայց լույսն էլ թրթռաց անհանգիստ սրտով, ու ես հասկացա, որ լույսն անտես գալիս է, գնում, ուղղակի պետք է այն ամուր բռնել:

Այդ լույսի սիրով երբեմն ասես գնում եմ անտես դեպ հեռուները… Որքա՜ն հարազատ մարդիկ կան այնտեղ, մի նոր խաղաղ կյանք՝ առանց հայրենիք, կարոտը գրկած:

http://www.usarmenianews.com/am-n-2792.html

15.04.2016

ԱՐԴՅՈ՞Ք ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ ՄԵՐ ԴՊՐՈՑԸ ԳՈՐԾՈՒՄ Է

Հարցը, թե արդյո՞ք Մարտակերտում մեր դպրոցն արդեն գործում է, շատերին է հետաքրքրում ապրիլյան օրերին:

Պատերազմ տեսած երեխաները կամաց-կամաց գալիս են դպրոց, իսկ մենք, հասկանալի է, որ առաջին հերթին հոգեբանի զգացողությամբ պետք է մոտենանք՝ նրանց հոգու ալեբախությունը հանդարտեցնելու համար, չնայած այս օրերին ո՛ր երեխայի էլ՝ փոքրից մեծ, հարցնում ենք, նրանք շրջապատում «վախկոտի» պիտակ չստանալու համար շատ վստահորեն ասում են, որ չեն վախեցել: Բայց սա այն բառը չէ, որ գործածում եմ, այն սարսափ է ահազարհուր, որ մարդուն մի պահ վերացնում է իրականությունից ու նորից ետ բերում իր նախկին կյանք՝ մի նոր գիտակցությամբ, որ այս պահին դու կաս, հաջորդ րոպեին կարող ես չլինել:

Ապրելու իրավունքն այս դեպքում վերաճում է, ինչ գնով էլ լինի, կյանքը փրկելու ճակատագրական մտասևեռման, քանի որ կյանքի այդ պայմաններում ամեն ինչ խառնվում է իրար: Մարդագիտության մեջ մի նոր մարդ է ծնվում, որ համառորեն կառչում է նաև հողից, որ փրկի այն, ազատ ապրելու իրավունքը գերխնդիր է դառնում, խլացնում մարդու մեջ ամեն ինչ, և մտածում ես միայն՝ մենք պետք է ապրենք, սա կամքն է բոլորիս, որ խաթարվել է հենց այդ նույն մարդագիտությունից զուրկ ոճրագործների կողմից:

Հենց այդ չլինելու գիտակցությունն էլ մի նոր անսասան կամք է տալիս մեզ, որ ամուր, շատ ամուր կառչենք այս կյանքից, որ հանկարծ նա բաց չթողնի մեզ…Ու այսպես կառչած մեր կյանքին ու հողին՝ ապրում ենք մենք՝ նաև այն գիտակցությամբ, որ տառապանքի մեջ անգամ մարդկային արժեքները պահպանելու ուժ պետք է գտնենք: Երևի դրանից ելնելով էլ՝ երբեմն ծիծաղում, երբեմն արտասվում, կատակում ենք անգամ, մեզանից անկախ՝ երբեմն նույնիսկ վախենում հանկարծ, միայն թե ապրենք: Եվ այս ապրելու գիտակցությունը մեզ օր օրի կոփում է այստեղ, ավելի շատ է սիրել տալիս այն հողը, որի համար արյուն է թափվել:

Եվ այսպես սկսում ենք ավելի շատ սիրել այն հողը, որը չնայած արկերի հարվածից ճաքճքել է, բայց այս օրերին էլ նրա վրա քայլող ճաքճքած սրտեր կան, ոգի կա այստեղ, ապրելու համառ կամք, միայն թե ապրենք ու ապրեցնենք հող հայրենին:

http://usarmenianews.com/am-n-2856.html

17.04.2016

ԳՈՎԱՍԱՆԱԳԻՐ, ՈՐԻ ՎՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏՔԵՐ ԿԱՆ...

Այս օրերին մեր դպրոցական կյանքի լավագույն լուրն է, որ լսեցի: Ապրիլի 16-ին 11-րդ դասարանի իմ աշակերտ Դավիթ Հարությունյանը մասնակցել է Հայաստանի առարկայական օլիմպիադայի հայոց լեզվի եզրափակիչ փուլին:

Չնայած սպասելիքներ չունեինք՝ մեր զգացած պատերազմական օրերի սարսափելի ապրումների պատճառով, բայց իմ աշակերտի այսօրվա հեռախոսազանգն ինձ անչափ ուրախացրեց: Նա արժանացել է ՀՀ ԿԳ նախարարության կողմից գովասանագրի: Ցավ զգացի, երբ իմացա կյանքի ոլորապտույտ ճանապարհներին նրա գրած շարադրության մասին. այն մեր վերջին պատերազմական ծանր ապրումների արտահայտությունն էր:

Մտքերով նրա հետ եմ... Դավիթը միշտ էլ հպարտանալու առիթ է ընձեռել բոլորիս: Նախորդ ուստարում գրականությունից հաջողություն էր արձանագրել՝ մասնակցելով ՀՀ առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին: Բազմիցս մասնակցել է ասմունքի տարբեր մրցույթների: ՀՀ մանկապատանեկան 8-րդ մրցույթ-փառատոնի ասմունքի եզրափակիչ փուլում զբաղեցրել է 2-րդ պատվավոր տեղը, ՀՀ վարչապետի կողմից խրախուսվել շնորհակալագրով և արժեքավոր նվերով:

Մեր աշակերտներն էլ պատերազմ տեսան…Ապրիլի 2-ի առավոտյան նա զանգեց ինձ, ուզում էր իմանալ, թե այն պահին, երբ մեր քաղաքն արկակոծվում էր, իր ուսուցչուհին որտեղ է: Անհանգիստ ապրումներս մի կողմ թողեցի, խոսեցի առանց հուզումների ու շատ մտերմորեն, այդ պահին մտքովս անգամ չէր անցնում, որ ստիպված պիտի լինեինք թողնել մեր բնակավայրը: Երկրորդ հեռախոսազանգը երկար չուշացավ…Ես արդեն այստեղից ոչ շատ հեռու գյուղում էի, իսկ նա ընտանիքով մեկ ուրիշ վայրում էր ապաստան գտել: Արցախյան ազատամարտի երկար ճանապարհ անցած հայրիկն էլ մնացել էր առաջ-

նագծում, իսկ մայրիկը ջանք չէր խնայում, որ որդին մասնակցեր Հայաստանի առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Մենք այդ օրերին մոռացանք ամեն ինչ, նորից դպրոցական կյանքին անցնելը մեզ համար մի հրաշալի երազանք էր դարձել: Դեռ խաղաղ օրերին նախատեսել էինք նորից վերանայել անցած դասանյութերը, բայց այդպես էլ չհասցրինք: Այս օրերին Երևանում լինելով՝ նա նորից ինձ հիշեցրեց, որ տեսած ու զգացած ապրումների ալեկոծությունը թույլ չտվեցին նրան նորից գիրք բացելու, բայց հաստատակամ մասնակցել է հայոց լեզվի օլիմպիադային՝ համոզված, որ կկարողանա արդարացնել բոլորիս հույսերը:

Այսօր հեռախոսի մյուս կողմում լսվող նրա ձայնին ի պատասխան՝ ես փոխանցեցի իմ սերն ու քնքշանքը, իմ սրտից բխած շնորհավորանքը, իմ բոլոր համբույրները հղեցի նրան, որ կարողացել է այս ցավատանջ ապրումներից հետո արկակոծված մեր բնակավայրի դպրոցի անունը հնչեցնել այնտեղ, մի դպրոց, որ այս օրերին հազիվ այս դաժան պատերազմի պատճառած ավերածությունների հետքերն է վերացրել իրենից ու նորից դռները բացել, ստրատրոփ սպասում է դպրոցականներին:

http://www.usarmenianews.com/am-n-2908.html

18.04.2016

ԽԱՂԱՂ ՕՐԵՐԻ ԻՆՉՔԱ՞Ն ԼԱՎ ԲԱՆԵՐ ԿԱՆ, ՈՐ ԿԱՐՈՏՈՒՄ ԵՆՔ

Մեր խաղաղ օրերին, երբ մեզանից որպիսություն էին հարցնում, չէինք գիտակցում, որ շատ լավ ենք, ու ամեն անգամ մեզ փրկում էր ոչինչ չասող մի երկու բառ, որ մի շնչով վրա էինք բերում՝ ոչի՛նչ, լավ ենք:

Իսկ հիմա, երբ այս սարսափելի կայծակնային պատերազմից հետո հարցնում են մեր որպիսության մասին, ուզում եմ բարձրակոչ ասել, որ շատ լավ էինք այն օրերին, նույնիսկ գերազանց, ուղղակի մենք չգիտեինք: Հիմա էլ շատ լավ ենք, երբ խաղաղ է օրը, բայց երբ հեռվից են կրակոցները մեզ հասնում, հիմա ենք ասում՝ ոչի՛նչ, լավ ենք... Իսկ երբ տարհանվեցինք, էլի ասացինք՝ ոչինչ, համոզված, որ շուտով հետ կվերադառնանք ու կասենք, որ լավ ենք:

Այս պահին, երբ խաղաղ է, անդորը, ուզում եմ ասել, որ ես ինքս շատ լավ եմ, նույնիսկ գերազանց, առավել լավ եմ, երբ կարողանում եմ այս պահին այս տողերը գրել, շատ ավելի լավ եմ, երբ իմ բնակարանում եմ, բայց որքա՜ն շատ ու շատ լավ եմ, երբ այսօր դասարան եմ մտել...

Վեցերորդ դասարանում լսում եմ ամեն մեկի ապրումների մասին, ու նրանց պատմած իրական կյանքին զուգահեռվում են իմ զրույցները, բայց հետաքրքիրն այն է, որ աշակերտների հայացքներում ժպիտ էի տեսնում:

Առջևս նստած աշակերտուհին հանկարծ ժպտալով ասաց, որ օրեր առաջ իրենց գյուղական տան նկուղն է գնդակոծվել, լավ է, որ հասցրել էին ժամանակին դուրս գալ... Դպրոցում մեր ուսուցչուհիներից մեկն ասում է, որ իր բարեկամը վիրավորվել է, բայց նա էլ ժպտում է, լավ է, որ միայն վիրավորվել է, կարող էր ավելի վատ բան լիներ: Ես հանդիպում եմ մեր ծնողներից մեկին, հարցնում եմ իր զինվոր որդու մասին, որ հիմա ապաքինվում է, նա էլ ժպտում է, շատ լավ է, որ որդու հետ ավելի վատ բան չի եղել: Ուսուցիչներից մեկին հարցնում եմ իր ավերված տան մասին, որ հիմա մեկ ուրիշի տան են ապրում, նա էլ ժպտալով ասում է՝ լավ է երեխաներիս հետ վատ բան չի պատահել...

Ու ես մի պահ մտորում եմ՝ ինչքան լավ բաներ կան կյանքում, բայց մեզ համար այս լավը մեկ այլ իմաստ ունի... Մենք լավ ենք, երբ մեզ չեն արկակոծում, լավ ենք, երբ այդ օրը զոհեր չկան, ու այսպես լավ օրերով

ապրում ենք, բայց երանի թե մեզ համար էլ լավը դառնա մի գեղեցիկ իր, որով երեխադ խաղում է, մի հրաշալի խոսք, որով ապրում ես, մի լավ երգ, որ սիրում ես լսել, գուցե նաև մի լավ հայացք, որ քեզ է ուղղվել...

Ու այսպես շատ լավ բաներ կան, բայց ոչ մեզ համար, մեզ համար ուրիշ է այդ լավը, մեր լավը կապույտ երկինքն է, ամենից լավը՝ սահմանին կանգնած զինվորի անհոգ ժպիտը:

Խաղաղ օրերի ինչքա՜ն լավ բաներ կան, որ մենք կարոտում ենք...

http://www.usarmenianews.com/am-n-2936.html

20.04.2016

ԱՆԻԾՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՈՐ ՄԵՐ ՀՈԳՈՒՄ ԷԼ ԱՅՍՔԱՆ ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԵՐԵՑ

7-րդ դասարանում եմ, քիչ են դպրոց հաճախող աշակերտները, բայց լրջություն կա դեմքերին: Ուշադրությանս արժանացավ Արեգ Ստեփանյանի գրածը. որքա՜ն հասունացած եմ տեսնում նրան: Հապճեպ կարդում եմ տողերը, նորից առաջարկում՝ շարունակել միտքը, որ հորձանք է տվել հոգում:

«Իմ հայրենի քաղաքն ընկղմվել էր խաղաղ նիրհի մեջ: Հանկարծ այդ անդորրը խախտվեց թշնամու արձակած արկերից: Մենք սարսափած վեր թռանք...

Ես պատերազմի մասին լսել էի ծնողներիցս, այդ պահին նրանց դեմքերին տագնապ ու ցավ տեսա: Ուրեմն նորից պատերազմ է... Արկերը հարվածում և ավերում էին իմ ծննդավայրը: Պետք էր լքել հայրենի Մարտակերտը: Հայրս մեզ տեղափոխեց մեկ ուրիշ տեղ՝ բարեկամուհու տուն: Չորս օր տևեց այդ անիծված պատերազմը, զոհվեցին զինվորներ, խաղաղ բնակիչներ ու կամավորագրված առաջամարտիկներ: Ոտքի էր ելել ողջ հայությունը: Մեր քաջ տղաները կասեցրին թշնամու առաջխաղացումը: Իմ հարազատ դպրոցն էլ վնասվեց, ու լռեց զանգը: Մեր ծնողները նորից վերապրեցին այս պատերազմը, իսկ բոլոր երեխաները, իմ կարծիքով, մի քանի տարով շուտ մեծացան: Մենք հասկացանք, որ թշնամին ստոր է, նա կարողացավ երեխայի սպանել, ծերունիների խոշտանգել, զինվորների գլխատել... Շատ սարսափելի է, մենք համոզվեցինք նաև, որ պետք է միասնական, զգոն և ուժեղ լինենք, իսկ թշնամու հետ խոսենք իր լեզվով, որ ի վերուստ ազգիս տրված չէր:

Սահմանը պահող մեր տղաները առյուծասիրտ ոգով հավերժացրին իրենց սխրանքները, նրանք մեր օրերում դարձան Հայկի, Տիգրան Երկրորդի, Պապ թագավորի, Վարդանի, մեր նախնիների արժանի սերունդը: Ես հպարտ եմ հայ առյուծներով, նրանք հիմա էլ սահման են պա-

հում, որ մեր հրետակոծված Մարտակերտում նորից կյանքը շարունակվի:

Այս օրերին նորից հնչում է իմ հարազատ դպրոցի զանգը, ճիշտ է, քիչ են աշակերտները, բայց հուսով եմ, որ բոլորը նորից կվերադառնան, և կշարունակենք մեր կիսատ թողած խաղերն ու դասերը: Երանի նորից չտեսնենք այն, անիծվի պատերազմը, որ մեր հոգում էլ այսքան ավերածություններ բերեց...»:

Խռովված հոգիս լուռ աղաղակում է...Դեռահասի բողոքի ընդվզում էր սա, պատերազմ տեսած դպրոցականի հոգու տվայտանք, որ ուղղված էր այդ սարսափելի չարիքը սանձազերծողների դեմ:

http://www.usarmenianews.com/am-n-2988.html

21.04.2016

ԳԵՂԵՑԻԿ Է ԱՅՍ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ, ԵՐԲ ԽԱՂԱՂ Է ԵՐԿԻՆՔԸ

Արտակերտն ապրիլյան օրերին հրետակոծության տակ էր: Թաքցնե՞մ, երբ թաքցնելու բան չկա, կսկիծ կա, ահռելի ցավ, արցունք, խուլ հառաչանքներ... Նորից փոթորկվեցին հոգիներս, նորից տառապալից օրերի սարսափներն ապրեցինք... Ուզենք թե չուզենք, կորցնում ենք մեզ, երբ զգում ենք, որ այդ պահին կանք, կարող է հաջորդ րոպեին չլինենք:

Այս անգամ փրկության համար մեր շենքի ներքնահարկի նկուղը միակ ապահով տարածքն էր, որտեղ ապաստան գտանք մի քանի ընտանիք: Սառը օդն ու խոնավությունը, պատերի գորշությունը մեզ այդ պահերին այլևս չէին վանում, բայց ամեն մի արկի պայթյունից սիրտդ վեր է թռչում, ուզես, թե չուզես սարսափահար կառչում ես պատից կամ կուչ ես գալիս, սպասում հաջորդ հարվածին, երբեմն նույնիսկ ականջդ ես փակում, ոչինչ չլսես, միայն թե հանկարծ դու քեզ չկորցնես... Ամեն մի արկի հուժկու հարվածից երբեմն նույնիսկ լռվում ես հանկարծ, տեսնես որտեղ էր, շառաչուն ընկավ, հանկարծ մարդկային զոհեր չլինեն: Ու այսպես րոպեն ժամեր դարձած՝ լուսաբացի լույսի ենք սպասում, միայն թե լույսը հանդարտ բացվի...Ու այդ լույսի հետ խուլ հառաչանքներ, արցունքներ կան շատ, մեր կողքին քայլող, սահմանը պահող զոհեր կան, ավերված տներ, հայրիկ կորցրած փոքրիկ զավակներ, այրիացած կանայք, սգավոր մայրեր...Ու այսպես անվերջ գրկում ես ցավը՝ քեզ ընկեր դարձած, ուզում ես գոչել, ամբողջ աշխարհին ցասումդ հայտնել, որ մենք էլ հանգիստ ապրել ենք ուզում…

Ավերված հոգի տեսե՞լ է աշխարհը, որ երբեմն դառնում է ցասում, երբեմն աղերսում, կառչում է հողից, աղաղակում հանկարծ, երբեմն նույնիսկ, երբ վհատվում է, ուզում ես թափ տալ, որ նա չմեռնի, ուզում ես կյանքդ պատնեշ դարձնել, ու եթե հանկարծ կյանքդ չլինի, միայն թե հոգիդ, ավերված հոգիդ հանկարծ չմեռնի...

Ուզում եմ մարդկայնության օրենքը պատվար դառնա մեր խաղաղ կյանքին:

Կյանքի հարուցած տագնապներին դիմագրավելու համար մի նոր հենարան եմ փնտրում, գունագեղ աշխարհ եմ երազում, լուսաբացի գարնան ավետաբեր շունչն եմ գրկում, բայց ձեռքիս հայտնված տողերը նորից ինձ բերում են իրականություն: Սերնդի ճակատագրի համար մտահոգ՝ հայացքս փախցնում եմ տողերից և փնտրում մեկ այլ լուսավոր տող, բայց նորից ինձ են հառնում թախծոտ ու մեղմ հայացքներ, ու դպրոց հաճախած հատուկենտ աշակերտների խոսքերում մի նոր տա-

ռապանք եմ տեսնում:

«Պատերազմ…Չէի հավատում, կարծես անզգայացա, փշաքաղվեցի, արցունքներս թափվում էին՝ ինձանից անկախ…Մայրս ինչ-որ բաներ էր վերցնում, ես դեռ ուշքի չէի գալիս, չէի հասկանում, թե ինչ է կատարվում, հոգումս դատարկություն էի զգում: Մենք գնում էինք գյուղ… Բայց այդ պահին գյուղ գնալու փոխարեն, եթե հնարավորություն լիներ՝ բարձրանալ դիրքեր, մի վայրկյան անգամ չէի հապաղի»/Հովսեփյան Լիլիթ, 11-րդ դաս./:

«Թե ինչ էր պատերազմը, այդ օրերին իմացա: Կարելի է ասել՝ մենք չկայինք այդ օրերին, եղբայրս էլ կռվում էր, բայց ամեն զոհի հետ մենք էլ էինք մահանում, եղել են պահեր, որ հուսահատված ցանկացել եմ մեռնել, քան այսքանը լսել մեր խոշտանգված զինվորների մասին»/Ավետիսյան Ալինա, 7-րդ դաս./:

«Պատերազմն ինձ համար մղձավանջ էր, որի ժամանակ անընդհատ մտածել եմ սահմանին կանգնած մեր առյուծասիրտ տղաների մասին, բայց երբ իմացա, որ մարդկային կորուստներ կան, ու բնակավայրս ավերում են, վրիժառությամբ լցվեցի՝ երանի թե հնար լիներ՝ ազգովին վերացնել նրանց» /Խաչատրյան Արսեն, 6-րդ դաս/:

«Ապրիլի 2-ին, երբ պայթյուններից արթնացա, չէի հասկանում, թե ինչ է կատարվում, մի կողմից էլ դրանք սովորական էին դարձել մեզ համար: Բայց երբ հայրս ընկճված մտավ տուն, հասկացանք լրջությունը: Թշնամին չէր հանգստանում, իսկ մենք փրկություն էինք ուզում, մահաբեր արկը մեզ հասավ նույնիսկ մինչև մոտակա գյուղը, որտեղ պատսպարվել էինք գետնափոր նկուղում: Չէի հասկանում, թե ինչ է կատարվում, միայն հիշում եմ, որ լացում էի…Այդ օրերին հասկացա, թե ինչ է պատերազմը…»/Հովհաննիսյան Սերի, 6-րդ դաս./:

Մի պահ լռում եմ, չեմ ուզում կարդալ իմ աշակերտների տողերը ցավոտ, բայց խաղաղ կյանքի երազանքով լի՝ փորձում եմ գտնել հույսի մի ճրագ և մարդկայնության բարձր օրենքը պատվար եմ դարձնում, փրկությունը դառնում է հավատ, ու մեկ էլ հանկարծ խիղճ է նա դառնում, որ վերադառնա աշխարհին համայն, և մարդկությունն էլ իշխի ամենուր, ու նոր հայացքով նայեն Արցախին:

Ուզում եմ բարձրաձայն ասել նաև, որ աչք չունենք մենք անդրկովկասցի թուրքի և ոչ մի բանի վրա, մենք ապրել ենք ուզում մեր պապերի հողում:

Վորոնեժի «ԱՆԻ» մշակութային-լրատվական թերթ,
ապրիլ-մայիս, հ. 3-4, /71-72/ 2016 թ.
http://hayernaysor.am
www.replik.am/m_arm/index.php?id=87390
http://usarmenianews.com/am-n-3027.html

24.04.2016

ՄԵՆՔ ԸՆԴԱՄԵՆԸ ԱՊՐԵԼ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ

Այսօր Հայոց եղեռնի 101-րդ տարելիցն է: Ասում են՝ մարդու թշնամին էլ թշնամու նման պիտի լինի, որ կարողանա հարգի դիմացինի վիշտը, բայց մեր թշնամին, իր վայրագության բարձրակետին, այս օրն անգամ թույլ չտվեց հանգիստ սգանք Հայոց ցեղասպանության զոհ դարձած մեր նահատակների հիշատակը:

Մարտակերտը այս գիշեր հրետակոծության տակ էր, նորից փոթորկվեցին հոգիներս, նորից նախորդ օրերի սարսափներն ապրեցինք: Ուզենք թե չուզենք, կորցնում ենք մեզ, երբ զգում ենք, որ այդ պահին կանք, կարող է հաջորդ րոպեին չլինենք, բայց այս պահին ուրախ եմ, որ նորից վայելում եմ բնակավայրիս խաղաղությունը:

Ծանր գիշեր էր, երբ ուշքի եկա, լուսադեմին իմ հայացքի ու լսողության փնտրտուքների մեջ թռչունների ձայներն էի որսում: Պատուհանիս տակ նրանց ճռվողյունը լսեցի, հոգիս բերկրանքով լցվեց: Արդեն քանի անգամ է՝ զգում եմ, թե որքան գեղեցիկ է կյանքը, և հիմա ուզում եմ ի լուր աշխարհի ասել, թե ինչքան հրաշալի է այս աստվածային կյանքը, երբ խաղաղ է երկինքը:

Անցած տարվա հիշողությունների հետ եմ, երբ նշեցինք Հայոց ցեղասպանության 100 տարին: Չնայած սահմանային լարվածությունը միշտ էլ զգացվում էր, բայց պատերազմի սպառնալիք չկար այդ օրերին, խաղաղ էր երկինքը, և անցած դարասկզբի զոհերի հիշատակին հուշ-ցերեկույթ էի կազմակերպել...Միջոցառման նկարներն եմ նայում, նույնիսկ երանություն զգում այդ օրերի հանդեպ:

Մինչ քառօրյա պատերազմը՝ մենք ապրում էինք ամիսներով, այս հատուկենտ խաղաղ օրերին ապրում ենք օրերով, իսկ երբ հրետակոծու-

թյան տակ ենք լինում, ապրում ենք րոպեներով, որոնք երբեմն դառնում են վայրկյաններ, նույնիսկ երբեմն այդ վայրկյանն էլ կարծես կանգնում է, ուզում ենք մեր սրտի զարկերը լսել, բայց կարծես դա էլ չենք լսում ու նորից մեզ հավաքում ենք, որ ապրենք վայրկյանով, հետո նորից ուզում ենք դարձնել այն րոպեներ, ու հետո ուզում ենք այն դառնա ժամ, նորից ժամեր... Եվ ուրախանում ենք, որ այդ ժամերն օր են դառնում, հետո նորից օրեր ենք ուզում, բայց երևի, որ ամիս էլ ենք ուզում, դա անչափ շատ է մեզ համար և հանկարծ նորից հայտնվում ենք հրետակոծության տակ: Ուզում ենք մեր ապրելիս վայրկյանները րոպեներ դառնան, հետո՝ ժամեր, իսկ երբ ժամերը օր դառնան, նորից օր կխնդրենք վերին տիրոջից, միայն թե ապրենք, թեկուզ օրերով:

http://usarmenianews.com/am-n-3110.html

28.04.2016

ՄԱՐՏԱԿԵՐՏԸ ՄԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՆ Է, ԱՅՍՏԵՂ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է...

Ամբողջ գիշեր հրետակոծություն էր... Մեր բնակելի շենքի նկուղում գտնվելով՝ ամենևին չենք հասկանում, թե որ ուղղությամբ է հրետակոծում մեր հակառակորդը, բայց դրան զուգահեռ մերոնց պատասխան հարվածներն էլ կարծես մեր գլխավերևով են անցնում, ու ստեղծված ահեղադղորդ պայթյուններից ու հուժկու հարվածներց ամենևին չես հասկանում՝ այդ արկը գլխավերևո՞ւմդ ընկավ, թե քո ապրելու վայրից որոշ հեռավորության վրա: Բայց ամեն անգամ մտածում ենք, որ այս անգամ էլ փրկվեցինք: Ամեն պահ ապրած սարսափելի զգացողությանդ գումարվում է մի նոր հարցում, թե ինչպես են սահմանում կանգնած մեր քաջերը կարողանում հաղթահարել այս պատերազմի սարսափելի արհավիրքները, նրանց խիզախությանը զուգահեռ՝ հոգումդ մոլոգնում է մի նոր տառապանք, որ նորից զոհեր չլինեն:

Այս օրերին ապաստարան կոչված այդ նկուղում իմ կողքին է յոթ տարեկան թոռնիկս, շրջապատում բոլորի համար զարմանալի մի երևույթ, որ այս օրերին մեր բնակավայրում երեխա է մնացել: Օրեր առաջ փորձում էր նրա մայրիկը ամեն անգամ բացատրել, որ չվախենա, մերոնք են կրակում, նաև լավ էր, որ մայրիկին չէր հարցնում, թե պատերազմում ինչո՞ւ միայն մերոնք են կրակում: Հաջորդ օրերին հրետակոծության ժամանակ նա ինչ-որ մի բանով զբաղված էր՝ կամ անհաղթ զինվորի մասին էր զրույցը, կամ հիշողություններ՝ իր ապրած խաղաղ օրերի մասին, որ թաղամասում ընկերներ ուներ, իսկ հիմա մենակ է մնացել:

Երեկ մի ինչ-որ դղրդյունից վեր թռա, հանկարծ կողքիս լսում եմ. **«Տատի՛, չվախենաս, այդ մերոնք են...»:**

Ես հասկացա այդ պահից, որ իրավունք չունեմ իմ Նարեկի մոտ ոչ թե սարսափի, այլ ընդհանրապես վախենալու մասին խոսել:

Այս գիշեր նա հանգիստ քնեց՝ համոզված, որ հրետակոծողները միայն մերոնք են, նրանք սանձահարում են մեր հակառակորդին: Ես ու նրա մայրիկը հսկում էինք մեր բալիկի հանգիստ քունը, բայց այնքան զսպված, որ ձայն չհանենք, մենք իրավունք չունեինք մեր անհանգիստ ապրումներով արթնացնել երեխային:

Ես նորից համոզվեցի, որ այսպես մենք կշարունակենք ապրել: Այսուհետ կսարսափենք մեր մտքում, զոհերի համար կտառապենք մեր մտքում, որպեսզի սերունդը չվախենա, ավերված սրտերով կազդարարենք մեր սահմանի հերոսների մասին բարձրաձայն, որ կարողանանք ապրել ու նրանց էլ ապրեցնել:

Այս պահին՝ ապրիլի 28-ի առավոտյան, խաղաղ է մեզ մոտ, Նարեկս նկարչությամբ է զբաղված, երբ նայեցի նկարին, նա բացատրեց, որ սա իրենց տունն է, վերևում արև կա, այս մեքենան հայրիկն է վարում, նա գնում է աշխատանքի, այստեղ պատերազմ չկա:

Խեղդվում եմ հուզմունքից, բայց հուզմունքս էլ մտքումս էր, ես իրավունք չունեի բարձրաձայնելու...

http://www.usarmenianews.com/am-n-3181.html

29.04.2016

ԻՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽԱՂԱՂ ՕՐԵՐՆ ԵՄ ԿԱՐՈՏՈՒՄ

Այս գիշեր խաղաղ էր, ու սկսեցի կարոտել: Բայց պատերազմի ժամանակ խաղաղ պահերին ի՞նչ են կարոտում:

Առավոտյան նկատեցի, որ մեղմ անձրև էր տեղում, մեղմորեն ձեռքիս ափի մեջ անձրևի կաթիլը գուրգուրեցի, իսկ նա ինձ ժպիտ պարգևեց, ու ես կարոտեցի իմ այս օրերին կորցրած ժպիտը: Թռչունների ճռվողյուն լսեցի, ուշադիր կանգնեցի ու սկսեցի լսել նրանց, լեզուն չէի հասկանում, բայց մեղմորեն ժպտացի այդ անմեղ շնչավորներին: Մի հայացք ձգեցի մեր բնակելի շենքին ու դատարկության մեջ կարոտեցի բոլոր նրանց, ովքեր միշտ այստեղ էին, իսկ հիմա չկան, այս անգամ էլ մի աղավաղված ժպիտ դաջվեց դեմքիս: Այս կյանքում մարդիկ կային, որոնց կարծել էի, հնարավոր չէ ներել, բայց մտովի ներեցի հանկարծ ու նորից մի քանի ժպիտներ գրկեցի, որ պարգևեմ նրանց: Գիտեմ, որ շատ հարազատ մարդիկ կան, անհանգստանում են մեզ համար, երախտագիտության զգացումով բազում ժպիտներ ուղարկեցի նրանց: Մտքերի մեջ խորասուզված՝ գնացի խանութ, ուրախացա, որ այն բաց էր, ոմանք զարմացած ինձ են նայում, իսկ ես սիրառատ ժպտում եմ ինձ նայող անծանոթ զինվորականներին, որ այս օրերին հաղթանակ էին կերտում սահմանին: Ռոպեներ հետո նրանցից մեկը խանութի դուռը բացեց ու հարգալից տեղ տվեց, որ դուրս գամ, այդ պահին ժպիտը ողողեց դեմքս, նա էլ սկսեց ժպտալ: Հետո մենք սկսեցինք զրուցել, մեզ միացան այն մյուս երկուսը, իմ բարեմաղթանքներն ուղղեցի նրանց, վերջում բոլորս ծիծաղում էինք, ու ես հասկացա, թե որքան կարոտել եմ նաև իմ այս ծիծաղին:

Այս պահին դպրոցի ճամփան եմ կարոտում, իմ առջև նստած աշակերտներին, նույնիսկ այն բացված դասամատյանը…Ինչքա՜ն շատ բան կա կարոտելու…Գրիչս ձեռքիս երբեմն կանգ է առնում, բայց խաղաղ օրերի որքա՜ն գրելու բան կար, որ այդպես էլ կիսատ մնացին: Հիմա էլ գրքեր կան բացված, չեմ ուզում փակել, միայն հայացքս անցնում է տողերով, բայց ուշքս հեռվից եկող խուլ ձայների վրա է, ու ես կարոտում եմ իմ խաղաղ օրերի գրչին, կարոտում եմ նաև բացված գրքերին… Բայց երբ այն ժամանակ ընթերցում էի, հասկանում էի, թե ինչ եմ ընթերցել:

Որքա՜ն շատ կարոտներ կան, որ այս օրերին մոռացել էի, ինչքա՜ն շատ ժպիտներ կան, որ կարոտում եմ: Այս պահին կողքիս թոռնիկս Արցախի օրհներգն է երգում, ուրախ ժպտում եմ: Մի ներքին ձայն ինձ ասում է՝ ամեն օր սպասի՛ր դու, կարոտներդ կգան մի օր, և դու սիրալիր կժպտաս նրանց:

http://usarmenianews.com/am-n-3204.html

30.04.2016

ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ՎԵՐՋԱՆԱ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՈՐ ԱՆՑՆԵՄ ԻՄ ՆՈՐ ԿԵՐՊԱՐԻՆ

Այսօր էլ առավոտյան մեր բնակելի շենքի նկուղից դուրս եկա խաղաղված, շրջապատի անդորրության մեջ հիացմունքով նայում եմ երկնքին, մտովի խոսում վերին բարձրյալի հետ, փորձում վայելել նոր կարոտներ: Այս անգամ ուրիշ են կարոտներիս երանգները, գուցե նաև շատերի կարոտների նման: Աչքիս առջև անցած օրեր են, որ մինչ այդ անտեսանելի քողով պատված՝ չեմ էլ հիշել: Ու անցած օրերիս հիշողությունների մեջ հանկարծ երևաց նա, որ շատ մեղմ էր, անչափ հանգիստ, նույնիսկ այնքան հանդարտ, որ ասում են նման էր կանգնած ծովին: Ու ես սկսեցի կարոտել ինձ, երբ աղջնակ էի, այն ժամանակ պատերազմ չկար, ու նման էի այն հարդարտ ծովին:

Մտովի թերթեցի անցած օրերս, տեսա մեկին, որ համեստության քողը մի կողմ էր դրել, որ դիմադրի ճակատագրի հարվածներին: Այս անգամ նա նման չէր այն հանդարտ ծովին, հուզախռով էր հոգին, ցավից ճչում էր, որ չխորտակվի: Ու նա փրկվեց՝ մաքառումներով, երբեմն նույնիսկ փրփուրից կախվելով, բայց մի անգամ նույնիսկ ուժեղ հարվածից ծովին ընդառաջ գնաց, հուսահատված գրկեց նրան, բայց ծովն այս անգամ նրան չընդունեց:

Նորից եմ մտովի թերթում մի անցած կյանք, նորից եմ տեսնում նրան, որ ուզում էր ապրել ուրիշների նման, հավատում էր նա խոստումների, գուցե փայփայում անծիր երազներ, բայց դրանք էլ մի օր ծառս ելան հանկարծ, դժգոհ ցասումով հասկացրին նրան, որ պետք չէ այդպես հավատալ դրանց:

Ու փակեցի մի օր այդ գիրքը հանկարծ, որպես հայտնություն՝ որոշեցի ես, որ պետք է լինել, մի քիչ կոշտ, ըմբոստ: Այդքան էլ դյուրին չէր անցնելիք ճամփան՝ պիտի մռայլվես, բայց ժպիտ ես սիրում, պիտի կոշտ լինես, երբ ինքդ նուրբ ես, ըմբոստ պիտի լինես, երբ հոգիդ անդորրության մեջ նավարկել կուզեր: Ու ստեղծվեց մեկը՝ մյուսներից տարբեր, որ երբեմն դժգոհում, ըմբոստանում էր, մաքրագործված աշխարհ էր ուզում:

Եվ այս օրերին այդ կերպարի մեջ հաղթահարեցի ապրումներն իմ, բայց գիտեմ նաև, որ պատերազմը դեռ չի վերջացել:

Որքա՜ն եմ կարոտում այն մեկին, որ նուրբ էր, հանդարտ, մեղմություն կար դեմքին, այնտեղ խաղաղ էր աշխարհը, հոգին էլ խաղաղ էր, նա անչափելի մի աշխարհ էր սիրում, որտեղ ժպիտ կար, շռալ ծիծաղներ: Ու ես ուզում եմ վերջանա այս պատերազմը, որ անցնեմ իմ նոր կերպարին, այնտեղ սիրառատ ժպիտներ կան շատ, անթիվ երազներ, մեղմիվ հայացքներ, ու ես կարոտում եմ դրանց:

http://usarmenianews.com/am-n-3215.html

02.05.2016

«ԵՐԴՈՒՄ»

(Նոր տեսահոլովակ հրատարակվող Մարտակերտում)

Գիշերային անհանգիստ մտորումների մեջ եմ, այդ պահին ինձ ուղարկված տեսահոլովակը հրաշալի անակնկալ էր, որ ստացա մեր դպրոցի շրջանավարտ, ռեփեր Սպարտակ Հովսեփյանից: Որպես երգիչ՝ երաժշտության ասպարեզում նա հանդես է գալիս «B58» անունով: Ինչպես ինքն է համեստորեն ներկայացնում, այն իր հերթական նկարահանված գործն էր, որ ուղարկել և սպասում էր մանկավարժիս գնահատականին:

Տեսահոլովակը կոչվում էր «Երդում»: Այն նվիրված էր քառօրյա սարսափելի պատերազմի նորօրյա հերոսներին: Մամուլի տարբեր արձագանքների նայելով՝ նաև երգչի հետ ունեցած իմ երկխոսությամբ իմացա, որ երգը նվիրում է մեր այն քաջորդիներին, ովքեր այս օրերին էլ կանգնած են սահմանում և պահպանում են մեր խաղաղ անդորրը: Նրա խոսքերով մեր ազգը հայրենասեր է ծնվել, այդպես էլ մեծացել ու դաստիարակվել է, դրա վառ ապացույցը մեր նահատակների սխրանքներն են, որ այս օրերին ամրագրվեցին իրենց անօրինական հերոսությամբ:

Անսահման մեծ ցավով նայեցի նկարահանված իրական պատկերներին, պատերազմող Արցախն է այնտեղ, սահմանային իրադարձությունները, բայց նաև հպարտությամբ լսեցի այդ հրաշալի երգի տողերը, որ ստեղծվել է՝ պատերազմական տեսարանների որոշ դրվագներ ներկայացնելով: Որպես երիտասարդ երգչի նոր տեսահոլովակին՝ իմ կողմից տրված բարձր գնահատանքի արտահայտություն՝ հարմար գտա այն ուղարկել Լոս Անջելեսի հայկական լրատվական կայքին՝ այնտեղ տեղադրելու համար:

Հ.Գ. Ամիսներ անց Արցախի հանրային հեռուստատեսությամբ բարձրաձայնում էին այդ երգի լայն ընդունելության մասին, նաև իմացանք, որ շատ-շատերի կողմից սիրված այս երգը թարգմանվել է անգլերեն Անժելա Հովսեփյանի կողմից:

http://usarmenianews.com/am-n-3259.html

Տեսահոլովակ՝ *https://www.youtube.com/watch?v=EKJWCBh3XF0*

03.05.2016

ՄԵՐ ԽԱՂԱՂ ՕՐԵՐԻՆ ՎԱՐԴԵՐԻ ԺՊԻՏՆԵՐ ԿԱՅԻՆ, ԲԱՅՑ ՉԷԻՆՔ ՆԿԱՏՈՒՄ

Ուրիշ էր այս անգամ ապրած զգացողությունս սահմանամերձ իմ հրետակոծված բնակավայրում: Թաքցնելու բան չկա, բոլորս էլ գիտենք, որ անկանխատեսելի են մեր հակառակորդի սանձարձակությունները, առավելապես սահմանում, ուր կյանքի ու անմահության լեգենդներ են հյուսվում: Ամեն մի օրդ հրաշք է դառնում, որ այս անգամ էլ խաղաղ էր վերջալույսը ու սպասում ես մի նոր գիշերալույսի, որ անուրջների մեջ մի նոր երազ աշխարհ ստեղծես, որտեղ պատերազմ չկա, խաղաղ է կյանքն ու երանելի: Այդ երանությամբ էլ, երբ դիմավորում ես մի նոր լուսաբաց, հայացքդ հառում ես երկնքին, կապույտ ես փնտրում ու կապույտի մեջ էլ՝ լուսե անուրջներ:

Դռան զանգից վեր եմ թռչում, իսկ ինչո՞ւ, չէ որ դա ընդամենը մի սովորական զանգ էր, ինչպես հեռախոսի զանգը, բայց զարմանալի բան չկա, երբ հեռախոսի ձայնից էլ հանկարծակիի եմ գալիս: Արկերի այն ահռելի պայթյուններից հետո մի փոքրիկ ձայն, և հանկարծ վեր եմ թռչում, հոգիս տակնուվրա է լինում, սրտի անհագիստ տրոփյունով բացում եմ դուռը, մտովի խոսելով ինքս ինձ հետ՝ ինչ լավ է, որ այս խաղաղ անդորրության մեջ հիշել են ինձ…

Ես մոռացել էի, որ կյանքում այսպիսի բերկրանք կա… Վարդեր են, վարդի սիրուն բողբոջներ, ժպտերես նայում են ինձ, մեկ ուրիշ ժպիտ միախառնվել էր այդ վարդերի բուրավետ տեսքին: Նույնքան ժպտերես դիմացս կանգնած էր հարևանուհիս…Գիտեմ՝ կարոտն է նրան բերել այստեղ, այն մեծ կարոտը, որ այս հող ու ջրին սովոր մարդը ուրիշ տեղ չի կարող ապրել, ու նորից նայում եմ այն իրական հրաշքներին…

Ժպիտներով հարուստ բաց վարդագույն վարդեր՝ վարդագույն երազներով, այն մեկը մուգ կարմիր է, արյան գույն ունի, սպիտակ վարդի մեջ՝ ճերմակ երազներ՝ թև ու թևավոր, որ ինձ են նայում լուսե ժպիտով: Պատերազմի դաժան շունչ ու վարդերի ժպիտ, հրետակոծված բնակավայր ու կյանքի մի նոր երազանք, տարհանված բնակիչներ ու մի նոր կարոտ… Եվ նորից կարոտում եմ այն խաղաղ կյանքը, այնտեղ էլ վարդերի ժպիտներ կային շատ, բայց մենք չէինք նկատում:

http://www.usarmenianews.com/am-n-3279.html

11.05.2016

ԵՍ ԻՆՉ ԵՄ ՀԱՎԱՏՈՒՄ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ՀԱՅ ՁԻՆՎՈՐԻՆ

Սպասում ենք, երբեմն այդ սպասումը դառնում է տառապանք, երբեմն՝ փոքրիկ հույս, բայց սպասում ենք…Ո՞ւմ ենք սպասում, թե՞ ինչի, բայց սպասումը երբեմն դառնում է մարդկությանն ուղղված աղերսանք, երբեմն՝ աշխարհի տերերին ուղղված ընդվզում…

Այս տխուր «տոնահանդեսին» տեղյա՞կ է աշխարհը, որ հայը երբեմն ապրելու համար խաղաղ ապաստան է փնտրում, միայն թե ապրի…

Վերջին պահին տունուտեղ թողնող մարդու հայացքը փնտրում է ինչ-որ բան, որքա՜ն շատ բան կա վերցնելու, բայց ո՞ր մեկը վերցնես ու դատարկությանն ես հառում հայացքդ, շոշափում ես քեզ, դու կաս, կարող է հանկարծ հետո չլինես, ուրեմն փրկի՛ր քեզ, հոգիդ փրկի՛ր, որ ապրել է ուզում, որ կյանք է ուզում, խաղաղ մի կյանք, ու հեռվից երևացող լույսի շողը տանում է քեզ մի նոր ապաստան: Բայց մի նոր ընդվզում տանջում է քեզ, երանի նորից կյանքը խաղաղվի, ու նորից վերադառնանք…

Փնտրտուքների մեջ հայացքս օրեր առաջ հառեցի դեպի մոտակա վանքը, որ բարձունքին թառած՝ հսկում էր բոլորիս հանգիստը: Անձրևոտ եղանակ էր, բայց գնում ենք եկեղեցի, որ մեր աղոթքներն ուղղենք վերին Աստծուն, գուցե մի նոր լույս բացի այս տունուտեղ թողած «փախստականներիս» համար: 92-ին կարծես սազում էր այս բառը, երբ գործածում էին, նվաստացուցիչ մի անուն, որ փախել էինք մեր տներից ոչ մեր հոժար կամքով, ընդամենը փրկվելու համար, իսկ մենք ապրել էինք ուզում: Նույնիսկ օտար ափերում հանգրվան գտնելով՝ այնտեղ վաղուց ապրող մեր հայրենակիցներից մեկն ինձ ասաց. **«Փախստակա՞նն ուր, կարա՞գն ուր…»:**

Մնացի քարացած, կարծես չէի ուզում վերցնել վաճառողուհուց այն մի քանի գրամ կարագը, որ ուզում էի տանել երեխայիս համար, որպեսզի հիշեցնեի, որ այսպիսի սնունդ էլ կա աշխարհում, որի մասին երևի մոռացել էր…Այս նոր դարասկզբին մենք նորից մեր բնակավայրը թողեցինք, բայց այս անգամ մի նոր անուն ստացանք՝ տարհանվածները, վերջում պարզվեց պաշտոնական տարհանում չի եղել բնակավայրիս բնակիչների համար, ուղղակի նորից ապրելու մարմաջով տառապած՝

մի նոր ապաստան էինք փնտրում, որ արկերի հուժկու հարվածներից փրկվեինք…Այս օրերին մի նոր անուն էլ ավելացավ մեզ՝ նկուղաբնակները…Այն անդուր պատերի ներսում, խոնավության մեջ նորից փրկություն էինք փնտրում, նորից ուզում էինք ապրել: Հիմա էլ ուզում ենք ապրել, գոնե երբեմն լինի օրերով, մի քիչ մեր կարոտներն առնենք այս տաքուկ անկյուններից, որ հարազատ տուն է կոչվում…Ու այսպես անվերջ կկարոտենք մենք, ու այսպես անվերջ մեզ կնքված այս անուններով կսպասենք մենք, երբեմն երանի կտանք, որ փախստական դարձած՝ փրկվեցինք մենք, երբեմն տարհանված կլինենք, նորից կասենք՝ ինչքան լավ է, որ փրկվել ենք, իսկ երբ նկուղ կմտնենք, էլի կասենք, ինչքան լավ է, որ այս գորշ պատերը կան, գոնե այստեղ մի փոքրիկ հույս սփոփում է մեզ, որ կարող ենք փրկվել…Ու այսպես, տառապանքի դրոշմը դեմքներիս, կապրենք մենք, միայն թե փրկվենք:

Իսկ քաղաքակիրթ աշխարհը, որ շահարկում է խորը մարդասիրության ու ժողովրդավարացման արժեքները, շարունակում է մնալ անտարբեր: Միջազգային և ոչ մի կառույց ցայսօր չի դատապարտել ապրիլին սանձազերծած Ադրբեջանի ահաբեկչությունը: Ես հավատա՞մ աշխարհին: Ես ինքս ինձ եմ հավատում ու սահմանում կանգնած հայ զինվորին:

http://usarmenianews.com/am-n-3440.html

12.05.2016

ՈՒ ԱՅՍՊԵՍ ԱՆՎԵՐՋ ԿԺՊՏԱՆՔ ՄԻՄՅԱՆՑ, ՄԻԱՅՆ ԹԵ ԼԻՆԵՆՔ

Այսօր աշակերտ չունեինք դպրոցում, բայց հիշում եմ այն վերջին օրը, երբ դպրոցի 7-րդ դասարանում էի: Ընդամենը երկու աշակերտուհի, ովքեր ուշադիր ինձ էին նայում: Համեստության, գուցե նաև ամոթխածության քողով պատված նրանց դեմքին վախվորած ժպիտներ տեսա, բայց միշտ էլ դասարանի երկու տասնյակ աշակերտների մեջ նրանք շատ լուռ, մի քիչ ինքնամփոփ կերպարով էին երևում: Հարազատ բնակավայրիս անհանգիստ ապրումներն էի ուզում փնտրել նրանց դեմքերին, կարծես չէի տեսնում: Մեր լռությունը խախտվեց հանկարծ նրանցից մեկի ժպտերես հարցումով, թե ինչպես եմ ինձ զգում այն փոթորկալից օրերից հետո: Չնայած զարմանալի էր այդ ամաչկոտ աղջկա անմիջական հարցը, կարծես ուզում էի փախցնել հայացքս, որ չնկատեին դեմքիս հայտնված անհանգստության ու սարսափի դրոշմը, որ պիտի հակադարձվեր նրանց լուսավոր ժպիտներին: Հանկարծ չլսելու եմ տալիս հարցը, ու ես եմ ուզում իմանալ, թե ինչպես են իրենք: Եվ, ո՞վ զարմանք, պարզվում է՝ լավ են…

Հետաքրքիր է, երբ լավ ասելու բան չկա, այս երեխաները, տեսնես, ինչո՞վ են լավ զգում իրենց: «**Մենք մոտակա գյուղ էինք գնացել, այնտեղ մի քիչ ապահով էր, բայց հաջորդ օրը հայրս ինձ բերեց դպրոց, առաջին դասաժամից ուշացել էի**»,- ասում է մեկը, մյուսն ավելացնում է. «**Մենք այդ օրերին այստեղ էինք, թաղամասի մի քանի երեխաներ, տներից դուրս եկած, մտել էինք հարևանի մեքենայի մեջ, թվում էր այդ մեքենան պիտի մեզ փրկեր քաղաքի վրա թափվող հրետանու արկերից**»:

Հերթը հասնում է ինձ, թե որտեղ էի ես, ու նորից դեմքիս հայտնված մռայլությունը փորձում եմ քողարկել նրանցից. «**Ես այդ օրն իմ բնակարանում էի, թոռնիկս քնած էր այդ ժամանակ, իսկ ես հսկում էի նրա գիշերային քունը և կարծես փորձում էի վանել նրանից արկերի շառաչը**»:

Նրանք զարմացած ինձ են նայում, ու ես ուզում եմ գտնել այդ «շառաչ» բառի հետ գործածվող նոր բառեր, որ կարող է դա լիներ ծովի շառաչ, որին ունկնդրել կարելի էր հիացմունքով, գուցե ջրվեժի՞ շառաչ, որին նույն հիացական հայացքով կարող էիր նայել կամ անձրևի՞ շա-

ռաչ, երբ գարնանային վախվորած արևի շողերի ներքո ինքնաբուխ թափվում է:

«Արկերի շառաչ»,- կրկնում եմ նորից, ինչո՞ւ եմ մեղմացրել: Եվ ավելացնում եմ նոր բառեր՝ արկերի հուժկու շառաչ կամ գուցե արկերի սարսափազդո՞ւ պայթյուններ, որ բթացնում են քեզ, մոռանալ տալիս անելիքդ, այդ պահին մոռանում ես նույնիսկ քեզ, ու հանկարծ դեմքիս մի աղավաղված ժպիտ է խաղում, կարծես ասում եմ՝ ինչ լավ է, որ դուք լավ եք, նույնիսկ ժպտում եք...

Ու ես նրանց հետ ժպտում եմ, հետո մտորում՝ այսպես անվերջ կժպտանք միմյանց, միայն թե լինենք, ու երբ հարցնեն, թե ինչպե՞ս ենք մենք, նորից կասենք՝ մենք այնքան ենք լավ, որ դեռ ապրում ենք:

http://www.usarmenianews.com/am-n-3475.html

13.05.2016

ԳԱՂԱՓԱՐԻ ԶԻՆՎՈՐՆ ԱՆՊԱՐՏԵԼԻ Է

Դպրոց հաճախող հատուկենտ աշակերտների մեջ փնտրում եմ նրան, բայց չեմ գտնում: Կարոտով ու անհանգիստ մտորումներով նորից հայացքս սահում է օրեր առաջ գրած նրա շարադրության տողերով: Ընթերցում եմ իմ աշակերտուհու մտքերը և համոզվում, որ հայրենիքը ամենուր ընկալվում է որպես սուրբ մասունք, հայկական ոգին է թևածում այստեղ, այս հող ու ջրին կառչած սերունդն է, որ պիտի փոխի այս աշխարհը և սերունդներին փոխանցի մեր նախնիներից մեզ հասած հայրենյաց սիրո կախարդական բանալին:

12-րդ դասարանի աշակերտուհի Շուշան Հարությունյանի՝ գաղափարի զինվորի անպարտելիության մասին գրած շարադրությունը ԼՂ հանրապետական փուլում 1-ին տեղ էր զբաղեցրել, որը գրել էր մինչ Քառօրյա սարսափելի պատերազմը, երբ դեռ մեր բնակավայրը չէր հրետակոծվում, բայց ապրում էինք սահմանից եկող կրակոցների արձագանքների տակ և տխուր լուրերով: Այդ օրը զինվոր տղաների կորուստ ունեինք, գաղափարի զինվորներ էին զոհվել, չնայած նրանց բոլորի համար առ Աստված ուղղված աղոթքների մրմունջները երբևէ չէին պակասում: Համոզված էինք նաև, ու այդպես էլ կա, որ յուրաքանչյուր զինվոր հավատում է ապրելու և հարատևելու արվեստին, բայց երբեմն մահը չի վախենում և անողոքաբար հանկարծակի մոտենում է նրանց ու անմահացնում հավերժության ճանապարհին:

«Քո հայացքում ես գտա իմ հերոսին՝ իմ իրական ու ժամանակակից հերոսին: Դո՛ւ, զինվո՛ր, կանգնած ես սահմանին ու հսկում ես խաղաղ անդորրը մեր հայրենիքի: Գիտակցում ես, այո՛, գիտես, որ մահը կարող է ամեն պահի քեզ այցի գալ՝ խլելով կանաչ կյանքիդ վառվռուն երազները: Բայց դու չես երերում, չես ընկճվում, գիտես, որ քո զգուշությունից է կախված ընկերներիդ կյանքը, քո հայրենիքի անվտանգությունը… Ցուրտը, մթությունն ու գայլերի ոռնոցն են տիրում չորս դին: Աստղերն են իրենց կայծկլտացող լույսով ընկերանում հոգուդ նվագին, և դու կանգնած ես: Դու կանգնած ես աներեր, անվախ՝ զենքդ սեղմած, հայացքդ՝ հստակ ու զգուշավոր:

Դու հիշում ես ձեր տունը, մայրիկիդ, քո փափուկ, տաք ու ճերմակ անկողինը, քո օջախի համն ու հոտը, բայց քաղցր կարոտն անգամ չի խանգարում քո մտքին: Դու իմ ժամանակի Վարդանն ես, Անդրանիկը, Նժդեհը, Մոնթեն և այսպես շարունակ նվիրյալներին կարող եմ գտնել քո կերպարում, քո հայացքում, քո մտքի ու քաջության արմատներում: Դու ընդամենը տասնութը բոլորած մի պատանի ես, բայց հավատում եմ, որ դու հոգով մի դար ես, մի պատմություն, քանզի կյանքի ու մահվան մեջտեղում կանգնողը չի կարող գաղափարի զինվոր չլինել:

Ես քո մասին չեմ ընթերցում գրքերից, քեզ չեմ դիտում ֆիլմերում, այլ քեզ զգում եմ ինձանից ընդամենը մի քանի կիլոմետր այն կողմ: Ես իմ առօրյան կազմակերպում եմ քո շնորհիվ, մենք բոլորս կանք ու ապրում ենք խաղաղ ու ապահով քո շնորհիվ:

Ինչպե՞ս դիմեմ քեզ, ի՞նչ անուն տամ, ինքս էլ չգիտեմ: Ինչ անուն էլ տամ, գիտեմ, որ դու հայ զինվոր ես, հայ մարտիկ, հայ նվիրյալ: Ու չնայած կարող են ոմանք ինձ հետ չհամաձայնել, բայց ինքս համոզված եմ, որ դու այդտեղ ես ոչ թե պարտադիր ծառայության հարկադրանքով, այլ՝ հոգու պահանջով ու համոզմունքով:

Երբ փոքր էի, ու հայրս տուն էր գալիս ուշ–ուշ և միշտ զինվորական համազգեստով, ես մտածում էի, թե հայրերը միայն այդպիսի շորեր են կրում, դա հայրերի «շոր» է: Հագնում էի նրա մեծ մուշտակը ու դնում գլխարկը: Երբ հետագայում հասկացա ամեն ինչ, զինվորական համազգեստը իմաստավորվեց կրկնակի:

Ինքս էլ ուզում եմ աջակից լինել քեզ և երազում եմ բժշկուհի դառնալ: Ու պատահական չեմ ընտրել մասնագիտությունս, քանզի ուզում եմ վտանգի պահին սպիտակի հետ զինվորական համազգեստ կրել, իմ մանկությունից հասած հուշերին շունչ տալ ու իրականություն դարձնել: Թող թեկուզ լինեմ վիրավոր զինվորի կողքին ու փրկեմ նրա կյանքը: Այո՛, հենց այսպես եմ ժառանգել գաղափարի այն սուրբ մասունքը, որ թողել են նախնիներս ինձ: Դու էլ ես ժառանգել, բոլո՜ր – բոլորը, ովքեր չեն վարանել այսօր, վաղն էլ չեն վարանելու, պատերազմելով փրկելու են հայի պատիվը, տունն ու օրորոցը, պապերի գերեզմաններն ու հայրենի եզերքը:

Հավատա՛, ես քո կողքին եմ, մենք բոլորս ենք իրար թև ու թիկունք, քանզի սերված ենք մի սերնդից, ով կարողացավ «ոչ» ասել բռնատիրությանը, ով փայլուն հաղթանակ տարավ իր ոգեղեն ուժով: Հայկյան արյունը կրողներն ենք մենք՝ ես ու դու, մենք՝ բոլորս, ում համար հայրենիքի պաշտպանությունն ու փրկությունը վեր է բոլոր գաղափարներից, ում համար հայրենասիրությունը կենսակերպ է, ապրելու և հա-

րատևելու արվեստ: Դու լավ գիտես, որ հայրենիքը մեզ ուղեկցող ջերմություն է, նա մեր անցյալն է, ներկան ու ապագան: Նա մեր ուժն է և թուլությունը, նա մի կտորն է մեր բաբախող սրտերի, նա գրողի գրիչն է և դարբնի մուրճը, նա քո զենքն է ու մայրերի աղոթքը: Հայրենիքը մեր արյան մեջ է, ցանկանալ ապրել հայրենիքից դուրս, դա նույնն է, ինչ թռչել ցանկանալ՝ առանց թևերի, քայլել՝ առանց ոտքերի, գրկել՝ առանց ձեռքերի: Հեռանալ հայրենիքից, նշանակում է՝ հավերժ թողնել մեր կեսը հայրենիքում: Իսկ մեր հայրենական աշխարհում միավորված է ամբողջ հայ ազգը, Հայաստանի Արևմտյանն ու Արևելյանը: Դա ծովից ծով Հայաստանն է՝ Կասպից ծովից մինչև Միջերկրական: Դա հզոր և անկոտրում Հայաստանն է: Իսկ իմ երազած աշխարհն Արցախն է՝ ազատ և ճանաչված, իմ Մարտակերտն է՝ ծաղկունքով լցված: Իմ քաղաքը, որտեղ ավերակներ ու փլատակներ այլևս չեն լինի, որտեղ թուրքի ձեռագիրը վաղուց ջնջված կլինի մեր տներից, անգամ մեր սուրբ քարերից: Ես ամբողջական եմ այստեղ, էլ ի՞նչ ուրիշ երկիր, այստեղ ամփոփված են պապերիս շիրիմները, շուրջս լցված է տատիս թխած թոնրահացի բուրմունքով: Այստեղ իմ մանկության նախշուն օրերի շղթան է՝ ծնողներիս հոգատարության բույրով լցված: Ո՞վ եմ ես՝ առանց իմ անցյալի, առանց իմ օջախի, առանց հայրենիքի, առանց քեզ, իմ հա՛յ զինվոր: Որքան էլ երազանքներս ինձ հեռու տանեն, նորից կգամ այստեղ ու կլինեմ քո կողքին, մի փոքրիկ քար էլ ես կդնեմ շենացման պատին չքնաղ հայրենիքիս, տուն ու օջախիս, մայր Հայաստանիս...

Այո՛, արժեքներ կան, որոնք անգին են՝ մեր լեզուն ու հավատքը, մեր հողն ու ջուրը, մեր Սիսն ու Մասիսը, Արփանն ու Սևանը, մեր գողացված Վանը, Կարսն ու Սասունը, դու ինձանից քաջ գիտես, զինվո՛ր, ուստի մահվան աչքերին ես նայում անվախ ու անթարթ: Իմ զինվո՛ր, իմ փառավո՛ր զինվոր, դու եկել ես մեր անցյալից, ուստի փակ աչքերով անգամ կարող ես տեսնել դեպի գալիքը տանող մեր միասնական ճամփան՝ ծով հայրենիքը վերագտնելու ճամփան: Մեր սերնդին շատ պատգամներ են հղված, դրանք վերծանելու և կյանք տալու համար պետք է ամուր կառչել սրբագործված ու ազգապահպան խրատներից՝ համոզված, որ յուրաքանչուրս մեր հոգու հրամանն ունենք, այն լսում ենք յուրովի, բայց հավատում նույն հնչողությամբ:

Չվախենաս, զինվո՛ր, իմ աղոթքներով զորավիգ եմ քեզ ու միշտ քո կողքին: Թո՛ղ մահը վախենա ու չմոտենա քեզ»:

http://www.usarmenianews.com/am-n-3514.html
«Ջրաբերդ» 16-31 դեկտեմբեր, 2015թ.

15.05.2016

ՇՏԱՊՈՒՄ Է ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՀԱԳՆԵԼ

Պատերազմական օրերի բնակավայրիս հրետակոծության դադարից հետո դպրոց էի հաճախում մտքերով ծանրաբեռնված: Խաղաղ օրերի աղմուկ-աղաղակով լեցուն դպրոցի բակում քար լռություն էր, բայց ո՞վ էր տեսել դպրոց, որ զանգ ունի, իսկ զանգը լռել էր այդ օրերին ու այդպես լռված և մի կողմ քաշված՝ էլ ձայն չէր հանում: Զանգը լռել էր, իսկ ես չեմ լռում, ուզում եմ այսպես լռված զանգերը հավերժ զրնգան, զանգի ղողանջը հասնի ամենուր, ու նորից աղմկոտ մի նոր կյանք լինի:

Եվ լռված զանգը հանկարծ հնչեց: 10-րդ դասարանում եմ: Միայն մեկ աշակերտ երկու տասնյակից: Հարությունյան Հարություն, բարձրահասակ, գեղեցկադեմ մի պատանի…Ապրիլյան տառապալից օրերից հետո նրան չէի տեսել: Անակնկալ հանդիպումը մի նոր զգացողություն է բերում իր հետ: Մոռանում եմ մի պահ տարանջատող սահմանը, մեղմորեն, անսահման սիրով բացում եմ խաղաքարտերը ապրած սարսափելի օրերի, ապա ուշադիր լսում եմ նրան. «**Միշտ էլ տան մեծերն ինձ պատմում էին Արցախյան պատերազմի մասին, իսկ ես չլսելու էի տալիս կամ արհամարհում էի նրանց ասածները՝ մտածելով, որ վախենալու բան չկա: Բայց այդ օրերին սեփական աչքերովս տեսա, որ դա ամենասարսափելի իրավիճակն է մարդու կյանքում: Ինչո՞ւ եմ այսքանն ասում, որովհետև ես տեսա պատերազմը, այն ինձ շատ մոտիկ էր՝ կողքիս…»:**

Նա հուզմունքով պատմում էր աչքով տեսածը, բայց երբեմն կրկնում. «**Ես Աստծո պահածն եմ**»:

Հոգիս տակնուվրա է լինում, բայց արտաքուստ հանգիստ եմ երևում ու նրան առաջարկում եմ. «**Գրի՛ր, գրի՛ր ապրածդ սարսափի մասին, գրի՛ր պատերազմի մասին, որ կողքիդ էր, քո ցավոտ հոգուց գրի՛ր, որ փրկվել ես, գրի՛ր, որ չես ուզում էլ պատերազմ լինի, այն չարիք է, որ մարդկանց կյանքեր է խլում**»:

Անհանգիստ մտորումների մեջ եմ, իսկ նրա ձեռքի գրիչը շարժվում է տետրի տողերով: Շուտով այն հանձնում է ինձ, հայացքս լուռ հառում եմ տողերին. «**Իմ կարծիքով, ես Աստծո պահածն եմ, որովհետև երբ քեզանից տասը մետր, գուցե նաև քիչ հեռավորության վրա պայթում է երեք արկ, և դու մնում ես կենդանի, ուրեմն Աստծո մատը խառն է այստեղ: Աչքիս առջև տուն ավերվեց, մի տուն, որտեղ այդ պահին կարող էի լինել ես կամ մեկ ուրիշը: Այդ պահին ինձ թվաց աշխարհը փլվեց, կարծես ամենուր տիրում էր քաոս, հիշում եմ, որ մայրս գրկել էր ինձ, նա դողում էր ամբողջ մարմնով և արտասվում: Հայրս մեզ տեղափոխեց մոտակա գյուղը, բայց այնտեղ երկար չկարողացա մնալ: Նորից վերադարձա հարազատ Մարտակերտը և որոշեցի ինչ-որ բանով օգտակար լինել: Իսկ դրա համար ամենից առաջ հարկավոր էր հագնել զինվորական համազգեստ...Եվ շուտով հայրիկիս համազգեստը իմ հագին էր**»:

Նա խռովված հոգով գրածն ինձ հանձնեց, այդ պահին դասարան մտած ուսուցչուհիներից մեկը, ի զարմանք ինձ, ասաց, որ հիացած է. մեր աշակերտը բավականին օգնել է զինվորականներին: Ապշած նայում եմ նրան, ապա փորձում իր շարադրանքում տողեր գտնել այդ մասին, բայց չեմ տեսնում: Նորից առաջարկում եմ, որ ավելացնի տողեր, բայց նաև զարմացած եմ, այս ի՞նչ համեստություն է, որ նա չի ուզում այդ մասին գրել: Ռոպեներ անց ընթերցում եմ ավելացված տողերը. «**Քառօրյա պատերազմի ծանր օրերին հայրս զենք –զինամթերքի պահեստից կամավորականներին զենքով ապահովում էր, ես էլ, հակառակ հորս կամքին, զինվորական համազգեստով ներկայացա այնտեղ և որոշեցի օգտակար լինել: Այսպես մի քանի օրով դարձա զինվոր: Ովքեր զորամասում ինձ չէին ճանաչում, հրամաններ էին տալիս, իսկ ես դրանք կատարում էի մեծ սիրով**»:

Հպարտությամբ նայում եմ նրան, հանկարծ անկեղծ սիրով ժպտում եմ, բայց հիշում նաև ամիսներ առաջ նրա գրած շարադրության տողերը. «**Երբ անցած օրերին թեժ մարտեր էին ընթանում սահմանի մոտ, ես**

արդեն, կարելի է ասել, պատրաստվում էի մարտի գնալ: Բայց հիմա էլ, երբ խաղաղ է մի քիչ, մայրս ամեն գիշեր նստում է պատուհանի մոտ ու անկախ նրանից՝ կրակոց կա թե ոչ, սկսում է արտասվել: Երևի նրա համար, որ ինքը տեսել է այդ սարսափելի պատերազմը և չի ուզում, որ մենք էլ դրա միջով անցնենք»:

Թախիծը ծորում է հոգուցս, որ նոր սերունդն էլ տեսավ այս սարսափելի պատերազմը, իսկ նա մեղմիվ ժպտալով ավելացնում է. «**Ջինվորական կյանքն ինձ դուր եկավ, հիմա մտածում եմ, որ դպրոցն ավարտելուց հետո կյանքս բանակի հետ կապեմ»:**

http://www.usarmenianews.com/am-n-3550.html

16.05.2016

ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆ Է ԵՐԳՈՒՄ. «ԿԱՆԳ ԱՌ, ՊԱՏԵՐԱԶՄ»

Մարտակերտում մի նոր երգի ծնունդ է, որ «ո՛չ» է ասում պատերազմին:

Խաղաղ կյանքը խաթարվել էր մեր հրետակոծվող բնակավայրում: Լռել էր դպրոցի զանգը, մեր աշակերտներն էլ հայտնվել էին տարբեր դպրոցներում:

Օրեր առաջ Գանձասարի վանական համալիրում եմ, որը գտնվում է մեր շրջանի Վանք գյուղի մոտակայքում: Այցելեցի այդ գյուղի դպրոցը՝ առ Աստված ուղղված աղոթքների մրմունջները հոգումս: Դպրոցը, որ կառուցված էր բարերար, այս օրերին ՌԴ-ում ազատազրկված Լևոն Հայրապետյանի ֆինանսական միջոցներով, հիացմունքի էր արժանի: Դպրոցի բակում հեռվից երևացող աշակերտների մեջ ծանոթ դեմքեր էի փնտրում: Ինձ մոտեցողը մեր դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Սերգեյ Զաքարյանն էր, ով միշտ էլ փայլել է իր երգելու տաղանդով: Մեր մտերմիկ զրույցի արդյունքում իմացա, որ Ստեփանակերտում մի նոր տեսահոլովակ է նկարահանվում նորօրյա սարսափելի պատերազմի մասին: Վերնագիրն իսկ՝ **«Կա՛նգ առ, պատերա՛զմ»,** ամեն ինչ ասում էր, բայց նաև հպարտացա, որ այս պատանին իր երգի հմայիչ ելևէջներով փորձում է իր սերնդակիցների խոսքն ուղղել ամբողջ աշխարհին:

Շուտով դպրոցի տնօրենի հետ մտնում եմ տարբեր դասարաններ: Բոլոր հարմարավետ պայմանները կան, առավելապես դպրոցի դահլիճը, չնայած հիացմունք պատճառեց ինձ, բայց մտովի պատերազմին «ո՛չ» ասող իմ աշակերտի հետ էի, ու մի պահ ընդհատում եմ տնօրենին և խոսում մեր տաղանդաշատ աշակերտի մասին, ով արդեն մի քանի երգի տեսահոլովակներ ունի:

Համեստ ու ազնիվ մի անձնավորություն է նա, ով այս օրերին ինձ ուղարկեց իր նոր նկարահանված երգը: Հարազատության ինչպիսի՜ զգացում...Լսում եմ երգը, ոգևորիչ է այն և հուզումնառատ: Շնորհավորում եմ, բայց ցավում, որ նոր սերունդն է «աղաղակում» խաղաղության համար, որ այս օրերին դարձել է Արցախում ապրելու միակ երաշխավորը: Դաժան պատերազմ, որ խոցել է մեր սիրտը, չի թողնում ապրենք, թերևս ամբողջ աշխարհի սրտի խոսքն է սա՝ «Կա՛նգ առ, պատերա՛զմ», մենք խաղաղություն ենք ուզում:

http://www.usarmenianews.com/am-n-3567.html

18.05.2016

ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԵ՛Ք, ԱՐԿԵՐ ՉԵՆ ՊԱՅԹԻ ԵՐԿՆՔՈՒՄ ԼԱՋՈՒՐ

12-րդ դասարանի աշակերտուհի Շուշան Հարությունյանի մայրիկն ինձ մի հիանալի անակնկալ է մատուցում: Պարզվում է՝ Մարտակերտի հրետակոծության օրերին, անկախ նրանից, որ մեր դպրոցի զանգը լռել էր, բնակիչներն էլ տարհանվել և ապաստան էին գտել տարբեր տեղերում, իմ աշակերտուհին այս օրերին շարադրել էր իր մտքերը և մասնակցել Մայիսյան եռատոնին նվիրված շարադրությունների մրցույթին:

Կարոտի ցավալի զգացողություն կա այստեղ, հարազատ բնակավայրի հանդեպ անսահման սեր, որ նորից մարդուն բերում է իր հարազատ ծննդավայրը, առանց որի անզոր է ապրել մեկ ուրիշ եզերքում:

ՆՈՐԻՑ ՔԵԶ ՀԵՏ ԵՄ

Նորից քեզ հետ եմ, նորից՝ քո գրկում, իմ սե՛ր, իմ կարո՛տ, իմ տո՛ւն Մարտակերտ: Քեզ գուրգուրում եմ, մանկան պես սիրում, քեզ բարուրում եմ, որ տեղավորեմ սրտիս մեջ թաքուն, իմ ե՛րգ, իմ տա՛ղ, իմ մանկությա՛ն օրրան: Որքա՜ն եմ ծարավել ես քո ջերմ սիրուն, որ անվերջ քայլում եմ, բայց էլ չեմ հոգնում, որ ամբողջովին քեզ նորից տեսնեմ, անհագ կարոտիս ծարավը մարեմ: Դու դեռ չես հասցրել թոթափել հոգսերը նախորդ պատերազմի, երբ դուռդ փորձեց ջարդել դավադիր թշնամին: Քո ավերված ու քանդված պատերի միջից դեռ հոտն էր փչում լքված տների, որ ավելի քան քսան տարի հույսով սպասում էին իրենց տերերին: Տերեր, որ ստիպված գաղթական դարձան, օտար ափերում հանգրվան գտան, բայց տունը մնաց անդավաճան սպասող նրանց: Իսկ ես ուզում էի, որ ամեն տուն տանիք ունենար, որ ամեն տնից ճմռանը ծուխ ելներ, որ ամեն տան մեջ գիշերը չխավարեր, այլ լույսը վառվեր: Ես ուզում էի քեզ ամբողջությամբ շքեղացած տեսնել, ուզում էի, և դու արհամարհում էիր անցյալի դառնաղի հուշերը ու կամաց-կամաց նորովի զգեստավորվում, շենանում: Ես երազում էի քո նոր օրվա ու պայծառ գալիքի մասին, իսկ թշնամին ոտնձգեց՝ կոտրելու իմ և քո երազանքները:

Միանգամից կյանքիս հունը փոխվեց՝ մինչ ապրիլի 2-ը և հետո…. Մի

քանի վայրկյանում արկերի հռնդյունի ու մորս փշաքաղված դեմքի արտահայտությունից զգացի անհայրենիք մնալու ամենասարսափելի վտանգը… Իմ հայրենի՛ք, իմ սե՛ր, իմ օջա՛խ, քո քաղցրությունը ես ամբողջությամբ ըմբոշխնեցի մի քանի վայրկյանում, ինչքա՞ն գեղեցիկ ես դու՝ անգամ ավերակների միջից, ինչքան հյուրընկալ, ինչքան հպարտ ու վեհ: Քեզանից հեռացած ու կտրված՝ ես խելագարի էի նման: Իրար հաջորդող, հաճախ իրարամերժ լուրերն ու շարունակ լսվող պայթյունները խառնվել էին իրար՝ իրական ու անիրական եզրույթներից հանելով իմ գիտակցական ու զգայական ներաշխարհը: Ես ինձ ոչինչ էի զգում քեզանից հեռու ու չէի ուզում պաշտպանվել, բայց ես ունակ եմ արդեն պաշտպանելու, պատրաստ եմ լինելու քո սահմանը հսկող զինվորի կողքին, ինքս զինվորագրվելու: Այո՛, ի՛մ հայի, ի՛մ հարազատի, ի՛մ զինվորի կողքին, որ թքում է թշնամու ճակատին իր անվեհերությամբ, որ վեհանձնությամբ ավելի է արժևորում իր սուրբ գործը: Նա չի վախենում, քանզի պաշտպանում է քեզ, ինձ, բոլորիս...

Ընդամենը օրեր առաջ թշնամու ահռելի հրետակոծության հետքերն արդեն վերացվել են քո դիմանկարից, դու նորից վերազգեստավորվել ես, նոր շունչ ստացել, չնայած, գիտեմ՝ սգավոր է սիրտդ: Այնտեղ դու անմեղ զոհերի անուններն ես փայփայում, նրանց, ովքեր իրենց մատաղ կյանքը տվեցին, որ կանգուն մնաս դու, իսկ ես վերադառնամ նորից: Քո երկնակամարում փորձում եմ գտնել նրանց հայացքները, որ վերջին նկարից հիշողություն դարձան, որ անմար թողեցին մեր սրտերում սոսկ իրենց անուն-ազգանունը:

Այո՛, իմ սգավո՛ր Մարտակերտ, հուշերը սրտումդ ամփոփած, եռատոնին ես սպասել: Տոներ, որոնցով «ո՛չ» ես ասել ստրկամտությանն ու խավարին, մահին, անհայրենիք մնալու գաղափարին, ու կաս այսօր: Ո՞վ է թշնամին, որ կարողանա ստվերել քո հաղթանակները, ընդամենը քոչվորական ցեղերի մնացորդ, ազգային դիմանկարից զուրկ, կացնի ու սվինների գերի՝ առանց անցյալի ու պատմության: Թուրքն ու թրքանման իր եղբայրը, որ չարությունից մոլեգնած, ամեն պահի քնած, անպաշտպան ու անօգնական «որս» են ման գալիս… Քո երկնակամարն անմահացած արծիվ-հերոսներն են հսկում, քո սահմանն՝ անվեհեր քաջերը, էլ ի՞նչ ես խորհում: Ուզում եմ խոստանաս, որ քառատոն պիտի միասին տոնենք, որ պարտքը չենք թողնի այլևս վաղվան, որ թշնամու ծնկաչոք աղերսանքներին էլ չենք հավատա, որ էլ սահմանում զինվոր չի զոհվի: Ուզում եմ ասես՝ տուն վերադարձե՛ք, արկեր չեն պայթի երկնքում լազուր, որ քո սահմանն անառիկ է միշտ, անկախ ու ազա՛տ հայրենիք իմ:

http://www.usarmenianews.com/am-n-3576. html
http://hayernaysor.am

20.05.2016

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒՀՈՒ ՏԱՐԵԴԱՐՁ, ՈՐ ԻՄԱՍՏԱՎՈՐՎԵԼ, ԴԱՐՁԵԼ ԷՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Հաղորդաշար, որն Արցախի պատերազմական օրերի վերքերի լուսաբանումն է, որ ուղիղ եթերով հեռարձակվել է Լոս Անջելեսից: Հոգիդ փառավորվում է, երբ մեր փոքրիկ լեռնաշխարհի սարսափելի օրերին հայությունը համախմբվել էր մի գաղափարի շուրջ: Այստեղ հայրենի եզերքի կարոտով ապրող բանաստեղծուհու ռուսախոս գրիչն է թևածում, մի մարդասեր անձնավորություն, ում խոսքում հարազատ հայերենի հնչողությունն է:

Բանաստեղծուհի Նելլի Ավակովա Գրիգորյան, Լևոն Ադյանի ստեղծագործությունների ռուսերեն թարգմանչուհի, տարագիր հայուհի, ով փրկվել էր Բաքվի ոճրագործությունից ու տարիներ առաջ բնակություն հաստատել հեռավոր Լոս Անջելեսում, ում ծննդյան տարեդարձն էր այդ օրը՝ բոլորիս շնորհավորական բազմաթիվ բարեմաղթանքներով…

Անհատականություն, ով այդ հիշարժան օրն այս հաղորդաշարում իր շուրջը համախմբեց հրաշալի մարդկանց՝ իրենց խոսքով, արտահայտած կարծիքներով, բազում մտահոգություններով…Եվ այդ ամենի անունը Արցախ էր, հայրենի եզերք, ուր կարոտ կար, սեր ու անանցանելի սպիացած ու նորացված վերքեր:

Այստեղ ռուսագիր բանաստեղծուհու մտորումներին զուգահեռվում է հայրենիքին զինվորագրված Ազգային հերոս նվիրյալի խոսքը…Բոլորիս կողմից ճանաչված, անցած դարավերջի գեհենից փրկված արձակագիր գրողի խոսքում «Հեռացող եզերքին» զուգահեռված դիվանագիտական ասելիքի խորություն կա, առաջնագծում զոհված կամավորական առաջամարտիկի որդեկորույս հոր կսկիծ ու հպարտություն, լրագրության մեջ իր ճշմարտացի ասելիքով, նկարահանումներով

հայտնի անհատականություն, հոգեբանի ու քաղաքագետի արտահայտած մտքեր, դրանց զուգահեռվում է Արցախում ապրող քաղաքագետի իմաստալից վերլուծականը, երևում է օտար ափերում ապրող հայկական համայնքի և հայրենիքի հոգսերով մտահոգ մարդը…

Այստեղ մարդասեր բանաստեղծուհուն իր ծննդյան օրը ուղիղ եթերով շրջապատել էին տարբեր եզերքներում ապրող մարդիկ, ովքեր մտահոգված էին Արցախի մի բուռ ժողովրդի ճակատագրով: Սա անսովոր տարեդարձ է, որտեղ մի ամբողջ աստղաբույլ աշխարհին ի ցույց է դրել հայի մարդասիրությունն ու հավերժական ոգին՝ ի հակադրություն աղրբեջանական կեղծ ու ստահոդ գաղափարախոսությանը:

Անվերջ կարելի է թվարկել արցախյան մեր սարսափելի օրերի արձագանքն արտահայտող այս հաղորդաշարի մասին, որի առանցքում սահմանային առաջնագծում հերոսացած նորօրյա հայ զինվորն է՝ իր անմահ սխրանքներով: Այն պետք է ամբողջանար հաղորդավարուհու անկաշկանդ խոսքով, որի կողքին իր բարեգործությամբ պետք է վեհանար անհատականություն, ում շնորհիվ հեռարձակվել էր այս հաղորդումը:

Անսահման կարոտ կա այստեղ, որ տարագիր հայուհու տարեդարձն իմաստավորվել ու դարձել էր հայրենիք:

http://usarmenianews.com/am-n-3625.html
Հաղորդաշար՝ https://www.youtube.com/watch?v=PSVaYqMXs9g

20.05.2016

ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Երբեմն ամաչում եմ, բայց մի ներքին մղում ինձ ստիպում է սիրել զենքը»:

Տողը կարդում եմ, ապա նայում նրան… Փոքրահասակ է նա, նուրբ դիմագծերով, երբեմն մտքերի մեջ խորասուզված, երբեմն ժպտացող դեմքով սիրունատես մի աղջիկ: Միտքը լրացնող տողերի հաջորդականության մեջ ես նորից նրան եմ տեսնում. «**Ես զենքը համարում եմ ինքնապաշտպանության միջոց: Տարիներ շարունակ միայն զինվորական համազգեստով եմ տեսել հորս, ամիսներ հետո եղբայրս կզինվորագրվի…Այս գիտակցումը սրտումս բացված վախի ու անհանգստության խորշերը հպարտությամբ է լցնում: Ուզում եմ վարակել բոլորին այն գիտակցությամբ, որ աշխարհի ամենակարևոր և ամենաթանկ վայրը մեզ համար այն խրամատն է, որը պաշտպանում է աշխարհի ամենախիզախ հայ զինվորը»:**

Տողերը վազում են աչքերիս առջևով, ես այնտեղ տեսնում եմ նաև մանկավարժիս, մեր շրջապատում ապրող բոլոր մարդկանց՝ ամեն տարիքի՝ մեծ ու փոքր, որ «**հրետակոծության արձագանքներից անքուն գիշերներ անցկացնելուց հետո առավոտյան հանգիստ ընթացքով մանկապարտեզ, դպրոց ու աշխատանքի են շտապում: Մարդիկ, ովքեր իրենց դժգոհությունը հայրենիքի հանդեպ ատելության չեն վերածում, այլ հայրենիքն ընկալում են որպես արյամբ ներծծված մի սրբազան տարածք»:**

Հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված եմ տեսնում իմ աշակերտուհուն, ում համար արդեն կարևոր չէ, թե մեր տուն-բնակատեղին Հայաստանի ու Արցախի որ կետում է գտնվում՝ «խոր թաքնված» մի քաղաքո՞ւմ, թե՞ սովորական ինքնաձիգի ու տանկերի արկերին հասու սահմանամերձ գոտում: Եվ ես նրան հպարտությամբ ուզում եմ ասել, որ պետք չէ ամաչել, երբ մի ինչ-որ ներքին մղում ստիպում է քեզ սիրել զենքը: Նույնիսկ որքան էլ ցավալի հնչի խոսքս, մեր օրերում մենք բոլորս պիտի սիրենք զենքը, որ սահմանի մոտ այն դարձել է մեր

գոյության ու ապրելու երաշխավորը:

Առավել ևս հպարտությունս կրկնապատկվեց, երբ իմացա, որ Արցախի Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության կողմից կազմակերպված շարադրությունների մրցույթում 10-րդ դասարանի աշակերտուհի Սեդա Գրիգորյանի ստեղծագործական շարադրանքն արժանացել է առաջին մրցանակային տեղին:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏՔՆ Է

Ես ծնվել եմ Արցախում, 21-րդ դարի՝ իմ քաղաքի առաջին ծնունդն եմ ես՝ 01.01.2001 «ոսկյա» տարեթվով: Ուսուցչուհիս հարցրեց, թե ո՞ր երկրում կցանկանայի մեծանալ, առանց վարանելու մտածեցի՝ եթե հարցը ինձ մի քանի տարի առաջ տրվեր, ես վստահությամբ կասեի, որ ցանկանում եմ ապրել Վանաձորում, որտեղ գտնվում են բոլոր հարազատներս: Իսկ հիմա, երբ արդեն քիչ թե շատ մեծացել եմ ու նորովի եմ ճանաչում աշխարհը, փորձում եմ իմ մեջ գտնել այն առավել թանկ վայրը, որին ես «Հայրենիք» կանվանեմ: Այն հանգամանքը, որ ես ծնվել եմ Մարտակերտում դարասկիզբ խորհրդանշող այդ հրաշալի օրը, ինձ ավելի է կապում այս հող ու ջրին, և կարծում եմ, որ պատահական այս կյանքում ոչինչ չի լինում: Ծնողներս Արցախից չեն, բայց արդեն քսան տարի է, ինչ հայրս պաշտպանում է հայրենի քաղաքիս սահմանը: Ու հիմա ես մտածում եմ՝ ո՞րը նախընտրեմ՝ իմ հարազատների բնօրրան Վանաձո՞ը՝ այդ խաղաղ ու գեղեցիկ քաղաքը, որտեղ հիմա միակ եղբայրս է ապրում ու սովորում, թե՞ Մարտակերտը՝ այս կիսավեր, փոշոտ, իր բնակիչներին միշտ լարված պահող քաղաքը, որտեղ իմ մանկությունն է, հիշողություններս ու մեր տունը: Դեռ դպրոց գնալուց առաջ ես անգիր գիտեի ու կարծես հասկանում էի Թումանյանի «Ամենից լավ տունը»: Հիմա եմ հասկանում, որ մեծ ու շքեղ քաղաքներում հոգիս ճնշվում է և ուզում եմ ժամ առաջ վերադառնալ «մեր հին խրճիթը»: Ես սիրում եմ իմ ծննդավայրը և ուզում եմ, որ իմ Արցախը վերջնականապես ազատվի պատերազմի հետքերից ու նոր պատերազմի վտանգներից: Ես ուզում եմ մեծանալ այս հողի վրա, որտեղ բոլորը, ինչպես իմ շքեղ քաղաքում, հայերեն են խոսում ու մտածում հայերեն: Ուզում եմ նաև դառնալ լավ մասնագետ ու իմ հնարավորությունները ծառայեցնել հայրենի Արցախիս: Հայոց միասնական հողում իմ ապրելու համար ընտրում եմ սահմանի մոտ գտնվող այն աշխարհը, որտեղ տագնապ կա

ամենուր ու մահվան սարսուռ, սեր կա անչափելի ու միասնական ոգի...

Ամեն օր համոզվում եմ, որ սահմանամերձ բնակավայրում հայրենասիրությունը մեր արյան բաղկացուցիչ տարրն է կազմում, բանակային համազգեստը՝ մեր սիրելի հագուստը, իսկ զենքը՝ մեզ համար սիրելի մի իր: Երբեմն ամաչում եմ, բայց մի ներքին մղում ինձ ստիպում է սիրել զենքը: Ես այն համարում եմ ինքնապաշտպանության միջոց: Գուցե դա նրանից է, որ տարիներ շարունակ միայն զինվորական համազգեստո՞վ եմ տեսել հորս: Ճակատագրի կամոք սահմանի, հայրենիքի, հայրենասիրության մասին իմ պատկերացումները ձևավորվել են զգացածիս հիման վրա: Չգիտեմ՝ ում համար ինչպես, բայց իմ հայրենիքն այստեղ սկսվում է սահմանից, որտեղ ես ապրում եմ: Այստեղ հրաղադարներին մարդիկ ստեղծագործող, արարող, կառուցող են, իսկ թշնամու ոտնձգությունների ժամանակ ազգովի զինվոր են դառնում: Այստեղ բոլորը, անկախ իրենց զբաղվածությունից ու մտածելակերպից, գիտեն խաղաղության արժեքը: Ու բոլորիս համար գերնպատակ խաղաղությանը ստորադասվում են անձնական ու կենցաղային բոլոր խնդիրները: Այստեղ տանտիրոջ իրավունքով, տանտիրոջ գորովանքով ենք սիրում մեզնից ոչ հեռու ապրողների խաղաղ ու անվտանգ գոյության երաշխավորին՝ հայ զինվորին: Այն զինվորին, ով համազգեստ հագնելով ու զենքը ձեռքը վերցնելով՝ տղայից միանգամից վերածվում է հայրենիքի պաշտպանի… Զարմանալի չէ՞, արդյոք, որ չենք ընկրկում թշնամու ո՛չ մեծաթիվ լինելու, ո՛չ ավելի շատ ռազմատեխնիկա ու ռազմամթերք ունենալու, ո՛չ էլ՝ նրանց հավակնությունների առաջ: Սա քաջություն է, հպարտություն, կամք: Սա սեփական ուժի գիտակցում է, որ պիտի ունենանք բոլորս: Երբեմն մեր գիշերներն աղավաղում են թշնամու ականանետերի լույսերն ու թնդանոթների ձայները, բայց գիտենք, որ առավոտյան պիտի դասի գնանք ու աշխատանքի շտապենք, ասես ոչինչ էլ չի եղել: Գիտենք, որ պիտի վաղվա օրվա նպատակներ ունենանք ու դրան հասնելու նախնական քայլերն անենք: Սա արդեն հերոսություն չէ՞, որ սահմանին ապրողը չի հիասթափվում, չի հուսահատվում, փախչելու փորձեր չի անում:

Ամիսներ հետո եղբայրս կզինվորագրվի հայրենիքի պաշտպանությանը՝ իմ ու բոլորիս հայրենիքի: Այս գիտակցումը սրտումս բացված վախի ու անհանգստության խորշերը հպարտությամբ է լցնում: Ուզում եմ վարակել բոլորին այն համոզմունքով, որ աշխարհի ամենակարևոր ու ամենաթանկ մասը մեզանից ոչ հեռու գտնվող խրամատն է, որը պաշտպանում է երկրիս ամենախիզախ հայ զինվորը…Նաև հավա-

տացած եմ, որ աշխարհի բոլոր քաղաքացիների մեջ ամենից շատ հայրենասերները հայրենիքի դարպասների մոտ ապրողներն են, անքուն գիշերներից հետո առավոտյան հանգիստ ընթացքով մանկապարտեզ, դպրոց ու աշխատանքի շտապող սովորական մարդիկ, բոլոր նրանք, ովքեր կառչած են այս հողին և իրենց կիսաքանդ օջախներին: Մարդիկ, ովքեր չեն քննադատում, ովքեր իրենց դժգոհությունները հայրենիքի նկատմամբ ատելության չեն վերածում, այլ հայրենիքն ընկալում են որպես արյամբ ներծծված մի տարածություն… Քանի՜-քանի՜ նվիրյալ նահատակի երազանք մնաց այս հայրենիքը, իսկ որ ավելի սարսափելի է՝ քանի՜-քանի՜սն անհայտ կորած, անգերեզման, անճակատագիր մնացին՝ մի անդարման վերք բացելով իրենց որոնողների, իրենց սպասողների սրտերում… Հեթանոս բազմաստվածներն անգամ այսքան զոհաբերություն չեն պահանջել… Այս հայրենիքն անգին է դարձել, անգնահատելի: Դա հստակորեն գիտակցելով՝ մեզանից յուրաքանչյուրը պիտի նախ և առաջ հայրենիքի պաշտպան լինի, հայրենիքի անվտանգության, բարօրության, առաջընթացի պաշտպան: Այդ դեպքում արդեն կարևոր չէ, թե մեր տուն-բնակավայրը Հայաստան կամ Արցախ աշխարհի որ կետում է գտնվում՝ «խոր թաքնված» մի բարեկեցիկ քաղաքում, թե՞ սովորական ինքնաձիգի ու տանկերի արկերին հասու սահմանագծին…

http://hayernaysor.am
«Լուսարար», թիվ 6-7, 2016թ.
«Զրաբերդ» թիվ 5, 1-15 մարտ, 2016թ.

25.05.2016

ԶՐՈՒՅՑ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆՎՈՐԻ ՀԵՏ

Տողերը՝ շարված տպատառերով, իմ աշակերտուհին ուղարկեց ինձ, որ նայեմ ու կարծիք հայտնեմ իր ստեղծագործական շարադրանքի մասին: Ընթերցում եմ, և ես էլ նրա հետ զգում մի անսահման անհանգստություն.

«Սարսուռ զգացի, անսահման դող: Եվ ես ոչինչ չեմ ուզում իմանալ այս քարե հուշարձանի մասին: Միայն մտածում եմ, որ քո աչքերի արևը եթե տաքացներ ինձ, իմ ամեն մի միտքը ճախրանք կդառնար… Ես կթռչեի բարձր, տանիքներից, գմբեթներից ավելի վեր, անձրևի ամենաառաջին կաթիլից էլ վեր: Ես չեմ ուզում քո մասին անցյալով հիշել, դու կաս, ես գիտեմ՝ դու իմ հոգում ես, իմ մտքի մեջ, ուրեմն դեռ ապրում ես հեռու-հեռվում՝ սարերից այն կողմ, բայց նաև՝ շատ մոտիկ...»:

Ես ուղղում եմ մի քանի կետադրական սխալներ, ապա առաջարկում՝ շարունակել զրուցել անհայտ կորած զինվորի հետ: Շուտով եղած մտքերին ավելանում են նոր մտքեր.

«Երբ դու վերադառնաս, յասամանագույն գմբեթով տաճար կկառուցեմ քեզ համար, որպեսզի Աստծուն շնորհակալություն հայտնեմ այդ շնորհի համար, և մանրավաճառ դարձած՝ կգոռամ փողոցներում ու կավետեմ մարդկանց քո գալուստն այն օրվա հիշողությամբ, երբ նկարում էիր աշխարհը, որի հասարակածը քո հայրենիքն էր, իսկ ես քեզ էի տալիս ներկերը: Հայրենիք, որը կորցրել էինք, և այն վերստին հարություն առավ քո և քո գաղափարակիցների շնորհիվ: Հայրենիք, որում բարձրյալը կավից արարում է կյանք, երազանք և ի կատար ածում հրաշքներ»:

Ես հիացած եմ, զգում եմ, որ մտքի թռիչք կա այստեղ, նաև մեծ հավատ, որ անհայտ կորած զինվորը տարիներ անց կարող է վերադառնա:

«Մտա տուն, բացեցի գիրքը… Ես դեռ պահել եմ գրքի արանքում քո

չորացրած թիթեռնիկներին ու կպահեմ մինչև քո գալստյան մասին ավետիս ստանալը: Ես կխոսեմ այս չորացած թիթեռնիկների հետ, մինչ դու գաս...»:

Ընթերցում եմ իմ աշակերտուհու գրած հաջորդ տողերը, և ես ինքս էլ սկսում եմ հավատալ հրաշքների, որ չպետք է կորցնել հույսը, նորից պետք է գտնել կորցրած երազը, նորից պետք է սպասել ու հավատալ, որ մի օր ՆԱ կվերադառնա...Նաև հավատում եմ, որ այս հրաշալի մտքերով շուտով կձևավորվի մի գեղեցիկ ստեղծագործություն, որը կկարողանամ ներկայացնել շարադրությունների մրցույթին:

Եվ օրեր անց Արցախի Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության կողմից կազմակերպված շարադրությունների մրցույթում 10-րդ դասարանի իմ աշակերտուհու՝ Լուսինե Հակոբյանի այս մտքերին ավելացան նոր տողեր, և այս ստեղծագործական շարադրանքն էլ արժանացավ առաջին մրցանակային տեղին:

«Մատներս շոշափում են հուշարձան դարձած քարի շուրջը բուսած նուրբ ցողունը ծաղիկների… Լուռ են նրանք՝ միաձուլված հուշարձանի լռությանը: Այդ լռությունը խախտում են անձրևի կաթիլները, որոնք քարի վրա դառնում են մարգարիտներ: Շարժվեցի՝ հեռվում թողնելով լռությունը… Ձեփյուռը, ըստ սովորության, սահում էր, իսկ անձրևի նվագից փախչող մեղուներն իրենց փեթակներն էին վերադառնում: Նոր ծաղկած յասամանի բույրն էր տարածվել օդում, ու ես մտածում եմ… Հրաշք չե՞ն, արդյոք, լույսով երիզված տանիքները, կարմրաքար վանքերն ու առատ բերքից հոգնած խնձորենիները: Եվ հրաշք չե՞ն, արդյոք, բերդերին քանդակված մեսրոպյան գրերը և ձորերի պռունկներից կախված խաչքարերը: Այստեղ հայրենիք կա, որը հավերժությունից հառնում, դառնում է ներկա, ապա մի բուռ դառնում մեր սրտերում: Հայրենիք, որտեղ սիրում են, ապրում, արարում, ձուլվում երազին, որի խաղաղության համար զոհվում են առանց կասկածելու, որի համար կռվի են ելնում առանց հրամանի, որին կարոտում են հեռվից, և այդ կարոտից ծնված երգեր են հյուսում ու արտասվում օտար ափերում դեպի անհայտություն լողացող առագաստների վրա: Հայրենիք, որը կորցնելուց հետո էլ ոչինչ չի մնում կորցնելու, որովհետև առանց նրա հացը անաղ է դառնում, լեռները՝ քարերի կույտ, անձրևը՝ ջուր սովորական, ծաղիկները՝ բույս ամենօրյա: Նրանից են սկսում ճանապարհները, նրանից են ծնունդ առնում տողերն ու մտքերը: Մարգագետնի քնքուշ ծուլության մեջ գոլորշիանում են անձրևի կաթիլները: Մի ծիծեռնակ է գլուխը հանում իր նորահյուս բնից և հետևում արևի ճառագայթների

սլացքին: Ծառի զարկերակների հետ տրոփում են կարծես թռչնակի զարկերակները: Նրա երգը միահյուսվում է ճառագայթների սլացքին, որոնց հյուլեները կարծես պար էին բռնել այդ մեղեդու տակ: Հայացքս հառեցի այգու ռեհաններին, որոնք ամեն տարվա նման ցանել է մայրդ… Հավանաբար, որ նրանց բացակայությունն անգամ չհիշեցնի, որ դու չկաս: Հաց, ռեհան, պանիր… Անամպ երկինք, թաց երիցուկներ… Պղնձե ամանների մեջ լույսը ինչպիսի՜ ժպիտներ էր հյուսում, ամեն մի ծածուկ ժպիտի ետևում մի ճեղք ունի ժամանակի պատը, որտեղից իր դեմքն է երևում: Բայց բոց ելավ, և լույսը մոխրացավ մթության մեջ… Խավարից հարցրի լույսի տեղը: Նա ինձ քո նկարած յասամանագույն աշխարհը ցույց տվեց, քո գաղափարի հայրենիքը: Եվ ես տեսա, որ խավարի ամեն մի հյուլե մի արև դարձավ ու մի նոր բանաստեղծություն՝ երիցուկների կրծքին: Հիշեցի քո խոսքերը. «**Հայրենիքը չպետք է դատարկ մնա, եթե դատարկ մնա, դատարկ ծաղկամանի նման տգեղ կլինի: Տգեղ կլինի նրա ամեն մի ծաղիկը, զեփյուռներն անձայն կդառան, յասամանները՝ անբույր, ռեհանները՝ առանց համ: Հայրենիքը իջևանատուն չէ, որ մարդիկ գան, մի երկու-երեք ժամ կամ մի երկու-երեք օր այնտեղ մնան ու հեռանան, հայրենիքը ծիծեռնակի բույն չէ, որ գարնանը շինվի, իսկ աշնանը քամին իր հետ քշի ու տանի: Նրա ամեն մի մասնիկը պիտի տեղավորենք մեր սրտի մեջ ու թույլ չտանք, որ նրա անդորրը խարխլվի…**»: Սրանք քո իմաստուն խոսքերն էին, որ գաղափարի մարտիկ դարձած քեզ տարան դեպի երազանք, դեպի նպատակ, դեպի ազատ, անկախ հայրենիք… Այնքա՜ն եմ ուզում, որ դու քո ցանած գաղափարի ծիլերի ականատեսը լինես և գաս մեր հզոր բանակը տեսնես: Ինչպիսի՜ խանդավառությամբ եմ քեզ սպասում, որ ցույց տամ քո կերտած գաղափարի հետևորդներին, որ այսօր անսասան կանգնած են սահմանին ու մեր խաղաղ անդորրն են հսկում: Ես հավատում եմ, որ դու կգաս, կգաս արևի առաջին ճառագայթների հետ, կգաս զեփյուռի հետ, կգաս ծաղիկների բույրի հետ, կգաս՝ տեսնելու քո գաղափարից ծնված ու վեր հառած լուսով պարուրված քո հայրենիքը պաշտպանող զինվորներին ու կժպտաս թաքուն քո անմեղ ժպիտով: Նայում եմ պատուհանից դուրս, այնտեղ հին շուկան է՝ մարդկանց եռուզեռ, մթերք վաճառող գյուղացիներ: Սակայն աշխարհը կարծես երեխայի ձեռքի անավարտ աշխատանք լինի, որտեղ մկրատը գերադասվել է սոսնձից: Այնտեղ չկաս դու, բայց երազում գնում ենք դեպի հորիզոններն անէության: Հողը սարսափում է մեզանից, և ժամանակը հորդում է մեր գլխին: Ծիծաղում ենք անվերջ: Եվ մեր ծիծաղի

ձայները երգ են ցանում անդունդներում…Հորիզոնը կարծես հայացքների մի անվերջ շղթա լինի: Հեռվում կապույտ լազուրանման երկինքն է, ազատության շունչ է ամեն տեղ: Սոխակն իր երգի դեղին թելը խաղաղության զգացումի ոտքին կապեց: Արթնացա ծանոթ, շատ հարազատ, հորիզոններից էլ անվերջ սպասված, սոխակի երգից էլ ավելի քաղցր, երազ թվացող ձայնից… Խոնավ բառերով լեցուն հայացք, աչքեր՝ ցանցապատ պատկառանքի նման, քնած ճամփորդի մատների պես՝ անհանգիստ երկմտող կոպեր: Այդ դու էիր… Ես հավատում էի, որ դու կգաս, և երբեք- երբե՞ք չկորցրի իմ երազը, չէ որ դու էիր ասում. «**Որտեղ էլ լինեմ, կգամ մի օր ու կբերեմ պատգամ, երակներիս մեջ կցանեմ լույս, կույրին կասեմ՝ ինչ գեղեցիկ է այգին, կհավաքեմ բոլոր անեծքները մարդկանց շուրթերից, ամպերը կպատառոտեմ, կքարկապեմ աչքերն արևի հետ, ստվերները՝ ջրի հետ, ճյուղերը՝ քամու հետ, և մանկան երազը կմիացնեմ ծղրիդի մրմունջի հետ… Կգամ, ամեն պատի վրա մի մեխակ կցանեմ, ամեն մի պատուհանի տակ մի երգ կերգեմ, ամեն մի աղավնու մի ձիթենի կնվիրեմ, ազատություն կսփռեմ, լուսով կսնվեմ ու կսիրեմ հավերժ…**» »:

http://hayernaysor.am
http://www.usarmenianews.com/am-n-1161.html
«Ջրաբերդ» թիվ 5, 1-15 մարտ, 2016թ.

27.05.2016

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ

Քառօրյա դաժան պատերազմ տեսանք, և դրան հաջորդող սարսափելի օրերին էլ երբևէ մեր մտքով չէր անցնում, որ հնարավոր կլինի հրետակոծվող Մարտակերտում շրջանավարտների «Վերջին զանգի» միջոցառում կազմակերպել, բայց 12-րդ դասարանների դասղեկներ Նունե Գասիյանի և Լյուդմիլա Ավագիմյանի ջանքերով այն իրականացվեց:

Հարաբերական խաղաղության ապրիլյան օրերին բացեցի 12-րդ բնագիտական հոսքային դասարանի դուռը: Դատարկություն էր, հոգիս ճնշող ծանր լռություն… Նստեցի դասարանում, ինքս ինձ հետ մտքերի օվկիանոսում՝ փորձեցի հանդարտեցնել հոգիս կեղեքող ցավը, մի անսահման կարոտ հեռուներից փարվեց ինձ, անցյալի մեջ նորից վերագտա բոլորին, որ նրանք կային մեր կողքին, իսկ հիմա չկան…Նույնիսկ այն մեկը, որ դասամիջոցին անգամ հարցնում էր որպիսությունս կամ այս առաջին նստարանին նստած աշակերտը, որ ամեն անգամ ժպտում էր, իսկ այն մյուսը, ով իր ծննդյան օրը հեռվից եկող հրետակոծության արձագանքների տակ սկսեց երգել, բայց արցունքներ կային նրա աչքերում:

Մեկ առ մեկ հիշում եմ նրանց, որ այդ օրերին հաճախում էին տարբեր դպրոցներ: Բայց օր օրի նրանք եկան, կամաց-կամաց, կարոտով, անզուսպ ծիծաղկոտ աչքերով, հմայիչ ժպիտներով, և ուրախ էին նրանք, որ եկել էին նորից հարազատ կրթօջախը: Որքա՜ն ջերմություն կար նրանց խոսքերում, առանձնահատուկ մի ակնածանք, որ սովորաբար ցուցաբերում են տարիներով իրարից հեռացած մարդիկ: Բոլորի հայացքներում տեսա նաև նախորդ օրերի սարսափի հետքերը, բայց կարծես խուսափում էի այդ մասին խոսել…

Չհասցրի հարցնել, թե որտեղ են եղել նրանք, հանկարծ մեր աշակերտներից մեկը՝ Սևադա Ավանեսյանը, ժպտադեմ նայեց ինձ, ապա հնչեցրեց սրտահույզ մի «ջան», և տիկին Պողոսյանին ավելացած այդ «ջանը» մայր Հայաստանից բերված իր ջերմությամբ վարակեց մի ամբողջ դասարան:

Իսկ հիմա, որպես Արցախի դպրոցի ուսուցչուհի, սիրով շնորհավորում եմ բոլոր շրջանավարտներին, մի առանձնահատուկ հոգածությամբ ու ակնածանքով իմ ջերմագին մաղթանքները հրետակոծության սարսափներն ապրած բոլոր շրջանավարտներին, որ այդ օրերին չկորցրին իրենց հույսն ու անսասան կամքը, նորից եկան՝ իրենց հարազատ դպրոցում հնչեցնելու վերջին զանգի ղողանջները: Ուզում եմ բյուր օրհնանքների ու անկեղծ հաճոյախոսությունների մի բազմերանգ փունջ նվիրել բոլորին: Թող այս հիանալի տոնը դառնա սկիզբն ամեն բարիքի և ուրախության, դառնա խորհուրդը բոլոր երազանքների, ամենապարզ խորհուրդը բոլոր սպասումների: Մաղթում եմ բոլորին լուսավոր ճանապարհ, հաղթական և բարի երթ կյանքի քառուղիներում: Թող հայրենապաշտության խորհուրդը ուղեկից լինի ամենուր, բերկրալից լինի այն երկրային ճանապարհը, որ ընձեռված է յուրաքանչյուրին, և մնայուն լինի այն ուղին, որով պիտի դեռ նրանք քայլեն: Այդ ճանապարհին ցանկանում եմ բոլորին ազգային երազանքների իրականացում, միասնության գաղափարի ձևավորում, անկոտրում կամք, անսպառ եռանդ, երկարատև խաղաղություն:

http://usarmenianews.com/am-n-3696.html

28.05.2016

ԵՍ ՀԱՅՈՒՀԻ ԵՄ, ՈՒԺՍ ԺԱՌԱՆԳԱԾ ՄԵՐ ՀԱՅ ՏՂԵՐՔԻՑ

Սիրտս անհանգիստ տրոփեց, երբ հայացքս սահեց տողերով, բառերն անգամ թև առած՝ ասես նոր սերնդի կոչն էին հղում, բայց տողերի հեղինակը շատ համեստ, մի նուրբ էակ էր, նոր օրերի շրջանավարտ, որ «Վերջին զանգի» օրն ինձ հանձնած թղթի վրա իր գրած տողերով պիտի հնչեցներ մի նոր ասելիք, ուր արցունք չկար և ոչ աղերսանք. «**Ես հայուհի եմ, լսո՞ւմ եք, հայուհի, անունս՝ Գայանե, ազգանունս՝ Հայրապետյան, 12-րդ դասարանից… Պատերազմ տեսած մի նոր սերունդ եմ, որ պատրաստ է հայ զինվորին գլխատող բարբարոս թշնամուն մորթել իր ձեռքով…»:** Բառի դղրդոց լսե՞լ եք արդյոք, թե՞ կասեք բառը այդպես չի լինում, իսկ ես այս պահին դղրդոցն անգամ լսում եմ նրա…Բառը մռնչում, կատաղած ձայնով երկինք էր հանում մի նոր բարձրակոչ, մի նոր սպառնալիք՝ թշնամուն ուղղված. «**Դղրդա՛, Արարա՛տ, մռնչա՛ Արցախ, ծովացի՛ր Արաքս, վե՛ր համբառնի՛ր, իմ մա՛յր Հայաստան, քո գոյությունը շարունակողը ես եմ… Դողա՛, սարսափի՛ր, ազերի՛ թուրք, հային տեսնելիս, հայի անուն լսելիս վախեցի՛ր դու, քո առջև ե՛ս եմ կանգնած, ես՝ հայուհիս, ուժս ժառանգած Անդրանիկից, Նժդեհից, Վարդանից, Մոնթեից, Արամից, Թաքուլից, նոր ոգի առած Ազատից, Արմենից, Արմենակից, Քյարամից, մեր սահմանապահ քաջ ու հայրենասեր անվախ տղերքից»:**

Սա մենք ենք՝ պատերազմ տեսած արցախցիներս, մեր բնակավայրի անունով՝ նաև մարտակերտցիներս, այսպես են ասում մեզ, բայց նաև 92-ի պատերազմից բռնագաղթվածներս, որ եկանք շենացրինք, նորից ստեղծեցինք մի նոր օջախ, մի նոր հույս ու մեղմիվ, շատ մեղմիվ սկսեցինք այդ հույսն օրորել, որ կարողանանք նորից ապրել… Իսկ այս օրերին մի նոր ապրիլյան պատերազմ տեսածներս, գուցե նաև տարհանվածներս, այս օրերին մեզ այդպես էին ասում, նորից վերադարձանք ու սկսեցինք մեզանից անկախ՝ մեր աչքերից ինքնաբուխ թափվող արցունքների արտացոլանքում նորից հույս փնտրել, ու այդ հույսի մեջ նոր ոգի առած մի սերունդ տեսանք, որ պատերազմին իր «ո՛չ»-ն է ասում, բայց կամքով արի, իր հզոր ձայնով սաստում է անգամ ազգի թշնամուն:

«**Ո՞ւմ էիք վախեցնում, քառօրյա պատերա՞զմ էիք սկսել, ի՞նչ էիք**

ուզում դրանով ասել: Ձեզնից վախեցող չկա, տեսե՛ք, ես նորից իմ հայրենի հողում եմ՝ Մարտակերտում, որ եկել եմ հրաժեշտ տալու իմ դպրոցին, ուսուցիչներիս, եկել եմ մասնակցելու «Վերջին զանգին»: Տե՛ս

ու վախեցի՛ր մեր քաջությունից, մենք մեր արյունով այս անգամ էլ «հաղթանակ» գրեցինք: Ես չեմ ուզում պատերազմ լինի, ես չեմ ուզում մայրեր արտասվեն, ես չեմ ուզում հայ հողի վրա հայի արյուն թափվի: Անօրե՛ն ազերի, դու չես կարող տիրել մեր հողին, տե՛ս ու վախեցի՛ր իմ հեզ, նուրբ ու կանացի, բայց և կոպիտ ու հպարտ հայի իմ էությունից»:

Վերջին զանգի միջոցառմանը մեր շրջանավարտների կողքին քառօրյա պատերազմում հերոսացած հայ զինվորն էր…Արցունքախառն աչքերով, հպարտությամբ լեցուն, հոտնկայս ծափահարում էինք նրանց… Շրջանավարտ Սերգեյ Զաքարյանի նոր երգն էր հնչում. «**Կա՛նգ առ պատերազմ**»:

Հիշատակ կար այնտեղ, հավերժության ճանապարհի, նոր սերնդի խոսքն էր բարձրաձայնվում… Ձեռքումս սեղմած մի թղթի կտոր, իր ներսում պահած բառի դղրդոց, ահեղամռունչ գոռում էր ասես, որին սաստում էր մի խուլ հառաչանք. «**Ես հայուհի եմ, դպրոցն ավարտած նոր շրջանավարտ, պատերազմ տեսած մի նոր սերունդ եմ, որ ապրել կուզի հայ հողի վրա**»:

...Եվ ապրելու է, որովհետև ուժ կա ապրելու և արարելու, կյանքն արժևորելու նոր մղում:

http://hayernaysor.am

03.06.2016

21-րդ դարում անգրագետ են համարվելու ոչ թե այն մարդիկ, որոնք գրել-կարդալ չգիտեն, այլ նրանք, ովքեր չեն կարողանում սովորել, հետո սովորել ու նոր հմտություններ ձեռք բերել:

Էլվին Թոֆլեր

ՈՒՍՈՒՑՉԻ ԿՅԱՆՔՈՒՄ ՄԻՇՏ ԷԼ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ «ՍՈՎՈՐԵԼԸ»

«Սովորեցնել» բառն այսօր հետին պլան է մղվել, առանցքային է դարձել «սովորելը», որը ոչ մի պահ չպետք է դադարեցնել: Այդ գործընթացը որոշ մարդկանց համար խորթ է հնչում, համարում են, որ ժամանակին ինչ-որ բան սովորել են, դա էլ բավարար է, նույնիսկ հիվանդագին են մոտենում ցանկացած նորի ու փոփոխության հանդեպ: Նորը չսովորող ուսուցիչը չի կարող աշակերտի հետ նորմալ աշխատել, նա կրկնելու է վաղուց ասված խոսքեր, որոնք նոր սերնդի համար հնաոճ են, իսկ աշակերտն այսօր նորը սովորում է համացանցից, մարդկանց հետ շփումներից, ընդհանրապես՝ կյանքից: Հիշենք, որ ուսուցիչը հասարակության մեջ մտավորականության դասի ներկայացուցիչն էր, գրագիտության եզակի կրողներից մեկը և միակ աղբյուրը, որից աշակերտը կարող էր տեղեկություն և գիտելիք ստանալ: Հիմա փոխվել են ժամանակները, մենք ունենք տեղեկատվության հսկայական ցանց, որտեղից աշակերտն ամեն վայրկյան կարող է ձեռք բերել ամբողջ ինֆորմացիան և այն գիտելիքը, որը կամենում է: Բայց մեր օրերում լինում են դեպքեր, որ սնափառությունը տեղի չի տալիս, որի արդյունքում տարիների փորձ ունեցող ուսուցիչն իրեն համարում է իր մասնագիտությանը գիտակ, անգերազանցելի, գտնում է, որ ավելացնելու բան չունի և չի զգում նոր գիտելիք ձեռքբերելու կարիք: Իսկապես, սնապարծությունը և նրանից սնվող սնափառությունը սողոսկել են մեր ազգային բնավորության մեջ: Այսօրվա աշակերտը գիտակցում է, որ իրեն սովորեցրածը չի կարող լինել հավերժական ճշմարտություն, ի տարբերություն նորից խուսափող ուսուցիչների՝ նա պատրաստ է ուղղելու իր սխալը, նա չի խուսափում այդ սխալից, այնինչ ուսուցիչներ ունենք, որ դողում են մերօրյա աշակերտի նորովի հարցերից, նա թաքնվում է իր իսկ սխալից, մերժում այն, որը տանում է նրան աշակերտի մոտ ինքնագնահատականի իջեցմանը: Եթե այսօրվա ուսուցիչը գտնում է, որ վերջին տարիներին իր մոտ ոչինչ չի փոխվել, ուրեմն նա այնքան էլ խելացի չէ, ուրեմն պետք է հասկացնել վաղուց հաստատված այն ճիշտ դիտարկումը, թե 19-րդ դարում դա գուցե ընդունելի էր, 20-րդ

դարում՝ կասկածելի, 21-րդ՝ տեղեկատվական դարում, դա կատարյալ հիմարություն է: Այս նոր դարում չսովորելը անգրագիտություն է, ուրեմն յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի այդ ճշմարտությունը և նորովի մոտենա իր իմացությանը, որից էլ կախված է նոր սերնդի՝ ապագա քաղաքացու ձևավորումը, իր մասնագիտական աճի, իր անձի հասունացման ընթացքը: Ցավալի է, որ մեր օրերում ոչ բոլոր ուսուցիչներն են օգտվում համակարգչային այս ահռելի տիրույթի՝ իրենց հասու և պիտանի գիտելիքներից, որը լավագույն աղբյուր է ինքնակրթության զարգացման համար: Համակարգիչը ոմանց համար մնում է որպես մի դժվարընկալելի «գործիք», որի իմացությունը նրանց գիտակցության մեջ անհասանելի երևույթ է համարվում՝ չնայած վերջին ժամանակներում էլեկտրոնային մատյանների առկայությունը շատերին տարել է դեպի մերձեցում համակարգչին: Քանի որ կյանքի զարգացման արագացված դար ենք ապրում, ապա պետք է կարողանալ ժամանակին ամեն ինչ սովորել և արագ ըմբռնել, հապաղելը այս դեպքում հաստատ վնասում է մեզ: Գիտենք, որ իմաստնությունը երկար տարիների ընթացքում ձեռքբերված փորձն է, այդ իսկ պատճառով ավագ սերնդի փորձառությունը նոր կյանք մտնող մարդկանց համար շատ կարևոր ենք համարում: Բայց ո՞վ է ասում, որ միայն իմաստասեր մարդկանց կյանքի դասերը պետք է սերտենք: Ապրում ենք նաև մի այնպիսի ժամանակաշրջանում, որ երբեմն մեր աշակերտները կարող են մեզ մի նոր կյանքի դաս տալ, որը թերևս ոչ բոլոր ուսուցիչներն են ունակ ընկալելու և ընդունելու այն: Իմ մանկավարժական գործունեության ընթացքում միշտ էլ հավատարիմ եմ եղել նաև այն մեծ ճշմարտությանը, որ չնայած փոխվում են ժամանակները, բայց անկախ մեր առջև ծառացած առկա խնդիրներից ու հոգսերից՝ պարտավոր ենք մեր ամեն մի օրը լցնել նոր իմացությամբ, գեղեցիկի զգացողությամբ, այն մեծ մարդասիրությամբ, որ իր մեջ ունի անչափելի հավատ ու իրական արժեքներ, չմոռանանք նաև, որ մարդ-քաղաքացու ձևավորման, առանձնապես հայապահպանության գործում մեզ է վերապահված այդ մեծ առաքելությունը: Հիշենք, որ ուսուցչի կերպարով է սերունդը մեծանում, մեզանով է կարոտը շնչում, այդ մենք ենք հույսը ապրեցնում, որ երազանքներ ծնվեն սիրո, գեղեցիկի, բարության, լուսե օրերի մասին: Այդ մենք ենք ուրվագծում հայ մարդու նկարագիրը՝ համեմված այն մեծ իմաստությամբ, որ մեր մարդասիրությունն է ուսուցանելու իսկական արվեստը և մեր ազգի հարատևության երաշխիքը: Մեր անանձնական աշխատանքով, բայց մեր անձնական օրինակով ենք ձևավորում նոր սերնդի միտքն ու աշխարհայացքը, մի նոր դիմագիծ, որն այսօր հայրենիք է պաշտպանում՝ մեր փառահեղ նախնիների ու նոր ժամանակների հերոսների առաքելությամբ սրբագործված:

http://usarmenianews.com/am-n-3744.html

04.06.2016

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՐՎԵՍՏ Է

Եթե կան մարդիկ, ովքեր ամեն անգամ ընթերցում են իմ նյութերը, բայց համամիտ չեն այս արտահայտությանը, կարող են արձագանքել: Ուզում եմ մի փոքրիկ հայտարարություն անել առանձնապես այն մանկավարժներին, ովքեր համամիտ չեն ուսուցչուհուս արտահայտած մտքերին, որոնք ամեն անգամ տեղադրում եմ այստեղ՝ ի տես այս տարածքում իմ բոլոր ընկերների: Սա ազատ դաշտ է, որտեղ կարող ենք բանավիճել, կարծիքներ արտահայտել, իսկ ես պատրաստ եմ այդ մարտահրավերներին, եթե խոսքը վերաբերում է իմ մանկավարժական փորձին ու իմ նոր օրերի գործունեությանը: Այստեղ կատարած իմ բոլոր գրառումներն իրական հերոսներ ունեն, դրանք իմ աշակերտներն են, ովքեր ամեն անգամ նորովի են հայտնաբերվում, իրենք էլ ինձ հետ ուրախանում, որ այս էջում իրենք նոր կերպարներ են դառնում: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահում միշտ իմ աշակերտների ամեն մի խոսքը, վերաբերմունքը, նրանց արտահայտած անսովոր միտքը, այստեղ կերպարներ եմ կերտում, որը հնարավոր է հատուկենտ մարդկանց դուր չգա, բայց ես ապրում եմ նրանց շարժով, և ոչ-ոք չի կարող կանգնեցնել իմ ազատ երթը դեպի մանկավարժության խորքերը, որտեղ կառչում եմ ամենալուսավոր կետից, որ այնտեղից լույսեր հանեմ: Երբեք թող ցավոտ չհնչեն մեր ուսուցիչների համար իմ խոսքերը, այո՛, կարող է աշակերտ լինի՝ իմ դասը սովորի, մյուսներինը՝ չսովորի, կամ լինի հակառակը, ես դա երբևէ հիվանդագին չեմ ընդունի, բայց ո՞վ է ասում, որ աշակերտը բոլոր ուսուցիչներին պետք է նույն հայացքով նայի, մեզ ո՞վ է ասում, որ աշակերտը պետք է համատարած բոլորին սիրի:

Ուսուցիչն ինքն է ուղեծիր գծում իր համար, գիտենք, որ մանկավարժությունն արվեստ է, և այդ արվեստն իմ հոգու մեջ է, այդ արվեստն ամեն օր բարձրաձայն խոսում է այստեղ իմ տեղադրած ճշմարտացի և իրական նյութերով, այդ արվեստն ինձանից անբաժան է, նրան հակասողը երբեք չի կարողանա մտնի այդ արվեստի մեջ ու ապրի այնպես, ինչպես ես եմ հոգով ապրում, իսկ ես սիրում եմ ինձ համար պաշտամունք դարձած այդ արվեստը, որտեղ կա հույզերի ու ապրումների մի ամբողջ գամմա, ոգևորություն ու ստեղծագործական բացահայտում, ինքնավերլուծություն ու ինքնահաստատում, մարդասիրություն և, ոչ էգոիզմ, արժեքների ու սկզբունքների մի ամբողջ համակարգ:

05.06.2016

ՀՈԳՈՒ ՄՆՈՒՆԴ Է ԻՄ ՄԱՐՏԱԿԵՐՏԸ

Ասում են՝ լավատեսությունը մեծ մարդկանց շքեղությունն է, իսկ մենք ապրում ենք այստեղ հոգու շքեղության մեջ: Իմ համար արևի երկիր է պատերազմ տեսած այս տաքուկ անկյունը: Եվ ես արևի այս փոքրիկ երկրում ամեն առավոտ բացում եմ իմ հոգու պատուհանները ու կառչում ոսկեհեր արևի վարսերից, փարվում եմ արևի ջերմացած կրծքին ու զգում լուսահորդ ծաղիկների բուրմունքը դյութիչ, բացում եմ իմ հոգու բոլոր պատուհանները և լսում հողի կանաչ աղմուկը մեղմիվ, բացում եմ այն ամեն օր, որտեղ սեր կա անսահման, մի լուսավոր կյանք, բացում եմ կամաց, որ խիղճս հանկարծ նույնիսկ չցավի: Հոգու անդորրություն, սա հրաշագործ պահ է, որտեղ ներանձնանում ես, մտովի խոսում քեզ հետ կամ լսում լռության մաքրագործող ձայնը և երբեք չես ձանձրանում, երբ սեր կա այնտեղ ու մեծ հավատ: Ներդաշնակություն կա այդ ներհայման մեջ:



Եվ այսպես հոգու սնունդը ապրեցնում է մեզ, ու մենք ապրում ենք այստեղ հոգու սնունդով, որ բառ է դառնում, երբեմն հավատ: Եվ հույսը գրկած՝ երբեմն խոսքը վահան եմ դարձնում ու չարիքի դեմ մի հատիկ բառը հզոր է դառնում, մի ամուր թիկունք՝ չարիքին ուղղված: Ինձ հղված բառը գրկում եմ ամուր… «Խոնարհվում ենք մենք»,- այսպես է ասում նա իր տողերում, որ սահմանի մոտ ապրում ենք այսպես...Եվ քիչ է մնում ես էլ խոնարհվեմ ու խոնարհվում եմ այս հատիկ բառից, հեռուհեռավոր իմ ընկերներից հոգու սնունդ եմ ստանում ես այսպես...

«Խոսքդ հզոր է»,- այսպես են ասում, ու ես սնվում եմ այս երկու բառից, որ օդ ու ջուր են դառնում ինձ համար: Կարոտն եմ գրկում, երբ ասում են ինձ՝ կարոտում ենք քեզ, կարոտի միջից ժպիտ եմ հանում, որ սնվեմ նորից, հոգիս լիանա: «Համբերությունը կյանք է»,- այսպես են

ասում, երբ վիատված եմ, վախվորած մի քիչ: Համբերությունը ձգում եմ, ձգում, ու կյանք է դառնում, ապրելու կամար: «Սուրբ» բառը հաճախ ամուր եմ գրկում, որ հող է դառնում, երբեմն՝ Արցախ, սրբությամբ օծված մայրեր են դառնում և կամ սուրբ հավատ: Սահմանը մի նոր պատնեշ է դառնում Զինվորի կողքին, ու ես այդ բառը գրկում եմ ամուր, ու կողքին ահա շարվում են բառեր, որ «Սեր» է կոչվում, սեր ու հայրենիք, որ «Կյանք» է կոչվում, նոր կարոտ ու շունչ, մի նոր «Սպասում»՝ անսահմանության մեջ, մի «Ծաղիկ հասակ»՝ սահմանին կանգնած: Այսպես ենք ապրում սրբությամբ օծված մեր հայրենիքում՝ հոգու սնունդով, լուսավոր կյանքի սպասելիքներով, որ հույս է դառնում, երբեմն՝ հավատ: Հոգևոր սնունդ, որ բառ է դառնում, ու այսպես անվերջ բառով ենք սնվում, ու բառը նորից բառեր է դառնում: Եվ այսպես անվերջ ապրում ենք բառով, միայն թե ապրենք:

http://usarmenianews.com/am-n-3759.html

07.06.2016

ԱՐՑԱԽՆ ԻՄ ԼՈՒՍԱՏՈՒ ԱՍՏՂՆ Է

Այս հարցը, թե որտեղ կցանկանային ապրել, օրեր առաջ ուղղել էի ավագ դասարաններում սովորողներին: Ընդամենը հատուկենտ աշակերտներ նախապատվությունը տվել էին այլ երկրների, մեծամասնությունը ամուր սիրով ու հավատով, մտքով ու հոգով կառչած էին հայրենի հողին: Իմ բանավոր հարցումից հետո նրանց գրավոր շարադրանքներում անսահման սեր տեսա հայրենիքի հանդեպ, բայց նաև որոշ աշակերտների մոտ՝ հոգու երկվություն:

Անդրյան Անգելինա, 11-րդ դասարան: Անչափ հմայիչ մի գեղեցկություն, ժպտերես մի ծաղկած գարուն, ում շարադրանքի տողերում մի անհանգիստ զգացողություն սողոսկեց սիրտս, թվաց նա պիտի «դավաճաներ» իր սկզբունքներին, բայց ո՛չ, մի ներքին ձայն փորձում էր համոզել ինձ, որ հայրենիքն անսասան է, ու նա հավատարիմ կլինի արյունով հեղված այս սուրբ հողին:

«Միշտ էլ իմ բաղձալի երազանքն է եղել ապրել Ռուսաստանի Դաշնությունում: Կարծում եմ՝ ոմանք կսկսեն քարկոծել ինձ, սակայն երազանքս արդարացում ունի: Ես ծնվել եմ հենց այնտեղ: Երևի այդ պատճառով էլ կարոտով լցված սիրտս ու միտքս ինձ այդքան ձգում են դեպի ծննդավայրս: Կուզեի ապրել այնպիսի երկրում, որտեղ չկա պատերազմի սպառնալիք, որտեղ կարելի է հանգիստ ու խաղաղ ապրել: Արցախում «խաղաղություն» ասվածը սահմանային փոքր պատերազմների միջև ընկած կարճատև ժամանակահատվածն է: Որքա՜ն կցանկանայի կարողանալ ապրել այնտեղ՝ իմ ծննդավայրում, որտեղ խաղաղ է երկինքը: Բայց միայն Արցախում ապրած մանկությանս տարիներն ու հասունացած հոգիս են ինձ հետ պահում, այս տասնվեց տարիների ընթացքում Արցախն ինձ համար հարազատ տուն է դարձել: Հաճախակի եմ հիշում հոգուս հարազատ դարձած սահյանական տողերը. «Ախր ուրիշ տեղ ամեն մի քարից, առվից, ակոսից Իմ աչքերով իմ աչ-

քերին նայող Մանկություն չկա...»:

Ասում են նաև, որ շատերին են հարցրել, թե որտեղ կցանկանային ապրել, տարբեր կարծիքներ են եղել, բայց իմ համար շատ հաճելի էր և հուզիչ այս պատասխանը. «Կուզեի ապրել երկրի ամենաբարձր կետում, որպեսզի մոտ լինեմ աստղերին: Բայց չէ՞ որ այնտեղ շատ ցուրտ է, չես էլ հասցնի աչքդ թարթել, հոգիդ իր ոտքով կհասնի աստղերին: Ավելի լավ է ապրել տաք տեղ, կողքիդ էլ աստղ պահել...»:

Որտեղ էլ լինեմ, գիտեմ, որ Արցախն իմ լուսատու աստղն է, առանց որի ապրել չեմ կարող, և ուր էլ գնամ, կհասկանամ, որ «Ամենից սիրուն, լավ տունը, որ կա, էս գորշ խրճիթն է, Էս հին խրճիթն է, գետի եզերքին, Ծառերի տակին», ու կշարունակեմ ապրել իմ հայրենի հողում՝ ականջս սահմանային կրակոցների ձայնին, հոգիս՝ տագնապով լեցուն»:

http://hayernaysor.am

08.06.2016

ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁ ՍՈՎՈՐԵՑՐԵԼ Է ՀԱՐՄԱՐՎԵԼ ԱՇԱԿԵՐՏԻՆ

Մանկավարժությունը խորամանկ և դատարկ գիտություն է,
որը երբեք իր նպատակին չի հասնում:
Լև Տոլստոյ

Ռուս մեծ գրող Լև Տոլստոյի միտքն եմ ընթերցում մանկավարժության մասին: Որքան էլ անսովոր են հնչում տողերը, փորձում եմ հասկանալ, թե նա ինչ է ցանկացել ասել իր այս արտահայտությամբ: Նրա հաջորդ միտքը ավելի պարզ է ու հասկանալի. «**Մանկավարժությունը գիտություն է այն մասին, թե ինչպես վատ ապրելով՝ երեխաների վրա լավ ազդեցություն ունենալ: Սա նույնն է, թե բնության օրենքներին հակառակ ապրելով՝ փորձես առողջ օրգանիզմ ունենալ»:**

Հաջորդ տողերն արդեն ինձ տանում են ճշմարտության, որ երբեմն ականատես ենք լինում ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերություններում: «**Դաստիարակության դժվարությունները կայանում են նրանում, որ ծնողները չշտկելով սեփական թերությունները, փորձում են այդ նույն թերություններն արմատախիլ անել երեխայի ներսից»:**

Պարզվում է՝ գրողը երբևէ դաստիարակության մասին չի գրել, բայց նրա կարծիքով. «**Դաստիարակության էությունը լավը սեփական պահվածքով, շարժուձևով ցույց տալն է: Միայն սեփական օրինակով մարդիկ կարող են ազդել այլոց վրա և կրթել նրանց. առավել ևս՝ եթե խոսքը երեխաների մասին է: Երեխաների հետ ուղիղ և անկեղծ լինել, չթաքցնել հոգում եղած իրական հույզերը, սա է դաստիարակության միակ ճիշտ ձևը»:**

Այս վերջին տողերն ինձ չափազանց հոգեհարազատ են հնչում, բայց մանկավարժության «խորամանկ և դատարկ գիտության» մասին արտահայտությունն ինձ տանում է նաև դեպի իմ սեփական մանկավարժական փորձը, որտեղ երբեմն սահմանումներից ու օրենքներից դուրս հարաբերություններ կան, որ մոռացության եմ տալիս, ձգտում ապրել իրական կյանքով, մեր օրերի՝ իմ աշակերտներին անհանգստացնող հույզերով ու նրանց ապրումներով: Ես ուրախ եմ, որ այսօրվա մանկավարժությունն աշակերտին չի հարմարեցնում դասանյութին կամ ուսումնական ծրագրով նախատեսված նյութերին: Հենց դա է ինձ

օգնել, որ ունենամ իմ սեփականը, և իմ մանկավարժությունն ինձ ասում է, որ ես՝ որպես մանկավարժ, իմ գործունեությամբ երբեմն ինքս պետք է հարմարվեմ աշակերտներին՝ նրանց համար ինքնաարտահայտման արդյունավետ պայմաններ ստեղծելով:

Հիշում եմ, որ այդ օրը 11-րդ դասարանում աղաչական հայացքով, թևաթափ եղած՝ ինձ մոտեցավ աշակերտուհիս, զգացի, որ անհանգիստ է, օրեր առաջ նա հարազատ էր կորցրել: Թվաց՝ փորձում էր փրկության մի ելք գտնել ինձնից: Իմ հարցական հայացքին ի պատասխան՝ ինձ տվեց թղթին հանձնած մի քանի տողեր և ասաց. «**Աշնան մասին եմ գրել, ուզում էի թեթևանալ, այդ թախծոտ օրերի մեջ փորձում էի մեղմացնել հոգուս ցավը, բայց չստացվեց**»:

Հայացքս հառեցի տողերին. «**Թվում է՝ ուրվականի պես հետապնդում է ինձ ինչ-որ մեկը: Աշնանային քամին հետևիցս շոյում է վարսերս, մի փոքր շուրջս պտույտ տալիս, ապա կանգ առնում ճաքճքած ու սառած շուրթերիս: Նայում եմ փողոցով քայլող պատահական անցորդներին և փորձում նրանց մեջ իմ կյանքը վերահիմաստավորել, բայց քամին նորից ինչ-որ բան է շշնջում ականջիս՝ խլացնելով փողոցի աղմուկը... Միակ ընկերս աշունն է, բայց նրան էլ կորցնում եմ, իսկ այն վերքը, որ ապրում է իմ մեջ, նորից արթնանում ու շարունակում է բորբոքել հոգիս...**»/Սահյան Դիանա /:

Անհագ սպասումով նա հետևում էր իմ արձագանքին, իսկ ես արտաքուստ չերևացող անհանգստությամբ ուզում էի օգնել նրան: Անսպասելի հնչեցին խոսքերս. «**Եթե աշունը քեզ չօգնեց, ապա գրի՛ր. «Ի՞նչ եմ զգում ես», այդ վերնագրի տակ շարադրի՛ր մտքերդ...**»:

Մինչ նա գրում էր, ես մտովի խոսում էի իմ ամաչկոտ և հուզված աշակերտուհու հետ. «**Դու վստահեցիր ինձ, իսկ ես ուզում եմ անհանգիստ հոգուդ թարգմանը դառնալ, մեղմացնել ցավդ և ասել քեզ, որ հոգիդ դատարկես ու թեթևանաս, մտքերդ գրի՛ր, գուցե դրանով կարողանաս ազատվել քո մեջ աղաղակող ցավից: Թախիծդ գրկած՝ շարունակի՛ր ապրել, կյանքն իր ստվերոտ կողմերն ունի, ու միայն մարդն է, որ կարողանում է այն հաղթահարել, դու պիտի դիմակայես հոգուդ տառա-**

պանքին, գրի՛ր, որ հնարավորինս կարողանամ քեզ նորից գտնել»:

Հապճեպ գրված նրա մի քանի տողերում արև փնտրող իմ աշակերտուհուն տեսա, նրա սիրտն անընդհատ դողում էր վշտից: Հաջորդ օրը շատ հանգիստ էր նա, և նորից ու նորից համոզվեցի, որ երբեմն անհատական ճիշտ մոտեցումն աշակերտի անձին ուսումնադաստիարակչական գործունեության ընթացում ապրեցնում է դեռահասին, թեթևացնում նրանց հոգին, և նման իրավիճակներում թղթին հանձնված գրավոր խոսքի միջոցով հոգին դատարկելն ու սփոփանքը դառնում են փրկության միջոց: Զգում եմ նաև, որ դրանով ուսուցիչ-աշակերտ հարաբերության մի նոր գեղեցիկ միություն է ամրագրվում, որտեղ կա փոխադարձ հասկացվածություն, ձևավորված հարգանք, կայուն վստահություն: Իսկ ուսուցչուհուս ուղղված «վարձատրությունը» օրեր անց նրա անկեղծ խոսքերն էին. «**Դուք ուրիշ եք. այն, ինչ անում եք ինձ ու մյուսների համար, ուրիշ է...Հետևաբար ուրիշ է իմ՝ Ձեր նկատմամբ ունեցած վերաբերմունքը»:**

http://usarmenianews.com/am-n-3803.html

11.06.2016

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԽՈՑԵՄ ԻՄ ՎԱԽԻ ՍԻՐՏԸ

«Ենթադրենք ես ապրում եմ ֆրանսիական մի քաղաքում, մի ճոխ տան մեջ, որտեղ ամեն քայլափոխի մի գեղեցիկ անծանոթ արձան կա, որն իմ պապերինը չէ: Կամ նայում եմ շրջապատին՝ գեղեցիկ այգիներ են, հրաշալի կառույցներ, բայց դրանց կողքով քայլելիս կզգամ, որ այս հողն ինձ անծանոթ է, անտրտում, այստեղ Եղեռն չի եղել, այս ժողովուրդը տառապանք չի տեսել... Այդ հողն ինձ կհիշեցնի, որ պապս այստեղ չի աշխատել, նրա ոսկե ձեռքերն այստեղ ծառ չեն տնկել, ու ես կթողնեմ այդ խաղաղ հողը և կվերադառնամ իմ հայրենի օջախը: Այս հողի վրա ես ամուր եմ զգում ինձ, ամեն անգամ համոզվում եմ, որ հայրենիքի սերը վեր է ապահով կյանքից, ու եթե հանկարծ հայտնվեի այդպիսի մի ապահով վայրում, ես, իրոք, կփախչեի այնտեղից, որպեսզի նորից վերադառնամ այստեղ, որտեղ սահմանի մոտ կանգնած է իմ զինվոր ընկերը»: Առաքելյան Գևորգ, այս օրերին 11-րդ դասարան փոխադրված բարեհամբույր, մեղմ բնավորությամբ, բոլորի կողմից հարգված մի աշակերտ:

Կարդում եմ օրեր առաջ գրած նրա տողերը, զգում, որ կա հայրենի հողին կառչած ամուր սերունդ, և ուրախ եմ, որ հայկական ծառի սերմերն ուրիշ տեղ չեն ուզում ծլարձակել, բայց նորից հոգիս թախիծով է պատվում, որ օրեր առաջ իմ աշակերտն էլ շատերի նման ստիպված է եղել թողնել իր հայրենական օջախը և տեղափոխվել մեկ ուրիշ վայր ու հաճախել մեկ այլ դպրոց, որտեղ, իր ասելով, անսովոր էր ամեն ինչ, և այնտեղ իր մոտ անհագուրդ կարոտ կար հարազատ դպրոցի հանդեպ: Ու նորից եմ հայացքս անցկացնում նրա գրած տողերով.

«Թվում է՝ ես պետք է նայեի այդ քաղաքի հարմարավետության ապահով դռներին, ծեծեի դրանք ու իմ առջև բացված այդ դռներով մտնեի ներս, որտեղ չգիտեն, թե ինչ է սոցիալական ծանր վիճակ, փոշու կամ ցեխի մեջ կորած փողոցներ....Շատ լավ է, որ այնտեղ չեն տեսել պատերազմ, այնտեղ չեն ասում՝ զոհվել կամ վիրավորվել է որևէ զին-

վոր... Բայց ես իմ հայրենի տանն եմ՝ սահմանի մոտ, և ամեն անգամ, երբ բացում եմ աչքերս, ուզում եմ ինքնակամ խոցել իմ վախի սիրտը, որ հանկարծ նա չկանգնեցնի իմ սրտի աշխատանքը»:

Ցավոտ են հնչում տողերը, աչքիս առջև տեսնում եմ օրեր առաջ դասարանի վերջին նստարանին նստած իմ աշակերտին...Այս տողերը գրելու հաջորդ օրը նա չէր եկել դասի, բայց ուզում էի ասել նրան, որ աշխարհը շուռ է եկել, էլ աշխարհում ապահով վայր չկա, բայց գերադասում ենք ապրել մեր հողում, որտեղ սահմանի մոտ կրակոցներ կան, բոթաբեր լուրեր, ու մենք բոլորս ամեն անգամ «**խոցում ենք վախի սիրտը**», որ կարողանանք ապրել:

http://hayernaysor.am

13.06.2016

Ուսուցիչը կարող է սովորեցնել այնքան ժամանակ, քանի դեռ ինքն է սովորում, հենց նա դադարի սովորելուց, կդադարի ուսուցիչ լինելուց:

Ջոն Լոկ

ՍՈՎՈՐԵՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ՑՈՒՑԱԲԵՐԵԼ

Ա անհրաժեշտ պայման է, որ պետք է հաշվի առնեն բոլոր ուսուցիչները: Նոր օրերում նոր մտահոգություններ կան, հետևաբար տարբերակված մոտեցում պետք է ցուցաբերել ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների նկատմամբ: Տարբեր են նրանք, ինչպես նաև տարբեր է նաև այդ ընտանիքների սոցիալական վիճակը: Մենք միշտ էլ ուշադրության կենտրոնում ենք պահում բազմազավակ ընտանիքներին, առավել շատ՝ զոհվածների ընտանիքների երեխաներին, բայց դրանց կողքին կան այլ խնդիրներ: Տարիներ առաջ կրթված լինելը դիտվել է որպես սոցիալական բարձր կարգավիճակի կարևոր նախապայման: Այսօր «կրթվում» են բոլորը, և ամեն տարի մեր շրջանավարտները հայտնվում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մինչ այդ դպրոցական նստարանին նստած աշակերտի ծնողը մտահոգ է նաև. արդյո՞ք կկարողանա կարգավորի իր երեխայի կրթության խնդիրները, չէ՞ որ տարեկան վարձավճարներ կան բուհում, իսկ ընտանիքում նա ունի այլ երեխաներ, և հնարավորություն ունի բավարարելու միայն կենսական նվազագույնը:

Մեզ մոտ տարիների վաստակ ունեցող մանկավարժն էլ հարկադրաբար է անցնում կենսաթոշակի: Իր «ծերությունը» հանգիստ վայելելու փոխարեն՝ հայտնվում է ծայրահեղ անապահով վիճակում՝ չնչին թոշակով: Բնականաբար, նման իրավիճակները չեն կարող իրենց բացասական հետևանքները չունենալ այնպիսի ընտանիքներում, որտեղ դպրոցահասակ երեխաներ կան, հետևաբար այդտեղ «հացի խնդիր» կա և սոցիալական անհավասարության կնիքն է դրված:

Նախկինում ընտանիքի բոլոր անդամները, բացի երեխաներից, մասնակցում էին ընտանիքի տնտեսվարման գործերին: Այսօր, սակայն, այդ հարաբերությունները որոշակի փոփոխությունների են ենթարկվել: Երեխան առանձին ընտանիքներում գերիշխող դիրք ունի և մասնակցում է ընտանիքի ծախսերի վարման գործընթացին:

Ծնողին տեղեկացրի, որ միայն իր երեխան դասարանում չի մասնակցել Մուրացանի «Ռուզան» դրամայի ներկայացմանը: Նա մտորումների մեջ ընկավ, բայց նաև շատ հանգիստ պատասխանեց. «Երևի դա մեզանից է գալիս՝ մեր ընտանիքից, վերջերս էլ փող չտվեց, որ հաց առնենք, փողային հաշիվները տանը ինքն է վերահսկում»:

Բնականաբար, նման իրավիճակում հայտնված ծնողը պետք է գիտակցի, որ ներընտանեկան հարաբերություններում ստեղծված սխալ դրվածքը պետք է ժամանակին կանխել, այլապես նման հիվանդագին երևույթները շարունակական են լինելու և վնասակար այդ երեխայի համար:

Հիշենք, որ անվիճելի է ծնողների դերը երեխաների դաստիարակության գործում, ծնողներն են նրանց առաջին դաստիարակները: Հետևաբար, նրանց վարքագծից, փոխհարաբերություններից, ներընտանեկան մթնոլորտից են էապես կախված երեխայի դաստիարակության բովանդակությունն ու ձևերը:

Մի օր լսում եմ. «Գլուխը պատովն է տվել ձեր ուսուցիչը, որ այդքան տնային աշխատանք է հանձնարարել...»: Գուցե նաև որոշակի ճշմարտություն կա այդտեղ դժգոհելու (խոսքը տնային առաջադրանքի ծավալի մասին է), բայց այդ ուսուցչի վարկանիշն ընկնում է աշակերտի աչքում, չէ՞ որ ծնողը երեխայի համար հեղինակություն է, ավելին՝ նա օրինակելի կերպար է, որի խոսքն արժեք ունի: Դրանից հետո հասկանալի է, որ այդ աշակերտը չի ընդունի իր ծնողի կողմից հերյուրանքների արժանացած ուսուցչի դիտողությունները: Նա արդեն վեճի է բռնվելու նրա հետ, հակադրվելու է նրան, չէ՞ որ դեռահասները շուտ բռնկվող են և շատ ժամանակ չեն կարողանում զսպել իրենց վայրկենական ապրումները մարդկանց ու երևույթների նկատմամբ: Երբեմն ուսուցիչն էլ չի գիտակցում իր սխալը, նա չի կարողանում կառավարել իր հույզերը և տեղիք է տալիս վարքի սխալ դրսևորման, դիմում է ագրեսիայի պաշտպանական հակազդմանը՝ անցնելով հակահարձակման:

Չմոռանանք, որ դպրոցի ջանքերը միայն այն դեպքում կտան արդյունք, երբ նրա հետ համագործակցեն ընտանիքն ու հասարակությունը: Ընտանիքը դպրոցի ամենամերձավոր օգնականն է, որովհետև այնտեղ է դրվում երեխայի վարքի ու բնավորության, այդ թվում նաև գիտակցական կարգապահական հմտությունների ձևավորման հիմքը: Որպեսզի դպրոցում դաստիարակության գործը լինի արդյունավետ, ուսուցիչները պետք է մոտիկից իմանան ընտանիքների մասին՝ ընտանեկան պայմանները, նյութական ապահովվածությունը, կուլտուրական մակար-

դակը, ընտանիքի անդամների հարաբերությունները միմյանց և ուրիշների հետ, իմանան՝ ո՞վ է զբաղվում երեխաների դաստիարակությամբ, ո՞վ ավելի շատ ազդեցություն ունի նրանց վրա, ծանոթ լինեն ծնողների մանկավարժական պատրաստականությանը, տեղյակ լինեն դաստիարակության դրվածքին ընտանիքում, իմանան ծնողների և երեխաների անհատական առանձնահատկությունները և այդ ամենի հիման վրա որոշեն յուրաքանչյուրին ներկայացվող պահանջները, նրանց նկատմամբ ցուցաբերեն տարբերակված մոտեցում, առանց որի հնարավոր չէ հաջողությամբ իրականացնել անձի ձևավորման գործընթացը:

Ճշմարտությունը թույլ է տալիս ասելու, որ դպրոց-ընտանիք կապի շնորհիվ տեղի է ունենում նաև ծնողական հասարակության, այսպես ասած, յուրատեսակ կրթության գործընթաց: Եվ այսպիսի կապի շնորհիվ է, որ ավելի ամբողջական ու սահուն կարող է ընթանալ նաև ազգային ինքնության արժեքների՝ ազգային հպարտության, մշակութային արժեքների ամրապնդման, քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորման գործընթացը: Ընտանիք-հասարակություն-դպրոց փոխադարձ կապի և ճիշտ գործելակերպի շնորհիվ է, որ կարելի է կանխատեսել լուսավոր ապագա, սերնդի համալիր դաստիարակության արդյունք, իսկ դպրոցի վարած ռազմավարությամբ, առողջ ընտանիքների թվով է ուրվագծվում հասարակության պատկերը:

http://usarmenianews.com/am-n-3856.html

13.06.2016

ՈՐՔԱՆ ԷԼ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԼԻՆԻ, ՍԱ Է ԻՄ ԱՆՈՒՆԸ

Դասերն ավարտվել են, իսկ ես մտովի նորից իմ աշակերտների հետ եմ: Որքան մտերիմ, նույնքան հարազատ էինք իրար, բայց պատերազմը բաժանեց մեզ, հետո՝ ամառային արձակուրդ, բաժանման ու կարոտի մի նոր զգացողություն:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների առանցքում միշտ էլ փորձել եմ վեր հանել աստվածային գեղեցիկն ու կատարյալը: Այդ ճանապարհին չգիտեմ ինձ որքանով է հաջողվել, բայց որպես անհատականություն՝ կարծես մի պահ դարձել եմ գեղագետ, վեհացել իմ սաների գրավոր շարադրանքներում արտահայտած զգացմունքների հարստությամբ ու բարոյական դասերով, երբեմն ցանկացել եմ արվեստագետի զգացողությամբ ու հոգեկան արժեքների գիտակցումով նրանց խոսքերով դրվատել մարդկային լավագույն արժեքների գեղեցկությունը, նույնիսկ եղել են պահեր, որ փորձել եմ գտնել սովորականի մեջ անսովոր դարձած երևույթը, որն ինձ ավելի է մոտեցրել իմ աշակերտներին:

«Արցախի զավակ»: Մտքումս մի քանի անգամ կրկնում եմ 12-րդ դասարան փոխադրված իմ աշակերտի՝ Դավիթ Հարությունյանի այս նոր փառահեղ անունը, և հպարտությունն ու բերկրանքը հոգումս միաձուլվում են իրար:

«Այն աշխարհը, որտեղ կցանկանայի ապրել ես... Մի՞թե կա մեկ ուրիշ աշխարհ, որտեղ կուզեի ապրել, երբ Արցախն իմ բնօրրանն է, օթևանն ու հանգրվանը: Ես այստեղ եմ ծնվել, իմ շագանակագույն աչքերն առաջին անգամ նրա հրաշագեղ բնությունն են տեսել, նրանով զմայլվել: Սիրտս առաջին անգամ այստեղ է բաբախել, հոգիս՝ այստեղ թևել: Եվ իմ արմատները ոգևին կառչած են պատմական հայրենիքիս՝ Գանձասարի, Տիգրանակերտի, Դադիվանքի, Շուշիի, Ամարասի սուրբ հողին: Իմ հոգին վեհ է, սավառնում է կապույտ երկնակամարում, քանզի նա հայ է, արցախցի: Ես գիտեմ նաև, որ Աստծո աջը միշտ մեզ հովանի է եղել, նույնիսկ կարծում եմ՝ նա էլ արցախցի է»:

Այս տողերն ախորժալուր են հնչում ինձ, շատ դուրեկան, հուզականորեն վարակիչ, սովորական հնչողություն ունեցող բառեր, բայց իրար կողքի դրված՝ զգում եմ այդ բառերի բույրն ու հրապույրը, իսկ դրանց արտացոլանքում երևում է առարկայական օլիմպիադաներում և ասմունքի մրցույթներում բազմաթիվ անգամ մրցանակների արժանացած իմ աշակերտը՝ խոհուն, շատ լրջմիտ, նոր երազանքներով լեցուն: Ու նորից ես անցած օրերի հետ եմ, երբ ասմունքի մրցույթի ՀՀ եզրափակիչ փուլում նա 2-րդ մրցանակային տեղ էր զբաղեցրել:

«Ես չեմ պատկերացնում, որ կկարողանամ ապրել ուրիշ երկրում, բայց կցանկանայի միշտ լինել իմ պատկերացրած Արցախում, որտեղ լույսն է տիրում, բարին՝ թևածում: Մի աշխարհ, որտեղ մարդիկ երջանիկ են ու համերաշխ: Իմ այդ նոր Արցախում պատերազմ չկա, խաղաղության նվագի տակ է մարդն արարում, այդտեղ չկան նաև պապենական օջախները լքողներ...Բայց ես երկար չեմ էլ կարողանում մնալ իմ երազած Արցախում, երբ գիտեմ, որ հայրենիքիս սահմանները դարեդար վտանգված են եղել, բայց նաև՝ անհաղթ, և դրանք գծվել են մեր հերոս պապերի արյունով, իսկ այժմ, եթե հարկ լինի, Արցախիս սահմանները կվերագծվեն նաև իմ արյունով»:

Չնայած հուզվում եմ, բայց վերջին տողը նորից եմ ընթերցում, հիացած և հպարտության զգացումով հիշում եմ այն օրերին իմ առջև նստած վաղվա զինվորին և մտովի առ Աստված ուղղված աղոթք եմ մրմնջում...

http://hayernaysor.am

14.06.2016

ՄԻ՛ ՊՂՏՈՐԵՔ ՄԵՐ ՎԻՐԱՎՈՐ ՀՈԳԻՆԵՐԸ

Ոչ շատ հեռու օրերում է եղել հրետակոծվող Մարտակերտը, սարսափի դրոշմը դեռ չի անցել մեր բոլորի հոգուց, հետքերն էլ չեն անցել պատճառած մեծագույն մարդկային կորուստների ու ավերված բնակավայրերի: Հոգիդ դեռ ցնցվում է անցյալ օրերի ցավալի հիշողություններում, ապրածդ օրերի վերհուշի մեջ նորից տեսնում ես հայի անկոտրում կամքը, որ նորից վերադարձել է իր հարազատ օջախը, նորից արարում է, որ ապրի, ինչքան էլ սարսափելի լինի թշնամու դաժան հայացքի տակ մեր ապրելու իրավունքը:

Չգիտեմ՝ զարմանա՞մ մեր այս տեսակից, որ չենք ուզում լքել մեր օջախները, ապրում ենք անորոշ ու անհասկանալի ինչ-որ սպասումով, երկարատև խաղաղության ակնկալիքով, նույնիսկ երբեմն մոռացած, որ այն օրերին ապրելու համար Աստծուց փրկություն էինք խնդրում: Երբեմն մենք էլ ծիծաղում ենք ու այդպես ծիծաղով նորից վերապրում մեր անցած օրերը, նորից արտասվում ենք ու նորից այդ արցունքներին շաղախված ծիծաղի մանրիկ հատիկներով ժպտում ենք ու փառք տալիս Աստծուն, որ ապրում ենք:

Բնակավայրս նորից շնչում է, բնակիչներս երբեմն հոգոց ենք քաշում, որ սահմանին այնքան մոտ լինելով՝ ոչ մի արտոնությունից չենք օգտվում: Բայց ո՞վ է ասում, որ պատերազմ տեսած այս փոքրիկ բնակավայրը «կարիք» ունի այդ արտոնություններին, երբ ապրել գիտենք, որքան էլ մեզ վրա թափվող արկերի խուլ արձագանքները մեր հոգում զգանք: Երևի այդ ապրելու համառ կամքն է ոմանց պարտադրում, որ այս ցավալի ապրումներից հետո մեր աշխատավարձերից առաջարկեն պահումներ կատարել գումարային տեսքով, որ օգնենք նրանց, ովքեր սահմանին մեր խաղաղությունն են ապահովում:

Մեր վիրավոր հոգիները աղաղակում են այս օրերին, մեր ապրած ծանր օրերի վերհուշը դեռ չի անցել, ամեն մի ձայնից դեռ վեր ենք թռչում խուլ հառաչանքով, անանուն հիվանդություններ ունենք մեր սրտում... Գուցե մարտակերտցիներիս պետք չէր «ձեռք տալ», և ուզում եմ բոլորիս անունից բարձրաձայն ասել՝ թողե՛ք ապրենք մեր հոգս ու ցավով, մի՛ վիրավորեք մեր վիրավոր հոգիներին, որտեղ հետքեր կան սարսափի, մի՛ պղտորեք մեր հոգիները, որ մտածենք, թե այս ցեխոտ ու փոշոտ բնակավայրում մեր ապրելն էլ գումար արժե, և պիտի վճարենք մեր այս խաղաղ օրերի համար:

http://usarmenianews.com/am-n-3865.html

18.06.2016

ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԱՐՑԱԽՑԻՆ ԹՈՂՆԻ ԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Հոգիս դատարկվում է, երբ լսում եմ, որ իմ կողքին ապրող արցախցին թողնում է իր բնակավայրը, որտեղ մարդը ծնվել, ապրել ու արարել է տարիներ շարունակ: Ուզում եմ հոգումս ծանրացած այս ցավը բարձրաձայնել ամենուր, ուզում եմ ասել՝ ինչո՞ւ հերթը մեզ էլ հասավ, այս փոքրիկ երկարամասի բնակիչներին: Ընդամենը չեմ ուզում իմ կողքին ապրող արցախցին հեռանա այստեղից, ես չեմ ուզում նրանք տեղափոխվեն մեկ այլ վայր, որտեղ խաղաղ է կյանքը, որտեղ կարոտը հայրենի եզերքի հանդեպ սպանում է մարդու հոգին: Ես չեմ ուզում իմ դասավանդելիք դասարաններում դպրոցական նստարանները թափուր տեսնել և երանի եմ տալիս մեր այն օրերին, երբ ձմեռային ցրտին դասարանների վառարաններից հետ տվող ծխից մեր արցունքոտված աչքերն էինք տրորում, կամ երբ այդ նույն ցրտին դպրոցի միջանցքում բացատրում էի կիսատ մնացած դասանյութի շարունակությունը, և քիչ էր մնում ձեռքիս ափի մեջ գրեի խոսքս, որ ասածս հասանելի լիներ իմ շուրջը հավաքված աշակերտներին:

Ես երանի եմ տալիս այն օրերին, երբ սահմանից եկող կրակահերթերի արձագանքների տակ իր ծննդյան օրն իմ աշակերտուհին արտասվալից աչքերով հայրենի եզերքի սերը երգեց:

Սահմանի մոտ հրետանային կրակոցներ էին, իսկ սահմանից ոչ շատ հեռու դասարանի մյուս աշակերտներն էլ սկսեցին ձայնակցել հոբելյարին: Ես կարոտում եմ այն օրը, երբ ի զարմանք ինձ՝ իմ աշակերտուհին ասաց, որ սիրում է զինվորական համազգեստը և ուզում է դիպուկահարուհի դառնա, որ լրացնի հայոց բանակի շարքերը:

Այդ օրերին ոչ ոք չէր մտածում Արցախը թողնելու մասին, այդ օրերին ավելի ամուր էինք կանգնած մայր հողին: Ի՞նչը փոխեց իրավիճակը…Ապրիլյան պատերա՞զմը, թե՞ շրջապատի խարդավանքները, բաց լուսամուտնե՞րը դեպի օտար եզերքներ, որ ազատ իրավունք ունի յուրաքանչյուր ոք թողնի այս ճաքճքած հողը…Գուցե լավ կյանքի երազա՞նքը, թե՞ օտար բարքերը, որ մերոնք էլ սկսել են կարոտել: Իսկ ես կարոտում եմ իմ անցած օրերը, երբ իմ աշակերտներին հարցրի, թե որտեղ կցանկանային ապրել, շատ–շատերը զարմացած ինձ նայեցին, որ

մի՞թե Արցախի կողքին կա մի ուրիշ աշխարհ, որին կարող էին նախապատվություն տալ:

Ես կարոտում եմ իմ աշակերտուհու սրտառուչ տողերին. «**Որտեղ էլ լինեմ, գիտեմ, որ Արցախն իմ աստղն է, առանց որի ապրել չեմ կարող, և ուր էլ գնամ, կհասկանամ, որ «Ամենից սիրուն, լավ տունը, որ կա, էս գորշ խրճիթն է, Էս հին խրճիթն է, գետի եզերքին, Ծառերի տակին», ու կշարունակեմ ապրել իմ հայրենի հողում՝ ականջս սահմանային կրակոցների ձայնին, հոգիս՝ տագնապով լեցուն»:**

Հոգիս տխուր է, ես չեմ ուզում բնավեր դառնա իմ ժողովուրդը և արդեն կարոտում եմ նրանց, ովքեր պիտի հեռանան այստեղից...Ցավոտ է, բայց կարոտս անուններ ունի...

http://usarmenianews.com/am-n-3921.html

19.06.2016

ԴԵՌ ԱՅՆ ՕՐԵՐԻՆ ԷԻ ԱՐՏԱՍՎԵԼ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ՀՈԳԻՍ ԹԵԹԵՎԱՆԱՐ

Երևի ինձ պետք էր մեկը, որ հեռավոր օտար ափերից գրեր այսպիսի հուզումառատ խոսքեր, և ազատություն տայի արցունքներիս, որ ինքնաբուխ սկսեցին թափվել այս տողերը կարդալուց հետո. **«Սիրելի՛, քանզի սիրելին քիչ է՝ իմ աչքի լույս ՆԱՏԱՇԱ՛ ջան, եթե չեմ գրում, մի՛ կարծիր, թե ոչնչից տեղյակ չեմ: Պարզապես կարծես թե արյունս է սառել երակներիս մեջ: Քառօրյա պատերազմում կորցրած այն 100 անձնուրաց երիտասարդների կորուստը հանգիստ չի տալիս, ուզում եմ մի անբացատրելի ուժով թևեր առնել ու սավառնել անծայրածիր տիեզերքով մեկ, պատռելով թանձրախիտ ծալքերը՝ գտնել մեր ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՏԻՐՈՋԸ և հայտնել ԱՋԳԻՍ ցասումը՝ գիշատիչ թշնամու հանդեպ...**

Սիրելի՛ Նատաշա, դու և իմ հայրենակից արցախցիներդ հերոսներ եք, անառի՛կ մնացեք, կարծում եմ կգա այն պանծալի օրը, որը մենք ենք երազում: Ես միշտ եմ լինում քո կայքում և հիացմունքով եմ կարդում գրեթե բոլոր նյութերը, իհարկե, եթե առողջություն ներում է...

Սիրելի՛ս, քեզ ընթերցելով՝ ես հագենում եմ և, միևնույն ժամանակ, անուշ վերապրումներով հիշում անցյալս: Կարոտներով ու համբույրներով ցգրություն...»:

/Եվգենյա Աղամալյան, ՌԴ, ք.Սոչի/

Այո՛, ես արտասվում էի…Երևի այն քառօրյա պատերազմի և հետագա ապրիլյան հրետակոծության սարսափի հետքերը կային այդ արցունքներում, որ զսպված պահել էի այն օրերին, որպեսզի թույլ չերևայի իմ ընտանիքի, առավելապես յոթ տարեկան թոռնիկիս կողքին, երբ խոնավ ու գարշահոտ նկուղում անցկացրինք մեր օրերը բնակավայրիս հրետակոծության օրերին: Այս արցունքները պիտի ժայթքեին այն օրերին, երբ ահուսարսափի քողը երեսիցս քաշելով՝ փոքրիկ թոռնիկիս բացատրում էի, որ այդ մերոնք են հրետակոծում, հանկարծ չվախենա մեր բալիկը, ու այդպես մեզ խաբելով՝ օրեր էինք լուսացնում՝ մի նոր արշալույսի սպասելով: Այդ արցունքներում մեր սահմաններին անմահացած և հավերժության ճանապարհն ավետող զինվոր տղաների վերջին հառաչանքների հետքերը կային, որ հավաքել էի բոլորից անտես, բռունցք

դարձրել, որ պատնեշ դարձնեմ թշնամու սադրանքներին:

Ես համեստության քողը մի կողմ եմ դնում, որպեսզի կարողանամ դիմադրել ճակատագրի հարվածներին: Եվ ո՞վ է ասում, որ պիտի ամաչեմ հոգիս թեթևացնող այս արցունքների համար, երբ կողքիս երբեմն վիատված ու այս կյանքից հոգնած մարդիկ եմ տեսնում…Ո՞ւմ մեղադրեմ, երբ արկերի ահուսարսափն այս օրերին չկան, բայց մարդկանց հայացքներում անհանգիստ ապրումներ են, և իրենց երեխաների վաղվա օրը մի ուրիշ երկրում են տեսնում:

Երբեմն լռում եմ, փորձում հոգիս կեղեքող անհանգիստ ապրումներս խեղդել ներսումս, երբեմն ուզում եմ աղաղակել, որ սա այն աշխարհն է, որտեղ հետքեր կան արյան, սա այն երկիրն է, որտեղ ցասում կա, ըմբոստ ոգի, սահմանին կարգնած զինվոր տղերք կան, որ պիտի լինենք ու հավերժ կանգնենք նրանց թիկունքում:

Ես միայն այստեղ եմ կարողանում ապրել, միայն այստեղ եմ կարողանում մարդկանց ժպտալ, սա այն երկիրն է, որտեղ լիաթոք շնչում եմ, սա այն երկիրն է, որ այսօր ինձ, ի տես բոլորի, թույլ տվեց, որ ազատ արտասվեմ, և այս ազատությունը գրկած՝ ուզում եմ պատնեշ դառնալ բոլոր այն արցախցիներին, ովքեր ուզում են հեռանալ այս սուրբ հողից…

Այստեղ հետքեր կան ապրելու կամքի, ոգի կա հերոսացման, խավարից հետո՝ լույսի ստվերներ, ջինջ առավոտներ կան, որ պիտի գրկենք ու ապրենք այսպես, թեկուզ վախվորած, բայց երանության մեջ, որ ապրել գիտենք, հենց այսպես ապրել…

http://usarmenianews.com/am-n-3929.html

20.06.2016

ԱՄԵՆ ՕՐ ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ ԽԱՂԱՂ ՈՒ ՀԱՂԹԱԿԱՆ ՀԵՌՈՒՆԵՐՆ ԵՆ ՈՒՐՎԱԳԾՎՈՒՄ

Դպրոցականների ամառային արձակուրդի այս օրերին ինձ հեռացած եմ զգում իմ աշակերտներից, կարոտի զգացումը մի պահ տեղի է տալիս մի նոր անհանգստության՝ տեսնես որտեղ են նրանք, միայն թե որտեղ էլ լինեն, նորից վերադառնան, նորից թափուր նստարաններ չլինեն դասարաններում: Ես այս օրերին արդեն սկսում եմ կարոտել մեր ստեղծած ուսուցչի և աշակերտի այն յուրահատուկ աշխարհը, որտեղ ամեն օր հայրենի եզերքի խաղաղ ու հաղթական հեռուներն էին ուրվագծվում: Եվ այդ դպրոցական կյանքն այս օրերին էլ դառնում է ինձ համար մի առանձնահատուկ աշխարհ, գուցե և դժվար, բայց նրբություններով ու անակնկալներով, նոր բացահայտումներով հարուստ, որտեղ ամեն օր ուսուցչի և աշակերտի հարաբերություններում մի նոր դիմագիծ էր ձևավորվում, որով էլ գեղեցկանում և ստեղծվում էր ուսումնական մտերմիկ միջավայր, իսկ մանկավարժիս արվեստը հրապուրիչ էր դառնում, երբ խոր մարդասիրությունն ու աշխարհը գեղագիտորեն ընկալելու և այն սերունդներին մատուցելու հակումը դառնում էր սկզբունք:

Նայում եմ նրանց նկարներին. այս մեկը շատ սիրուն է՝ 12-րդ դասարան փոխադրված աշակերտուհիները դասղեկ Նոնա Հայրապետյանի հետ են: Հպարտությամբ ընթերցում եմ տարբեր դասարանների աշակերտների՝ նախորդ օրերի գրած մտքերը: Մեկ նախադասությամբ արտահայտված հայրենիքի կերպարով իսկ ամբողջանում է ապրած միջավայրը, կենտրոնում հայտնվում է նաև այն հասուն սերունդը, որը հայրենիքն է զգում իր մեջ, իր ներսում է տեսնում նրան, իր ապրումնե-

րի մեջ, այն աշխարհում, որտեղ գոյություն ունի նա: «**Հայրենիքն ինձ համար դարձել է կնիք, ուր էլ գնամ, նա ինձ համար այն միևուճարն է, որին սիրում եմ ես**» /Գասպարյան Էդիտա/: «**Մի փոքրիկ տիեզերք է իմ հայրենիքը, մի մոլորակ, որտեղ գերի է իմ հոգին**» /Կարապետյան Սյուզաննա/: «**Այս կյանքում ամենակարևորն այն է, որ ես հայրենիք ունեմ, նրա հոգին իմ ոգին է, նրա ճակատագիրն իմ ճակատագիրն է, նրա տառապանքն իմ թախիծն է, նրա ծաղկումը՝ իմ ուրախությունը**» /Բաղրյան Իննա/: «**Այն արդար ցորենի արտն է իմ հայրենիքը, որ դարեր շարունակ տրորվել է օտար այրուձիների սմբակների տակ, այրվել հրդեհից ու երաշտից, և որից փրկված մի բուռ ցորենը հասել է մեզ, դարձել հաց ու բարիք**» /Արզումանյան Լադա/: «**Հայրենիքն ամեն ինչ է ինձ համար, չլինի իմ հայրենիքը չեմ լինի նաև ես, նա իմ օդն է, իմ ջուրն ու հոգին, իմ տունն է նա, իմ ընտանիքը, ամե՜ն-ամեն ինչ**» /Սահյան Մարիետա/: «**Հայրենիքն ինձ համար հայրիկիս և նրա նման հայորդիների ազատագրած հողն է, որն անչափ սիրում եմ ես**» /Ստեփանյան Իննեսա/: «**Իմ հայրենիքը սահմանին մոտիկ այն տարածքն է, որտեղ այնքա՜ն ճշմարտություն կա և այնքա՜ն շատ հպարտություն, երազանքներիս աշխարհն է իմ հայրենիքը**» /Հայրապետյան Գայանե/: «**Իմ հայրենիքը հայոց սահմանն է, որ պաշտպանում է մեր հայ զինվորը, իմ հայրենիքն իմ տունն է, որին կարոտում եմ, երբ ուրիշ տեղ եմ գնում**» /Գրիգորյան Նարինե/: «**Հայրենիքս իմ երազած այն անկյունն է, որտեղ ազերիների կեղտոտ ոտնահետքերը չկան, դա իմ ստեղծած այն աշխարհն է, որտեղ երբևէ արյուն չի թափվել**» /Գրիգորյան Էդիկ/:

Այդ օրը հայրենիքը մեր աշակերտների խոսքերով ստացել էր դեմք ու դիմագիծ, իսկ ես հպարտ էի, նաև՝ համոզված, որ այն հայրենիքը, որն ապրում է բոլորիս մեջ, հավերժ կմնա՝ որպես սուրբ մասունք, որպես մարմնացում հիշողության և ազնիվ նվիրաբերումի առհավատչյա:

http://hayernaysor.am

22.06.2016

ԵՍ ԵՐԱԶՈՒՄ ԵՄ ԽԱՂԱՂՎԱԾ ՀՈԳԻ

Երբեմն հոգիս արտասվում է, երբեմն ուրախությունից վեր թռչում հանկարծ, օրերը դառնում են անզուսպ, սրտիս կցկտուր զարկերն եմ լսում, անհագ կարոտով սպասում լուսավոր օրվա…Անցած օրերի իմ դասերին էլ երբեմն հույսը գունատված էր երևում, ցավի փոշիներ էի տեսնում անցնելիք ճանապարհիս, ձմռան ցրտին երազներս փաթիլվում էին, այդ պահերին երբեմն քարն էլ ճչում էր սուր ցավից: Իսկ երբ բնության երգն էի ուսումնասիրում, երբեմն իմ ծառը չէր ժպտում, ծաղիկներն էլ տխուր էին, խաշամն էլ՝ գունաթափված….Այդ պահերին թվում էր՝ երկնի լուսատուն էլ արտասվում էր՝ չարիքի դեմ հառած իր անզորությամբ:

Հոգուս ալեկոծության պահերին ուզում եմ գրկել մի բառ, որ ինքնին լույս է արձակում, այդ լույսն ուզում եմ դարձնել առկայծող ճրագ, հույսով սպասում, որ լուսաբերը մի նոր արշալույս կավետի, նորալուսինը՝ մի նոր արևածագ, վերջալույսը օրվա ավարտին կժպտա ուրախ, լուսնաթաթախ կդառնա անցնելիք ճամփաս, ամենուր կցանվի լույսը՝ մի նոր խաղաղ ու լուսավոր կյանք ավետելով: Իմ ստեղծած աշխարհում ամենուր ուզում եմ կանաչ լինի, լեռները թռչեն ուրախ, աստղերը՝ ժպտան, առուները կարկաչեն, անգամ ձյունի ծիծաղը լսելի դառնա: Ամեն անգամ հուզախառով հոգիս ամուր գրկում է այդ լուսավոր կյանքը, որպեսզի դիմադարձ լինի ցավոտ օրերիս, որտեղ անկյանք մի կյանք կա, տխուր հառաչանք, հավատի կորուստ, մի մեռած հոգի:

Անցած օրերիս էլ իմ գունաթափված օրերի ցավի փոշիներն էի հավաքում, որ կարողանայի մեր վաղվա երջանիկ հեքիաթը հյուսել: Անցյալի դառն օրերի հուշերի փոշին սրբում էի այդ օրերին, որ նորերի հետ խնամքով զետեղեմ ցավի հուշամատյանում: Խնդրում էի Աստծուն՝ ամենուր լույս տա և գիշերային լռության մեջ մտովի աստղազարդ երկնքին ամեն օր «խաղաղություն» էի ասեղնագործում, որ արշալույսները նորովի բացվեին: Եվ եթե հանկարծ ամպի թելեր էի տեսնում երկնքում, դողում էր սիրտս, տրոփում անձայն, իսկ երբ հանկարծ թախծի շիթեր էին երևում նորից, իմ ցավոտ հոգին քրքրված մի փոքրիկ արև էր փնտրում: Եվ լուսաբացին արևի թախծոտ աչքերն էի ես կամաց շոյում, իսկ կեսգիշերին ձեռքերս էի պարզում աստղի թևերին: Իմ ցավոտ հոգին այս օրերին էլ ուզում է անվերջ լույսեր տարածել… Խավարի միջից աստղերն եմ հաշվում, ծիծաղն եմ գրկում արևոտ օրվա, ջինջ առվակների կարկաչն եմ լսում, մտքիս ճախրանքը՝ լռին ու խոսուն…Ես երազում եմ խաղաղված հոգի, մարած ժպիտներ չեմ ուզում կյանքում, ուզում եմ դրանց կենդանություն տալ, որ կարողանամ ծիծաղի մանրիկ կտորներ ցանել:

http://usarmenianews.com/am-n-3953.html

22.06.2016

ԱՅՆ ԱՇԽԱՐՀԸ, ՈՐՏԵՂ ԵՍ ԿՈՒԶԵԻ ԱՊՐԵԼ

Այսում եմ մեր դպրոցի շրջանավարտ Իրինա Վանյանի լուսանկարին, հիանում նրա գեղեցկությամբ, նաև հիշում այդ սիրուն և համեստ աշակերտուհու՝ օրեր առաջ գրած ոգեղեն տողերը, որ հպարտության զգացումով էր լցրել հոգիս: Այդ օրը մի ներքին ձայն ինձ հետ էր պահում նրանից, բայց ուզում էի հիացմունքով պինդ գրկել ու բերկրալից խոսքեր շռայլել նրան: Այդ պահին իմ հայացքում նա, իր գրած տողերին զուգընթաց, կերպարանափոխվում էր. «**Չեմ կարողանում պատկերացնել, թե ուրիշ որ աշխարհում ես այսքան ազատ կլինեմ ինքս ինձ հետ, երբ իմ հայրենիքը ես եմ: Իսկ ես իմ հայրենի լեռներից հոսող սառնորակ ջրերից եմ ծարավս հագեցնում, այս լեռներից եմ ես ուժ ստանում: Այդ լեռներով շրջապատված մի փոքրիկ հողակտոր է իմ երկիրը ու այդ գողտրիկ հողում ծվարած է լեռներին կառչած, արծվի պես խրոխտ մի բուռ ժողովուրդ: Կապույտ երկնքից է կախված երկիրս վեհապանծ: Իմ հարազատ աշխարհն է նա, այստեղ եմ ես ծնվել, այստեղ էլ կապրեմ: Անգամ իմ երազած աշխարհն էլ արյունով հեղված այն երկիրն է, որտեղ ես կամ»:**

Այն օրերին ծնված մտահղացումը՝ իմ աշակերտներին ևս հանձնարարել գրելու շարադրություն, թե որ աշխարհում կուզենային ապրել, մի ներքին մտավախության հետ նաև վստահություն էր ծնել հոգումս, որ մեր աշակերտները երբեք չեն «դավաճանի» այն համոզմունքին, որը հաստատուն ապրում է յուրաքանչյուր արցախցու հոգում: Բոլորս էլ գիտենք, որ հայրենիքը մեկն է, ու այդ հայրենիքը մենք ենք, որ կանք. «**Իմ ժողովուրդը երբեք չի հոգնում, արարում է նա, ապասում ու հավատում, նա հավատում է, որ պիտի դարեր շարունակ մեր հայրենիքը ապրեցնենք: Իսկ ես իմ երկրի մի մասնիկն եմ, որտեղ էլ լինեմ, իմ սիրտն այստեղ է՝ այս երկնքի տակ: Այստեղ են իմ երազանքները, իմ անցյալն ու ներկան, իմ ուրախությունն ու տխրությունը, իմ ընտանիքը, ընկերներս ու ես...առանց ինձ ես ո՞ւր գնամ»:**

Մտովի հիացմունքով գրկում եմ իմ աշակերտուհուն, բայց նաև հավատում, որ առավել ևս այս պատերազմական դաժան օրերից հետո «Այն աշխարհը, որտեղ ես կուզեի ապրել», մեզանից յուրաքանչյուրի համար պիտի լինի մեր այս հիասքանչ երկիրը, որին կոչում են Արցախ:

http://hayernaysor.am

24.06.2016

ՍԱՀՄԱՆԻՆ ՄՈՏ ԼԻՆԵԼՈՎ՝ ԽԱՂԱՂ ԼՈՒՍԱԲԱՑՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԵՍ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

«Ես հիմա քմծիծաղով եմ տեղեկանում «քաղքենի» աշխարհի խնդիրներին ու ձգտումներին, երբ սահմանին այնքան մոտ եմ ապրում»:

Ընթերցում եմ փոքրահասակ, բյուրեղյա մաքրությունն իր հոգում կրող, մի անսովոր հեզիկ կերպարի մեջ ամփոփված իմ 11-րդ դասարան փոխադրված աշակերտուհու օրեր առաջ գրված տողերը: Սա մարտահրավե՞ր էր՝ ուղղված ամբողջ աշխարհին, թե՞ արցախդստեր հոգում ծնված հպարտության զգացումն էր թև առել՝ գիտակցելով, որ սահմանին այնքան մոտ ապրողին քաջություն է պետք և միահամուռ աղոթք:

Վերջին օրերի ցավալի իրադարձությունների հետ կապված՝ փորձել էի տարբեր դասարաններում իմ առջև նստած աշակերտների արձագանքները լսել: «Սահմանի մոտ», միանգամից ծնվել էր վերնագիրը:

Եվ ահա նորից ու նորից թերթում եմ տետրերը... Գիտեի, որ շատ տխուր, այդպես ցավոտ էլ պիտի ծնվեին մտքերը...

Շարունակում եմ ընթերցել աշխարհի խնդիրներին քմծիծաղով տեղեկացող իմ աշակերտուհու՝ Սեդա Գրիգորյանի հուզումնառատ տողերը. «**Սահմանի մոտ բոլորիս տեսանելի է, որ փոքրիկ քաղաքիս ամենօրյա աղմուկը երբեմն անընդմեջ աշխուժանում է, շիկանում: Շտապօգնության մեքենաները արագ երթևեկում են այս ու այն կողմ: Ուրեմն ինչ-որ տեղ, ինչ-որ բան այն չէ...Քարձրահասակ շենքի մեր պատշգամբից լարումով հետևում եմ հիվանդանոցի մոտ հանգրվանած այդ մեքենաներին: Հիմա էլ սպիտակ խալաթներով բժիշկներն ու քույրերն են շփոթված դեսուդեն վազվզում: Պարզ է՝ վիրավորներ ունենք: Այդ պահին ցաքուցրիվ մտքերս միահամուռ աղոթք են դառնում՝ տե՛ր Աստված, պահպանի՛ր մեր զինվորներին: Ամեն զինվորի կորստի հետ խավարում է մեր հոգու մի մասը: Մեկիկ-մեկիկ հանգչող մոմի պես ամեն կորստի հետ խավարում է նաև մեր կյանքը...**»:

Ընդհատում եմ ընթերցումս, սիրտս ճաք է տալիս ցավից, երանի՜ թե աշխարհը հասկանար մեր հոգու կսկիծը...

http://hayernaysor.am

25.06.2016

Մանկավարժը պետք է երեխային վերաբերվի այնպես, կարծես նա հենց այնպիսին է, ինչպիսին կուզենար նրան տեսնել:
Լ. Վիգոտսկի

ՄԵՆՔ ՄԻՇՏ ԷԼ ՈՒՆԵՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՏԵՍԱԿԻ ԽՆԴԻՐ

Մանկավարժության մեջ հաճախակի ենք նկատում, որ տվյալ իրավիճակին բոլորը միատեսակ չեն մոտենում, հետևաբար մենք ունենք մանկավարժի տեսակի խնդիր: Մեզ ո՞վ է ասում, որ միայն իմաստասեր մարդկանց կյանքի դասերը պետք է սերտենք: Երբեմն մեր աշակերտներն էլ կարող են մեզ մի նոր դաս տալ, որը թերևս ոչ բոլոր ուսուցիչներն են ունակ ընկալելու և ընդունելու այն: Կյանքը միշտ էլ դասեր է տալիս մարդուն, և երբեք չեմ խուսափել այդ դասերը սովորելուց՝ անկախ նրանից, թե ումից եմ այն ստանում՝ իմաստասեր մի մարդուց, թե իմ առջև նստած աշակերտից:

Պատահեց այնպես, որ ես կյանքի դաս առա վեցերորդ դասարանում սովորող իմ աշակերտուհուց, ով նոր էր տեղափոխվել մեր դպրոց: Դեռ չէի հասցրել ծանոթանալ, աչքաբաց և ուշադիր աշակերտուհու տպավորություն թողեց ինձ վրա: Զարմանալի էր, որ դասանյութին համահունչ հանձնարարված տնային հանձնարարությունը չէր կատարել: Անհոգ մանկության օրերի մի հուշ, մի փոքրիկ դրվագ՝ յուրաքանչյուրի մոտ յուրովի տարբեր, ես լսում էի իմ աշակերտների ընթերցանությունից, բայց մտքերով նորեկի հետ էի, զգացվում էր, որ մի քիչ անտրամադիր էր իմ դիտողությունից հետո:

Զանգը հնչեց, նա մոտեցավ ինձ և ցանկություն հայտնեց առանձին զրուցելու. «Տիկի՛ն Պողոսյան, այն ժամանակ՝ մանկությանս տարիներին... Ես այդ օրերից լավ բան չեմ հիշում, որ գրեի»: Դուցե և իմ մեղմ ժպիտը նրան ամեն ինչ ասաց, բայց հոգումս մի մեծ ծանրություն զգացի: Սա կյանքի մի հիանալի դաս էր, որ այդ պահին նա ինձ մատուցեց իր մեղավոր, բայց նաև վիրավորված հայացքով: Ես հոգուս մեղմությունը փոխանցեցի նրան՝ համոզված, որ մենք հետո դեռ խոսելիք կունենանք: Այդ պահին ես գիտակցեցի, որ շատ հաճախ պետք չէ խորանալ անհոգ, երազային մանկության մեջ՝ մոռացած, որ երբեմն այն կարող է խաթարված լինել:

Համոզված եմ, որ այսպիսի դեպքերում տարակարծություն կարող է առաջանալ ստեղծված իրավիճակի վերաբերյալ, գուցե և այլ ձևերով կընկալվի նման երևույթը տարբեր ուսուցիչների կողմից: Ես այդ օրը կանգնեցի նաև մի այլ երևույթի կողքի, որ իրավունք չունեմ ստիպելու աշակերտին՝ գրել անհոգ մանկության մասին շարադրություն, եթե խաթարված է եղել նրա մանկությունը: Ուսուցիչն այսօր ուղղորդում է աշակերտներին դեպի գիտելիքների ծովը, նա պատրաստի գիտելիքներ փոխանցող չէ, նա չպետք է թույլ տա, որ աշակերտը շեղվի այս կամ այն գրական կերպարի կամ գրողի ճիշտ ընկալումից: Հետևաբար, երբեմն կարելի է նաև հրաժարվել դասանյութի առաջադրանքների պահանջներից:

Եթե նախօրոք իմանայի իմ աշակերտուհու ամուսնալուծված ծնողների մասին, իմ կողմից ճիշտ մոտեցում կլիներ, որ նրան մյուսներից չառանձնացնելու համար բոլոր աշակերտներին հարցնեի, թե իրենք ընդհանրապես ինչպիսին են պատկերացնում երջանիկ մանկությունը և դրա կողքին նաև կհիշեինք շատ-շատերին, ովքեր ստիպված որբանոցներում են ապրում կամ նյութական սուղ պայմանները նրանց զրկել է անհոգ մանկությունից, երևույթներ, որ առկա են այսօր ամբողջ աշխարհում:

Այս իրավիճակում մանկավարժը կանգնում է երկու իրար հակասող երևույթի առջև՝ աշակերտին չի կարող ստիպի գրելու շարադրություն, որը նրա համար ցավոտ թեմա է, բայց նաև կա մտավախություն, որ դա կարող է այդ աշակերտի մոտ տանել իրավիճակից փրկվելու միջոցի՝ ծուլության, և այն կարող է օրինակ ծառայել մյուսներին: Ես համոզված եմ, որ նման իրավիճակում ուսուցչի ուղղորդմամբ աշակերտը կկարողանա ներկայացնի թեկուզ և իր պատկերացրած երջանիկ մանկության մասին մտորումները: Բայց նաև հաշվի առնենք մի այլ երևույթ, որ երբեմն մենք կարող ենք հրաժարվել դասագրքերի առաջադրանքների պահանջներից՝ ելնելով ստեղծված հանգամանքներից:

http://usarmenianews.com/am-n-3984.html

27.06.2016

Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտներին, նա կլինի կատարյալ ուսուցիչ:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐՍ ԻՄ ՓՈՐՁՆ Է

Հիրավի, մանկավարժական գործունեության ստեղծագործական աշխատանքի ընթացքում են ծնվում ուսուցման գործընթացը կազմակերպելու հնարներն ու մեթոդները: Ու թերևս դասավանդման մեթոդների կիրառման հմտությամբ էլ ծնվում է մանակավարժի փորձը: Փորձը, ըստ էության, մանկավարժական գործունեության, ստեղծագործ աշխատանքի այն յուրատիպ բովանդակային հենքն է դառնում, որն սկսում է դառնալ ուսուցչի գործունեության անձնագիրը: Իմ մանկավարժական գործունեությունը համոզում է, որ ինքնուրույնության և ուսումնառության շարժառիթների լավագույն ձևը համագործակցային ուսուցումն է: Հայ գրականության և հայոց լեզվի դասերին մտածողության զարգացման բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցներից մեկը համարվում է ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը:

Հանրակրթության ուսումնամեթոդաբանությունը միշտ էլ բարեփոխումների ու զարգացման փուլ է ապրում: Խորհրդային ուսուցչակենտրոն մանկավարժությունից, որը հարուստ էր բարի ավանդույթներով, անցում կատարվեց դեպի աշակերտակենտրոն, անհատական զարգացման մանկավարժություն: Կարելի է ենթադրել, որ ուսուցման գործընթացի պատասխանատվությունը ավելի շատ փոխանցվում է աշակերտներին: Սակայն ուսուցչի՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի կարևորագույն դեմքի, պահանջները մնում են առաջնային: Նրա մասնագիտական պարտականությունը շարունակում է մնալ դասի բովանդակության մշակումը, ընդհանուր դասընթացին լիարժեք

նախապատրաստումը, դասը կատարելագործելու ուղղությամբ կիրառվող մեթոդների, հնարների, միջոցների ընտրությունն ու ներդրումը և այլն: Մանկավարժի իմ փորձն ունի ավանդական մանկավարժության դասական ձևաչափը, որին միահյուսված են ժամանակակից մանկավարժության կողմից առաջադրվող համագործակցային այնպիսի մեթոդներ, որոնք արդյունավետ են դարձնում հենց գրականության և հայոց լեզվի դասերի կազմակերպումը: Օրինակ, նյութի ամփոփման ու առավել ամրակայման համար հիանալի եղանակ է Վենի դիգրամի մեթոդի կիրառումը, որն ընդգծում է ինչպես գրական ստեղծագործության գաղափարական հարցադրումները, այնպես էլ վեր հանված խնդիրները, գործող գրական կերպարների առանձնահատկությունները և այլն: Ուսուցման այս մեթոդի կիրառումը գրականության դասերին ենթադրում է գրական հերոսների համեմատական վերլուծություններ, որոնք ինքնատիպ բնութագրումներով են արտահայտվում սովորողների մտածողության ու երևակայության արդյունքում:

Տարանջատվում են այս կամ այն գրական կեպարին բնորոշ ինչպես ընդհանրություններն ու տարբերությունները, այնպես էլ առանձնահատկությունները: Ըստ որում, նյութի ամրակայումն առավել լիարժեք է ընթանում, եթե համեմատություններն ու զուգորդումները կատարվում են ոչ միայն տվյալ, այլ նաև այլ հեղինակների նույն թեման արծարծող ստեղծագործություններից: Այս մեթոդն իսկապես նպաստում է ոչ միայն աշակերտների համեմատական-վերլուծական մտքի զարգացմանը, այլև ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողության ձևավորմանը: Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ ուսուցման մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ ու անմիջական մասնակցությունը: Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ ու կամայական լինել: Անհրաժեշտ է կազմել ընդարձակ պլան, որում համառոտագրվում է ուսումնասիրվող նյութի բովանդակությունը, պետք է նշել դասի ընթացքի փուլերը, դրանցում կատարվելիք գործողությունները, նշել նաև դիտազննական պարագաները, որոնք օգտագործվելու են դասի ընթացքում, այն մեթոդներն ու հնարները, որոնցով պիտի առաջնորդվեն աշակերտները: Դասի պլանում պետք է նշել հարցվող աշակերտների թիվը և այն հարցերը, որոնք

առաջադրվելու են: Դասի բովանդակության մշակման գործում խիստ կարևորվում են մանկավարժական պայմանների հաշվի առնելը, սովորողների ընդհանուր առարկայական, թեմատիկ զարգացումը, ուսուցողական, դաստիարակչական, զարգացողական նպատակներն ու խնդիրները, ուսուցվող առարկայի, թեմայի առանձնահատկությունները, ուսուցման գործընթացի արդյունավետ, ակտիվ, ստեղծագործական կազմակերպումը, սովորողների տարիքային առանձնահատկությունները, ուսուցչի աշխատանքի անհատական ոճը: Ուսուցիչը պետք է կատարի ուսուցման ձևերի, մեթոդների, հնարների ու միջոցների նպատակային ընտրություն, խթանի սովորողների ստեղծագործական կարողությունները և մղի նրանց ակտիվ ինքնագործունեության, նոր բացահայտումների, կրեատիվ մտածողության ու աշակերտական ճիշտ ինքնահաստատման:

http://usarmenianews.com/am-n-4015.html

01.07.2016

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ԻՄ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻ՛Ր ՀԱՅԱՍՏԱՆ

Դպրոցականների ամառային արձակուրդի օրերին, սովորության համաձայն, ամեն անգամ թերթում եմ իմ աշակերտների տետրերը: Շարադրության տողերը, որ գրել էին այդ օրը յոթերորդցիները, հոգուս հարազատ էին: Աշակերտուհիներից մեկը մի քիչ անվս-

տահ ինձ հանձնեց տետրը: Ընթերցանության մեջ խորասուզված՝ կամաց-կամաց դեմքիս հայտնված հիացական ժպիտը ճառագեց նաև նրա դեմքին: Քանի որ մյուս աշակերտները գրում էին դեռ, երկուսս էլ անխոս հասկացանք միմյանց. «**Ես սիրում եմ քեզ, իմ հայրենի երկի՛ր Հայաստան, սիրում եմ ամբողջ հոգով ու սրտով...Զարմացա՞ք, որ ես՝ Արցախի դուստրս, հայրենիք անվանեցի Հայաստանը: Գուցե տասնամյակներ առաջ դա անհնար էր թվում և նույնիսկ արգելված էր խոսել այդ մասին, իսկ հիմա դա իրականություն է, որի համար շնորհակալ ենք մեր պապերին ու հայրերին: Եվ ես ցանկանում եմ ամբողջ աշխարհին լսելի ձայնով գոռալ՝ ես սիրում եմ քեզ, իմ հայրենի երկի՛ր Հայաստան: Սիրում եմ քո կապուտաչյա Սևանը, քառագագաթ Արագածդ, ոսկեղենիկ լեզուդ, գրապահոց Մատենադարանդ, արևի տակ սևացած գյուղացիներիդ և ամե՜ն-ամեն ինչ: Քեզ բռունցքված ու մոր ձեռքից ամուր բռնած եմ զգում ինձ և հպարտ, որ հաղթանակած երկրի դուստր եմ ես**» /Պետրոսյան Կարինե/:

Հոգուս հարազատ տողեր կային նաև մի քանի ուրիշ աշակերտների

մոտ. «**Քարքարոտ ու երազ երկիր ես, իմ Հայաստա՛ն: Ես ուրախ եմ, որ դու կաս, որ հայ եմ ես, ապրում եմ Արցախում: Միայն թե այն պաշտպանել է պետք ամուր ձեռքերով, որպեսզի հայը ապրի խաղաղ ու ջինջ արշալույսներ**»/ Հարությունյան Հարություն/: «**Ուրիշ տեղ ես չեմ կարող ապրել, իմ սիրտն այս երկրի շարունակությունն է: Ուրախ եմ, որ ծնվել եմ այս բիբլիական հողի վրա և հպարտ, որ իմ մայր Հայաստանի ժառանգորդն եմ ես**»/Ստեփանյան Արեգ/: «**Ես սիրում եմ քեզ, իմ Հայաստա՛ն: Օտար երկրում ապրող ամեն մի հայ պետք է իմանա, որ հայերի հայկական տունն ես, իր անցյալն ու ապագան, մա՛յր Հայաստան**»/Կարապետյան Աննա/: «**Սպասի՛ր Հայաստա՛ն, դեռ քո գիրկը պիտի գան շատ պանդուխտ հայեր, պիտի համախմբվեն մեզ հետ, օգնեն՝ քո վաղվա օրը կառուցելու: Սպասի՛ր Հայաստա՛ն, ես քո վաղվա օրվա քաղաքացին եմ՝ մեր նախնիների արդար գործի շարունակողը, և վստահ ու հպարտորեն իմ ամեն մի սերնդակից կարող է ասել. «Ես քո զավակն եմ, մա՛յր Հայաստան**» » /Ավթանդիլյան Աննա/:

Չեմ ժխտում, որ թույլ գրավորներ նույնպես կային, բայց եղածն էլ ընթերցելով՝ հպարտության զգացում ունեցա, որ այդ դասաժամին մեր երեխաների ստեղծագործական շարադրանքներում մի ամբողջ Հայաստան էր խոսում, մի բուռ հայրենիք:

http://hayernaysor.am

03.07.2016

ԹԵՍՏԱՅԻՆ ՍԽԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ, ԹԵ՞ ՃՇՏԻ ՈՒ ՍԽԱԼԻ ՊԱՅՔԱՐ

Չնայած ավարտվել են քննությունները, բայց որպես մանկավարժ՝ նորից մնում եմ իմ կարծիքին և չեմ խուսափում ասել, որ հանրակրթական դպրոցում ամենասարսափելի երևույթը թեստային համակարգն է, որն արտասահմանից հասավ այստեղ՝ իբրև կոռուպցիայի դեմ ուղղված մարտահրավեր, բայց մեզ համար դարձավ այն չար աղետ, որը մտավ կրթության ոլորտը, և այսօր էլ այդ վնասները բացեիբաց բոլորս տեսնում ենք, որից ազատվելու համար մեր ոլորտի գերատեսչությունները, կարծում եմ, անելիքներ շատ ունեն: Ասեմ, որ այն այսօր վերածվել է բիզնեսի աղբյուրի՝ ամեն տարի մասնակի փոփոխություններով ընդունելության քննությունների համար հրատարակվող շտեմարաններով:

Մեր առջև նստած ամենաթույլ կարողությունների տեր աշակերտներն ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, ծնողների համար էլ պարտադիր պայման է դարձել՝ իրենց երեխաներին տեսնել բարձրագույնում «սովորելիս»: Եվ այդքանը գալիս է թեստային սխալ համակարգից, երբ պատահում է, որ ամենաթույլ աշակերտն իր հնարամտության շնորհիվ այստեղից-այնտեղից օգտվում է, ճիշտ նշումներ կատարում ու ավելի բարձր միավորներ վաստակում: Ամեն տարի լինում են այդպիսի դեպքեր, ուղղակի այդ պահին հիասթափվում ես, որ այդ ցավալի երևույթի ականատեսն ես: Նման դեպքերում այդպիսի հաջողակներից ոմանք նույնիսկ ամաչում են նայել ուսուցչին՝ կարծես մեղավորության զգացում ունենալով, բայց լինում են նաև այնպիսիները, որոնց գոհունակություն արտահայտող հայացքները կարծես հասկացնում են մեզ, որ տեսնո՞ւմ եք, առանց սովորելու կարելի է բարձր գնահատական վաստակել: Հասկանալի է, որ այդպես էլ բուհն են ավարտելու, և դրա արդյունքում տարբեր ոլորտների խոտանը պատրաստ է, որը, կարծում եմ, զարմանալի չպիտի լինի բոլորիս համար:

Չգիտեմ՝ ինչու է ինձ թվում, որ ամեն անգամ, կարծես սպասելով հարմար պահի, մանկավարժները շատ հեշտությամբ ցեխոտվում են հրապարակավ: Զարմանալի է սա այն առումով, որ այդ նույն երևույթն առկա է տարբեր ոլորտներում: Այս որակազրկումը կարելի է նկատել

նաև այն մարդկանց մասնագիտությունների հանդեպ, որոնցից կախված է մարդու կյանքը, կամ նրանց նկատմամբ, ովքեր իրավունքի պահապաններ են կոչվում և այսպես շարունակ: Սա համատարած երևույթ է, ամենուր կարելի է տեսնել այդ երկու ծայրահեղությունը, ճշտի ու սխալի պայքարը միշտ էլ խորքային թեմա է, այն միշտ էլ եղել է և շարունակական բնույթ ունի այսօր էլ:

Հավասարաչափ ողբերգական է, երբ շրջապատում առնչվում ենք ոչ միայն վայ ուսուցիչների, այլև այդ նույն հատկանիշն իր վրա կրող տնտեսագետի, բժշկի, լրագրողի, ոստիկանի, իրավաբանի և տարբեր այլ մասնագիտությունների տեր մարդկանց, քանի որ դպրոցն ավարտած յուրաքանչյուր շրջանավարտ բուհ է ընդունվում և մի քանի տարի հետո հայտնվում այդ ոլորտներում:

Հետևաբար յուրաքանչյուր ոք, անկախ նրա մասնագիտությունից, պետք է պատվով կատարի իրեն վերապահված գործը, համոզված եմ, որ այդ դեպքում մասնագիտական իմացության արդյունքում ամեն մեկն էլ իր բարձունքում կմնա: Սա թերևս մեր օրերում ամենաճիշտ մոտեցումը կլիներ, առավելապես խոսքս վերաբերում է ուսուցիչներին, այլապես մանկավարժության և իր մասնագիտության մեջ թերացող ուսուցիչը հարգանք չի վայելի:

http://usarmenianews.com/am-n-4108.html

04.07.2016

ԴԵ՛ ԱՍԱ՛, ՏԻԿԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ, ԻՆՉՊԵ՞Ս ՉԱՏԵՄ ԲԱՐԲԱՐՈՍ ԹՈՒՐՔԻՆ

Այս հարցումն օրեր առաջ կարդացել էի 11-րդ դասարանում սովորող իմ աշակերտուհու՝ Էդիտա Գասպարյանի շարադրության վերջում: Միանգամից քարացա, արդյոք ճի՞շտ եմ ընթերցել, և նորից ու նորից աչքերս սահում են տողերով... Եղեռնի զոհ դարձած արևմտահայ բանաստեղծ Սիամանթոյի ստեղծագործությունների վերլուծությունը նրա հոգում ծնել էր պոռթկացող զայրույթ, որն ուներ դեռ շարունակություն. «**Չգիտեմ՝ որն է՝ ճիշտ, որը՝ սխալ, դրանով մե՞ղք եմ գործում, թե՞ վրեժ եմ առնում: Դիմում եմ Ձեզ, ասացե՞ք խնդրեմ, սխա՞լ եմ ես...Որտեղ գիշատիչ ու գազան թուրքին տեսնեմ, այնտեղ մորթազերծ արված մարմին կլինի, այնտեղ արյան հորդառատ գետ պիտի հոսի...Նույն ողբի, ցավի, տառապանքի արցունքները նրանք պետք է տեսնեն: Ես դա Ձեզ խոսք եմ տալիս...**»:

Հոգուս ներսում սարսուռ եմ զգում, բայց արտաքուստ ուզում եմ հանգիստ երևալ: Ինձ պատկերանում են գրողի «Պարը» բանաստեղծության մեջ ստորացումից ու հոգնությունից վայր ընկած կույս աղջիկները: «Մահակարոտ» էին նրանք, բայց մահը վրա չէր հասնում: Ստիպում են նրանց պարել, շառաչում են մտրակները, և քսան աղջիկներ, ձեռք ձեռքի տված, իրենց մահվան շուրջպարն են պարում: Թուրք խուժանը նավթ է լցնում նրանց վրա...Այրվում են աղջիկները՝ մոխրացող մարմիններով պարելով իրենց վերջին պարը: Գրողի խոսքը քաղաքակիրթ աշխարհին պիտի հնչեր այս սարսափին ականատես գերմանուհու խոսքով. «**Ո՜վ մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ...**»:

Նորից գալիս եմ իրականություն, ուշադիր նայում եմ աշակերտուհուս: Մահ աղերսող կույս աղջիկների տառապա՞նքն էր իմ աշակերտուհու զայրույթի պառճառը, թե՞ եղեռնազարկ բանաստեղծի բզկտված մարմինը: Անթարթ հայացքով նայում եմ նրան..., անխոս եմ, լուռ, իսկ նա հաստատակամ ու շատ զսպված ավելացնում է. «**Իսկապես, ես կսպանեմ նրանց, կսպանեմ, որ հանգստանամ, ես լուրջ եմ ասում**»:

Հոգիս տակնուվրա է լինում, քարացած հայացքս հառում եմ նրան և անզորությունից հուսահատ նրան չեմ կարողանում պատասխանել... Ես նրան չեմ կարողանում ասել, որ մենք մարդասպան չենք, և պետք չէ մեր ձեռքերը թաթախենք արյամբ, չեմ կարողանում ասել, որ մարդասեր ենք մենք և ոչ մարդասպան...Այդ պահին ինձ համար «ամենափրկիչ» դարձած զանգը հնչում է. կարծես փախչում եմ դասարանից:

http://hayernaysor.am

05.07.2016

ՄԻ՛ ԹՈՂԵՔ ԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ՈՐՏԵՂ ՄԻ ԿՏՈՐ ԱՐԵՎ ՈՒՆԵՔ

Թվում է՝ ոչինչ չի եղել, արկերն այստեղ չեն թափվել ահեղագոչ…

Արևածագին իմ բնակարանի պատուհանից ներս մտնող շողերի հետ մտովի հոգիս պար է բռնում, կարոտներս թևին տալով թռչում են ամենուր, օրս շնչավորվում է, իմաստավորվում մի նոր կյանք: Միտքս դայլայլում է թռչունների ճռվողյունի հետ՝ ծաղիկների ավանդական սիրավեպին ու ապրելու հրճվանքին ունկնդիր:

Հոգիս հողի ու հայրենիքի երգն է երգում՝ անցած օրերի տխուր մեղեդայնությամբ ու հավերժական սիրով օծված: Ներկայի ու գալիքի մասին խոհերս հուզական մի նոր աշխարհ են բացում: Ու ես մտորում եմ՝ այո՛, հայրենիքը միայն ֆիզիկական տարածքը չէ, այն գոյություն ունի նաև մարդու ներսում, ու ես այս մի կտոր հայրենիքը տեսնում եմ իմ մեջ: Մեր ժպիտն է դառնում մեր հայրենիքը, մեր անհանգիստ ապրումները, ճաք տված սիրտը մեր, որ իր ներսում ցավ ունի դառնացած: Մեր հայրենիքն արյունով հեղված ու արկերի հարվածից գունատված հողն է մեր, մեր հայրենիքը դառնում է այն տունը, որտեղ ապրում ենք, այն ճամփան, որով անցնում ենք ամեն օր, այն բակը, որտեղ անհոգ մանկություն կա՝ աշխարհի դավերին անտեղյակ:

Մի՛ թողեք մեր հայրենիքը, որտեղ մի կտոր արև ունեք, ուր էլ լինեք, կարոտը թևին է տալու, բայց չի մեռնելու երբեք, մի՛ թողեք այն հայրենիքը, որտեղ ցավատանջ հառաչանքներ կան՝ մեր տագնապած հողին պահ տված:

http://usarmenianews.com/am-n-4155.html

06.07.2016

ՄԱՐԴ ՊԵՏՔ Է ԱՊՐԻ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ինչից թերթում եմ իմ աշակերտների նախորդ օրերի գրառումները, երբեմն զարմանում այս փոքրիկների մտորումներով: Առաջադրանքի հարցադրումը, որ տրված էր դասանյութին համահունչ 6-րդ ա դասարանում, ամենևին էլ զարմանալի չէր աշակերտների համար, բայց այդ օրը ոգևորությունս անչափելի էր, երբ ընթերցեցին իրենց շարադրանքները թեմայի շուրջ: Ընդամենը մի քանի մեջբերումներ՝ այս փոքրիկների հոգուց բխած անկեղծ խոսքեր, որոնք շատ բան կասեն նոր սերնդի լավագույն որակների մասին:

«Հայերս միշտ պետք է ապրենք հայրենիքում և գիտակցենք, որ մեզ համար ոչ մի ուրիշ երկիր պետություն չի ստեղծի»/Անժելիկա/: **«Եթե մարդ իր հայրենիքում չապրի, բոլորը հեռանան, այդ երկիրը կոչնչանա, և այդ մարդիկ հայրենիք չեն ունենա»**/Արման/: **«Հայրենիքը մոր պես սուրբ է, մայր հայրենիքը լքողին անհրաժեշտ է նորից կանչել տուն»**/Անի/: **«Եթե մենք թողնենք ու հեռանանք մեր հայրենիքից, կկատարենք մեր թշնամու վաղեմի երազանքը: Ամեն երեկո լսելի են դիրքերից եկող կրակոցները, բայց մենք չենք հեռանում, այստեղ է մեր տունը»** /Լուսինե/: **«Վստահ կարող եմ ասել, որ մարդ պետք է ապրի իր հայրենիքում, քանի որ այնտեղ են ծնվել մեր հայրերն ու պապերը, մեր բոլոր նախնիները»**/Գեորգի/: **«Եթե բոլորը հեռանան իրենց հայրենիքից, ապա ո՞վ պիտի զարգացնի մեր երկիրը, պահի ու պաշտպանի այն, տուն շինի, ծառ տնկի և շատ ու շատ բաներ»**/Մերի/: **«Ես սիրում եմ իմ հայրենիքը, այն հայրենիքը, որի համար արյուն է թափվել... Ես այստեղ կմնամ, որ մեծանամ**

ու պաշտպանեմ այն: Տա՛ Աստված, որ երբեք պատերազմ չլինի» /Յուրա/:

Հայրենիքը տարբեր առիթներով թողած, հեռացած մեր հայրենակիցների համար չնայած ցավոտ կհնչեն այսպիսի տողերը, բայց դասավանդող ուսուցիչն էլ հայտնվում է անելանելի վիճակում, որ չի կարողանում արդարացնել հայրենիքից հեռացողներին այն երեխաների մոտ, ովքեր տեսել են պատերազմ և ապրում են թշնամու հարևանությամբ՝ ընդամենը սահմանից մի քանի կմ հեռավորության վրա: Բայց նաև հուսով ենք ապրում՝ համոզված, որ հայրենաբաղձության կարոտը մի օր հետ կբերի օտարության մեջ գտնվող բոլոր հայերին:

http://hayernaysor.am

11.07.2016

ԵՍ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԿՀՈՐԻՆԵԻ

Մտքերը, որ ես ընթերցել էի իմ միջակ կարողությունների տեր աշակերտի շարադրանքից, զարմանք առաջացրին. «**Երբ առաջին անգամ քարտեզի վրա փնտրում էի իմ հայրենիքը, այն դժվարությամբ գտա: Մեծ տարածքներ ունեցող հզոր պետությունները փառահեղ բազմել էին կողք կողքի, և նրանց արանքում մի փոքրիկ երկիր՝ հայոց հինավուրց հողը, ժպտում էր ինձ: Ու մտածեցի, որ եթե ես մեծ լինեի, ապա անպայման քարտեզագրության նոր կանոններ կհորինեի, մեծ ու գունեղ կլինեին այն երկրների տարածքները, որոնցում ապրող ժողովուրդը աշխարհաշեն կյանքով է ապրել, չի նեղացրել մյուսներին և ծնել է այնպիսի մարդկանց, որոնք աստվածային շնորհներով են եղել օժտված...**»:

Այդ օրը 10-րդ դասարանում մի այլ հայացքով նայեցի այդ վտիտ, ամաչկոտ ու հրաշալի պահվածքով աշակերտին՝ Դավիթ Աբալյանին: Նրան կարծես ավելի հասուն ու մեծացած էի տեսնում, բայց նաև կասկածամտությամբ հարցրի. «Քեզ օգնե՞լ են տանը, հիանալի մտքեր են, երանի թե նոր սահմաններ գծվեին մեզ համար»:

Մի պահ իրեն կորցրեց, բայց հետո կամաց, հազիվ ինձ հասանելի ձայնով անկեղծացավ նա: Չնայած մի փոքր հիասթափություն ապրեցի, բայց չկարողացա իմ աշակերտին մեղադրել... Գուցե քարտեզագրության նոր կանոններ հորինողներից մեկն էլ հետագայում ի՞նքն էր լինելու, չցանկացա, թեկուզ և ուրիշից վերցրած, նրա այդ հիանալի երազանքը խորտակել:

Ես համոզված էի, որ այդ փոքրիկ հայրենիքը նաև նրա մեջ է, այն բոլորինս է, մեր սերն է այն, մեր բողոքն ու ցասումը, մեր հպարտությունն է, մեր վիշտն ու անդառնալի ցավը, այդ հայրենիքը մեր երազանք է ու մեր հոգին, այն մեր պատմությունն է, մեր անցած ճամփան, մեր նորօրյա տառապանքն է, մեր գալիք օրը…

http://hayernaysor.am

12.07.2016

ԱՅՍ ՀՈՂՈՒՄ ԵՍ ԱԶԱՏ ԵՄ ՈՒ ԻՆՔՆԻՇԽԱՆ

Չեմ ուզում քաղաքականության մեջ ընդգրկվել, բայց քանի որ խոսքը վերաբերում է Արցախիս, առավելապես այն տարածքին, որտեղ ապրում ու լիաթոք շնչում եմ, որտեղ գիտեմ, որ ապրելու իրավունքն իմն է, և այնտեղ ես ազատ ու ինքնիշխան եմ ինձ համարում, ապա իրավունք եմ վերապահում նաև հայտնելու իմ կարծիքն այս վերջին տարածքային փոխզիջումների մասին՝ լուրերի հետ կապված:

Ամենուր փնտրում եմ հարցիս պատասխանը, բայց դեռ չեմ գտնում: Այս օրերին ես էլ մասնակցեցի անցկացված սոցհարցմանը, երբ մի երիտասարդ աղջիկ, դռանս շեմին կանգնած, առաջարկեց պատասխանել որոշ հարցերի: Հրավիրեցի ներս... Ուշադրությանս արժանացան թղթին հանձնված Արցախի հարցի լուծման մի քանի տարբերակներ, թե որին եմ համաձայն: Օրեր շարունակ մտածում էի, որ, միևնույն է, աշխարհի տերերն են որոշում մեր «բախտը», բայց տեսնես կռվախնձոր դարձած Արցախիս որոշ տարածքների փոխզիջման համար նախատեսված շրջանների մեջ իմ հարազատ բնակավա՞յրն էլ որոշել են հանձնել նրանց:

Ինչպիսի՜ ողորմելի վիճակ, ցավալի է, բայց նաև ճշմարտություն: Թղթին հանձնված տողերում հայացքս փնտրում էր հարազատ շրջկենտրոնիս անունը: Կարծես մի ծանր բեռ ընկավ ուսերիցս, ուրախացա, որ չգտա այն: Հենց այդ ժամանակ էլ վերջապես իմացա այն շրջանների մասին, որոնք նախատեսված էին փոխանակման համար, բայց զարմանալի էր նաև, որ հրապարակավ տեսնես ինչո՞ւ չեն նշում այդ անունները: Չնայած իմ ժխտողական կարծիքն էլ հայտնեցի այդ մասին, բայց մնաց ինձ համար նաև մի մեծ հարցական, թե ինչո՞ւ ոչ մի տեղ չեն շոշափում, որ Արցախյան ազատագրական պատերազմից հետո առայսօր Մարտակերտի շրջանի մի շարք գյուղեր դեռ մնում են թշնամու ձեռքին, ուրեմն դրանք էլ պետք է մեզ վերադարձվեն, չէ՞ որ այնտեղի բնակիչները, չնայած վերաբնակեցվել են նոր գյուղերում, բայց ապրում են անցյալի իրենց հիշողություններով ու ցավի կսկիծն իրենց հոգում: Նրանք այսօր էլ ապրում են մի նոր անուն դրոշմած իրենց վրա՝ նորկարմիրավանցիներ, նորմարաղացիներ, նորսեյսուլանցիներ ու այսպես շարունակ, և նորը, որ միշտ էլ կենսունակություն է հաղորդել

մարդկանց, այս բնակիչների համար դարձել է հույզ, դարձել կսկիծ՝ հին-նը անթեղած իրենց հոգում, որ այն ժամանակ կոչվել է ուղղակի Կարմիրավան, հենց թեկուզ՝ Մարաղա կամ Սեյսուլան և այդպես շարունակ...

Եվ ես ուզում եմ ասել՝ մի՞թե մեր այդ հարազատ տարածքներն արդեն մեզ պետք չեն, որոնց մասին ոչ մի տեղ չեն խոսում, իսկ այնտեղ տարիներ առաջ մեր ազատամարտիկների ու խաղաղ բնակիչների արյունն է հեղվել…Ցավում եմ, որ շուտով դրանց կողքին երևի կավելանա մի նոր անուն, որ թերևս կկոչվի Նոր Թալիշ, դրա հետ կապված՝ կավելանա նաև մի նոր կսկիծ ու մի նոր ցավ, նոր անուններ ու հիշատակի մի նոր խոսք:

Տարածքային ամբողջականության պահպանումն իմ բեմագիրն է, և ոչ ոք չի կարող այն փոխելու փորձեր անել: Այդ բեմագիրը վաղուց ներկայացրել եմ սաներիս, իսկ դրանով առաջնորդվելու հորդորն ամեն օր է:

http://usarmenianews.com/am-n-4231.html

14.07.2016

ԺՊՏԱՑՈՂ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ ԺՊՏԱՑՈՂ ՀՈՂ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Մի պահ անակնկալի եկա… Հեռավոր ափերից եկած մի հարց՝ ես ի՞նչ եմ ուզում...

Անցյալի մեջ հնօրյա կարոտի արահետներով եմ քայլում, ուզում եմ ամեն մի ակնթարթի տալ հավերժականի իմաստ: Հենվում եմ հուշերիս, սուզվում մտքերիս մեջ: Ես ի՞նչ եմ ուզում…Վերադարձ դեպի անցած օրերը, այդ վերադարձը չի ճանաչում ո՛չ սահման և ո՛չ էլ՝ պատնեշ: Միտքս սավառնում է ամենուր, անարգել հասնում եմ դեպի հավերժություն դարձած անցյալի հուշերի մեջ, որտեղ հասարակ մի կյանք կա, բայց նաև կյանքի իմաստի տենդագին որոնումներ ու ապրածս կյանքի տարեգրություն:

Ես ի՞նչ եմ ուզում…Ուզում եմ նոր օրերի լիքը ծիծաղների ու ժպիտների անսահմանության մեջ անցած օրերի ծիծաղների արձագանքները լսեմ: Աշնան ու տերևաթափի, մայրամուտի ու մթնշաղի գույների փոխարեն ուզում եմ բացել արևային պայծառ ու լուսավոր գույների մի շքեղ հանդես, որտեղ հայրենի երկրի ջինջ երկինք կա, զրնգացող գույների ու թախծալից կարոտների մի նոր առավոտ:

Ժպտացող բնության ծոցում ժպտացող հող եմ ուզում, ժպտացող արև, անձրևից հետո՝ յոթնագույն ծիածան, հասկերի ոսկե խուրձ եմ ուզում, անլույս այգիներին փոխարինած լուսնաշունչ վարդաստաններ: Ժպտացող արևի զգացողությամբ իմ հայրենի երկրի համար բացվող նոր օր եմ ուզում, մարդկանց, աշխարհի, կյանքի մասին մի նոր արևոտ երգ…

Այնքա՜ն շատ բան կա, որ անձնական է և տխուր, բայց ես իմ երկրի լուսավոր օրն եմ ուզում:

http://usarmenianews.com/am-n-4250.html

15.07.2016

ԱՅԴ ՕՐԸ ՆՐԱ ՇՈՒՐԹԵՐՈՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՆ ԷՐ ԲԱՐԲԱՌՈՒՄ

«Ես՝ որպես աշակերտ, տարբերվում եմ մյուսներից, բայց կցանկանայի նմանվել նրանց»:

Դպրոցական օրերի հիշողությունների մեջ եմ, զոհված ազատամարտիկի որդի, դեռևս 6-րդ դասարանում սովորող իմ աշակերտի՝ Գևորգ Պետրոսյանի գրած տողերը մի նոր մտորումների տեղիք տվեցին այդ դասաժամին, առավել ևս, երբ այնտեղ կային նաև ինքնախոստովանանքի՝ իրեն դատապարտող խոսքեր, որ ինքը ծույլ է, չի ուզում դաս սովորել: Նա միշտ էլ իմ ուշադրության կենտրոնում էր... Շատ լուռ էր, ինքնամփոփ, խոսում էր կամաց, երբեմն դասարանին ուղղված որևէ հարցում, եթե մյուսները թերանում էին, ի զարմանք բոլորիս՝ հանկարծ լսում էինք նրա կողմից շատ կամաց ասված ճիշտ պատասխանը:

Այդ օրը փոքրիկ համակարգիչները դրված էին նստարաններին, նայում էի, թե ով ինչ հետազոտական աշխատանք էր կատարել հայրենի բնաշխարհի մասին: Բոլորս ուշադիր լսում էինք նրան, նա բանավոր պատմում էր Հայաստանի հրաշք գետի՝ Արաքսի մասին...Հետո լռում էր, ոչ մի ձայն, միայն մեր շնչառությունն էինք զգում, և հանկարծ այդ լռությունը խախտում է աշակերտուհիներից մեկը. «Գ. Էմինի «Պատգամ» բանաստեղծությունն օրեր առաջ սովորել էր, բայց չէր ուզում այդ մասին իմանանք»:

Ավելի եմ զարմանում, բոլորիս հայացքներն ուղղված են նրան, իսկ նա շուտով արտասանում է՝ Զգո՜ւյշ խոսիր Հայաստանում...

Մենք ինքներս էլ շատ զգույշ սպասում էինք, որ շուտով կանգ կառնի և մոռացության տրված տողերը նորից չի կարողանա վերհիշել, բայց ևս մեկ-երկու կանգառներ, հետո նորից շարունակում էր...Երբ վերջացրեց, կարծես բոլորս շունչ քաշեցինք... Մենք հիացած նայում էինք նրան, իսկ նա լուրջ էր, ոչ մի ձայն...Մատյանում նրա անվան դի-

մաց դատարկ վանդակն եմ փնտրում, անբավարար և բավարար մի քանի գնահատականների կողքին մի նոր գնահատական պիտի ավելանար: Բոլորը լուռ սպասում էին իմ ձեռքի գրչի շարժումին, հանկարծ այստեղից ու այնտեղից լսում եմ աշակերտների վանկարկումները, որ լավի ու գերազանցի արանքում գտնվող գնահատականի մասին էր հնչում: Եվ գրիչս շատ սահուն մատյանի վանդակում նշանակում է մի հպարտ «8», որի կողքին պիտի կուչ գային նրա մյուս գնահատականները:

Հոգիս հանդարտվում է, տեսնես իմ աշակերտը, իրոք, զգա՞ց, որ ինքն արդեն նմանվում է մյուսներին, նույնիսկ այդ դասաժամին նա ավելին էր, քան ոմանք, ովքեր այդ օրն այնքան էլ լավ չէին սովորել դասը, բայց այդ դասաժամին նրա շուրթերով հայոց աշխարհն էր բարբառում…

http://hayernaysor.am

16.07.2016

ՄԵՐ ՀՈՂԸ ՄԻՇՏ ԷԼ ԱՐՏԱՍՎԵԼ Է ՑԱՎԻՑ

Ուզում եմ մեր երկրի հին ու նոր պատմությամբ զգոնության կոչ անել ամենքիս, որ երբեմն կործանվել ենք, զոհեր տվել, երբեմն գաղթ ենք տեսել, հաղթանակ կռել, բայց նորից ոտքի ենք կանգնել, և երբ մենք տուն ենք շինել քարափների վրա, նույնիսկ հողաշեն խրճիթներում ենք ապրել, այդ նույն ժամանակ հեռավոր ափերում տափարակների վրա քաղաքներ են հառել, որ այնտեղից աշխարհի տերերը մեզ հսկեն և բարօրության հերթական քարոզներով դառը ճակատագրի ապավիածներիս բախտը որոշեն:

Որքան էլ սպառնալիքներով մեր դուռը ծեծել են, համառ կամքով ապրել ենք, երբեմն գոռացել, թնդացել է մեր ձայնը, ինչպես լեռներն են գոռում ահեղամռունչ, երբեմն ըմբոստացել ենք, հենվել գաղթականի ցուպին, տեղից տեղ ենք գնացել, բայց նորից եկել ենք, նոր օջախ ստեղծել, որ նորից ապրենք: Մեր գլխին արկեր են թնդացել, հողն էլ, իր ծոցում գրկած իր զավակներին, արտասվել է ցավից, հացն էլ արնոտվել է արկերի հարվածներից, չքավորության անդունդի մի ափից անցել ենք մի ուրիշ ափ, ուրախացել ու տխրել, կարոտել ու արտասվել, բայց հողը նորից գտել է մեզ, ձյունոտ, թե արևոտ մեր հողը միշտ արտասվել է, ու մենք էլ՝ նրա հետ…

Հայրենական հողն ամեն պահ մասնակցել է մեր տրամադրություններին, այս օրերին էլ մեր մեջ խոսում է հողի ձայնը, որ այնքան տխուր է, տառապած, բայց նաև հերոսացած, համառ ու անսասան: Որքան էլ քարոտ ու կոշտ է եղել հողը, էլի սիրել ենք այն ու պիտի սիրենք, հենց այդ սերն է, որ երկու պատերազմ տեսած ժողովուրդս շարունակում է արարել մայր հողի վրա՝ հույսի մեղեդին ձուլած մեր հերոսական ոգուն:

http://usarmenianews.com/am-n-4289.html

18.07.2016

ԱՐՑԱԽԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՂ ԼՈՒՍԱԲԱՑՆԵՐՈՎ Է ԱՄՐԱԳՐՎՈՒՄ

Այս օրերին, որպես մտավորական՝ ծանր ապրումների մեջ եմ՝ կապված հայաստանյան իրադարձությունների հետ: Եվ ուզում եմ ի լուր ամենքի ասել, որ լավ օրերի երազանքներով փառավորված՝ Արցախի խաղաղ գիշերները, մեր ներկան ու գալիք օրը Մայր Հայաստանի խաղաղ լուսաբացներով է ամրագրվում՝ որպես ազգի անպարտելիության, նրա մարտական ոգու, ազգային հպարտության, հերոսացումի և նվիրաբերումի արտահայտություն:

Հիշենք, որ Արցախյան պատերազմի մարտական ճանապարհ անցած ազգի նվիրյալները ծանր փորձություններով են անցել ու կերտել այդ հաղթանակը, սահմանին կանգնած հայ զինվորի ու սպայի մարտական ոգին մեր միասնականության հետ է կապված, մեր անվտանգության պահպանման և խաղաղության հարատևության երաշխավորն են նրանք, որոնք իրենք հոգում ապրելու, արարելու հզոր կամք ունեն ամբարած:

Չմոռանանք, որ այս օրերին Արցախի տարածքների հարց է դրված, մեր գոյությունը, մեր ապրած ամեն մի օրը հայ զինվորի կորստյան դառնագին բոթով է ամրագրվում, և հեռու չեն այն օրերը, երբ հերոսացման ու հավերժության ճանապարհը ամրագրեցին մեր մի շարք հերոսներ ապրիլյան պատերազմական օրերին: Հայոց մայրերի կարոտի կանչ ունենք, խաղաղ օրերի մեծ երազանք, հայոց բանակի լինելություն, մեր ժողովրդի անսասան կամք, չնայած լավագույն կյանքի մասին երազանքներն այսօր շատ են, սպասելիքները՝ քիչ…

Եկե՛ք մոռացության չտանք մեծ բանաստեղծի՝ հայ ժողովրդի փրկությունն իր հավաքական ուժի մեջ տեսնելու պատգամը և հիշենք, որ հայության փրկությունն ու ապագան Հայաստանի մեջ է՝ իմաստավորված ժողովրդավարական միասնական բովանդակությամբ՝ որպես արարման, ինքնության ամրապնդման հավիտենական նվիրաբերում:

http://usarmenianews.com/am-n-4341.html

19.07.2016

ԻՄ ԱՇԱԿԵՐՏԸ ՇՈՒՆ ԷՐ ՊԱՀՈՒՄ, ՈՐ ՈՒՂԱՐԿԻ ԲԱՆԱԿ

Դպրոցականների ամառային արձակուրդի այս օրերին պատահաբար հանդիպեցի 7-րդ դասարան փոխադրված իմ աշակերտ Գեորգի Գևորգյանի մայրիկին: Նա պատմում էր, որ որդին հանգստանում է Հայաստանում, ճամբար է գնացել: Եվ հիշողություն դարձած անցյալի դպրոցական կյանքը նորից վերհիշում եմ: Առավել շատ զարմանալի էր, երբ մի օր մտա դասարան ու լսում եմ հանկարծ ինձ ուղղված հրավերը. «**Տիկի՛ն Պողոսյան, մի օր եկե՛ք մեր տուն, մայրիկիս կպատմե՛ք, որ ես անկարգ եմ**»:

Այդ պահին անսահման ժպիտներ կային նրա դեմքին... Դա սրտաբաց, շատ անկեղծ մի հրավեր էր իմ աշակերտի կողմից, և ես զարմացել էի, իսկ նա իր ժպիտների անսահմանությամբ նոր ժպիտներ էր փոխանցում ինձ: Հրավերը դրանով չսահմանափակվեց. «**Միաժամանակ կտեսնեք իմ խելոք շանը...**»: Առավել զարմանալի էր, որ նա նորից ավելացրեց. «**Նա ինձանից խելոք է...**»:

Զուլալ մի աղբյուր կար հոգում, մաքուր մի սիրտ, որ իր ասելով գիտեր, բայց ամեն անգամ մոռանում էր, որ անունները մեծատառով պիտի գրի, ու ես էլ երբեմն մոռանում էի նրա կատարած բոլոր սխալները, անգամ այն բոլոր անկարգությունները, որոնց մասին հիշեցնում էր ինձ ու նորից ավելացնում. «**Ուզում եմ խելոքանալ, բայց չի ստացվում...**»:

Ու նորից ժպտում է մեղմ, և ես, այդ ժպիտները հոգուս մեջ, նրան գնահատում եմ «բավարարի» ու «լավի» արանքում գտնվող «վեց»-ով, որ բանաստեղծությունը ոչ այնքան սահուն սերտել էր: Դա իր արժանի գնահատականն էր, և նա ուրախ էր, բայց հանկարծ նա նորից կամաց խոսում է. «**Չորսն էլ հերիք էր ինձ...**», այս անգամ աշակերտներն էլ զարմացած էին, որ այդքան ժլատ էր իր հանդեպ: Եվ ես ուզում էի այդ հրավերն ընդունել, մայրիկին պատմելու շատ բան ունեի, չէ՞ որ անգի-

տակ կատարած նրա անկարգությունը երբեմն մոռանում էի, երբ հոգի կար իմ կողքին, պարզ ու հասարակ մի շատ բարի սիրտ՝ ջերմությամբ լցված:

Օրեր անց նորից մտա այդ դասարանը, վերջին նստարանին նստած Գեորգին անմիջապես օրագիրը դրեց իմ սեղանին ու գնաց իր տեղը նստեց: Դեռ դասամատյանը չէի բացել, նայում էի օրագրին, ապա՝ իրեն: Նա պարզաբանում էր՝ տնային հանձնարարությունը չի կատարել, Սևանա լճի մասին չի կարողացել տեղեկություններ գտնել: Եվ ես բացատրում եմ, որ անբավարար չեմ գնահատում, այն էլ տնային առաջադրանքը չկատարելու համար, երբ չարչարվել է, փնտրել, բայց չի կարողացել գտնել: Իսկ նա անդրդվելի էր, այդ դեպքում իր վարքը պիտի անբավարար նշանակեմ, և ես հարցնում եմ՝ բայց ինչո՞ւ, երբ ոչ մի անկարգություն չի կատարել, և դա հաստատում են աշակերտները:

Ես նրան մտերմորեն կանչում եմ ինձ մոտ և ահա այս պարզ ու հասարակ հոգուն ուզում եմ բացատրել, որ ինքը շատ լավն է, անսահման բարություն կա մեջը, և ես ուրախ եմ, որ նա իմ կողքին է: Բայց նա լուր ունի ինձ հայտնելու՝ իր նախկին շանը տարել են բանակ, նա ծառայում է, երբեմն նույնիսկ ինքը հայրիկի հետ գնում է նրան տեսության: Աչքերս լայն բացվում են, զարմացած եմ, իսկ դա հաստատում են աշակերտները, և ես հիացած նայում եմ նրան, իսկ նա շարունակում է. **«Զինվորները եկան տարան...»:**

Օրագիրն առանց բացելու տալիս եմ նրան, այս անգամ նա չէր ժպտում, ինչպես սովորաբար լինում էր, շատ լուրջ էր, և ես ուրախ էի, որ իմ դասերին երբեմն անպատրաստ ներկայացող աշակերտը շուն էր պահում, որ ուղարկի բանակ: Այո՛, յուրաքանչյուրը յուրովի է փորձում օգնել հայոց բանակին ու հայ զինվորին:

http://hayernaysor.am

22.07.2016

ՀԱՅՐԸ ԳՆԱՑ ԴԻՐՔԵՐ, ԱՅԴՊԵՍ ԷԼ ՀԵՏ ՉԵԿԱՎ

Ստոլվի ես իմ աշակերտի հետ եմ, 7-րդ դասարան փոխադրված Գևորգ Պետրոսյանի…Նրա տխրամած հայացքը միշտ ուղեկցում է ինձ, ու ես մի առանձնահատուկ քնքշությամբ թերթում եմ նրա անցած օրերի գրած տողերը, որ արցունքախառն են, շատ հուզումնալից: Այդ օրը «Դիմանկար» թեմային համապատասխան՝ առաջարկել էի աշակերտներին, թեկուզ և նկարի շուրջ, նկարագրել որևէ մեկին, դա կարող էր լինել գրական մի հերոս, արվեստի գործիչ կամ ճանաչված մեկ այլ անհատականություն: Ազատամարտիկ հայր կորցրած իմ սանիկի համար իր շարադրանքի հերոսը պիտի դառնար բոլորիս կողմից ճանաչված Արցախյան ազատամարտի նվիրյալը, իսկ դասարանում իմ առջև նստած աշակերտը նորից պիտի դառնար այդ օրվա դասի իրական փոքրիկ հերոս և հուզեր բոլորիս իր անկեղծ, բայց սրտահույզ տողերով:

Նա չցանկացավ կարդալ իր շարադրանքը, լուռ էր, գլխահակ, կողքին նստած աշակերտուհին սկսեց ընթերցել. «**Նկարագրել մի մարդու, ով իմ հայրն է, և այսօր ֆիզիկապես մեր կողքին չէ, շատ դժվար է, բայց միևնույն ժամանակ, ուզում եմ հորս մասին գրել: Ես միշտ հիշում եմ նրա գեղեցիկ դեմքը և անմոռանալի ժպիտը: Հայրս բարձրահասակ էր, նիհար մարմնով, խոշոր աչքերով, կիսասպիտակ մազերով և զինվորական համազգեստով…**»

Այս տողերն ընթերցող աշակերտուհին մի պահ կանգ է առնում, իսկ մենք լսողություն դարձած՝ սպասումով լի հայացքներս հառում ենք Գևորգին: Մի քանի ակնթարթ, և նրա տետրը հանկարծ հայտնվում է իմ սեղանին: Շարունակում եմ ընթերցել, բայց զգում եմ, որ ձայնս կերկերուն է դառնում. «**Իմ հիշողության մեջ ես տեսնում եմ նրան զինվորա-**

կան կոշիկներով, հայրս հագվադեպ էր հանում դրանք իր ոտքերից: Նույնիսկ բազմոցին պառկելիս երբեք չէր հանում, քանի որ միշտ դիրքեր գնալու ճանապարհին էր, և երբ փոքրիկ քույրս ուզում էր հանել կոշիկները, հայրս չէր թողնում, ասում էր. «Բալա՛ս, մի՛ հանիր, ես նորից գնում եմ...»:

Նա այդպես էլ գնաց դիրքեր ու էլ հետ չեկավ: Ծանր է ինձ համար, բայց ես նկարագրում եմ իմ սիրելի հայրիկին, ով իր կյանքում չիմացավ, թե ո՞րն էր իր քնելու և արթնանալու տեղը: Դիրքե՞րն էր նրա անկողինը, թե՞ բազմոցը, չգիտեմ...Իմ կարծիքով՝ ոչ մեկը, ոչ էլ՝ մյուսը...»

Խռովահույզ մտորումներով հաջորդ դասաժամին մտա 10-րդ դասարան: Հոգուս հանդարտության համար իմ դասի մուտքն այդտեղ սկսեցի ազատամարտիկ հայրիկի մասին գրած իմ սանիկի տնային առաջադրանքով: Ինձ թվաց՝ բոլորին համակած քար լռությունը հարգանքի տուրք էր ազատամարտիկ Դավիթ Պետրոսյանի անմահ հիշատակին:

http://hayernaysor.am

23.07.2016

ՆՈՐԻՑ ԶՈՀ ՈՒՆԵՆՔ, ՄԻ ՆՈՐ ՏԱՌԱՊԱՆՔ

Նորից զոհ ունենք, մի նոր զինվորի կորուստ, մի նոր անուն, վշտամորմոք մի նոր մայր, որ ծնկները կծեծի, նոր հառաչանքներ կլսվեն, մի նոր տառապանք իր բույնը կհուսի՝ նորից հաստատելու այն ճշմարտությունը, որ ազերին խարդավանքների է սովոր, առավել ևս, երբ մենք կորցնում ենք ինքներս մեզ: Իսկ նա հրճվում է ու իր արնոտ թաթը նորից է մեկնում, զգացնել տալիս իր գոյությունը, նա արյան խրախճանք է անում և ողջունում մեր մասնատվելը: Մենք կարծես մեր տեսակով աշխարհն ենք ուզում փոխել, մաքուր ու արդար նոր կյանք ենք ուզում մեր արյունարբու թշնամու կողքին, իսկ նա ծաղրանքով հանդես է բացում մեր դեմ հանդիման:

Բակում խաղացող երեխաներին խնայե՞լ գիտի…. Կրակոցների արձագանքներն եմ լսում կարծես, կիսատ մանկության ահուսարսափի ստվերն է երևում հեռվից հեռու: Սարդոստայն է հյուսվում ասես, ամենուր մահվան ժանգահոտ ձայներ են լսվում, բայց ապրում ենք մենք սահմանին մոտիկ, մաքուր, անաղարտ զինվորի կողքին, զինվորի ապրած ամեն մի օրով, ու հանկարծ նոր զոհ, երեխաների մի նոր կիսատ խաղ, պատրաստ ճամպրուկներ՝ արտագաղթելու…

Եվ ո՞ւմ ենք տարածքներ զիջում այս մի բուռ հողից, այդ հողում ծպտված մեր հառաչանքներից… Արյան ծարավ, գլխատելու սովոր այդ մարդակերների՞ն: Մեր ձեռքով սրբացված հողի՞ց ենք բաժին հանում «ազերի» կոչվող այս քոչվոր ցեղին, որ սպանել գիտեն, մորթել ու հրճվել, իրենց զոհին խոշտանգել գիտեն, բզկտել մաս-մաս: Սոսկում եմ նույնիսկ, երբ ազգս ասես մասնատված նորից նոր կյանք է ուզում, ցավոտ ու ցասկոտ իմ հող հայրենին՝ իր հոգում պահած անկատար հույսեր, հայացքն է հառել գալիք օրերի վառ երազներին, ու հանկարծ նոր զոհ, մի նոր տառապանք:

http://usarmenianews.com/am-n-4504.html

25.07.2016

ԵՍ ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅՈՒՀԻ ԵՄ, ԵՎ ՍԻՐՏՍ ԷԼ ԶԱՐԿՈՒՄ Է ՀԱՅԵՐԵՆ

Նարինե Գրիգորյան…Նայում եմ 11-րդ դասարան փոխադրված իմ աշակերտուհուն, որ զինվորների հետ էր նկարված, հիացմունքս չեմ կարողանում զսպել, բայց նաև հիշում եմ նրա խոսքերը. **«Ո՞վ է ասում, որ միայն զենքն ու ոգին են հաղթանակի գրավականը, բա ժպի՞տը... Թշնամուդ հակառակ՝ միշտ պետք է ժպտաս: Իսկ աշխարհի լավագույն բանը զինվորի ժպիտն է, և ես ուրախ եմ, որ ապրում եմ մի երկրում, որտեղ զինվորներ կան»:**

Գիտեմ նաև, որ նա սիրում է երբեմն զինվորական համազգեստ հագնել, և հայացքս փնտրում է նրա լուսանկարների մեջ մի ժպտերես աղջկա՝ զինվորականի տեսքով: Նրա գրառումներն եմ ընթերցում, որ գալիս են լրացնելու մի հրաշալի կերպարի՝ շատ անմիջական, պարզ ու հասարակ և դրանց խորքում մի անկեղծ սեր զինվոր տղաների հանդեպ, որ հայրենիք են պաշտպանում, սահման են հսկում խաղաղ օրերի համար:

«Ես հայուհի եմ, հոգիս էլ հայի է, սիրտս էլ խփում է հայերեն, և հպարտ եմ, որ ինձ էլ պաշտպանում են մեր հայ զինվորները: Շատ կցանկանայի՝ ես էլ ծառայեի, կամ թեկուզ և տղա լինեի ու ծառայության գնայի: Հիմա շատերը կասեն՝ դա աղջիկների տեղը չէ, կամ էլ կասեն՝ հեշտ ես ասում՝ ծառայել կամ չգիտեմ ինչ... Ես գիտեմ, որ դժվար է, շա՜տ դժվար… Չեմ անցել դրա միջով, բայց ունեմ ծառայող ընկերներ...Եվ ուրախ եմ, որ իմ շրջապատում կան զինվոր տղաներ»:

Որտեղի՞ց է գալիս այս լույսը, որ իր մանրիկ ժպիտների անսահմանության մեջ մի նոր լույս է սփռում շրջապատում, մի նոր լուսավոր

կյանք, որի մասին երազում ենք բոլորս, ու այդ կենարար սիրո մեջ ամփոփված այս սիրունատես աղջկա ապրումներում զինվոր տղաների անպարտելությունն է թևածում, որտեղ ոգի կա, ազնիվ արարում, նվիրաբերումի սիրալիր խոսք.

«Ամեն անգամ, երբ պատրաստվում եմ քնեմ, պատուհանիս տակ՝ լուսնի լույսի ներքո, աղոթում եմ բոլոր զինվորների համար և միշտ էլ խնդրում եմ Աստծուն, որ պահապան լինի բոլոր զինվորներին: Չեմ ուզում, որ զինվորի մատը նույնիսկ փուշ մտնի, չեմ ուզում... Իսկական հերոսը զինվորն է, որ բոլորիս համար զենքը ձեռքին հսկում է, որ թշնամին ոտնատակ չտա մեզ, այդ թվում նաև այն ինքնավստահներին, ովքեր իրենց հերոս են համարում: Մեր հողերին թուրքի կեղտոտ ոտքը չպտի կպչի, մեր հողը սուրբ է, մեր հերոսները կյանք են տվել այդ հողերի համար»:

ԱՐՑԱԽԻ ԴՈՒՍՏՐԸ, այդպես եմ անվանակոչում նրան, գուցե նաև ԱՐՑԱԽԱԴՈՒՍՏՐ... Գեղեցկատե՛ս պարմանուհի, երկարամա՛զ աղջնակ, իմ սիրելի՛ աշակերտուհի, քո շուրթերով թող Աստծուն հասանելի լինեն բոլորիս աղոթքները, թող նա միշտ պահապան լինի մեր զինվոր տղաներին, որ սահման են պահում, որպեսզի խաղաղ լինի հայոց երկիրը:

http://hayernaysor.am/

28.07.2016

ՆՐԱՆՑ ՇՆՈՐՀԻՎ ԵՄ ԱՊՐՈՒՄ ԱՅՍ ՀՈՂԻ ՎՐԱ

Սա այն տարածքն է, որտեղով ես ամեն օր անցնում եմ, այստեղից մի փոքր թեքվում, աստիճաններով իջնում եմ մեր շենքի նկուղը, որտեղ պատսպարվում ենք, երբ հրետակոծում են մեզ: Այն շատ խոնավ է, բորբոսնած, երբեմն ջրեր են թափվում, երբեմն կրծողներ են երևում, բայց մենք հարմարվում ենք, և ես ուրախ եմ, որ այստեղ եմ ապրում: Այդտեղից ոչ շատ հեռու մի այգի ունեմ, մի փոքրիկ հողակտոր, որ դարձել է թաղամասի երեխաների համար մի սիրուն հավաքատեղի. թող հավաքվեն, ուրախանան, ոչինչ, որ այնտեղից ոչ մի բան չեմ վերցնում: Այստեղից ևս մի քանի քայլ, հասնում եմ իմ բնակարանը, բայց փոշոտ եմ լինում, երբեմն ցեխոտված՝ նայած եղանակին, էլի հարմարվում եմ, որ այստեղ եմ ապրում:

Արևը պայծառ փայլում է վերևից, ու ես կկոցում եմ աչքերս, երկինքը կապույտ է, լազուր, ու ես մոռանում եմ, որ երբեմն փոշոտ եմ լինում կամ գուցե և ցեխոտ, բայց խաղաղ է իմ շուրջը, և ես ուրախ եմ, որ այստեղ եմ ապրում: Գոհ եմ իմ կյանքից, երբ խաղաղ է երկինքը, արևոտ օրս էլ ինձ մի պահ մոռացնել է տալիս մեր ապրած տագնապալից օրերը…Հոգիս հանգիստ է, երբ շուրջս խաղաղ է, երբ մարդիկ ոխ չունեն միմյանց հանդեպ: Անհոգ եմ դառնում, երբ ժպիտներով են լցնում օրս, երբեմն անակնկալ մատուցում, երբեմն արտասվելու չափ ծիծաղեցնում…Ի՞նչ լավ է, որ այստեղ բոլորը ճանաչում են իրար ու հավատում միմյանց, առավել շատ լավ է, որ երբեմն դուռը չենք կողպում, բայց բանալին վերցնում ենք՝ մոռացած, որ դուռը բաց ենք թողել:

Ուզում եմ իսկական հայ լինենք՝ արդար ու ազնիվ, մարդասեր ու հայրենապաշտ, բայց տխրում եմ, երբ անհանգիստ է հայի հոգին, և իմ ազգն է այս օրերին ընդվզում մայր հայրենիքում: Իմ համար ահա-

բեկիչ չէ այն մարդը, ով իմ հայրենիքն է ազատագրել, իմ համար ոստիկան չէ օրենքը խախտող իրավապահը, չեմ սիրում հարբեցող, հայհոյող մարդուն, ում նաև ցուցարար են անվանում, չեմ էլ ուզում տեսնել այն անարդար պաշտոնամոլներներին, որոնց նույնպես վերնախավ են կոչում: Ովքեր էլ լինեն, սիրում եմ արդարներին, առավել ևս նրանց, ովքեր այս հողի համար են պայքարել, և երախտապարտ եմ բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքն են տվել, ովքեր զենք են վերցրել՝ հող հայրենի փրկել, որ այստեղ մենք խաղաղ ապրենք…

http://usarmenianews.com/am-n-4628.html

29.07.2016

ՏԱՌԱՊԱՆՔԴ ՓՈՐՁ ՈՒՆԻ, ԲԱՅՑ ՈՉ ՀԱՅԸ ՀԱՅԻ ԴԵՄ

12-րդ դասարան փոխադրված իմ աշակերտներից մեկը, որ այս օրերին ընտանիքով Հայաստանում էր, եկավ իր ուսուցչուհուն տեսության. նա պետք է այստեղ մասնակցի ասմունքի հանրապետական մրցույթին: Հանկարծ հիշում եմ, որ մի տեսանյութում վերջերս նրան տեսել էի Խորենացի փողոցում՝ ցուցարարների մեջ: Ես չէի զարմանում, երբ նա պատմում էր, որ ամենևին զենքի կրակոցներից չվախեցավ, Արցախում ապրող յուրաքանչյուր ոք, առավելապես սահմանին մոտիկ ապրողներս, որ կրակոցների արձագանքների տակ ենք լինում, վաղուց դրան հարմարվել էինք արդեն: Ու նա պատմում է, որ դա այն օրն էր, երբ արցունքաբեր գազ էին բաց թողել. «Ժողովուրդն իրեն կորցրած՝ դեսուդեն էր վազվզում, ես էլ վազելիս զգացի, որ շնչահեղձ եմ լինում, սարսափեցի, փրկությունս այդ պահին ջուրն էր, լավ է, որ այդ պահին ջուր էլ գտա…»:

Որքա՜ն բարդ են մարդկային հարաբերությունները…Այդտեղ կա զոհված ոստիկան, կան նաև անհայր մնացած երեխաներ, Սասնա դյուցազունների խենթությունն իրենց մեջ կրող վիրավոր «ահաբեկիչ-ծռեր» կան՝ ժողովրդի աղերս աղոթքներով, որ բոլորն էլ փրկվեն… Քարկոծված ոստիկաններ կան, տեղի, թե անտեղի կալանավորված-ներ, արցունքաբեր գազից կուրացած քաղաքացիներ, պատանդ վերցված մարդիկ…Ովքե՞ր են նրանք, հայ ու նորից հայ….Հիշում եմ դավաճան Վասակ Սյունեցու՝ Ներսիկ և Բաբիկ որդիներին, որոնց պարսից Հազկերտ արքան պատանդ էր վերցրել՝ ի պատասխան դավաճան հոր խոստումների: Բայց այդ պատանդներից մեկը մորթազերծ արվեց արքայի հրամանով, մյուսը փախավ, հասավ հայոց երկիր ու արժանացավ հոր դատաստանին: Ի՞նչ լավ է, որ այօրվա պատանդները գոնե տարբերվում են դարերի խորքից մեզ հասած պատանդների կարգավիճակից:

Հայաստանում կատարվող օրվա իրադարձություններն ենք մեր հոգուն շաղախում, իսկ այս օրերի անձրևային եղանակն էլ իր ամենօրյա կաթկթոցով կարծես մարդկային հոգիների առեղծվածն էր փորփրում՝

մեր հարափոփոխ տրամադրություններին զուգորդված: Հինավուրց մայրաքաղաքի խռովքը պատել է բոլորիս, ապրում ենք անհանգիստ, փոքր-ինչ տագնապով, դրամատիկ ապրումներին միախառնված: Բոլորս էլ գիտենք, որ երբ սև ամպեր են կուտակվում երկնակամարում, հայոց աշխարհին պատում է վիշտը, այն ալիքվում է դեպի հեռո՜ւ-հեռավոր ափեր, ու ցավից կուչ եկած հայի սրտի զարկերն արձագանք են տալիս ամենուր, որ սատար կանգնեն իրար և փրկության ձեռք մեկնեն միմյանց: Իմ խե՛ղճ ազգ, տառապանքդ փորձ ունի, բայց ոչ հայը հայի դեմ, չնայած բոլորս էլ արդար մի երկիր ենք ուզում, և արդարությունն է աղաղակում մեր հոգում:

http://usarmenianews.com/am-n-4658.html

30.07.2016

«ՈՂԲԱՄ ԶՔԵԶ, ՀԱՅՈ՛Ց ԱՇԽԱՐՀ...»

Խորենացի փողոցում տեղի ունեցող իրադարձություններն առիթ են տալիս մանկավարժիս ասելու հոգումս ծվարած այն տառապագին խոսքը, որին շատ-շատերը կարող են հակադարձել: Թող ինձ ների ողջ հայությունը, բայց երբեմն երանի եմ տալիս ապրիլյան դաժան օրերին, երբ սարսափած հոգով իմ հրետակոծվող Մարտակերտում էի: Այդ օրերին գոնե գիտեինք, որ մի ամբողջ հայ ազգ թշնամու դեմ ոտքի էր կանգնել իր համառ կամքով ու արիությամբ, միասնական ու համախմբված:

Հարաբերական խաղաղ պահերին նկուղից դուրս եկած ընտանիքս մոտակա հնգհարկանի շենքերի տարածքում հայացքով մարդ էր փնտրում, բակում մենակ մնացած յոթ տարեկան փոքրիկ թոռնիկս իր խաղընկերներին էր ուզում, շրջակայքում հատուկենտ տղամարդկանց տեսնելով՝ սրտներս ուրախությամբ էր լցվում…Ինչպիսի՜ մարդասիրություն, ընդհանրապես ՄԱՐԴՈՒ նկատմամբ կարոտ ունեինք, տեսնել որևէ մեկին, գրկախառնվել, որպիսություն հարցնել...Այդ օրերին գիտեի, որ հայի անսասան կամքը դիմադարձ կլինի մեր թշնամուն և այնքան չէի հուսահատված, որքան այժմ, երբ հեռվից հեռու «ականատեսն» եմ դառնում տեղի ունեցող երևանյան իրադարձություններին:

Թվում է՝ ոստիկանների և ցուցարարների միջև կարմիր խաչի դերում հայտնվածները լրատվության աշխատողներն են, որ ազատ երթևեկում են երկու կողմում, բայց երբեմն նրանց աշխատանքին էլ խոչընդոտում են: Ցավալի է, որ հիվանդանոցներում ամեն օր ավելանում են վիրավորները, ոստիկանատներում՝ բերման ենթարկված մարդիկ, կալանավորվածներ…Այս օրերին ինչպիսի՜ թշնամություն, մարդը մարդու դեմ, այն էլ՝ նույն ազգից... Տեսնես հիվանդանոցներում ոստիկան և ցուցարար վիրավորները նորի՞ց անհաշտ են, հուսանք գոնե այնտեղ ապաքինվելուց հետո ատելություն չի լինի: Լուսավոր օրերի հույսով, հիմա անհանգիստ հոգիս թև առած՝ Խորենացու փողոցում Խորենացու խոսքերն է աղաղակում. «Ողբամ զքեզ, հայո՛ց աշխարհ...»:

http://usarmenianews.com/am-n-4678.html

02.08.2016

ԵՐԲԵՄՆ ՄԵՆԱԽՈՍՈՒՄ ԵՄ ՈՒ ՆՈՐԻՑ ԳԱԼԻՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատահում է՝ երբեմն սպասումներով լցված օրդ դառնում է դատարկ, ու դատարկության մեջ կամա՜ց, շատ կամաց ցավի փոշիներն ես հավաքում, որ փշրանքներ չթողնես հանկարծ: Համբերությունդ զենք ես դարձնում, անմռունչ տանում ցասումը հոգուդ, միայն թե հանկարծ այդ փոշիներից դատարկությունդ նորից չլցվի:

Լինո՞ւմ է այսպես, երբ ներսուզվում ես ինքդ քո մեջ ու չգիտես անելիքդ, բայց մի ներքին թախիծ պատում է հոգիդ, ու անհասկանալի օրդ ասում է քեզ, որ երբ խոհեմությունն է հաղթում, տխրում է հոգիդ, ալեկոծվում լուռ...Այս պահից հատ-հատ փրփուրները վերցնում եմ և թողնում, որ հոգիս ալեկոծվի հանդարտ, քանի դեռ խոհեմությունն է հաղթել:

Վերլուծաբան չեմ, բայց երբեմն խոսում եմ ինքս ինձ հետ, ու այն երբեմն դառնում է հասանելի շատերին, երբեմն գուցե անհասանելի, բայց ես մենախոսում եմ, երբ հոգիս է իր բնից ծառս լինում հանկարծ: Ու հարցնում եմ՝ օրվա պահերի արևագա՞լն եմ սիրում, թե՞ արևամուտը… Բայց ո՞վ է իմանում, երբ միջօրեի արևոտ օրը, հոգուս մեջ նստած, ահազանգում է մի նոր մայրամուտ՝ խավարով պատված: Հավատո՞ւմ եմ ես, թե չեմ հավատում ցասկոտ ձայներին, այդ չէ կարևոր, երբ ահեղ կանչի արձագանքներում մի նվազ ձայն է հանկարծ կարկաչում: Մեր դիմանկարով ամբողջանո՞ւմ ենք, թե՞ արժևորվում, ես դա չգիտեմ, երբ մաշում ենք հոգիները մեր անհաշտության եզրերի հանգույցներում լուռ: Նորից գալիս եմ իրականություն….Կրքերը հանդարտվեցի՞ն, թե՞ նորից ծանր ապրումներ կունենանք, երբ սահմանամերձ բնակավայրում ապրելով՝ մի պահ մոռացել էի, որ արտաքին թշնամի ունենք: Հայոց աշխարհում խաղաղ լուսաբացներ ենք երազում, բայց, ցավոք, վերջերս զոհեր եղան ու բազմաթիվ վիրավորներ: Իսկ մեր թշնամին արթուն է, զգոն, այս օրերին երևի նա էլ ուշադիր հետևում էր այս իրադարձություններին, բայց ո՞ր վիճակն է նրա համար նախընտրելին՝ մեր հանդարտությո՞ւնը, թե՞ հայաստանյան խառնորակ օրերը, որից օգտվելով՝ կարող է շարունակի իր նախկին ոճիրը:

Չգիտեմ՝ որքանով եմ կարողացել առայսօր որպես մարդ-անհատականություն ներկայանալ մանկավարժական գործունեությանս մեջ և հայրենաշինության գործում, բայց համոզված եմ, որ մեզանից յուրաքանչյուրն իր դիմանկարով ամբողջանում է այն միջավայրում, որտեղ շրջապատի կողմից կա արժևորում ու գնահատանք: Իսկ այդ գնահատանքը մեր օրերում մեր յուրաքանչյուրի ներսում եմ տեսնում, ազգիս միասնականության մեջ, երբ մեր խիղճն է խոսում՝ արդարության դրոշմն իր վրա կնքած:

http://usarmenianews.com/am-n-4704.html

03.08.2016

ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՆԱԿՆԿԱԼ

Այսօր մեր հայրենակից արցախցի գրող Լևոն Ադյանի ծննդյան օրն է... Նա Բաքվի հայտնի դեպքերից հետո տարագրվել է Ռուսաստան, ապրել տարբեր քաղաքներում, վերջին տարիներս բնակվում է հեռավոր Սանկտ Պետերբուրգում: Թերթում եմ նրա «Իրիկնային աղջամուղջ» ժողովածուն, որ վերջին ամիսներին դարձել է իմ սեղանի գիրքը: Այն լույս է տեսել Ստեփանակերտում 2013 թ-ին, որը բովանդակում է հեղինակի մի շարք վիպակներ, պատմվածքներ ու մանրաքանդակներ, որոնք արտացոլում են հայրենի Արցախ աշխարհի ու նրա մարդկանց առօրյան:

Ես առերես նրան չեմ ճանաչում, բայց նա իմ դպրոցական տարիների ճանաչված գրողներից է՝ ծնված Արցախի Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում 1940 թ-ի օգոստոսի 3-ին: Հայացքս սահում է նրա գրական գործունեության անցած ճանապարհին: 1970 թ-ից ԽՍՀՄ գրողների միության անդամ է, ներկայումս՝ Ռուսաստանի, Հայաստանի և Արցախի գրողների միությունների անդամ: Նա հեղինակ է ինքնուրույն ու թարգմանական ավելի քան երեսուն արձակ գրքերի՝ «Կյանքի ճանապարհին», «Հեռու լեռներում», «Իմ երկրի մարդիկ», «Կորսված բարդիներ», «Այն հեռավոր ամռանը», «Տունը գյուղի ծայրին», «Ձորում աղմկում է գետը», «Աշնանային ցրտեր», «Մոռացված երգը», «Դարձ ի շրջանս յուր», «Հեռացող եզերք» և այլն: Մի շարք գրքեր լույս են տեսել նաև այլ լեզուներով:

Իմացա, որ այս օրերին արձակագիր Լևոն Ադյանը գալիս է Արցախ: Մտածում էի՝ տեսնես կայքի ընկերների՞, թե՞ մանկավարժի ու գրողի հանդիպում կլինի: Եվ իմ մտորումների մեջ նախապատվությունը տվեցի երկրորդին, բայց հեռավոր ափերում ապրող իմ լավ բարեկամուհիներից մեկը խորհուրդ տվեց ինձ՝ այդ հանդիպման ժամանակ դու աշակերտուհի կլինես, Ադյան գրողը՝ ուսուցիչ...Երևակայությամբ ես այդ անակնկալ հանդիպմանն էի նախապատրաստվում, մերթ աշա-

կերտուհի էի, մերթ՝ ուսուցչուհի…Երբեմն խախտում էի կարգը և դառնում կայքի ընկերուհի, բայց նորից հավաքում էի ինձ, որ ես ուսուցչուհի եմ, իսկ նա իմ դպրոցական տարիների գրողն է, ում ծանոթ էի վաղ հասակից:

Հետադարձ հայացք ձգեցի անցած օրերիս…Գրողի «Հեռացող եզերք» վեպը ձեռքիս մտա դասարանից դասարան…Այն իրական պատմություն է, որը Լևոն Աղյան արձակագրի գրչի ու դիտողականության շնորհիվ՝ ականատեսի հայացքով անցած դարավերջի՝ հայերի նկատմամբ Բաքվի և Սումգայիթի ոճրագործությունը գրականության մեջ մտցվեց որպես իրականության գեղարվեստական վերարտադրություն: Գրողը նկարագրում է մարդկային ճակատագրեր, դրա հետ նաև փիլիսոփայորեն իմաստավորում նրանց կյանքը, նկարագրում նաև քաղաքակրթությունից հազար տարով հետ մնացած մի վայրենություն:

Այդ ոճրագործությունը մի այլ դեմք ստացավ իմ աշակերտների հայացքներում՝ գեհենի վկա գրողի անձնական տառապալից կյանքով: Այստեղ նա ոչ թե պատմում է ինչ-որ հերոսի մասին, այլ ինքն իրադարձությունների առանցքում է, հենց ինքն է իմաստավորում երևույթը՝ որպես պատմական իրադարձության ականատես:

Գիրքը ձեռքից ձեռք էր անցնում, արցունքոտված աչքեր կային ինձ հառված, մի ամբողջ դպրոց ամիսներ շարունակ աղյանական օդ էր շնչում: Գրողի միջամտությամբ դպրոցը գրքեր ստացավ, կամաց-կամաց հեղինակի մյուս ժողովածուներն էլ ձեռքից ձեռք անցան…Շուտով հիացական տողեր էին ծնվում նաև ինձ մոտ նրա ստեղծագործությունների մասին, արվեստագետ գրող կար այնտեղ, հրաշալի գեղանկարիչ, իմաստնացած մարդ…Եվ իմ ամեն մի շարված տող մի նոր ընդվզում էր ծնում հոգումս, դպրոցի սովորական ուսուցչուհին դարձել էր մի հասարակ վերլուծաբան, որ իր գնահատականն էր համարձակվում տալ գրողի սեղծագործություններին:

Դրանք իրար հետևից տպագրվում էին, իսկ ես հիացած էի, ինձ վերագտած, որ գրականագիտական վերլուծությունների փորձեր եմ անում, արժանանում նույնիսկ գովասանքների, բայց նաև աշակերտուհու նման երբեմն ընդունում ինձ ուղղված դիտողությունը:

Մի որոշ ժամանակ գրիչս կանգ էր առել, բայց այս օրերին մտորում էի՝ հայրենի հողի կանչը հոգում՝ Աղյան գրողը գալիս է Արցախ, ուրեմն մի բան պետք է մտածել: Նոր ծնված տողերիս մեջ տեսա իր վեհության պատվանդանին կանգնած գրողին, որ եկել էր հայրենի բնաշխարհը: Գեղեցիկ էր ամեն ինչ, գրիչս սահուն շարում էր տողերն այն հայրենի

հիշատակների մասին, որտեղ անցել էր նրա պատանեկությունը և ահա նորից եկել էր այցի այդ վայրերին ու հարազատ մարդկանց: Եվ նրա «Աշնանային ցրտեր» վիպակի իմ վերլուծությունը **բարի գալուստի** անակնկալ պիտի դառնար մեր հանդիպման ժամանակ, բայց նախատեսեցի նաև **բարի ճանապարհի** մի նոր անակնկալ, որ օրեր անց օտար ափերում տուն հասնելուն պես՝ նա պիտի ընթերցեր գեղագետ գրողի մասին մի նոր շարադրանք… Հայրենի բնաշխարհ կար այնտեղ, Ադյան գրող կար վեհացած…

Տող տողի վրա մտքերս ծնվում էին, և հանկարծ օրեր առաջ իմացա, որ չենք հանդիպելու՝ հանգամանքներից ելնելով….Բայց ինչպե՞ս, չէի հավատում, չէ՞ որ երբեմն իրականություն են դառնում չիրականացվող երազանքները: Շարվածքս կանգ առավ միանգամից ու այդպես էլ մնաց անավարտ, բայց հոգումս դաջված մնաց չկայացած մի հանդիպում, չստացված մի անակնկալ…

Այսօր իմ հայրենակից գրողի ծննդյան օրն է, ի սրտե շնորհավորում եմ նրան, բայց հանկարծ մի հեռախոսազանգ, ինձ սպասվում է մի նոր անակնկալ... Արցախիս մայրաքաղաքում ես հրավիրված եմ Լևոն Ադյան գրողի ծննդյան տարեդարձին…

Այդ օրվա հանդիպման մի հավերժացած պահ:

http://hayernaysor.am

06.08.2016

ԵՐԱԶՈՒՄ ԵՄ ՄԻ ԿՅԱՆՔ, ՈՐՏԵՂ ԵՍ ԷԼ ՎԱՂՎԱ ՕՐ ՈՒՆԵՄ

Արտաքուստ ես խաղաղ եմ, արևն Արցախում նույն ձևով է ջերմացնում մեզ, ինչպես ուրիշ տաք երկրներում, այստեղ մարդիկ ապրում են սպասումներով, բայց երբեմն այն դառնում է հոգեցունց, երբեմն՝ հանդարտեցուցիչ…Բայց ինչո՞ւ չեմ կարողանում վաղվա մասին մտածել, վաղը չկա՞, թե՞ կասկածում եմ իմ վաղվա օրվան, չէ՞ որ միշտ երազանքներ ունեցել եմ: Անհանգիստ հոգիս ինձ սաստում է՝ ապրի՛ր այդ օրով, երբեմն՝ փոթորկոտ, երբեմն՝ հանգիստ, միայն թե ապրի՛ր... Երբեմն հարցնում եմ ինձ՝ արդյո՞ք ապրելու ճիշտ ձևը գիտեմ…Պատահում է՝ արդարանում եմ, երբեմն էլ մեղադրանքի եմ արժանացնում ինքս ինձ՝ այսպես ապրելուս համար, բայց միշտ էլ համոզվում եմ երևույթի ճշմարտության մեջ, որ ուրիշ ձևով ապրել երևի չեմ էլ կարողանա:

Ինչո՞ւ երբեմն չեմ երազում շքեղ կյանքի մասին կամ էլ չեմ նախանձում բարվոք կյանքով ապրողներին: Դա ինչպե՞ս է լինում, հարմարավետ պայմաննե՞ր, թե ունևորի կեցվածքով սեփականատերեր, որ չգիտեն որտեղ թաքցնեն իրենց ունեցվածքը: Երբեմն անհանգստություն եմ ապրում, երբ ամսվա գումարայի ծախսերի արդյունքում մի փոքր ավելցուկ եմ նկատում, ուրեմն կարելի է մի փոքր էլ ազատ ապրել, այլապես չենք իմանա՝ որտեղ թաքցնենք այդ պահուստայինում հայտնված վերջին գումարը: Միայն հոգու հանգստություն եմ ուզում, այնտեղ պահուստային թաքստոց չկա, բաց է, ինչպես ձեռքի ափը, անգամ փոթորկոտ պահերիս այդ հոգին ուրիշ երազանքներ չունի, միայն հանդարտություն է ուզում, իսկ այն ամենևին կապ չունի հարմարավետ կյանքի հետ:

Երազում եմ մի անհոգ կյանք, որտեղ մտածումներս անցյալ են դառնում, այդ կյանքում ես մտովի չեմ վիճվում այս աշխարհի տերերի հետ, ովքեր մեր բախտն ու ապրելու իրավունքն են որոշում: Այս անհոգ կյանքում հավատում եմ մարդկանց, այստեղ ինձ չեն սաստում, որ բոլորին մի՛ հավատա… Այս կյանքում նաև երազանքներ կան վաղվա և նրան հաջորդող օրերի մասին: Կարևորը, որ այդ օրերում նաև ես կամ

իմ գոյությամբ, բայց նաև իմ ոչ հարմարավետ կյանքով, որը գոհացնում է ինձ: Ի՞նչ լավ է, որ մարդ վաղվա օրվա մասին երազում է՝ ամուր բռնած իր ապրելու իրավունքը: Երևի իմ անհանգիստ արցախյան հողն էլ երազում է իր վաղվա խաղաղ օրերի մասին՝ թեկուզ ոչ հարմարավետ կյանքով, բայց ապրելու իրավունքն իր ձեռքին: Երազում եմ բոլորին ոչ հասու մի երանության մասին, որտեղ մենք վաղվա օր ունենք, այնտեղ ես էլ կամ իմ այս կյանքով, հոգիս հանգիստ է այնտեղ, հանդարտ ու խաղաղ:

http://usarmenianews.com/am-n-4796.html

09.08.2016

ՀԵՌԱՎՈՐ ԱՓԵՐԻՑ ԵԿԱԾ ՄԻ ԱՆՍՈՎՈՐ ԱՆԱԿՆԿԱԼ

Կարոտ, ամենախոցելի զգացումներից մեկը, որ լեզու առած կարող է խոսեցնել մարդուն, մի բան, որ չի ճանաչում հեռավորություն ու տարածք, այն ժամանակի մեջ անգամ չի տեղավորվում, բայց կարոտում ես մարդուն, երբ նա հեռվում է, անտեսանելի…Հայության համար կարոտը կռունկի թևին է նստած, և հեռուներից կարոտը հայերեն է հնչում, հայերեն է բարբառում հոգում ծվարած անքնությունը, բայց տեսնես կարոտը համ ու հոտ ունի՞, իսկ ինձ մոտ երբեմն կարոտալից խոսքերը գույներ էլ են ունենում, երբ այն ինձ է հասնում հեռավոր ափերից. «**Սիրելի՛ Նատաշա, խնդրում եմ գրեք Ձեր տան հասցեն… Անակնկալ ունեմ Ձեզ համար, արե՛ք այդ լավությունը նվաստիս…**»:

Մտորումներս ինձ տանում են դեպի հեռավոր օտար ափեր, որտեղ կարոտը բույն է դրել, բայց նորից նոր բույն է հյուսում հայության համար, որտեղ թախիծ կա, անսահման ցավ: Ու այդ անսահմանության մեջ մի նոր անուն՝ Կալիֆորնիայի Սակրամենտո մայրաքաղաքում ապրող հայուհի, նրա կողմից եկած մի նամակ՝ հայերեն տառերով, հայաբառ շնչով, կարոտով լցված. «**Երանի Ձեզ նման հոգով ուժեղ լինեի ու կարողանայի օգնել Ձեզ ինչ-որ կերպ… Խաղաղություն եմ ցանկանում հայոց աշխարհիս… Գայանե Հովհաննիսյան…**»:

Ինձ համար այդ անակնկալը, որ պիտի ստանայի փոստային բաժանմունքից, մի նոր անունով է հնչում, որ պիտի դառնար Սպասում…Եվ երկու տասնյակ օր անց ստանում եմ հեռավոր ափերից եկած մի ամսագիր, անսովոր մի անակնկալ, նրա թերթերի արանքում՝ մի փոքրիկ բացիկ. «**Ձեր գրառումները կարդալով՝ ես շատ համակրեցի Ձեզ: Հպարտանում եմ Ձեր նման հերոս ուսուցչուհի, հայ մայր հայրենասերի էությամբ: Եթե հավանեք «Համայնապատկեր» ամսագիրը, Դուք կդառնաք բաժանորդ: Սիրով՝ Նատաշային Գայանեից**»:

Նայում եմ հեռավոր Կալիֆորնիայում հրատարակվող ամսագրին՝ գրական-մշակութային հանդես, շապիկի վրա անվանի քանդակագործ Արա Շիրազի նկարն է, իսկ կողքին տաղանդավոր բանաստեղծի՝ որդուն պատգամած խոսքերը. «**Քանդակի՛ր, իմ բալի՛կ, Անդրանիկ, Վարդան, այնպես, որ արձանն էլ հայերեն խոսի...Հ. Շիրազ**»:

Երկամսյա հանդեսին բաժանորդագրվածի իրավունքով թերթում եմ այն…Արցախ կա այնտեղ, մի ողջ Հայաստան, ծանոթ անուններ, ճանաչված դեմքեր, բայց իմ մտապատկերում հարազատ դարձած հայուհի կա օտար ափերում, որ կարոտ ունի հոգում և ինձ փոխանցված մի նոր սպասում:

http://hayernaysor.am

10.08.2016

ՄԻՇՏ ԷԼ ՈՒՍՈՒՑՉԻՑ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ

Ոչ մի օրենքում գրված չէ, որ ուսուցիչը պետք է կոշտ ու կոպիտ լինի աշակերտների հետ: Երբեմն հայտնվում ենք տարբեր իրավիճակներում, որտեղ ուսուցչից վարվելակերպ է պահանջվում: Պատահում է նույնիսկ, որ երբեմն աշակերտների հետ ունեցած վերաբերմունքով՝ ուսուցիչն ինքն է կարգապահական խախտում կատարում՝ տեղի թե անտեղի գոռգոռում աշակերտների վրա, վիրավորական բառեր ուղղում նրանց, և նրա ոչ մանկավարժական վերաբերմունքի արդյունքում մի մեծ անջրպետ է առաջանում ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում: Երիտասարդ ուսուցչուհու՝ ինձ ուղղված մտահոգությունը, որ իրեն ասում են, թե ուսուցիչը պետք է չոր ու ցամաք խոսի աշակերտների հետ, որքան զարմանալի, նույնքան հիասթափեցնող էր այն ուսուցիչների վերաբերմունքի առումով, որ երբեմն չեն ուզում դուրս գալ նախկին կաղապարված իրավիճակից, և նույնիսկ նրանց կողմից որոշ դեպքերում աշակերտները դիտվում են որպես «գործիք», ովքեր կարծում են նույնիսկ կարող են պարտադրաբար իրենց կամքը թելադրել:

Վարվեցողության կանոններ սովորեցնողները առաջին հերթին իրենք պետք է դրանց տիրապետեն: Նման ուսուցիչները ձգտելու են ուրիշներին իրենց օրենքներն ու սեփական կարծիքները թելադրել, երբեմն նրանց դուր չի գալու, որ տվյալ ուսուցիչը սիրվում է աշակերտների կողմից կամ ուսումնական գործընթացում հաջողություններ է գրանցում, անպայման կգտնեն արդարանալու միջոց՝ նա դպրոցի լավ դասարաններում է դասավանդում, այդ պատճառով էլ նրա աշակերտներն այս կամ այն մրցույթներում կամ օլիմպիադաներում հաղթանակներ են գրանցում... Նրանց կողմից սովորական են դառնում դիմացինի մեջ թերություններ գտնելը, առերես ժպտալն ու մարդու հետևից ցեխ շպրտելը, իսկ դրանք չպետք է մտահոգեն բոլոր այն ուսուցիչներին, որոնց համար մանկավարժության ճանապարհը սահուն է և անցանելի: Այսպիսի դեպքերում իրենց ամենագետ համարող ուսուցիչների կեղծ ժպիտների փոխարեն ես կգերադասեի աշակերտների հետ ունեցած նորմալ հարաբերություններով նրանց սերն ու հարգանքը վայելել: Կարծում եմ՝ իմ այս տողերը կարդացող ուսուցիչները կհասկանան, թե որքանով է

ճիշտ, երբ աշակերտների հետ նրանք հարաբերվում են չոր ու ցամաք և կոշտ վերաբերմունքով:

Երբեմն աշակերտին պետք է դիտել հավասար իրավունքներով, հարգել նրա տեսակետը, կատարած առաջարկությունը, կարծիքներ փոխանակել, իսկ դա կայանում է ուսուցիչ-աշակերտ նորմալ հարաբերություններում: Մանկավարժի աշխատանքը բարդ գործունեություն է, այն պետք է կատարել հոգու թելադրանքով, այդ դեպքում միայն կարելի է հասնել հաջողության, որի արդյունքում կսիրվես աշակերտներիդ կողմից, իսկ ովքեր հեռու են նման մանկավարժական մոտեցումից, կփորձեն սխալներ փնտրել դիմացինի աշխատանքում:

Կարծում եմ՝ ավելի նախընտրելի է աշակերտների սերը վայելել, քան դրա փոխարեն կորցնել նրանց և ընդունել մի քանի վայ մանկավարժների կարծիքներ: Խորհրդային տարիների ուսուցչակենտրոն ուսուցումն իր դարն ապրած է, այն փոխարինվել է աշակերտակենտրոն ուսուցման, որի համաձայն աշակերտն առաջնային դերում է, իսկ ուսուցիչն ուղղորդում է նրան, երբեմն հավասարվում են նրանց իրավունքները, և այն առանձնապես նկատելի է լինում բարձր դասարանի աշակերտների հետ ունեցած հարաբերություններում: Երբեմն ուսուցչի հոգուց բխած խոսքը նոր թևեր է տալիս աշակերտներին, մի նոր մտերմիկ հարաբերություն ստեղծում նրանց միջև, որը կարծում եմ՝ ոչ ոք իրավունք չունի խաթարելու: Բայց նաև չպետք է թույլ տալ, որ չարաշահեն ուսուցչի մտերմիկ վերաբերմունքը, թերևս այս դեպքում ամենաճիշտը ոսկե միջինն է, որ պետք է կարողանալ պահպանել:

http://usarmenianews.com/am-n-4867.html

12.08.2016

ԵՐԱՆԻ ՁԵԶ, ՈՐ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԵՔ ԱՊՐՈՒՄ

Արտակերտի՝ սահմանամերձ բնակավայրի իմ տանը հյուրընկալվող հեռավոր Լոս Աջելեսից եկած հյուրին բարևելուց հետո յոթ տարեկան թոռնիկիս հաջորդ խոսքը սա էր. «**Երանի Ձեզ, որ Ամերիկայում եք ապրում**»: Ասաց ու գլխիկոր սենյակից դուրս եկավ… Իմ բոլոր հյուրերն էլ մնացին զարմացած: Ես ինքս էլ երբևէ չէի սպասում նման արձագանքի: Մի պահ կարծես կանգ առավ ամեն ինչ, ինձ թվաց շնչելու օդն էլ չի հերիքում… Ոռպեներ անց, երբ ամեն ինչ հունի մեջ էր ընկել, կարծես մոռացել էինք խոսքերը, ես Նարեկիս հարցրի, թե ինչո՞ւ նա այդպես ասաց: Ուսերը թոթվեց ու լռեց: Երբ ժամեր հետո հեռավոր ափերից Արցախ եկած իմ սիրելի հյուրը՝ բանաստեղծուհի Նելլի Ավակովան /Գրիգորյան/ թոռնիկիս համբուրում ու բարի ճանապարհ էր մաղթում, նա նորից կրկնեց իր խոսքը արցախցուն հատուկ հնչողությամբ ու մտերմական. «**Ներակ քեզ, որ Ամերիկայումըս ապրում**»: Մենությանս մեջ ես խոսում եմ Արցախի բոլոր բալիկների հետ, որոնց մանկությունը խաթարվել էր ապրիլյան պատերազմական օրերին: Իմ լռությունն աղաղակում է՝ ի լուր աշխարհի տերերի, որ մենք խաղաղ ու ապահով կյանք ենք ուզում այս փոքրիկ լեռնաշխարհում: Ես հետո գրկում եմ իմ Նարեկին, համբուրում նրան, բայց մտահոգ է նա. «**Ես չեմ ուզում պատերազմ լինի, ինչո՞ւ են մարդիկ սպանվում**»:

Իսկ ինչո՞ւ եմ ես զարմանում, որ պատերազմ տեսած այս բալիկը մի նոր կյանք է ուզում... Բայց ինչո՞ւ չզարմացա, որ ամիսներ առաջ թոռնիկս նոր տարվա տոնածառը զինվորական համազգեստով էր զարդարել, կամ բակում խաղացող երեխաների հետ միշտ «Պատերազմ» է խաղում, նույնիսկ խանութի խաղալիքների մեջ նա զենքն է ընտրում,

իսկ ապրիլին՝ բնակավայրիս հրետակոծության օրերին, երբ շենքի նկուղում սարսափահար վեր էի թռչում, իրեն տղամարդ համարող թոռնիկս հանգստացնում էր ինձ, որ չվախենամ, այդ մերոնք են հրետակոծում: Ու հայացքը հառում էր շրջապատի դատարկությանը, իսկ բակում խաղընկերները չկային, իսկ նա պատերազմից հոգնած խաղալ էր ուզում…

Տխրում է հոգիս, «ինչո՞ւ են մարդիկ սպանվում»,-կրնկնում եմ ես, ինչո՞ւ է մեր թոռնիկը երանի տալիս հեռուներում ապրողներին…

http://usarmenianews.com/am-n-4923.html

13.08.2016

ԵՐԱՆԻ՞ ԹԵ ԲՈԼՈՐՍ ԱՅՍՊԵՍ ՍԻՐԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ

Նայում եմ նկարին, 11-րդ դասարան փոխադրված իմ աշակերտուհին է՝ Նարինե Գրիգորյանը… Հիշում եմ նրան դպրոցական նստարանին, երբ մտնելով դասարան՝ հանկարծակիի եկա՝ ինձ ուղղված նրա անկեղծ խոսքերից. **«Տիկի՛ն Պողոսյան, ես Ձեզ սիրում եմ…»:**

Այդ օրն ինքնաբուխ եկած տողերն ինձ մոտ մի փոքրիկ մանրապատում պիտի ձևավորեին՝ իմ ժպտադեմ աշակերտուհու սիրունիկ կերպարով: Այն ուսուցչուհուս կողմից իմ աշակերտուհուն և ընդհանրապես, մարդուն ու կյանքին ուղղված սիրո արտահայտություն էր… Երանի՞ թե բոլորս այսպես սիրեինք միմյանց:

«Զարմանալի՞ չէ, երբ դասարանում, հանկարծ մեկը, հենց նստած տեղից, ինձ մեղմ ժպտում է ու այսպես ասում. «Ես Ձեզ սիրում եմ...»: Նայում եմ նրան, կարծես անվարան փորձում եմ ճշտել, թե ում է սիրում, ու նորից ահա նա ինձ է նայում, ապա կրկնում. «Ես Ձեզ եմ սիրում…»:

Սիրուն աղջիկ է, անչափ սիրունիկ, երկար մազերով, թովիչ ժպիտով, որ նայում է ինձ և ուրախ ժպտում: Ու երբ հարցնում եմ. «Այդ երբվանի՞ց է, որ ինձ սիրում ես, կամ ինչո՞ւ հիմա դու այդ հիշեցիր...»: Հանկարծ տեղերից խոսքեր են հնչում. «Նա միշտ է ասում, որ սիրում է Ձեզ»: Պարզվում է, որ նա երգել էլ գիտի, ու որոշում եմ մի երգ էլ լսել...Եվ այսպես սիրված ու այսպես երգի հնչյունների տակ ես վայելում եմ նրա սերը պարզ: Անկեղծ է, վճիտ, ինչպես աղբյուրի զիլ կարկաչյունը, բայց ապշում եմ ես, երբ շուտով մեկն այն համարձակներից հարցնում է ինձ. «Սիրե՞լ եք արդյոք Դուք ինչ-որ մեկին»:

Ծիկնում եմ մի պահ, բայց չեմ էլ ուզում ես նրան սաստել, ժպտում եմ հանկարծ, նույնիսկ հաստատում. «**Ինչպե՞ս չսիրեմ, երբ կյանքը սեր է, իսկ ես այդ սիրո ափերին կանգնած, իմ երազներում նավարկում եմ լուռ, երբեմն նույնիսկ անուրջներում իմ անտես եմ դառնում մի անիրական անգոյության մեջ: Ծաղիկն էլ սեր է, երբ հանկարծ հայտնվում, լուսե ծիծաղով նայում է դեմքիդ ու մեղմ շշնջում, մեկ բառն էլ սեր է, երբ ասում են քեզ սիրուն նազանքով, հոգու ջերմությամբ, միայն թե ասեն… «Ես քեզ սիրում եմ»,-կրկնում եմ հանկարծ խոսքերը նրա, ու ես էլ զգում, որ սիրում եմ ես, երբ կյանքը կողքիս, բոլորին տրված, ժպտում է հանկարծ լուսե նազանքով…»:**

http://usarmenianews.com/am-n-4944.html

13.08.2016

ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԱՊՐՈՂ ՄԻ ԹԱՆԿԱԳԻՆ ՆԱ

Ես այս պահից ուզում եմ այն երկու տառից կազմված ՆԱ դերանունը շարունակաբար գործածել մեծատառով, որ պիտի իմ տողերում փոխարինի ինձ հոգեհարազատ դարձած մարդու՝ հեռավոր Նյու-Յորքում ապրող Գոհար Բաղալյանի անուն-ազգանվանը: Նրա մեջ տեսնում եմ սփյուռքահայության ճակատագիրը, նրա անցած ու ներկա կյանքի պատմությունը, անցյալում մնացած թափառումներ երկրեերկիր, մի կտոր հացի որոնումներ օտար ափերում, ամենօրյա ազգային ու հոգեկան ծանր ապրումներ:

Անցած տարի էր...Հայրենի հողի կարոտի գրականության մասին էի շարադրում և տողերիս մեջ օտարության մեջ ապրող հայությանն էի տեսնում, որ կարոտը մի բուռ դարձրած ապրում է օտար ափերում: Հայացքս հառեցի այդ թեմայով «Անդին» ամսագրում տպագրված իմ հոդվածներից մեկի մեկնաբանության տողերին, որտեղ հիացմունքի խոսք կար մանկավարժիս գրավոր խոսքի գրագիտության մասին, որն ընթերցեցի սիրով և անմիջապես ընկերանալու հայտ ուղարկեցի այդ տողերի հեղինակ Գոհար Բաղալյանին:

88-ի Գյումրիի երկրաշարժից հետո օտար ափերում ապրող հարազատ մարդ, բարի ու ազնիվ մի անհատականություն, ում հետ ընկերությունը պիտի վերածվեր բարեկամության: Մենք երբևէ առերես իրար չենք տեսել, բայց կարծես միմյանց ճանաչում ենք տարիների հեռավորությունից: Ամեն մի գրագրության ժամանակ ես զգում եմ, որ այդ հեռավորությունը կրճատվում է կամաց-կամաց, որքան հեռու, այնքան մոտիկ ենք իրար: Եվ հիշում եմ, թե ինչպես ՆԱ զարմացրեց ինձ ծննդյանս օրվա իր առաքած «ծաղիկների» առաջին անսովոր անակնկալով:

ՆԱ դարձավ ինձ հարազատ իմ գրագրությունների իր հիանալի մեկնաբանություններով, սահմանամերձ բնակավայրիս անհանգիստ ապրումներով, ապրիլյան պատերազմական օրերի ողբերգական դեպքերով...Առայսօր էլ ՆԱ իր ընտանիքով ամենուր մեզ հետ է...Այն մեծ քաղաքում ՆԱ իր թոռնիկի հետ մտնում է ամերիկյան դպրոց, իսկ այստեղ՝ Արցախում, մտովի մանկավարժիս հետ է՝ իմ դասավանդելիք դասարաններում՝ մեզ առաջարկած ստեղծագործական շարադրությունների խորագրերով, ամերիկյան դպրոցի հրաշալի համակարգի, կամավորականների օրինակելի խմբերի, գրադարանային ընթերցասիրության և այլ թեմաների շուրջ իր հետաքրքիր զրույցներով:

Այսօր Գոհար Բաղալյանի ծննդյան օրն է, նա 70 տարեկան է, մենք նրա հետ ենք՝ մեր լավագույն ցանկություններով, բարի տարեդարձի մաղթանքներով, երջանկության ակնկալիքով: Բոլորիս անունից այս շնորհավորանքը թող հասանելի լինի հրաշալի մարդուն, Սփյուռքում ապրող հայրենասեր հայուհուն:

http://usarmenianews.com/am-n-4951.html

15.08.2016

ԶԻՆՎՈՐԻ ՁԵՌՔԻՑ ՀԱՄՏԵՍԱԾ ՏԱՆՁԸ

Արցախում ապրող յուրաքանչյուր երեխա զինվոր է՝ զինվորին հատուկ արտահագուստով, զինվորի հանդեպ մեծ սիրով, զինվորական կյանքին մանկական երևակայությամբ անդամագրված: Եվ ամեն անգամ զինվոր տեսնելիս պատիվ են տալիս՝ զինվորին հատուկ կեցվածքով ու միշտ պատրաստ լինելու հաստատակամությամբ, չնայած երբեմն ժպիտը չի քողարկվում նրանց մանկական անմեղ դեմքերից:

Յոթ տարեկան թոռնիկս, որ երրորդ դասարան էր փոխադրվել, մեր բնակավայրի մոտակա մանկական հրապարակից եկավ ու առաջարկեց անպայման գնել այն տանձից, որ իրեն հյուրասիրել էր մի անծանոթ զինվոր: Հաջորդ օրը իմ գնած տանձը անուշադրության մատնվեց, չնայած մի քիչ խոշոր, նուրբ, բուրավետ, զովացնող հաճելի համով էր, բայց Նարեկս չհամտեսեց այն: Ու նորից նա բացատրում է ինձ, որ այն ավելի փոքր տեսակի էր, մի քիչ դեղնավուն, մի քիչ էլ՝ կարմրաթուշ, սերմերն էլ մանր էին, սևավուն: Այս փոքրիկ բնակավայրում որտեղի՞ց կարելի էր գտնել այն, նույնիսկ այդ տեսակը վաճառքում էլ չէի տեսնում, բայց նորից մրգերի մեջ ավելացնում էի ամեն անգամ տանձի մեկ այլ տեսակ, որը երբեք չէր նմանվում այն զինվորի հյուրասիրած մրգին: Ասում են՝ բնության մեջ աճում է տանձենու 33 տեսակ, բայց ես փնտրում եմ միայն մեկ տեսակ և այն չեմ գտնում, նույնիսկ անունն էլ չգիտեմ, բայց գիտեմ, որ այն շատ համեղ էր…

Պարզվում է՝ նրանք երկուսն էին, մանկական հրապարակում խաղացող երեխաներին զինվորները մրգով հյուրասիրեցին, և որքա՞ն համով էին դրանք, որ երբևէ չեն մոռացվի: Բայց զարմանալին այն էր, որ օրեր առաջ մի բան դուր չէր եկել թոռնիկիս, նա զայրացած էր. «**Մի քանի օր առաջ էլ զինվորներ կային այնտեղ, նրանք տեսան, որ շրջապատը մաքուր չէ, նույնիսկ մոլախոտեր կային, սկսեցին քանդել այն, բոլոր երեխաներս սկսեցինք օգնել նրանց, հետո մեզ ասացին, որ հան-**

գիստ խաղանք, բայց չէ՞ որ զինվորը մեր սահմանն է պահում, ինչո՞ւ պիտի նրանք մաքրեին»:

Եվ ես մտովի խոսում եմ այդ անծանոթ զինվորների հետ, որ կանգնած են դիրքերում, իսկ նրանց համար մտահոգ մի ամբողջ մանկություն թոռնիկիս շուրթերով իր անհանգստությունն է արտահայտում, որ զինվորը մեր սահմանն է պահում, մեր խաղաղ երկինքը, և գուցե մի փոքր հանգստանալո՞ւ համար էին նրանք մտել խաղահրապարակ, ինչո՞ւ հանկարծ մասնակցեցին այդ տարածքը մաքրելուն: Բայց նաև մեր բալիկը գիտի, որ այն համով միրգը, որքան էլ տարբեր տեսակների մեջ փնտրեմ, չի ունենա նույն համը, որ իրեն անծանոթ զինվորն էր հյուրասիրել:

http://hayernaysor.am

18.08.2016

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Մոտենում է նոր ուսումնականը, բայց կրթության ոլորտում երևույթներ կան, որ մանկավարժիս մտահոգվելու առիթ են տալիս:

1. Էլեկտրոնային մատյանները մտան դպրոց, որը բավականին դժգոհության առիթ հանդիսացավ: Ուսուցիչը գնահատում է աշակերտին դպրոցի դասամատյանում, աշակերտի օրագրում, իր մոտ նշում է այդ օրվա յուրաքանչյուր աշակերտի գնահատական, որ հետո այն մտցնի էլեկտրոնային մատյան: Ամեն մի աշակերտի գնահատական օրվա ընթացում չորս անգամ նշանակվում է: Այն նպատակ ուներ ծնողներին իրազեկելու իրենց երեխաների գնահատականների մասին, այսօրվա դրությամբ շատ քիչ ծնողներ են հետաքրքրվում այդ հարցով, առավելապես Արցախում, երբ շատ ընտանիքներում հացի խնդիր կա և բոլորիս համար մեր գլխավերևում խաղաղ երկինք ունենալու մեծ մտահոգություն:

2. Հետաքրքիր է՝ ինչպիսին կլինեն դասագրքերը: Հանրակրթական դպրոցների ծրագրերի գերբեռնվածությունից ազատվելու համար սկսեցին թեթևացնել դրանք, արդյունքում հայոց լեզվի և գրականության դասագրքերից անհիմն ձևով, ամենևին էլ տեղին չկատարված թեմաներ կրճատվեցին: Կարելի է ասել՝ բեռնաթափումն այնքան էլ տեղին չէր: Առավել զարմանալին այն էր, որ դպրոցական ծրագրով կրճատված թեման երբեմն դառնում էր ընդունելության քննության հարց:

3. Մի՞թե «Իմ ընկեր Նեսոյի» ժամանակները եկել են... Պետական և մասնավոր դպրոցների հարցում այսօր տեսնում եմ, որ այն սոցիալական շերտավորման է տանում, չմոռանանք, որ շրջապատում երեխաներ կան նյութական անբարենպաստ պայմաններում ապրող, որոնք նույնիսկ ընտանիքի սոցիալական հարց են լուծում և չեն կարողանում սեպտեմբերի մեկին դպրոց հաճախել: Սա ամենացավոտ հարցն է, որը շատ ժամանակ անտեսվում է: Որքա՞ն ցանկալի կլիներ, որ ժամանակի ընթացքում հավասարվեին բոլոր երեխաների իրավունքները, կամ մասնավոր դպրոցներում ընդգրկվեին առանձնահատուկ ստեղծագործական ունակություններով օժտված երեխաներ, ու տարբերակված ուսուցումը միայն մեծահարուստների երեխաների համար չլիներ:

4. Չեմ ուզում նորից կրկնած լինել թեստային սխալ համակարգի

մասին, որը բազմիցս շոշափել եմ: Բայց ասեմ, որ շատ ժամանակ խուսափում եմ նման առաջադրանքներից և նախընտրում եմ տվյալ թեման ուսումնասիրելուց հետո յուրաքանչյուր դասարանում հանձնարարել հարցարանային գրավոր աշխատանք, որով ստուգվում է աշակերտների իմացությունը շատ ավելի ճիշտ ճանապարհով, քան թեստերն են: Ամենախիստ վերահսկողության դեպքում էլ աշակերտները կարողանում են միմյանց փոխանցել ճիշտ պատասխանը, և արդյունքում բարձր միավոր են վաստակում նաև համարժեք գիտելիքներ չունեցողները:

5. Երբեմն լսում եմ, որ թվանշային գնահատումը շատ ժամանակ քննադատվում է, այն վերացնելու ճշմարիտ լինելու հանգամանքը ես կասկածի տակ եմ առնում: Ընդամենը մեկ օրինակ՝ ուսուցողական գրավորները միշտ ստուգվում, գնահատվում են, բայց դասամատյան չեն մտցվում, և տեսնել է պետք, թե աշակերտներն ինչպիսի թեթևությամբ, նույնիսկ կասեի՝ անհոգությամբ են գրում այդ գրավորները՝ ի տարբերություն թեմատիկ, այսինքն՝ ստուգողական գրավորների, որոնց գնահատականները մտնում են դասամատյան: Էլ չեմ պատկերացնում, թե ինչպիսին կլինի վիճակը, եթե աշակերտները չգնահատվեն:

http://usarmenianews.com/am-n-5023.html

19.08.2016

ՄԵՆՔ ՇՈՒՏՈՎ ԿԴԱՍԱՎԱՆԴԵՆՔ ՊԱՏԵՐԱԶՄ ՏԵՍԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Զգոնության կո՞չ եմ հղում, թե՞ փորձում եմ նախապատրաստել մեզ նոր ուսումնականին: Անհանգիստ հոգով մի հետադարձ հայացք եմ ձգում ապրիլյան պատերազմական օրերին, երբ Մարտակերտում ծանր հրետակոծության տակ դպրոցի զանգը լռել էր: Հաջորդ օրերին հատուկենտ աշակերտներ տեսանք՝ անսովոր լռությամբ, ահուսարսափը դեմքերին, անհանգիստ մտորումներով, յուրաքանչյուրին բաժին հասած ցավագին տառապանքով:

Մեր աշակերտներից շատերն այդ օրերին տարբեր դպրոցներ հաճախեցին, մի ստվար մաս չկարողացավ ուրիշ տեղ հարմարվել, հատուկենտ երեխաներ պատսպարվեցին նկուղներում և գոյության ու կյանքի փրկության ճանապարհին մոռացան դասագիրք ու դպրոց: Սահմանամերձ բնակավայրիս դպրոցի աշակերտները, որ մինչ այդ հարմարվել էին հեռվից եկող կրակոցների ձայներին, պատերազմի սարսափը տեսան, մեր դպրոցականների մի մասը՝ անկախ սեռից ու տարիքից, զինվորական համազգեստ հագավ: Ունեցանք նոր զոհեր, ավելացան հայրիկներ կորցրած երեխաները: Աշակերտների մի մասը հեռացավ անդարձ, հող հայրենին քաղցր է, բայց իրենց երեխաների ապահովությունն ավելի մեծ արժեք ուներ ծնողների համար, ու դատարկվեցին նաև դպրոցական նստարանները:

Շուտով ուսումնական տարին սկսվում է, մեր առջև պատերազմ տեսած երեխաներ կլինեն, առավել քան հիմա մենք պետք է կարողանանք ճիշտ ուսուցման գործընթացում աշակերտների ինքնաարտահայտման համար արդյունավետ պայմաններ ստեղծենք: Մենք գիտենք, որ ուսուցիչներիս համար այս ծանր ժամանակներում գերակա գործոն է համարվում աշակերտի արժեհամակարգի, նրա անհատականության ձևավորման խնդիրը: Բայց չէ՞ որ ազգի ու երկրի արժանապատիվ ապագայով մտահոգ ուսուցիչներս գիտենք նաև, որ պատվով ու սրբությամբ պետք է կատարենք սերունդների հայեցի կրթելու և դաստիարակելու առաքելությունը:

Ո՞վ չգիտի, որ ուսուցիչը պետք է մասնագիտական ազդեցիկություն ունենա, ինչը հրապուրիչ է դառնում մեր մարդասիրությամբ, ճշմարիտ հայի, ընդհանրապես՝ մտավորականի կերպարով, մեր ճկուն հայացքներով ու համոզմունքներով, մեր դիրքորոշումների մեջ: Պատերազմ տեսած աշակերտների հետ ավելի զգոն լինենք, ուշադիր, ազգային շունչ ու ոգի հաղորդենք մեր խոսքին ու այն փոխանցենք դպրոցականներին՝ հավատարիմ մնալով նժդեհյան այն ճշմարիտ գաղափարախոսությանը, որ պետության քաղաքացուն և ազգային հերոսին կերտում են դպրոցում, ազգային դիմագծի և ազգային արժեքների պահպանումն սկսվում է դպրոցից:

http://hayernaysor.am

21.08.2016

ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ ԶԻՆՎՈՐ ՏՂԱՆԵՐԸ ՄԻՇՏ ՄԵԶ ՀԵՏ

Առավոտյան հարևանուհուս հեռախոսազանգը ինձ անակնկալի բերեց. բակում զինվորներ կան, հարկավոր է մի բան նախաձեռնել: Ես դուրս եկա բակ, համարյա երկու տասնյակ զինվորներ էին

հավաքված...Մուտքի մոտ կանգնած իմ նոր հարևանը, որ ընտանիքով Հայաստանից էր եկել, ասաց, որ իր զինվոր որդին էլ այդտեղ է: Ու ես հայացքով փնտրում եմ զինվորների մեջ դասակի հրամանատար իմ նոր հարևանի որդուն: Զինվորներին ուղղված իմ ողջույնից հետո բոլորի դեմքերին ժպիտներ հայտնվեցին: Ես անունները նրանց չիմացա, բայց Տիգրան անունով զինվորը բարեհամբույր մոտեցավ, բոլորն իր դասակի ընկեր տղաներն են, մի փոքր այս տարածքում մաքրություն են անում:

Ես պատմում եմ, որ օրեր առաջ թոռնիկս բողոքում էր, որ զինվորը սահման է պահում, նա ինչո՞ւ պիտի մանկական խաղահրապարակում մաքրություն աներ: Իսկ նրանք ծիծաղում են, թող մեր երեխաները հանգիստ խաղան, մենք նորից կմաքրենք: Ու բոպեներ անց զինվորներից մեկն ինձանից դանակ խնդրեց՝ ծմերուկ կտրելու համար: Առաջարկեցի՝ բոլոր զինվորները հավաքվեն ու բակում գտնվող նստարանին նստեն…Շուտով սեղան էլ ավելացավ այնտեղ, զինվորի հայր իմ նոր հարևանը շուտափույթ բերեց:

Հարևանուհիներով իսկույն գործի անցանք, սեղանի ձմերուկներն ավելացան, տարբեր քաղցրավենիքներ, սառը հյութեր, սուրճի սեղանը պատրաստ էր: Ու ես կամաց հարցնում եմ Տիգրան անունով դասակի հրամանատար զինվորին, որի ընտանիքը իմ հարևանությամբ է ապրում, թե կարո՞ղ եմ իմ պատրաստած թզի մուրաբայից իրենց հետ դնել, որ այնտեղ՝ զորանոցում, կարողանան հյուրասիրվել: Նա ժպտում է ինձ, ոչինչ պետք չէ, բայց կարելի է, շնորհակալ կլինեն:

Հիմա զինվորները չկան, նրանք գնացել են, բայց ես մտքերով նրանց հետ եմ…Հայոց երկրի զինվոր տղաները, որ սահման են պահում, բայց արթուն թե քնած, միշտ մեզ հետ են:

http://usarmenianews.com/am-n-5104.html

23.08.2016

ԱՅՍՏԵՂ ԿԵՐՏՎՈՒՄ Է ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԻ ՆՈՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի USArmenianews.com հայկական լրատվական կայքի գլխավոր խմբագիր Գայանե Մանուկյան, անկեղծ ու ազնիվ անհատականություն, ով զբաղվում է նաև լրագրությամբ: Ես նրան չգիտեի, բայց երբեմն տեսնում էի, որ իմ հոդվածներն արժանանում էին նրա ուշադրությանը: Անցած տարվա՝ կայքի խմբագրակազմի կողմից ուսուցչուհուս ուղղված ծննդյան տարեդարձի շնորհավորանքը և դրանից օրեր անց լոսանջելեսաբնակ այս գեղեցիկ հայուհու հեռախոսազանգն ինձ անակնկալի բերեցին:

Առաջարկությունը հրաշալի էր… USArmenianews.com կայքի նորաբաց «Մանկավարժի անկյուն» բաժնում կարող էին տեղադրել Արցախում ապրող ուսուցչուհուս մանկավարժական մտահղացումները…Կարծես մի պահ ինձ կորցրի, որ արժանացել եմ նման ուշադրության: Հեռվից եկող մեղմ ու դյութիչ ձայնը, չնայած հասանելի էր ինձ, բայց մտքերով ես հեռուներում էի, այն հայաշատ ամերիկյան քաղաքում, որտեղ ապրում էր մի գեղեցկատես հայուհի իր մայրիկի՝ Գոհար Խաչատրյանի հետ: Եվ այսպես կամաց-կամաց նրա ընտանիքի անհանգիստ ապրումներն էլ սկսեցին շաղախվել իմ հոգուն և ավելի մերձեցրին մեզ:

Շուտով իմ հրապարակումները տեսանելի դարձան շատերին, այդ հայկական լրատվական կայքը դարձավ ինձ շատ հոգեհարազատ: Այդ ճանապարհին ես առնչվեցի մի նոր անձնավորության՝ Արմեն Ալխասյանի հետ, ով իմ ուղարկած նյութերը տեղադրում էր կայքում: Կամաց-կամաց, ի տես շատերի, կերտվում էր ուսուցչուհու կերպար՝ իր անձնային ու մասնագիտական որակներով, գեղարվեստական խոսքի արժեքների գիտակցումով, սովորողների մեջ ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրությունների վերլուծությամբ, մատաղ սերնդի դաստիարակչական ուղղվածությամբ: Կերպավորվում էր ուսուցչուհի՝ իր մանկավարժական ներգործուն խոսքով, գեղարվեստական ու գրականագի-

տական վերլուծություններով, շրջապատի միջավայրի հոգսերով ու խոհերով:

Գայանե Մանուկյանի հաջորդ առաջարկությունը մի նոր ուրախություն պիտի բերեր իմ սաներին: Մտահղացումը գեղեցիկ էր... Իմ շարադրած յուրաքանչյուր հոդվածում պետք է տեսանելի լիներ տվյալ դպրոցականը, որով արժևորվում էր աշակերտի անհատականությունը: Սեփական ուժերի հանդեպ իմ աշակերտների ինքնագնահատականի բարձրացումը նպաստում էր նրանց ստեղծագործական մտածողության զարգացմանը, և շուտով նրանց լավագույն մտքերն ու նորովի հաստատված փոխհարաբերությունները տեղ գտան կայքում: Դասավանդման իմ մանկավարժական փորձով մեկնաբանվում էին աշակերտներիս կերպարները, որտեղ մարդասիրության, արժանապատվության լավագույն անձնային հատկանիշները զուգահեռվում էին նրանց ոգևորությանը, որ սփյուռքում գործող հայկական լրատվական այս կայքի շնորհիվ նրանք տեսանելի էին դառնում համայն հայությանը: Արցախի իմ բնակավայրի կյանքը նույնպես կամաց-կամաց սկսեց այս կայքի շնորհիվ տեսանելի դառնալ բոլորին: Մենք այստեղ էինք մեր հույզերով, ապրիլյան պատերազմի տառապալից ապրումներով, խաղաղ օրերի երազանքներով, մենք ունեինք սփյուռքում ապրող հայություն, որ մեզ հետ էր իր կարոտաբաղձ ու անհանգիստ տագնապներով: Եվ աստիճանաբար կայքը թեմաների իր բազմազանությամբ մեզ համար դարձավ արտահայտվելու հրաշալի ասպարեզ:

Այսօր էլ երախտագիտության գիտակցումով Գայանե Մանուկյան խմբագրի ու հրաշալի հայուհու կերպարով շարունակվում է մեր համագործակցությունը Լոս Անջելեսի հայկական լրատվական կայքի խմբագրակազմի հետ, մեզ համար մի հարազատ միջավայր, որտեղ նորովի կերտվում է նաև մի մանկավարժական տարեգրություն, մանկավարժի մի նոր կենսագրություն:

http://usarmenianews.com/am-n-5135.html

24.08.2016

ԳԼԽԱՀԱԿ ԿԱՆԳՆԱԾ ԷՐ ՆԱ՝ ԾԱՂԻԿՆԵՐԸ ՁԵՌՔԻՆ

Դպրոցականների ամառային արձակուրդի օրեր են, և հանկարծ գեղեցիկ անակնկալ… Իմ սանիկի՝ 7-րդ դասարան փոխադրված Գևորգ Պետրոսյանի մայրիկն է հայտնում, որ երկու շաբաթով, որպես զոհված ազատամարտիկի որդի, նրան ուղարկում են Հունաստան՝ հանգստանալու: Նա ամաչկոտ է, շատ համեստ, թախծոտ հայացքով, և ես առանձնահատուկ ակնածանք ունեմ նրա հանդեպ: Իմացա, որ օրեր առաջ եղբոր, քրոջ ու մայրիկի հետ Արցախից գնացել էր Հայաստան՝ Եռաբլուրում այցելել իր հայրիկի շիրմին… Մտովի զրուցում եմ նրա հետ, անցյալի հուշերի մեջ եմ: Նայում եմ լուսանկարին, տխրում է հոգիս, կծկվում եմ, մի բուռ դառնում, և հիշողություններն ինձ տանում են իմ դասղեկական դասարանը, երբ ամիսներ առաջ Գևորգի զոհված հայրիկի՝ Դավիթ Պետրոսյանի անունով անկյուն էինք ձևավորել:

Այդ օրը մտա դասարան, տեսա, որ այնտեղ՝ ծաղկամանում, ծաղիկներ կային դրված հերոսի հիշատակին: Ասացին, որ Գևորգը և դասարանի մյուս աշակերտներն էին ծաղիկներ բերել: Դասն արդեն սկսված էր, հանկարծ թախծադեմ հայացքով սանիկս վեր կացավ տեղից և խնդրեց՝ մի քանի րոպեով դուրս գալ դասարանից: Քիչ անց դասարանի դուռը բացվեց, խոսքս կիսատ մնաց, մեր հայացքներն ուղղվեցին դեպի նա: Գլխահակ կանգնած էր՝ մեխակները ձեռքին. հայրիկի համար ծաղիկներ էր բերել: Հազիվ զսպեցի ինձ, ուզում էի գրկել, հանկարծ նա ինձ մեկնեց մեխակները՝ սև ժապավենով կապված. մոտակա ծաղկանոցից էր գնել: Հուզմունքից խեղդվում էի, քար լռություն էր տիրում, հազիվ զսպելով արցունքներս, որ աշակերտները չնկատեն, իմ ձեռքերով ծաղիկները խնամքով դրեցի ծաղկամանում: Միայն ծաղիկները տեսան, որ արցունքի մի քանի կաթիլներ ընկան իրենց թերթիկների վրա: Դուրս եկա դասարանից՝ նահատակներին ուղղված աղոթք-մրմունջների արձագանքը հոգումս:

http://hayernaysor.am

26.08.2016

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ը ՄԵԶ ՀԱՄԱՐ ՄԻ ՆՈՐ ԱՂՈԹՔ ԿԴԱՌՆԱ

Ուսուցչի աշխատանքի նկատմամբ առանձնակի վերաբերմունքի արտահայտություն է, երբ շնորհավորում են մանկավարժներիս նոր ուսումնական տարվա կապակցությամբ, բայց այս նոր ուսումնական տարին Մարտակերտում ապրողներիս համար այլ տրամադրություն կունենա:

Անցած օրերի տառապալից հիշողությունները միահյուսված կլինեն մեր նորօրյա ապրումներին, ապրիլյան հրետակոծության արձագանքները նորից լսելի կդառնան մեզ, անմահների անցած ճանապարհը հավերժացրած՝ նոր հերոսների անուններ կհիշատակվեն...Դպրոցի զանգը մի նոր ուսումնական տարի կազդարարի, մի նոր անհանգիստ ղողանջներ կլսվեն, ողջույնի ուրախ խոսքը դողդողալով արձագանք կտա հեռուներում, նոր հայացքներ կհառվեն դեպ երկինք, նոր աղոթքներ կուղղվեն առ Աստված, խաղաղ կյանքի նոր օրհնանքներ կհնչեն:

Մտովի ես մեկիկ-մեկիկ մտնում եմ դասարանները, սպիտակ ու սև դպրոցական համազգեստների մեջ ժպտացող դեմքեր եմ տեսնում, իմ երեսին դաջված ուրախությունը մեղմիվ փոխվում է տխրության, երբ հայացքս ուղղվում է դատարկ նստարաններին, ու նորից մտովի տեսնում եմ նրանց, ովքեր ահուսարսափի տագնապալից օրերի հիշողությամբ այլևս մեզ հետ չեն, և մի ուրիշ կարոտ մեզ բերում է նրանց թախծանուշ կանչերը հեռվից, որ մեզ հետ էին տարիներ շարունակ ու հիմա չկան:

Մի նոր հայացքով նայում եմ իմ առջև նստած սաներին, մի նոր կարոտ է մեզ կանչում նորից, ու ժպիտների անսահմանության մեջ ես բերկրանքով գրկում եմ նրանց: Ձեռքերս թև առած մեկնում եմ, հայացքս գրկում է բոլորին, ու անցած հանգստան օրերում ես նորից նրանց եմ տեսնում: Անորոշ մի տագնապ վանում ենք մեզնից, տոնական օրվա հանդեսն ենք բացում, նոր օրվա աղոթքն ենք մրմնջում, որ երկինքը խաղաղ լինի, լույս օրերի հրաշքներն էլ՝ առատ:

http://usarmenianews.com/am-n-5213.html

27.08.2016

ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ՀԱՅԸ ՀԵՌԱՆԱ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Ընթերցում եմ նյութեր հայրենիքից հեռացող հայերի մասին և չեմ համարձակվում մարտահրավեր ուղղել նրանց, ովքեր հեռանում են, բայց ցավով եմ արձանագրում և գիտեմ, որ օրեր, ամիսներ, տարիներ հետո ուծացման, ձուլման ճանապարհով քայլող վաղվա սերունդն այլևս հայ չի լինելու: Սա է մեծագույն ողբերգությունը, և այդ մտահոգությունն ինձ համար չափազանց շոշափելի է, քանի որ Արցախյան ազատամարտի տարիներին՝ բռնագաղթից հետո, օտար ափերում ապաստանած տարագիր հայուհու ճակատագրի դառնությունն եմ ճաշակել:

Ամեն անգամ օտար երկնքի տակ բախտ որոնող «փախստականի» մեր կյանքն եմ հիշում, և առայսօր էլ իմ հիշողության մեջ ամեն օր ուրվագծվում է բռնագաղթի ճանապարհը ու հայրենիքից հեռու՝ «օտար ամայի ճամփեքի վրա» ապաստան գտած ընտանեկան խմբանկարից պակասած իմ հարազատների կորուստն եմ հիշում (հայր, մայր, տատ), որ դառնակսկիծ ու անվերադարձ նրանց պահ տվինք օտար հողում:

Օտարվելու տագնապն զգացի նաև ես, երբ այնտեղ ռուսական դպրոցի 2-րդ դասարան հաճախող դստերս փորձում էի հայ ու հայալեզու դաստիարակել՝ հեռու պահելով օտարալեզվության վտանգից: Սարսափելի էր, երբ տեսա, որ երկու տարի Արցախում հայկական դպրոց հաճախող երեխան, անցնելով ռուսական կրթության, ժամանակի ընթացքում մոռացել էր հայերեն տառերը: Մանկական փոքրիկ հայերեն բանաստեղծությունների գիրքը նա փակեց՝ չկարողանալով կարդալ տողերը: Ու նորից անհանգիստ սրտի տրոփյունով սկսեցի մեսրոպյան այբուբենի ուսուցումը: Եվ երբ շուտով վերադարձանք հայրենիք, չնայած ռուսերենով ուսուցմամբ դասարանում էր սովորում, բայց հաջորդ ուսումնական տարում նա հայոց լեզվի առարկայական օլիմպիադայի շրջանային փուլում ամենաբարձր միավոր վաստակած մրցանակակիրն էր:

Համարձակվում եմ ասել նաև, որ խարտյաշ և բարձրասրունք գեղեցկուհիների հմայքը շատ էր մեծ, և ավանդապաշտ հայ ընտանիքների որոշ զավակներ իրենց մեջ ուժ չէին կարողանում գտնել՝ դիմադրե-

լու այդ հմայքին, չմոռանանք, որ այսօր էլ առկա է այդ մտահոգությունը:

Փաստը ցավալի է, բայց հուսով եմ, որ հայը չի թողնի իր սերունդը մոռացության տա մեր ոսկեղենիկ հայերենը, չնայած նաև ականատեսն եմ եղել հակառակ երևույթին, երբ ոմանք ձեռ են թափ տվել, որ իրենց երեխաները մոռացել են հայերենը, բայց հպարտացել են նրանց օտար լեզվի իմացության համար: Համոզված եմ, որ օտարության մեջ գտնվող հայը միշտ էլ հոգեպես մնում է հայրենի հողի հետ, հնչեցնում է իր վշտամորմոք հայրենաբաղձության ճիչը, երազում իր երկիրը, հույս փայփայում, որ մի օր «եղեգան փողը» կհնչեցնի դեպ հայրենիք վերադարձի կոչը:

http://usarmenianews.com/am-n-5235.html

30.08.2016

ԳԵՂԵՑԻԿ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Օրեր առաջ թոռնիկս ուրախությամբ պատմում էր, որ մեզանից ոչ հեռու գտնվող մանկական խաղահրապարակում հումորով հանդես են եկել անծանոթ մարդիկ, նաև երեխաներին նվերներ են բաժանել: Ձեռքին մի նկարչական ալբոմ էր, այն բոլոր ալբոմների նման, որ ուներ նա իր դպրոցական պայուսակում: Բայց ուշագրավն այն չէր, թե ինչ էին նվիրել յուրաքանչյուրին, կարևորը երեխաներին պարգևած ուրախությունն էր:

Վերջապես «Ջրաբերդ» շրջանային պաշտոնաթերթից իմացա, որ օգոստոսի 27-ին Երևանից 5-օրյա այցով Արցախ էր եկել «Վիվարտ»-ի տնօրեն Վարդուհի Գասպարյանը: Նայում եմ նկարներին, ապա տեղեկանում, որ նա եղել է Մարտակերտի և Մատաղիսի մարտական դիրքերում, այնուհետև մեր բնակավայրի խաղահրապարակներից մեկում հանդիպել է մի խումբ երեխաների, որտեղ հումորային ծրագրով հանդես են եկել իր խմբի անդամները:

Մտովի ես թերթում եմ այդ մշակութային հասարակական կազմակերպության անցած ուղին, հիանում նրա հրաշալի առաքելություն կատարելու պարտավորվածությամբ: Պարզվում է՝ Վարդուհի Գասպարյանը հաճախ է այցելում Մարտակերտ, Մատաղիս և Թալիշ, ու ամեն մի այցելության ժամանակ էլ նա հանդիպում է զինվորների հետ: Միշտ էլ հրաշալի նպատակներով է նա ներկայանում զորամասեր՝ ռազմահայրենասիրական համերգային ծրագրերով, գեղարվեստական գրականության նվիրատվությամբ… Մի բան, որ միայն ողջունել կարելի է այսպիսի նախաձեռնության համար:

Պատերազմ տեսած Մարտակերտում երեխաների այսպիսի աշխույժ միջավայր ապրիլից առայսօր ոչ ոք չէր տեսել: Պարելո՞ւ շնորհ

ունեին բոլորն էլ, որ այդ օրը շուրջպարի բռնեցին, թե՞ երգելու շնորհն էր գլուխ բարձրացրել, որ մեկը մյուսին փոխանցելով՝ երգի զիլ ձայնն էր կարկաչում: Դա բարեհամբույր ու անշահախնդիր մարդու վերաբերմունք էր, որ կարողացավ համախմբել Արցախի մի բուռ երեխաների, ովքեր պատերազմի հրետակոծության օրերին տարհանվել էին կամ պատերազմի սարսափն իրենց հոգում՝ պատսպարվել էին շենքերի անմխիթար նկուղներում:

Ես կազմակերպության հիմնադիր տնօրենին չեմ ճանաչում, բայց համոզված եմ, որ նրա կողմից կազմակերպված այս գեղեցիկ նախաձեռնությունը միշտ կհիշվի, որտեղ երեխաներ կան շուրջպարի բռնած և երգի զիլ ձայների մեջ՝ մի անհոգ մանկություն:

http://hayernaysor.am

01.09.2016

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 1-ը նոր ուսումնական տարվա սկիզբ է, տոնական և հիշարժան օր, որը նաև գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր նպատակներ կյանքի կոչելու սկիզբ է: Իսկ ուսուցչի պատվաբեր գործունեությունը սեպտեմբերի 1-ով սկսվող

երդման մի յուրահատուկ արարողություն է, որ ամեն տարի սկսվում է տնօրեն Լիդիա Պետրոսյանի ողջույնի խոսքով: Այդ երդմանը հավատարիմ՝ այդ օրը շնորհավորում են գիտության և կրթության բնագավառի նվիրյալներին, այդ կառույցի բոլոր սովորողներին ու նրանց հարազատներին՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի և Գիտելիքի ու դպրության օրվա կապակցությամբ:

Առանձնահատուկ հոգածությամբ այսօր իմ հայացքն ուղղում եմ մեր սահմանամերձ գյուղերի, բնակավայրիս ու բոլոր այն շրջանների դպրոցականներին և ուսուցիչներին, որոնց դասերը, ցավոք, ընդհատվել էին ապրիլյան պատերազմական օրերին: Ակնածանքս բոլոր նրանց, ովքեր ընդհատել են ուսումնական գործընթացը, ովքեր տեսել են պատերազմի սարսափը, բոլոր նրանց, ովքեր սահման են պաշտպանել, կերտել մի նոր հայրենյաց պատմություն: Մեծագույն խոնարհումս բոլոր այն նահատակներին, ովքեր հերոսացան իրենց անձնազոհությամբ՝ հավերժացնելով անմահության ճանապարհը, որպեսզի կանգուն լինի հող հայրենին, որպեսզի նորից հնչի դպրոցի զանգը, որ լռել էր հրետակոծության օրերին:

Բոլորս էլ գիտենք, որ գիտելիքը անգնահատելի արժեք է, միայն սովորելով, գիտելիքների լուրջ պաշար ձեռք բերելով հնարավոր կլինի իրականացնել պատանեկան երազանքներից հառնող բարձր նպատակները: Այս ամենն առավելապես կարևորվում է ներկայումս, երբ բանիմաց անհատը դառնում է հասարակության շարժիչ ուժը: Բայց չմոռանանք, որ այսօրվա մեր շրջանավարտները, անկախ նրանց սո-

վորելու կարողություններից, պաշտպանում են հայրենիքի սահմանները, դրա վառ վկայությունը՝ ապրիլյան պատերազմը և այն օրերին հերոսացած հայ զինվորները, որ անմահացան իրենց սխրանքներով՝ մեկ անգամ ևս ապացուցելով, որ հայրենասիրությունը մեր արյան մեջ է, այն մեզ ուղեկցող սրբազան ոգին է, որ այսօր էլ մեզ նորից ապրեցնում է այս հողի վրա:

Նոր ուսումնական է, նորից մեր դպրոցականները մի նոր հույսով ու ակնկալիքով, խաղաղ օրերի երազանքներով դիմավորում են սեպտեմբերի 1-ը, նրանց շուրթերից հնչող խոսքն էլ ուղերձ է դառնում, գիտելիքներով զինվելու հավատարմության երդում:

Թվում է՝ դասեր պետք չեն հայրենասեր լինելու համար, մեզ տրված բնատուր շնորհ է այն, մի անսովոր տաղանդ բոլորի համար: Բայց բարեփոխումներ մեզ միշտ էլ պետք են, կրթության որակը այդ մենք պիտի փոխենք…Մեր սաների հետ գեղեցիկ հարաբերություններ՞ն ենք ցանկանում, ուրեմն կարողանանք ապրել նրանց հույզերով՝ երբեմն անանձնական թախիծը դարձնելով մեր սեփականը: Հույսով ու հավատով լեցուն՝ նրանց համար լույսի ավետաբեր դառնանք, մեր թևերը փռենք, որ լայնահուն տարածքում նրանք էլ թև առնեն, սովորեն սավառնել: Մենք ինքներս էլ դառնանք սովորող, և մեր փնտրտուքների մեջ ամեն անգամ ընտրենք գիտելիքներ տանող մի նոր ճանապարհ: Ազգի ու երկրի արժանապատիվ ապագայով մտահոգ ուսուցիչներս միայն կարող ենք պատվով ու սրբությամբ կատարել սերունդների հայեցի կրթելու և դաստիարակելու առաքելությունը, ուրեմն, ազգային շունչ ու ոգի հաղորդենք մեր խոսքին և այն փոխանցենք մեր սաներին: Ճշմարիտ արժեքների գիտակցումով համոզված եմ, որ մենք մեր հասանելիք նպաստը կդնենք նոր սերնդի ուսման և դաստիարակության գործում՝ հավատացած, որ դրանով իսկ մեր սեփական ապագան ենք կերտում՝ ի նպաստ մեր հարազատ երկրի բարօրության: Թող որ այս ուսումնական տարին բոլորին բերի նոր անակնկալներ, խաղաղ լինի երկինքը, իսկ կյանքի նոր փուլ մտնող մանուկների մեջ արթնացնի ձգտում դեպի ուսումն ու գիտելիքը: Թող այն

դառնա գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր նպատակներ կյանքի կոչելու սկիզբ:

50 տարի…Անհանգիստ մի սարսուռ ինձ տանում է անցյալի գիրկը, որտեղ մանկություն կա, անցյալի հուշեր, համեստ մի աղջնակ՝ ձեռքին ծաղիկներ… Այս ուսումնականում մի նոր հուզմունք ավետում է իր մասին, որ կես դար առաջ, որպես առաջին դասարանցի, դպրոցի նոր ուսումնական տարվա հանդիսավոր արարողությանն էի մասնակցել հոգու անհանգիստ ելևէջումներով: Այդ օրն առաջին անգամ նստել էի դպրոցական նստարանին և անհագուրդ հիացմունքով ունկնդրել իմ առաջին ուսուցչուհուն:

Ամեն անգամ ուսումնական նոր տարում պարտավորված եմ զգում ինձ: Սա երդո՞ւմ է, որ խոստանում եմ պատվով կրել այդ սուրբ անունը, գուցե «ի խորոց սրտի» ասված խո՞սք, որ Աստծո օրհնությամբ ինձ բախտ է վիճակվել այս տարիներին դպրոց մտնել, և այսօր ուզում եմ մի քանի խոսք ուղղել մեր կառույցի բոլոր մանկավարժներին և ասել, որ ուսուցիչներիս առաքելությունը բոլոր ժամանակներում մնում է նույնը: Ուստի հավատարիմ լինենք այս պատվաբեր կոչմանը, լինենք ուսուցանող ու խորհրդատու, ստեղծագործող ու նորարար, նրբանկատ ու բարի…Մեր կերպարով, կյանքով ու ծավալած գործունեությամբ, մեր ապրելակերպով ընդօրինակելի դառնանք մեր սաների համար: Դասարան մտնենք ճշմարիտ արժեքների գիտակցումով, իսկական մտավորականի հպարտ կեցվածքով, անձնային ու մասնագիտական որակներով, ապրենք հասարակության՝ որպես դաստիարակող միջավայրի հոգսերով ու խոհերով:

Բայց ի՞նչ, հինգ տասնյակ տարինե՞րն են պատճառը, ինչո՞ւ եմ ուզում, խոստմանս համաձայն, բարձրաձայնել, որ կշարունակեմ հավատարիմ մնալ Ուսուցչի բարձր ու վեհ կոչմանը, կոչում, որ անչափելի, անսահման բարձր է ինձ համար: Այն իմ ստեղծագործական ներուժն է, իմ հոգու ջերմությունը, դա նվիրվածություն է կրթության ու դաստիարակության գործին, դա արդարություն է, բարի գործի նվիրում, դա գեղեցիկի զգացողություն է, մաքառումներին դիմակայելու անհողդողդ կամք…Դա կյանքի իմաստ է, նվիրական արարում, դա սեր է ու ամեն ինչ, որ ինձ հետ է միշտ:

http://hayernaysor.am
«Լուսարար», 26/456/, 08.09.2016

02.09.2016

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Այսօր Արցախի անկախության հռչակման 25-րդ տարին է: Քանի որ սա համայն հայության երազանքների իրականացումն էր, ուրեմն այս օրը համայն հայության տոնն է: Օրվա կապակցությամբ ցանկանում եմ բոլորիս նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ, անկատար ծրագրերի ու իղձերի իրականացում, նորանոր բացահայտումներ, զարգացման նոր ուղիներ ու ստեղծագործական վերելքներ, անձնական և համամարդկային ջերմ ապրումներ: Մեր օրերում, երբ թշնամին յուրաքանչյուր պահի բարբարոսային պատերազմի վերսկսման սպառնալիքով է հանդես գալիս՝ փորձելով վտանգել պետականաշինության գործընթացը, մենք պետություն կառուցելու մեր ներդրումը պետք է տեսնենք պաշտպանության բանակի ամրապնդման, սահմաններն անառիկ պահելու մեջ: Հիշենք ապրիլյան պատերազմի հերոսներին, բոլոր նրանց, ովքեր հաստատուն կանգնեցին հայրենի հողի վրա՝ նորից ու նորից ապացուցելով, որ հաղթանակը միայն զենքի մեջ չէ և ոչ էլ՝ քանակի, այլ ոգի է պետք, անկոտրում կամք, հայրենիքին ծառայելու անմնացորդ նվիրում:

Օրվա առիթով մեր խոնարհումն եմ հայտնում Արցախյան ազատամարտի նահատակ հերոսներին, ովքեր գիտակցաբար ընտրեցին հայրենիքի ազատությանն ու անկախությանը նվիրվելու ճանապարհը: Եկե՛ք արթուն պահենք մեր հիշողությունն այդ հաղթական ճանապարհն անցած բոլոր նրանց նկատմամբ, ովքեր այսօր ապրում և արարում են, սերտենք նաև այդ ճանապարհն անցած նահատակ հերոսների և կենդանի լեգենդների հաղթական դասերը: Թո՛ղ անկոտրում լինի կամքը մեր սահմանները պահող բոլոր զինվորների, ովքեր հաստատուն կերպով պաշտպանում են հայրենի երկրի անվտանգությունն ու հարազատ ժողովրդի անդորրը, հավիտենական խաղաղություն լինի Արցախ աշխարհում, մեր փոքրիկ երկրի անկախության ճանաչման տեսլականը դառնա իրականություն:

http://usarmenianews.com/am-n-5314.html

05.09.2016

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ՄԻ ՍՈՒՐԲ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Վերջերս ծանոթացել էի «Վիվարտ» մշակութային հասարակական կազմակերպության գործունեությանը՝ ի դեմս նրա հիմնադիր տնօրեն Վարդուհի Գասպարյանի, բայց առերես նրան չէի տեսել: Անակնկալը երկար սպասեցնել չտվեց, երբ հանկարծ ինձ ուղղված նրա այս ոգեշունչ տողերը կարդացի. **«Մի օր վստահ կրկին կայցելեմ Մարտակերտ՝ ձեռքիս «Հաղթանակած Մարտակերտը» գիրքս և ի լուր աշխարհի՝ բոլոր դիրքերից կկանչի իմ հաղթանակի երգը, որ դարերից եկող իմ Արցախ աշխարհը միշտ կապրի իր հաղթանակներով, որքան էլ թշնամին կանգուն լինի...»:**

Եվ շուտով, պայմանավորվածության համաձայն, մեր հանդիպումը Մարտակերտում կայացավ. Արցախի անկախության օրը նա մեզ մոտ էր: Այդ հանդիպումը Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված հուշարձանի մոտ էր: Հայացքս փնտրում էր նրան, ում խոհերում հաղթանակած բնակավայրս էր ու մեզանից ոչ հեռու սահմանին կանգնած զինվորը: Հոծ բազմության մեջ գտնում եմ Հայաստանից եկած այն հայրենասեր հայուհուն: Բայց ո՞վ կմտածեր, որ ինձ հետ խոսող երիտասարդը, ով ներկայացավ անուն-ազգանունով և որպես այս կայքի իմ հրապարակումների ընթերցող՝ «Հայոց աղավնիներ» կազմակերպության նախագահ և լրագրող Գագիկ Ավետիսյանն էր, ում համար իրենց կատարածը մի սովորական գործ է, որի նպատակը՝ սահմանամերձ տարածքների բնակչությանը ոգեշնչելն է, որ մենակ չէ... Իսկ այստեղ՝ սահմանամերձ գոտիներում ապրողներս մեծ գործ ենք կատարում, հենց դա է հերոսությունը, որ ամենօրյա՝ հարյուրավոր գնդակների որոտի տակ ենք ապրում: Եվ նրա խոսքը՝ սիրով ողողված,

կոչ պիտի դառնա ու նորից հնչի ի լուր աշխարհի. «**Մարտակերտցիներ ջան, ձեր ցավը տանեմ. ձեզ շատ եմ սիրում»:**

Համեստությունը որտեղի՞ց է գալիս, հայի տեսա՞կն է այդպես, որ տեսա հայաստանյան այս երկու հասարակական կազմակերպությունների նախագահների պահվածքում, թե՞ իրենց արած-թողածի կարևորությունն է նրանց «պարտադրում», որ լինեն այդպիսին: Ինչպես էլ լինեն, նրանք իմ պատկերացումներում կմնան սահմանին մոտ զինվորների հետ ունեցած հանդիպումներում, նահատակների հավերժ հիշատակի հիշողություններով՝ դարձած Արցախի կյանքով ապրող, նաև մեր ցավը տանող ու միշտ մեզ սիրող ազնիվ հոգիներ:

http://hayernaysor.am/

06.09.2016

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆՍ ՄԵՋ ԿՄՆԱ ԱՆՑԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 7-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆԸ

Երբեմն ուսումնական տարվա սկզբին հայտնվում ենք դժվարին կացության մեջ, երբ որևէ դասարանում արդեն հարմարվել ես այդ աշակերտներին, բայց ստացվում է այնպես, որ նորից չես դասավանդելու: Այդ մտածումներով որոշեցի նրանց հրաժեշտ տալ, բայց չեմ համարձակվում...Վերջապես քայլերս ինձ ինքնակամ տանում են 8-րդ բ դասարան, ու ես արտաքուստ չերևացող, բայց հանցանք գործած մարդու զգացողությամբ ուզում եմ արդարանալ, որ այդպես է ստացվել, և չեմ ուզում այս պարզ ու ազնիվ դեռահասներին ասել մի բան, որով պիտի արդարացվեր իմ «մեղքը»: Շուտով մենք պայմանավորվում ենք՝ միասին նկարվենք ու հավերժացնենք պահը:

Ինչո՞ւ եմ այսպես ցավոտ տանում, որ այս ուսումնականում նրանց չեմ դասավանդելու: Առաջին անգամ անցած սեպտեմբերին, երբ հանդիպեցինք, քարացած լռություն էր, ու այդ լռության մեջ կար մի մտահոգություն, որ օրեր անց իմացա այդ աշակերտներից մեկի մայրիկից, թե ինչ լավ է, որ երեխաները չեն վախենում ուսուցչուհուց:

Հիշողությանս մեջ կմնա անցած ուսումնական տարվա 7-րդ բ դասարանը, և այդ հիշողությունները նորից ինձ մտովի կտանեն այդ դասարանը, ու նրանց հետ ես կզրուցեմ մեր անցած օրերից: Այն կապույտ վարդի մասին կխոսեմ, որ այդ դասարանի վերջին նստարանին նստած աշակերտուհու երազանքն էր դարձել՝ լինի կապույտ ծովի ափին, ունենա կապույտ մի վարդ, հիացմունքով նայի այն հեռավոր երկնքի կապույտին: Բայց ինչպե՞ս չհիշեմ, երբ մի օր նա ասաց, որ գրականու-

թյան իմ դասերին բոլորն իրենց մեծացած են զգում: Ես մտովի ամեն անգամ կգրկեմ այն երկրորդ նստարանին նստած իմ սանիկին, ում համար սրբություն են իր մայրն ու Աստված, բայց ինձ էլ նա մի օր տարավ իր սրբացված մոր կողքին դրեց ու ասաց, որ սիրում է անշահ ուսուցչուհուս իր մայրիկի պես: Եվ ինչպե՞ս մոռանամ այն մյուսին, որ նախավերջին նստարանին էր նստում, երբ մի քանի անգամ անպատրաստ ներկայացավ դասին, իմ դիտողությունից հետո նա «տղամարդավարի» ինձ խոստացավ, որ այդուհետ դաս կսովորի, և նրա ազնիվ խոսքը թև առավ, որպեսզի իր երդումը հանկարծ չխախտի:

Ես նորից հուզված կնայեմ այն ամաչկոտ տղային, ով մի օր արտասվեց բարձրաձայն, որ այդ օրը իր մարտիրոսված զինվոր քեռու ծննդյան օրն էր: Երբեք չեմ մոռանա, որ իմ հայոց լեզվի դասին զինվորն էր հոլովվում, և այդ օրը շաղախված էր այն նահատակ զինվորի հիշատակով: Նաև չեմ մոռանա այն վախվորած դեմքերը, որ տեսա ապրիլյան պատերազմական օրերին, բայց այն մեկը ժպտալով էր պատմում, որ հրետակոծության ժամանակ միամտաբար հարևանի մեքենայի մեջ էր պատսպարվել: Ու միշտ կհիշեմ առաջին նստարանին նստած իմ աշակերտուհու հպարտ խոսքերը, որ ինքը սիրում է հայրենի երկիր Հայաստանը, սիրում է ամբողջ հոգով ու սրտով, և ոչ ոք թող չզարմանա, որ Արցախի դուստրը հայրենիք է անվանել Հայաստանը, մի բան, որ գուցե տասնամյակներ առաջ դա անհնար էր թվում և նույնիսկ արգելված էր խոսել այդ մասին, իսկ հիմա իրականություն է դարձել:

Ամեն օր ես մտովի կզրուցեմ նրանց հետ, մեկ առ մեկ կհիշեմ անունները նրանց, երբեմն կմտնեմ նրանց դասարան, մտերմորեն կգրկեմ բոլորին, ու ջերմագին ասված խոսքերս թև կտան նրանց:

http://usarmenianews.com/am-n-5342.html

07.09.2016

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԻՐՈ ԱՌԵՂԾՎԱԾԻ ՄԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Գրավոր շարադրանքը, որ ինձ հանձնեց իմ աշակերտուհին 12-րդ հումանիտար դասարանում, մի պահ զարմանալի թվաց: Նա չցանկացավ ընթերցել, ինձ հանձնեց տետրը….Հայացքս վազում էր տողերով, ու դեռ չավարտած ընթերցանությունս՝ հարցնում եմ նրան, թե արդյո՞ք անձնական կյանքում ինչ-որ զգացմունքային ապրումներ ունի: Նա միայն ժպտում է, երբեմն ծիծաղում, բայց նաև բարձրաձայնում է շատ ազատ ու անմիջական, որ սերը միակ բանն է, որի մասին կարելի է անընդհատ խոսել, չնայած ինչքան էլ բառերով բացատրվի, միևնույն է, բառերը դառնում են շատ խղճուկ, անհեթեթ ու ծիծաղելի:

Դեռահասի կողմից սիրո առեղծվածի մի յուրահատուկ բացատրություն էր սա, որ կրկնություններին զուգահեռ՝ սիրո մասին միտքը լրացվում էր նոր հարցադրումներով, ու ես մեկընդմեջ նայում եմ նրա ծիծաղկոտ ու երբեմն թախծալից դարձած աչքերին, ու ինձ թվում է՝ իր տողերում նրա հոգու անհանգիստ ալեբախությանն եմ ականատես դառնում:

«Սերը ամենաանբացատրելի զգացմունքն է, բայց ինչո՞ւ ենք մենք այդքան հաճախ փորձում այն բացատրել: Սերը վստահություն է, սակայն ինչո՞ւ մենք սիրում ենք հաճախ, բայց չենք վստահում ու խանդում ենք: Սերը երջանիկ ծիծաղ է, բայց ինչո՞ւ է սիրո պատճառով հաճախ մեր աչքերում արցունքներ հայտնվում: Սերը հիվանդություն է, սակայն ինչո՞ւ մինչև այսօր ոչ ոք չի բուժվել այդ հիվանդությունից, և ոչ ոք չգիտի՝ ինչպես բուժվել: Սերը ազատություն է, բայց ինչո՞ւ, երբ մենք միայնակ ենք և չունենք մեր երկրորդ կեսը, ասում ենք՝ ազատ ենք: Սերը հարստություն է, բայց մենք այդպես էլ այն գնահատել չենք սովորում: Սերը սրտերի ջերմություն է, բայց մենք հաճախ սառնություն ենք զգում: Սերը մեզ ուժեղ է դարձնում, բայց ինչո՞ւ է այն մեր

թուլությունը դառնում: Սերը ամենանուրբ ու գեղեցիկ ծաղիկն է բոլոր ծաղիկների մեջ, բայց, չգիտես ինչու, շատ հաճախ այն փշեր է ունենում: Սերը մեր ամեն ինչն է, սակայն ինչո՞ւ երբ մենք սիրում ենք, մեզ, միևնույն է, ինչ-որ բան պակասում է: Սերն այն է, ինչը մեզ կործանում է, բայց առանց սիրո մենք ինքներս ենք մեզ կործանում»:

Նորից հայացքս հառում եմ տողերին, ապա այս օրերի իմ լուսանկարների մեջ փնտրում եմ այն գեղեցկատես աղջկան՝ Լիլիթ Հովսեփյանին, մտովի զրուցում եմ իմ աշակերտուհու հետ և հետո կրկնում նրա խոսքերը. «**Երբեմն փորձում եմ կտրվել աշխարհից, առօրյա մեր հոգսերից և ուզում խոսել մի թեմայից, որը շատ հաճելի է ու գեղեցիկ: Բայց միևնույն է, ինչքան էլ բացատրելի ու անբացատրելի լինի այդ առեղծվածը, սիրո միակ իմաստը մնում է սիրո մեջ»:**

Իմ աշակերտուհու սրտի անհանգիստ տվայտանքները փոխանցվում են ինձ, ինքս ինձ հետ մենախոսում եմ, փորձում գտնել այն խոսքը, որ «կփրկի» նրան, բայց նորից արձագանքն եմ լսում նրա խոսքերի. «**Սերը երջանկություն է, բայց ինչո՞ւ ենք մենք հաճախ սիրո պատճառով մեզ դժբախտ համարում...»:**

Նորից հիշում եմ նրա երկիմաստ ժպիտը, բայց որքա՜ն եմ ուզում, որ նա երջանիկ լինի...

http://usarmenianews.com/am-n-5367.html

07.09.2016

ԲԱՐԵՎ ԱԽՊԵՐՍ, ԻՆՉՊԵ՞Ս ԵՍ...



Իրարից հեռու ապրող երեխաներն էլ երբեմն կարող են այս տարածքում մտերմանալ, ու 3-րդ դասարան հաճախող թոռնիկիս՝ Նարեկի համար փոքրիկ Անտոնը, որ ամերիկյան դպրոց է գնում, կամաց-կամաց դարձավ մտերիմ, հարազատ ընկեր, ում երբևէ չէր տեսել, բայց նրա մասին գիտեր ինձանից: Այնտեղ ուսումնական տարին սեպտեմբերի 8-ին է սկսվում, և նա պիտի հաճախի 2-րդ դասարան, ուրեմն պետք է շնորհավորել: Ու մեր՝ երկու տատիկների մտերմիկ ընկերության արդյունքում նրանց միջև ձևավորվում էր նաև մի նոր հարաբերություն, որ երեխայական էր, շատ հարազատ ու անմիջական:

Նարեկը պատերազմ էր տեսել ապրիլին, նա մեր բնակելի շենքի նկուղում էր սարսափելի օրեր ապրել և զինվորական համազգեստ էր հագել, որ չտարբերվի իր շրջապատի զինվորներից: Մեր փոքրիկ զինվորը ուսումնական տարվա վերջին երկու ամիսներին դպրոց չէր հաճախել: Ապրիլին դպրոցի զանգը լռելուց հետո նա դպրոց չցանկացավ գնալ անգամ հաջորդ օրերին, երբ գիտեր իր դասընկերները չկային այնտեղ: Ու մի նոր տոնահանդեսի էր կարծես նախապատրաստվում այս ուսումնական նոր տարում, երբ դպրոցական կյանքի ընդմիջումից ու ամառային արձակուրդից հետո նա նորից դպրոց հաճախեց:

Բոլորիս համար այն հրաշք փոքրիկը Անտոշա է, նրա նկարներին երբեմն նայում է Արցախում ապրող մեր բալիկը և նրա հետ զրուցում շատ անկեղծ ու մաքուր՝ մի նոր հնչողություն տալով մեր հարազատ բարբառին: Երբեմն բարևում է նրան, երբեմն հրավիրում Արցախ, ու այդ զրույցներում միշտ էլ հնչում է այն քաղցրանուն բառը, որ սավառ-

նում է դեպ հեռուները ու մի նոր ջերմություն փոխանցում մի հրաշալի հայկական ընտանիքում մեծացող այն փոքրիկ տղային: Ու Արցախից հնչող խոսքը թևեր առած հասանելի է դառնում նյույորքաբնակ այն ընթերցասեր փոքրիկին. «**Քարև, ախպե՛ր, ինչպե՞ս ես, արի՛ մեզ մոտ, միասին կխաղանք, Արցախը կտեսնես...**»:

Ու այս երկու հրաշք բալիկների հեռավոր ընկերության մեջ միշտ էլ հնչում է հարազատ «ախպերը», որ դառնում է կարոտ, դառնում հույս, երբեմն՝ հավատ, որ մի օր կհանդիպեն:

http://hayernaysor.am

09.09.2016

ԹՈՂ ԽԱՂԱՂ ՕՐԵՐԻ ԱՐՇԱԼՈՒՅՍՆԵՐԻՆ ՄԱՅՐԱՄՈՒՏՆԵՐՆ ԷԼ ԱՅՑԻ ՉԳԱՆ

«Երկնայի՛ն Տեր, շնորհակալ եմ քեզանից, որ աշխարհը ստեղծել ես լավի ու վատի հաջորդականությամբ կամ ընդհակառակը…»:

Տողերն անհասկանալի հնչողությամբ արձագանք տվին ամբողջ դասարանում, մի պահ քար լռություն էր… Որտեղի՞ց եկան այս խոսքերը, որ 7-րդ ա դասարանում ամենից փոքրահասակ ու երկարածամ աղջնակի շուրթերից հնչեցին որպես կոչ՝ ուղղված վերին բարձրյալին: Եվ նրա մտածումները շուտով դառնում են մերը, որ հարազատ է մեզ, բոլորիս հոգու կսկիծը՝ խավարից հետո եկող լույսի առկայծումներով. «**Վերջապես ապրիլյան պատերազմի հիշողությունները մնացին ոչ հեռու անցյալում, նորից ղողանջեց դպրոցի զանգը, և մենք հավաքվեցինք մեր դպրոցի բակում, նորից հանդիպեցինք հարազատ դեմքերի, նորից մեր դասարանում ենք: Հիմա արդեն մտածում եմ, որ ինչքա՜ն լավ է, երբ մայրամուտներին հաջորդում են արշալույսները»:**

Բայց այդ ո՛ր մի դեռահասն է, որ պիտի կարողանա մոռացության տա այն օրերի սարսափելի ապրումները, երբ խաթարվեց նրանց խաղաղ մանկությունը: Ու նորից անցյալը դառնում է ներկա, և հեռուներից արձագանքը բերում է անցած օրերի մի տխուր պատմություն, որտեղ դպրոց չհաճախող մի աղջնակ կա ու նրա նման շատ-շատերը, ովքեր երևի այդ օրերին չէին էլ հավատում, որ հրետակոծվող Մարտակերտում կլսվի նորից հարազատ դպրոցի զանգի ղողանջը:

«Այդ օրը թշնամու հրթիռակոծությունից շիկացել էր երկինքը, որոտում էր երկիրը: Սովորական հունով ընթացող իմ կյանքը մի քանի ժամում փոխվեց… Ճարահատյալ մյուս մարտակերտցիների նման մենք էլ տարհանվեցինք, տեղափոխվեցինք մեկ ուրիշ վայր: Ծնողներս անհանգստանալու պատճառ ունեին, որ ես նոր միջավայրում չէի ուզում հաճախել դպրոց: Ինձ համար ամեն ինչ կորցրեց իր շքեղությունն ու

իմաստը, շուրջբոլորս ամեն ինչ գունազրկվեց ու քարացավ: Կարծես ես դադարել էի գոյություն ունենալուց, միայն իմ անցած օրերի հիշողության մեջ լսելի էին հարազատ կրթօջախիս զանգի ձայնը, դասընկերներիս զվարթ ծիծաղը: Երբ սթափվում էի և բախվում դառն իրականությանը, ամեն ինչ խառնաշփոթի էր վերածվում: Ինձ թվում էր՝ անվերջանալի է այս ամենը, ու այն ավարտ չի ունենա…»:

Հայացքս հառում եմ իմ խելոք աշակերտուհուն՝ Մերի Հովհաննիսյանին, դեմքին ճառագած այն մեղմ ժպիտն էլ ողողված էր անցյալից եկած թախծի երանգով: Մտերմորեն զգվում եմ նրան… Անորոշ մտածումների մեջ եմ…Երանի թե խաղաղ օրերի արշալույսներին մայրամուտներն այցի չգային…

http://usarmenianews.com/am-n-5420.html

10.09.2016

ԵՍ ԵՄ ԱՐՑԱԽԸ

Երգի այս նոր տեսահոլովակն ուշադրությանս արժանացավ: Առավել շատ հետաքրքրությունս շարժեց, երբ լսեցի Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի նախկին շրջանավարտ Վիտալի Ղազարյանի հրաշալի ձայնը: Տարիների հեռավորությունից վերհիշում եմ նրան, ում դասավանդում էի, և նա իր երգելու ձիրքով դպրոցի բոլոր միջոցառումների կենտրոնական դեմքն էր: Որքա՜ն գեղեցիկ էր քաղցրերգում նա, ու այդ թովիչ ձայնը պիտի կարկաչեր հայրենի երկրի զուլալ ու ջինջ աղբյուրների կարկաչի պես, Արցախի հողը պիտի թնդար ու հավերժի պատգամը հղեր հեռու-հեռուներում, որ մենք ենք մեր սարերը, մենք ենք տերը այս հողի, որտեղ մի բուռ ժողովուրդ է ապրում՝ հայրենի երգն իր շուրթերին:

Տեսահոլովակի այս երգը մի քանի անգամ լսեցի, հոգիս ցնծում էր հպարտությունից: Վիտալի Ղազարյան մեներգիչը Արցախի «Մենք ենք, մեր սարերը» համույթի գեղարվեստական մասի ղեկավարն է, բայց ո՞վ է այն մյուսը, ով երգի մեկ այլ ոճում դարձել էր Արցախ, դարձել զինվոր տղա, դարձել էր թագավոր, հողի պաշտպան, անկոտրում ու կամքով արի՝ դարձել էր թշնամու սարսափը: Ու այդ Ես-ի մեջ ամբողջանում էր մի ամբողջ Արցախ…Կյանքի ու մահվան սահմանագծում կանգնած զինվորի մի հզոր փառաբանություն է այս երգը, մեր նորօրյա նահատակների հիշատակի խոնարհում, որ լեզու առած հմայիչ մեղեդայնությամբ հնչում է Մարտակերտից ոչ հեռու գտնվող բարձրաբերձ Տիգրանակերտից:

Որքա՜ն մեծ էր զարմանքս, երբ իմացա, որ մեներգիչները երկու եղբայրներ են՝ Վիտալի և Վալերի Ղազարյանները: Անակնկալը մեծ էր, երբ ինձ հասանելի դարձավ, որ «Լյոկա» անունը ծնվել է վերջինիս փաղաքշական «Վալյոկա» անվան վերջնամասից: Առավել մեծ էր հիացմունքս, երբ նա հիշեցրեց ինձ, որ տարիներ առաջ, մինչև մեզանից ոչ շատ հեռու գյուղական դպրոց տեղափոխվելը, դասավանդել եմ

նրան 5-րդ դասարանում: Եվ մեր զրույցը պիտի շարունակվեր ավելի մտերմիկ տոնով, ու հիշողությանս մեջ մերթընդմերթ երևում էր դասարանի երկրորդ նստարանին նստած իմ փոքրիկ սանիկը, ում մոտ այն ժամանակ էլ նկատելի էր երգելու շնորհը:

Ես նրանից հարցնում եմ երգի ծննդյան մասին, ու Վալերի Ղազարյանի խոսքում հնչում է մի փոքրիկ պատմություն. «**Երգի մասին գաղափարը եկավ ապրիլյան դեպքերի ժամանակ, ես ինքս էլ Մարտակերտի դիրքերում էի ապրիլյան պատերազմի օրերին: Բոլորս էլ տեսանք, թե ովքեր են մեզ պաշտպանում իրենց կյանքի գնով…Երբ ամեն ինչ հանդարտվեց, եկա տուն, իմ մտորումները պատմեցի եղբորս՝ Վիտալիին: Առաջարկեցի նման գործ ստեղծել, միանգամից համաձայնվեց, նա նաև իմ գաղափարակիցն է, ու ծնվեց այս երգը, որը ձայնագրվել է «Անի» ստուդիայում, գործիքավորումը իմ և Վիտալի Ղազարյանի կողմից է, շեփորը հնչեցնում է տաղանդավոր Ավետ Բաղալյանը**»:

Տարիների հեռավորության մեջ մնացած իմ աշակերտների ուսուցչուհու կերպարով ու նորօրյա մանկավարժիս խոսքով շնորհավորում եմ այս տեսահոլովակի ծնունդը, ցանկանում ստեղծագործական նորանոր վերելքներ՝ համոզված, որ այս երգի հրաշալի կատարումը՝ շեփորի թախծոտ ելևէջներով, կհնչի դեպ հեռու-հեռուները՝ ազդարարելով Արցախ աշխարհի հզոր կամքն ու ապրելու հարատևությունը:

http://usarmenianews.com/am-n-5443.html

Տեսահոլովակը՝ https://www.youtube.com/watch?v=L1feCSibn68

11.09.2016

ԻՄ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ԼԻՆԵՄ ԶԻՆՎՈՐԻ ԿՈՂՔԻՆ, ԾԱՌԱՅԵՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿՈՒՄ

«Խաղաղություն եմ ուզում, էլ չեմ դիմանում»: 11-րդ դասարանում սովորող իմ աշակերտուհու՝ Նարինե Գրիգորյանի այս խոսքերը մի պահ ցնցում են ինձ: Կարծես ուզում եմ դիմային փոփոխության ենթարկել միտքը, որ բոլորս էլ հարատև խաղաղություն ենք ուզում, էլ չենք դիմանում: Բայց դիմանո՞ւմ ենք ... Երբեմն զայրույթն է երկինք հառվում, երբեմն լռվում՝ անտես ենք դառնում, անորոշ մի զգացողություն խեղդում է հոգիդ, ու չես կարողանում քո առջև նստած դպրոցականի հարցին պատասխանել. «**Ո՞վ է հորինել պատերազմ ասվածը, ինչո՞ւ ենք ամեն օր լսում հերթական կորստի մասին»:**

Հայացքս սահում է նրա տողերով, որ շատ հարազատ են հնչում. «**Վստահում եմ քեզ, զինվո՛ր, ես գիտեմ, որ դու հաղթանակների զինվորն ես: Քո հավատը մեր հավատն է՝ հանուն խոստումնալից ապագայի, հանուն Արցախի բարգավաճման և հանուն ողջ հայության միավորման: Եթե զինվորը կռվում է իր հողերի համար ու պաշտպանում իր երկիրը, արդար է նրա կռիվը և հաղթանակը՝ անխուսափելի»:**

Դա սրտի խոսք է, որ երբեմն յուրաքանչյուրիս հոգում վերածվում է մենախոսության, ու այդ զրույցի գլխավոր հերոսը դառնում է սահմանին կանգնած զինվորը: Մենք ապրում ենք նրանց հետ, աղոթում նրանց համար, տառապանք ապրում ամեն մի զոհի հետ: Բայց ի՞նչ, խաղաղ ապրելու հույսը մարե՞լ է արցախադստեր հոգում, թե՞ նրա սրտի մեծ ցանկությունն է՝ լինել սահմանում, մեր զինվոր տղաների կողքին. «**Յու-**

բաքանչյուր հայուհի պիտի հզոր լինի հոգով և սրտով, որովհետև մենք էլ մի օր մեր քաջ զինվորների կողքին կանգնելու ենք սահմանին և պաշտպանենք մեր սուրբ հողն անիծվածներից»:

Նկարում տեսնում եմ, որ երկծամ, գեղեցկատես այս աղջնակը զինվորների հետ է: Պարզվում է՝ համերգային ծրագրով ներկայացած այս զինվոր տղաների հետ նկարվելիս՝ ինքն էլ վերցրել է մի երաժշտական գործիք, որ նրանց նմանվի: «**Երբ տեսա զինվորներին, անմիջապես ցանկացա նկարվել նրանց հետ, ու նկարվելու պահին սիրտս մի տեսակ թեթևացավ, ինձ ուժեղ ու պաշտպանված էի զգում նրանց կողքին: Նաև նախընտրում եմ հագնել զինվորական համազգեստ, ամեն կերպ ուզում եմ նմանվել նրանց: Եվ իմ ցանկությունն է՝ ծառայեմ հայոց բանակում»:**

Մի պահ լռում եմ, հպարտության զգացմանը զուգահեռ՝ տխրում է հոգիս, որ այս անորոշությանն այլևս չդիմանալու ճանապարհին, երկարատև խաղաղության բաղձանքով իմ աշակերտուհին մի նոր ուղի է գտել իր համար՝ լինել զինվորի կողքին, ծառայել հայոց բանակում:

http://usarmenianews.com/am-n-5458.html

13.09.2016

ՄՏԱՀՈԳՎՈՒՄ ԵՄ, ԵՐԲ ՍԵՐՈՒՆԴՆ Է ՏԽՐՈՒՄ

12-րդ դասարանցիների այսօրվա գրած տողերն ինձ մտահոգվելու առիթ տվեցին: Հայոց լեզվի դասանյութի թեմային համահունչ հանձնարարված առաջադրանքը ոմանց անկեղծ արտահայտվելու հնարավորություն էր տվել: «**Ո՞վ եմ ես**» հարցումը անկեղծանալու հրաշալի թեմա էր, որտեղ յուրաքանչյուրը ներկայացավ իր դրական ու բացասական բնավորության գծերով, բայց կային տողեր, որ մտորելու տեղիք տվեցին: «**Ինձ համար ամենադժվարը ապրելն է**»,-կարդացի առաջին նախադասությունն ու կանգ առա…Մի՞թե այս տարիքի դպրոցականի համար կյանքը կորցրել է իր հմայքն ու հետաքրքրությունը. «**Դժվար է ասելը, բայց կարծես կյանքի հոգնածություն ապրած լինեմ: Շատ շուտ եմ հուզվում՝ նույնիսկ ամեն փոքր բանից, երբեմն էլ սկսում եմ լացել: Ինձ նաև ասում են՝ մի ամբողջ կյանք ապրած մարդ ես**» /Աբրահամյան Ռուզաննա/:

Ընթերցում եմ մեկ ուրիշ աշակերտուհու տողեր, տեսնում եմ, որ նա էլ սրտի անկեղծ խոսք է գրել, երբեմն լավատեսական տողերին միահյուսված՝ տխրալից մտքեր. «**Ինձ թվում է՝ ես ծնվել եմ աշխարհ կառավարելու համար, բայց միևնույն ժամանակ, ես ինձ դժբախտ եմ համարում, իսկ դրա մասին իմ շրջապատում մինչև հիմա ոչ ոք չգիտեր**» /Ղուլյան Գեղեցիկ/: Որտեղի՞ց են գալիս այս հոռետեսական տրամադրությունները, ես ինքս էլ մտահոգ եմ նոր սերնդի անկեղծ խոսքերից: Ահա դասարանի միակ տղան, բայց որքան էլ նա չսիրի ուշադրության կենտրոնում գտնվելը, այն առկա է, երբ շրջապատված է աղջիկներով:

«**Ես հասարակ, չխոսկան, ինքնամփոփ տղա եմ, սիրում եմ մենակության մեջ ապրել ու խորհել, չեմ սիրում լինել ուշադրության կենտրոնում, բայց նաև պայքարող եմ**» /Աղաբեկյան Սեյրան/:

Փնտրում եմ լավատեսություն արտահայտող մի քանի տողեր, բայց

նորից ներսուզվում եմ իմ աշակերտների հոգու մեջ, որտեղ անհանգիստ ապրումներ կան. «**Ես տարբերվում եմ մյուսներից իմ անչափելի համեստությամբ: Բնավորությանս այդ գիծը չեմ սիրում, հենց դրանից է, որ սիրում եմ լռությունը, այդ լռության մեջ եմ գտնում իմ հանգստությունը, բայց ցանկանում եմ լինել ազատ ու անկաշկանդ, որն ինձ մոտ չի ստացվում**»/Արզումանյան Լադա/: Այս ժպտերես ու մեղմ բնավորությամբ աղջիկը թուլություն ունի, ով վստահում է բոլորին ու հավատում, բայց կարծես համամիտ չեմ նրա այս տողերին. «**Ես շատախոս եմ և անկայուն, որոշումներ դժվարությամբ եմ կայացնում**» /Կարապետյան Արմինե/:

Գոնե այս մեկը, անմեղ ժպիտը դեմքին ճառագած, մի քանի տողում նկարագրել էր իրեն, թեկուզ չէր սիրում իր մասին խոսելը, բայց նա էլ մյուսների նման գերադասում է մենակությունը. «**Երբեմն սիրում եմ կտրվել ամեն ինչից ու մենակ մնալ: Սիրում եմ նաև երկար ճանապարհ գնալ, երբ մենությանս մեջ կարող եմ մտածել ամեն ինչի մասին**» /Ջավադյան Վարդուհի/:

Բայց տարիներ շարունակ իմ առջև նստած այս համեստ աղջնակը ինչո՞ւ է իրեն համարում բարդ բնավորության տեր, մի բան, որ երբևէ չեմ նկատել. «**Իմ կարծիքով, ես շատ բարդ անձնավորություն եմ, բնավորությունս փոփոխական է, ամեն ինչ ընդունում եմ սրտիս մոտ և շատ շուտ էլ հուզվում եմ ամեն մի չնչին բանից**» /Կարապետյան Սյուզաննա/:

Որքա՜ն եմ ուզում, որ այս պատերազմ տեսած դեռահասները կենսախինդ լինեն, ապրեն լիառատ կյանքով, ու ես ինքս էլ, նրանց հետ մենախոսելով, փնտրում եմ մեր համատեղ լուսանկարը, որ մի քանի օր առաջ էինք նկարվել: Լռին մենությանս մեջ լուսավոր կյանքի նոր երազանքներ եմ ցանկանում նրանց և իմ աշակերտների անհանգիստ ապրումները, հոգուս մեջ թանձրացած, ուզում եմ նրանց մտորումները եզրափակել իրենց համադասարանցու՝ Անուշ Դանիելյանի տողերով՝ համոզված, որ չնայած տխուր են իրենց մտքերում, բայց յուրաքանչյուրն էլ այս կյանքում ընտրած ունի իր համար ճիշտ ապրելու ձևը: «**Ես փորձում եմ կյանքս ապրել արժանապատիվ, չեմ սիրում քննադատել մյուսներին և ունեմ կարգախոս. «Քննադատելուց առաջ դու անցի՛ր նրա ճանապարհով, տե՛ս նրա արցունքները, զգա՛ նրա ցավը, դիպչի՛ր ամեն մի քարի, որից նա սայթաքել է, և դրանից հետո ասա՛, որ դու գիտես ճիշտ ապրելու ձևը**» »:

Փորձում եմ կյանքը գնահատելու մշտական թարմության զգացողություն արթնացնել նրանց մոտ, ուրվագծել ապագայի գունեղ տեսլականներ...

http://usarmenianews.com/am-n-5486.html

14.09.2016

ԵՍ ՄՏՔԵՐՈՎ ԱՅՆ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՕՐՎԱ ՀԵՏ ԵՄ

Գերտրուդա Բեգլարյան, 7-րդ դասարանի աշակերտուհի...Նա շատ վտիտ է, փոքրամարմին, անչափ ամաչկոտ, խոսքերը հնչում են հատ-հատ և շատ նուրբ: Նույնքան նուրբ ու մեղմ է նրա ձայնը, երբ երգում է նա: Թվում է՝ երգելիս էլ ամաչում է, իսկ ձայնը՝ հնչեղ, հոգուդ հարազատ, ուզում ես լսել, անընդհատ լսել, երբեմն փարվել, գուրգուրել նրան: Նա խոսք ունի ասելու, բայց ամաչում է: Դասարանի աշակերտուհիներից մեկն ինձ տեղեկացնում է այդ մասին: Շուտով շատ կամաց լսում ենք նրան. «**Ես նորից Մարտակերտում եմ, խաղաղ երկինք է իմ գլխավերևում: Հուսով եմ, որ պատերազմ չի լինի, բայց մտքերով այն սարսափելի օրվա հետ եմ»:**

Բոլորս լսողություն ենք դարձել, սպասում ենք նրա խոսքերին, որ շարված են տետրում: Ինչո՞ւ է նա հիշել այն ծանր օրը՝ ապրիլի 2-ը: Բայց ո՞վ կարող է ասել, որ այն կմոռացվի: Եվ նա շարունակում է կարդալ: Այդ մեղմ ձայնը կարծես արձագանք է տալիս դասարանի քարլռության մեջ: Ինչ-որ մի բան կար, որ նա ուզում էր մեզ պատմել, ու այն թղթին էր հանձնվել, որ պիտի դառնար մի փոքրիկ ակնարկ պատմություն. «**Այդ օրը մեզ կորցրած՝ դուրս եկանք տնից, առաջին արկն ընկավ մոտակա խանութի առջև, հետո չեմ հիշում...Փողոցով անցնող մեքենաներից մեկը կանգնեց մեր կողքին. դա հիվանդանոցի շտապ օգնության մեքենան էր: Մայրս ինձ ու քրոջս տարավ հիվանդանոցի նկուղը: Ամբողջ մարմինս, առավելապես ոտքերս դեռ դողում էին...»:**

Նա ընթերցում է գրած տողերը, իսկ ես մտովի այդ օրվա ապրումների մեջ եմ: Ապա հատ-հատ նայում եմ աշակերտների հայացքներին, մի մասը շրջվել է դեպի նա, իսկ նա ընթերցում է տողերը: «Բոլորս յուրովի այդ օրվա տառապանքն ապրեցինք»,- մտորում եմ ես, ու հանկարծ այդ մեղմ ու տխրալից ձայնն ինձ հասանելի է դառնում: Եվ խնդրում եմ նրան նորից ընթերցել այդ վերջին տողերը. «**Հիվանդանոց բերեցին**

Մատաղիսի գյուղապետին: Նա վիրավոր էր: Նրան պետք է տեղափոխեին Ստեփանակերտ: Ճանապարհին մենք էլ նրա հետ էինք, շտապօգնության մեքենայում: Նա չէր կարողանում շարժվել, նրան օգնում էր բուժքույրը: Ես տեսա, որ մրսում էր: Թեկուզ իմ համար էլ ցուրտ էր, վերարկուս հանեցի ու նրա ոտքերին գցեցի: Երբ ծածկեցի ոտքերը, տեսա, որ աչքերում արցունքներ երևացին»:

Իր ընթերցած հաջորդ տողերում նա արդեն հաճախում էր մեկ ուրիշ դպրոց, իսկ ես մտքերով այն սարսափելի օրվա՝ այս վտիտ, շատ ամաչկոտ աղջնակի հետ էի, որ դողում էր արկերի հարվածներից, ու ինքն էլ մրսում էր, բայց բարությամբ համակված՝ իր վերարկուով ծածկեց վիրավորի ոտքերը:

Լուռ ենք ամենքս, գթառատ մի սիրտ բարություն էր փռել շուրջբոլորը:

http://hayernaysor.am

15.09.2016

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՇԱԿԵՐՏԻՍ ՓԱՓԱԳԸ

Նա 12-րդ հումանիտար դասարանի միակ տղան է: Մի քանի անգամ հայացքս սահեց իմ աշակերտ Սեյրան Աղաբեկյանի շարադրության տողերով. **«Անկեղծ եմ ասում, տիկի՛ն Պողոսյան, ուզում եմ զբաղեցնել այդ կարևոր պաշտոնը, բայց ոչ թե փառքի ու պատվի համար, այլ երկրիս արդար ու բարձր գործեր մատուցելու նպատակով»:**

Այն երկխոսությո՞ւն էր ինձ հետ, թե՞ անկեղծ խոստովանություն, դա չէր կարևորը: Այդ տողերում կային երազանքներ, սրտի խոսք, որ փորձում էր անհանգիստ մտորումներով կիսվել իր ուսուցչուհու հետ: Սա մտահոգություն էր դեռահասի, որ աղաղակում էր, հոգու ցավալի ճիչ էր, որ բարձրաձայնում էր՝ ի լուր աշխարհի:

«Հայրենի երկիր, իմ մա՛յր Հայաստան, որտե՞ղ ես, որտե՞ղ է այն հզոր, անպարտելի ու հարևանների համար սարսափ համարվող երկիրը՝ ծովից ծով Հայաստանը...Որտե՞ղ է Տիգրանի, Արտաշեսի, Լևոնի ու Նժդեհի Հայաստանը... Փշաքաղվում ու ձեռքս ակամայից բռունցք եմ դարձնում, ցանկանում օգնել, օգտակար լինել երկրիս: Ուզում եմ լինել ամենից առաջ Մարդ՝ ազնիվ ու արդար, ես սիրում եմ արդարությունը, իսկ ապրիլյան պատերազմից հետո իմ մոտ ցանկություն առաջացավ՝ դառնալ ՀՀ արդարադատության նախարար և արդարության բարձունքից երկիրս նեկայացնել ամենուր...»:

Նա երբեմն դառնում էր հայրենիքի զինվոր, երբեմն այդ նույն հայրենիքի անմնացորդ նվիրումով ապրող անհատականություն. **«Պաշտում եմ քեզ, իմ մա՛յր Հայաստան, որ հայի հայրենիքն ես դարձել, բայց ամենից առաջ ցանկանում եմ երկրիս համար դառնալ արժանի զինվոր»:**

Հպարտանա՞մ, թե՞ զարմանամ, որ ՀՀ անկախության տոնին նվիրված այս շարադրանքի վերջում իմ աշակերտի գրած տողերը մի նոր

անակնկալ պիտի մատուցեին ինձ. «**Տիկի՛ն Պողոսյան, ես ստեղծագործել չգիտեմ, բայց անկեղծ հայրենասեր եմ, ես այնքան էլ լավ չեմ շարադրություն գրում, սակայն կարող եմ ասել, որ հայրենասիրության ջատագով եմ և պաշտում եմ իմ երկիրը, որ Հայաստան է կոչվում՝ մի բուռ Արցախով»:**

Խոսքի պակաս ունեմ, բառեր եմ փնտրում, չեմ գտնում, ի՞նչ լավ է, որ ես նրան դասավանդում եմ...

http://usarmenianews.com/am-n-5529.html

16.09.2016

«ՍՊԱՆՎԱԾ ԱՂԱՎՆԻՆ» ՆՈՐՕՐՅԱ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

11-րդ դասարանում փնտրում եմ մեկին, ով կարդարացնի Սառային, և հակառակ Նար-Դոսի ջանքերին, որ վիպակում մեղադրում է տվյալ հասարակությանը, այս կերպարը խոցելի կողմեր ունի, որն էլ առիթ տվեց տարբեր մեկնաբանությունների:

Չնայած գրողի նկարագրած ժամանակաշրջանից մինչև մեր օրերը հասարակությունը որոշակի զարգացում է ապրել, սակայն նրա արծարծած խնդիրներն առկա են նաև մեր օրերում: Ե՛վ սպանված աղավնին, և՛ անմեղությունը կորցրած Սառան Թուսյանի զոհերն են, իսկ նա անուղղելի ստահակ է և չունի սեփական մեղքի գիտակցություն: Բայց մի՞թե մեր օրերում աղջիկները չեն խաբվում, կամ ինչպե՞ս կվարվեին նրանք՝ այդպիսի իրավիճակում հայտնվելով: Իսկ գուցե նաև մեր աշակերտները կարո՞ղ են խորհուրդներ տալ...

«Սառայի մեղավորությունը կայանում է նրանում, որ նա շատ շուտ գայթակղվեց այդ երիտասարդով և հավատաց նրա սուտ խոստումներին: Ես նրան խորհուրդ կտայի սառը դատեր և ոչ թե սպաներ իր անմեղ երեխային: Նա կարող էր ապրել իր կյանքով, աշխարհը Թուսյանով չէր սկսվում և ոչ էլ նրանով էր վերջանում, Աստված նրան նոր կյանքով ապրելու հնարավորություն էր տվել» /Դավթյան Տաթևիկ/:

«Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ Սառային: Երբեմն փորձում եմ արդարացնել նրան, որ այն փոքրիկին սպանել է, որպեսզի փրկի նրան կյանքի դաժան խաղից, որ հանկարծ կյանքը նրան չկործանի, բայց ո՛չ... Այն անմեղ էակը ինչո՞վ էր մեղավոր, որ վճարեց իր կյանքի գնով, մի՞թե Սառայի սրտում մարել էր մայրական սերը, այդ նա՞ չէր,

որ այնքան ծանր տարավ հասարակ թռչունի մահը: Բայց Աստված պատժեց նրան՝ խլելով նրա կյանքը, և նրա հետ տարավ նաև կրծքի տակ գտնվող երկրորդ երեխային» /Մարդոյան Քրիստինե/:

«Իմ կարծիքով, մեր օրերում Սառայի վիճակում հայտնվողները նրա նման չէին վարվի: Կարևոր չէ որտեղ կապրեին, բայց իրենց երեխայից չէին զրկվի: Ինչո՞ւ «Անավարտ թռիչք» ֆիլմի հերոսուհին՝ Արևիկը, որ նույն վիճակում էր հայտնվել, կարողացավ պաշտպանել իր երեխային ու անցավ տարբեր փորձությունների միջով: Ես Սառային մեղադրում եմ իր թուլության պատճառով: Նաև նրան խորհուրդ կտայի մի քիչ ինքնասիրություն ունենալ և նորից չվազել իրեն դավաճանած ու լքած տղամարդու հետևից» /Հայիրյան Նելլի/:

«Սառան պետք է փորձեր նոր կյանք սկսեր, մանավանդ, որ նրան այդ հնարավորությունը տրվել էր, և նա ամուսնացել էր, իսկ թուրյաններին կյանքն ինքնիրեն կպատժեր: Մեր օրերում Սառայի վիճակում հայտնվողները չէին կորցնի հոգեկան հավասարակշռությունը և չէին դառնա որդեսպան» /Դանիելյան Վիկտորյա/:

Եվ որքան էլ գրողը համամիտ լիներ Սառայի՝ հասարակությանն ուղղված մեղադրանքին, թե ինչու է այդ հասարակությունն իր մեջ հանդուրժում Թուրյանի նման սրիկաների գոյությունը, միևնույն է, մերօրյա աշակերտության ընկալումներում Սառային ուղղված մեղադրանքներն այնքան շատ էին, որ նրան արդարացնելու հազվագյուտ միտումներն անգամ դատապարտվեցին: Եվ աղջիկներին ուղղված իմ հարցը, թե իրենք կցանկանայի՞ն Սառայի ամուսնու՝ Գարեգին Սիսակյանի նման կյանքի ընկեր ունենալ, անհնարին է նկարագրել, թե ինչ ժխտողական վերաբերմունք արտահայտեցին, որով հաստատվում էր, որ մեր օրերի աղջիկներից ոչ մեկն էլ չէր ցանկանա հետագայում իր կողքին տեսնել անվճռական, թույլ բնավորության տեր տղամարդու: Եվ չնայած գրողը վարպետորեն հաջողված գեղարվեստական կերպարներ է ստեղծել, բայց ի տարբերություն նախորդ տարիների մեր աշակերտների վերլուծություններին, որ առանձնացվում էին Սառային մեղադրող և արդարացնող խմբերը, այս անգամ համարյա բոլոր աշակերտներն էլ արտահայտեցին իրենց մեղադրանքը խաբված աղջկա և լքված կնոջ ողբերգությունն ապրած հերոսուհու հանդեպ:

Հետաքրքրիր էր, ի՞նչն էր փոխվել՝ կյա՞նքը, մեր միջավա՞յրը, թե՞ նոր սերնդի մտածելակերպը, մի բան, որ խորհելու տեղիք է տալիս:

http://usarmenianews.com/am-n-5551.html

19.09.2016

ՀԵ՛Յ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԼՍՈ՞ՒՄ ԵՍ ՆՌԱՆ ՃԱՔԵԼՈՒ ՁԱՅՆԸ, ԿՌՈՒՆԿՆԵՐԻԴ ՏՈՒՆԴԱՐՁԻ ԱՂԱՂԱԿՆԵՐԸ...

Հայաստանի անկախության տոնին ընդառաջ՝ 11-րդ դասարանում առաջարկեցի ստեղծագործական շարադրություն գրել: Ուշադրությանս արժանացավ այս մեկը, որ գրված էր շատ սրտանց, հյութեղ ու ազնիվ պոռթկումով. «**Հե՛յ, Հայաստա՛ն, ես եմ՝ քո դուստրը, տե՛ս, ազատ ճախրում եմ՝ քո անկախությունից թևեր առած, զգում եմ արևիդ ջերմությունը, ճախրում եմ՝ երգելով հաղթանակներիդ, սիրուդ ու ռազմիդ երգերը: Լսո՞ւմ ես նռան ճաքելու ձայնը, կռունկներիդ տունդարձի աղաղակները, տե՛ս, աշխարհի բոլոր կողմերում զուռնա են փչում, դհոլ զարկում, զավակներդ քոչարի են պարում: Քո մեջ ինչքա՜ն թախիծ ու ցավ, սեր ու կարոտ, երգ ու պար կան, և գույնե՜ր, շատ գույնե՜ն կան անվանդ մեջ: Որքա՜ն հավատք ու աղոթք... Այդ հավատքից, սիրուց, գույներից ծնվեցի ես, և ո՞վ գիտի քո գաղտնիքներն այնպես, ինչպես՝ ես, որ արբում է քո բուրմունքից և ապրում՝ ապրեցնելով քեզ: Այդ ես եմ, քո պես խենթ ու խելառ, փոքրիկ, բայց մեծ, նրբանկատ ու համառ՝ հարատև ապրելու ուժով ու կամքով զինված»:**

Հիացմունքով կարդացի Քրիստինե Մարդոյանի տողերը, ես մտովի Հայաստանի դստեր հետ եմ, որ սովորում է Արցախի սահմանամերձ բնակավայրի մի դպրոցում, որտեղ ապրիլյան պատերազմի հետքեր կան, ցավալի ապրումներ, սարսափ կա մեծ, որ մնաց սերնդի հոգում, ու ազնիվ մղումով այս օրերին նստած դպրոցական նատարանին՝ հարատև խաղաղության հույսի ակնկալիքով այդ սերունդը սերտում է ամեն օր հայրենասիրության դասը. «**Գիտեմ, որ քո անթեղված հոգում ցավ կա, ես էլ ցավում եմ բոլոր երեխաների համար, ովքեր ծնողի գուրգուրանք չեն տեսել, հավատա՛, ողբում եմ այն բոլոր զինվորների հա-**

մար, ովքեր իրենց պարտքը հայրենիքի հանդեպ կիսատ թողեցին, ամաչում եմ նրանց համար, ովքեր աշխատելու փոխարեն գողանում են, սիրելու փոխարեն՝ ատում, ավելի լավը դառնալու փոխարեն բամբասում են: Ինձ պինդ պահի՛ր քո գրկում, ես քո շարունակությունն եմ, մեր սրտերը նույն երաժշտությամբ են բաբախում, նույն երազանքները, նույն կարոտներն ու մտքերն են թոթովում: Միշտ բարձր պահի՛ր գլուխդ, Հայաստա՛ն, քո զավակները ապրում, պայքարում և հաղթանակներ են կռում քեզ համար»:

Հաջորդ դասաժամին մի նոր հայացքով նայում եմ իմ աշակերտուհուն. նա լուռ է, հանգիստ, բայց նաև՝ շատ անկեղծ, տողերն էլ գրված են ի սրտե, տողերում սերունդն է խոսում...Դա ինքն է, իր հարազատ քույրը, որ սատարեց իրեն ստեղծագործելու, դա մի ամբողջ սերունդ է, որ իրեն մայր Հայաստանի զավակն է համարում. «**Քարքարոտ իմ երկի՛ր Հայաստան, ես գիտեմ և՛ կռվել, և՛ կրակել, գիտեմ մեռնելու և ապրելու գինը: Իմ սիրտը քո սրտի մեջ է բաբախում: Ժպտա՛, շողշողա՛ ծիրանագույն արևի շողերի մեջ, ամո՛ւր պահիր մեզ քո գրկում, ՀՀնջա՛ հայի աղոթքը: Ես քո դուստրն եմ, մա՛յր Հայաստան, քո թռիչքի թևերը, եռագույնդ ծածանողը, կարպետիդ գույնզգույն թելերը, երգիդ հնչյունները և ամեն, ամեն ինչը»:**

Ինչքա՜ն լավ է, որ սերունդն է լեզու առած խոսում մայր Հայաստանի գրկում, սերունդ, որ գիտի մեռնելու և հարություն առնելու գինը, սերունդ, որ յուրաքանչյուր քայլը գիտակցելով՝ իր ուսերին առած տանում է հայրենիքի արևաշող գալիքը:

http://usarmenianews.com/am-n-5601.html

20.09.2016

ԱՅՆ ԿԱՊՈՒՅՏ, ՇՔԵՂ ԿԱԶՄՈՎ ԳԻՐՔԸ

Հայացքս սահում է տետրի թերթի վրա գրած տողերով, որ դասամիջոցին ինձ էր հանձնել 8-րդ դասարանի աշակերտուհի Մերի Հակոբջանյանը: Ուսուցչուհուս ուղղված հրաշալի խոսքեր կային, բայց առանցքում այն կապույտ, շքեղ կազմով գիրքն էր, որ վերջերս նա նվեր էր ստացել հեռավոր Սանկտ Պետերբուրգում ապրող արձակագիր Լևոն Ադյանից: Եվ հիշողության մեջ այդ տողերն ինձ տանում են այն փետրվարյան օրերը. «**Բաքվի և Սումգայիթի ողբերգական օրերի մասին ուսուցչուհիս շատ էր պատմել, մի անգամ էլ նա դասարան մտավ՝ ձեռքին մի կապույտ կազմով գիրք: Նա մեծ հուզմունքով խոսեց մեր հայրենակից գրող Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» գրքի մասին: Մենք էլ հուզվեցինք, նույնիսկ ցանկություն հայտնեցինք՝ անձամբ հանդիպել գրողին, նաև կարդալ նրա ստեղծագործությունները»:**

Ես մի պահ ընդհատում եմ ընթերցելը, բայց վերհիշում եմ իմ աշակերտուհու՝ այն օրերին գրած շարադրանքից տողեր. «**Ես ուրախ եմ, որ իմ մայրիկն էլ սովորել է այն նույն դպրոցում, որի տաղանդավոր սաներից մեկն է եղել Լևոն Ադյանը: Ես վաղուց քաջածանոթ եմ նրա անվանը, խոստանում եմ ընթերցել նրա բոլոր ստեղծագործությունները, նաև շնորհակալ եմ իմ հայրենակցին, որ այս գրքով ես հասկացա, թե ինչ է Սումգայիթը»:**

Այս սիրուն, հրաշալի աղջնակի խոսքերում նորից վերապրում եմ ապրիլյան տառապալից օրերը, երբ արկակոծվող Մարտակերտի հողը ցավից ճաք էր տվել, իսկ այնտեղ ապրող բնակչությունը փրկության մի նոր ապաստան էր փնտրում: «**Ապրիլյան տեղահանության ժամանակ ես Առաջաձոր գյուղում էի՝ իմ պապիկի տանը: Բոլորովին պատահական գրքերի պահարանում տեսա արդեն ինձ ծանոթ այն շքեղ, կապույտ կազմով գիրքը: Իսկույն ձեռքս առա այն, շոշափեցի, սկսեցի**

թերթել, պատերազմական սարսափելի օրերն ապրեցի այդ գրքով: Հիմա շատ ուրախ եմ, որ նորից մեր բնակավայրում եմ և հաճախում եմ իմ հարազատ դպրոցը»:

Մի նոր կարոտ ուսուցչուհուս տանում է դեպի այդ դասարանը, որտեղ անցած ուսումնական տարում այդ աշակերտներին դասավանդել էի: «**Նա շատ սիրվեց աշակերտներիս կողմից իր յուրահատուկ դասավանդման ձևերով, և երբ սկսվեց նոր ուսումնական տարին, փոխվեց մեր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհին: Բայց նա չմոռացավ մեզ, երբեմն մտնում է մեր դասարանը, մի օր էլ ասաց, որ անակնկալ ունի ինձ համար: Շատ անսպասելի, բայց ցանկալի էր, որ տիկին Պողոսյանն ինձ նվիրեց Լևոն Ադյանի՝ այն կապույտ կազմով վեպը, որ այս օրերին դարձավ իմ սեղանի գիրքը: Այդ պահին շատ հուզվեցի, շփոթվեցի, սակայն մեծ հպարտություն ապրեցի՝ ստանալով նվեր մի մարդուց, ով ճանաչված արձակագիր է, մեծատառով հայ մարդ»:**

Նրա գրած տողերում մեր հայրենակից գրողի հարազատ ծննդավայրի ու այնտեղից սերված մի ազգի հրաշալի պատմություն կար, որ հպարտության զգացումով էր լցրել մեր գեղեցկատես դպրոցականի հոգին. «**Ես նաև շատ հպարտ եմ, որ իմ պապիկը՝ Լենոր Հակոբջանյանը, ծնունդով Չլդրան գյուղից է՝ Ադյանի հայրենակիցը: Նա Սուքիաս (Սերգեյ) Հակոբջանյանի որդին է, նրանք սերում են Չլդրանի Սևունք կամ Միրումանց ազգից: Իսկ պապիկիս մայրը հարևան Առաջաձոր գյուղից է, արդեն իննսունն անց, բայց առույգ մեր մեծերը հիմա էլ կան, ապրում են Մարտակերտում՝ իրենց հիշողություններում պահելով հայրենի գյուղը, նախնիներին, սրբավայր դարձած պապենական գերեզմանները»:**

Վերջին տողերը մի նոր հիացմունքով եմ ընթերցում, որտեղ շնորհակալական խոսքերին զուգահեռ, արցախցուն հատուկ հյուրասիրությամբ՝ գրողի հետ մի նոր հանդիպման մասին է ակնկալվում. «**Շնորհակալ եմ իմ ուսուցչուհուց նման անակնկալի ու այսպիսի հրաշալի հնարավորություն ընձեռելու համար: Հուսով եմ, որ մի օր մեր հյուրընկալ հարկի տակ կհանդիպենք արձակագրի հետ»:**

Չգիտեմ ինչու, ես ինքս էլ հուսով եմ, որ մի օր Ադյան գրողի նոր այցելություն կլինի Արցախ, մի նոր հանդիպում՝ այս անգամ նաև իր գիրքն ընթերցող մեր դպրոցականների հետ:

http://usarmenianews.com/am-n-5623.html

21.09.2016

ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Անկախությունն ինձ համար ազգիս խաղաղությունն է, նրա բարեկեցիկ կյանքը…

Արդեն 25 տարի է, ինչ հայության համար սեպտեմբերի 21-ը համաժողովրդական տոն է դարձել, որին հասնելու համար տառապանքների ճանապարհ անցած մեր ժողովուրդը երկար էր սպասել, չնայած լավագույն կյանքի մասին երազանքներն այսօր շատ են, բայց սպասելիքները՝ քիչ, այն էլ մի երիտասարդ պետության մեջ, որտեղ երբեմն մոռացության է տրվում մեծ բանաստեղծի՝ հայ ժողովրդի փրկությունն իր հավաքական ուժի մեջ տեսնելու պատգամը: Այս տարիների մեծագույն նվաճումն արյան գնով Արցախյան պատերազմում տարած հաղթանակն էր, նորօրյա ապրիլյան հերոսացման ուղին, իսկ ամենամեծ կորուստը՝ հայերի արտագաղթն է, որը, ցավոք, այսօր էլ շարունակվում է ինչ-ինչ պատճառներով: Հիշենք, որ հայրենիքից դուրս հայի համար պետություն և ինքնություն չկա, հայության փրկությունն ու ապագան Հայաստանի մեջ է, ու պիտի հուսանք, որ այն մի օր կամբողջանա և կիմաստավորվի մի նոր հայրենադարձությամբ:

Անկախություն… Սա այն է, ինչի մասին մտածել են մեր նախնիները, այն հայ ազգի դարավոր երազանքն է, մեր ժողովրդի բարեկեցիկ կյանքը, ազգիս խաղաղությունը, անկախության արժեքը գիտակցելու կարողությունը: Այն չխաթարված մանկություն է, խնդուն ժպիտներով անհոգ մի կյանք…Անկախությունը ծաղկող հայրենիքն է, բարգավաճող մեր երկիրը, մեր սահմանների անվտանգությունն ու այն պաշտպանող զինվորների անփորձանք ծառայությունը: Անկախությունը հայոց երկրի անխոցելիությունն է, հարատևող ազգի արժանապատիվ

կյանքը: Այն նոր սերնդի՝ սեփական աշխատանքով հայրենի պետականությունը ամրապնդելու ջանքերն են, նրա հիշողությունը, որ չպետք է մոռանա ավագ սերդի զրկանքներն ու կորուստներն անկախության ձեռքբերման ճանապարհին:

Տոնի առիթով ցանկանում եմ անկախությունը լցվի մի նոր ժողովրդավարական բովանդակությամբ, արժանվույն գնահատվի դժվարությամբ ձեռքբերվածը, մեր փոքրիկ լեռնաշխարհում էլ հայն ապրի անկախության տեսլականին փոխարինված իրական անկախությամբ: Թող նորոգվի հավերժության ընթացքը, հարատևի հայ տեսակի առաքելությունն ու շարունակականությունը, հայոց աշխարհում խաղաղությունը թևածի, անկախությունը դառնա յուրաքանչյուրի համար աշխատասիրության, խիզախության, ինքնության պահպանման ու ամրապնդման հավիտենական նվիրաբերում:

http://hayernaysor.am/

21.09.2016

ԱՊՐԵ՞Լ ԵՔ ՈՒԶՈՒՄ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԵԼԻ՛Ք ԴԱՐՁՐԵՔ

«Ինչո՞ւ է աշխարհն անարդար»,-հանկարծ ինձ հասանելի է դառնում հարցը, որ հնչեցնում է նա՝ այն միակ տղան 12-րդ դասարանում: Նա ազնիվ է, պարզ, հոգում ունի անթեղած այն մաքուր աշխարհի մասին իր երազանքները, որ երբեմն խաթարվում են ու դառնում հարցականների մի երկար շղթա: Փորձում եմ չլսելու տալ, ու նա հանկարծ դիմում է ինձ. նորից նույն հարցը: Բայց ինչո՞ւ եմ հիշում նրան՝ Ռ. Պատկանյանի գրական հերոսին, որ կյանքում իր տեղը չգտավ, ու հանկարծ նրա խոսքը բարձրաձայնում եմ. **«Մեզ ո՞վ է ասում գառ լինենք, որ գայլերը մեզ հոշոտեն»:**

Զարմանալի՞ էր, թե՞ մանկավարժներս իրավունք չունեինք հաստատելու այն վաղ, շատ վաղ դարերից եկած ու մեզ հասած անարդարության մասին... Մի բան, որ մեր կողքին է, և ամենուր նա ապրում է, երբեմն թևեր առած՝ ճախրում է նա, երբեմն՝ հրճվում, որ սավառնել գիտի, ու այսպես պատահում է նույնիսկ, որ երբեմն հայտնվում ենք նրա հովանու տակ: Հարմարվում ենք երբեմն, գուցե նաև՝ դժգոհում, համառում ենք նաև, ըմբոստանում, դառնում ենք ամուր, երբեմն՝ անկոտրում, բայց պահ է լինում՝ հուսահատությանն ենք հագուրդ տալիս: Մեր թևերն ենք հուսահատ թափահարում, բայց նորից շնչահատ, հոգեվարքի մեջ՝ ոգի ենք առնում, որ հաղթենք չարին, բռունցք ենք դառնում, որ գառ չլինենք գայլերի կողքին, ու այսպես համառ ու այսպես կոփված՝ քայլում ենք առաջ, միայն թե քանդենք կապանքներն անտես, որ պարուրում են մեր հոգուն անտես:

Բայց ինչո՞ւ եմ ես սովորեցնում նրանց, որ պայքարել սովորեն, հաղթել իմանան, որ գառ չլինեն այս կյանքում հանկարծ: Ըմբոստության

կո՞չ էր դա, թե՞ հարմարվողականության դեմ պայքար, որ այդ դասաժամին բառերն ինքնաբերաբար հոսում էին ինձանից: Ուզում էի անարդարությանը դիմադա՛ռ լինեն, չեմ ուզում տեսնել թևաթափ սերունդ՝ գայլերի կողքին անմեղ գառնուկներ...

Համա՞ռ է կամքդ՝ կհաղթես չարին, ապրե՞լ ես ուզում՝ արդարությունը գիտելի՛ք դարձրու, հովանի՛ դարձիր, հասի՛ր դու նրան, որ կարողանաս այդ արդար կյանքին միշտ սատար կանգնես...Ապա արդարության արժեքին ավելացնում եմ ևս մեկ գումարելի՝ ուժը, որը գիտելիքի իշխանության ծնունդ է: Հորդորում եմ սաներիս՝ գիտելիքն իշխանություն է և ուժ, իսկ արևի և բնական լույսի տակ ապրելու իրավունք վաստակում են ուժեղները: Եթե կարողացար պարտադրել արդարությունդ, ուրեմն ուժեղ ես:

http://usarmenianews.com/am-n-5653.html

24.09.2016

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՈՒՂԵՐՁ ԼԻՆԻ ԱՇԽԱՐՀԻՆ

Ռերի Օհանյան… Համեստ ու ազնիվ բնավորությամբ մի սիրուն աղջնակ: Նա նոր է տեղափոխվել մեր դպրոցի 11-րդ դասարան: Երբեմն ամոթխածությունը քողարկվում է մեղմ ժպիտով, որ շատ դուրեկան է ու հմայիչ, նույնիսկ ես եմ երբեմն հայացքս փախցնում՝ նրա այդ ժպիտով ջերմացած: Եվ այս քնքուշ էակի շնչով մի ամբողջ հայոց աշխարհ է շնչավորվում ու դառնում է այն երկիրը, որն առաջինն էր իր սիրտը բացել Քրիստոսի առաջ՝ դրանով իսկ բազմապատկելով մեր տառապանքներն ու մեր թշնամիներին: Մեծարվում է մի ազգ՝ բոլոր ազգերի մեջ, որ դիմացավ և ճակատագրի ոչ մի հարված չկարողացավ սպանել նրան:

Դասարանում մտքերով ես նրա հետ եմ, հայացքս՝ նրա ձեռքի շարժումներին, ապա մոտենում եմ առաջին նստարանին նստած իմ աշակերտուհուն: Զարմանալի է. նա աջով չէր գրում, նորից նայում եմ նրա ձեռագրին, իսկ նա հաստատում է, որ փոքր հասակից է հարմարվել ձախլիկության: Տողերի ձեռագիր շարվածքում մի անկրկնելի հայկական լեռնաշխարհ կար, հարազատ բնօրրան՝ իր գրկում ապրող և աշխարհով մեկ փռված հայերի համար: Եվ հայոց այդ երկիրն ամեն օր իր բարձրաբերձ լեռներով, քչքչան առվակներով, անծայրածիր դաշտերով ու ալպյան մարգագետիններով բարի ողջույն է հղում բոլոր նրանց, ովքեր եղել ու շարունակում են մնալ այս եղեմական դրախտավայրի մի մասնիկը:

Բայց ո՞վ ենք մենք…Նայում եմ նրա գրած տողերին. «**Ասում են՝ երկնքին մոտիկ այս լեռնակողմին մեզ է բաժին ընկել, քանի որ Աստծո կողմից հողերը բաժանելու ժամանակ հայերն ուշացել են: Այդ պատճառով մեզ է հասել այս քարքարոտ լեռնաշխարհը: Բայց մի՞թե Աստված գիտեր, որ այդ անձեռակերտ լեռները թշնամիներից պաշտպանվելու ամենահարմար միջոցն էին, կամ որ Նոյան տապանը այստեղ էր**

հանգրվանելու, ու կյանքը վերստին սկիզբ էր առնելու հայկական լեռնաշխարհից: Բայց Հայաստանը Հայաստան չէր լինի, եթե չլիներ հայը: Նրա շնորհիվ է, որ մենք ապրում ենք այս դրախտավայրում և վայելում նրա պտուղները: Նրա թափած արյան գնով ենք մենք այստեղ տուն կառուցում և օջախ ստեղծում: Նրա ջանքերով է, որ մեր երկիրը համարվում է աշխարհի գողտրիկ անկյուններից մեկը՝ իր անառիկ բերդերով, վեհաշուք վանքերով, անկրկնելի խաչքարերով, ալպիական բուսականությամբ և, ընդհանրապես, ամե՛ն-ամեն ինչով»:

Նրա տողերում ամբողջանում ու վեհանում էր մի ազգ, որ առաջինը քրիստոնեությունն ընտրեց՝ դառնալով քրիստոնեական օազիս հեթանոսական անապատում: Եվ ես հպարտ եմ, որ մեր ազգի մի մասնիկն է նա, նրա շարունակությունը, որ բարձրաձայնում է մեր համառ կամքի ու հարատևության գաղտնիքը՝ ի լուր բոլորիս:

Մերին յուրահատուկ է նրանով, որ աշխարհին քրիստոնեությամբ է ուզում ճանաչելի լինել, առաջինը քրիստոնեությունն ընդունած ազգի դիմագծով, որ մասնակցել է աշխարհի քաղաքակրթության կերտմանը: Հիրավի, քրիստոնեությունը պետք է դառնա աշխարհին ներկայանալու հիմնական ուղերձը...

http://usarmenianews.com/am-n-5710.html

26.09.2016

ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ՄԱՐԴՆ ԱՆԹԵՎ ԹՌՉՈՒՆ Է

«Մտքերս շարադրում եմ, բայց, չգիտեմ, կհավանե՞ք այն...»,-ինձ դիմելով՝ կասկածամտություն հայտնեց նա: Հաջորդ օրը 11-րդ դասարանում սովորող իմ աշակերտուհի Տաթևիկ Դավթյանը կարդաց իր գրածը: Հիացմունքի արժանի տողեր կային, բայց կարևորը՝ նրա ոգին է, հայրենիքի հանդեպ ունեցած սերը, որ նրան ուր էլ տանում, նորից բերում է իր հարազատ քաղաքը: Մի բնակավայր, որ ապրիլյան պատերազմ տեսավ, հերոսացած տղաներ, տարհանված ժողովուրդ, հրետակոծված տներ, դպրոցի համրացած զանգ, դատարկված և խուլ տնքացող դասարաններ...

Կենսախինդ է նա, գեղեցկատես, ծիծաղկոտ ու ժպտերես: Շատերի նման այս դեռահաս հայուհուն պատերազմը հեռացրեց հայրենիքից, բայց նորից եկավ, եկավ՝ աշխարհով մեկ ազդարարելու, որ անհայրենիք մարդը անթև թռչուն է, ոչինչ հայրենիք չի դառնա, այն օտարը չի փոխարինի երբեք հայրենի եզերքին, ինչքան էլ այն քաղցր ու գեղեցիկ լինի: Ու տողերը շարված էին անկեղծ սրտի մորմոքով. «**Տեսե՞լ եք իմ հայրենիքը... Մի բարձրաբերձ Մռավ, նրանից ձգվող լեռներ, ձյունափառ կատարներ, ժայռեր: Ու հետո՝ ձորակներ, վիհեր: Ամեն ձորում՝ սառնորակ մի աղբյուր, ամեն ժայռի վրա՝ հինավուրց մի վանք՝ դարերի փոշին քարերի վրա: Ու հետո՝ մի գիժ Թարթառ, որ դարերով ծեծում է ժայռերի կուրծքը: Սարալանջերին փռված մի քաղաք՝ երկնասլաց բարդիներով, թթենիներով, խաղաղ ծխացող երդիկներով: Իմ հայրենիքն է այս փոքրիկ քաղաքը, այս ժայռերը, այս սարերը: Իմ հայրենիքն է հայոց երկիրը, այս մի կտոր Ղարաբաղը՝ իմ Մարտակերտը**»:

Եվ նրա տողերում հայոց հինավուրց երկրի պատմությունն է, արարող մի ժողովուրդ, որ այսօր էլ դիմակայում է հարևան երկրի խարդավանքներին: «**Աստված մեզ բաժին հանեց քարը, արարեց մեզ քարեղեն երկրում: Ու մենք էլ նմանվեցինք մեր քարերին, նրանք էլ հոգի ունեն,**

պատմություն, մեր քարերն էլ խոսել գիտեն ու հրաշքներ գործել: Իսկ ավելի ճիշտ, մեր ժողովուրդն է հրաշագործ, որ մեր երկիրը քարե դրախտի վերածեց: Մենք քարերից հաց ենք քամում, արվեստ արարում, հոգի ու սիրտ ենք դնում քարի մեջ ու մարտիրոսվում մեր քարե երկրի համար: Աստված մեզ բաժին հանած թշնամու սրտի փոխարեն էլ քար դրեց: Ու դարերով մենք մեր գոյությունը պսակեցինք քարսիրտ թշնամու դեմ մաքառելով: Բայց մեր քարե երկրում մենք զարմանալի փխրուն սիրտ ունենք, և թշնամին այն խոցեց հազար ու մեկ անգամ, բայց մնացինք մենք անսասան»:

Օտարության շունչը հոգում ապրած հայուհու խոսք էր սա, որ հայրենիքը հեռուներում իր համար դարձել էր վշտոտ հուշերի կծիկ ու վերադարձել էր՝ շենացնելու այն հայրենիքը, որ դարձել էր իր համար ամենաթանկ կարոտը: Եվ ես ուրախ եմ, որ հայրենիքի կարոտով ապրող Արցախի դուստրը՝ իմ աշակերտուհին, նորից նստած է իմ առջև՝ դպրոցական նստարանին և իր հայրենաբաղձության խոսքն է հղում աշխարհին…Խոսք, որ հայրենիքում ապրելու և արարելու յուրատիպ ուղերձ է:

http://usarmenianews.com/am-n-5735.html

27.09.2016

«ՀԵՌԱՑՈՂ ԵԶԵՐՔԻ» ԱԶԴԵՑԻԿ ՈՒԺԸ

Երբ մտա դասարան, աչքովս ընկավ, որ նա մտասույզ, կարծես վերացած ամեն ինչից՝ խորասուզված է ընթերցանության մեջ: Առաջարկեցի գիրքը մի կողմ դնել, իսկ նա վարանոտ նայեց ինձ: Ինձ թվաց՝ նա ուզում էր ասել, որ ինչպես կարող է իր ուսուցչուհին ընդհատել գիրք կարդացող աշակերտուհուն: Մտասևեռ նայեցի նրան, նա, առանց գլուխը բարձրացնելու, մի քանի խոսք ասաց, որով ուսուցչուհուս հասկացնում էր, որ իրեն «չխանգարեմ», նա գիրք է ընթերցում:

Մեր օրերում այնքա՜ն դժվար է դպրոցականներին տանել դեպի ընթերցանություն, նույնիսկ ուրախ էի, որ գտնվել է գիրք, որից իմ աշակերտուհին չի կարողանում կտրվել: Այդ պահին իմ ծրագրային դասը նրա համար հետին պլան մղվեց, և ես չէի ուզում նրան «խանգարել»:

Նրա ձեռքին Լևոն Ադյանի «Իրիկնային աղջամուղջ» ժողովածուն էր, բայց հիշում եմ նաև նրա անհանգիստ ապրումները, երբ ամիսներ առաջ ձեռքից ձեռք անցնող «Հեռացող եզերք» վեպն ընթերցելուց հետո իմ աշակերտուհի Լիլիթ Հովսեփյանը ինձ մեկնեց թղթին հանձնված տողեր. **«««Հեռացող եզերք»,-մտմտում էի ես, ու ձեռքերս մեղմորեն շոշափում էին գիրքը: Հուզմունքը պատել էր ինձ, սիրտս թրթռում էր, շուրթերս ինքնաբերաբար ինչ-որ խոսքեր էին շշնջում: Սկսեցի կարդալ սրտի անհանգիստ տրոփյունով՝ սպասելով վեպի ավարտին: Ես չգիտեմ ինչպես, բայց նկատեցի, որ արցունքներս երկչոտ դողում են աչքերիս մեջ ու փայլում ապակու անկենդան փայլով, ներսս մի տեսակ այրվում էր, աչքիս երևում էին անբովանդակ տեսիլներ: Խորը շունչ քաշեցի և նույնիսկ մի պահ կարծես դադարեցի շնչել, ուզում էի հասկանալ, թե ինչու այդպես...Տաք արցունքները գլորվում էին այտերիս ու դանդաղ սահում ցած: Անհամբեր սպասում էի վերջաբանին, չնայած մի պահ, հակառակ իմ ցանկությանը, ընդհատեցի ընթերցելս և սպասեցի մեկ այլ վերջաբանի, որին սիրտս էր ուզում, որ այդպես լիներ»:**

12-րդ դասարանում եմ...Նայում եմ այս շիկահեր գեղեցկուհուն, որ դասամիջոցին անգամ գիրքը ձեռքին է: Աշակերտուհիներից մեկը նրան նկարում է, իսկ ես նորից հիշում եմ անցած օրերի նրա խոսքերը «Հեռացող եզերք» վեպի հերոսների մասին. «**Կներես սի՛րտ իմ, չէի ուզում քեզ նեղացնել, չէի կարծում, որ այդքան ուժգին ու խորապես կարձագանքես Ռենայի և Լեոյի սիրուն: Ես ուզում եմ դառնալ հայտնի դերասանուհի և իմ անունը գրանցվի աշխարհի ամենահարուստ մարդկանց թոփ տասնյակում: Ես խոստանում եմ այդ վեպի հիման վրա ֆիլմ նկարահանել, ինքս լինել Ռենայի դերում և ցուցադրել այն աշխարհի տարբեր երկրներում, իսկ ամենակարևորը՝ ցուցադրել անվճար, որպեսզի բոլորն էլ հնարավորություն ունենան գալ ու հիանալ այս չքնաղ ստեղծագործությամբ: Ուզում եմ յուրաքանչյուր ոք տեսնի ու զգա այն, ինչ ես զգացի այս օրերին»:**

Երբ նրան ասացի, որ ֆիլմ է նկարահանվում և Ռենայի դերակատարուհին արդեն գիտեն ով է, նա մի պահ վարանեց, բայց հետո ասաց, որ դա չի խանգարում իր ցանկությանը...Հուսանք, որ մի օր նրա երազանքը կկատարվի, կդառնա հայտնի դերասանուհի և ամեն մի դերում նկարահանվելիս կունենա այն մաքուր, ազնիվ ու բնական ապրումները, որ ունեցել էր այդ գիրքն ընթերցելիս:

http://usarmenianews.com/am-n-5762.html

28.09.2016

ՄԻ՛ ՆԵՂԱՑՐԵՔ ԻՐԱՐ

Նա չցանկացավ բարձրաձայն կարդալ, տետրը հանձնեց ինձ: Հայացքս սահում է տողերով, որ անհանգիստ սրտի թրթիռներ են, դեռահասի անհանգիստ մտորումներ:

12-րդ դասարանում հայոց լեզվի տնային առաջադրանքը՝ «**Մի՛ նեղացրեք իրար**» վերնագրով շարադրությունը, նոր ապրումներ պիտի ծնեին իմ աշակերտուհու հոգում: Նա խնդրեց, որ բարձրաձայն չկարդամ, նույնիսկ մյուս աշակերտների հորդորներին հակառակ՝ չցանկացավ բարձրաձայնել իր մտքերը: Բայց նա գիտեր, շատ լավ գիտեր, որ հետո այս տողերը հասանելի են լինելու շատերին. «**Պետք չէ նեղացնել ոչ մեկին, ամեն նեղացնելով՝ ես «մեռնում եմ», և ինչպես մոմը՝ կամաց-կամաց հալվում: Ամեն անգամ ինձ նեղացնելով՝ ոչնչացնում են իմ ներսի արևը, հոգումս անձրև է տեղում, երեսիս՝ արտաքուստ ժպիտ: Ոչ ոք չի կարող իմանալ, թե ինչ կա իմ սրտում և հոգու խորքում, թե ինչ ապրումներ եմ ունենում այդ վիրավորանքից, դա միայն ես եմ զգում, երբ փշրում են մարդուն**»:

Սյուզաննա Կարապետյան, շատ համեստ, ինքնամփոփ մի աղջիկ... Ալեկոծված էր հոգին, և այդ հուզմունքը պիտի մի օր ափերից դուրս գար, գուցե նաև հիշեցներ իրեն նեղացնողներին, որ մի օր կարող է կորցնեն նրան, ում նեղացրել են, ով դիմացել է վիրավորանքին և փակվել իր աշխարհում: Վիրավորված հոգին գիտեր, որ երբ գիշերը քնում են մարդու ձեռքերը, ոտքերը, աչքերը, նույնիսկ՝ ուղեղը, շարունակում է աշխատել միայն սիրտը. «**Մի՛ նեղացրեք այդ փոքրիկին, նեղացնելուց առաջ մտածե՛ք, թե ինչ հետևանքներ կունենա ասած խոսքը: Երբեք չվիրավորեք ու չխաբեք նրան, ով, նայելով ձեր աչքերի մեջ, տեսնում է իր կյանքը: Մի՛ նեղացրեք, հանկարծ այդ փոքրիկը կթռչի անվերադարձ, չեք հասցնի նույնիսկ ներողություն խնդրել**»:

Մտքերի մեջ եմ... Իմ աշակերտուհու անհանգիստ ապրումները փոխանցվում են ինձ, և ես փորձում եմ փակել այն բոլոր ճանապարհները, որտեղ վիրավորանքն է հորձանք տալիս: Ես հաշտության խոսք եմ հղում ամենքին և միանում նրա զգայացունց խնդրանքին. «**Մի՛ նեղացրեք մարդուն, թե չէ նա էլ մի օր սիրտը կվերցնի ու կգնա անվերադարձ...**»:

http://usarmenianews.com/am-n-5777.html

29.09.2016

ԱՇԱԿԵՐՏՈՒՀՈՒՍ ԵՐԿՓԵՂԿՎԱԾ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

12-րդ դասարանում հայ գրականության դաս էր: Աշակերտուհիներից մեկը բարձրաձայնում է. «**Ինչո՞ւ չեմ հավատում, որ նրանց միջև իսկական սեր կար, չեմ էլ կարողանում արդարացնել նրանցից ոչ մեկին**»:

Խոսքը սփյուռքահայ գրող Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի գլխավոր հերոսների առեղծվածային սիրո մասին էր: Զարմացած նայում եմ նրան, իսկ նա շարունակում է. «**Այս օրերին Լևոն Ադյանի «Թուխ ճայը» պատմվածքն եմ ընթերցել, ես չկարողացա մեղադրել նրա հերոսուհուն՝ Լուսինեին, ով, լինելով երկու երեխաների մայր, սիրահարվել էր մեկ ուրիշ տղամարդու, այն դեպքում, երբ նա իրեն սիրող ամուսին ուներ: Մեր օրերում էլ շատ կան այդպիսի դեպքեր, որ չենք արդարացնում: Ես կնոջ դավաճանությունը, ընդհանրապես, աններելի եմ համարում, բայց, չգիտեմ ինչու, այս պատմվածքում չկարողացա մեղադրել հերոսուհուն**»:

Հույս ունեի, որ հաջորդ օրն իմ աշակերտուհին՝ Դիանա Սաիյանը, դասին կներկայանար հոգին կեղեքող այդ երկընտրանքից ազատված, բայց իմ հարցումին, թե ազատվե՞լ է այդ տարակարծությունից, նա մեղմ ժպտաց և գլուխն անհավանական օրորեց: «**Կինը ամուսին ունի, բայց սիրում է ուրիշի: Նրանք հանդիպում են ծովափին, որտեղ ճայերն են թևածում, այդ սևահեր կինն էլ մի թուխ ճայ էր, որ թևածում էր սիրո և ամուսնական պարտականության միջև: Ես ինձ պատկերացնում եմ նման իրավիճակում: Գիտեմ, որ բոլորի կողմից կմեղադրվեի, այդ պահին ցանկալի կլիներ գոնե մեկը հասկանար ու արդարացներ ինձ: Բայց համոզված եմ, որ այդ մեկը չէր լինի մեր միջավայրում ու ավելի մեծ ցավ կապրեի**»:

Եվ իմ հարցին, թե ի՞նչ կար այդ պատմվածքում, որ ուսանելի էր իր հետագա անձնական կյանքի համար, նա մտքերի մեջ ընկավ, բայց

նաև հետո ինձ տվեց թղթին հանձնած իր տողերը. **«Այս պատմվածքի հերոսներն ինձ սովորեցրին, որ բոլորիս կողմից դատապարտվող և «դավաճանություն» համարվող բացասական երևույթի կողքին կարող է լինել նաև ազնիվ ու մաքուր սեր, որն անտեսվում է շատերի կողմից, բայց այն զոհաբերվում է հանուն ընտանիքի: Իսկ որքա՜ն գեղեցիկ էր այդ սերը՝ անկրկնելի, ջերմ ու հաճելի, զգացմունքային, բայց նաև սխալ ու ժամանակավոր...Ափսոսում եմ, որ կյանքում սխալ սեր է լինում...»:**

Իսկ ես իմ աշակերտուհու երկփեղկված մտորումներին ուզում եմ ավելացնել մի նոր ափսոսանք: Մի՞թե այդ դասաժամին սխալ եմ գործել, որ իմ դասանյութին զուգահեռ, ընթացք տալով մեկ ուրիշ գրական ստեղծագործության կերպարների՝ թույլ եմ տվել, որ այս դեռահասները մի նոր կյանքի դաս սովորեն: Եվ որքա՜ն հրաշալի կլիներ, որ դպրոցական ծանրաբեռնված ծրագրերով երբեմն կարողանայինք մեր աշակերտներին կյանքի նախապատրաստեինք, մի բան, որ շատ ուսանելի է ու նաև՝ հետաքրքիր:

http://usarmenianews.com/am-n-5791.html

30.09.2016

ԱՅՆ ՕՐԵՐԻՆ ԻՆՉՔԱ՞Ն ՇԱՏ ԶԳԱՑԻՆՔ ԱՊՐԵԼՈՒ ԳԻՆԸ

Ինչո՞ւ չեմ մոռանում ապրիլյան այն մի կաթիլ վաղորդյան ցողը: Ես այն միշտ հիշում եմ, երբ նկուղից դուրս եկա ու ինձ ժպտացող մի կաթիլ ցող սահեցրի ձեռքիս ափի մեջ: Շնչավորվել, մի նոր կյանք էր տվել ինձ, ինչո՞ւ մինչ այդ չէի նկատել այդպիսի շատ ու շատ ցողեր, որ գալիս ու գնում էին անդարձ: Տարուբերում էի ձեռքիս ափի մեջ շատ կամա՜ց ու խաղաղ, լուսե արցունքի նմանվող այդ ցողի արտացոլանքում ինձ էի փնտրում: Դալկացած մի դեմք կար, հայացքով ցողն էր գուրգուրում, որ մի նոր կյանք էր դարձել ու մի նոր շունչ: Աչքերից հոսող արցունքներ կային, որ միախառնվում էին այդ ցողի կաթիլին, բայց ինչո՞ւ այն մյուս ձեռքս ճգվում էր դեպի այդ մի կաթիլ ցողը… Մատներս շոշափում էին նրան շատ մեղմ ու հանգիստ, գիտեի, որ այն մեզ վերադարձված մի կտոր կյանքն էր, ապրելու անթաքույց ցանկությունը: Ու նայում էի վերին բարձրյալին և աղոթում՝ մեզ նորից կյանքի վերադարձնելու համար…

Ապրելու տենդով հուսավառված՝ հայացքս գրկել էր նրան: Ի՜նչ լավ էր, որ գիտեի՝ այդ օրն էլ ապրեցինք, և հասկանում էի կյանքի գինը, որ կարողանում ենք նույնիսկ ափի մեջ ունենալ այդ մի կաթիլ ցողը: Բայց ինչքա՜ն լավ էր, որ վերևից ծիկրակող արևի շողը խաղում էր ափիս հետ, ժպիտներս էլ հյուսվում էին ցողին, որ արցունքոտ էին, բայց շատ երջանիկ: Արթնացած մի նոր կարոտ կար, նորից ապրելու անսահման ցանկություն: Ի՜նչ լավ էր, որ նորից ապրում էինք, նորից մենք կայինք…Այն օրերին ինչքա՜ն շատ զգացինք ապրելու գինը:

Ու այսպես ամեն օր հայացքս փնտրում է արցունքոտ ու արևոտ այն մի կաթիլ ցողը, որ կյանք էր դարձել, ապրելու հավատ ու մի նոր կարոտ:

http://usarmenianews.com/am-n-5802.html

01.10.2016

ԱՆՑՅԱԼՈՒՄ ՄՆԱՑԱԾ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

11-րդ դասարանում է սովորում նա՝ Լուսինե Հակոբյանը: Դասամիջոցին փնտրում էր ինձ... Եվ ահա 12-րդ դասարան է մտնում և ինձ հանձնում մի քանի թղթեր: Նա շտապում էր, բայց նաև փորձում է բացատրել. «Այստեղ հիշողություն կա, գրողի կյանքի պատմություն...»: Ընթերցում եմ տողերը, հիշում այդ օրը դասից ուշացած իմ աշակերտուհուն:

«Օրը մշուշոտ էր, վաղորդյան ցողը դեռ չէր անհետացել, արևն էլ չէր նշմարվում, գուցե դա էր պատճառը, որ փոքր-ինչ ուշացած դպրոց հասա ու մտա դասարան: Սակայն իմ ուշանալը ոչ մեկին զգացնել չտվեց, քանի որ բոլորը ոգևորությամբ լսում էին ուսուցչուհուն, ով ներկայացնում էր մի հեղինակի, ում մասին ես վաղուց գիտեի: Անշշուկ տեղավորվեցի ու սկսեցի լսել: Ուսուցչուհուս ձեռքի գիրքը ինձ միանգամից ծանոթ թվաց. մի՞թե սա այն գիրքը չէ, որ պապիկիս տանն էի տեսել, որ ձեռքից ձեռք էր անցնում, որպեսզի ընթերցեն, իսկ տատիկս հորդորում էր բոլորին, որ անհապաղ մենք էլ կարդանք: Այո՛, հենց այն է, որ կա, ինձ շատ ծանոթ «Հեռացող եզերքը»:

Ներքին հպարտությունս անթաքույց էր, ուզում էի բարձրաձայնել, բոլորին ասել, որ ես գիտեմ այդ հեղինակին, որ նրա մանկությունից շատ բաներ եմ լսել իմ տատիկից: Եվ իմ աչքի առջև այդ պահին կարծես երևում էր այն փոքրիկ Լևոնը, որ պարսատիկը ձեռքին՝ դեգերում էր հայրենի հանդերում ու անտառներում, անհոգ վազում ընկերների հետևից:

Նա մեր համերկրացին է՝ հեռավոր Ռուսաստանում ապրող արձակագիր Լևոն Ադյանը: Եվ ես հպարտ եմ, որ նա ծնվել է Արցախ աշխարհի գողտրիկ անկյուններից մեկում՝ մեր Չլդրան գյուղում, առավել ուրախ եմ, որ նա մեր համագյուղացին է և եղել է իմ վաղամեռիկ պապիկի ամենամոտ դասընկերը: Սվետա տատիկս է պատմում Գավո (Գավրիլ) պապիկիս անունից, քանի որ ես իմ պապիկին չեմ տեսել: Ասում է,

որ գյուղում բոլորը խոսում են Լևոնից, որ նա ունեցել է ազնիվ, մաքուր սիրտ, նվիրված է եղել ընկերներին: Այսօր էլ գյուղում կան այն մարդկանցից, ովքեր մտերիմ են եղել նրա հետ, միասին են մեծացել հայրենի գյուղում, միասին է անցել նրանց մանկությունը: Դավոն, Արտաշը, Զարյան (Հերուշան), Էդիկը, Ալբերտը, Համլետը, Լենան, Յուրիկը, Ագնեսան, Լաուրան և շատերը, նրանց հետ կապված՝ շատ հուշեր ունի նա մանկության և պատանեկության տարիներից:

Դրանք անջնջելի տպավորություններ են. «Ինչքա՜ն էին օր ու գիշեր վազվզում հանդերում, շնկշնկան հովի թևին թռչկոտելով թիթեռնիկների պես, ոտաբոբիկ ու կիսաքաղց դեպի հեռավոր անտառներն էին քշում իրենց անասուններին, ու թե ինչպես էր իջնում երեկոն, չէին նկատում: Օ՞րն էր հոգնած, թե՞ իրենք էին հետաքրքիր խաղեր խաղում, որ չէին նկատում, թե ինչպես էր մթնում: Եվ երբ հեռուներում արձագանքում էր Մաշո մայրիկի ձայնը. «Մաման մատտաղ, ո՞ւր ես, տուն արի, մութ է արդեն», Լևոնը միայն այն ժամանակ է հիշում, որ տուն գնալու ժամանակն է...

Մի՞թե այդքան անհոգ էր նրանց մանկությունը, բայց չէ՞ որ հետպատերազմյան տարիներ էին, գյուղում այդ տարիներին գրեթե երիտասարդ չկար, շատերի հայրերը, ավագ եղբայրները, հորեղբայրները ռազմաճակատից տուն չէին դարձել, ոմանց ճակատագրերը՝ անհայտ, շատերի «սև թուղթն» էր եկել, ընտանիքները ծանր վիճակում էին գտնվում, կիսասոված, աղքատության մատնված, բայց որքա՜ն անհոգ ու երջանիկ էին այդ ծայրահեղ վատ պայմաններում: Ի՞նչն էր նրանց միավորում. միասնականությո՞ւնը, համախմբված լինե՞լը, ազնվությունն ու բարությո՞ւնը, թե՞..., որ այն սարսափելի ցավալի կյանքը փորձում էին արտաքուստ անտեսանելիության քողով պատել»:

Ընթերցում եմ Լևոն Աղյանի մանկության օրերի այս հիշողությունը և նորից ու նորից համոզվում, որ նրա կյանքը միշտ էլ անբաժան է իր հայրենի ծննդավայրից: Նա ապրում է հեռավոր օտար ափերում, բայց իր ինքնությամբ մնում է հայեցի՝ միշտ Արցախի հետ, միշտ նրա հոգսերով, նրա ժողովրդի ճակատագրով մտահոգ:

http://usarmenianews.com/am-n-5817.html

03.10.2016

ՄԻՋԱՎԱ՞ՅՐՆ Է ՄԵՂԱՎՈՐ, ԹԵ՞ ՄԵՆՔ...

11-րդ դասարանում Գր. Զոհրապի «Երջանիկ մահը» նովելն ենք ուսումնասիրում: Դասարանի աշակերտներից մեկը ձեռք բարձրացրեց՝ դաս պատմելու համար: Նա շատ հակիրճ, մի շնչով ներկայացրեց նովելի սյուժեն:

Նրան ուղղված իմ հարցը, թե այդ նորավեպում կին և ամուսին հարաբերությունների մեջ ո՞ւմ է արդարացնում, երբ կինը դավաճանում է ամուսնուն: Նա միանգամից ասաց, որ ամուսնուն չեմ կարողանում մեղադրել: Իսկ երբ նորից ցանկացա լրացնել այդ հարցը մի նոր հարցումով, թե արդյո՞ք մեր շրջապատում այդպիսի տղամարդուն չէին մեղադրի, որ կնոջն այնքան է ազատություն տվել, որ նա դավաճանում է իրեն, և ինքը հանդուրժում է: Իմ հարցը կարծես մի պահ մնաց անպատասխան, ապա նկատեցի իմ նեղված աշակերտին, որ միանգամից հնչեցրեց. **«Տիկի՛ն Պողոսյան, խնդրում եմ ինձ հարցեր մի՛ տվեք, մի «4» գնահատեք ինձ, ես գնամ նստեմ»:**

Բայց ես չեմ ուզում իմ աշակերտին՝ Սերգեյ Մինասյանին, անմիջապես գնահատել, ուզում եմ լսել նրա կարծիքը, և, որքան էլ նեղված, շուտով նա պատասխանում է իմ հարցին, նույնիսկ զարմացած, թե ինչպե՞ս կարելի է մեր շրջապատում արդարացնել այդպիսի տղամարդուն:

Նովելի սյուժեից գիտենք, որ հերոսուհին քառասունին մոտ կին էր, բայց ավելի երիտասարդ էր երևում, նա շատ գեղեցիկ էր ու հմայիչ, կենսախինդ մի անձնավորություն: Ամուսինը ծեր էր, տարիքով նրան հայր կարող էր լինել, նա կնոջը ազատություն էր տվել, և նրա շուրջը երիտասարդ սիրահարներ էին պտտվում: Բժիշկը, ով պատմում էր

դեպքը, հաճախակի էր հանդիպում այդ կնոջը, քանի որ վերջինս սրտի հիվանդություն ուներ: Կինն ազատ կյանքով ապրում է, չի կատարում բժշկի խորհուրդները և իր տանը կազմակերպված երեկույթում խելահեղ պարի ժամանակ՝ գեղեցկության, հիացումի վեհ պահին, սրտի կաթվածից նվաղում է և մահանում սիրած երիտասարդի գրկում: Գրողը այդ մահը ներկայացնում է որպես երջանիկ մահ, որպես այդ կնոջ կյանքի վերջին աստեղային պահը:

Իմ դասերին զրուցում եմ աշակերտների հետ, սիրում եմ զրուցել, ինչպիսի՜ ուշադիր հայացքներ և որքա՜ն շատ հասկացվածություն, երբ նույնիսկ թույլ կարողությունների տեր աշակերտի կարծիքն եմ ուզում իմանալ: Իմ հերոսները խոսուն են դառնում, երբեմն՝ քարկոծվում, երբեմն՝ մեծարվում դեռահասների կողմից, մեկընդմեջ մեր գրական կերպարները երբեմն մեր օրերում են հայտնվում, երբեմն իմ աշակերտներն էլ դարերով հետ են գնում, զրուցում գրական հերոսների հետ, ապրում նրանց ցավով, երբեմն՝ հրճվում, երբեմն՝ տխրում, պատահում է՝ հուզվում են, նաև՝ արտասվում... Բայց ինչո՞ւ են մեր գրական կերպարները երբեմն իրենց վերաբերմունքով այդ միջավայրում արդարացվում, իսկ մեր շրջապատում՝ դատապարտվում: Մեր միջավա՞յրն է մեղավոր, թե՞ մենք…

Անշուշտ, գրական ստեղծագործությունների ճիշտ ընտրությամբ և սովորողներին՝ դրանց ընթերցման ուղղորդմամբ մենք անուղղակի բարոյական դաստիարակություն ենք իրականացնում, նպաստում նրանց անձի ճիշտ կառույցի ձևավորմանը: Չմոռանանք, որ մատուցվող կերպարների և սովորողների միջև կա ուժեղ հուզական կապ:

http://usarmenianews.com/am-n-5838.html

04.10.2016

Ո՞Վ Է ՈՒՍՈՒՑԻՉԸ

(Ներհայում եմ աշակերտների պատասխաններից)

Որպես Արցախի դպրոցի ուսուցչուհի՝ սահմանամերձ բնակավայրիս ապրումներով շնորհավորում եմ բոլոր ուսուցիչների և կրթության ոլորտի աշխատողների այս հիանալի մասնագիտական տոնը: Այն լինելության խորհուրդն է, որ ապրելու կամք ունի իր մեջ, հարատևություն, այն ուսուցչի աշխատանքի արժանի գնահատանք է, մեծարման օր:

«Ո՞Վ Է ՈՒՍՈՒՑԻՉԸ», - հարց, որի պատասխան արձագանքը պիտի հնչեր որպես մեր տասներկուերորդցիների ակնածանքի խոսք՝ ուղղված ուսուցիչներին:

«Ուսուցիչը կատարյալն է...Տանել չեմ կարողանում այն ուսուցիչներին, ումից վախենում են աշակերտները» (Աբրահամյան Ռուզաննա): **«Ինչ ստանում է աշակերտը դպրոցում ուսուցչից, չի ստանա կյանքի ոչ մի փուլում: Ուսուցիչը պատրաստի հոգեբան է...»** (Ղուլյան Գեղեցիկ): **«Երեխաների կյանքում ուսուցիչներն ընդամենը սովորեցնողներ չեն, նրանք օրինակ են, առաջնորդող, ձևավորող և երեխայի ապագայի վերաբերյալ հայացքներ կազմավորող»** (Հովսեփյան Լիլիթ): **«Ինչպես զինվորն է իր զենքով պայքարում՝ հայրենի հողը ազատագրելու, այնպես էլ ուսուցիչն է գրչով մարտնչում՝ հայ գիրը սուրբ պահելու համար»** (Բաղրյան Իննա): **«Ուսուցիչն է, որ իր շունչը խառնում է հայոց սուրբ հողին և նմանվում արարողի: Նրանց մեջ հորդում է արարչության լույսը»** (Արզումանյան Լադա): **«Հարգում ու սիրում եմ այն ուսուցիչներին, ովքեր ընկերական են աշակերտների հետ, ովքեր հասկանում են նրանց հոգեբանությունը և ինչոր տեղ ներում նրանց սխալները»** (Ջավադյան Վարդուհի): **«Շատ**

ծանր է ուսուցչի աշխատանքը, ես երբեք չէի ցանկանա լինել ուսուցիչ» (Խաչատրյան Աննա): «**Ես փորձում եմ մտնել ուսուցչի բարդ դրության մեջ, ով ձգտում է աշակերտներին գիտելիքներ հաղորդելու հետ մեկտեղ՝ մտերիմ ու ջերմ կապ ստեղծել, որպեսզի աշակերտների համար հետաքրքիր միջավայր լինի»** (Անդրյան Անգելինա): «**Ինձ համար ուսուցիչը նա է, ով իր մասնագիտությունը դարձնում է իսկական արվեստ, օգնում աշակերտին՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները»** (Դանիելյան Անուշ): «**Ուսուցիչը պետք է աշակերտների հետ ընկերական լինի, որպեսզի նրանց հարգանքը վայելի: Սիրում ու հարգում եմ բոլոր ուսուցիչներին, սակայն երբեք որպես ուսուցիչ չեմ աշխատի»** (Կարապետյան Արմինե): «**Ինձ համար ուսուցիչը նա է, ում կերպարը տարիների ընթացքում սկսում եմ սիրել և նրա բոլոր լավ կողմերը օրինակ են ծառայում բոլորիս համար»** (Սահյան Դիանա):

Յուրաքանչյուր միտք յուրովի հետաքրքիր է, բայց նաև աշակերտների համար ուսուցիչը երևում է որպես կատարելություն, որպես հոգեբան, իսկական մանկավարժ, ուսուցանող, լույսի սերմնացան…Նա սրտեր ջերմացնող է, դժվարություններ հաղթահարող, հողի նվիրյալ, օրինակելի կերպար: Մնում է՝ շնորհակալություն հայտնել մեր աշակերտներին՝ մեծարանքի այս խոսքերի համար, բայց նաև ուսուցիչներին ուղղված պարտավորվածություն է սա, որ նույնիսկ մտորելու և ինքնավերլուծությունների տեղիք է տալիս…Միշտ էլ կարևոր եմ համարում մանկավարժական ռեֆլեքսիան (ինքնավերլուծություն), որի ընթացքում բացահայտվում են արվածն ու չարվածը, նախանշվում անելիքները...

http://usarmenianews.com/am-n-5860.html

04.10.2016

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼԸ ՇԱՏ ԲԱՐԴ Է

Ուսուցչի օրվա հետ կապված՝ որքան զարմանալի, նույնքան հրաշալի էր, երբ լսեցի այս խոսքերն իմ դասղեկական 7-րդ դասարանի աշակերտների կողմից. «**Ճիշտն ասած, ուսուցչի մասին խոսելը շատ բարդ խնդիր է, որովհետև արդեն սպառվել են վեհ բառերի պաշարները, որոնց շնորհիվ կարող ենք մեր շնորհակալությունը հայտնել նրանց՝ իրենց չափազանց կարևոր և ծանր աշխատանքի համար**» (Սկրտչյան Անի):

Նայում եմ ինձ ժպտացող աշակերտուհուն, ապա հայացքս սահում է մեկ ուրիշ աշակերտուհու ուղղությամբ. «**Նա ոչ միայն լույսի ու ջերմության մի անսպառ շտեմարան է, այլ նաև հարազատ ու սրտացավ մեկը, ով քո կողքին է ցանկացած դժվար պահի, երբ դու նրան ամենաքիչն ես սպասում: Նա է քո ամեն մի հաջողությամբ առաջին ուրախացողը, քո ամեն կորուստ ավելի ծանր տանողը, ով, սակայն, կարող է թաքցնել կարեկցանքը՝ քեզ նորից ոգեշնչելու և թևեր տալու համար**» (Հովհաննիսյան Լուսինե):

Մի՞թե կա շատ ավելի բարձր գնահատական, քան աշակերտների վեհ ու հրաշալի խոսքերն են ուսուցչի մասին. «**Ուսուցիչն ամենաիմաստուն հանրագիտարանն է, ով պատասխանում է մեր բոլոր անհասկանալի հարցերին**» (Հակոբյան Մանե):

Նայում եմ ձեռքն օդում թափահարող մեկ ուրիշ աշակերտուհու, որ ավելացնում է ակնածանքի մի նոր խոսք. «**Ես ուրախ և երջանիկ եմ, որ ծնվել ու մեծացել եմ ուսուցչի ընտանիքում, նրանց շնորհիվ է, որ բարձր ու վեհ զգացում ունեմ նրանց հանդեպ, իմ համար նրանք սուրբ էակներ են**» (Մելքումյան Էլմիրա):

Մի ամբողջ դասաժամ ուսուցիչներին ուղղված հրաշալի խոսքեր էին հնչում, մեկը մյուսից առաջ ընկնելով, ամեն մեկը յուրովի իր ակնածանքն էր ուզում արտահայտել, որ օրհներգի նման հնչում էին այս դեռահասների շուրթերից: «**Ուսուցիչների ազնիվ ու անձնվեր աշխատանքի շնորհիվ է գիտության լույսը տարածվում մեր հոգիներում, նրանք մեր ազգի դպրության առաքյալներն են**» (Սամվելյան Անժելիկա):

Տղաներից այն մեկը, որ անպայման ուզում էր իր միտքն արտահայտել, վերջապես հերթը նրան է հասնում. «**Բոլորը չէ, որ կարող են արժանանալ այդ բարձր կոչմանը, չէ՞ որ ուսուցիչն է սովորեցնում ապրել կյանքում ճիշտ, պայքարել, ժպտալ, անգամ դժվար իրավիճակում բարություն անել, հերոս լինել**» (Բաղրյան Նարեկ):

Նորից ու նորից հպարտությամբ է լցվում հոգիդ, որ իզուր չի անցել աշխատանքդ, երբ առջևդ նստած աշակերտներն են մեծարանքի խոսքեր հղում ուսուցիչներին, նախապատրաստում նրանց տոնական օրվան: Եվ համոզվում ես, որ դար էլ անցնի, որպես հարատևող կանչ, հավերժ կհիշվի սուրբ գործը նրանց: «**Ուսուցիչն է, որ մտնում է մեր սրտի ամենափոքր անկյունը և դուրս չի գալիս այնտեղից մի ամբողջ կյանք, թեկուզ մի դար էլ անցնի…**» (Մելքոնյան Սոֆյա):

http://usarmenianews.com/am-n-5856.html

05.10.2016

ՈՒՍՈՒՑԻՉ, ՄԵԾ ԱՆՈՒՆ

Այսօր ուսուցիչների և կրթական ոլորտի աշխատողների մասնագիտական տոնն է:

Նկարում մեր դպրոցի տնօրենն է՝ Լիդիա Պետրոսյանը, այստեղ մեր դպրոցի բոլոր ուսուցիչներին չեմ տեսնում, բայց շնորհավորում եմ ամբողջ համակարգի աշխատողներին՝ այս հրաշալի օրվա կապակցությամբ:

Տարիների ընթացքում այս պատվաբեր մասնագիտությունն ինձ հպարտանալու առիթ է տվել, չէ՞ որ ուսուցիչն է մեր կեցության գաղտնախորհուրդ հավատքը սերնդեսերունդ ներարկողը, այդ մենք ենք կրում մեր ժողովրդի անպարտելիության գաղափարը, մենք ենք մեր հայորդիների անձնուրաց ու հայրենանվեր դաստիարակության ազնիվ մշակները:

Ինքնագնահատա՞նք է սա, թե՞ համոզմունք, որ ուսուցիչն արժանի է այս վեհ կոչմանը, այդ նա է ազգային արժեհամակարգի ձևավորողը, և շատ դժվար է գտնել մի այնպիսի շնորհակալ գործ, քան աշակերտ կրթելու առաքելությունն է, որ նպատակ ունի ձևավորելու հասարակության լիարժեք անդամ: Այդ մենք ենք, որ արժանապատվորեն ուզում ենք տանել մեզ հետ այդ պատվավոր կոչումը, ուրեմն ձգտենք լինել արժանի, սիրված ու հարգված մեր սաների կողմից ու միշտ հասկացված:

Ուսուցիչը դպրոցականի համար ընդօրինակման կերպար է ոչ միայն մասնագիտական, այլև անձնային որակներով: Անաղարտ հայերենի, գեղարվեստական խոսքի ճշմարիտ արժեքների մատուցմամբ, գրական կերպարների նոր վերլուծություններով, ստեղծագործական ու կրեատիվ մտածողությամբ նա խթանում է ուսումնական գործընթացը՝ նպաստելով նրանց անձի ձևավորմանը:

Փոխվել են այսօրվա ուսուցչին ներկայացվող պահանջները: Մանկավարժական փորձից, անաղարտ հայերենի իմացությունից զատ նա պետք է լինի նորարար ու նոր բացահայտումներով հուզի երեխաներին: Այսօրվա ուսուցիչը չի կարող մասնագիտական ու անձնային ազդեցիկություն ունենալ՝ առանց հասարակական կյանքի հոգսերի ու խոհերի, ճշմարիտ մտավորականի հպարտ կեցվածքի, առանց հանրային ու ազգային մտածողության: Միշտ էլ մանկավարժի գործն ակնածանքով և մեծարանքով է գնահատվել, քանի որ նրան է վերապահվել սերնդի կրթության և քաղաքացու ձևավորման դժվարին աշխատանքը: Մարդ, որ մտահոգ է սերնդի ուսմամբ ու դաստիարակությամբ և փորձում է պարզապես մատուցել ոչ թե պատրաստի գիտելիքներ, այլ իր սաներին տանում է դեպի ճշմարտությունը, ուղղորդում նրանց գտնելու այն: Նորից շնորհավորում եմ բոլորի տոնը, ցանկանում ստեղծագործական նորանոր վերելքներ, թող ուսումնական տարվա զանգի յուրաքանչյուր ղողանջ բոլորի համար հնչի՝ գալիքի համար լույսի սերմեր շաղ տալու բարի ակնկալիքով:

http://hayernaysor.am/

05.10.2016

ՆԱ ՈՒԶՈՒՄ ԷՐ ԱՊՐԵԼ...

Այսօր Ուսուցչի օրվան նվիրված համերգը Մարտակերտում կասեցվեց, մեր հասարակության համար այս տոնական օրը բացվեց սարսռազդու բոթով: Եվ ես ժամեր եմ հաշվում, որ հոկտեմբերի 5-ի տոնական այս օրն անցնի: Իսկ այն սահում է կամաց, և ես փորձում եմ արտաքուստ հանգիստ ու սիրով, շնորհակալական զգացումով ընդունել բոլորի ի սրտե ասված շնորհավորանքները: Բայց ծաղիկների բազմազանության մեջ մի նոր հայացքով եմ նայում վարդերին, որոնք սիրում էր նա, ու մտովի առանձնացնում եմ երկու փունջ, որ նա Ուսուցչի օրը պիտի նվիրեր՝ սահմանամերձ բնակավայրիս 9-ամյա հիմնական դպրոցի տնօրեն իր շատ սիրելի մայրիկին՝ Մելսիդա Քարդումյանին, ու մեր դպրոցի դասվար իր հմայիչ տիկնոջը՝ Հերմինե Անդրյանին:

Ծանր հիվանդությունից հետո անժամանակ կյանքից հեռացավ բոլորիս սիրելի Արտաշես Գրիգորյանը՝ ընտանիքի լավագույն հայր, սիրված ամուսին, հրաշալի զավակ, կենսախինդ բնավորությամբ, մաքուր հոգու տեր մի երիտասարդ, ում դասավանդել եմ տարիներ առաջ:

Ես նրան հիշում եմ 5-րդ դասարանից, և արցունքներիս արտացոլանքում երևում է նա՝ մի կախարդական փայտիկ ձեռքին, որ փորձում էր նրանով վերակենդանացնել բոլոր զոհված ազատամարտիկներին: Երբ դասարանում հարցրի աշակերտներին, թե կախարդական փայտիկ ունենալու դեպքում ի՞նչ կցանկանային…Աշակերտներից մեկը շքեղ տուն էր ուզում, մեկ ուրիշը՝ մեքենա, մի երրորդը՝ բարվոք կյանք…Եվ հանկարծ նա ձեռք բարձրացրեց, մտախոհ էր հայացքը, նաև՝ զարմացած-…Ամենօրյա այն մեղմ ժպիտը քաշվեց դեմքից, ապա միանգամից հնչեց նրա խոսքը, որ անակնկալի բերեց ինձ. «Ես կփորձեի այդ փայտիկով վերակենդանացնել մեր բոլոր զոհված ազատամարտիկներին»:

Լռության քողը պատում է դեմքս, այդ լռության մեջ սրբում եմ արցունքներս, տարիների հեռավորությունից հիշողությանս մեջ երևում է իմ բարեհամբույր աշակերտ Արտաշես Գրիգորյանը, որ կախարդական փայտիկը ձեռքին՝ փորձում էր վերակենդանացնել բոլորին, բայց ինքն այս օրերին չկարողացավ փրկվել:

http://usarmenianews.com/am-n-5876.html

08.10.2016

ԿԱՆՉՈՒՄ Է ՆՐԱՆ ԱՐՑԱԽԱԿԱՆ ՄԻ ԵԴԵՄԱԿԱՆ ԲՈՒՅՐ

12-րդ դասարանում իմ աշակերտուհին՝ Գեղեցիկ Ղուլյանը, տնային հանձնարարությունը հանձնեց ինձ, որ ես կարդամ մի փոքրիկ հիշողություն ճանաչված անհատականության մասին: «**Մեր գյուղում՝ պապիս ու տատիս օջախում եմ անցկացրել իմ մի քանի տարիները: Եվ դրանք եղել են իմ կյանքի լավագույն տարիներից մի քանիսը: Մեր գյուղը սքանչելի բնություն ունի՝ բարձրաբերձ լեռներ, խորունկ ձորեր, կանաչ դաշտեր, արծաթագույն մարգագետիններ, մի խոսքով, այնքան է գեղեցիկ, որ կարելի է նույնիսկ դրախտավայր կոչել: Եվ ես ուրախ եմ, որ մեր գյուղի՝ Չլդրանի բնության գրկում է մեծացել նաև մեր հայրենակից գրող Լևոն Ադյանը»:**

Ընդհատում եմ ընթերցելը, ես էլ մտովի հիշողությունների մեջ եմ, երբ տարիներ առաջ եղել եմ այդ գյուղում, հյուրընկալվել գյուղական դպրոցի տնօրեն Արամայիս Առուշանյանի տանը, ում հանդեպ առանձնակի ակնածանք ունի Լևոն Ադյան գրողը: Իմ աշակերտուհու խոսքից, որ իր տատի պատմածն է գրել, նորից անցյալից գալիս եմ իրականություն, և հայացքս սահում է տողերով. «**Տատս լինելով Ադյանի համագյուղացին՝ կիսվեց ինձ հետ նրա մասին ունեցած իր տպավորություններով: Նա պատմում է, որ Լևոնը ծնվել է Ոսկան Ադյանի ընտանիքում: Ծնողները սովորական աշխատավորներ էին և ապրել են գյուղում միմյանց հարևանությամբ: Լևոնի մայրը եղել է շատ բարի և կատակասեր կին»:**

Ապա տատի պատմած տողերն են մեջբերվում, որ թոռնուհին սիրով արձանագրել էր. «**Դպրոցում Լևոնը եղել է աչքի ընկած ու համարձակ, ես ու Լևոնը սովորել ենք մի դպրոցում, եղել ենք մտերիմ: Նա երկկողմանի բարեկամ է ինձ, և ամեն անգամ, երբ Լևոնը գյուղ է գալիս, հանդիպում ենք, զրուցում»,- եզրափակում է Պրաֆիոն տատս, ապա նորից բոպեներ անց ավելացնում. «Դպրոցն ավարտելուց հետո նա գնաց**

Բաքու և ընդունվեց ինստիտուտ: Նա սկսեց ստեղծագործել, և մենք լսում էինք, որ նա անուն հանած մարդ է: Նույնիսկ Բաքվի ջարդերի մասին գիրք է գրել, ասում են՝ արժանացել է մրցանակի»:

Արժանվույն գիրքը երանի թե այդպիսի գնահատանքի արժանանար, և մի նոր ափսոսանք է ծնվում հոգումս այդ անտարբերության համար: Ու ես հիշում եմ, որ ամիսներ առաջ, երբ «Հեռացող եզերքը»՝ այդ «մրցանակի արժանացած գիրքը», ձեռքիս մտա դասարան, իմ աշակերտուհին առաջինն էր, որ վերջին նստարանին նստած՝ բարձրաձայնեց, թե ինքը գիտի այդ գրողին, նա իրենց համագյուղացին է, և տատն էլ ճանաչում է նրան: Ու տատի խոսքերում նորից թև է առնում ակնածանքի խոսքը հեռուներում ապրող գրողի մասին. «**Ես հպարտ եմ, որ նման տաղանդավոր, բարի անձնավորությունն իմ համագյուղացին է ու ինձ բարեկամ»:**

Դասաժամի զանգը հնչում է, ես էլ մտքերով գրողի հետ եմ՝ այն հեռո՜ւ-հեռուներում: Արցախական մի հրաշալի եղեմական բույր կանչում է նրան դեպ իր դրախտավայրը, որտեղ հիշողություն կա, հարազատ դեմքեր, անսահման կարոտ, նոր երազանքներ:

http://usarmenianews.com/am-n-5918.html

09.10.2016

ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ՝ ՄԻ ՓՈՔՐԻԿ ԵԿԵՂԵՑԻ, ՆԵՐՔԵՎՈՒՄ՝ ԾԱՌԱՅՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Կիրակնօրյա մեր նախաճեռնությունը մի այլ տեսք ստացավ, երբ իմ դասղեկական 7-րդ ա դասարանի աշակերտների հետ՝ մի քանի ծնողների մասնակցությամբ, այցելեցինք մեզանից ոչ հեռու տեղակայված, գնդապետ Էրիկ Սկրդումյանի հրամանատարության տակ գտնվող Ն զինվորական զորամասի հրետանային գունդ: Զինվորների զարմացական հայացքներ, ողջույնի պատրաստ ժպիտներ, որ ուղեկցեցին մեզ դեպի մոտակա բարձունքին վեր խոյացած եկեղեցին:

Եվ ահա եկեղեցում ենք, բարձունքի վրա թառած մի մատուռ, որ հսկում է ներքևում ծառայող զինվորների հանգիստը: Խոնարհումով մոմեր եմ վառում, առ Աստված ուղղված աղոթքներիս մրմունջներով բոլորին նոր լուսաբացներ եմ ցանկանում: Խաղաղ օրերի լույս առավոտների բերկրանքով նոր երազանքներ եմ հյուսում: Մի նոր հայացքով եմ նայում վառվող մոմերի կրակե փոքրիկ լեզուներին, որ մարմրում են, նորից առկայծում: Ես ամեն մեկին անուն եմ դնում, այդտեղ հարազատ մարդիկ կան, որ իմ կողքին են լինում, հետո մտքերով հեռուներն եմ սավառնում, որտեղ մտերիմներ կան շատ, այդ անուններով ամեն մեկին մի նոր երջանկություն եմ ավետում:

Իմ մեղմիվ աղերսներին միախառնվում են կողքիս մոմեր վառող աշակերտների ու նրանց ծնողների շշունջները: Եվ հանկարծ նրանցից մեկը՝ մայրական մի սիրտ, անհուն սարսուռով լեցուն, բոլորիս լսելի ձայնով խաղաղություն է խնդրում վերին բարձրյալից, ու կարծես նրա խոսքը աղոթք է դառնում մեր հոգիներում, խաղաղ կյանքի համար մի սրբազան աղոթք: Երկարատև խաղաղության ակնկալիքով՝ Աստծոն ուղղված մեր աղաչանքներում զինվորներին անփորձանք ծառայություն ենք ցանկանում:

Այդ բլրին կառուցված եկեցեցուց դուրս եկանք՝ աղոթքի խոսքերը մեր հոգում: Հայացքս հառում եմ ներքև. զինվորական քայլերգն ու երգի խրոխտ ձայնը կանչում են մեզ: Զինվորների ուրախ երգն է հնչում… Շտապում ենք մտնել զորամաս, և շուտով միախառնվում ենք նրանց: Զորամասի հրամանատարի տեղակալ Հարություն Մանուչարյանի զիլ ձայնն է հնչում: Զինվորները պարան են ձգում: Մրցության դուրս եկած զինվորական տարբեր դասակների մեջ հաղթողներ ու պարտվողներ կային: Մեր աշակերտներն էլ հանկարծ հայտնվում են պարանը ձգող զինվորներին դեմ դիմաց, մրցույթում զինվորներն են և այս դեռահասները՝ իրենց ժպիտներով ու աղմկալից, կենսուրախ ծիծաղով: Ինչպիսի՜ ոգևորություն, հավերժանալու պահեր, հաղթողների պարգևատրություն, շնորհակալական խոսքեր…

Եվ ահա շուրջպարի բռնած զինվորականներին շտապում են միանալ մեր դպրոցականներն ու նրանց ծնողները: Ազգային երգն է հնչում, և նրանց ելևէջներն ամենուր արձագանքում ու միախառնվում են զինվորներով շրջապատված մեր երեխաների աշխույժ ձայներին: Պարերգի ուրախ ելևէջներն



արձագանքում են ամենուր, ու զինվորների ոտքերի դոփյունից գետինն է թնդում: Այն ի՞նչ էր, մի հրաշալի տեսարան. պարում են բոլորը՝ ձեռքերը վեր բարձրացրած զինվորներ, նրանց պարին միախառնված աշակերտներ ու ծնողներ:

Քայլերս ինձ տանում են դեպի հրապարակ, որտեղ զինվորական դասակներն են կանգնած: Ինձ հետևում են դպրոցականները, նաև այդ դասարանի աշակերտների մի քանի մայր ուսուցչուհիներ: Դասակ առ դասակ կանգնած զինվորներին ենք մոտենում, հավերժանում է պահը լուսանկարներում: Անկեղծություն կար, հիացումի խոսքեր, զինվորների հանգիստը հսկող մի եկեղեցի՝ դարերից ծնված: Իսկ որպես կարգախոս՝ այս սուրբ մատուռը հավերժ ապրելու իր հիմնն էր հղում՝ բարձունքին կանգնած:

Զինվորական զորամասից ոչ հեռու գտնվող սառը աղբյուրի մոտ մեր դպրոցականների ուրախ ու անհոգ երգն ու պարը պիտի շարունակվեր բնության գրկում: Հիացմունքս չեմ կարողանում զսպել իմ դաստիարակական դասարանի ծնողական խորհրդի կողմից կազմակերպված այս գեղեցիկ կիրակնօրյա միջոցառման համար: Առանձնակի սիրով հայացքս ուղղում եմ խորհրդի նախագահ Նոնա Հայրապետյանի ուղղությամբ… Ակնածանքի խոսքեր կան այնտեղ, մեծագույն գնահատանք, առանցքում մի հրաշալի ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերություն, որտեղ փոխադարձ հասկացվածություն կա, մանկավարժական գործունեության մի փոքրիկ կենսագրություն:

http://usarmenianews.com/am-n-5930.html
http://hayernaysor.am/

10.10.2016

ԶԻՆՎՈՐ, ՄԻ ԲԱՌ, ՈՐ ՄԻՇՏ ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ՄԵԾԱՏԱՌՈՎ ԳՐԵԼ

Հարցնում եմ զորամասում, թե արդյո՞ք կարելի է նկարվել զինվորների հետ: Հաստատող խոսքեր եմ լսում, ապա մոտենում եմ նրանց, առաջարկում նկարվել: Չեմ ճանաչում այս զինվորներին, բայց ուզում եմ հավերժանա այս պահը: Նրանք մի կողմ են քաշվում ու լայն բացվում է տարածքը, և նկարվում եմ նրանց հետ՝ իրենց կողքին կանգնած, հպարտության ներքին զգացումով:

Նայում եմ նրանց դեմքերին, ուզում եմ կարծես ճանաչել, և ինձ շատ ծանոթ դիմագծեր կան, որ հայկական են, հարազատական: Եվ այսպես հերթով մոտենում եմ նրանց խմբերին… Գուցե Հայկ է նա, կամ գուցե Տիգրան, իմ մտքում այնտեղ Արամներ կան շատ, նույնքան էլ՝ Դավիթ, և ինչքա՜ն մայրեր, որ սպասում են նրանց…

Ես նրանց չգիտեմ, բայց մի բան պարզ է՝ ԶԻՆՎՈՐԸ մեր բոլորինն է: Ու ես այդ իսկ զգացողությամբ նկարվում եմ նրանց հետ, բայց ինչո՞ւ եզակի ասացի՝ հենց այնպես ԶԻՆՎՈՐ՝ առանց -ներ մասնիկ ավելացնելու, այն էլ՝ մեծատառով: Այսինքն՝ այդ խոսքում նա դառնում է ընդհանրական՝ բոլորիս մտքերում և հույզերում: Ու րոպեների ընթացքում նրան տեսնում եմ քայլելիս, դոփում է գետինը խրոխտ ու հպարտ, ու այդ դոփյունից սիրտդ է թնդում, հոգիդ լցվում է անհուն բերկրանքով:

Հանկարծ ԶԻՆՎՈՐՆ ազգային հնչեղ երգ է հնչեցնում, տեսնում ես նրանք երգել էլ գիտեն, ու հին «Քոչարին» փարվում է նրանց, և երգն այդ հարազատ սրտեր է լցնում: ԶԻՆՎՈՐԸ հանկարծ իր ուժն է փորձում, դառնում է հաղթող կամ գուցե պարտվող, բայց իր ընկերն է դիմացը կանգնած, և նա զգոն է, զենքն էլ՝ իր ձեռքին վտանգի պահին:

Զինվորի կողքին փոքրիկ մատուռ կա՝ նրանց հանգիստը վերևից հսկող, որ մեղմ ողողանջով, աղոթքի խոսքով նրանց անդորրը չի ուզում խախտել: Վառվող մոմերի առկայծումներում նրանց դեմքերն եմ ես ուզում տեսնել, նոր անուններ կան ու նոր հերոսներ, Վարդան են նրանք կամ գուցե Վահան, կարևոր չէ դա, ԶԻՆՎՈՐՆ են նրանք հայոց աշխարհի, որ խաղաղ կյանքի երազանքով լի՝ երգում են նրանք ու նույնիսկ՝ պարում, վտանգի ժամին՝ կռվում են նրանք, հայոց անառիկ սահմանն են պահում:

http://usarmenianews.com/am-n-5944.html

11.10.2016

ԹՂԹԻՆ ՉՀԱՆՁՆՎԱԾ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՄԻ ԴԱՍ

Այդ պահին մոռացա, որ ուսուցչուհի եմ, կարծես լրագրողական աշխատանքի մեջ էի, մի պահ հայտնվեցի հրամանատարի տեղակալ Հարություն Մանուչարյանի կողքին, որ բարձրախոսով ցուցումներ էր տալիս զինվորներին: Երբեմն «խախտում եմ» կարգը իմ հարցումներով, իսկ նա հասցնում է ինձ պատասխանել, նշումներ եմ կատարում, ապա հայտնվում եմ զինվորների կողքին: Աշակերտներն անմահացնում են պահը, իսկ ես հուսով եմ, որ կարող է նկարները հրապարակավ տեղադրելով՝ հարազատ մարդիկ լինեն, որ ճանաչեն նրանց:

Զինվորները պարան են ձգում, դպրոցականների ծափ-ծիծաղը միախառնվում է հաղթող դասակի զինվորների պայծառ դեմքերին: Պարտվողներ չկան այստեղ, մրցույթի մեջ են ընկեր տղաներ, որ ձեռք են սեղմում, միմյանց ողջունում ու հաղթանակը միասին տոնում:

Ոտքերս հետո զգում եմ, որ այդ թուղթն ու գրիչը խանգարում են ինձ, ոչինչ պետք չէ, ոչ մի նշում: Զինվորներն այնքան արագ էին կատարում հերթական ցուցումները, որ չէի հասցնում անգամ ինչ-որ բան նշել: Ու ես՝ ձախողված լրագրողուհիս, մնացել էի դասակից դասակ շրջելիս, բայց առանց թուղթ ու գրչի: Ես, որ այդ պահին լուսանկարելու հնարավորություն չունեի, զգում էի, որ իմ լրագրողական աշխատանքը ձախողվում է: Բայց ահա ինձ օգնության են հասնում իմ աշակերտներն ու նրանց ծնողները, որ հավերժացնում են պահեր:

Զինվորները պարում էին, «մերոնք» էլ միացան նրանց, ինձ էլ հրավիրեցին պարելու, բայց ե՞րբ եմ պարել վերջին անգամ՝ տարիներ առաջ, երևի մոռացել եմ արդեն, այն շատ վաղուց է եղել, ու ես երկրնտ-

րանքի մեջ եմ՝ եթե չստացվի՞... Մտորում եմ. «Պարել չգիտեմ, լրագրողական աշխատանքս էլ կանգնեցրել եմ, ուրեմն հարկավոր է նորից անցնել ուսուցչության»:

Ու հայացքս փնտրում է հրապարակով մեկ շաղ եկած իմ աշակերտներին: Ինչպիսի՜ ոգևորություն, հիացական ձայներ, և որքա՜ն ուրախ էի ես՝ իմ ձախողված լրագրությամբ ու իմ չկայացած պարով, չնայած պարելու թաքուն ցանկություն ունեի...Եվ հոգով բոլորի հետ էի, մտորումներիս մեջ էլ ԶԻՆՎՈՐԻ մասին թղթին չհանձնված հայրենյաց դաս կար՝ սերնդի համար պատմություն դարձած:

Մի մեծ պատմություն էր խմորվել իմ մեջ, որն ինձ ծանոթ էր շատ ու նաև՝ շատ նոր: Վերնագիրն էլ իսկույն դաջվեց մտքիս մեջ՝ Զինվոր:

http://usarmenianews.com/am-n-5956.html

12.10.2016

ԱԶԳԻՍ ՑԱՎԸ ՏԱՆԵՄ...

12-րդ դասարանում հայոց լեզվի դասագրքի տնային առաջադրանքը՝ հրապարակախոսական ոճով մի շարադրանք գրել, ամենևին աշակերտների սրտով չէր, և ահա առաջարկում եմ մեկ այլ թեմա, որն արդիական է և այսօր էլ՝ մտահոգության առիթ: Ընտրեցինք արտագաղթի թեման: Յուրաքանչյուրը յուրովի դրա բացասական ազդեցության ու հետևանքների մասին էր շարադրել, բայց ուշադրությանս արժանացան Անգելինա Անդրյանի՝ շատ անմիջական ու սրտաբուխ խոսքերը. «**Ես հայուհի եմ, պարտավոր եմ պաշտպան կանգնել մեր հող ու ջրին, իմ տանը, իմ ազգանվան «-յան» վերջավորությանը: Դեմ եմ արտագաղթին, երբ ճակատագրի հույսին են թողնում այս մի բուռ հայրենիքը: Ազգիս ցավը տանեմ, մենք պայքարող ժողովուրդ ենք՝ մեր հողին երկու ոտքով կանգնած, և միշտ պատրաստ մեր ոսոխներին արժանի պատասխան տալու»:**

Ապրիլյան պատերազմական օրերից հետո նա չհաճախեց դպրոց: Այն հատուկենտ աշակերտների մեջ, որ դպրոց էին գալիս հարաբերական խաղաղ օրերին, հայացքս դասարանում փնտրում էր շատերին, ովքեր այդ օրերին չէին երևում: Պարզվեց, որ նա օտար ափերում է: Սեպտեմբերի 1-ի զանգը համախմբեց նորից մեր դպրոցականներին, բայց ես նրան նորից չգտա: Օրեր անց իմացա, որ շուտով կվերադառնա ու կհաճախի իր հարազատ դպրոցը:

Ի՞նչը նրան նորից բերեց հայրենիք ամիսների բացակայությունից հետո... «**Մինչ ապրիլյան պատերազմը իմ բաղձալի երազանքն էր՝ գնալ ՌԴ և ապրել այնտեղ՝ իմ ծննդավայրում: Ծնողներս ինձ ուղարկեցին, և կարծես անչափ գոհ էի ճակատագրից նման հնարավորության համար՝ մտածելով, որ այնտեղ էլ կշարունակեմ ուսումս: Առաջին ամիսն անհոգ անցավ, ինձ զգում էի, ինչպես տանը՝ հայրենի հողի վրա: Երկրորդ ամսում արդեն անհանգիստ էի անսահման կարոտ ու սեր ունեի հարազատ Արցախիս հանդեպ: Հեռու լինելով Մարտակեր-**

տից՝ ես իսկապես հասկացա, թե ինչքան դժվար է ապրել ուրիշ տեղ, դրա համար էլ նորից վերադարձա իմ հայրենի տուն»:

Այս դեռահաս աշակերտուհու կարոտաբաղձ սիրտը կոչ էր անում իր հայրենակիցներին՝ ինչ-որ ելք գտնեն այստեղ ապրելու համար, միայն թե չարտագաղթեն, մնան հայրենիքում: «**Ամեն անգամ կրակոցներ լսելիս գլուխներս կորցնում ենք, յուրաքանչյուրիս համար էլ թանկ է կյանքը, բայց պիտի իմանանաք, որ հայկական խաչով կնքված հայկական արյունը հայ հողի վրա պիտի սերունդ տա, պաշտպանի սահմանը, շենացնի ու պահպանի նրա մշակույթն ու պատմությունը…»:**

Իմ աշակերտուհու տողերի շարվածքում փնտրում եմ այն տողը, որով նա ցանկանում է կանգնեցնել արտագաղթը, մի չարիք, որ դարերի պատմություն ունի և այսօր էլ բույն է դրել հայի սրտում. «**Ես վերադարձա իմ հողը՝ կարծես ցանկանալով կանգնեցնել արտագաղթողների թիվը, մի՛ հեռացեք հայրենիքից»:**

Հայրենաբաղձության կո՞չ էր սա, թե՞ հայրենիքին պաշտպան կանգնելու մի նոր ահազանգ, որ այս սիրուն արցախուհին իր սրտի խոսքն էր հնչեցնում բարձրաձայն, բայց նաև հիշում եմ նրա ամիսներ առաջվա գրած տողերը. «**Որտեղ էլ լինեմ, գիտեմ, որ Արցախն իմ աստղն է, առանց որի ապրել չեմ կարող, և ուր էլ գնամ, կհասկանամ, որ «Ամենից սիրուն, լավ տունը, որ կա, էս գորշ խրճիթն է, Էս հին խրճիթն է, գետի եզերքին, Ծառերի տակին», ու կշարունակեմ ապրել իմ հայրենի հողում՝ ականջս սահմանային կրակոցների ձայնին, հոգիս՝ տագնապով լեցուն»:**

Հիրավի, հայրենասիրությունը շա՜տ ու շատ աշակերտների համար աշխարհայացք ու հետաքրքրություն է, մտածելակերպ ու դիրքորոշում, վարք ու կենսակերպ: Մտահոգություններս օրեցօր փարատվում են, և խոհերիս հանգրվանը դառնում է ապահով ու անխոցելի:

http://usarmenianews.com/am-n-5981.html

13.10.2016

ՄԻ՛ ՀԵՌԱՑԵՔ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Արտագաղթի թեման մտահոգիչ էր և արդիական, ուստի 12-րդ դասարանում յուրաքանչյուրն իր տեսակետն արտահայտեց: Որքան զարմանալի, նույնքան հետաքրքիր էին նրանց մեկնաբանությունները, թե ինչու են մարդիկ թողնում իրենց տուն ու տեղը և արտագաղթում, մի բան, որ դարձել է չարիք թե՛ հայրենիքը լքողների և թե՛ այստեղ ապրողների համար: Արտահայտած կարծիքները տարբեր էին, մեկը մյուսից մտահոգիչ, որ մտածելու տեղիք են տալիս բոլորիս. **«Սովորաբար հայրենիքից հեռանում են աշխատանք փնտրելու նպատակով: Ոմանք՝ ընդմիշտ, ոմանք՝ ժամանակավոր: Ես չեմ ընդունում արտագաղթը, հոգիս տակնուվրա է լինում, երբ մի ընտանիք լքում է հարազատ տունը: Առավելապես չեմ հասկանում նրանց, ովքեր ընդմիշտ են հեռանում իրենց հայրենիքից: Եթե բոլորը թողնեն, գնան, ապա ո՞վ պիտի ապրի այստեղ, ո՞վ պիտի պահի այս հողը, կարծում եմ պետությունը պետք է լուրջ մտածի այս հարցի շուրջ»** (Կարապետյան Սյուզաննա):

«Հայոց աշխարհը չորս կողմից շրջապատված է թշնամիներով, ինչո՞ւ չէ, նաև ազգի ներսում կան գել-գազաններ, բայց այս խնդիրների դեմ պայքարելու փոխարեն շատերը նախընտրում են թողնել ու հեռանալ: Իրենց սրբազան ու հարազատ հողը լքողներին ուզում եմ ասել, որ արտերկրում կառուցելու և ապրելու փոխարեն՝ ավելի լավ է ձեր ծննդավայրը շենացնեք, ձեր որդիների տունը կառուցեք հարազատ հողի վրա: «Արմատախիլ մի՛ արեք ձեր զավակներին հայրենի տնից ու հողից», իսկ օտար հողից ուզում եմ պահանջել միայն մի բան. «Մի՛ կողոպտեք հայոց երկիրը՝

հային մեզանից խլելով» » (Բաղրյան Իննա):

«Իրոք, ճիշտ է ասված, որ մեր երկիրը միակն է, երբ պատերազմի ժամանակ ժողովուրդն օտարությունից վերադառնում է, իսկ խաղաղ ժամանակ՝ արտագաղթում: Որքա՜ն էլ դժվար լինի հայրենիքում ապրելը, մարդ չպետք է հեռանա իր տուն ու տեղից: Մի՞թե զինվորի համար հեշտ է սահման պահելը՝ իր կյանքը վտանգելով, կամ սահմանին մոտիկ ապրող հայ գյուղացու համար մի՞թե դժվար չէ ապրելը, բայց նա չի հեռանում, մնում է իր հողին կառչած: Արդյո՞ք մեզ համար դյուրին է սահմանամերձ բնակավայրում ապրելը, երբ հասցրինք նույնիսկ պատերազմ տեսնել, բայց այստեղ հիմա էլ ապրում ենք» (Կարապետյան Արմինե):

«Մի՛ հավատացեք, երբ ասում են, որ արտագաղթի հիմնական պատճառը սոցիալական բարդ կացությունն է, անշուշտ, այդ պայմաններն իրենց դերն են խաղում, բայց մշտապես հայրենիքից հեռացող հազարավոր մարդկանց ճնշող մեծամասնությունը՝ գիտակցված թե անգիտակից, հեռանում են հավատի բացակայության պատճառով, վաղվա օրվա հանդեպ ունեցած կորսված հավատի համար» (Սահյան Դիանա):

Լռում եմ, շատ դժվար է պատերազմ տեսած ու նորից հայրենի օջախ վերադարձած դպրոցականների մոտ արդարացնել նրանց, ովքեր այս օրերին էլ արտագաղթում են լավագույն կյանքի ակնկալիքով: Ես հավատում եմ, որ այս սրբացած հողը շեն կմնա ու բարգավաճ...

http://usarmenianews.com/am-n-6004.html

14.10.2016

ԵՍ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԴԱՌՆԱԼ ՆԱԽԱԳԱՀ: ԱՅՈ՛, ՀԵՆՑ ԻՄ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԸ...

Ստքովս չէր անցնի, որ 12-րդ դասարանում առաջին նստարանին նստող այս հեզանազ ու շատ համեստ աշակերտուհին՝ Լադա Արզումանյանը, կարող էր ունենալ այսպիսի երազանք, և նորից ու նորից ընթերցում եմ այս տողը. «**Ես ցանկանում եմ դառնալ նախագահ: Այո՛, հենց իմ Արցախի նախագահը...**»

Ես հիշում եմ նաև օրեր առաջ ասված նրա ինքնախոստովանանքի տողերը. «**Ես տարբերվում եմ մյուսներից իմ անչափելի համեստությամբ: Բնավորությանս այդ գիծը չեմ սիրում, հենց դրանից է, որ սիրում եմ լռությունը, այդ լռության մեջ եմ գտնում իմ հանգստությունը, բայց ցանկանում եմ լինել ազատ ու անկաշկանդ, որն ինձ մոտ չի ստացվում»:**

Արտագաղթը կանգնեցնելու մասին աշակերտների առաջարկություններին ավելացել էր մի նոր ցանկություն, որ իմ աշակերտուհուն գուցե տարիներ հետո կտանի նախագահ դառնալու նպատակի իրականացմանը. «**Ես այդ ժամանակ Արցախը կդարձնեմ այնպիսին, որ ոչ մեկն իր բնօրրանից բացի մեկ ուրիշ երկրում ապագա չպատկերացնի»:**

Նրա շարադրանքում արտագաղթի չարաղետ հետևանքներն էին բացատրվում, որ այն տանում է բնակչության թվի նվազեցման, բացասաբար է ազդում երկրի տնտեսության աճին, աշխատանք չունենալու հեռանկարը երիտասարդության մեծ մասին դրդում է գայթակղվել արտերկրի գրավիչ պայմաններով: Իսկ այդ երևույթները հանգեցնում են բնակչության թվակազմի փոփոխության, նվազում է երիտասարդների քանակը, և բնակչության հիմնական մասը համալրում են թոշակառուներն ու հաշմանդամները:

Արտագաղթի առավել աղետալի դրսևորումներից մեկը նա համարում էր այն, որ աշխատանք գտնելու հույսով արտերկիր են մեկնում նաև կանայք: Նկատվում է մի մտահոգություն, որը բոլորիս համար էլ

ցավալի է. «**Հայ ընտանիքում սրբացված ու մեծարված կինը դառնում է արտագնա աշխատող»:**

Արտագաղթը կանգնեցնելու նրա առաջարկը թեև կապված էր նոր աշխատատեղեր բացելու հետ, բայց նաև սահմանին մոտիկ ապրող արցախուհին իր դժգոհությունն էր հղում հեռուներում ապրողներին. **«Կան մարդիկ, ովքեր աշխատանք ունեն, լավ տուն ու տեղ, բայց էլի հեռանում են երկրից: Ես այդ մարդկանց կցանկանայի միայն մի հարց ուղղել. «Եթե մենք ապրում ենք սահմանից ոչ հեռու կրակոցների տակ և չենք հեռանում այս պատերազմ տեսած երկրից, ապա դուք՝ ավելի ապահով բնակավայրերում ապրողներդ, ինչո՞ւ եք լքում ձեր երկիրը»»:**

Հարցը բոլորիս համար էլ մտահոգիչ է, և ես էլ միանում եմ նրա դժգոհությանը՝ ուղղված հայրենիքում բարեկեցիկ կյանք ապրած, բայց այդ նույն հայրենիքը լքած արտագաղթողներին: Անտարակույս, Լադա Արզումանյանի նման սերունդն է, որ անառիկ է պահում Արցախի դարպասը: Հիրավի, երջանիկ ուսուցչության ներկայացուցիչ եմ՝ հարուստ գաղափարական այսպիսի բարձր համոզմունքներ ունեցող սաներով:

http://usarmenianews.com/am-n-6023.html

14.10.2016

ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԱՂՋԻԿԸ

(Այսրեղ ապրելը դժվար է, լքելը՝ դավաճանություն)

Սեպտեմբերից իմ աշակերտուհին՝ Սեդա Գրիգորյանը, չհաճախեց մեր դպրոց, հանգամանքներից ելնելով՝ տեղափոխվեց Հայաստան, բայց ծնողները մնացին այստեղ, չնայած իրենք էլ այնտեղից էին եկել, իսկ նրանք մեզ համար վաղուց էին դարձել հարազատ արցախցիներ, առավել ևս երբ ընտանիքի հայրը տարիների իր վաստակն ունի զինվորական գործում, եղբայրն էլ այս օրերին ծառայում է հայրենիքին:

Հիշողությունս ինձ տանում է դեպի անցած օրերը, ու ես հիշում եմ իմ աշակերտուհու խոսքերը. «**Ես ծնվել եմ Արցախում, 21-րդ դարի՝ իմ քաղաքի առաջին ծնունդն եմ ես՝ 01.01.2001 «ոսկյա» տարեթվով: Ուսուցչուհիս հարցրեց, թե ո՞ր երկրում կցանկանայի մեծանալ, առանց վարանելու մտածեցի՝ եթե հարցը ինձ մի քանի տարի առաջ տրվեր, ես վստահությամբ կասեի, որ ցանկանում եմ ապրել Վանաձորում, որտեղ գտնվում են բոլոր հարազատներս: Իսկ հիմա, երբ արդեն քիչ թե շատ մեծացել եմ ու նորովի եմ ճանաչում աշխարհը, փորձում եմ իմ մեջ գտնել այն առավել թանկ վայրը, որին ես «Հայրենիք» կանվանեմ: Այն հանգամանքը, որ ես ծնվել եմ Մարտակերտում դարասկիզբ խորհրդանշող այդ հրաշալի օրը, ինձ ավելի է կապում այս հող ու ջրին, և կարծում եմ, որ պատահական այս կյանքում ոչինչ չի լինում: Ծնողներս Արցախից չեն, բայց արդեն քսան տարի է, ինչ հայրս պաշտպանում է հայրենի քաղաքիս սահմանը: Ու հիմա ես մտածում եմ՝ ո՞րը նախընտրեմ՝ իմ հարազատների բնօրրան Վանաձո՞րը՝ այդ խաղաղ ու գեղեցիկ քաղաքը, որտեղ հիմա միակ եղբայրս է ապրում ու սովորում, թե՞ Մարտակերտը՝ այս կիսավեր, փոշոտ, իր բնակիչներին միշտ լարված պահող քաղաքը, որտեղ իմ մանկությունն է, հիշողություններս ու մեր տունը»:**

11-րդ դասարանում աշակերտների մեջ երբեմն հայացքս փնտրում է նրան՝ այն սիրունատես փոքրիկ աղջնակին, որ իր ուսումնառության

տարիներին միշտ էլ հաղթանակներ էր բերել դպրոցին, առավելապես ինձ՝ իրեն դասավանդող ուսուցչուհուն: Հպարտանալու առիթներ շատ եմ ունեցել, ափսոսանքի զգացողությունն էլ պակաս չէր, երբ իմացա, որ նա տեղափոխվում է իրենց հարազատ Վանաձոր քաղաքը:

Այս օրերին պատահաբար հանդիպեցի նրա մայրիկին, մի նոր ուրախություն ապրեցի, երբ իմացա, որ Արցախի դուստրը այս անգամ էլ մի նոր հաղթանակ է ձեռք բերել ստեղծագործական շարադրությունների մրցույթում: Շնորհավորանքս ցանկացա արտահայտել՝ հրապարակավ տեղադրելով այս շարադրությունը, բայց կա նաև ինձ պարուրած մի գեղեցիկ զգացողություն, որ նա միշտ էլ կմնա ինձ համար որպես իմ սիրելի աշակերտուհին՝ չնայած ուրիշ դպրոցում սովորելիս, բայց հոգով ու սրտով Արցախում ապրած իր օրերի հետ:

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԻՄ ԵՐԿԻՐԸ

Ամիսներ առաջ կարծում էի, թե բոլոր առաքինություններից վեհագույնը՝ հայրենասիրությունը, հատուկ է միայն ընտրյալներին: Բայց ապրիլյան պատերազմի պատուհասած օրհասը եկավ ապացուցելու, որ բոլորս ենք սիրում այս հայրենիքը, այս երկիրը, այս մի բուռ Հայաստանը: Ու սերն այդ երևի տարբերվում է բոլոր ազգերի ու ազգությունների հայրենասիրությունից: Ուրիշ հայրենիքները երևի այսքան քարաշատ ու ցավաշատ չեն, անգին դառնալու չափ փոքրացած ու վտանգված չեն…

Ես սիրում եմ այս երկիրը… Սիրում եմ թշվառությունը հաղթել չկարողացած, բայց զրկանքից փոքրացած մորը գնահատող զավակի սիրով: Սիրում եմ՝ չհամեմատելով, չքննադատելով, ինքնաբուխ: Սիրում եմ ՝ տալու, նվիրելու, զոհելու պատրաստակամությամբ… Ու փաստորեն բոլորն են այսպես սիրում մեր երկիրը: Այլապես ինչպե՞ս բացատրել ապրիլյան «զարթոնքը»…

Դու քաղցր ես, հո՛ղ իմ հայրենի, չկա քեզնից քաղցր անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին, երբ սպառնում է թշնամին,
Դու ավելի ես քաղցրանում…

Երկիրս մի ակնթարթում հայրենիք դարձավ, ու անձնական, կենցաղային ամեն ինչ ստորադասվեց հայրենիքի անվտանգության ու պաշտպանության գաղափարին: Շարասյուները ձգվեցին սահման, ամեն ինչ՝ սնունդ, զենք, աղոթք, կենտրոնացավ այնտեղ, ուր ցավ կար ու վտանգ...Ու մարդիկ, շատ մարդիկ՝ տարբեր մասնագիտության, մեծ ու փոքր, ահել ու ջահել կամովին զինվոր դարձան, դարձան հայրենիքի պաշտպան, որ կանգնեն իրենց կամ այլոց զինվոր զավակի կողքին՝ պաշտպանելու մայր հայրենիքի սահմանը, մեր անկախության ու գոյության իրավունքը, պաշտպանելու այն, ինչ արյամբ է նվաճված: Ու հերթական անգամ արյամբ քաղցրացավ այս հողը, այս սրբազան տարածքը:

Այսօր եղբայրս զինվոր է: Այս կյանքում ինձ ամենահարազատ մարդը հայրենիքի պաշտպանի վեհ գործն է կատարում, վեհ կոչումն է կրում: Այս հանգամանքը ինձ հպարտություն է բերում, բայց նաև խոցելի է դարձնում: Ես ակամա հավասարության նշան եմ դնում եղբորս ու հայրենիքիս միջև ու հասկանում, որ այս հայրենիքը պահելը եթե անգամ դժվար է, զիջելը անհնարին է, այստեղ ապրելը դժվար է, լքելը՝ դավաճանություն: Այն հատվածը, այն խրամատը, որ այսօր եղբայրս է պահում, ինձ համար անգին է: Ու ես ամենօրյա մրմունջ-աղոթք եմ հղում բարձրյալին՝ պահպանելու եղբորս, ընկերներին…ու երկրիս բոլոր խրամատները… Հայրենիքը պիտի հարազատի պես ընդունել՝ իր տկարություններով, սխալներով, թերություններով հանդերձ: Փորձել նրա կենսագրության ու պատմության մեջ փոխել ինչ-որ բան՝ բարձրացնել դրոշը միջազգային մրցույթներում, հնչեցնել հիմնը հաղթելիս, արծարծել պետության անունը մշակույթի ու գիտության բնագավառներում… Ու դա անել սիրով, նվիրումով, կամովին, ազգովի: Պահանջատերից վերածվել զավակի ու զավակի սիրով բռնել հայրենիքի ձեռքը՝ ապագա գնալու պատրաստակամությամբ: Ուզում եմ «մեծանալ» այնքան, որ կարողանամ հայրենիքիս ձեռքը բռնել՝ որպես աջակից, որպես բարերար, որպես իմ ուժը նրան տալու պատրաստ արժանի զավակ:

Անթաքույց հպարտությամբ եմ լցված... Սեղայի նման աշակերտուհիները, հիրավի, քառապատկում են մանկավարժիս ոգևորությունն ու լավատեսությունը, նվիրումն ու հավատարմությունը մանկավարժական վեհ գործին:

http://usarmenianews.com/am-n-6040.html

14.10.2016

ՊԱՏՐԱՍՏ ԵՄ ՁԵՆՔ ԲՌՆԵԼ, ԵՎ ԴԱ ԿԱՊ ՉՈՒՆԻ ԻՄ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Արմինե Կարապետյանը սովորում է Մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ հումանիտար դասարանում: Նա ինձ զարմացրել էր դեռ ամիսներ առաջ՝ անցած ուսումնական տարում, երբ ասաց, որ ուզում է դառնալ դիպուկահարուհի: Ապրիլյան սարսափելի օրերից հետո մտածում էի, որ նա մտափոխվել է…Դասարանում երբեմն հայացքս զուգահեռվում էր նրա հայացքին, կարծես ուզում էի հարցնել այդ մասին, բայց լռում էի: Իսկ լռությունս իմ ներսում աղաղակում էր, որ զենքն ու զինվորական գործն այս նուրբ ու հեզիկ աղջկա համար չեն:

Բայց այս օրերին այդ համեստ կերպարի մեջ նորից տեսա այն «դիպուկահարուհուն», որ անգամ ապրիլյան օրերին ցանկացել էր լինել իր զինվորական հոր կողքին. «**Այդ օրը՝ ապրիլի 2-ին, անընդհատ նայում էի ծնողներիս պատերազմ տեսած աչքերին: Ոչինչ չէի զգում մինչև այն պահը, երբ հորս կանչեցին զորամասից: Անընդհատ խնդրում էի, որ ինձ էլ վերցնի իր հետ: Ռմբակոծությունը գնալով սաստկանում էր, չէի կարողանում արտասվել, միայն «Հայր մերը» շուրթերիս փորձում էի հորս համոզել: Իսկ հայրս շուտափույթ փորձում էր բոլորիս հանել տնից: Ես ոչ մի կերպ չէի համաձայնվում, բայց հետո մեծ դժվարությամբ տնից դուրս եկա նաև ես»:**

Նրա խոսքերում խոնարհում կար հերոս ծնած մայրերի առաջ, հպարտության զգացում, որ նորից քայլում է իր հարազատ քաղաքի փողոցներով, կար նաև այն մեծ երազանքը, որ դեռ չէր խամրել նրա մեջ անգամ ապրիլյան օրերից հետո: Ու ասես իր այս խոսքերում ես նորից գտնում եմ իմ լուռ հարցման պատասխանը, որ մինչ այդ չէի համարձակվել հարցնել, թե արդյո՞ք նա նույն մտքին է և ուզում է լինի զինվորի կողքին: «**Ես պատրաստվում եմ ապագայում իմ պարտքը մատուցել հայրենիքիս: Կանգնել այն դիրքում, որտեղ եղել են մեր հերոս**

տղաները, պահել այն դիրքը, որ արյունով են պաշտպանել ու թշնամուն ապացուցել, որ «առյուծն առյուծ է, լինի էգ թե որձ»: Միշտ պատրաստ եմ իմ քնքուշ ձեռքով բռնել սառը զենքը ու թեկուզ կյանքովս տեր կանգնել այս հողին»:

Հպարտության զգացում ունեմ, բայց նաև տխրում է հոգիս, որ Արցախի դուստրը խաղաղ օրերի երազանքների կողքին չի մոռանում հայրենիքին զինվորագրվելու իր մեծ ցանկությունը, ու նորից հիշում եմ այն օրերի նրա խոսքերը. «**Դեռ մանկուց սեր եմ ունեցել դեպի զինվորական համազգեստը, բայց երբևէ չեմ պատկերացրել, որ առիթ կունենամ այն հագնել: Մի անգամ փորձել եմ... Երբ այն կրում ես, կարծես ներսումդ մի ուրիշ աշխարհ է բացվում, այդ պահին մտովի տեղափոխվում ես սահմանագիծ...Կամ գուցե երազանքիս պատճառն այն է, որ մեծացել եմ զինվորականի՞ ընտանիքում, չգիտեմ»:**

Զարմանալի է: Մարդասիրական խոր ապրումներ և բարձր համոզմունքներ ունի Արմինեն, իսկ դիպուկահար դառնալու նրա ցանկությունը ներքին չարության ու ագրեսիայի ոչ մի հիմքեր չունի: Պարզապես ինքնապաշտպանության սաղմերը շատ փոքրուց են նրա մեջ սերմանվել, ակամա՝ առանց կանխատրամադրվածության, որովհետև վտանգը միշտ առկախ է, վառոդի հոտը՝ ռունգերում...

Իմ աշակերտուհին գերում է ինձ իր զինվորական դառնալու մեծ ցանկությամբ, բայց նաև հայացքս դեպ երկինք եմ հառում, և Աստծուն ուղղված իմ աղերսանքներն աղոթք են դառնում, որ խաղաղ լինի երկնակամարը ու անփորձանք մեր սահմանապահ զինվորների ծառայությունը:

http://hayernaysor.am

16.10.2016

ԱՆԱՆՈՒՆ ՆԱՄԱԿՈՒՄ ՀԱՆԳՐՎԱՆԱԾ ԶԳԱՑՄՈՒՆՔ...

Նա չցանկացավ՝ իր նկարը տեղադրվի, բայց որոշ ժամանակ անց խնդրեց ինձ, որ իր անունն էլ չնշեմ: Ու ես, իմ խոստմանը համաձայն, այս անանուն սիրո նամակը հրապարակում եմ, որը դեռահաս սիրունատես մի աղջնակի՝ իմ աշակերտուհու սրտագին ու կարոտալից խոսքն է՝ իր գեղեցիկ սիրո մասին: Տառերն եմ շարում այս չուղարկված նամակի, նաև հույսով, որ անանուն հասցեատերն այս տողերում իրեն կգտնի:

Հայոց լեզվի դասանյութն էր՝ գեղարվեստական ոճ, դասագրքի տնային առաջադրանքը՝ գրել շարադրություն՝ համաձայն տրված թեմաների... Իմ աշակերտների համար այնքան էլ դուրալի չէին դրանք, ու ես այդ օրն առաջարկեցի նոր վերնագրեր՝ «Չուղարկված նամակ», «Կարոտ», «Զղջում», ցանկացած մեկով կարող էին շարադրել իրենց մտքերը: Հաջորդ օրն այդ դասարանում հայ գրականության դաս էր, բայց նա անհանգիստ ասաց, որ չնայած հայոց լեզվի դասաժամ չէ, բայց ինքը գրել է տնային առաջադրանքը, այն էլ՝ շատ հուզիչ ապրումներով: Նա ինձ հանձնեց իր գրածը, իսկ ես ընթերցելուց հետո ասացի, որ այն կարող եմ տեղադրել շատերին տեսանելի կայքէջում, եթե իմանամ՝ դա կօգնի իրեն: Թախծոտ էր նրա ժպիտը, տողերն էլ կարոտալից էին, հուզումնառատ:

«Ցուրտ է, անձրևը կատաղած ծեծում է պատուհանի ապակին, իսկ սիրտս այդ թխկթխկոցի հետ միասին դողում է, քեզ կարոտում: Արցունքներս խեղդում են ինձ, իսկ ես նամակս գրում ու նորից ջնջում եմ, և միշտ նույնը՝ կարոտում եմ քեզ: Ներսս ուզում է վառվող հրաբխի պես ժայթքել, առանց քեզ դատարկ է շուրջս:

Անձրևի դադարից հետո դուրս եկա փողոց, քարացած կանգնած եմ, մտածում եմ, որ կարոտը ուղղակի բառ է, բառ, որ չի կարող ինձ իշխել: Ճփոթված այդ կարոտը փնտրում եմ շուրջս, նա չկա, բայց փողոցի մեջ ծնված սպասումս չի թողնում քայլեմ: Աչքերով քեզ եմ կանչում, փորձում հայացքով որսալ բարի դեմքդ, բայց դու չես երևում, կարոտով, խորտակված մտքերիս մեջ, քեզ եմ բարևում, և կրկին լռությունն է ինձ ապտակում, ու ես սկսում եմ ինձ արհամարհել, իսկ շուրթերիս միայն քո անունն է դողում:

Հիշողություններս, որոնցից անկարող եմ ազատվել, նորից են ինձ տրորում: Կենսախինդ ծիծաղդ, գարնանային տաք արևով լուսավորված հայացքդ, փոքորկոտ աչքերդ խեղդում են ինձ, խորտակում ու հաղթում: Կարոտը կրծում է տխրամած սիրտս, բացակայությունդ անհաղթահարելի է դառնում: Ծանր ու մռայլ թախիծը տանում է ինձ դեպի մթություն: Գիշերային լռությունը խախտում են ինձ լսելի դարձած սրտիս զարկերը, սրտիցս պոկված կարոտն անմոռաց անունդ է տալիս: Կարոտով ողողված արցունքներս հոսում են աչքերիցս՝ ինձ ստիպելով զգալ տաք սառնություն, սահում են տաք ձեռքերիս, որոնք դեպի քեզ են ձգվում: Անգիտակցորեն հոգիդ սիրեցի, սակայն կործանարար հպարտությունս թնդացող կայծակի պես պայթեցրեց սիրտս: Քեզ նայում էին հպարտ աչքերս, այնինչ անտեսանելի աչքերով հոգիս էր լալիս... Ես գիտեի, որ չկայացած հանդիպումներ կլինեն այդուհետ և ավելի գեղեցիկ ու երկա՜ր շարունակվող...»:

Թախծախառն գրված այս նամակում բանաստեղծական տողեր կային, ես հարցրի իմ աշակերտուհուն, թե արդյո՞ք իր սեփական ստեղծագործությունն է, նա հաստատեց, որ իր գրածն է: Իհարկե, ոչ բոլորը, բայց հարմար գտա այս տողերն ավելացնել.

Քաց են չսպիացած վերքերս, թաց են սիրահարված աչքերս,
Ափսո՜ս, դու չկաս իմ կողքին, ինձ տանջում է տառապած հոգիս:
Սիրատենչ սիրտս սիրահար՝ դարձել է անզուսպ, խելագար,
Հեռվից ես ձայն եմ տալիս, կրկին արձագանքն է գալիս,
Խնդրում եմ, օգնի՛ր ինձ, Տե՛ր Աստված:

Նրա ձեռագիր նամակը մի կողմ եմ դնում, անհանգիստ ապրումներս միահյուսում եմ նրա տողերի տպագիր շարվածքին, և որքա՜ն եմ ուզում, որ այս անանուն նամակն իր հասցեատիրոջը գտնի...

http://usarmenianews.com/am-n-6058.html

17.10.2016

ԻՆՉՊԵ՞Ս ՀԵՌԱՆԱ ԻՆՔՆ ԻՐԵՆԻՑ

11-րդ դասարանում է սովորում նա՝ Նարինե Գրիգորյանը, սիրունատես, մի ժպտերես աղջիկ: Նա ստիպված է հեռանալ հայրենիքից, ում համար հող հայրենին վաղուց է դարձել սրբություն, ու այդ սրբությամբ օծված՝ նա իր խոհերով միշտ սահմանին կանգնած զինվորի հետ է: Երբեմն զինվորական համազգեստով է նա, երբեմն՝ դպրոցական, իր մտորումներով՝ միշտ արցախական, բայց հոգում մի անզուսպ թախիծ, մի անհանգիստ կսկիծ կա, որ երբեմն զգացել է տալիս այս նուրբ էակը:

«Չեմ ուզում հեռանալ իմ հողից, այն հողից, որ ներկված է հայի արյունով, որ պաշտպանվում է մեր քաջ տղերքի կողմից: Իմ հողը իմ մայրն է, ինձ սնողն ու պահողը: Իմ հողը մի կնճռոտ և ալեհեր պապիկ է, ամեն մի կնճիռ մի վիշտ ու ցավ է: Չեմ ուզում հեռանալ այս հողից, սիրում եմ իմ հողը, իմ տունը: Ուզում եմ այս հողում ծլել, ծաղկել, արմատներ գցել և հավերժ ապրել: Ես պարտավոր եմ ապրել իմ հայրենիքում: Երբ հեռանամ իմ հողից, այդ ժամանակ կհեռանամ ինքս ինձնից, բայց ինչքան էլ լինենք օտարության գրկում, ինչքան էլ դուրեկան լինի այնտեղի կյանքը, մեկ է՝ իմ Մարտակերտը մնում է ինձ համար ամենաթանկն ու հարազատը: Ես այստեղ հպարտ եմ ինձ զգում, ապահով ու պաշտպանված մեր զինվորների կողքին...»:

Ես նրա հետ զրուցում եմ, նա ասաց, որ մի քանի օրից երևի կճանապարհվեն, բայց հուսով է, որ նորից ետ կվերադառնան: Չեմ կարողանում նրան մխիթարել, երկու սրբություն կա նրա առջև՝ հարազատ մայր, ում հետ պիտի օտարության մեկնի, և հարազատ քաղաք, որտեղ անցած կյանք ունի, դպրոցական միջավայր, մտերմիկ դեմքեր...Որքա՜ն լավ եմ հասկանում նրան, նաև զգում նրան սպասվող այն անզուսպ կարոտը, որ պիտի ծնվի նրա հոգում այն հեռավոր ափերում: Փորձում եմ հուսադրող խոսքերով կիսվել նրա հետ, բայց նրա դեմքին

հայտնված թախծալից ժպիտը կամաց-կամաց մարում է, ու կարեկցանքս սառչում է դեմքիս, անխոս եմ դառնում, մտքերի մեջ անձնատուր եմ լինում խոհերիս, որտեղ մի երկարածամ գեղեցիկ աղջնակ կա, որ ստիպված է հեռանալ իր մայր հողից՝ իր հարազատ Մարտակերտից:

«Մարտակերտն իմ տունն է, իմ օրրանը, իմ հողն ու ջուրը, իմ հացը, ես այստեղ շատ հանգիստ ու ապահով եմ զգում, և որքան հեռու եմ լինում այստեղից, այնքան կարոտս ուժգին է լինում: Իմ քաղաքը մի մեծ պատմություն ունի կերտած, պատերազմներ ու հաղթանակներ, քաջարի մարտիկներ ունի նահատակված, մեր կողքին քայլող հերոսներ: Սիրում եմ խաղաղ օրերի երազանքներով ապրող քաղաքս, այնտեղ ապրող աշխարհի ամենաքանկ մարդկանց, չեմ ուզում լքել նրանց, իմ կյանքն այստեղ է՝ ապրածս օրերով ու գալիքով լուսավորված»:

Մի անհանգիստ տագնապ կա հոգումս, օտարվելու, ձուլվելու տագնապը... Հեռավոր ափեր մեկնողները դեռ որքա՜ն պիտի հուսահատ պատեպատ զարկվեն՝ ազգային դեմքը պահելու համար...Ես ինքս էլ տխրում եմ, բայց ինչո՞ւ պիտի հայը հեռանա իր հայրենիքից, երբ հող կա հայրենի, այդ հողում՝ կսկիծ, արյուն կա հեղված, անցյալի հետքեր... Եվ որ այդ արյան շաղախով հողը այլևս սրբացած է ու ամուր նստած մեր ինքնության մեջ: Ինչպե՞ս Նարինեն հեռանա ինքն իրենից, իր սկզբից...

http://usarmenianews.com/am-n-6067.html

18.10.2016

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍԻՐՈ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Եթե լինեի Արփինեի փոխարեն, ես իմ ձեռքերով կսպանեի Արտաշեսին»,-12-րդ դասարանում իմ աշակերտուհու՝ Աննա Խաչատրյանի՝ զայրույթ արտահայտող այս խոսքն ինձ հանկարծակիի բերեց:

Արտաքուստ հանգիստ է միշտ, երգելու հմայիչ ձայն ունի նա: Եվ ահա տանը կարդացել էր Լևոն Ադյանի պատմվածքներից մեկը՝ «Զովասուն թավ անտառ էր, հուլիս» մի գեղեցիկ սիրո վերհուշ, որը, հանգամանքներից ելնելով, փլուզվում է: Գուցե այս գեղեցկատես դեռահասի անձնական կյանքում սիրո անհանգիստ ապրումնե՞ր կային, որ մի պահ իրեն պատկերացրել էր Արփինեի կերպարում, և այն պիտի արտահայտեր հոգու անհանգիստ պոռթկումով:

Պատմվածքի դիպաշարից գիտենք, որ Արտաշեսը տարիներ առաջ իր ծնողների հետ ընտանիքով գյուղից տեղափոխվել էր քաղաք, կարոտը հայրենի պապենական տան հանդեպ ծնվել էր տարիներ հետո, բայց գյուղական կյանքից կտրված երիտասարդը մոռացել էր իր խոստումները սիրած աղջկան: Անչափելի է Արփինեի հոգու տխրությունը, նա հոգեբանական ծանր դրամա է ապրում, երբ լսում է Արտաշեսի գյուղ գալու մասին: Նա ինքն էլ գյուղական հոգսաշատ կյանքով է ապրում և առաջին անգամ զգում է վանող տհաճություն այդ նույն կյանքով ապրող իր ամուսնու հանդեպ: Արփինեի հոգում ծնված հարցումը տարիներ շարունակ նրան տանջել էր, նա կարծես սպասել էր այդպիսի մի հանդիպման, գուցե կհարցներ նրան, թե ինչո՞ւ խաբեց իրեն, քաղաքում ընտանիք կազմեց ու հետ չվերադարձավ: Եվ ահա նա լսում, տեսնում է իր առաջին սիրո, տղամարդու մերձավորությունը կողքին, բայց Արտաշեսի կողմից օտարությունն իր հանդեպ փլուզում է նրա հոգին:

Դասամիջոցին մի քանի հարցեր եմ ուղղում իմ աշակերտուհուն՝

փորձելով մեղմացնել նրա վրդովմունքը. «**Մի՞թե պատմվածքի հերոսուհին մեղավոր չէր, որ դպրոցական լինելով, այդքան մտերմիկ հարաբերության մեջ է եղել սիրած տղայի հետ**»:

Ավելի եմ զարմանում նրա հաստատակամ պատասխանից. «**Ո՛չ, աղջիկը սիրել է ու վստահել նրան, իսկ տղան նրան խաբել է: Արփինեն արժանի չէր այդքան վիշտ ու տառապանքի: Միայն նա է զգում չսիրած տղամարդու հետ ապրելու ցավը: Արտաշեսն իրավունք չուներ խաղալ Արփինեի մաքուր զգացումների հետ: Նա թույլ մարդ է, օգտվեց աղջկա միամտությունից...Այո՛, օգտվեց...Ես զզվում եմ Արտաշեսի նման տղաներից**»:

Քարացած նրան լսում եմ, այդ պահին իմ աշակերտուհուն մի նոր կերպարով եմ տեսնում, մի բան, որ տարիների իմ դասավանդման ընթացքում երբևէ նրան այդպիսին չէի տեսել: Ու նորից եմ պնդում, որ դպրոցական աղջիկն իրավունք չուներ անձնատուր լինելու սիրո կրքերին: Իսկ նա ավելացնում է. «**Եթե անգամ սխալվել է, Արփինեն չէր կարող ետ տալ ժամանակը, որպեսզի ուղղեր սխալը: Նրան մնում էր համակերպվել բախտի հետ ու ապրեր իր վաղեմի սիրո գեղեցիկ հուշով, որ ներսից ջերմացնում էր հոգին, բայց այդ սերը հանգավ, երբ գյուղ եկած այդ լկտի, ոչ հավասարակշռված Արտաշեսը չնկատելու տվեց նրան**»:

Օրերի իմ տարակուսալից մտորումներից հետո աշակերտուհիս բացվեց. «**Երբեք չէի պատկերացնում, որ կարող եմ սիրահարվել, բայց սիրահարվեցի...**»:

Նա իր անձնական ապրումների մասին խոսեց, իմ համար մի նոր Աննա էր նա, մի նոր հրաշք գեղեցկուհի, ում մանկությունն անցել էր իմ աչքի առջև, և ես չեմ ուզում, որ նա իր հոգում անհանգստություն ունենա, բայց ուրախ եմ, որ հասկացանք իրար, և հուսով եմ, որ իմ սիրելի աշակերտուհու հետ մտերմորեն զրուցելու դեռ շատ առիթներ կունենամ:

Նրանց յուրաքանչյուրի տառապանքն իմ տառապանքն է, ապրումն՝ իմ ապրումը: Չափազանց զգույշ եմ, եզակի ու խիստ անհատական մոտեցումներով եմ նրանցից յուրաքանչյուրին օգնում այս կամ այն մտահոգությունը կիսելու ժամանակ:

http://usarmenianews.com/am-n-6089.html

19.10.2016

ԿՅԱՆՔԻ ՄԻ ԳԻՐՔ ԵՎ ԿՈՐՑՐԱԾ ՄԻ ՍԵՐ

Նա դասարանում բարձրաձայն ասաց, որ այդ գիրքը, երբ բոլորն ընթերցեն, իրեն փոխանցեն, ուզում է նորից կարդալ վիպակներից մեկը: Ես գիտեի, որ նրա հոգում անհանգիստ տվայտանքներ կան, բայց փորձում էր ցույց չտալ: Օրեր անց նա ինձ հանձնեց Լևոն Ադյանի «**Իրիկնային աղջամուղջ**» ժողովածուն և մի տեսակ տխրամած ու խղճալի ասաց, որ նորից ընթերցել է «**Այն հեռավոր ամռան**» վիպակը, մի ստեղծագործություն, որի հերոսուհին անչափ հուզել է իրեն:

Նա խոսում էր հատ-հատ, մի քիչ էլ՝ կցկտուր. «**Ես դադար չունեմ, ընթերցում եմ, տխրում, լացում, որոշ ժամանակ անց նորից եմ թերթում, տողեր ընթերցում, ավելի հուզվում: Այդ վիպակն ինձ սովորեցրեց, որ վսեմ սիրո համար մի ամբողջ կյանք է հարկավոր, իսկ այն կորցնելու համար՝ մի վայրկյան: Տեսնելով Մարինեի տառապալից կյանքը՝ հիմա կարողանում եմ տարբերել ճիշտն ու սխալը: Հասկանում եմ արդեն, որ մեր կյանքի գեղեցիկ վարդերը կարող են թոշնել ուրիշի գրկում, ինչպես վիպակի գեղեցկատենչ Մարինեն, որ չգնահատեց իսկական սերը և դժբախտացավ՝ իր հետևում թողնելով սիրո մի անմոռանալի հիշողություն**»:

12-րդ հումանիտար դասարանում է սովորում Անուշ Դանիելյանը, ամենաընթերցասեր աշակերտուհին է, ազնիվ բնավորությամբ մի հրաշալի անձնավորություն: Այդ վիպակում Ադյանի գրական կերպարների ապրած զգացողությունը զուգահեռվում է իմ աշակերտուհու անձնական ապրումներին. «**Ինչքան էլ անհիրագործելի լինեն երազանքներս, ես թաքուն հույս եմ փայփայում, որ մի օր նրան կհանդիպեմ: Սկզբում համոզված էի, որ նրա սրտում ես տեղ չունեմ, զայրանում էի, որ զանգահարում, անհանգստացնում էր օր ու գիշեր: Եվ մի օր էլ նա**

մոռացավ ինձ անսպասելի: Ես սկսեցի կարոտել նրան, հիշել նրա կցկտուր խոստումները...Ինչպես Աղյանն է ասում, ես հասկացա, որ անմոռանալի, գեղեցիկ օրեր միշտ էլ լինում են, ուղղակի պետք է պահպանել այն երկու ձեռքով, որպեսզի ժամանակ առ ժամանակ մեր սրտերը լցվեն սիրով, կարոտով ու երջանկությամբ»:

Հիշողությունս վերարտադրեց «**Այն հեռավոր ամռան**» վիպակում արտահայտած գրողի իմաստուն և ճշմարտացի մարդկային կենսափիլիսոփայությունը. երբեմն կյանքում լինում են բաներ, երբ հնարավոր չէ ետ վերադարձնել՝ «**նետած քարը, ասված խոսքը, չօգտագործված հնարավորությունը, ժամանակը, որ բաց է թողնվում, և սերը, որ կորցրել ես ընդմիշտ»:**

Ես մտքերով իմ աշակերտուհու հետ եմ, որ ուզում էր գրել նամակ, և ինչքան շա՜տ բաներ ուներ նրան բացատրելու, բայց հաղթահարեց ցավը, չուղարկեց իր գրած նամակը. «**Ես վախկոտ էի, ամաչկոտ, աղջկական հպարտությունս թույլ չտվեց ուղարկեմ այդ նամակը, բայց սկսեցի սպասել: Որքան տհաճ էր այդ սպասումը, նույնքան անդուր էր ուշացումը: Հիմա եմ հասկանում, որ ուշացումը հավատի սպառում է՝ հույսի կորուստ»:**

Որպես ուսուցչուհի՝ ուզում եմ օգնել նրան, և իզուր չէ, որ երբեմն դպրոցում ամենաշահեկան դիրքորոշումն եմ ընտրում՝ դեռահասի հետ ավագ դասարաններում լինել ընկերական, մտերմիկ միջավայրում: Եվ ահա իմ աշակերտուհին մտովի երևում է ինձ այդ վիպակը թերթելիս, որ նրա համար դարձել է կյանքի գիրք, որպեսզի կարողանա հաղթահարի դեռահասության ճգնաժամի դժվարությունները: Նաև մայրական սիրով ու գգվանքով է պետք մոտենալ դեռահասության ու պատանեկության տարիքի բոլոր այն աշակերտներին, ովքեր հուզառատ ապրումների մեջ են, այնպիսի ապրումներ, որոնք ծնողական կամ մանկավարժական անուշադրության դեպքում կարող են սրացվել և անկանխատեսելի հետևանքներ ունենալ:

http://usarmenianews.com/am-n-6103.html

20.10.2016

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ ՆԱՀԱՏԱԿ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Միջոցառումը, որ կազմակերպվեց մեր դպրոցում յոթերորդցիների կողմից, նվիրված էր իմ դասղեկական դասարանի աշակերտ Գևորգի հայրիկի՝ նահատակ ազատամարտիկ Դավիթ Պետրոսյանի ծննդյան օրվան: Խոնարհումի ու ակնածանքի խոսքերը զուգահեռվեցին նվիրյալ հայորդու մասին նկարահանված ֆիլմին: Հայրենասիրության դաս էր այն, որ իրար կողքի համախմբել էր հայրենիքի նվիրյալի ընտանիքի անդամներին՝ երեք երեխաների մայր Անժելային, նրա հարազատներին և դպրոցի տնօրենությանը, ուսուցիչներին, աշակերտներին ու նրանց ծնողներին:

Որքա՜ն հեշտ է կարդալ ընդամենը մի անցած մարտական հակիրճ կենսագրություն և ասել, որ Դավիթ Պետրոսյանը Շահումյանի շրջանի հայաթափումից հետո Շահեն Մեղրյանի անվան պարտիզանական ջոկատի կազմում մասնակցել է ԼՂՀ տարածքային ամբողջականության համար մղվող մարտական գործողություններին: 1995 թ. ստացել է կապիտանի, 1996-ին՝ մայորի, 2003-ին՝ փոխգնդապետի կոչում: Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ 2-րդ աստիճանի», «Մարտական ծառայության համար», «Վազգեն Սարգսյան», «Մայրական երախտագիտություն», «ՀՀ ԶՈՒ 20 տարի» մեդալներով: Բայց դժբախտաբար նա ողբերգական պատահականության զոհ դարձավ 2012 թ. հունիսի 15-ին:

Իմ դասարանն անվանակոչված է Դավիթ Պետրոսյանի անունով, բոլոր աշակերտներն էլ գիտեն, որ Գևորգի հայրիկն իր անցած մարտական ճանապարհով հարուստ կենսագրություն է թողել Արցախյան ազատամարտի տարեգրության մեջ: Ամեն անգամ անսահման կսկի-

ծով եմ հիշում, որ այդ անցած կյանքում մի տառապալից ու կիսատ կենսագրություն կա, որն ուղեկցվել է ձմեռային ձյունառատ սառնամանիքներով, գլխավերևում թափվող տեղատարափ անձրևներով, արևահարված օրերով... Այդ օրերը տարիներ են դարձել, բայց սովահարության, տնից-տեղից հեռու՝ հայրենի երկիրը պաշտպանելու մաքառումները չեն մոռացվել, այն պատմություն է դարձել, որ փոխանցվի սերունդներին:

Ամեն տարի հոկտեմբերի 20-ը ավանդույթ դարձած Հայրենասիրության օր կհամարվի մեզ համար: Այդ օրն իմ դասղեկական դասարանի աշակերտները հայրենասիրության մի նոր դաս կտան, Խուդոյ մականվամբ ազատամարտիկին նվիրված՝ հիշատակի նոր խոսքեր կասվեն, նոր էջեր կավելանան նրա մասին պատմող հուշամատյանին, և այն պատմություն կդառնա բոլորիս հիշողության մեջ:

Ինչքա՜ն ոգեղենություն կա մեր նահատակ տղաների հայացքներում, ինչքա՜ն ոգեկոչում...

http://usarmenianews.com/am-n-6124.html

21.10.2016

ՄԻ ՏԽՈՒՐ «ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ», ՈՐ ԾՆՆԴՅԱՆ ՕՐ Է ԱՎԵՏՈՒՄ

Դավիթ Պետրոսյան, Արցախյան ազատամարտի հերոսական ճանապարհ անցած նահատակ հայորդի...Նրա կյանքը շարունակվում է, մի կենսագրություն, որ այդ տխուր պատմության սկիզբն է դառնում ամեն անգամ այդ օրը՝ հոկտեմբերի 20-ին: Նա ծնվում է նորից, նրա մասին փառավոր մի անցած ճանապարհ է հիշվում, մի նոր կենսագրություն՝ իր ապրած ու չապրած օրերից: Իրական մի կյանք հյուսում է մի նոր պատմություն, որ անմահներն են միայն ունենում: Ու ամեն անգամ բռունցքվում, ուզում ենք տեր կանգնել նրա անցած կենսագրությանը: Անցյալը մաքառում էր և հերոսացում, ներկան դարձել է անցյալի հիշողություն, իսկ գալիքը կդառնա անմահություն, ու կասենք, որ նա մերն է, ով դարձավ բոլորինը... Այո՛, կասենք, որ նա դարձավ մերը, դարձավ իր ժողովրդի ու հողի նվիրյալը:

Ու մերը դարձած ազատամարտիկի որդուն՝ Գևորգ Պետրոսյանին, կանգնեցնում եմ կենտրոնում՝ շրջապատված համադասարանցիներով, իսկ նա ամաչում է, և ահա գլխահակ՝ դեմքին հայտնվում է մի թախծոտ ժպիտ: Այդ ժպիտը խոսուն է դառնում ու անհետանում, երբ նա ամաչկոտ, նույնքան էլ տխուր իր հայրիկի հետ զրույց է անում.

Հայրի՛կ, սիրելի՛ս, կարոտել եմ քեզ,
Ժպիտդ բարի, շոյանքներդ հեզ,
Քո խորհուրդների կարիքն եմ զգում,
Ու պատասխաններ երբեք չեմ գտնում:
Այցի եմ գալիս քո գերեզմանին,
Ցավ է իմ սրտին,
Արցունքներս մեղմ հոսում են շիրմիդ,

Ուզում եմ դեմքդ օծել համբույրով,
Սակայն օծվում է դեմքս արցունքով:
Հայրի՛կ, սիրելի՛ս, սիրուս է ցավում,
Երբ նկարիդ եմ կարոտով նայում,
Կարծես արցունքս է մաքրվում քո ձեռքով,
Շոյում ես դեմքս, այլա՝ համբուրում:

Տխրում է հոգիս, առկայծող մոմերը շատ կամաց, մեղմիվ նահատակ հերոսի ծննդյան օրն են ավետում, ծաղկաբույլերի բուրմունքով օծված լուսանկարից մեզ է նայում մի սուրբ հայացք, իմ սանիկների ակնածանքի խոսքերն են հնչում, որ պարուրվում են նրանց շուրթերից աղոթքի նման հնչող երգերի մեղեդայնությամբ: Բեմահարթակ եմ բարձրանում, երախտիքի խոսք եմ հնչեցնում, որ դառնում է ծննդյան օրվա միջոցառման ավարտն ազդարարող վերջաբան: Սերունդների ճակատագրի համար մտահոգ՝ մտովի փակում եմ վարագույրն այդ տխուր «բեմադրության», որ նահատակ ազատամարտիկի ծննդյան օրն էր ավետում և աղոթում նոր խաղաղ օրերի համար: Գևորգի մայրիկի՝ ինձ նվիրած վարդերի շիկացած այտերին լուսանկարից նայող հայորդու ժպիտն եմ տեսնում ու արտացոլանքը մարող մոմերի...

Բազմախորհուրդ է օրը: Այնքա՜ն շատ են այն նվիրյալները, որոնց ոգեկոչելով՝ իրականացնում ենք երնդի ճիշտ դաստիարակությունը: Նրանցից յուրաքանչյուրը բարոյականության դասական օրինակ է, որով ես սերմնացան եմ դառնում: Եվ իմ ցանած հունդերն առատ են... Փա՜ռք ընկածներին, նաև՝ ողջերին, ովքեր հայրենիքի դարպասներն են պահել, ովքեր դողում են մեր խաղաղ գիշերների ու անխռով այգաբացների համար:

http://usarmenianews.com/am-n-6149.html

23.10.2016

ԱՆԱՆՈՒՆ ՄԻ ՆԱՄԱԿ. «ՈՒՇԱՑԱԾ ԻՄ ՍԵՐ»

Գեղեցիկ է նա, անունն էլ իր նման սիրուն, բայց խնդրեց ինձ այս նամակը հրապարակելիս իր անունը չգրել: Միշտ էլ նկատել եմ, որ ավագ դասարաններում դպրոցականների մոտ առկա են հոգեկան ահանգիստ հույզերը, առաջին սիրո ապրումները, որոնք կարիք ունեն կիսելու մեկի հետ, և որքա՜ն գեղեցիկ է դառնում այդ հարաբերությունը, երբ դեռահասն իր սիրո ապրումներով անկեղծանում է նաև իրեն դասավանդող ուսուցչուհու հետ:

Նա կարդաց իր գրած շարադրանքը, հետո ինձ հանձնեց այն: Ժամեր շարունակ հոգու անհանգիստ տվայտանքների մեջ է եղել, վերջապես համարձակություն է ունեցել՝ խոստովանելու իր անկեղծ սիրո մասին: Այնտեղ կորցրած սեր կար, հուզումնառատ խոսքեր, հիասթափություն, անցած օրերի ցավոտ հիշողություն: Եվ նա ցույց է տալիս ինձ մի լուսանկար՝ դեմքով ոչ տեսանելի մի զինվոր՝ ալ վարդերի մի հրաշագեղ փունջ ձեռքին, որ նվիրել էր այս սիրուն աղջկան, բորբոքել մեծ սեր ու անհուն կարոտ: Թերթում եմ տողերը նրա, խոհերիս մեջ իմ առջև նստած աշակերտուհին է, որ չցանկացավ իր մասին իմանան, բայց համաձայնվեց տեսանելի դարձնել իր անհանգիստ խոհերը մի անցած, բայց չմոռացված սիրո մասին:

«Ուշացա՛ծ իմ սեր, կարոտում եմ քեզ: Չեմ ուզում խոսել, նաև դժվար է, բայց փորձում եմ... Ցավում է սիրտս, քանզի ես վախենում եմ «ուշացած» բառից: Եկավ մի պահ, երբ ցանկություն ունեցա խոստովանել, բայց դժվար էր, լռեցի...Ուշացած զղջում...Պահեր ունեցա իմ կյանքում, որոնցից չօգտվեցի...Ուշացած ափսոսանք: Արթնացա այն ժամանակ, երբ ինչ-որ մեկն ինձանից առաջ էր ընկել...Ուշացած հիասթափություն...Վազեցի կանգառ այն ժամանակ, երբ գնացքը վաղուց գնացել էր...Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ եմ ես միշտ ուշացել:

Խավար է ու մութ, ես կրկին մենակ եմ ու նորից քեզ հետ: Էջերն եմ թերթում այն հին գրքերի, որոնք բազմիցս վերընթերցել եմ: Եվ փորձում եմ փոքր-ինչ շնչել օդն այն օրերի, որ երբեք չեն կրկնվի: Ների՛ր, որ երբ եկավ ամենակարևոր պահը, համրացա, ու վախը հաղթեց թե՛ ինձ և թե՛ իմ մեջ ապրող մարդուն: Ինչքա՜ն ուշացած խոստովանություններ կան իմ մեջ, ինչքա՜ն աններելի ուշացումներ: Իմ ուշացած խոստովանությունը հենց լռությունս էր, ասում են՝ այնտեղ կեղծիք չկա, բայց նա էլ

չէր անկեղծ: Ների՛ր, իմ խոստովանությո՛ւն, մենք միասին ենք ուշացել: Իմ երեկն էլ փոխարինեցի այսօրով ու հետո հասկացա, որ ինձ մոտ ուշացած է ամեն ինչ...Ուշացած են բառերը, որ պիտի ասեի, հանդիպումը, որ չկայացավ, սերը, որ առայսօր չի մարել»:

Այդտեղ նաև չափածո տողեր կային, մի նոր սպասում, որ շարադրել էր պահի թելադրանքով:

Երեկ ասել էիր, որ պիտի գայիր նորից ինձ մոտ,
Երեկն էլ անցավ, իսկ դու չկայիր... հիմա ես եկել...
Թե՛ կուզես մնա, թե՛ ո՛չ, հեռացի՛ր, բայց այնքան հեռու,
Որ չզգամ անգամ կիսաքաղցր ու կիսապ ներկայությունդ:
Թե կուզես զղջա՛ կամ թե արտասվի՛ր
Չարտացված կյանքիդ, կորստիդ համար:
Այցելի՛ր, ծնկի՛ր շիրմի կողքին հերոս տղերքի,
Նրանց բողոքի՛ր, մեկ է, անցյալից ոչինչ հետ չի գա,
Ինչքան էլ տանջվես, տառապես կրկին,
Մեկ է, անցյալի մեր լավ հուշերը, մեր լավ օրերը,
Մեր ժպիտները կմնան այնտեղ:

Իմ աշակերտուհու ձեռագիր տողերի տպագիր շարվածքն եմ նորից ընթերցում, մտքերով նրա անցած օրերի հետ եմ... Այդ օրը՝ մեկ տարի առաջ, երբ մտա դասարան, նա շատ հուզված էր, արտասվախառն աչքերով: Մի վերնագիր ասացի՝ «Ես հոգու խաղաղություն եմ ուզում», որ շարադրի իր հույզերը, գուցե թեթևանա... Երբ ինձ հանձնեց գրածը, այնտեղ տեսա մի նոր ծլարձակող սեր, որտեղ աղջկական հուզումնալից ապրումներ կային ու զինվոր տղայի անկեղծ խոստովանություն. **«Հին ժամանակներում ծովահենները կռվել են ու արյուն թափել գանձերի համար, իսկ ես առանց կռվելու և առանց արյուն թափելու՝ գտել եմ իմ գանձին»:**

Որքա՜ն եմ ափսոսում այս կորցրածի համար, և ես էլ ուզում եմ, որ այդ ուշացած սերը նորից գա, գուցե և կրկին, բայց նորից այցելի նրան ու գտնի իր գանձին:

http://usarmenianews.com/am-n-6179.html

24.10.2016

ՓՈՔՐ ՍՐՏՈՒՄ ՉՏԵՂԱՎՈՐՎՈՂ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԵԾ ՍԵՐԸ

Դպրոցականների աշնանային արձակուրդի օրեր են, ուսուցիչներս նորից դպրոցում ենք, իսկ ես իմ աշակերտների հետ եմ, նրանց տետրերն եմ թերթում, անկեղծության այն օրվա դասաժամն եմ հիշում, երբ այդ դասարանում ստեղծագործական ազատ թեմայով շարադրությունը դարձել էր կարոտ, անցած կորսված օրերի մասին մի նոր ափսոսանք:

Նա կարդաց իր գրածը, նաև խնդրեց՝ հրապարակելու դեպքում իր անունը չգրել, այն կդառնա մի դեռահաս աղջկա կողմից գրված անկեղծ խոսք, որ սիրել է մի ժամանակ, հանդիպել նրան, բայց օրեր են անցել, բաժանումն անխուսափելի է դարձել, իսկ այն ավելի է սաստկացրել կարոտը, որ երբեմն այցելում է նրան. «**Կյանքում լինում են պահեր, որոնք փորձում ենք մոռանալ, պահեր, որոնք ցավ են պատճառել և միաժամանակ՝ ուրախացրել: Կան մարդիկ, որ նման են այդ պահերին՝ մեկ ուրախություն են պատճառում, մեկ՝ տխրեցնում: Հոգով ապրած պահերը դժվար է մոռանալ, մանավանդ նրա հետ, ում կողքին գտնվելիս կտրվում էիր աշխարհից, ում հետ մոռանում էիր ամեն մի ցավ:**

Մարդն իդեալական չէ, բայց լինում են իդեալական պահեր: Երանի՜ այն օրերը չվերջանային կամ նորից կրկնվեին… Երբ դրսում անձրև էր, նրա կողքին գտնվելով կամ ձայնը լսելով՝ ջերմություն էի զգում, թեթևանում օրվա հոգսերից: Դժվար է մոռանալ նրան, ում ձեռքը բռնելով՝ մտովի կյանքս էի պատկերացնում, ու այդ կյանքը լի էր ուրախությամբ: Ինչքա՜ն դժվար է լինել նրան այդքան մոտիկ, բայց, միևնույն ժամանակ, այդքան հեռու… Ինչքա՜ն ծանր է նրան ամեն օր տեսնել, զգալ նրա ներկայությունը, բայց գիտակցել, որ նա քեզ հետ չէ: Ես երբեք չեմ մոռանա նրա հետ անցկացրած յուրաքանչյուր րոպեն, երևի թե իմ այդ մեծ սերը չէր տեղավորվել նրա այդ փոքր սրտում: Հասկացել եմ նաև, որ պետք է ապրել ներկայով ու ապրածդ գեղեցիկ օրով: Կյանքում ամեն ինչ էլ անցողիկ է, ոչինչ հավերժական չէ, ուղղա-

կի պետք է վայելել այս դառը կյանքի քաղցր պահերը»:

Դպրոցական սերը չնայած երբեմն դեռահասին տանում է դեպի անհուսության եզրեր, բայց ես չեմ ուզում այս սիրուն աղջկան տեսնել հոռետեսական, տխուր ապրումների մեջ: Ու նորից արձագանքն եմ լսում իմ աշակերտուհու արտահայտած այն գեղեցիկ խոսքի, որ իր մեծ սերը գուցե և չի տեղավորվել այն պատանու փոքր սրտում, որն էլ նրանց տարել էր բաժանման: Իմ մտապատկերում նրան եմ տեսնում՝ հավատացած, որ մի օր կգտնի մի իսկական սեր, որտեղ կտեղավորվի իր այդ մեծ զգացումը, այն ժամանակ անցողիկ չեն լինի պահերը, ու հավերժությամբ կօծվեն իր երջանիկ օրերը:

http://usarmenianews.com/am-n-6190.html

25.10.2016

ԵՎ ՍԻՐԵԼՆ ՈՒՆԻ ՍԱՀՄԱՆ, ԵՎ ՆԵՐԵԼԸ

12-րդ դասարանում իմ աշակերտուհին՝ Սյուզաննա Կարապետյանը, ինձ հանձնեց տետրի թերթերի վրա ձեռագիր գրված տողեր: Նա հրաժարվեց բարձրաձայն ընթերցել: Աշակերտները հորդորում էին կարդալ, իսկ նա մերժեց, բայց հայացքս ընկավ նրա տողերին, ու մի պահ զարմացա. «**Ոչ մի անգամ չեմ ափսոսացել, որ ինչ-որ մեկը հեռացել է իմ կյանքից, եթե հեռացել է, ապա նա տեղ չուներ իմ կողքին…**»:

Ես ինքս էլ մտորումների մեջ եմ, նա շատ ազնիվ է, բարեհամբույր ու ճշմարտախոս, համեստ բնավորությամբ մի աղջնակ, մի՞թե նա չի ափսոսացել կորցրածի համար, ու հետաքրքրությունից դրդված՝ հայացքս հառում եմ մյուս տողերին. «**Ասում են՝ ընկերդ կդավաճանի, թշնամիդ՝ ոչ: Ես ինքս էլ կատարել եմ և՛ վատ, և՛ լավ արարքներ, բայց նաև այդ ճանապարհին հասկացել եմ, որ պետք չէ վստահել ամեն մեկին: Նույնիսկ ափսոսում եմ, որ ոմանց նվիրել եմ իմ թանկ ժամանակը**»:

Երբ օրեր անց կարդացի մեր հայրենակից գրողի պատմվածքներից մեկի մասին իմ աշակերտուհու տպավորությունը, այնտեղ տեսա անցածի կորստի համար ափսոսացող իմ աշակերտուհուն: Ինձ թվաց՝ ես նրան նորից վերագտա այս տողերում. «**Երբ Լևոն Ադյանի «Անձրևից հետո» գրքի բովանդակությանը նայեցի, առաջինն աչքիս ընկավ «Ապաշխարանք» վերնագրով պատմվածքը: Այս կյանքում ամեն մեկս մի այնպիսի արարք ենք կատարում երբեմն, որ միշտ էլ զղջում ենք, ափսոսում, ապաշխարանքի կարիք ենք զգում: Այդ վերնագիրն իմ հոգու անհանգիստ տվայտանքներին համահունչ էր երևի, որ մի շնչով կարդացի: Շատ դուր եկավ ինձ, մանավանդ, որ վերջաբանն անկախատեսելի էր: Անհամբեր սպասում էի, թե ինչ կլինի հետո, բայց այդ հետո-ն մտքերս իրար խառնեց, սկզբում չգիտեի՝ ում մեղադրել, ում արդարացնել:**

Դպրոցական օրերի սեր կա պատմվածքում՝ մաքուր ու անեղծ, որ հատուկ է մեր տարիքի անչափահասներին: Գեղեցիկ էր Էլենի և Գևորգի սերը, բայց աղջիկը սխալ թույլ տվեց, երբ վստահեց իր ընկերուհուն:

Մի կողմից խղճում եմ նրան, որ տասներորդն ավարտելուց մեկ ամիս անց ընկավ Արսենի ու Վարդուհու պատրաստած թակարդը: Ընդունեց ընկերուհու հրավերը՝ քեֆի գնալ սառը աղբյուրի մոտ, նրա եղբոր երկու ընկերների հետ: Էլենը չգիտեր, որ այնտեղ կլիներ Արսենը, իսկ վերջինս անտարբեր չէր նրա նկատմամբ: Ի՞նչ անենք, որ Գևորգն այդ օրը գյուղում չէր, նա չպիտի գնար նրանց հետ: Նաև Էլենը մեղավոր էր, նա թույլ տվեց, որ Արսենն իրեն համբուրեր, և հաջորդ օրը արժանացավ Գևորգի զայրույթին: Արսենը մի քանի րոպեով երջանկանալու համար ոչնչացրեց մի գեղեցիկ սեր, նա օգտվեց Էլենի միամտությունից:

Գևորգն անսահման սիրով նվիրված էր Էլենին, իմ կարծիքով, պիտի ներեր նրան: Ասում են՝ եթե սիրում ես, պետք է ներես, բայց նա չներեց, միայն տարիներ հետո նա զղջաց ու եկավ Էլենի մոտ այն ժամանակ, երբ երկուսն էլ ընտանիք ունեին: Էլենի անհաջող ամուսնական կյանքը վաղուց նրան զգացնել էր տվել իր սխալը, նա գիտեր, որ բաց է թողել երջանիկ ապրելու իր հնարավորությունը, իսկ դրանում մեղավոր էր ինքը: Չեմ կարողանում բացատրել, թե ինչու, երբ Գևորգը գնաց Էլենի մոտ, վերջինս զանգեց նրա կնոջը, և շուտով նա եկավ իր ամուսնու հետևից: Էլենը երջանիկ կլիներ Գևորգի հետ, երևի ուրիշի դժբախտության վրա չցանկացավ կառուցել իր երջանկությունը: Երկուսն էլ դարձան պատահականության զոհ, ամուսնացան առանց սիրո, մի բան, որ մեր շրջապատում էլ հաճախադեպ է:

Ես հիմա գիտեմ, թե ինչ է կարոտը սիրած էակի նկատմամբ: Միայն կորցնելուց հետո հասկանում ես, թե որքան թանկ է նա: Կարոտն է ստիպում մարդուն՝ հասկանալ, թե ինչքան ես սիրում դիմացինին: Նայում ես աստղազարդ երկնքին, հասկանում, թե ինչքան ես կարոտում նրա աչքերի փայլը, հայացքդ հառում ես մեկին, հիշում ես նրան, ուրեմն, գնահատենք այն, ինչ ունենք և բաց չթողնենք մեր երջանկությունը»:

Վերջերս Աղյան գրողի ստեղծած կերպարներն իրենց մտորումներով միահյուսվում են իմ աշակերտների անձնական ապրումներին: Այդ գրական հերոսները սովորեցնում են նրանց կյանքի արվեստը, ճշմարիտ ու ազնիվ ապրելու ճանապարհը, և ես ուրախ եմ, որ իմ աշակերտուհին էլ ափսոսանք ունի կորցրածի համար, նույնիսկ խորհուրդ է տալիս, որ կյանքում սովորենք գնահատել ու պահպանել այն, ինչ թանկ է մեզ համար: Արժեքների, մարդկային հարաբերությունների, զգացմունքների ու ապրումների վերագնահատում ու արժևորում: Թերևս այսպես կարելի է վերծանել նրա ապրումների ենթատեքստը:

http://usarmenianews.com/am-n-6211.html

26.10.2016

ՉՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿ

«Երկար մտորելուց հետո միայն ձեռքս մեկնեցի թղթին, որ անշունչ տառերով շարադրեմ հոգուս ասելիքը, հանձնեմ անծայրությանը, որ կուտակվելով՝ արդեն սպառնում է դուրս հորդել հրաբխի նման»,-հիացմունք պատճառող այս տողերը մի քանի անգամ կարդացի: Զգացի, որ սրտի անկեղծ խոսք կա այստեղ, առավել ևս, երբ 12-րդ դասարանում սովորող աշակերտուհի Լադա Արզումանյանն ասաց, որ ցանկալի է իր անունն էլ գրվի, նույնիսկ նա իր նկարն էլ ուղարկեց ինձ՝ տեղադրելու հրապարակվելիք այս հոդվածում, որտեղ մի չուղարկված նամակ կա, մի մտացածին սեր՝ անհասցե ու անվերնագիր, բայց հույզերով ու ապրումներով լեցուն:

«Քարև իմ ցնո՛րք, իմ անուրջների իրակա՛ն պատկեր, իմ միայնությա՛ն տիրակալ, իմ մտացածի՛ն սեր: Գուցե գժվե՞լ եմ, գուցե պատկերդ լոկ ե՞ս եմ կերտել, գուցե թևավոր մտքիս ցնո՞րքն ես եղել: Գիտե՞ս, անուրջներից եմ հյուսել մեր հեքիաթը, որտեղ դու այն ծիածանն ես, որ հայտնվում է իմ կյանքի ամեն մի անձրևից հետո: Բայց ո՞վ ես, որտեղի՞ց հայտնվեցիր իմ սավառնող երևակայության մեջ: Մտքիս թռիչքով կերպարդ կերտելով՝ զգում եմ, որ երբեմն սիրտս սովորականից արագ է բաբախում, որ հոգուս հանդարտ ծովի ալյակները փրփրադեզ ալիքներ են դառնում, իսկ սրտումս մի նոր հուզում է մոլեգնում: Կարծես սիրտս քնից արթնանում ու սկսում է ապրել վառ գարունքով: Կարծես աչքերիդ համար են աչքերս բացվում: Ես ուզում եմ քեզ հետ լողալ սիրո ծովում, քեզ հետ ճախրել իմ անուրջներում: Աշնանային ցուրտ օրերի հետ դու ավելի ու ավելի իրական ես դառնում: Ամեն անգամ աշնանային մշուշի միջից տեսնում եմ քեզ, եվ դու ինձ շշնջում ես լոկ երեք բառ. «Ես սիրում եմ քեզ»: Ինչքա՜ն սեր, ինչքա՜ն երջանկություն և հույզեր են լինում այդ պահին: Սակայն երբ փորձում եմ քեզ դիպչել, դու անհետանում ես: Անքա՜ն շատ մտքեր ունեմ, որ պետք է քեզ ասեմ և բոլորի հերթականությունն եմ փորձում պահպանել: Գուցե գրածս

տողերը ոչինչ են, բայց ուզում եմ դու էլ մի օր ցնորվես ու քո ցնորքի մեջ դու ինձ գտնես: Գիտե՞ս, հաճախ մենք միայնակ ենք լինում, բայց շարունակում ենք մտքերով միասին ապրել: Հնարավոր է՝ դրսում անձրև է, բայց կարևորը մեր հոգին է, որ երբեք թաց չի լինում»:

Դասարանում առաջին նստարանին նստող իմ աշակերտուհու հետ եմ մտքերով, մի հեզիկ ու շատ բարի կերպար, որ իր այս շարադրանքը վերնագրել էր «**Ուղարկված նամակ**»: Նրա մեղմիվ ժպիտն էլ տողեր է հյուսում, այդ տողերի հետքերով գնում եմ, իմ անուրջներում տեսնում եմ մի պատանի, նա ընթերցում է այդ տողերը, ու իմ մտորումներում այս սիրուն աղջկա շարադրանքը դառնում է ուղարկված նամակ, որտեղ անշունչ տառերի տեսքով շարադրված հոգի կա, իսկ նրա տողերում՝ իրական անբիծ ու մաքուր սեր:

http://usarmenianews.com/am-n-6225.html

27.10.2016

ԱՆԱԿՆԿԱԼ, ՈՐ ՉԵԻ ՍՊԱՍՈՒՄ

Վերջերս տարակարծություններ կային, որ հայոց լեզվի նկատմամբ այնքան էլ հետաքրքրություն չկա, կարծես աշակերտների մոտ մարել է սերը այդ առարկայի հանդեպ: Ես, կարելի է ասել, նույն հետաքրքրությամբ դրդված՝ հարց ուղղեցի իմ աշակերտներին տարբեր դասարաններում, թե ինչպես են տրամադրված առարկայի նկատմամբ: Այսօր ես հարմար եմ գտնում 11-րդ դասարանի երեք աշակերտի գրած տողերից մեջբերում կատարել, որոնք կարդացի ժպիտով ու շնորհակալական զգացումով: Նրանք այն աշակերտներն են, որոնց ես հաճախակի դիտողություն եմ անում, երբեմն էլ նրանք շատերի նման զերծ չեն մնում անբավարար գնահատականներից:

Պետրոսյան Գոռ –«**Կարծում եմ հայոց լեզուն այն առարկան է, որ եթե չուզես էլ, պիտի սովորես, անպայման պիտի սովորես, որ այս կյանքում կարողանաս հասնել ինչ-որ բանի: Իսկ մեր ուսուցչուհի Պողոսյանի բացատրածն ամենաանխելք աշակերտն էլ կհասկանա»:** Ուզում եմ ասել Գոռին, որ շնորհակալ եմ այս խոսքերի համար, ես այնպես հասկացա, որ իմ աշակերտի վաստակած այն նվազագույն դրական գնահատականը, որ երբեմն ստանում է նա, իմ բացատրածի արդյունքն է, որ ընդամենը լսել է նա, բայց որքան լավ արդյունքի կհասեր, եթե երբեմն հայոց լեզվի դասագիրքն էլ բացեր…

Հարությունյան Հարություն-«**Հայոց լեզուն շատ պետքական առարկա է, յուրաքանչյուր հայ պետք է տիրապետի իր լեզվին: Չնայած ես լավ չեմ սովորում, բայց սիրում եմ այդ առարկան դասավանդող ուսուցչուհուն: Երբեմն նա բարկանում է, որ դաս չեմ սովորում, պատահում է, որ ես վիրավորվում եմ նույնիսկ, բայց հետո հասկանում եմ, որ**

նրա դիտողությունները տեղին են ու գիտակցում եմ նաև, որ պիտի այդ առարկան սովորեմ»:

Ինչ լավ է, որ իմ աշակերտը՝ գիտակցել է, որ պիտի հայոց լեզու սովորի, առավել շատ զարմացած եմ, որ նա սիրում է իրեն դասավանդող ուսուցչուհուն: Իսկ ես այդ դասարանում երևի ամենաշատը Հարությունին եմ դիտողություն անում, որ անուշադիր է, ցրված, անպատրաստ: Հուսով եմ, որ նա այուհետ դաս կսովորի, դեռ ինձ զարմացնելու շատ առիթներ կլինեն, բայց գիտի՞ իմ աշակերտը, որ ուսուցչուհուն սիրելու վարձատրությունը նրա դաս սովորելն է:

Մամունց Հակոբ-«**Չնայած հայոց լեզուն ամենակարևոր առարկան է, բայց ես սիրում եմ գրականությունը, որը շատ հետաքրքիր է: Ես լավ չեմ սովորում հայոց լեզուն, անկեղծ ասած՝ ինձ համար, կարծում եմ, կարևոր չէ, որ իմանամ գոյականի հոլովները կամ ասենք՝ նախադասության ձևաբանական վերլուծությունը: Ինչո՞ւ չեմ սիրում դրանք, չգիտեմ, գուցե ծույլ եմ, դա՞ է պատճառը»:**

Ես գիտեմ, որ Հակոբը շատ բարի, ազնիվ ու անկեղծ աշակերտ է: Լավ մարդ դառնալու համար, իհարկե, կարևոր չէ գոյականի հոլովներն իմանալը, բայց ես ուզում եմ իմ աշակերտին ասել, որ շատ դյուրին ձևով են ընկալվում այդ հոլովները և մյուս դասանյութերը, ուղղակի մնում է չվախենալ ու չհամարել, որ կա մի բան, որ կարելի է չհասկանալ, երբ նախադասությունների մեջ միշտ էլ գործածվում է, ու բառը հոլովվում, և հանկարծ այն դառնում է տղայի կամ տղային, տղայից կամ տղայով…

Հուսով եմ, որ իմ աշակերտները շուտով կիմանան այս հրապարակման մասին, որն էլ առիթ կտա, որ նրանք ավելի ուշադիր լինեն առարկայի հանդեպ, բայց հարմար գտա այդ դասարանի այս խմբանկարը տեսանելի դարձնել՝ չառանձնացնելով նրանց, նաև համոզված, որ նրանք հայոց լեզվի թույլ իմացությամբ էլ հայրենիքին նվիրված ազնիվ զինվորներ ու հրաշալի մարդիկ կդառնան: Սրանում վաղուց համոզվել ենք Արցախյան պատերազմի և առօրյա մարտական հերթապահություն իրականացնող շատ ու շատ զինծառայողների օրինակով:

http://hayernaysor.am/

27.10.2016

ՀՈԳԻ ԿԵՂԵՔՈՂ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ…

Դեռ սեպտեմբերից, երբ այդ դասարանը մտա, նա չկար…Իմացա, որ հանգամանքների բերումով՝ արդեն մեզանից ոչ հեռու գյուղական դպրոց է հաճախում: Այս օրերին նա մի նոր հրաշալի զգացողություն պարգևեց ինձ, երբ գրեց, որ կարոտել է իր ուսուցչուհուն և նրա դասավանդած դասերը: Ինչո՞ւ ինձ թվաց, որ նա անհանգիստ է, ու նրան անմիջապես առաջարկեցի գրել կարոտի մասին, կարոտ սիրո, կարոտ հայրենիքի, կարոտ նվիրումի, կարոտ հավատարմության…

Կարոտ, որ իր հետ թախիծ է բերում, երբեմն անսահման մեծ երջանկություն, կարոտ, որ դեռահաս աղջկան կարող է մեծ ցավ պատճառել… Ու կարոտը թևին տալով՝ իր տխրամած մտորումներով ինձ հասավ, որտեղ մի սիրուն աղջիկ կար, որ չէր ուզում իր անունը գրել, նա չէր ուզում նաև տեսանելի լինել, բայց սրտի խոսք ուներ, անսահման սեր, որ կորցրել էր և հետքն էր մնացել իր պարզ ու մաքուր սրտում: Ապրիլյան պատերազմական օրերից ծնված մի սեր, որ դողդողաց օդում, ապրիլին հանկարծակի տեղացած ձյունից սարսռաց, արկերի հարվածներից կուչ եկավ, բայց ապրեց:

«Բայց ապրե՞ց»,-կրկնում եմ ես, մի՞թե ապրեց այդ սերը, երբ ինձ ուղարկած նրա կարոտի խոսքերում ես պեղեցի կորուստ. «**Սիրտս լցված է մշուշով, և թույլ է ու տկար: Դուրսը հիմա ցուրտ է, հոգիս՝ ալեկոծված: Չէի կարող հզոր լինել և այդքան ուժգին պայքարել: Ասես մոլորված եմ, հոգնած ու մենավոր: Երբ տխուր երեկոն իր մթությունն է փռում սրտիս մեջ, ես իմ անպատասխան սիրուց տանջված՝ սկսում եմ երազներ հյուսել: Ասես նա ականջիս շշնջում է, որ նորից կգա ու իր հետ կբերի մի նոր արշալույս: Ես կարծում էի՝ գտել եմ իմ կյանքի միակ, անկրկնելի ու անարատ սիրուն, բայց երբ արթնացա, արդեն կորցրել էի: Հիմա հարազատ է դարձել ինձ աշունը: Աշնան անձրևի պես՝ ես լացում եմ անընդհատ: Լացում եմ կարոտից: Նա ջարդեց, փշրեց սիրտս, որտեղ ինքն էր ապրում, կարոտը դարձրեց ինձ ընկեր, կարոտ, որ ապրելուց քաղցր է, իսկ ես արդեն հիվանդ եմ այդ սիրուց: Հասկանում եմ, որ, իրոք, սիրում եմ, բայց ոչինչ փոխել չեմ կարող: Ես կարոտում եմ, տառապում անվերջ, միշտ աղոթում եմ, չեմ ուզում տանջվել**

կորցրածի համար: Աշնան օրերն էլ տխուր են, սառը՝ ինչպես իմ սիրտը՝ կոտրված ու թախծոտ, բայց սիրով լցված»:

Ես չգիտեմ իմ հրապարակումներով որքանով եմ օգնում այս սիրահարված անմեղ էակներին, բայց ուզում եմ հոգում կսկիծ ունեցող դեռահասներին ասել, թե ո՞ւմ է պետք անպատասխան սերը, որ արցունք է բերում, անհուն տառապանք: Դեռ ինչքա՜ն բարձունքներ կան, որ պիտի հասնեք, ինչքա՜ն գեղեցիկ զգացողություններ կան, որ պիտի ապրեք: Ազատվե՛ք հոգի կեղեքող տանջանքներից ու զգացմունքներից, հաղթահարե՛ք այն, որ կարողանաք այս կյանքում ապրել:

http://usarmenianews.com/am-n-6236.html

29.10.2016

ԻՐԻԿՆԱՅԻՆ ԱՂՋԱՄՈՒՂՋԻ ՏԽՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԸ

Գիտեմ, որ այդ վիպակը գրողի ամենասիրելի ստեղծագործությունն է, որի մասին, որպես ուսուցչուհի, ամիսներ առաջ հասցրել էի գնահատանքի խոսքեր գրել: Նաև զարմանալի չէր, որ այս օրերին վիպակների և պատմվածքների միակ ժողովածուն 12-րդ դասարանում աշակերտները հերթականությամբ տանում էին ընթերցում: Եվ չզարմացա, որ գիրքը կարդալու ցանկություն հայտնեցին նաև մյուս դասարաններից: Իսկ այս մեկը՝ Լադա Արզումանյանը՝ շատ համեստ ու ազնիվ մի աշակերտուհի, կարդաց համանուն վիպակը էլեկտրոնային տարբերակով և հաջորդ օրն ինձ ուղարկեց իր տպավորությունը կարդացածի մասին:

«Հոգիս անչափ տխրեց, երբ կարդացի Լևոն Ադյանի «Իրիկնային աղջամուղջ» վիպակը: Որքա՜ն շքեղ ու հարուստ է այն, հիշողություններ կան այնտեղ, սեր, կարոտ, խաբեություն, պատերազմ, կորուստ, ցավ…Եվ որքա՜ն ծանր էին Շահում տատի կյանքի էջերը: Բայց նա ուժեղ էր, կարողացավ տանել կյանքի հասցրած ամեն մի հարված: Միայնակ մեծացրեց իր հինգ որդիներին և ցավալիորեն ապրեց նաև նրանց կորուստը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Պատկերացնում եմ, թե ինչպիսի զգացումներ ուներ Շահում տատն այն ժամանակ, երբ գիտակցում էր, որ որդիները գտնվում են իրենից հազարավոր կիլոմետրեր հեռու՝պատերազմի կործանարար ձեռքերում: Երևի այդ ցավի ապրումներին միախառնվել էին նաև դատարկությունն ու անորոշությունը, անզորությունն ու կսկիծը, որ կեղեքում էին նրա սիրտը: Բայց ակամայից նա սովորեց դրան ու ապրեց հոգին կեղեքող ցավով բոպե առ բոպե, ժամ առ ժամ, օրեր, տարիներ շարունակ: Իսկ երբ հասավ կյանքի մայրամուտը, նա արդեն կուրացած էր, և գլխում իրար էին խառնվել լավ ու վատ հիշողությունները: Երևի նրա սիրտն այրվում էր անհուն կարոտից ու հետ չվերադարձող, նորից չկրկնվող անգին պահերից: Եթե որդիների կորուստը չլիներ, երևի թե

նա կարողանար փակել իր անցյալի ցավոտ էջերն ու հանգիստ ապրեր նրանց երջանկությամբ:

Իմ ուշադրությունը գրավեց նաև Սամվելի կերպարը: Երբ երկարատև որոնումներից հետո գտան նրան, պարզվեց, որ արդեն փոխել էր հավատը, լեզուն, ամուսնացել էր օտար աղջկա հետ և արդեն երեխաներ ուներ: Չեմ կարողանում մեղադրել հայրենիքից հեռու ապրող այդ մարդուն: Նա միայնակ էր այդ օտար երկրում, հույս չուներ, որ երբևէ կհաջողվի իրեն վերադառնալ հայրենիք, և այլ բան չէր մնում անելու, քան համակերպվել և շարունակել ապրել ուրիշ հավատքով, ուրիշ լեզվով: Կարոտ ու տանջանք կա այդտեղ, հոգին խոցող ուժգին հարվածներ:

«Իրիկնային աղջամուղջ» վիպակը կարդալուց հետո մտքերս խառնվեցին իրար, բայց բառերն անկարող են բացատրել իմ ապրած հուզմունքը: Միայն հասկացա, որ կուզենայի մարդու ուղեղում կամ սրտի մեջ մի կոճակ լիներ, որի օգնությամբ հնարավոր լիներ չզգալ ոչինչ, մի որոշ ժամանակ ապրել առանց սրտի, առանց զգացմունքների: Մեր կողքին էլ պատերազմ կա, սգավոր մայրեր ունենք, անհուն տառապանք: Ամենացավալին այն է, որ կորցնելով մեզ համար ամենաթանկ մարդկանց՝ մեզ ոչինչ չի մնում, քան հարմարվել նրանց կորստին»:

Ընթերցեցի իմ աշակերտուհու տպավորությունը, և լռությանս մեջ այդ վիպակի մասին իմ գրած տողերն եմ մտաբերում. «Գյուղից հեռացած գրողի գրիչը հիշեցնում է ընթերցողին, որ **«հուշերի մեջ խորասույզ, կապույտ ստվերներով շղարշված ճանապարհով»** քայլելիս մտածում է այն մասին, որ այդ վայրերի հետ իրեն կապող շատ քիչ բան է մնացել: Ու հիշողության մեջ նորից երևում է, թե ինչպես Մեծ մայրը ձեռքը բռնած՝ նրան տանում է գյուղի գերեզմանատուն: Ծուրջբոլորը խոտ ու ծաղիկ է, թռչունների երգ, Մեծ մայրը գունատվում է, շուրթերը դողում են. **«Գնա էն կողմը, ծաղիկ քաղի՛ր, բե՛ր դի՛ր քարերին»:**

Իրոք, բառերն անկարող են դառնում՝ բացատրելու ապրած հուզմունքդ: Մի անհանգիստ և սիրտ կեղեքող տառապանք, որ մի նոր կսկիծ է բերում հեռվից…Տառապանք, որ վերնագիր ունի, հարազատ բովանդակության հարազատ անուն, ապրումների փորձ, որ զուգորդվում է «Իրիկնային աղջամուղջի» հետ: Եվ այդ հեռուներում երևում է բոլորիս հարազատ դարձած մեր համերկրացի Աղյան գրողը՝ մի վշտամորմոք որդեկորույս հայր, որ ծաղիկներ է խոնարհում իր երկու զավակների շիրիմներին:

http://usarmenianews.com/am-n-6294.html

30.10.2016

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՊԵՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱ, ՈՐ «ՎԱՏԻ» ՊԻՏԱԿԸ ՉԴՐՈՇՄՎԻ ԻՐ ՎՐԱ

Մանկավարժական գործունեությանս ընթացքում միշտ էլ ինչ-որ բան եմ սովորել իմ աշակերտներից և երբեք չեմ խուսափել դրանց մասին բարձրաձայնելուց: Ճիշտ թե սխալ երևույթներ կան, որ ժամանակի ընթացքում կյանքի դաս են դարձել և ուղեկցել ինձ ուսումնադաստիարակչական աշխատանքների ժամանակ:

Երբեք չեմ մոռանում 5-րդ դասարանում սովորող այդ աշակերտին: Սկսնակ ուսուցչուհի էի, բացատրում էի, որ երբեմն անձը կարող է ստանալ իրի հարց, և գրատախտակին գրեցի մի նախադասություն. «Որպես ուսուցչուհի՝ ես նրան շատ եմ հարգում» (որպես ի՞նչ):

Հանկարծ աշակերտներից մեկն ավելացրեց, թե կարծել եմ իրի հարց ստանում են միայն վատ ուսուցիչները, եթե հարգում են, ուրեմն լավ ուսուցչուհի է: Ու այդ օրվանից հասկացա, որ լինում են նաև վատ ուսուցիչներ, ուրեմն պետք է այնպիսին լինեմ, որ աշակերտների «սև ցուցակի» մեջ չհայտնվեմ:

Տարիներ առաջ, երբ բռնագաղթից հետո օտարությունից վերադարձա Արցախ և առաջին անգամ 10-րդ դասարան մտա, իմ առջև նստած աշակերտը զննող հայացքով նայում էր ձեռքերիս: Որքան զարմանալի, նույնքան անսովոր էր ինձ համար, բայց օրեր անց նրա մայրն ասաց, որ տղան ամեն օր իր ուսուցչուհու մատների բնական եղունգներով է հիանում: Անակնկալի եկա, բայց նաև առեղծվածը բացահայտվեց, ու ինձ համար պարզ դարձավ, որ ամենասուր հայացքը մեր առջև նստած աշակերտներն ունեն և նրանցից պետք է «զգույշ» լինել: Ու այդ օրվանից էլ ես սովորեցի՝ զգուշավորությամբ մտնել դասարան:

Մի օր միջին դասարաններից մեկում աշակերտներին առաջարկեցի դասանյութը կարդալ, բայց նաև զգուշացրի, որ ուշադիր ընթերցողին հետևեն, եթե որևէ մեկը չիմանա՝ որտեղից շարունակել, ապա անբավարար կստանա: Չնայած զգուշացրի, բայց ամենևին մտքովս չէր էլ ացնում, որ անուշադրության համար աշակերտին անբավարար կգնահատեի: Ստացվեց այնպես, որ դասարանի գերազանցիկ աշակերտուհին չիմացավ, թե որտեղից շարունակի...Աշակերտների մեծամասնությունն ինձ «պարտադրում» էր, որ այդ աշակերտուհուն անբավարար գնահատեմ: Արտաքուստ երևացող սառնասրտությամբ, բայց ներ-

քուստ անհանգիստ վիճակում՝ ես անբավարար գնահատեցի այդ աշակերտուհուն իր բազմաթիվ գերազանց գնահատականների կողքին:

Այդ օրը դասարանից դուրս եկա ինձ կորցրած, անմիջապես նրանց դասղեկին առաջարկեցի ծնողական ժողով հրավիրել: Ծնողների և դասղեկի հետ խոսում էի շատ բորբոքված, որ նոր եմ մտել այդ դասարանը, բայց միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունք և ընկերություն չտեսա: Պատմում էի, որ ոխակալությամբ լցված՝ մի շարք աշակերտներ կարծես բավականություն ստացան, երբ այդ համեստ ու գերազանց սովորող աշակերտուհուն անբավարար գնահատեցի, նաև հասկացա, որ ուսուցիչը չպետք է ավելորդ խոստովանություններ անի, բայց միաժամանակ նա պետք է իր խոստմանը տեր լինի:

Իմ շոշափած զգուշավորության մի քանի տարբերակների վերջում ուզում եմ ընդհանրացնել, որ ուսուցիչը միշտ էլ ուշադրության կենտրոնում է: Ուսուցիչը պետք է զգուշանա, որ «վատի» պիտակը չդրոշմվի իր վրա, այլապես նա կդառնա վատ ուսուցիչ: Ուսուցիչը պետք է իր խոսքի տեր լինի, ստելը ուսուցչին հարիր չէ: Եվ դեռ ինչե՞ր կան, որ պետք է ուսուցիչներս իմանանք, բայց նաև չխուսափենք սովորել նրանցից, ում մենք ենք սովորեցնում: Մանկավարժի ամենափոքր սայթաքումն անգամ կարող է շրջադարձային լինել և սխալ համոզմունքներ ձևավորել աշակերտների մոտ:

http://usarmenianews.com/am-n-6308.html

01.11.2016

ՍՈՎՈՐԵԼԸ ՄԻԱՅՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՉԷ, ՍՈՎՈՐԵՆՔ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

Կարծում եմ՝ ուսուցչուհուս մանկավարժական գործունեության ընթացքում տեղի ունեցած մի քանի դեպքերի պարզաբանմամբ կկարողանամ ասելիքս ձևակերպել: Բայց նաև ազնիվ զգացողությամբ եմ ասում՝ մենք պիտի սովորենք, որ կարողանանք սովորեցնել:

Շրջանային առարկայական օլիմպիադայի օրերն էին: Ոչ մասնագետներ էին կցված տարբեր առարկաների: Մտա դասարան: Մի հայացքով նկատեցի, որ բոլորն անծանոթ էին, հիմնականում՝ գյուղական դպրոցներից եկած աշակերտներ: Այն ժամանակ առաջադրանքները պատճենելու հնարավորություն չկար, քիմիայի համար նախատեսված առաջադրանքները պետք է գրատախտակին գրեի, աշակերտները՝ արտագրեին: Եվ շուտով մի որոշ ժամանակ անց առաջարկեցի՝ գրատախտակի մի մասը մաքրել, որ մնացած հարցերի համար տեղ բացվեր, շարունակեի գրել: Բոլորը զարմացած ինձ էին նայում, հատուկենտ աղջիկներ կային, մեծ մասամբ՝ տղաներ, և ահա նրանցից մեկը կանգնեց: Սպասում էի, որ նա կմոտենա գրատախտակին, բայց հանկարծ լսում եմ նրա խոսքը, որ դպրոցում ուսուցիչներն են մաքրում իրենց գրածը:

Ինձ համար անսովոր էր երևույթը, ինչո՞ւ չէ, երբեմն ուսուցիչն էլ կարող է մաքրել, բայց գիտեի, որ մեր դպրոցում իրար հերթ չտալով՝ օրվա հերթապահներն ապահովում են գրատախտակի մաքրությունը: Լուռումունջ սրբիչը վերցնում եմ, հանկարծ տղաներից մեկը տեղից վեր է թռչում, գալիս, մաքրում է գրատախտակը: Ես նայում եմ մյուսներին, հատկապես ինձ «ծանոթ» այն տղային: Նա գլխահակ նստած էր: Բայց ո՞վ էր մեղավորը՝ գրատախտակը մաքրող ուսուցի՞չը, որ իր գրածը ինքը պիտի պարտադիր մաքրեր, թե՞ աշակերտը, ում այդպես էին սովորեցրել:

Վերապատրաստման դասընթացներում եմ: Ուսուցչուհիներից մեկը մոտեցավ ինձ և ասաց, որ վաղը չի մասնակցելու այդ պարապմունքներին, բայց մայրենիի դասի մի թեմայի դասավանդման վերլուծություն ունի, ցանկալի է, որ այն վաղը փոխանցեմ մեկին: Վերցրի տասներկու թերթանոց տետրը, հետևի մասում բազմապատկման աղյուսակ կար, անմիջապես բացեցի տետրը ու մնացի զարմացած: Տետրը հետ վերա-

դարձրի, բայց նաև չխուսափեցի ասել, որ մայրենիի ուսուցչուհին մաթեմատիկայի համար նախատեսված տետրում չպիտի գրեր: Երկուսս էլ զարմացած էինք մեկը մյուսի վերաբերմունքով, ես ամաչեցի այդ տետրը վերցնել, իսկ նա ձեռք թափ տվեց, թե նորից ուրիշ տետրում արտագրողը չէ: Համոզված եմ, որ այդ ուսուցչուհու աշակերտներին եթե տեսնեի հայերենի տառերը տետրի քառակուսի վանդակներում գրելիս, երբևէ չէի զարմանա:

Տարիներ առաջ էր… Տարրական դասարանում բաց դաս լսեցի, հետո ուսուցչուհիների մոտ տարաձայնություններ առաջացան: Զարմանալի էր, որ սխալ մասնագիտական կարծիքներ կային, և այդ սխալը պիտի անցներ աշակերտներին: Որոշեցի նրանց բացատրել հայոց լեզվի գաղտնարաններից մի քանի օրենքներ, բայց իմ որոշումն անկատար մնաց: Ակնհայտ էր նրանց դժգոհությունը, որ իրենք ամեն ինչ գիտեն… Լռեցի, երբ օրեր անց ծնող էր բողոքում, թե երեխայի տնային առաջադրանքում ուսուցչուհու կողմից սխալ ուղղում կա: Ո՞ւմ մեղադրել՝ ծնողի՞ն, որ բողոքում է, թե՞ ուսուցչուհուն, որ չի ուզում սովորել:

Եվ ես ուզում եմ ամեն օր ասել, որ միշտ էլ պիտի սովորենք, սովորելը միայն աշակերտի համար չէ, սովորենք ամեն մի նրբություն, որ կարողանանք սովորեցնել: Սովորելու գործընթացն իսկապես արդյունավետ է դարձնում սովորեցնելու գործընթացը:

http://usarmenianews.com/am-n-6334.html

02.11.2016

ՈՐՊԵՍԶԻ ՈՒՍՈՒՑՉԻՆ ԼՍԵՆ, ՆԱ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

«Ասում են՝ եթե ուսուցչին սիրում են, ուրեմն առարկան նույնպես կսիրեն, բայց ես սիրած առարկա չունեմ»,- ուշադրությանս արժանացավ 12-րդ դասարանի աշակերտուհի Արմինե Կարապետյանի այս արտահայտությունը: Այդ միտքը շատ անսովոր էր ինձ համար, որ դա ասում էր մի աշակերտուհի, ով հայոց լեզվի դասերին միշտ պատրաստ էր ներկայանում և երբևէ նրա կողմից անտարբերության չի մատնվել այդ առարկան:

Իմ աշակերտներին տրված հարցը, թե ինչպես են տրամադրված հայոց լեզվի նկատմամբ, տարբեր կարծիքների արտահայտության առիթ տվեց: Այս օրերին դրանք էի ընթերցում, թե ինչպիսի վերաբերմունք ունեն առարկայի հանդեպ: Ինքնահավանություն չէի ցանկանա որակվի իմ զգացողությունը, բայց վստահ էի, որ պիտի դրական կարծիքներ լինեին: Եվ, իրոք, յուրաքանչյուրի խոսքում անկեղծություն կար, հարգալից վերաբերմունք լեզվի հանդեպ: Սովորությանս համաձայն՝ սկզբում թույլ կարողությունների տեր աշակերտների կարծիքներն իմացա, որից հետո անցա աչքաբաց դպրոցականների գրառումներին: Յուրովի տարբերվում էին մեկը մյուսից, բայց ամեն մեկում ընդհանուր խոսք կար, որ առարկայի նկատմամբ սերը նաև կապակցվում էր դասավանդող ուսուցչի հետ: Սիրած առարկա չունեցող իմ աշակերտուհու հաջորդ տողերում տեսա, որ նա իր պարտքն է համարում՝ միշտ էլ ուսումնասիրել հայոց լեզուն:

«Դարեր շարունակ հայ ազգը զավակներ, տարածքներ է կորցրել, սակայն լեզուն մնացել է անսասան: Ես՝ որպես հայուհի, հարգանքով եմ վերաբերվում մեր լեզվին և ուշադիր եմ լինում այդ դասաժամին: Երևի ուսուցչուհուս հանդեպ ունեցած իմ հարգանքից է: Ասում են՝ եթե ուսուցչին սիրում ու հարգում են, ուրեմն առարկան նույնպես կսիրեն: Ես սիրում և հարգում եմ ուսուցչուհուս, մանավանդ հանգստանում եմ,

երբ նա ընթերցում է մեզ համար որևէ ստեղծագործություն: Կարծես դասարանի վրա հանգստություն է իջնում, բոլորն ուշադիր լսում ենք նրան: Բայց որպեսզի ուսուցչին լսեն, նա պետք է նաև հասկանա աշակերտների հոգեբանությունը: Հենց այդպիսին է նա: Մենք կարողանում ենք ազատ կիսվել նրա հետ՝ չմտածելով, որ նա մեզ կնախատի կամ կվիրավորի: Հենց իրար հասկացված այդպիսի դասն եմ սիրում և համարում, որ դա է իսկականը»:

Բայց մի՞թե ես կարող եմ այդ «իսկականից» այն կողմ անցնել…Այդ դասարանը ես մտնում եմ հոգու խաղաղ մեղեդայնությամբ: Այնտեղ ապրումներ կան անհանգիստ, սիրառատ դեմքեր, ժպիտների անսահմանություն կա, անկեղծ խոստովանություն, այնտեղ ամբարված հարգանք կա, դեռահասության մի դժվար տարիք:

Մանկավարժական համբերության ու զսպվածության որակը թերևս այս տարիքային խմբի հետ տարվող աշխատանքներում ավելի ակնառու պետք է լինի: Հենց դեռահասների հետ համատեղ աշխատանքում է, որ պետք է ուսուցիչը հանդես գա կատարելատիպային կեցվածքով, քանի որ սա իդեալների ու համոզմունքների կառուցման հրաշալի տարիք է: Եվ եթե այս տարիքի աշակերտների արժեհամակարգի հետ կապված խնդիրներ ենք ունենում, ապա մեղքի բաժինը պետք է գտնել նաև դասավանդողների ու ծնողների մոտ, որոնց ընդօրինակում են դեռահասները:

http://hayernaysor.am/

05.11.2016

ՆՐԱՆՔ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՍԵՐ ԵՆ ԳՈՎԵՐԳՈՒՄ

Շարունակում եմ «հայոց լեզու» առարկայի նկատմամբ աշակերտների արտահայտած մտքերն ի մի բերել, բայց նաև համոզված ասել, որ նրանց մոտ, անկախ նրանից, թե ինչպես են սովորում, նկատելի է առանձնակի վերաբերմունք այդ առարկայի հանդեպ:

Դավթյան Տաթևիկ: Նա կեսախինդ է, ժպտերես ու համարձակ: Միշտ էլ պատրաստ է հայոց լեզվի դասաժամերին, բայց իր համար դժվարընկալելի է մեր լեզուն, ունի բարդ ուղղագրություն, այն պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն. «**Հայոց լեզուն անգին քարերի, հայկական անմնացորդ հուշերի թանգարան է, մեր ազգի պարծանքն ու խորհրդանիշը: Ես հետաքրքրությամբ եմ սովորում հայոց լեզվի դասերը, աշխատում եմ բաց չթողնել ոչ մի դասաժամ»:**

Օհանյան Մերի: Օրինակելի կերպար, ում կարելի է սիրել միայն իր պահվածքով, ձեռք բերած գիտելիքներով, ամենօրյա պատրաստականությամբ: Նա իր հարազատ գյուղից է տեղափոխվել մեզ մոտ, որտեղ դասավանդել են նրան հիանալի ուսուցիչներ: Հենց իր շարադրանքում էլ հնչում են գնահատանքի խոսքեր. «**Լեզվի դասերին հաճույքով եմ լսում ուսուցչուհուս, ով ջանք ու եռանդ չի խնայում մեզ հայոց լեզվի ամենաճոխ գանձարանին ծանոթացնելու համար: Բախտի բերմամբ ինձ միշտ դասավանդել և այժմ էլ դասավանդում են հրաշալի ուսուցչուհիներ, և ես իմ ունեցած գիտելիքների համար միայն նրանց եմ պարտական»:**

Իսրայելյան Լիանա: Նա ազնիվ է, շատ անկեղծ ու համեստ, խոսքն էլ հնչում է որպես ինքնախոստովանություն. «**Մենք անցնում ենք տարբեր առարկաներ, բոլորն էլ յուրահատուկ են: Ինձ համար հայոց լեզվի դասերը դժվար չեն, ուղղակի ալարում եմ լավ սովորել: Ինչպես հայրենիքը, այնպես էլ մեր լեզուն, կարիք ունի ամենօրյա պաշտպանության,**

ուստի մեզանից միայն մի բան է պահանջվում՝ ամեն օր սովորել և ավելի խորանալ հայոց լեզվի գաղտնարանների մեջ»:

Գրիգորյան Նարինե: Որքա՜ն եմ ուզում, որ այս սիրուն, երկարամազ աշակերտուհին միշտ այսպես սիրի իր լեզուն: Դեմքին միշտ ծիծաղն է խոսում, ազնիվ ու մեղմ հայացքով նա բարություն է սփռում: Եվ ինձ փոխանցված «գրագետ» բառի մի նոր ժպիտով ընթերցում եմ նրա տողերը և այդպես էլ տպագիր տառերի տեսք տալիս նրա խոսքերին. **«Ես սիրում եմ հայոց լեզուն, սիրում եմ իմ ուսուցչուհուն, որ ինձ սովորեցնում է այդ առարկան: Մեր լեզուն քաղցր է, մենք պետք է սիրենք ու սովորենք այն: Շնորհակալ եմ իմ շատ սիրելի ու գրագետ տիկին Պողոսյանին՝ մեզ հայոց լեզու դասավանդելու համար»:**

Եվ ինձ պարգևած այս ժպիտների ու լավագույն խոսքերի բազմազանության մեջ փորձում եմ տարատեսակ նկարներում առանձնացնել նրանց, որ հայոց լեզվի սեր են գովերգում, ուսուցչի հանդեպ՝ գնահատանք:

http://usarmenianews.com/am-n-6420.html

07.11.2016

ՊԱՐԶՎՈՒՄ Է՝ ԱՐՑԱԽ ԵՐԿՐԻՍ ՀՈԳՍԸ ՆԱԵՎ ՄԵՐ ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՀՈԳՈՒ ՎՐԱ Է ԾԱՆՐԱՑԱԾ

Ծնունդդ շնորհավոր, մեր Նարեկ բալա...Թող ապրիլին խաթարված քո մանկությունն իր անհոգության թևերը փռի, վայելես այն երջանկությունը, որ ի վերուստ տրված է բոլոր երեխաներին: Անհոգ ու

գունեղ երջանիկ մանկություն ենք ցանկանում քեզ և բոլոր երեխաներին: Երբեք չէինք ցանկանա, որ ապրածդ սարսափելի օրերով մեծանայիր, թող այն տարիներով լինի, ամեն մի տարին՝ յուրահատուկ իր անմեղությամբ և կենսախինդ երազանքներով: Դեռ ինչքա՜ն շատ ու շատ բարիքներ ենք ցանկանում, բայց, չգիտեմ ինչու, ձեռքերիդ եմ նայում և մտովի հարցնում քեզ, թե ինչու ցանկացար այդպես նկարվել...

Երկու օր առաջ՝ դպրոցից տուն վերադառնալիս, ճանապարհի տարբեր հատվածներում երկու անգամ մեքենա կանգնեց մեր կողքին, թոռնիկս հրաժարվեց նստել, չկարողացա համոզել, ասաց՝ միասին զրուցելով գնանք, քայլելը առողջարար է: Ասաց՝ զրուցելով գնանք, հասկացա, որ ասելիք ունի... Մի պահ լուռ էինք, հետո հարցրեց. «**Տատի՛, դու կարո՞ղ ես այնքան ապրել, մինչև ես բժիշկ դառնամ»:**

Զարմացած նայեցի, իսկ նա ավելացրեց. «**Որ քեզ բուժեմ, դու երբեք չհիվանդանաս»:**

Անհաշիվ «ցավդ տանեմ»-ներ համատեղվեցին իմ խոստումին, որ ես այնքա՜ն երկար կապրեմ, որ մեր 3-րդ դասարանում սովորող ութ տարեկան Նարեկը մեծանա, բժիշկ դառնա...

Բայց հիշողության մեջ անցած տարվա այս օրն էր...

Թոռնիկիս ծննդյան օրը վերջացավ: Քսանչորսժամյա բերկրալից պահեր, որ լցված էին Նարեկիս՝ հիացմունք արտահայտող խոսքերով ու նրա մանկական երջանկությամբ: Զարմանալի էր, որ ամբողջ օրն ուրախությամբ թռչկոտում էր, նվերներ ընդունում, նայում էր իմ լավագույն ընկերների հղած շնորհավորանքներին, ուրախությունից իրեն կորցրած՝ համբուրում տատիկին, երեխայական պարզամտությամբ ամեն անգամ ինձ պարտադրում՝ գրի՛ր, գրի՛ր բոլորին, որ Նարեկն էլ շնորհակալ է: Զարմանալի էր նաև, որ առանձին պահերի օրվա ընթացքում նա խաղում էր իր նոր նվեր-խաղալիքներով և քթի տակ մեղմորեն երգում էր զինվորի երգը:

Մենք միշտ էլ տանը ձգտում ենք նրան հեռու պահել մեր ներքին անհանգիստ մտորումներից... Եվ փորձում ենք այնպես անել, որ իր անհոգ մանկությունը չխաթարվի մեզ հասնող ու մեր առօրյան դարձած սահմանային կրակոցների արձագանքներից՝ ամեն անգամ հանգստացնելով, որ դրանք ընդամենը փորձարկումներ են, զինվորների սովորական վարժանքներ:

Այդ օրն այնքանով էր զարմանալի բոլորիս համար, որ երբ սենյակի լույսերը հանգցրին, մոտեցավ ծննդյան օրվա մոմերը փչեց, հանգցրեց, ապա միանգամից վրա բերեց. «**Իմ երազանքն է՝ մեր հայերը հաղթեն... Էդ թուրքեր են, ինչեր են, ազատվենք դրանցից**», ու սենյակի մթության մեջ հանկարծ հնչեց երգը...

Մեր փոքրիկ հրաշքը մեզ քարացրեց տեղում: Ոգևորված, ձեռքը օդում թափահարելով՝ նա երգում էր.

Մեր սրտերը միշտ ամուր են, հուր են,
Մեր թրերը միշտ ամուր են, սուր են,
Եվ թող իմանան բոլորը՝
Մեր անունն է հայկական բանակ:

Հպարտության զուգահեռ՝ սիրտս ճմլվեց ցավից, երբևէ չէի ցանկանա մեր երեխաները, իրենց տարիքի համեմատ, այսքան շուտ մեծանային: Պարզվում է՝ Արցախ երկրիս հոգսը նաև մեր այս փոքրիկների հոգու վրա է ծանրացած:

09.11.2016

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ՝ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍԵՐ

Առաջարկություն ստացա՝ աշակերտների մասնակցությամբ կազմակերպել որևէ գրողի ստեղծագործության քննարկում: Շուտով դասարանն ընտրվեց՝ 12-րդ հումանիտար, նախատեսվեց նաև թեման՝ դպրոցական սեր: Գրողի և ստեղծագործության ընտրության հարցում տարակարծություններ կային, բայց նախընտրությունը տրվեց արցախցի արձակագիր Լևոն Ադյանի «Իրիկնային աղջամուղջ» ժողովածուին: Իմ ձեռքի միակ գիրքը շրջանառվեց դասարանում, ընտրությունը մեկն էր՝ «Աշնանային ցրտեր» վիպակի շուրջ քննարկում կազմակերպել Մարտակերտի կենտրոնական գրադարանում: Բայց մինչ միջոցառման անցկացնելը՝ հասցրի իմանալ որոշ աշակերտուհիների կարծիքներ վիպակից ստացած տպավորության մասին:

Ջավադյան Վարդուհի: «Այս վիպակը միանգամից գերեց ինձ: Սկզբում ինձ թվում էր, թե այդ դպրոցական սերը հավերժական է, շատ գեղեցիկ էլ նկարագրված են նրանց հանդիպումները: Սակայն ամեն ինչ փոխվեց… Երանի՜ այս տխուր պատմությունն այսպիսի վերջաբան չունենար...Հասկանալի է, որ սիրող սրտերն այդպես էլ հավերժ կապված կլինեն իրար, բայց, ավա՜ղ, այն կմնա որպես սիրո հեքիաթային օրերի մասին մի անցած հիշողություն»:

Հովսեփյան Լիլիթ: «Այնքա՜ն հետաքրքիր ու պատկերավոր էին շարադրված դեպքերը, կարծես ինչ-որ գերբնական ուժ ինձ շղթայել էր այդ պատմությանը և թվում էր՝ ականատեսն եմ իրադարձությունների զարգացմանը: Կարդալով այս պատմությունը՝ հասկացա, որ կա միայն մեկ ճանապարհ՝ ճիշտ ապրելու և կյանքին հաճոյանալու համար՝ ապրել ազնիվ ու անսխալ, իսկ ապրել անսխալ, դա նույնն է, ինչ քայլես ավազի վրայով՝ առանց հետքեր թողնելու: Մի դպրոցական սիրահարված աղջիկ, ով ուզում էր լինել իր սիրած էակի կողքին և ապրել երջանիկ, անկեղծ սեր էր ուզում այս կյանքից, բայց...»:

Կարապետյան Արմինե: «Չեմ ասում, որ այս վիպակը կարդալուց հետո ես արտասվեցի, բայց անզգայացա: Ես մի պահ ինձ պատկերացրի հերոսուհու վիճակում: Իրոք, շատ հոյակապ է վիպակը, շտապում էի իմանալ, թե հետո ինչ է լինելու, փորձում էի գուշակել վերջը: Շատ դժվար է մոռանալ հոգով ապրած պահերը... Այս հերոսները դարձան ճակատագրի զոհ, յուրաքանչյուրն էլ ունի իր մեղքի բաժինը»:

Սահյան Դիանա: «Վիպակը դպրոցական գեղեցիկ սիրո պատմություն է, որը գրավեց ինձ իր յուրահատկությամբ: Կործանվեց մի գեղեցիկ սեր, այն փշրվեց միանգամից: Շատ դժվար իրավիճակ է, երբ հերոսուհին շատ լավ գիտի, որ անիմաստ է իր կյանքը չսիրած տղամարդու հետ, բայց ստիպված է համակերպվել»:

Խաչատրյան Աննա: «Յուրաքանչյուրի կյանքում լինում են անմոռանալի օրեր, որոնք ժամանակ առ ժամանակ մեր հոգին ու սիրտը լցնում են անսահման կարոտով ու երջանկությամբ: Վիպակում երկու սիրող սրտեր բաժանվեցին իրարից՝ առանց իրար հետ բացատրվելու, նրանք չհասկացան, որ կյանքը կարճ է, և վաղն արդեն ուշ կլինի սիրո համար: Բոլորին ես խորհուրդ կտայի, որ սիրեն ու վայելեն նրա սերը, ով որ իր կողքին է միշտ և իսկապես սիրում է սրտանց»:

Ապրումների անկեղծություն կար նրանց խոսքերում, և ժամանակի ու տարածության հեռվից իմաստավորվում էր մի անգիտակից սեր, որ բազմազան էր իր դրսևորումներով ու անկրկնելիորեն գեղեցիկ, և պատահական չէր եղել այդ զգացումը, եթե տարիները չեն մոռացրել սիրո հուշը: Այդ զգացումը հաճախ անթարգմանելի է դառնում, առավելապես ցավագին է անորոշության՝ սիրտ ճմլող տագնապը, սպասման տառապանքը, կրկին հանդիպման հույսը, որ վիպակի հերոսների ապրումներին միահյուսված՝ նորօրյա աշակերտության սրտերում էլ արտահայտվում էր իրենց իրական ապրումների՝ կարոտի ու ցավի, հիասթափության ու դառնության, հանդիպման ու բաժանման հուզական տրամադրություններով:

http://usarmenianews.com/am-n-6474.html

10.11.2016

ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ, ՈՐ ՄԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ԴՊՐՈՑ ԷՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

Արտակերտի կենտրոնական գրադարանում կազմակերպված միջոցառումը մի առանձնակի հարգանքի արտահայտություն էր օտար ափերում ապրող արցախցի գրող Լևոն Ադյանի և նրա ստեղծագործությունների հանդեպ, որ իրար կողք էր հավաքել տարբեր ոլորտի մարդկանց և մեր դպրոցի աշակերտներին: Առանցքում գրողի «Աշնանային ցրտեր» վիպակն էր, որ 12-րդ հումանիտար դասարանի իմ աշակերտների կողմից քննարկվում էր:

Միջոցառումը հուզառատ էր, զգացմունքային: Կարծիքների հեղեղ կար՝ յուրաքանչյուրը յուրովի արտահայտությամբ: Կերպարներ կային վիպակում, որ արդարացվում կամ մեղադրվում էին, ու սիրո թեման նորացվում էր, մի նոր սեր էր բացատրվում, մի նոր կյանք, մի նոր լույսի տակ էին լուսաբանվում այս վիպակի հերոսները: Դպրոցականները, նորօրյա հերոսներ դարձած, վիճաբանում էին ու բանավեճի մեջ ընդգրկված ուսուցչուհուս մտքերին էլ մեկ հակադարձում էին, մեկ՝ համաձայնվում: Որքա՜ն գեղեցիկ էր այդ բանավեճը, որ իրար դեմ էր հանել աշակերտական խմբերին: Կարծիքներ կային այնտեղ, սիրո ապրումներ, որ միահյուսվել էին դպրոցականների աշնան ու սիրո մասին գրած ստեղծագործական մտորումներին:

Մի կործանված դպրոցական սեր էր քննարկվում՝ ներսուզված աշնանային թախծոտ անհուսության ապրումներով: Տերյանական շարքի բանաստեղծություններով ներկայացած իմ դասղեկական 7-րդ դասարանի աշակերտուհիներն իրենց ասմունքով պիտի լրացնեին 12-րդցիներին, որոնց երեք խմբերի ներկայացրած այն աշնանային սիրո տխուր երգերի ելևէջները հիասքանչ կատարումներով միահյուսվել էին

դահլիճում հավաքվածների ապրումներին:

Մանկավարժիս և իմ աշակերտներին ուղղված շնորհակալական խոսքը մի նոր հուզումնառատ զգացողություն էր, որ արտահայտվեցին շրջանի վարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հ. Մանուկյանի, հ. 2-րդ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սուսաննա Բալասանյանի, 12-րդ դասարանի դաստեկ Նոնա Հայրապետյանի կողմից: Սիրառատ խոսքերս պիտի ուղղվեին կյանքի դպրոց քննարկող իմ աշակերտներին, միջոցառմանը աջակցող գրադարանի տնօրեն Իրա Բաղրյանին, գրադարանի աշխատողներին, միջոցառման բոլոր մասնակիցներին:

Սիրո թեման քննարկվեց որպես արժեք, որպես մարդկային վեհ զգացմունք, որի մեջ ամբարված են խորը մարդասիրությունն ու նվիրվածությունը, վստահությունն ու հավատը:

http://usarmenianews.com/am-n-6505.html

11.11.2016

«ԱՇՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԵՐԻ» ՄԵՂԱԴՐՎՈՂ ԿԵՐՊԱՐԸ

Առավոտյան հեռախոսազանգն ինձ համար հաճելի անակնկալ էր: Մարտակերտի պատմագիտական թանգարանի տնօրենն իր բարձր գոհունակությունն ու հիացմունքն էր արտահայտում Լևոն Ադյանի «**Աշնանային ցրտեր**» վիպակի քննարկման ժամանակ իր ապրած զգացողությունից: Հրաշալի էր...Մի նոր պայմանավորվածություն, համաձայնվեցի մեկ ուրիշ միջոցառում կազմակերպել թանգարանում: Մնում էր ընտրել թեման, տեղավորվել ժամանակի մեջ, և ես նորից կանգնում եմ այն ստեղծագործության վրա, որ անցած փետրվարին՝ Բաքվի և Սումգայիթի ոճրագործության հիշատակի օրերին, վշտահար սրտերից արցունքներ էր քամել: Ու նորից թերթում եմ այն «Հեռացող եզերքը», որ ամեն անգամ այն մեզանից չի հեռանում ու մտովի մանկավարժիս տեսնում եմ ամիսներ հետո՝ մի նոր գալիք փետրվարի, այդ գիրքը ձեռքիս՝ աշակերտների հետ թանգարան մտնելիս:

«Աշնանային ցրտեր» վիպակն էր քննարկվում, բայց այդ գիրքը մեզ հետ էր…Ես տեսնում եմ սեղանին դրված «Հեռացող եզերքը», լսում եմ 12-դ դասարանի իմ աշակերտուհիների խոսքերն աշնան ցրտերում մնացած մեկ այլ սիրո մասին, որ մեղադրում են հերոսներին:

Կարապետյան Արմինե: «Գուցե Կարենի սերը անկեղծ էր, գուցե իսկապես սիրում էր Անահիտին, բայց ինչո՞ւ առանց բացատրության հեռացավ: Ինչ վերաբերում է Անահիտին, իրոք, սիրում էր Կարենին և կսիրի հավերժ, իսկ Մուշեղը, քաջատեղյակ լինելով Անահիտի ապրումներին, ամուսնացավ նրա հետ: Գուցե Կարենը չվերադառնար, նրանք, անցյալի հուշերը հետևում թողած, ապրեին: Սակայն այստեղ կա նաև երեխա, ով մեղավոր չէ, բայց նրա համար էլ հաճելի չէ սառը և անտարբեր մթնոլորտում մեծանալը: Չգիտեմ՝ նման իրավիճակում ինչպես կդասավորվի հետագա կյանքը, բայց ես Անահիտի փոխարեն կփորձեի Կարենին ցույց տալ, որ Մուշեղի հետ երջանիկ եմ ապրում»:

Հովսեփյան Լիլիթ: «Մուշեղն այս պատմության մեջ չնայած միակ

տուժողն էր, որ դարձավ սիրո գերի, բայց նրան չեմ կարողանում արդարացնել: Նա օգտվեց Անահիտի միամտությունից և գողացավ նրա սերը ու թաքուն պահեց իր սրտի խորքում, որ ոչ մեկը չտիրի իր սիրուն: Իմ կարծիքով, Կարենն այնքան թույլ գտնվեց, որ չպայքարեց իր սիրո համար և դարձավ Անահիտի դժբախտության պատճառը, բայց վերջինս էլ երևի պիտի ասեր սիրած տղային, որ աշխարհում դեռ չկա մի այնպիսի սարքավորում, որով չափվեր իր անչափելի սերը նրա հանդեպ»:

Խաչատրյան Աննա: «Երբեմն ուզում ես չհիշել անցյալն ու ապրել միայն երազներով: Այդպես էր նաև Անահիտը, սիրում էր Կարենին, ապրում է նրա հետ կապված հիշողություններով, բայց Մուշեղի կողքին էր լինում: Ես ատում եմ Մուշեղին, նա մարեց երկու սիրող սրտերի նրբագեղ ու գեղեցիկ սեր: Մեղադրում եմ նրան, որովհետև օգտվեց աղջկա թուլությունից, մխիթարեց նրան ու հասավ իր նպատակին՝ չնայած իրենց մեղքի բաժինն ունեին նաև Կարենի ծնողները…»:

Դանիելյան Անուշ: «Ընթերցեցի վիպակը, չկարողացա խեղդել հուզմունքս, նրանց անմար սերը լույսի նման փայլ էր տալիս շրջապատին: Մեղադրում եմ Կարենի ծնողներին, որ իրենց զավակի երջանկությունը խորտակեցին, իրենց վերաբերմունքով խափանեցին նրանց ջինջ ու անհոգ սերը: Գուցե ես հակադրվում եմ մյուսների կարծիքին, բայց իմ համար Մուշեղը ստոր արարած է, ով, մխիթարելով և խղճահարություն առաջացնելով Անահիտի մոտ, դարձավ սիրո տեր, բայց առանց փոխադարձ զգացողության: Անահիտի համար միևնույն էր, թե իր կողքին ով է՝ Մուշեղը թե մեկ ուրիշը: Նա կորցրեց Կարենին, և, ինչպես ինքն էր ասում, ուրիշ կորցնելու ոչինչ չուներ: Նրան միայն մի հույս էր փայփայում՝ գոնե կրկին տեսնել Կարենին ու բացատրել… Ես համոզվեցի, որ յուրաքանչյուր անմոռաց սեր իր հետքն է թողնում ամենքի սրտում, և այդ օրերը մշտապես մեզ հետ են»:

Հայացքս սահում է գրքի տողերով, և ուզում եմ մեղմացնել Մուշեղի մեղադրանքը: Բայց ինչո՞ւ, չէ՞ որ նա սիրում էր: Ու գտնում եմ նրա խոսքը, որ ուղղված է Կարենին. «**Հիշի՛ր, կանայք սիրահարվում են բարդ բնավորությամբ տղամարդկանց, բայց որպես ամուսին՝ գերադասում են… իմ նմաններին…**»:

Եվ ահա տարիներ անց արձագանք է տալիս Կարենի պատասխանը. «**Մեր բախտը մեզնից է կախված, բայց հերիք է, որ թեկուզ մի անգամ թեթևամտորեն վերաբերվենք այդ բախտին, որպեսզի նա քեզ հանի մեզնից մեր ամբողջ կյանքի ընթացքում**»:

Ու հայացքս հառում եմ դեպ երկինք, կարծես փնտրում եմ հեռուներից եկող աշնանային պարզկա, ցուրտ երկնքով անցնող այն կռունկների երամին, որ արձագանքում էր տխրամած կնոջ տառապանքին:

http://usarmenianews.com/am-n-6510.html

12.11.2016

ԽՈՀԵՐՍ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՄ ԹՂԹԻՆ

Ուզում եմ տպավորություններով կիսվել և խոհերս հանձնում եմ թղթին:

Աշնանային այդ գեղեցիկ օրը մասնակցում էի յուրատեսակ մի միջոցառման: Մարտակերտի կենտրոնական գրադարանում քննարկման էր դրված արձակագիր Լևոն Ադյանի «Աշնանային ցրտեր» վիպակը: Մթնոլորտը տրամադրող էր, շուրջբոլորը՝ գունագեղ ու պայծառ:

Ահա և միջոցառման «հերոսները»՝ Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան թիվ 1 միջն. դպրոցի 12-րդ հումանիտար դասարանի աշակերտները՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի գլխավորությամբ, ով կազմակերպել էր այս միջոցառումը:

Նրանց աչքերից հուր ու սեր էր ճառագում: Ոգևորությունը գագաթնակետին էր, դա փաստում էր նրանց յուրաքանչյուր խոսքն ու հայացքը:

Պատանեկան սիրո դրաման, որ վիպակի առանցքում էր, մեկնաբանվեց յուրովի: Խմբերի բաժանված աշակերտները փորձում էին արդարացնել կամ մեղադրել հերոսներին, առաջադրում իրավիճակի հարթեցման իրենց տարբերակները:

Նրանց վառ ու բավականին հետաքրքրական տեսակետներն ու վերլուծությունները զարմանք էին առաջացրել մոտս: Մի՞թե հասունության շեմին դեռ ոտք չդրած դեռահասներն այսքան լավ էին հասկանում սիրո չբացահայտված առեղծվածը...և կարողանում են գրքի հետաքրքրաշարժ ծալքերից վեր հանած տեսակետները հասանելի դարձնել հանդիսատեսին:

Ամեն ինչ այնքան գեղեցիկ էր կազմակերպված, որ թվում էր՝ հեքիաթում էի: Լևոն Ադյան մարդ-անհատը այնքան էր հարազատացել, որ

նրա ֆիզիկական բացակայությունը չէր զգացվում: Նրա «հերոսների» շուրթերով հնչած յուրաքանչյուր միտք մի պատկերավոր գոհար էր, իսկ աշնանային «ցրտերից» ոչ մի սառնություն «չփչեց», այլ այդ «ցրտերը» ջերմացրին բոլոր մասնակիցների հոգիները:

Ավարտելով խոսքս և դատելով բանավեճ- քննարկմանը ներկա մասնակիցների ջերմ ժպիտներից ու աշնանաբույր քողով պատված նրանց գոհունակ դեմքերից՝ վստահաբար կարող եմ փաստել, որ միջոցառումը ստացված էր, գրքի սիրո առեղծվածը՝ ինքնատիպորեն բացահայտված:

Գոհար ՄԱՄՈՒՆՑ
Մարտակերտի շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի երիտասարդության գծով գլխավոր մասնագետ

http://usarmenianews.com/am-n-6514.html

13.11.2016

ԵՍ ՆՈՐԻՑ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՄ. ՈՒՐԵՄՆ ՇՈՒՐՋՍ ԽԱՂԱՂ Է

Սահմանային լարվածությունը երբեմն ինքնաբավ, ահեղադղորդ գոռում-գոչյունով ծեծում է մեր դռները, իսկ ես անզորությունից երբեմն փորձում եմ մեղմաբար գրկել իմ անցած օրերը, ու այդ օրերի հանդարտության մեջ նորից իմ աշակերտների հետ եմ, նորից անցած օրվա՝ նրանց արտահայտած մտքերին շաղախված: Կիսատ մնացած խոսքս ուզում եմ շարունակել, որ **Լևոն Աղյանի «Աշնանային ցրտեր»** վիպակի բանավեճ-քննարկումը մի նոր հայացք էր, այն սիրո, ընտանեկան կյանքի մի նոր ընկալում էր նորօրյա աշակերտության պարզ ու զուլալ հոգիներում, որտեղ հնչում էին մեղադրանքի ու արդարացման խոսքեր՝ ուղղված գլխավոր հերոսներին: Եվ այն բարձրաձայնվում էր շատ հաստատուն, որ ներգործում էր հանդիսատեսի հոգուն: Իմ հարցը, թե արդյո՞ք սերը նույն ձևով է ընկալվում հիմա, համեմատած նախորդ տարիներին, չէ՞ որ հիմա՝ մեր ժամանակներում, աղջիկը կարող է նույնիսկ սեր խոստովանել տղային: Լռությունը խախտեց աշակերտուհիներից մեկը, ով պատրաստ էր վիպակի հերոսուհու փոխարեն նամակ գրել նրա սիրած տղային:

Արզումանյան Լադա: «Այդ վիպակը կարդալիս ես կարծես հայտնվել էի մի տխուր ու երևակայական աշխարհում, սիրտս թրթռում էր, չէի կարողանում զսպել հուզմունքս, ես ներխուժել էի Անահիտի հոգեկան ապրումների մեջ և զգում էի նրա ցավը: Կտրվել էի իրականությունից, ամբողջ էությամբ վիպակի հերոսուհու հետ էի, ում համար կորցրած դպրոցական մաքուր սերը միայն թևածում էր իր հիշողություններում: Հասկացա նաև, որ ոչինչ չի լինում առանց պայքարի, պիտի պայքարես նրա համար, ում սիրում ես: Ես ուզում էի Անահիտի փոխարեն Կարենին գրել. «**Մենք չվստահեցինք միմյանց: Դու գնացիր, երբ ես քո կարիքն ունեի, հիմա քեզանից հետո ինձ համար լռությունը դարձավ կատարյալ ձայն, ինձ պատեց խենթ միայնությունը, ես սկսեցի ապրել քե-**

զանով, բայց առանց քեզ: Երբ ոչինչ, ոչինչ չմնա, ես զգացմունքներս կթողնեմ այստեղ՝ այս բառերի մեջ, այս տողերի մեջ, ու այնտեղ գրված կլինեն, որ ես այն օրերից էլ սիրել եմ քեզ, բայց ինձ մնում է փակեմ անցյալի էջը ու ապրեմ իմ այս կյանքով» »:

Հակառակ մյուս խմբի՝ Մուշեղին ուղղված մեղադրանքների, այս աշակերտուհիները արդարացնում էին նրան, ով անսահման մեծ սեր է ունեցել վիպակի հերոսուհու հանդեպ և տարիներ հետո ամուսնացել նրա հետ:

Անդրյան Անգելինա: «Լևոն Ադյանի «Աշնանային ցրտեր» վիպակը սիրո պատմության հուզումնառատ դեպքերի նկարագրություն է, որն առաջին իսկ էջերից անմիջապես մեծ հետաքրքրություն առաջացրեց ինձ մոտ: Նուրբ ու իրական է գրողը պատմում՝ յուրովի ներկայացնելով ամեն մի կերպար: Սակայն հակառակվելով երկրորդ խմբին՝ ես Մուշեղին արդարացնում եմ: Անմիջապես սիրեցի նրա համառությունն ու ազնվությունը՝ հանուն սիրո: Ես սիրային այս եռանկյունում մեղավոր եմ համարում միայն Կարենին՝ որպես թուլամորթ դավաճանի, ով իր մոտ չպահեց Անահիտին»:

Բաղրյան Իննա: «Վիպակը կարդալուց հետո, չգիտեմ նույնիսկ՝ ինչ զգացողություն ապրեցի, երևի թե՝ ափսոսանք: Ոչ մեկին չեմ կարողանում մեղադրել, միակ մեղավորը ճակատագիրն է, որ բաժանեց երկու սիրող սրտերի: Այդ սերը լի է գեղեցիկ ապրումներով և տագնապներով, երկուսն էլ մեղավոր են, որ կորցրին իրենց երջանկությունն ու հանգիստը: Անահիտին համարում եմ «անմեղ մեղավոր», նա պիտի պատասխաներ Կարենի նամակին, այնինչ այն թողեց անպատասխան, գուցե այդ դեպքում հանգամանքներն այլ ձևով դասավորվեին: Այս վիպակում ամենից շատ խղճում եմ Մուշեղին՝ այդ բարի ու հոգատար մարդուն, որ այսպես ասած՝ «կրակն է ընկել իր սիրո ձեռքին»: Շատ կցանկանայի, որ փոխադարձ սերը հաղթեր, բայց, ավա՜ղ...»:

Կարապետյան Այուզաննա: «Այս պատմության մեջ գլխավոր մեղավորները Կարենի ծնողներն են, իսկ Անահիտը չպետք է ամուսնա-

նար առանց սիրո: Մուշեղը գիտեր, որ Անահիտը չէր սիրում իրեն, բայց ամուսնացավ: Առանց սիրո չկա երջանկություն, Մուշեղին արդարացնում եմ, քանի որ նրա փոխարեն յուրաքանչյուրն էլ կպայքարեր իր սիրուն հասնելու համար: Ես կարծում եմ՝ Անահիտը ժամանակի ընթացքում կսիրի նրան»:

Արդյո՞ք գլխավոր հերոսուհին կկարողանա սիրի իր ամուսնուն, և հայացքս սահում է վիպակի տողերով, որ բարձրաձայն ընթերցում եմ՝ կարծես ցանկանալով ի լուր աշխարհի անցյալի հնությունից դուրս բերել գրողի կողմից վաղուց հաստատված մի մեծ ճշմարտություն, որտեղ հիշողությունը մարդկային երջանկությունն է իմաստավորում. «Կաղնավուն մի թռչուն կա, հանդերում է լինում, երջանկությունը նման է էդ թռչունին,-ասաց հայրն այն ժամանակ Անահիտին: -Նստում է աչքիդ առաջ, մի երկու քայլի վրա, ուզում ես բռնել, ցատկում, մի քիչ էն կողմ է կանգնում, ասում ես՝ մի քայլ էլ անեմ՝ կբռնեմ: Խաբելով տանում է, է՜, աստված գիտի, թե որտեղ: Մարդու երջանկությունը նման է էդ փոքրիկ թռչունին, թվում է ահա մոտ է արդեն, հասնում ես երջանկությանդ, բայց, չէ, էն թռչունի պես նորից իր ետևից տանում է քեզ ու մինչև վերջ էլ էդպես գնում ես երջանկության ետևից ու երբեք չես հասնում»:

Երանի՜ թե խաղաղ լինի երկինքը, ու մենք էլ այս կյանքում միշտ վազենք մեր երջանկության հետևից, թեկուզ և չհասնենք…

http://usarmenianews.com/am-n-6524.html

14.11.2016

ԴՈՒՔ ՉԵ՞Ք ՆԿԱՏԵԼ՝ ՀՐԱՇԱԼԻ ՄԻ ԲԱՌ ԱՅԴ ՉԱՐԱԳՈՐԾ «ՊԱՏԵՐԱԶՄ» ԲԱՌԻ ՄԵՋ

«Ես Մանե Հակոբյանն եմ՝ Հայաստանի Արարատ քաղաքից: Ապրիլ ամսից բնակվում եմ Մարտակերտում, հաճախում Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոց, սովորում 7-րդ դասարանում: Շատ եմ սիրում իմ դպրոցը, իմ դասղեկին, ունեմ մեծ տպավորություններ, նաև հպարտ եմ, որ ապրում եմ Արցախի մի սահմանամերձ բնակավայրում, որտեղ հայ զինվորը պաշտպանում է ինձ թույլ հակառակորդից»:

Տողերը հիացմունք են պատճառում ինձ, առավելապես՝ վերջին միտքը: Նայում եմ նրան, ուրախ ու մեղմիվ ժպտում է նա: Դա այն ժպիտն է, որ այնքան խոսուն է միշտ, ու հայացքս սիրառատ գրկում է նրան: Բառերս լռում են…Ազնիվ ու համեստ մի սիրուն աղջնակ, «պատերազմ» բառից խորշում է նա, ձեռքերը պարզած՝ աղոթում Աստծուն, որ հայրն ու բոլոր սպաները, զինվորներն ու հայ տղամարդիկ վերադառնան իրենց տները և խաղաղ ապրեն այս երկնքի տակ:

«Մի քանի օր է՝ մեր քաղաքում մարդիկ այդ բառն են շշնջում: Դուք չե՞ք նկատել՝ մի հրաշալի բառ կա այդ չարագործ «պատերազմ» բառի մեջ՝ ԵՐԱԶ: Ես այնտեղից դուրս եմ բերում այն հնչյունները, որ երազ են բերում իրենց հետ, և երազում եմ, որ այդ բառն իր էությամբ վերանա աշխարհից, շուրջբոլորը լցվի հրավառությամբ: Ես ուզում եմ, որ այդ բառը վերանա նույնիսկ բառարանից, որ իր հետ ավերածություններ է բերում, թող պատերազմող երկրները խաղաղության դաշինք կնքեն, իմ երկրում էլ ամեն մանուկ, հարսիկ ու մայր ժպտան իրար ու բարևեն միմյանց խաղաղությամբ»:

Ես մտովի հիշում եմ այն օրը, երբ դպրոց եկավ իր մայրիկի հետ: Նոր միջավայրի՞ց, թե՞ ամաչելուց նա սկսեց արտասվել...Որքա՜ն փխրուն էր նա, իսկ ես ներկայացնում եմ յոթերորդցիներին նոր աշակերտուհուն: Այսպես օրեր ու ամիսներ, և իմ առջև նստած մի ժպտերես

սիրունիկ աղջիկ՝ նրբին հայացքով, մեղմիվ դյութանքով...

Ու անցած օրերի՝ նրա գրած տողերն եմ վերհիշում, որ ծնվել է հայոց երկրում՝ մի հրաշավայր, որտեղ Աստծո կամքով իջել է Նոյի տապանը: Հալածվել է այդ երկիրը, բայց մաքառել ու ապրում է մինչ այսօր, որ ամեն մի ծնվող մանկիկ Հայկ ու Տիգրան, Այծեմնիկ ու Նարեկ կոչվի, որ Հայաստանը էլ ավելի անուշ ու քաղցրահամ լինի: «**Բա իմ Արարատյան դա՞շտը, որ այնքան չքնաղ է...Երբ քնից աչքս բացել ու նայել եմ պատուհանից, սեգ Մասիսն է աչքով արել: Խոր վիրապից կանգնել, նայել եմ Արաքս գետին, քաղել ու կերել արևահամ սևսաթ խաղողից: Ուր էլ լինեմ, ես կասեմ, որ հայուհի եմ ու իմ հայրենիքն է հայոց աշխարհը**»:

Ես նորից մտքերով նրա հետ եմ... Այն օրը մենք տունդարձի ճանապարհին միասին էինք: Շատ ազնիվ ու պարզ, մի մաքուր հոգի, որ ժպտում էր ինձ և զրուցում, ու ես այդ զրույցի մանրիկ հատիկներն էի վայելում:

http://usarmenianews.com/am-n-6534.html

15.11.2016

ԱՄԵՆ ՕՐ ԱՍՏԾՈՒՑ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ՉԼԻՆԻ

Նրանց մասին ես երբևէ չեմ գրել, նրանք մեր դպրոցի 5-րդ ա դասարանի աշակերտներն են: Այդ դասարանում ես լինում եմ շաբաթվա բոլոր օրերին և ամեն անգամ իմ բարևից հետո հարցնում եմ նրանց որպիսությունը: Ժպիտների անսահմանության մեջ միշտ էլ արձագանք է տալիս այն լավը, որ դառնում է իմ դասի մուտքն ազդարարող սկիզբ: Բայց այն օրը սահմանային լարվածությունը մտել էր նաև այդ դասարանը, իմ «ինչպե՞ս եք» հարցը մնաց օդում… Եվ շուտով այդ օրվա ծրագրային դասանյութը՝ հեքիաթի մասին, իր տեղը զիջեց մի իրական պատմության, որտեղ պատերազմի ահուսարսափ կա, այս փոքրիկների հոգիները սողոսկած անհանգստություն: Լռության մեջ նրանց գրիչները մեկ-երկու նախադասությամբ բարձրաձայնեցին ահեղադղորդ մի կոչ, որ ատում են պատերազմը և ուզում են անհոգ մանկություն:

«Ես ատում եմ պատերազմը, այն մարդկային կորուստներ է բերում, ցանկանում եմ Արցախ աշխարհիս խաղաղություն, թող կորչի պատերազմը» /Սարգսյան Արթուր/: **«Իմ հայրը զինծառայող է, նա շաբաթներով, ամիսներով տուն չի գալիս, մենք տանը շատ ենք մտահոգվում և ուզում ենք, որ պատերազմ չլինի, ու նա միշտ մեր կողքին լինի»** /Ավանեսյան Կարեն/: **«Ապրիլին՝ պատերազմի ժամանակ, մի արկ ընկել էր և ավերել մեր տունը: Այդ օրերին ինչքա՜ն էի ուզում վերադառնալ մեր տուն: Բայց ոչինչ, աղետը կշենացնենք, թող խաղաղ լինի երկինքը, որ էլ ոչ մի մայր զավակ չկորցնի»** /Հարությունյան Արամ/: **«Ես պատերազմը տեսել եմ ֆիլմերում, հեռուստացույցով կամ ծնողներիս պատմածից եմ լսել: Եվ ատում եմ պատերազմը, որովհետև այնտեղ զին-**

վորներ են զոհվում, քաղաքներ ու տներ ավերվում, երեխաներ սպանվում: Չեմ ուզում պատերազմի պատճառով մարդիկ լքեն իրենց հայրենի երկիրը և սփռվեն աշխարհով մեկ» /Գրիգորյան Արինա/: **«Հայրս զինվորական է, պատմել էր պատերազմի մասին, ու ես հասկացել եմ, որ պատերազմը խաղ չէ, այլ ինչ-որ սահման, որտեղ պետք է ընտրություն կատարես զինվորի ու հայրենիքի միջև»** /Հայիրյան Սյուզաննա/: **«Շատ ցավալի է, որ այնքան մայրեր անքուն գիշերներ են անցկացրել, մեծացրել իրենց որդիներին, ուղարկել զինվորական ծառայության, իսկ նրանք զոհվել են՝ անկատար կամ կիսատ թողնելով բազում երազներ»** /Սարգսյան Անժելա/: **«Ես երբ փոքր էի, չգիտեի, թե ինչ է պատերազմը: Պատկերացնում էի, թե այն մի զվարճալի ուրախ խաղ է, երբեք չէի մտածում, որ դա չարիք է բոլորիս համար: Թշնամու արձակած գնդակը խփել էր մեր տանը, լավ է, որ տանը չենք եղել, դրա համար էլ ես ատում եմ պատերազմը»** /Գյուրջյան Մանե/: **«Այլևս չեմ ուզում հեռանալ մեր քաղաքից, պատերազմը մեզ տեղահան է անում, և վտանգվում է բոլորիս կյանքը»** /Ջավադյան Նարեկ/: **«Պատերազմը միայն վիշտ, ցավ ու կսկիծ է բերում: Թող այսուհետ լինի խաղաղություն, մեր մայրերն ու քույրերն այլևս չտխրեն ու չլացեն, թող ոչ մի մանուկ չորբանա, աշխարհի բոլոր մանուկներն ապրեն երջանիկ ու անհոգ»** /Պողոսյան Լարիսա/: **«Պատերազմի ժամանակ երեխաներ են մնում անհայր, կանայք՝ միայնակ, մայրերը՝ որդիներ կորցրած: Թող կորչի պատերազմը, ես ատում եմ այն, կապույտ երկինք եմ ուզում, թող ոչ մեկը չհամարձակվի պղտորել այն»** /Մելքումյան Էլինա/: **«Միգուցե ես շատ փոքր եմ, շատ բան չեմ հասկանում պատերազմից, բայց գիտեմ, որ շատ ցավոտ է, երբ հեռանում ենք մեր հարազատ տնից: Ես ուզում եմ, որ ամեն զինվոր կատարի իր պարտքը հայրենիքի հանդեպ և առողջ վերադառնա իր ընտանիքը»** /Գյուրջյան Սոնա/: **«Ամեն օր Աստծուց խնդրում ենք, որ պատերազմ չլինի, ու բոլորս ապրենք խաղաղ երկնքի տակ»** /Իսրայելյան Քրիստինե/:

Տողերը տպագիր շարեցի ցավալիորեն անհանգիստ մտորումներով՝ որպես անձնական ու անանձնական պահանջ-խնդրանք՝ ուղղված բարձրյալին, որ բոլոր երեխաներն էլ խաղաղություն են ուզում: Սա այս փոքրիկների լիարժեք կյանքով ապրելու բուռն ցանկությունն էր, հույզերի, զգացմունքների ու խոհերի արտահայտություն, որ դարձել էր բոլորիս համար խաղաղ ապրելու երազանք:

http://usarmenianews.com/am-n-6553.html

16.11.2016

ԵՍ ԱՏՈՒՄ ԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ

12-րդ հումանիտար դասարանում Համո Սահյանի քնարերգության մասին գրվելիք նրա շարադրության վերնագիրը փոխվեց, այն դարձավ աղաղակ, չարի դեմ ուղղված մի բարձրակոչ ուղերձ, որով կարծես ցանկանում էր կանգնեցնել մի աղետ, որ օրնիբուն մագիլները խրած մեր հոգում՝ մեզ քուն ու դադար չէր տալիս՝ մեր կողքին ամեն անգամ զգացնել տալով իր իսկ գարշելի ներկայությունը:

«Ես ատում եմ պատերազմը: Ես ատում եմ այն անհանգիստ վախը, որից ծնվում են ամենաահավոր պատկերացումները:

Այս ի՞նչ կյանք է...Ապրիլյան դեպքերից հետո ութ ամիս արդեն անցել է, բայց ժողովուրդս կաթվածահար եղած, ծառի տերևի պես դողում է ամեն քամուց ու ամպրոպից: Հանկարծակի լսելի դարձած կրակոցների արձագանքները երբեմն խախտում են շրջապատի լռությունը: Պատահում է, որ չեմ կարողանում գիշերը հանգիստ քնել, վախը ներխուժում է ներսս, կարծես քնի մեջ էլ մղձավանջի տեսքով մի նոր ապրիլի երկուս եմ տեսնում: Վեր եմ թռչում տեղիցս, արդեն առավոտ է, շուրջս՝ խաղաղ...Հանգիստ շունչ եմ քաշում՝ մտածելով, թե ինչքան լավ է, որ երազ էր: Երբեմն մտածումներով հեռուն եմ գնում, ինձ խեղդում են այդ պահին սառած արցունքներս, և մի պահ մոռանում եմ խոսելու ունակությունս: Իմ խոսքը ներքին է, ես մենախոսում եմ միայն ինձ լսելի ձայնով:

Կա՛նգ առ, պատերա՛զմ, անզոր է ազգս նորից տեսնելու արյունով լվացված դեմքդ, որ թերթում է անցյալի ցավոտ էջերը: Էլ չեմ ուզում լսել նշանաբան դարձած այն միտքը, որ ասում են՝ դժվարությունը միայն նրանց համար է, ովքեր կարողանում են այն հաղթահարել: Երբ զգում եմ հոգիս կեղեքող այն տանջալից ցավը, երբ տեսնում եմ բացված ու չսպիացած վերքերս, երբ մտածում եմ, որ պատերազմը մինչև մեր կյանքի վերջը դրոշմված է մեզ վրա, չեմ ուզում հավատալ, որ այդ դժվարությունը հաղթահարելի է»:

Սեղանին դրված բազմաթիվ տետրերի կողքին ես փնտրում եմ այն երկու թուղթը, որ իր հոգուն հարազատ տողերով դրանից մի քանի օր առաջ ինձ էր հանձնել իմ աշակերտուհի Անգելինա Անդրյանը: Այդ օրը նա ասաց ինձ, որ իր սրտի անհանգիստ տվայտանքները թղթին է հանձնել և թողել աշնան թախծալից մեղեդիների մեջ: Եվ շուտով հնչեց այն տխուր «Աշնան սերենադը», որ բազմաթիվ անգամ լսել էինք, բայց այս անգամ նա իր շուրթերով մի նոր կյանք էր պատմում, որ տխուր էր ու թախծոտ՝ սրտահույզ մեղեդայությամբ էլ օծված: Եվ նորից մտածումներիս մեջ արձագանք են տալիս այն թղթին հանձնած տողերը, որ տխուր են ու շատ թախծալից. «**Իմ աշունը լռությամբ է շաղախված, ունի տխրության համ: Սառած քամին գրկել է հոգիս, սփոփում է ինձ... Անձրևին զուգընթաց՝ լացում են նաև հիշողություններս**»:

Պատերազմը ապրիլին էր, բայց այն շարունակում է համառորեն դեգերել սաներիս խոհերում: Տառապանքս քառապատկվում է սեփական անզորությունից, երբ չի հաջողվում փարատել նրանց մեջ ծնված տագնապն ու անորոշությունը:

http://usarmenianews.com/am-n-6579.html

17.11.2016

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐ

Վերջերս ավագ դասարանում սովորող աշակերտներից մեկը բարձրաձայնեց, որ եթե ինքը հետագայում լավ գործի տեր դառնա, ապա սիրով ու մեծ ցանկությամբ կմիջամտի, որ իր ուսուցչուհին մի բարձր պաշտոն ստանա: Չնայած բոլորս էլ մտերմիկ ժպիտներով ու ծիծաղով արձագանքեցինք նրան, բայց նաև մտքիս մեջ մնաց այդ «պաշտոն» բառը: Բայց մի՞թե շատ ավելի մեծ պաշտոն կա, քան այն սովորական ուսուցչի մասնագիտությունն է, որ ինձ համար ամեն տեսակի պաշտոններից վեր է: Արդյո՞ք, ես այդ աշակերտին անբավարար չեմ նշանակում կամ չեմ զայրանում, եթե անուշադիր է կամ էլ դաս չի սովորում:

Այստեղ կա վերաբերմունքի խնդիր: Մանկավարժական էթիկան, հիրավի, ուսուցչի անձին ներկայացվող պարտադիր պայման է: Աշակերտը պետք է իմանա, որ անկախ նրանից, թե ինչպես է սովորում, նա ուշադրության կենտրոնում է, որ գնահատված է որպես անձ, որ իր կողքին կա խորը մարդասիրությամբ համակված ուսուցիչ, ով իրեն ցույց է տալիս իր առավելությունները և թերությունները վերացնելու ուղիները: Շփման, հաղորդակցման արդյունավետ կապի շնորհիվ մանկավարժը կկարողանա մոտենալ աշակերտին անհանգստացնող խնդիրներին: Երեխայի նկատմամբ ինչ վերաբերմունք էլ ունենա ուսուցիչը, պետք է դրան զուգահեռվի լավատեսությունը, եթե զինված չլինի դրանով, ապա ոչ մի դրական արդյունքի չի հասնի:

Պարզվում է՝ երբեմն աշակերտի չսովորելու և հետադիմության հարուցիչը ուսուցիչն է, ով հոգեբանական ճգնաժամի է հասցնում աշակերտին՝ մտածելով, որ նա անընդունակ է, անառաջադեմ, չի կարողանա երբևէ դաս սովորի: Եվ արդյունքում աշակերտը չի հավատում, որ պատրաստ ներկայանալու դեպքում իր արժանի գնահատականը կստանա: Մինչդեռ աշակերտի՝ ուսումնական գործընթացի նկատմամբ դրական դրդապատճառվածության արանքում կանգնած է ուսուցիչը: Սովորությանս համաձայն՝ սիրում եմ հաղորդակցվել աշակերտների հետ, և այդ շփումը կառուցվում է նրանց արժանապատվությունն ու արժանիքները հարգելով: Վերջերս գովեցի թույլ սովորող աշակերտներից մեկին, որ հրաշալի հերթապահություն է անում դասարանում, և արդ-

յունքում նա մոտեցավ ինձ ու առաջարկեց, որ ուզում է ամբողջ շաբաթվա ընթացքում հերթապահել: Չնայած նրա առաջարկին համաձայն չէի, բայց հասկանալի էր, որ ստեղծված շփման արդյունավետ մթնոլորտը բացառիկ նշանակություն ունի աշակերտի հոգին կերտելու գործում: Դրա վառ վկայությունը նրա պատրաստ ներկայանալն էր, երբ հաջորդ օրն ինձ դաս պատմեց ու մի քանի «անբավարարի» կողքի նա «լավ» գնահատվեց:

Չնայած այս թեման տարողունակ է, որի մասին կարելի է շատ խոսել, բայց կցանկանայի, որ երբեմն որոշ ուսուցիչներ իրենց «արքայական» գիտելիքները չգերագնահատեն, որտեղ սովորողները միայն լսողի դերում են: Վաղուց ժամանակն է՝ խուսափել «ես ինքս» միակ գլխավոր դեմք լինելու տրամաբանությունից, որտեղ ուսուցիչը մենակ ինքն է հարց տվողը, իսկ այդտեղ արդեն կորչում է սովորողների ստեղծագործական կարողությունը: Աշակերտին հասկանալու համար պետք է նրան հնարավորություն տալ արտահայտվելու և կարողանալ լսել նրան: Իսկ լսելու կարողությունը բարդ և նուրբ արվեստ է, որին, որպես մասնագիտական հատկություն, պետք է տիրապետի յուրաքանչյուր մանկավարժ: Աշակերտների աշխարհն իմանալու և հասկանալու հարցը որոշ ուսուցիչների համար մնում է գերխնդիր, բայց չէ՞ որ բոլոր աշակերտներն էլ հասկացված լինելու իրավունք ունեն:

Մասնագիտական արհեստավարժությունն անպտուղ է, եթե այն չի զուգակցվում մանկավարժական լավատեսության և էնտուզիազմի հետ: Հիրավի, ժամանակը, նաև ծնողական հանրույթն ու հասարակությունը ավելի շատ պահանջներ են ներկայացնում ուսուցչին: Իսկ վերջինս պատվով կարող է դուրս գալ ստեղծված ամեն մի իրավիճակից, եթե առկա են մանկավարժական հաղորդակցման և վարվեցողության հմտությունների բարձր համոզմունքներն ու արժեհամակարգը:
Ասում են՝ Քրիստոսն էլ ուսուցիչ էր, այս սարսռազդու միտքը դրդում է հոգևոր ու անձնային արթնացման, գաղափարական ու բարոյական վերելքների:

http://usarmenianews.com/am-n-6608.html

18.11.2016

ԵՐԱՆԻ՞ ԹԵ ԱՅԴ ԴԱՍԱԺԱՄԻՆ ՁԵԶ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԿԱՆՉԵՐ

Մանկավարժի իմ «արվեստանոցում» ամեն օր զննող հայացքով փորձում եմ առանձնացնել անսովոր երևույթը, ստեղծված իրավիճակը, այն նորը, որը մեր ժամանակներում անընդունելի է եղել անգամ բարձրաձայն արտահայտել: Եվ դպրոցական կյանքում տեղի ունեցած իմ արձանագրումների մեջ միշտ էլ իրենց կերպարներով առանձնանում են աշակերտներ, որոնց հետ ինչ-որ անսովոր մի իրադարձություն է տեղի ունեցել: Երբեմն մի փոքր արարք այնքա՜ն մեծ արժեք է ունենում, որ զարմանում ես, չնայած դիմացինդ, անչափահաս լինելով, չի գիտակցում իր արարքի կարևորությունը:

Առավոտյան դպրոցի ճանապարհին կողքիս հանկարծ մի մեքենա արգելակեց: Մեքենայի դուռը բացվեց, քնքուշ մի ձայն իր դասղեկին հրավիրում էր նստել: 7-րդ ա դասարանում սովորող իմ աշակերտուհին է՝ Լուսինե Հովհաննիսյանը: Պարզվեց՝ հայրիկի նոր մեքենան է, բայց հորեղբայրն է վարում:

Այդ ճանապարհին ես նրա հետ եմ…Կենսուրախ այդ ձայնը ինձ հիշեցնում է այն օրը, երբ մի քանի օրվա բացակայությունից հետո նա եկավ դպրոց: Եվ իր ամենօրյա «**Ինչպե՞ս եք, տիկի՛ն Պողոսյան**» հարցումից հետո նա ժպտերես ավելացրեց. «**Մի քիչ հիվանդ էի, մի կերպ շարադրություն եմ գրել, բայց լավ չեմ սովորել, իմացա, որ այսօր ստուգողական գրավոր պիտի գրենք, այդ պատճառով էլ եկա, այլապես չէի գա, դեռ վատառողջ եմ...**»:

Մինչ ես որևէ խոսք կասեի, նա հանկարծ ավելացրեց. «**Բայց երանի թե այդ դասաժամին Ձեզ որևէ մեկը կանչեր, այդ պահին կհասցնեի թաքուն մի հայացքով նայել շարադրածիս...**»:

Սա ի՞նչ էր, ամբողջ դեմքս ողողվեց ժպիտով, մենք երկուսս ծիծաղում էինք, մյուսներն էլ միացան մեզ: Մի՞թե կարող էի այլ կերպ վարվել, գուցե հենց սա՞ է մեր օրերի մանկավարժի ու նորօրյա աշակերտի միջև

գեղեցիկ հարաբերությունների երանության պահը: Այդ դասաժամին ոչ ոք չկանչեց ինձ, բայց նաև շատ գոհ էր իմ աշակերտուհին իր «հնարամտությունից», որ «գրագողության» երկու փորձերն էլ հաջողված էին և աննկատ մնացին իր ուսուցչուհուց:

Եվ հետաքրքիր է դառնում մանկավարժի աշխատանքը, երբ մեզանից յուրաքանչյուրն իր գործունեությամբ կարողանում է դառնալ դեռահասի հոգու բանալին: Աշակերտի արտաքին տեսքը տեսնելուց բացի պարտավոր ենք տեսնել նաև նրա հոգեբանական խորքը: Իսկ դրան հասնելու համար մեզ անհրաժեշտ է ամենօրյա ինքնակրթություն, ինքնամաքրում, ինքնավերլուծություն և ինքնազարգացում, որպեսզի առողջ շփման միջոցով էլ ավելի մոտ կանգնենք մեր աշակերտներին և կարողանանք լսել նրանց սրտի զարկերը:

http://usarmenianews.com/am-n-6660.html

19.11.2016

ԻՆՉՈ՞Ւ ԽՈՒՍԱՓԵԼ ՈՒՍՈՒՑՉԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐԻՑ

Երբեմն անակնկալներ են լինում, որ զարմացնում են մեզ, և մի փոքրիկ միջադեպ առիթ է դառնում, որ մի նոր հայացքով նայես դիմացդ նստած դեռահասին: Տարիների փորձն ինձ բերել է այն համոզման, որ միշտ էլ պետք է տեսնես նրանց աշխարհը, իսկ այդ աշխարհում բազում գույներ կան՝ մեկը մյուսից վառ ու տպավորիչ:

Այսօր 11-րդ դասարանում էի, ու հանկարծ հարցրեց մեկը, թե արդյո՞ք ես հարազատներ ունեմ այստեղ: Խոսքը իմ հայրական տան մասին էր, իսկ այն ավերված էր Արցախյան պատերազմի տարիներից: Անսովոր մի ժպիտ խաղաց դեմքիս, բայց չէի կարող անպատասխան թողնել հարցը, եթե նա համարձակություն է ունեցել իրեն դասավանդող ուսուցչուհուն այդպիսի հարց տալ: Հիշեցի նաև, որ օրեր առաջ աշակերտուհիներից մեկ ուրիշն էլ հարցրել էր, թե կարո՞ղ է ուսուցչուհին իր կենսագրությունից պատմել: Բայց ինչո՞ւ խուսափել նման հարցերից, ու իմ դասի մուտքն սկսվեց այսօր մի տխուր պատմությամբ, որտեղ ուսուցչուհի կար, որ բռնագաղթից հետո օտար ափերում էր, բայց հայրենի հողի կանչով տարիներ առաջ թողել էր հարազատներին հեռուներում ու իր փոքրիկ դստեր հետ վերադարձել ծննդավայր: Օտար ափերում հիմա հանգչող գերեզմաններ կան, հարազատ դեմքեր, կարոտի կանչ կա, անցյալի հուշեր, մորմոք, ցավ ու կսկիծ:

Այսօր այդ դասարանում թախծախառն էր իմ դասը, հոգիս տխրել էր, բայց ես ժպտում էի՝ հույզերս դասանյութին միախառնած: Ես անցյալում էի, նրանք չիմացան, բայց մենք մտերմացանք, մի նոր մտերմիկ հարաբերություն, որ ստեղծվեց այնքան կարճ մի քանի րոպեների մեջ տեղավորված մի փոքրիկ պատմությամբ, որ սքողված էր դեմքիս աղավաղված անհասկանալի ժպիտով:

Կարծում եմ՝ պետք չէ խուսափել նման հարցերից, չէ՞ որ դպրոցական կյանքը առանձնահատուկ մի աշխարհ է, գուցե և դժվար, բայց նրբություններով ու անակնկալներով, նոր բացահայտումներով հարուստ, որտեղ ամեն օր ուսուցչի և աշակերտի հարաբերություններում մի նոր դիմագիծ է ձևավորվում, որով էլ գեղեցկանում և ստեղծվում է ուսումնական մտերմիկ միջավայր: Ես ամեն անգամ համոզվում եմ, որ մեր այդ հարաբերությունների առանցքում միշտ էլ պետք է փորձենք վեր հանել աստվածային գեղեցիկն ու կատարյալը: Այդ ճանապարհին, չգիտեմ՝ ինձ որքանով է հաջողվում, բայց, որպես անհատականություն, նույնիսկ լինում են պահեր, որ ցանկանում եմ գտնել սովորականի մեջ անսովոր դարձած երևույթը, որն ինձ ավելի է մոտեցնում իմ աշակերտներին:

http://usarmenianews.com/am-n-6687.html

20.11.2016

ՏՂԱՄԱՐԴՆ ԱՐԺԵ ԱՅՆՔԱՆ, ՈՐՔԱՆ ԻՐ ԽՈՍՔԸ

Նա 12-րդ հումանիտար դասարանի միակ տղան է, ազնիվ ու արդար, պարզ ու մաքուր հոգով միակ աշակերտն այն մնացած տասներկու աղջիկների կողքին: Մենք սիրում ենք նրա համարձակ մտորումները, որ երբեմն բարձրաձայնում է. «Տանել չեմ կարողանում այդպիսի տղաներին, ովքեր միայն խոստումներ են տալիս աղջիկներին: Ես համարում եմ, որ այդպիսի տղաները թուլամորթ են: Տղամարդն արժե այնքան, որքան իր խոսքը, ես դրանով եմ առաջնորդվում: Շատ սիրող զույգեր կյանքում հրաժարվում են միմյանցից՝ միայն հասարակության կարծիքը հաշվի առնելով կամ ծնողների մեղքով: Պետք է անտեսել բոլոր կարծիքները, դու ես քո կյանքի տերը, քո կյանքի ուղին ընտրողն ես, այսպես ասած՝ դու ես «սցենարիստը», ուրեմն դու էլ պիտի կառուցես այդ կյանքը»:

Այն օրը՝ Լևոն Ադյանի «Աշնանային ցրտեր» վիպակի քննարկման ժամանակ, նա բոլորի կողմից ծափահարության արժանացավ այս խոսքերի համար: Դասարանում նա միշտ հանգիստ է, շատ կազմակերպված, երբեմն լռակյաց ու ինքնամփոփ, բայց նա այդ օրը խոսում էր ոգևորված... Շատերի հոգուն հաճելի խոսքեր էր հնչեցնում՝ երբեմն ըմբոստացած: Նրա և այն մյուս երեք աշակերտուհիների խոսքերում մեղադրանքի խոսքեր էին հնչում այն գրական կերպարների հանդեպ, որ կորցրին իրենց սերը:

Սեյրան Աղաբեկյան: «Իմ կարծիքով, այս պատմության մեջ բոլոր հերոսների մեղքն ու բացասական ազդեցությունը կար, բայց մասամբ: Ես առանձնացնում եմ Կարենի բացասական կերպարը վիպակում, քանի որ նա Անահիտին սեր խոստացավ, ասաց, որ կվերադառնա, բայց շատ ուշ վերադարձավ, ավա՜ղ, Անահիտն արդեն ամուսնացած էր:

Կարենը պետք է իր խոստումը պահեր և ժամանակին վերադառնար կամ էլ չգնար արտագնա աշխատանքի, եթե նա իսկապես սիրում էր աղջկան: Վերջինիս ես համարում եմ զոհ, ով հավատաց Կարենին: Եթե ես լինեի նրա փոխարեն, իսկապես սիրեի Անահիտին, հաստատ նրան բաց չէի թողնի, կսիրեի, կերջանկացնեի նրան՝ անկախ մնացածների դիրքորոշումից»:

Ջավադյան Վարդուհի: «Չեմ կարողանում արդարացնել աղջկան, որ սկզբում ուզում էր իր համբույրներն այնքան «էժան ծախեր» տղային: Դա երևի նրանից էր, որ մինչև հոգու խորքը սիրահարված էր Կարենին, և նրան ամենևին չէր հետաքրքրում շրջապատի կարծիքը: Կարենը միանգամից դեմ գնաց իր ծնողներին, նրան չէին հետաքրքրում քաղաքի հարուստ գեղեցկուհիները: Դա ապացուցում էր, թե որքան կարևոր էր իր համար Անահիտը: Բայց տղան էլ ուներ իր մեղքի բաժինը: Նրա անակնկալ հեռանալը կասկած է ծնում աղջկա հոգում, որ կամաց-կամաց փշրում է Անահիտի երազանքները»:

Ղուլյան Գեղեցիկ: «Անահիտի և Կարենի սերն ինձ շատ հետաքրքիր էր թվում և խորհրդավոր, մինչև որ հայտնվեց Մուշեղը, ու ամեն ինչ հիմնովին փոխվեց: Ես այդտեղ այդ սերը պահպանելու ձգտում չտեսա: Խղճում եմ Մուշեղին, որովհետև իր կողքին կար կին, ով նրան չէր սիրում, չէր նկատում նրա ներկայությունը: Չէի ցանկանա նրանց իրար հետ ամուսնացած տեսնել: Ինձ համար Կարենը թույամորթ երիտասարդ էր, ով իր սերը հեշտությամբ դարձրեց ուրիշինը: Մուշեղի կերպարը ինձ որոշ չափով դուր եկավ, քանի որ նրա մոտ սիրո հարցում համառություն և պայքար տեսա»:

Աբրահամյան Ռուզաննա: «Այս վիպակում ես իսկական սեր չտեսա, հիասթափություն ապրեցի, մեղադրում եմ և՛ Անահիտին, և՛ Կարենին, որ իրենց խոստմանը տեր չկանգնեցին: Երևի նրանց ժամանակներում սովորական էր, որ աղջիկն առանց սիրելու էր ամուսնանում, իսկ մեր օրերում հակառակն է...»:

Բայց ինչո՞ւ ես ցանկացա հակադրվել նրանց և, արձագանքելով այս դեռահասներին, ընթերցում եմ տողեր վիպակից, որ գյուղից ոչ հեռու կամրջից վեր՝ ուռենիների տակ, մի փոքրիկ աղբյուր կար, այնտեղ էին նրանք ամեն օր հանդիպում: Եվ մամռոտ քարերի մոտ կամացուկ երգող անանուն աղբյուրը նրանց գաղտնիքն էր պահում, ու այնտեղ մի գեղեցիկ սեր կար, մի անափ երջանկություն:

http://usarmenianews.com/am-n-6702.html

21.11.2016

ՏՆԱՅԻՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՉՊԵՏՔ Է ՏԱՌԱՊԱՆՔ ԴԱՌՆԱ ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ

Երբեմն հանդիպում ենք դժգոհությունների՝ կապված տնային հանձնարարությունների ծանրաբեռնվածության հետ: Միշտ էլ եղել եմ այն համոզմունքին, որ աշակերտի համար տառապանք չպետք է դառնա տնային առաջադրանք կատարելը: Մի՞թե ցավոտ չի հնչում այս արտահայտությունը. «**Ես ցանկանում եմ, որ ուսուցիչը լինի բարի, ներողամիտ, մտնի երեխայի դրության մեջ և քիչ տնային հանձնարարություն տա»:**

Աշակերտը ցանկություն է հայտնում, որ ուզում է իրեն դասավանդող ուսուցչուհին բարի լինի, բայց չէ՞ որ յուրաքանչյուր ուսուցչի ամբողջ մանկավարժական գործունեությունը բարություն սերմանելն է: Սիրում եմ այս բառը և ուզում եմ այն գրել մեծատառով՝ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ, որ հոգիներ է բուժում, որ դեռահասն է խնդրում այս հիանալի զգացողությունից կաթիլ-կաթիլ փոխանցել իրենց, ու ես ցավում եմ, բայց և ամաչում, երբ սպիտակի վրա շարված այս տողերն ինձ են հանձնում: ՆԵՐՈՂԱՄԻՏՆ էլ վատ չէ, բայց ի՞նչ ուսուցիչ, եթե նա ներել չգիտի դեռահասներին:

Գուցե ինքնահաստատվե՞լ են ուզում այսպիսի ուսուցիչները, ես ինքս էլ չգիտեմ, բայց միշտ էլ բարձրաձայնում եմ, որ աշակերտներին պետք չէ ծանրաբեռնել տարբեր խրթին ու ծավալուն տնային առաջադրանքներով: Տնային հանձնարարությունը դպրոցական ծրագրով նախատեսված է, որից չենք կարող խուսափել, բայց դա չի նշանակում, թե այնքանով է պարտադրված, որ միշտ էլ պետք է հանձնարարվի: Պատահում է նաև, երբ սովորելու բանավոր դասանյութը մի քիչ ծավալուն է, տարողունակ և ժամանակատար, ապա դրան կից ոչ մի այլ գրավոր առաջադրանք չեմ տալիս: Կարելի է ասել՝ տնային հանձնարարությունների առումով ուսուցիչն ինքը պետք է աշակերտների համար ստեղծի մատչելի և դյուրին ընկալվող պայմաններ:

Վերջերս իմ դասավանդելիք դասարաններից մեկում թույլ կարողությունների տեր մի քանի աշակերտների նույնիսկ հանձնարարեցի՝ եթե առաջադրանքը դժվարանում են կատարել, գոնե տվյալ տեքստը կարող են արտագրել, իսկ մյուսներն այդ տեքստից կառանձնացնեն պահանջին համաձայն նախատեսված համապատասխան բառերը:

Դպրոցականի տնային առաջադրանքի ծավալը որոշ դեպքերում կախված է նրանից, թե տվյալ դասանյութին որքան դասաժամ է տրվում և դրան կից՝ ինչքան առաջադրանքներ կան նախատեսված դասագրքում: Բայց նաև պարտադրված չէ, որ մեկ դասաժամ նախատեսված դասանյութին կցված հինգ կամ վեց վարժությունն էլ կատարեն: Ցնայած շրջապատում ուսուցիչներ ունենք, որ կարծում են՝ ծանրաբեռնելով աշակերտներին տնային հանձնարարությունների մեջ՝ իրենք լավ և պահանջկոտ ուսուցչի անուն են ձեռք բերում: Անձամբ իմ փորձից ելնելով՝ յուրաքանչյուր դասարանում միշտ էլ ձգտում եմ քիչ տնային հանձնարարություններ տալ, նույնիսկ պատահում է, որ աշակերտներն իրենք են առաջարկում ավելացնել նաև այսինչ համարի վարժությունը, բայց իմ նպատակն է լինում միշտ հանձնարարված առաջադրանքներից ամենադյուրինը տալ, որ կարողանան տանը ինքնուրույն կատարել: Երբեմն, իհարկե, երեխային սովորելիս տանը պետք է օգնել, բայց այն պետք է լինի արդարացված, չպետք է այն վերածվի նրա փոխարեն հանձնարարություն կատարելուն, ինչպես վերջերս եմ նկատել իմ աշակերտներից մեկի մոտ: Նրա տնային առաջադրանքը գրված էր ուրիշի ձեռագրով, իսկ ես համոզված եմ, որ դա ընդամենը իմ աշակերտի ծուլության արդյունքն էր: Միշտ էլ անհրաժեշտ է ամեն ինչով թեթևացնել երեխայի աշխատանքը, նրան պետք է օգնել միայն այն դեպքերում, երբ նա ոչ մի կերպ չի կարողանում ինքնուրույն հաղթահարել դժվարությունը, իսկ դրա համար պետք է հող նախապատրաստի ուսուցիչը, նա չպետք է թույլ տա, որ երեխան տանը կոտրվի, իրեն ճնշված զգա, որ չի կարողանում կատարել այդ առաջադրանքը:

http://usarmenianews.com/am-n-6727.html

22.11.2016

ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

«**Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար**» համահայկական նախաձեռնության մասին իմացա ՀՀ Սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» պարբերականից: Սա հենց այն է, որը նպատակ ունի ապահովելու Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության համաչափ զարգացումը, իսկ այն իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել հայ ժողովրդի հավաքական ներուժը, նրանց համախմբվածությունը, պետք է ազգը միավորվի մեկ գաղափարի շուրջ, ապահովվի քաղաքացիների անվտանգ ու բարեկեցիկ կյանքը:

Սա զգոնության կոչ եմ համարում՝ ուղղված համայն հայությանը, և հարցը միանգամայն զգաստացնում է բոլորիս, թե ինչ է անում մեզանից յուրաքանչյուրն այս մի բուռ հողի համար…Բայց ի՞նչ եմ անում ես… Ես՝ սահմանամերձ դպրոցի ուսուցչուհիս, որ ապրում եմ Մարտակերտում, դասավանդում Արցախյան ազատամարտի նվիրյալ Վլադիմիր Բալայանի անունը կրող միջնակարգ դպրոցում:

Մեր սահմանամերձ բնակավայրում այսպես գոյատևելու ապրելակերպը այդ մենք չենք ընտրել, այստեղ բոլորս էլ մեծից փոքր նվիրյալներ ենք: Սահմանին մոտ հողի՝ արկերից ճաքճքած հառաչանքներն են մեզ հասնում, և զգում ենք, որ այդ պահին մարդը հերոսանում է ոչ միայն պատերազմի առաջին գծում, այլ իր հարազատ հողի վրա, և մարդու մեջ խոսում է հողի ձայնը:

Երբեմն քայլերս ինձ տանում են մեր բնակելի շենքի նկուղը, որ ապաստարան է կոչվում, գարշահոտ կա այնտեղ, բորբոսնած պատեր, անչափելի խոնավություն, նույնիսկ կրծողներ, բայց մթության մեջ պատերն եմ խարխափում, որ գտնեմ այն լույսը, որ պահում է մեզ այստեղ: Իսկ դպրոցում պատերազմ տեսած երեխաներ են իմ առջև, իսկ նրանց հետ երբեմն հոգու ալեբախություն եմ ապրում…

Երբ կրակոցներն ուժգնանում են, իմ գրական հերոսներին զուգահեռվում են նոր օրերի զինվորների իրական կերպարները, մայրական թեմաս վերջանում է նրանց տունդարձին սպասող մայրերի աղոթքով, սիրային քնարերգության վերլուծությունն ամբողջանում է զինվորին ուղղված սիրո հուզառատ խոսքերով... Այդ պահերին ուզում եմ գրկել մի բառ, որ ինքնին լույս է արձակում, և ամեն անգամ հուզախռով հոգիս

ամուր գրկում է մի լուսավոր կյանք, որ պատնեշ դարձնի սահմանից եկող կրակոցներին...

Սերնդի ճակատագրի համար մտահոգ՝ ամեն անգամ նորից ու նորից համոզվում եմ, որ անկոտրում է կամքը հայի, հավատով լեցուն ու հաստատակամ և միայն հող հայրենիի նկատմամբ անսահման սիրո զգացողություն ունեցող սերունդը կարող էր այսպես գրել. «**Շատ բան չեմ հասկանում ռազմական արվեստից, բայց լավ եմ ճանաչում մարդկային ազնիվ հոգին ու անսասան կամքը: Մենք բոլորս, անկախ մեր սեռից, երդվյալ զինվորներն ենք այս սուրբ հողի, մեր ընկերներից շատերն էլ այսօր մեզ հետ կլինեին, եթե կյանքը նրանց համար, որպես արժեք, ավելի բարձր լիներ, քան զոհվելը հայրենիքի համար: Ես մտքով անգամ չեմ կարող ինձ պատկերացնել առանց հայրենիքի, Արցախ աշխարհի սահմաններն ամեն օր հայ զինվորի արյամբ են գծվում, ու այդ գիծը պահելն ու պահպանելը մեր բոլորիս սրբազան պարտքն է»:** /Ջավադյան Վարդուհի/

Թեթևանում է հոգիս, ուրեմն հայրենասիրության զգացումն ուղեկցում է սերունդներին՝ որպես անմնացորդ նվիրում, որպես ազգային տեսակը չկորցնելու հոգեկան կերտվածք: Իսկ մենք՝ Արցախի սահմանամերձ բնակավայրում ապրողներս, որ ընտրել ենք այս դժվարին ճանապարհը, ապրելու ու հարատևելու պատգամը մեր հոգում՝ համայն հայության միասնությունն ենք ուզում, ատում ենք այս չարաղետ պատերազմը և խաղաղություն ենք երազում:

http://hayernaysor.am

22.11.2016

ԶԳՈՒՅՇ ՔԱՅԼԵՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Ծանր էր տպավորությունս, երբ տեղեկացա ծնողի կողմից այսպիսի դժգոհության. «**Տղաս առաջին դասարանում է սովորում, արդեն տառերն են անցնում, տնային առաջադրանք են հարձնարարել՝ մեծատառ և փոքրատառ «Ա» գրել: Ահագին մեծ ջանքեր գործադրելով՝ տղայիս օգնել եմ՝ գրել տառերը, բայց երեխաս հաջորդ օրը եկավ տուն շատ հիասթափված, այլևս չէր ուզում ոչինչ գրել, անգամ դպրոց գնալ: Պարզվում է՝ դասվարը մեղադրել է երեխային, որ տառերը մայրդ է գրել, կոպտելով պարտադրել՝ գրատախտակին գրել տառերը, իսկ նա, ճնշվելով դասվարի վերաբերմունքից, ամեն ինչ իրար է խառնել: Որպես առաջին դասարանցի՝ գեղեցիկ ու վարժ է գրել, երևի դա է պատճառը, որ չի հավատում երեխային: Նա խրախուսելու փոխարեն՝ հիասթափեցրել է երեխային, չգիտեմ՝ ինչպես վարվեմ, շատ ահավոր է...»:**

Հիշողությանս մեջ ակամայից վերարտադրվեց անցած ուսումնական տարվա 12-րդ դասարանում սովորող թույլ կարողությունների տեր աշակերտներից մեկը, ով այդ օրն ինձ էր ներկայացրել ավելի կոկիկ ու վայելուչ ձեռագրով գրված իր տնային առաջադրանքը: Զարմացական հայացքով նայեցի տետրին ու իմ կոշտ վերաբերմունքը սահմանափակվեց նրանով, որ այդ թերթը մի փոքր պատռեցի ու առաջարկեցի, որ ինքը նորից գրի: Նույնիսկ ժպտալով հարցրի. «Այդ ո՞վ է գրել, գեղեցիկ ձեռագիր է»: Նա, նույնպիսի ժպիտ խաղացնելով դեմքին, պատասխանեց. «Չեք ճանաչի, բարեկամ է, օտար ափերից է եկել»: Նույնիսկ անհարմարության պահ ապրեցի. «Ի՞նչ ես ասում, իսկ գուցե հայերենի նկատմամբ կարո՞տն է նրան տարել այդ արարքին...»:

Ուզում եմ համեմատության եզրեր գտնել 1-ին և 12-րդ դասարաններում սովորող այդ աշակերտների միջև, մեկը նոր է ոտք դրել դպրոցի շեմին, արդեն հիասթափված է դպրոցից, իսկ մյուսն իր հետ տարել է այս գեղեցիկ հիշողությունը՝ որպես անցած օրերի մի հիանալի վերհուշ: Անձամբ ես, եթե անգամ կասկածեի, որ երեխան կարող է ինքը չի գրել այդ առաջադրանքը, երբեք՝ առավել ևս դասարանի բոլոր երեխաների ներկայությամբ, նրա համար անհարմարության վիճակ չէի ստեղծի: Կարծում եմ՝ մեր ոսկեդենիկ հայերենի, այն էլ հայոց այբուբենի առաջին

տառի նկատմամբ իմ զգացողությանը ես դավաճանած կլինեի, եթե նման վերաբերմունք ցույց տայի իմ առջև նստած աշակերտի հանդեպ: Հիշենք, որ վեց տարեկան ու դեռևս խաղային գործունեությունից չապահարմարված երեխայի հոգում դեռ նոր է դպրոցական կյանքի նկատմամբ հետաքրքրությունը ծլարձակում... Պետք չէ այն տրորել, հետագայում դժվար կլինի այն վերականգնելը:

Միշտ էլ այդ տարիքի երեխաների անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Նրանց ուսուցանելն ինքնին դժվար է, հասկանալի է, թե այսպիսի երեխաների համար ինչ ազդեցություն կունենա անհարմարության վիճակը, որը կարող է տանել տագնապայնության, պասիվության, նյարդային լարված վիճակի: Մանկավարժի կողմից բոլորի ներկայությամբ ամոթի ու անհարմարության վիճակի մեջ գցելն ուսումնական գործընթացի նկատմամբ կարող է խորը հիասթափություն առաջացնել, այն էլ այն դեպքում, երբ նա դեռ նոր է հարմարվում դպրոցական նստարանին: Այդ տարիքում երեխաների մոտ շատ մեծ է հավանականությունը հիասթափության, որի արդյունքում թերարժեքություն է ծնվում իր իսկ անձի ու ինքնագնահատականի նկատմամբ, հասկանալի է, որ երեխայի համար դպրոցը կդառնա մի օտար միջավայր, որտեղ երբևէ չի ցանկանա ոտք դնել, ինքնընտինքյան նա կկորցնի իր հետաքրքրությունը ուսման նկատմամբ: Հետևաբար մեզանից յուրաքանչյուրն էլ մանկավարժի ճանապարհով շատ զգույշ պիտի քայլի, որպեսզի չսայթաքի, այլապես իր հետ ավերածություններ կբերի՝ տխուր և անմոռաց հիշողություններով:

http://usarmenianews.com/am-n-6762.html

23.11.2016

ՈՐՔԱ՞Ն ԿՑԱՆԿԱՆԱՅԻ, ՈՐ ՄԻ ՕՐ ԷԼ ԵՍ ԵՐԵՎԱՅԻ ԱՅԴ ԿԱՅՔՈՒՄ

Նա սովորում է իմ դասղեկական 7-րդ ա դասարանում, և ես ուզում եմ իրականացնել նրա երազանքը: Շատ պարզ է, ազնիվ, երբեմն՝ համարձակ, երբեմն՝ ամաչկոտ ու նաև երբեմն՝ երեխայական: Անցած ուսումնական տարում դասարանի ավագն էր, իսկ հիմա ավագի օգնականն է: Եվ ես այս պահին էլ հիշում եմ, որ անցած ուստարում նա իր դասղեկին երբեմն խնդրում էր, որ իրեն ազատեմ այդ պարտականությունից, երբ մի քանի «անկարգներ» նրան չէին լսում:

Իմ աշակերտի՝ Նարեկ Բաղրյանի՝ սպիտակ թղթի վրա սևացրած տողերն եմ ընթերցում. «**Ես ամեն անգամ հետևում եմ այդ կայքին և շատ ուրախ եմ, որ Լոս Անջելեսի հայկական այդ կայքում տեղադրվում են Արցախի՝ սահմանամերձ բնակավայրում գտնվող մեր դպրոցի աշակերտների՝ հոգուց բխած խոսքերն ու նրանց նկարները: Միշտ էլ հպարտությամբ եմ կարդում նրանց մասին գրածները, և որքա՜ն կցանկանայի, որ մի օր էլ ես երևայի, ուսուցչուհիս գրեր իմ մասին, և այն տեղադրվեր այդ կայքում»:**

Ես ուզում եմ, որ նա ինչ-որ մի բան գրի, որ կարողանամ իրականացնել նրա երազանքը: Եվ շուտով ընթերցում եմ նրա տողերը. «**Ես ինչպիսի՞ աշակերտ եմ...Գիտեմ, որ իսկական աշակերտը պետք է լինի համեստ, պարկեշտ, կարգապահ, ազնիվ, ընկերասեր, ուսուցիչներին հարգող, դասերից չուշացող: Ճիշտ է, ես երազում եմ այդպիսի աշակերտ դառնալ, սակայն ինձ մոտ բացակայում են մի քանի լավ հատկանիշներ: Օրինակ, ես ինձ կբնութագրեմ այսպես՝ ազնիվ, ընկերասեր, ուսուցիչներին հարգող աշակերտ, բայց կուզենայի լինել նաև շատ համեստ, դասերից չուշացող, ոչ մի անգամ դասարանի աշակերտների հետ կռվի չբռնվեի, նույնիսկ երբ ես մեղավոր չեմ»:**

Այս ազնիվ ինքնախոստովանությանը զուգահեռ՝ ես հիշում եմ այն օրը, երբ նա ավագ էր դեռ... Այդ օրը մտա դասարան, նա դասասենյա-

կի մեջտեղում կանգնած, չէր կարողանում լռեցնել աշակերտներին: Ես նրան ասացի. «Դու նստի՛ր, մյուսները կանգնած մնան», և ո՞վ զարմանք, նա շատ հանգիստ ինձ դիմեց. «Տիկի՛ն Պողոսյան, եթե բոլորը կանգնում են, ես էլ եմ կանգնում, չեմ ուզում նստել, ես էլ՝ նրանց հետ»: Զարմանքիս ավելացավ մեկ այլ միջադեպ: Բոպեներ հետո տղաներից մեկը դուրս գալու թույլտվություն խնդրեց: Մինչև դռան շեմին հասնելը՝ հանկարծ հարցրի. «Դո՞ւ էլ ես աղմկել», նա հաստատակամ գլուխն օրորեց՝ այո՛: Ամբողջ դասարանը միաբերան գոչեց. «Ստում է, ինքը հանգիստ նստած է եղել»: Նայեցի ավագին, նա լուռ էր, ոչինչ չէր խոսում:

Որքան զարմանալի, նույնքան ոգևորիչ են այս անակնկալները, ինքնին գեղեցիկ է դառնում անգամ սուտը, որը մարդկային լավագույն որակների դաստիարակության մեջ իր տեղը չունի, և նորից վերհիշում եմ «Արծվիկներ» խմբի մեջ ընդգրկված այս դասարանի աշակերտների կատարած խոստովանությունը. «Երբ աղջիկները չեն բերում իրենց վզկապները, տղաներն են աննկատ իրենցը տալիս աղջիկներին, որպեսզի տղաներին նախատե՛ք, ոչ թե աղջիկներին»:

Տպագիր շարված տողերս նորից ընթերցում եմ և բազմաթիվ նկարների մեջ փնտրում եմ Նարեկի նկարը, որ այս նյութի հետ ուղարկեմ Լոս Անջելեսի հայկական «USArmenianews.com» լրատվական կայքին ու իրականացնեմ նրա երազանքը:

http://usarmenianews.com/am-n-6792.html

24.11.2016

ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐՆ ԱՅՍ ՓՈՔՐ ԵՐԿՐԻ ՄԵԾ ԹԱԳԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ

Նայում եմ այս լուսանկարին, այդ վարդի կոկոնի նման ինքն էլ չբացված ու շատ սիրուն է: Երբեմն մտքերով ես նրա հետ եմ, նրա անցյալի այն ուրախ և տխուր օրերի... Այժմ էլ նա միշտ հարափոփոխ մտքերի մեջ է, իսկ ես փորձում եմ նրան հասկանալ: Երբեմն դեմքին ժպիտն է շողշողում, երբեմն անտես, մի անհայտ թախիծ պատում է հոգին, լինում են պահեր, նա անպատրաստ է դասերին, կամ էլ երբեմն ինքն է ցանկություն հայտնում դաս պատմելու: Հաճախակի դիտողություն եմ անում, երբ անուշադիր է, բայց ինչո՞ւ ներողամիտ եմ ես և միշտ էլ ուզում եմ նրան հասկանալ:

Իմ հոգում էլ արձագանք են տալիս օրեր առաջ գրած նրա խոսքերը, որ տխուր են, թախծոտ. «**Խավար է ու մութ, լռություն անգութ, ես կրկին մենակ ու նորից արթուն: Էջերն եմ թերթում այն հին գրքերի, որոնք բազմիցս վերընթերցել եմ, բայց հիմա միայն շրջում եմ, անցնում, որ շնչեմ փոքր-ինչ օդն այն օրերի, որ չեն կրկնվի երբևէ կյանքում»:**

Այս օրերին ես 12-րդ հումանիտար դասարանում էի...Գրականության դաս էր...Իմ աշակերտուհին՝ Լիլիթ Հովսեփյանը, ասաց, որ սիրում է այդ բանաստեղծին և կլանում էր ամեն մի բառս, հայացքը հառած ինձ՝ նա սուզվել էր Սևակի ստեղծագործությունների մեջ: Հաջորդ օրը նա հանգիստ ու համաչափ ռիթմով ասմունքում էր ու «գերազանց» գնահատվեց: Եվ բոլորիս կողմից սիրված բանաստեղծն այդ օրը տարավ նրան ստեղծագործելու. «**Գիշերը մղձավանջի մեջ աչքիս առջև կարմիր տառերով Սևակի տողերն էին երևում. «Մենք սպանվեցինք մեր հայրենիքում, Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց»:**

Երկար եմ մտածել, թե ինչ տողեր կարող եմ գրել մեր զինվորների մասին, ինչպես շնորհակալ լինեմ տուն, ընտանիք, սիրելի մարդիկ և նույնիսկ երեխաներ թողած ու սահմանում կանգնած տղաներին: Բայց քանի մենք չենք ունենում ծառայող մեկին, այնքան սրտացավ և ուշա-

դիր չենք լինում բանակում կատարվող իրադարձություններին: Հարազատ եղբայրներս ծառայում են, և ես շատ հպարտ եմ, որ նրանք հայոց բանակում են: Աստծո օրհնությամբ ուզում եմ բոլորը ողջ-առողջ վերադառնան տուն, որպեսզի յուրաքանչյուր ծնող մեծ հպարտությամբ գրկի իր քաջ զավակին...

Հոգումս լցված բառերն ու արցունքները շատ են, զգացմունքներս էլ՝ տարբեր ու իրար խառնված: Ծառայել է հայրս, հորեղբայրս, ծառայում են իմ թագավոր եղբայրները, ու դեռ հայրենիքի վերջնական խաղաղության համար ծառայելու է մի ողջ հայ ազգ: Ազգիս հայ զինվորները, բոլոր այն տղամարդիկ, որ ծառայում են հայրենիքին, այս փոքր երկրի մեծ թագավորներն են: Հոգուս ամենանուրբ թելերով կապված եմ իմ Մարտակերտին: Յուրաքանչյուր արցախցի հերոս է, որ ապրում է այստեղ՝ գիտակցելով, որ կարող է պատերազմ լինի: Իսկ այն ողբ, լաց ու դժբախտություն է իր հետ բերում: Թող ոչ մի հայորդու արյուն չթափվի, չեմ ուզում աշխարհում լինեն պատերազմներ»:

Որքա՜ն լավ եմ հասկանում իմ աշակերտուհու անհանգիստ ապրումները, որ անձնական են ու անանձնական: Քրոջ սրտի տվայտանք, խաղաղ կյանքի մի ճամփա, որ բոլորիս երազանքն է դարձել, իսկ զինվորին թագավոր կարգելու նրա ներքին համոզվածությունն ու դիրքորոշումը ոգևորեց մանկավարժիս: Այո՛, այս փոքրիկ երկրում թագավորը զինվորն է:

http://usarmenianews.com/am-n-6821.html

25.11.2016

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՀԱՅՏՆԻ ԵՐԳՉՈՒՀԻ ԴԱՌՆԱԼ



«Ես 12-րդ հումանիտար դասարանի աշակերտուհի եմ: Սովորական մի արցախուհի: Վերաբերվում եմ Արցախին այնպես, ինչպես բոլորն իրենց կրծքում գտնվող սրտին: Ապրում եմ Մարտակերտում, բայց վախը սրտումս: Քնում եմ՝ ամեն օր մտածելով, որ մեր արնախում հարևանը կարող է պատերազմ սկսի: Այս ամենն ինձ մտահոգում է, շատ անհանգստացնում: Բայց ես, ինչպես մնացած բոլոր մարդիկ, նույնպես ունեմ սրտումս պահած երազանք և ուզում եմ երկինքը խաղաղ լինի, իրականացնեմ երազանքս: Ուզում եմ երգչուհի դառնալ, հուսով եմ, որ մի օր հայտնի կդառնամ «Աննա Խաչատրյան –Annie» երգչուհու անունով»:

Մոր պատմածով պապը երաժշտության մարդ էր և երազում էր թոռներից մեկը դառնար երաժիշտ ու արդարացներ նրա սպասելիքները: **«Շնորհակալ եմ իմ պապից, որովհետև նրա շնորհիվ եմ դաստիարակվել երգչուհու ներքնաշխարհով: Ես երգել սկսել եմ դեռ յոթ տարեկանից: Մասնակցել եմ բազմաթիվ մրցույթների, գրավել տարբեր հորիզոնականներ: Ավարտել եմ երաժշտական դպրոցը: 2012 թ.-ին մասնակցել եմ Գյումրիի «Երգի մրցույթ» փառատոնին, արժանացել դիպլոմի՝ որպես հոգևոր մրցույթի լավագույն կատարող: 2013 թ.-ին Ստեփանակերտում մասնակցել եմ մի նոր մրցույթի, հանրապետությունում գրավել առաջին հորիզոնականը: Որպես լավագույն կատարող՝ 2013-ին մեկնեցի Հունաստան՝ այնտեղ կայանալիք միջոցառմանը մասնակցելու: Լինելով լավագույնը՝ նույնիսկ իմ մասին գրվեց Հունաստանի ազգային թերթում»:**

Եվ ես հիշում եմ, որ տարիներ առաջ՝ դեռ հարևանությամբ ապրելիս, մի տոնական օրվա միջոցառման ժամանակ՝ մեծերիս հորդորներից հետո, նա երգեց: Բոլորս հիացած էինք, իսկ հայրիկը չէր ուզում դուստրը երգչուհի դառնա: Եվ ես համոզում էի նրան, որ պետք չէ ար-

գելել, երգելու տաղանդով օժտված այս փոքրիկ գեղեցկուհին տարիներ հետո ամենուր կհնչեցնի մեր բնակավայրի անունը:

Նա մեր դպրոցի բոլոր միջոցառումների զարդն է, ու նրա կատարումներով այդ երգերն ամեն անգամ իրենց մեղեդայնությամբ ծաղկեցնում, նորովի գույներ են հաղորդում շրջապատին: Իր երգելու հնչերանգով, խոսքերով, իմաստով ու էությամբ նա տարբերվում է մյուսներից ու միշտ էլ արժանանում բարձր գնահատանքի: Այդ կատարումները հոգեվիճակի ազդեցության ոլորտ ունեն, որ երբեմն արձագանքում են նրա ապրումներին, ազդում մեր տրամադրության վրա, հաղորդում մեզ մի նոր զգացողություն: Երբեմն իմ դասերին էլ հասանելի են դառնում մեզ նրա երգի շատ կամաց ու մեղմ ելևէջները, վայելում ենք այն՝ չցանկանալով անգամ ընդհատել նրան: Ու նրա երգի այդ հմայիչ մեղեդիներին է հյուսվում բոլորիս երազանքը, որ մի օր նա հայտնի դառնա ու ամենուր հնչեցնի նաև մեր դպրոցի անունը:

Ակամայից իմն են դառնում աշակերտների խոհն ու երազանքը, նպատակը, ապրումն ու հույզը: Եվ ես ուզում եմ իրականություն դառնան նրանց բոլոր նվիրական երազանքները:

http://usarmenianews.com/am-n-6845.html

26.11.2016

ՆԱԵՎ ԱՅՍՊԻՍԻՆ Է ՆՈՐՕՐՅԱ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ. «ՏԻԿԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ, ԱՅՍՕՐ ՇԱՏ ԳԵՂԵՑԻԿ ԵՔ»

Դպրոցական կյանքը հետաքրքիր է, դեռահաս է կողքիդ, ամեն մեկը յուրովի մի նոր աշխարհ, անբացատրելի մի լայն հորիզոն, որի կենտրոնում կանգնած ես դու, և պիտի կարողանաս ճիշտ «խաղալ», հակառակ դեպքում կորցնում ես անունդ, որ «մանկավարժ» է կոչվում:

Հանկարծակի անակնկալը երբեմն մատուցվում է այնտեղից, որտեղից ընդհանրապես չես սպասում: Մի փոքրիկ խոսք, վերաբերմունք, և ահա շրջադարձ է տեղի ունենում սրտումդ, մի այլ հայացքով ես նայում քո դիմաց կանգնած դեռահասին:

Մինչ դասարան մտնելս՝ շատ մոտիկ ինձ ուղղված հարց է հնչում, նայում եմ կողքիս կանգնած աշակերտին: Նա մեղմ ժպիտով, նաև իմ հարցական հայացքը նկատելով՝ կրկնում է իր կողմից՝ ինձ համար շատ անսովոր հնչող հարցը. «Ինչպե՞ս եք, տիկի՛ն Պողոսյան»:

Այդ աշակերտը, որ վերջին օրերին անընդհատ հանդիմանություններ էր արժանանում՝ դասերին անպատրաստ ներկայանալու համար, կարծես անակնկալի է բերում ինձ այս հանկարծակի հարցումով: Ինձանից անկախ ժպտում եմ, իսկ դասին նրա վեր բարձրացրած ձեռքն եմ նկատում: Մի քանի սխալ մտքեր, ինքն իրեն մեղադրող խոսքեր, որ լավ չի սովորել դասը, նաև նորից մոռացել է գրել տնային աշխատանքը, և անորոշության մեջ հայտնված ուսուցչուհիս...Նույնիսկ չգիտեի անգամ՝ ինչ գնահատել... Դասամիջոցին նորից հայտնվում է կողքիս, հիշեցնում ինձ, որ հարցերից մեկին պատասխանել էր: Կարծես պարտքի զգացողությամբ, որ ինձանից համարձակվել էր որպիսություն հարցնել, նայում եմ նրա՝ դրական գնահատական ստանալու ցանկությամբ լի հայացքին, գլխով հաստատում, որ լավ սովորի, հետո նորից հարցնելու եմ:

Նրա ուրախ տրամադրությամբ համակված, որ դասամատյանում «անբավարար» չեմ գնահատել, հաջորդ դասաժամին մտնում եմ մեկ ուրիշ դասարան: Իմ ամենօրյա բարևին հետևում է աշակերտուհիներից մեկի համարձակ արտահայտությունը. «Տիկի՛ն Պողոսյան, այսօր շատ գեղեցիկ եք»: Շվարած նայում եմ նրան... Շուտով ընթերցում են տնային առաջադրանքները, իր ուսուցչուհու «գեղեցկությունը» նկա-

տող աշակերտուհին չէր գրել, բայց կենսուրախ ժպիտ կար դեմքին: Այս անգամ «պարտքի զգացողությունը» թույլ չի տալիս ինձ զիջել, և շուտով նա դասարանում գլխահակ գրում էր իր տնային առաջադրանքը:

Սովորաբար մեր ավանդական հասարակության մեջ միշտ էլ կարևոր գործոն է համարվել մանկավարժական փորձը: Իսկ ո՞վ ուներ փորձ՝ մեծահասակը, ով քսան-երեսուն տարի անընդմեջ նույն աշխատանքն էր կատարում: Նա առավելություն էր ստանում երիտասարդ մանկավարժի կողքին, հետևաբար, առաջ կարևոր էր փորձը, իսկ փորձ ուներ ավագ սերունդը: Այսօր փորձին գալիս է փոխարինելու մտքի ճկունությունը, փոփոխություններին համընթաց գնալը, կրեատիվ մտածողությունը: Այսօր սերունդների հարաբերություններում փորձի իշխանությանը գալիս է փոխարինելու գիտելիքների, հմտությունների, ճկունության իշխանությունը…Հետևաբար բոլոր մանկավարժներս էլ, անկախ տարիների փորձից, մեր ինքնակատարելագործմամբ, ինքնազարգացման միջոցով ամեն օր պետք է դառնանք լավը, ավելի ճկուն և հնարամիտ, որ կարողանանք ազնիվ ու արդար, ազդեցիկ ու հետաքրքիր լինել դեռահասի հետ ունեցած հարաբերություններում:

http://usarmenianews.com/am-n-6885.html

27.11.2016

ԱՅԴ ՕՐՎԱ ԱՆՄԵՂ-ՄԵՂԱՎՈՐ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ



7-րդ ա դասարանում զայրանալու առիթ կար… Ես փորձում եմ գտնել անկարգության հեղինակին, բայց բոլորը լուռ են: Հայացքով փնտրում եմ մեկին, ով պիտի խոստովաներ, և շուտով կանգնում է աշակերտուհիներից մեկը՝ Վիոլետա Մանուկյանը: Նա գլխահակ, բայց շատ կամաց ասաց, որ ինքն է մեղավորը: Ամբողջ դասարանը ցնցվեց, համարյա բոլորը միաբերան հաստատում են, որ նա ստում է: Մինչ կհասցնեի նրան ինչ-որ բան հարցնել, հանկարծ ոտքի կարգնեց մեկ ուրիշը՝ Արիաննա Առուշանյանը, ով հաստատեց, որ ինքն է «հանցավորը»: Այս անգամ նորից լսեցի համադասարանցիների դժգոհությունը, որ նա էլ խաբում է: Երկուսին կանչում եմ ինձ մոտ, իմ բոլոր հարցումներին նրանք հաստատակամ են: Իմ սպառնալիքները սահմանափակվում են նրանց օրագրերում վարքի «անբավարար» գնահատականով: Նրանք արտասվում են, իսկ ես պատմում եմ մի դեպք, որ տարիներ առաջ մեկ ուրիշ դպրոցում աշակերտներից մեկին դպրոցից հեռացրել են այն պատճառով, որ ընկերոջը չի ցանկացել մատնել և իր վրա է վերցրել նրա մեղքը: Նորից հայացքս առանձին-առանձին հառում եմ աշակերտներին, սպասում եմ մեղավորի ինքնախոստովանանքին, բայց ոչ մի ձայն, բոլորը լուռ են: Դասերից հետո առաջարկեցի այդ երկուսին մնալ: Զարմանալի էր, որ նրանց հետ մեկն էլ մնաց աղջիկներից, ով խոստացավ, որ ինքն էլ մեղավոր է, բայց «հանցավորը» մեկ ուրիշն է, ով հասցրել էր դուրս գալ դասարանից: Իսկական մեղավորները պարսավանքի արժանացան, նաև՝ վարքի «անբավարար» գնահատականի, ովքեր զերծ չմնացին նաև արցունքներից:

Վերջում մենք միասին ենք, ես ու այն անմեղ մեղավորները, որ նայում են ինձ, բայց արցունքոտված աչքերով են: Ուզում էի այդ «զոհա-

բերության» պատճառն իմանալ, իսկ նրանք շատ էին հուզված: «**Մենք գիտեինք, թե ովքեր են կատարել այդ անկարգությունը, տեսել էինք, բայց չցանկացանք մատնել նրանց: Երբ հարցրիք, թե ով է այդ արարքը կատարել, ոչ մեկը չխոստովանեց, իսկ ես չուզեցի, որ իմ ուսուցչուհին շատ բարկանա, դրա համար ասացի, որ ես եմ կատարել, բայց ինձ վատ եմ զգում, որ Ձեզ խաբել եմ**» /Մանուկյան Վիոլետա/:

Ինչպիսի՜ անկեղծություն, պարզ ու անսահման անմեղություն, որ հիացնում է ինձ: Ես հիշում եմ այն օրը, երբ առավոտյան՝ դեռ մինչև առաջին դասաժամն սկսելը, նա կանգնեց դիմացս և խնդրեց իրեն բաց թողնել դասերից: Ասացի. «Տեսնում եմ՝ վատառողջ ես, անձրևային այս մառախլապատ եղանակին կարող էիր չգալ դասի, պարզվում է՝ եկել ես հարցնես, հետո՝ գնաս, այդպե՞ս է...»:

Նա, առանց վարանումի, շատ հանգիստ ավելացրեց. «Բայց ես չէի ուզում անհարգելի բացակայել, մայրիկին էլ ասացի ու եկա հարցնեմ, հետո էլ կգնանք հիվանդանոց»: Հայացքս ուղղում եմ այն մյուսին, որ գլխահակ աչքերն էր սրբում: «**Ես շատ մեղավոր եմ զգում ինձ, որ ուսուցչուհուս խաբել եմ, բայց ես սիրում և հարգում եմ Ձեզ**»**:** Եվ նույնը կրկնում է նաև այս մեկը, որ չուզեց իր ուսուցչուհին շատ բարկանա, «**իսկ երբ տեսա, որ դասարանը չի հավատում ընկերուհուս խոստովանությանը, ես իմ վրա վերցրի, որ նրան օգնած լինեմ**»**:**

Կարծես խոսելիք չունեմ, մտասևեռ նայում եմ նրանց, իսկ այս վերջինն այն մեկն է, ում երբեմն դիտողություն եմ անում ինչ-որ պատճառով: Մի տեսակ լարված են, որ դասղեկին խաբել են…Որքա՜ն գեղեցիկ էր այդ պահը, մտքերի մեջ եմ, բայց ժպտում եմ, իսկ նրանք ուրախ են, աչքերի արցունքները ցամաքել, իրենք էլ ժպտերես են:

http://usarmenianews.com/am-n-6895.html

28.11.2016

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆՍ ՄԵՋ ՄԻ ԱԶՆԻՎ ՏՂԱ

Ամեն ինչ չէ, որ սահուն է անցնում դպրոցական կյանքում: Երբեմն որևէ մեկի սխալ արարքի վրա կամ դաս չսովորելու համար բարկանում ես ու նեղանում, բայց հոգումդ ծանրացած քարը փորձում ես փշրել՝ մտածելով, որ դիմացինդ անգիտակցաբար է դա կատարել, կամ գուցե ժամանակ չի ունեցել դաս սովորելու: Եվ մտածում ես, որ նեղանալն էլ քարի նման բան է, երևույթներ կան, որ պետք է երբեմն թեթև տանել, չպետք է թույլ տալ, որ հոգումդ ծանրանան:

Ես նրան հիմա չեմ դասավանդում, բայց երբեմն հիշում եմ այդ աշակերտին: Ու կա մի փոքրիկ հիշողություն, որ ինձ տանում է դեպի այդ ազնիվ տղան… Այդ ուսումնականի՝ իմ դասավանդելիք նոր դասարանում ուշադրությանս արժանացան մի քանի յոթերորդցիներ, ովքեր արդեն մի քանի անգամ տարբեր պատճառաբանություններով արդարանում էին՝ դասին անպատրաստ ներկայանալու համար: Համբերությունը հատած ուսուցչուհու կարգավիճակում հայտնվելով՝ այս անգամ նրանց «անբավարար» գնահատեցի: Իրար հաջորդող երկու դասաժամեր, բայց հոգումս թանձրացած անհանգստություն, մի անսովոր ու սառը անջրպետ կար ստեղծված, որ պետք է ինչ-որ ձևով հաղթահարեի: Դասամիջոցին մնացի դասարանում, կամաց-կամաց ինձ մոտեցան աշակերտները… Չիմացանք ինչպես, բայց ակնթարթի նման անցան այդ րոպեները:

Ես նրանց դեռ չգիտեի, բայց մենք զրուցում էինք... Շատ անկեղծ, սրտամոտ մի զրույց, բոլորիս համար հաճելի, դուրեկան մի միջավայր, որտեղ ժպիտներ կային՝ անկեղծ ու անչար, իսկ ես բոլորի մեջ փնտրում էի նրանց՝ այդ օրվա իմ «անմեղ մեղավորներին»: Ինձանից ոչ հեռու կանգնած աշակերտի գլխիկոր հայացքը նկատեցի, կարծես հաշտության ձեռք մեկնեցի, մատներս ակամայից դիպան նրան, մի պահ զարմացած ինձ հառեց հայացքը, բայց հետո ժպտաց: Դասի զանգը

հնչեց, բոլորը զբաղեցրին իրենց տեղերը, իսկ ես իր տեղում նստած այդ աշակերտին ակամայից հարցրի. «**Դու ազնի՞վ տղա ես...**»:

«**Դասարանի աշակերտներից հարցրե՛ք**»,-շատ կամաց լսելի եղավ նրա պատասխանը: Հիացմունքս չթաքցրի. «Բայց չէ՞ որ քո ասածից հետո ես այլևս հարցնելու բան չունեմ, ուրեմն դու ազնի՛վ տղա ես», և ի պատասխան իմ խոսքերի՝ աշակերտները միաձայն հաստատեցին այդ: Ես հավատացի նրան, որ դասին անպատրաստ այլևս չի ներկայանա: Հայացքս ընդգրկեց նաև այն մյուս «անբավարար» գնահատված աշակերտներին, ինձ թվաց՝ մենք հասկացանք իրար, չէ՞ որ ազնիվ տղաները երբեք չեն ստում: Ու այդպես անցան օրեր, ամիսներ, և, իրոք, համոզվեցի ես, որ ազնիվ տղաները, հավատարիմ են մնում իրենց խոստմանը:

http://usarmenianews.com/am-n-6924.html

30.11.2016

ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԴԱՐՁԵԼ ԵՄ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՍՏՂ

Նա մեր դպրոցի 7-րդ ա դասարանի աշակերտուհիներից է, շատ համեստ, կարգապահ մի փոքրիկ հրաշք, որ օժտված է երգելու առանձնահատուկ շնորհքով: Ազնվության ու բարության հետ զուգահեռվում են այս աղջնակի լավագույն երազանքները, որ միահյուսվում են նրա երգելու մեծագույն ցանկության հետ, և գուցե հետագայում հայտնի՞ կդառնա ու այսպես սիրունական իր հմայքով կազդարարի իր մասին՝ ամենուր փռելով արցախաբույր իր ձայնը:

Չնայած ապրիլյան պատերազմական օրերի հետ կապված իր հիշողություններով նա մեկ անգամ արդեն երևացել էր հայկական «USArmenianews.com» լրատվական կայքում, ես նրան հարցնում եմ, թե ինչպիսի զգացողություն կունենա, երբ հաճախակի երևա կայքում: Պատասխանը երկար չի սպասվում. «**Դա տարօրինակ զգացում է, չգիտեմ անգամ՝ ինչպես բացատրեմ: Շատ հաճելի կլինի, մի պահ կպատկերացնեմ, որ ես դարձել եմ համացանցի աստղ, ինձ արդեն տեսնում են տարբեր երկրներում…Դա նշանակում է, որ ես ապրում եմ, շնչում, գոյատևում: Ուրախալի է, որ մարդիկ քո մասին կարծիք են կազմում, նույնիսկ մտածում ես՝ արդյո՞ք դրական կլինի այդ կարծիքը»:**

Նա վտիտ է, իր համադասարանցիների կողքին շատ փոքրիկ, բայց սիրում է նստել վերջում…Իմ հորդորները, որ նա պիտի աջևում լինի, բարեհամբույր ժպիտով մերժվում են միշտ: Այսպես է նա՝ լռին ու համեստ, ազնիվ ու անաղարտ մի անկեղծ հոգի, որ երբեմն առիքից առիթ իր հմայիչ երգերով հմայում է մեզ: Եվ ինձ զարմացնում է մի քանի տողի մեջ իր մասին գրած ինքնաբնութագիրը. «**Ես չգիտեմ ինչպիսի աշակերտուհի եմ: Գուցե համեստ եմ, բայց նաև քմահաճ եմ: Երբ ուզում եմ՝ դասերս սովորում եմ, երբ չեմ ուզում՝ չեմ սովորում: Բայց որ ցանկանամ, շատ լավ էլ կսովորեմ, ուղղակի ծույլ եմ: Ուզում եմ ուղղվեմ, չի**

ստացվում, ի՞նչ անեմ, բնավորությունս այդպիսին է»:

Եվ այս սիրունատես վտիտ աղջնակին ես նորից տեսնում եմ իր անցած օրերում, երբ անսահման մեծ սարսափ կար հոգում, և օրեր անց, որպես ականատես, նա պիտի գրեր մի փոքրիկ պատմություն. «**Այդ օրը մեզ կորցրած՝ դուրս եկանք տնից, առաջին արկն ընկավ մոտակա խանութի առջև, հետո չեմ հիշում...Փողոցով անցնող մեքենաներից մեկը կանգնեց մեր կողքին. դա հիվանդանոցի շտապ օգնության մեքենան էր: Մայրս ինձ ու քրոջս տարավ հիվանդանոցի նկուղը: Ամբողջ մարմինս, առավելապես ոտքերս դեռ դողում էին...»:**

Նայում եմ այս փոքրիկ գեղեցկուհու նկարին, որ իր երազանքների հրապույրն է փռել, ինձ հասանելի են դառնում այն հայտնի երգի տողերը, որ մեղմիվ ու ռիթմիկ էլևէջներով արձագանքում են բոլորիս երազանքներին. «**Ահ ու սարսափ տեսանք, Վշտի մեծ ճամփա անցանք, Դավն ու կորուստը մենք Մեծ պատվով անցանք: Ու հիմա գիտենք, Այն ինչ ուզում ենք մենք՝ Խինդն է մանկան անմեղ, Խաղաղ երկինքն է: Մենք Արցախն ենք, Մենք մեծ Սփյուռքն ենք, Մենք միասին կոչվում ենք Հայաստան...»:**

http://usarmenianews.com/am-n-6981.html

01.12.2016

ԱԿՆԱԾԱՆՔԻ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔ «USArmenianews.com» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻՆ

Շնորհավորական խոսքերս միաձուլվում են երախտիքի արտահայտությանս, երբ գիտեմ, որ այսօր ջերմագին խոսքերի առիթ կա՝ ուղղելու Լոս Անջելեսի հայկական լրատվական կայքի ամբողջ խմբագրակազմին՝ հանձին խմբագիր Գայանե Մանուկյանի, ում շնորհիվ մենք տեսանելի դարձանք համայն հայությանը:

Լրացավ կայքի մեկ տարվա ակտիվ ու ազնիվ գործունեությունը, իսկ այդտեղ իր արժանվույն տեղն ունեն նաև Արցախի սահմանամերձ բնակավայրի՝ Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհուս ու իմ աշակերտների ուրախ և տխուր օրերի մտորումները: Դա դպրոցական մի կյանք է, որ ամեն օր համալրվում է այդ կայքի «Մանկավարժի անկյուն» բաժնում: Դրանք նաև գեղարվեստական վերլուծություններ են, մանկավարժի խոհեր, հասարակական կյանքի իրադարձությունների արձագանքներ, որ այս ամիսների ընթացքում տեղ գտան նաև կայքի այլ բաժիններում:

Այդ ճանապարհին ես առնչվեցի լուսավոր մարդկանց հետ... Առանձնահատուկ ակնածանքս և շնորհակալությունս հրաշալի հայուհուն՝ խմբագիր Գայանե Մանուկյանին և Արմեն Ալխասյան լավագույն անհատականությանը, ով այդ կայքում, շաբաթվա յոթ օրերի քսանչորս ժամն անգամ իմ նյութերը տեղադրելու իր ակտիվ ու ազնիվ պատրաստակամությամբ, դրանք հասանելի է դարձնում ինձ:

Այս մեկ տարվա ընթացքում հպարտության զգացում ունեցա, որ օտար ափերում այսպես հրաշալիորեն պահպանվում է հայկականն ու հայեցին: Այս կայքում մանկավարժիս մտորումներին տեղ տալը մեծագույն ոգևորություն բերեց նաև իմ աշակերտներին: Արդեն մեկ տարի է, ինչ Արցախի դպրոցի ուսուցչուհիս իր աշակերտների հետ մի նոր հարաբերությամբ լուսաբանվում է այս կայքում՝ ի տես շատ-շատերի, և

մենք ուրախ ենք, որ մեր կողքին և մեզանից շատ հեռու իր գործունեությամբ այս կայքը կարողացել է վաստակել բոլորիս սերն ու հարգանքը: Սրտանց շնորհավորում եմ այս տարեդարձը և միանում իմ աշակերտների՝ կայքին ուղղված շնորհավորական խոսքերին. «**Մեր դասարանի կողմից շնորհավորում եմ կայքի գործունեության մեկ տարին, որ օտար ափերում կարոտաբաղձ հոգով կարողանում է պահպանել հայոց լեզուն, ազգային ավանդույթներն ու հայեցին**» /Սամվելյան Անժելիկա, 7-րդ ա դասարան/:

«**Շնորհիվ այս կայքի և իմ ուսուցչուհու՝ շատ-շատերը իմացան, որ այս գողտրիկ Արցախում նույնպես կան խելացի ու շնորհալի երեխաներ, որոնց մասին հեռուներում չգիտեին: Նման պատվի արժանացել եմ նաև ես, երբ իմ շարադրությունը տեղադրվել է այդ կայքում: 11-րդ դասարանցիների կողմից սրտանց շնորհավորում ենք կայքի բոլոր աշխատողներին, ցանկանում, որ այն տարիների ընթացքում բազում հաղթանակներ ունենա**» /Մարդոյան Քրիստինե/:

«**12-րդ հումանիտար դասարանի աշակերտների անունից շնորհավորում եմ մեզ հարազատ դարձած կայքին: Մեր մտքերը, մենք ինքներս տեսանելի դարձանք աշխարհին… Հաճելի է, երբ հասցեիդ գովասանական խոսքեր են հնչում, ավելի ճիշտ, հպարտություն ես զգում, երբ աշխարհի մյուս ծայրում հասանելի է դառնում խոսքդ, դա մեզ պետք է, առավելապես մեր երկիրը՝ Արցախը՝ աշխարհին ի ցույց դնելու համար: Ղարաբաղցու խոսքը, այն էլ՝ դպրոցականներիս, հասանելի է դառնում ամենուր, որի համար երախտապարտ ենք այդ կայքի ամբողջ խմբագրակազմին, նաև՝ մեր կողմից շատ սիրված ու հարգված ուսուցչուհուն**» /Անդրյան Անգելինա/:

Այս ջերմագին խոսքերին ուզում եմ ավելացնել հոգուցս բխած հույզերի մի բույլ, որ այս հայկական լրատվականն ինձ համար ուրվագծել է մի փոքրիկ կենսագրություն, նրա շնորհիվ մեկ տարվա ընթացքում տպագիր տառերի շարվածքով անմահացավ մի նոր կյանք, որտեղ ուսուցչուհի կա՝ նաև լրագրողական աշխատանքով ու որոնումներով, իսկ հեռուներում հայկական լրատվական կա, մի հայրենակարոտ օջախ, որ հարազատ ձայնով միշտ կանչում է ինձ:

http://usarmenianews.com/am-n-7014.html

01.12.2016

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔ

12-րդ հումանիտար դասարանում եմ, հավաքում եմ նրանց նամակները, որ Լոս Անջելեսի հայկական USArmenianews.com լրատվական կայքի մեկ տարվա գործունեությանն է նվիրված: Անկեղծություն կա այստեղ, մի քանի տողերում արտահայտված շնորհավորանքի խոսք:

Կարապետյան Սյուզաննա: «Ուզում եմ շնորհավորել կայքի միամյակը, թող այն աճի, ընդլայնվի, ավելանա ընթերցողների քանակը, նաև շնորհակալությունս ամբողջ խմբագրակազմին, մեր ուսուցչուհուն, որոնց շնորհիվ հնարավորություն ընձեռվեց երևալու աշխարհին»:

Բաղրյան Իննա: «Շնորհավորում եմ կայքին այս գեղեցիկ հոբելյանի առթիվ և մաղթում նորանոր հաջողություններ, բազում ձեռքբերումներ իրենց ազգանպաստ և նվիրական գործում: Այս լրատվական կայքը բացառիկ է, այն իր առանցքային դերակատարությունն ունի Սփյուռքում մայրենին տարածելու ուղղությամբ: Ես ուշադիր հետևում եմ գրեթե բոլոր հրապարակումներին և վստահաբար կարող եմ ասել, որ այս կայքը իր հոդվածներով ու որակով լավագույն լրատվականներից մեկն է: Առանձնապես ուզում եմ նաև իմ շնորհակալությունը հայտնել մեր ուսուցչուհուն, որ մեզ հնարավորություն տվեց թևեր առնելու և մեր մտքերը ներկայացնելու բոլորին»:

Ջավաղյան Վարդուհի: «Երկուսին էլ ուզում եմ շնորհակալություն հայտնել՝ ուսուցչուհուս, ում շնորհիվ մենք մտերմորեն մեր մտքերով ու կարծիքներով անկեղծացանք, և կայքին, որ հնարավորություն ընձեռեց տեսանելի դառնալ շատերին: Սրտանց շնորհավորում եմ կայքին՝ նրա ծննդյան օրվա կապակցությամբ, ցանկանում՝ միշտ էլ շարունակական լինի նրա ակտիվ գործունեությունը»:

Աղաբեկյան Սեյրան: «Շատ ուրախ եմ, որ իմ մտքերն էլ տեղ են

գտել այդտեղ: Շնորհավորում եմ այս կայքի անդրանիկ տարեդարձը և ցանկանում բեղուն ստեղծագործական գործունեություն»:

Ղուլյան Գեղեցիկ: «Անչափ ուրախ եմ, որ մեր հայրենիքից հեռու՝ օվկիանոսից այն կողմ, կան մարդիկ, ովքեր ճանաչում են մեզ և ողջունում մեր մտքերը: Լոս Անջելեսի կայքին հայտնում եմ շնորհակալություն՝ մեզ տեսանելի դարձնելու համար, և շնորհավորում եմ նրան իր մեկ տարվա գործունեության համար»:

Կարապետյան Արմինե: «Ինձ թվում է՝ յուրաքանչյուր մարդ սիրում է լինել ուշադրության կենտրոնում: Ես նույնպես պատկանում եմ այդ մարդկանց թվին: Երբ երևացի Լոս Ամջելեսի այս կայքէջում, մի տեսակ հպարտություն զգացի, որ մարդիկ կարող են կարդալ իմ խոսքերը: Քանի որ կայքի մեկ տարին է, շնորհավորում եմ և ցանկանում, որ այն շարունակի իր գործունեությունը և միշտ էլ հետաքրքիր նյութերով լինի ուշադրության կենտրոնում»:

Արզումանյան Լադա: «Ուզում եմ շնորհակալությունս հայտնել այս կայքին, մեր՝ աշակերտներիս ձայնը լսելի դարձնելու համար: Կարծում եմ՝ սա մեծ գործ է, որ մեր մտքերը հրատարակվում են այստեղ, ամեն կայք չէ, որ ուշադրություն է դարձնում դպրոցականներիս կարծիքներին: Թող միշտ ծաղկի այն և լսելի դարձնի մեր խոսքը բոլորին»:

Դանիելյան Անուշ: «Հիրավի, մեծ գնահատանքի է արժանի այս կայքի գործունեությունը, որքա՜ն ուրախ եմ, որ մեր խոսքերը, սահմանամերձ բնակավայրիս դպրոցը և մենք տեսանելի ենք դառնում ամենուր: Շնորհավորում եմ կայքի մեկ տարին, ցանկանում ստեղծագործական բեղուն ճանապարհ»:

Իրավամբ, Լոս Անջելոսի լրատվական կայքը դարձավ մեր շատ ու շատ դպրոցականների ինքնահաստատման ամբիոնը: Մնում է ասել, որ սերնդափոխության ճանապարհին մեր ստեղծագործական միտքն արթուն պահելու, անմնացորդ նվիրումի ու ներշնչանքի համար այդ կայքը մեզ միշտ էլ կուղեկցի, ու «Մանկավարժի անկյունը» իր մեջ ամբարած նյութերով ամեն տարի կազդարարի դպրոցական կյանքի մի նոր գրքի ծննդյան մասին: Տարիներ կանցնեն, ու այդ կայքն էլ իր մեջ ամփոփած նյութերով կդառնա տարեգրություն, որը հիացմունքով իր էջերում կպահի նաև անցած օրերի մի դպրոցական կյանք՝ անհոգ ու անբռնազբոս, շիտակ ու անխառը:

http://usarmenianews.com/am-n-7015.html

02.12.2016

ԵՍ ՔՈ ԱՄԵՆ ՄԻ ՔԱՐԻՆ ՆՈՐ ՔԱՐ ԿԴՆԵՄ

Ընթերցում եմ 12-րդ հումանիտար դասարանում սովորող իմ աշակերտուհու՝ Լադա Արզումանյանի ստեղծագործական մտքերը: Նա իր մտածումներն է արտահայտել՝ արձագանքելով «Հայերն այսօր» պարբերականի «Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» համահայկական նախաձեռնությանը:

Ղարաբաղը բոլորի համար դրախտ մի երկիր է, նրա երկինքն էլ ասես անչար ու անաչառ արցախցու հոգին, էությունն ու խառնվածքն են: Մի երկիր, որ հասցրել է իր իմաստության չնչին մասը ցույց տալ, բայց այն դեռ դուրս կհորդի ու «կպայթեցնի» ամբողջ աշխարհը:

«Ես քո մասնիկն եմ՝ քո հողեղեն մասնիկը, ում երակներում հոսում է հայրենասիրության, ազգասիրության, հերոսանալու վեհ գաղափարներով շաղախված արյունը: Ես ամեն օր ապրում եմ քո օրով, արթնանում եմ քո գրկում ու ինձ բավարարված եմ զգում քո բույրով, քո բարի մարդկանց ժպիտներով, անգամ՝ նրանց բազմաչարչար ու հոգնատանջ դեմքերով:

Ես քո ամեն մի քարին նոր քար կդնեմ, որպեսզի շենացնեմ իմ երկիրը, քո փլատակները մոխիրների միջից նորից վեր կհառնեն, ու նորից կշենանա իմ երկիրը: Այսօր միայն լավ սովորելով ու լավ մարդ դաստիարակվելով կարող եմ քեզ օգնել, մտածել քո վաղվա օրվա համար, հոգալ քո ցավերը: Քո՝ լեռնցու ոգով դաստիարակված առյուծասիրտ զավակները չեն թողնի, որ ոխերիմ թշնամին ոտք դնի այս հողի վրա: Ուզում եմ քեզ ապավինել, լինել միշտ քո գրկում, համբուրել քո սուրբ պապենական խաչքարերը, արժանանալ սուրբ նահատակների արյամբ օծված հողին:

Իմ սիրասու՛ն Արցախ, շատ եմ երազում լինել քո արժանի զավակը: Ես տառապում եմ քո տառապանքով, ուրախանում ու հպարտանում քո

զավակների սխրանքներով: Ապրելով սահմանին այսքան մոտ բնակավայրում՝ ես միշտ քեզ հետ եմ, իմ ու քո զինվորի կողքին: Ակամատես լինելով ապրիլյան պատերազմին՝ իմ մեջ մեծ ցանկություն առաջացավ՝ այցելել մերօրյա բոլոր նահատակ հերոսների շիրիմներին ու երախտագիտության խոսք ասել նրանց, որ իրենց շնոհիվ ապրում ենք այստեղ՝ Արցախի մայր հողում»:

Իմ աշակերտուհու՝ վերջերս ինձ ուղարկած նկարին եմ նայում, բայց չեմ ուզում այս մտորումների հետ տեսանելի դարձնել այն ժպտերես աղջկան: Գտնում եմ այս մեկը, ու բոլորիս աղոթքների մրմունջն եմ լսում, որ մոմերի առկայծող լույսերի տակ դեպ երկինք՝ առ Աստված են հղվում հարատև խաղաղության մասին ամենքիս երազանքները:

http://hayernaysor.am/archives/223855

02.12.2016

Ո՞Վ Է ԱՍՈՒՄ, ՈՐ ԱՇԱԿԵՐՏԸ ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ՆՈՒՅՆ ՀԱՅԱՑՔՈՎ ՆԱՅԻ

Անկավարժիս բոլոր նյութերն իրական «հերոսներ» ունեն, դրանք իմ աշակերտներն են, ովքեր ամեն անգամ ինձ համար նորովի են հայտնաբերվում, իրենք էլ ինձ հետ ուրախանում, որ նոր կերպարներ են դարձել: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահում միշտ նրանց ամեն մի խոսքը, վերաբերմունքը, նրանց արտահայտած անսովոր միտքը, նաև ես ապրում եմ նրանց շարժով՝ ամեն անգամ կառչելով ամենալուսավոր կետից, որպեսզի այնտեղ դրականը տեսնեմ: Ուսուցիչն ինքն է ուղեծիր գծում իր համար, երբեք չեմ ուզում ցավոտ հնչեն խոսքերս, կարող է աշակերտ լինի՝ իմ դասը սովորի, մյուսներինը՝ չսովորի, կամ լինի հակառակը, ես դա երբևէ հիվանդագին չեմ ընդունի… Բայց ո՞վ է ասում, որ աշակերտը բոլոր ուսուցիչներին պետք է նույն հայացքով նայի, մեզ ո՞վ է ասում, որ աշակերտը պետք է համատարած բոլորին սիրի... Նա չցանկացավ, որ այստեղ իր անունը գրեմ, բայց այդ աշակերտն ուրախ էր, որ իմ դասաժամին «բավարար» գնահատական ստացավ, և շուտով 10 միավորանոց գնահատման համակարգով իմ առջև դրված օրագրում նշանակում եմ «5»: Այդ շաբաթվա դասացուցակն ընդհանրապես օրագրում գրված չէր, միայն մի տողում երևաց շատ հպարտ կանգնած մի «հայոց լեզու»: Դիտողությանս նա չարձագանքեց: Հաջորդ հայոց լեզվի դասաժամին նա անմիջապես դասանյութը պատմելու ցանկություն հայտնեց: Նորից սեղանին երևաց օրագիրը, միայն նախորդ օրվա՝ իմ նշանակած գնահատականն էր երևում, բայց այս անգամ էլ այդ օրվա դասացուցակում՝ նորից միայն մի «հայոց լեզու»: Իմ հարցումին, թե ինչո՞ւ օրագիրը չի լրացնում, նա մի պահ լռեց, ապա նկատելով օրագրում նշանակված «6»-ը՝ հպարտությամբ ասաց. «Ինչո՞ւ լրացնեմ, երբ բոլոր առարկաների մեջ միայն Ձեր դասն եմ սովորում.»:

Չնայած մյուս օրն էլ նա գրականությունից «6» ստացավ, բայց այդ օրը նա օրագիրը տանն էր թողել: Եվ ես մտորում եմ, բայց ինչո՞ւ միայն իմ դասը...Ու հարցիս պատասխանը փորձում եմ գտնել նախորդ օրերում, գուցե հենց դա՞ է նրա դաս սովորելու պատճառը:

Այդ օրը նա անպատրաստ էր ներկայացել: Օրագիրը բերեց, այնտեղ «անբավարար» գնահատեցի, երբ զանգը հնչեց, մոտեցավ ինձ, նայեց սեղանին դրված դասամատյանի՝ իր անվան դիմաց գտնվող վանդակին: Այն դատարկ էր... Կամաց շնորհակալություն հայտնեց ու հեռացավ... Այդպես էլ օրագրում նշանակված այդ «2» գնահատականը դասամատյան չմտավ, իսկ դրան հաջորդող օրերին նա ձգտում էր անպատրաստ չներկայանալ: Գուցե իմ «լավության» դիմաց դաս սովորելով հատուցո՞ւմ էր ինձ, չգիտեմ, բայց հաճելի է դառնում նման հատուցումը, երբ թույլ կարողությունների տեր աշակերտը հանկարծ սկսում է դաս սովորել:

http://usarmenianews.com/am-n-7020.html

04.12.2016

ՏԱՐՎԱ ՄԵՋ ՄԻ ՕՐ, ԵՐԲ ՆՐԱՆՑԻՑ ԵՍ ԱՄԱՉՈՒՄ ԵՄ

Դեկտեմբերի 3-ի մուտքն ազդարարող օրս կեսգիշերվա ժամը 12-ին սկսվեց զինվորական ծառայության մեջ գտնվող մեր դպրոցի շրջանավարտ Վարդան Սաղաթելյանի հեռախոսազանգով: Մեծագույն ուրախությամբ ես ընդունում եմ նրա շնորհավորանքները, նաև իր նախկին դասղեկի իրավունքով համբերություն ցանկանում հայրենիքի զինվորին, որ այս մեկ ամիսն էլ հպարտորեն հաղթահարի մինչ ծառայության ավարտը:

Այդ օրն իր իրավունքները փռել էր ամենուր, ու ես առավոտյան մտնում եմ դպրոց, առաջին պատահած 10-րդ դասարանի այդ աշակերտը շնորհավորում է ինձ, ժպտերես նայում եմ նրան…Տեսնես նա որտեղի՞ց իմացավ, բայց անունը չեմ հիշում, երբևէ նրան չեմ դասավանդել, չեմ էլ մոռանում, որ ամիսներ առաջ իմ կողմից շատ սուր դիտողության է արժանացել՝ աշակերտին ոչ վայել պահվածքի համար:

Մտնում եմ 5-րդ ա դասարան, իմ բարևից հետո բոլորը կանգնած են, ի պատասխան զարմացած հայացքիս՝ հանկարծ խրոխտ հնչում են շնորհավորանքի խոսքեր: Տեսնես այս փոքրիկնե՞րը որտեղից իմացան, ու մի տեսակ ամաչում եմ ես… Այսպիսի օրերը երեխաների համար են, իմ ուրախության ժամանակներն անցել են, երանի թե չիմանային նրանք, որ նրանց շնորհավորանքից գիտակցում եմ կարծես, որ մեծացել եմ:

11-րդ դասարանի մուտքին չհասած, անկեղծ պոռթկումով իրար հերթ չտալով՝ շնորհավորանքի խոսքեր եմ լսում, փորձում եմ հանգիստ երևալ, բայց ներքուստ հուզված եմ…Իմ շնորհակալական խոսքերը սահմանափակվում են նրանով, որ հիշեցնում եմ նրանց, թե մեր ժամանակներում ո՞վ կմտածեր, որ աշակերտը համարձակվեր ուսուցչի ծննդյան օր շնորհավորել: Ու նորից կարծես ամաչում եմ, ու փորձում եմ շատ արագ անցնել հայոց լեզվի դասանյութին, միայն թե ինձ հետ առնչվող օրվա խորհուրդը մոռանային:

Դասամիջոցներին կարծես փախչում եմ ուսուցիչների և դպրոցականների շնորհավորանքների առատությունից…Հաջորդ դասաժամին միակ փրկությունս 12-րդ դասարանն էր, որ այստեղ հանգիստ կվայելեմ իմ դասը: Բայց այստեղ էլ ինձ ողջունում է նրանց համատեղ երգի շնորհավորական խոսքը: Ինձ թվում է՝ ես նորից ամաչում եմ, ու դասարանի մեջտեղում կանգնած՝ խոսքերս անհասկանալի ձևով սպառվում են: Մեղավոր հայացքով լսում են նրան, ով բոլորի անունից շնորհավո-

բանքի նոր խոսքեր է հնչեցնում: Ու բոպեներ հետո դասանյութին խառնված մտքերս ինձ տանում են դեպի այն աշնանային արևը, որ Մաքևոսյան գրողի գրչով մարդը, իր ապրած լավ ու վատ օրերը հիշելով, տարիների հետ իր աշնան օրերն է ապրում: Ես սթափվում եմ աշակերտուհիներից մեկի հարցումով, թե արդյո՞ք հաշտվում եմ իմ տարիքի հետ:

Տարիքս ու հոգիս կարծես իրար հակասում են, մտորումներս ինձ հաջորդ դասաժամին տանում են դեպի իմ դասղեկական 7-րդ ա դասարանը: Միջանցքում ժպտերես ինձ կանգնեցնում են այդ դասարանի մի քանի աղջիկներ: Ինձ ուղղված հարցեր կան, նաև՝ մի փոքրիկ արգելք, որ դասարան չմտնեմ: Այս երեխաներն էլ ինձ խոսեցնում են, տեսնես ի՞նչ կա, որ դասարան մտնելու համար իրավունք պիտի հարցնել: Ու անվարան, մատյանը ձեռքիս՝ բացում եմ դուռը դասարանի…Եվ մի պահ քարանում եմ, անգամ մոռանում եմ իմ ամաչելու մասին:

Հրաշալի երգեր, առանձին-առանձին հնչեցրած շնորհավորական խոսքեր, պատուհաններից կախված նոր վարագույրներ, սեղաններ դարձած նստարաններ՝ քաղցրեղենով ու մրգեղենով առատ…Այն մեկը ինձ շշմեցրեց…Ամենուր ինձ եմ տեսնում, նկարներս են մեծացրած, որ ինձ են նայում՝ գրատախտակին ու պատերին կպցրած: Կենսախինդ ժպտացող երեխաների հայացքներ, դպրոցում աշխատող երկու մայրիկներ, որ իմ ծնողական խորհրդի անդամներն են, հիացմունքով ինձ են նայում: Անակնկալը հաջողվել էր…Ու ես այդ պահին մոռանում եմ, որ ամաչում եմ, երբ երեխաներն են ինձ շնորհավորում: Երախտիքի խոսք եմ ասում՝ հայացքս հառած իմ ժպտացող սանիկներին ու ինձ գրկախառնվող Էլինա Սարգսյանի ու Գևորգ Պետրոսյանի մայրիկներին, որ այնքան շքեղ վարդերի փնջեր են ինձ նվիրում:

Դպրոցից հետո անակնկալը մեծ էր տարածական աշխարհում… Բազմաթիվ շնորհավորական խոսքեր, բազմերանգ ու բազմատեսակ ծաղիկներ, հոգիդ ջերմացնող տողեր… Ու այդքան առատության մեջ ես կարծես չէի ամաչում, որ մի հրաշալի ընկերական շրջապատ հարազատական զգացողությամբ ինձ համար մի սրտաբաց տոնահանդես էր բացել:

Օրվա առիթով նույնիսկ չգիտեմ՝ երբ օրն անցել է, ես ամաչո՞ւմ եմ, թե՞ չեմ ամաչում, բայց գիտեմ հաստատ, որ ամեն մեկս տարվա ընթացքում այս մի օրն ունենք, որ ուրախանում և ափսոսում ենք, որ տարին անցավ, բայց անցած տարին նորից չի գալու:

http://usarmenianews.com/am-n-7054.html

05.12.2016

ՀԵՌՈՒՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅԵՐԻ ԿԱՐՈՏԻ ԵՐԳՆ Է ՀՆՉՈՒՄ

Ես ուզում եմ իր ստեղծագործությունների տողերի արանքում փնտրել նրան՝ մի հայուհու, ով ապրում է օտար ափերում: Իր մասին պատմող ֆիլմն եմ նայում, ու նրա ընթերցած տողերի արանքում տեսնում հայրենիքից հեռու, հայրենի հողի կարոտով ապրող հայուհու: Այնտեղ բանաստեղծուհի կա՝ Նելլի Ավակովա Գրիգորյան, ով իր հայրենակարոտ տողերով ընդհանրացրել է ժամանակակից մարդուն՝ անցյալի տխուր հիշողությունների ու ներկայի օտարության խաչմերուկում: Այն ազդարարում է հայի ճակատագրի մասին մի պատմություն, որ հատուկ է շատ-շատերին ու տարբեր՝ յուրովի….

Տարեգրություն է այն, կարոտի երգ՝ հորովելի թախծալի մեղեդայնությամբ օծված, որ նկարահանվել է հեռավոր Լոս Անջելեսում, որտեղ անուններ կան, որ արժանվույս մեծարանքի են արժանի: Այն հայի հոգու ճիչն է, որ կամաց, բայց հնչեղ արձագանքում է օտարության մեջ ապրող մարդու կսկծացող հոգուն: Այդ փաստագրական ֆիլմը կարոտի երգ է, որ հանդիսատեսին տանում է մտորումների գիրկը՝ հետևում թողնելով անզուսպ մի թախիծ...

«Երկիր Մեդիայում» տեղադրված տեսանյութն եմ նայում արձակագիր Լևոն Ադյանի մասին՝ «Գրողը Ղարաբաղի հեռու լեռներից»: Ամենուր հայրենի Արցախ բանաշխարհի և Ադյան գրողի միասնությունն է ամրագրվում, որ եկել էր այն հեռու-հեռավոր լեռներից: Մի անցած խմբագրական կյանք կա անցյալում՝ Բաքվում ապրած տարիներից, ցավալի խոսք՝ այնտեղի ջարդերի ու ապրիլյան դեպքերի մասին:

Ձեռքիս Նելլի Ավակովայի՝ ինձ նվիրած իր գիրքն է՝ «Ղարաբաղ... Ցավ և հիշողություն», ու նա ինձ երևում է Բաքվի ոճրագործությունից փրկվածների մեջ և հետագա տարիներին՝ այդ ճշմարտությունը բարձրաձայնելիս... Նա ինձ երևում է մի քանի ժամվա մեր հանդիպման ընթացում, երբ հյուրընկալվել էր իմ տանը՝ Մարտակերտում: Ես հաճախակի լսում եմ նրա ձայնը, որ հնչում է Լոս Անջելոսից, և գիտեմ, որ ապրում է Արցախով ու այստեղի հիշողություններով: Նա ինձ երևում է իր բանաստեղծական աշխարհով ու հայրենակարոտ տողերով, որ ռուսերեն են գրվում, բայց թարգմանվում են հայերեն:

Սարոյանի տողերն եմ հիշում, որ օտարագիր ստեղծագործողներին

կարելի է վերագրել. «Թեև անգլիերեն կը գրեմ, …ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անգլիերեն են…Ոգին, որ կ՚ստիպե ինձ գրել, սակայն հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ...»:

Մտորումներս ինձ տանում են դեպ հեռուները, որտեղ տարբեր եզերքներում ապրող և անցած դարավերջի՝ եղեռնից փրկված ականատես գրող կա և բանաստեղծուհի, ով հայտնի է մեզ նաև Ադյանի ստեղծագործությունների բարձրարժեք թարգմանություններով: Այստեղ այդ գեհենի ականատես Ադյան գրողի պատմություն կա «Հեռացող եզերքում», որի ռուսերեն թարգմանության հրատարակությունն այս օրերին արժանի ապտակ կլինի ազերի ոճրագործներին: Արդեն լույս է տեսել արցախցի գրող Լևոն Ադյանի «Այն հեռավոր ամռան» գրքի ռուսերեն թարգմանությունը, որտեղ յուրահատուկ մի Արցախ աշխարհ կա գրողի այն վիպակներում ու պատմվածքներում, որ մեր հայրենակցուհու կողմից են թարգմանվել ու նրա իսկ հովանավորությամբ էլ այս օրերին հրատարակվել:

Մտքերով ես նորից ճախրում եմ հեռուներում, կարոտի թևով ուզում եմ նրանց նորից ետ բերել իրենց հայրենի եզերքը… Ու իմ հայրենակիցներին ես տեսնում եմ Արցախի մայրաքաղաքում, որտեղ ուսուցչուհիս հանդիպել էր նրանց ամիսներ առաջ: Հպարտությամբ եմ տալիս նրանց անունները, որ իրենց ստեղծագործություններով ու թարգմանչական աշխատանքով յուրաքանչյուրը յուրովի իր նպաստն է բերում հայ գեղարվեստական մտքին ու մշակույթին: Բայց, ցավոք, հիշում ենք նաև շատերին հայ ժողովրդի ստեղծագործ զավակների մեջ, որ ձուլվել են օտարներին...

http://usarmenianews.com/am-n-7086.html

06.12.2016

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՊԵՏՔ Է ՄՏՆԻ ԱՇԱԿԵՐՏԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

Մանկավարժիս ուղղված հարցը, թե արդյո՞ք դպրոցականը կարող է իր սիրո անհանգիստ ապրումներով կիսվել ուսուցչուհու հետ, ամենևին զարմանալի չէր, քանի որ իմ մանկավարժական գործունեության ընթացքում նման իրավիճակներ հաճախակի են եղել: Երբեմն ուսուցիչը պետք է մտնի աշակերտի ներաշխարհը, փորձի նրան հասանելի դարձնել նաև այն բոլոր բացասական երևույթները, որ առկա են շրջապատում՝ կապված իրենց տարիքին հատուկ սիրո ռոմանտիկական զգացողության հետ: Որպես ուսուցողական դաս՝ մանկավարժիս մտորումները գուցե հասանելի՞ լինեն նաև վաղաժամ սիրահարվող մեր դպրոցականներին, որոնք չեն գիտակցում, թե այդ պատանեկան սերը երբեմն ինչ ավերածություններ կարող է փռել իրենց հոգում: Եվ ի պատասխան այդ հարցումին՝ ներկայացնում եմ այդ թեմային առնչվող դպրոցական կյանքից մի դեպք:

Այդ օրը վերջին դասաժամս իմ դասղեկական դասարանում էի: Դռան մեղմիկ թակոցը և միանգամից բացվելը բոլորիս հայացքները գամեց միջանցքում դռան շեմին կանգնած ավագ դասարանի իմ աշակերտուհու վրա: Ես հրաժարվեցի դուրս գալ, բայց ի պատասխան նրա խնդրանքին՝ հաշվի առնելով մոտալուտ զանգի ժամանակը, նրան ներս հրավիրեցի՝ նստելու համար ձեռքով ցույց տալով դիմացի ազատ նստարանը: Զանգը հնչեց...Մենք արդեն երկուսով էինք, նա անմիջապես ինձ հանձնեց տետրի մի թուղթ: Նայում եմ սևացած տողերին, ապա նրա հուսալքված դեմքին.

- Խոսի՛ր, բա՞ն է պատահել:

- Այո՛, խնդրում եմ, կարդացե՛ք:

Հայացքս հապճեպ անցնում է մի քանի տողերով. «**Իմ ներսում մարել է հավիտենականության, հավերժության, սիրո, սպասումի և հոգու լույսը: Այս խոսքերն իմ «անշնչացած» սրտից են բխում»:**

Ընդհատում եմ կարդալը, հարցական նայում նրա մտահոգ ու դալկացած դեմքին: Նորից եմ կրկնում՝ ի՞նչ է պատահել...Քարացած դեմքը հառում է ինձ, ապա անխոս հայացքն ուղղում դեպի թերթը, ու ես շարունակում եմ նորից ընթերցել. «**Նա միակն էր իմ կյանքում, սրտանց սիրել եմ, ապրել ու աղոթել միշտ նրա համար, իսկ հիմա մոլորված եմ,**

վիրավորված ու տանջված»:

-Եվ հետո՞, - համբերությունս սպառած՝ հարցական հայացքս գամում եմ նրան, փորձում լսել նրանից եկող հազիվ ինձ հասանելի խոսքեր.

-Նա նշանված է ուրիշի հետ...պարզել եմ... Իսկ ես՝ միամիտս, հավատում էի նրա խոստումներին:

Լուրը չնայած ցնցում է ինձ, բայց թեթևացած հոգոց եմ քաշում.

-Եվ դու ուզում էիր, որ այսքանը հետո՞ լիներ, շատ լավ է, նույնիսկ հիանալի, որ ժամանակին իմացար դրա մասին..

Նա զարմացած նայում է ինձ, իսկ ես խոսում եմ...Խոսում եմ վիրավորված ինքնասիրությամբ, բորբոքված խոսում եմ մեկի մասին, ում չեմ ճանաչում, բայց նաև չեմ ուզում թույլ տալ, որ այդ ինչ-որ մեկը սպանած լինի իմ աշակերտուհու հավատը:

Վերջում մենք զգացինք, որ թեթևացել են հոգիներս, բայց երկուսիս սրտում մեծ հետք կար՝ ցավի ու վիրավորանքի: Այդ օրը նա հասկացավ, որ սերը երջանկության, կարճատև բերկրանքի հետ միասին պարգևում է նաև դառնություններ, փշրում մարդու սիրտը, սպանում նրա հավատը և մատնում անմոռանալի տառապանքների: Իսկ ես չկարողացա անտեսել իմ դիմաց գտնվող դեռահասի հոգում տեղի ունեցող տեղաշարժերը, քանի որ վաղուց համոզվել էի, որ դպրոցականի տարիքային այդ շրջանի մասին արտահայտվելը մի նոր ներդաշնակ և գեղեցիկ հարաբերություն է ստեղծում ուսուցչի և աշակերտի միջև, որից երբևէ չպետք է խուսափենք:

http://usarmenianews.com/am-n-7103.html

07.12.2016

ՄԻ՛ ՆԵՂԱՑՐԵՔ ՈՒՍՈՒՑՉԻՆ...

Ես նրան հանդիպեցի պատահական: Նրա դեմքին ժպիտ էր խաղում, բայց խոսելիս նրա մոտ անթաքույց ամաչկոտության հետքեր եմ տեսնում: Մենք եկուսս էլ հիշում ենք այդ օրը, հենց այդ ժպիտն էր, որ խանգարեց իմ դասը: Այդ օրը 12-րդ դասարանում նա առաջին նստարանին էր նստած: Անընդհատ շրջվում էր դեպի հետ, և իր դեմքին ողողված ժպիտն ինքնաբերաբար փոխանցվում էր մյուսներին: Մի երկու անգամվա դիտողությունից հետո նա ներողություն խնդրեց, բայց դա երկար չտևեց, ևս մի քանի րոպե, նորից կրկնվեց:

«Վերլուծական շարադրությունը և շարադրանքի պլանը»՝ նոր դասանյութի թեմային համահունչ հանկարծ ծնվեց վերնագիրը տնային առաջադրանքի. «Մի՛ նեղացրեք ուսուցչին»: Աշակերտները զարմանքից քարացած ինձ նայեցին, ես հաստատակամորեն պնդեցի իմ ասածը՝ նորից կրկնելով վերնագիրը:

Հաջորդ դասաժամին այդ շարադրանքները յուրովի մեկը մյուսից տարբերվում էին, բայց ներողամտության խոսքեր կային այնտեղ, ուսուցչի աշխատանքի նկատմամբ գնահատանք ու մեծարանք. «**Մեզանից յուրաքանչյուրն էլ այս տարիների ընթացքում նեղացրել է իր ուսուցիչներին, սակայն մենք այդ քայլին գնացել ենք անգիտակցաբար, ինքներս էլ չհասկանալով, որ այդ պահին նա կարող է նեղանա մեզանից...**» /Ավանեսյան Սևադա/: «**Ինչպե՞ս կարելի է նեղացնել այն մարդուն, ով քեզ գիտելիք է հաղորդում և կյանքի դասեր տալիս**» /Հարությունյան Մարիամ/: «**Պատահել է, որ նեղացրել եմ իմ ուսուցիչներին, բայց շատ հաճախ՝ անգիտակցաբար, հետո զղջացել եմ, իսկ հիմա համոզված եմ, որ նրանք կհասկանան և կներեն ինձ**» /Իսրայելյան Ռադիկ/: «**Շատ հաճախ նեղացնում ենք ուսուցիչներին՝ չգիտակցելով դրա լրջությունը, հետո ներողություն ենք խնդրում, զգում նաև, որ կատարած սխալից հետո այն այլևս չի էլ կարևորվում**» /Խաչատրյան Մար-

գարիտա/: «**Այդ օրը մեր ուսուցչուհին նեղացավ, բայց նա արժանի չէր դրան, մենք նրան շատ ենք հարգում: Նա լավագույններից մեկն է, ով իր հոգու խաղաղությամբ չափազանց բարի է, մի լուսավոր ու վառ կերպար է նա**» /Սահյան Մարիետա/:

«**Դասին ուսուցչուհին ինձ մի քանի անգամ դիտողություն արեց, բայց ես չլսեցի նրան, չնայած ներողություն էի խնդրել, նորից շրջվեցի հետ: Հանկարծ նա բոլորին առաջարկեց գրել շարադրություն. «Մի՛ նեղացրեք ուսուցչին»: Հասկացա, որ ակնարկը ինձ է ուղղված, ու հիմա ուզում եմ ուղղել իմ սխալը և ասել. «Զգում եմ, որ շատ սխալ եմ վարվել իմ ամենա-ամենա-ամենա-ամենասիրելի ուսուցչուհու նկատմամբ: Այդ օրը ես երբեք չեմ մոռանա և որոշել եմ, որ այսուհետ չնեղացնեմ իմ ուսուցչուհուն**» »**:**/Սարգսյան Հակոբ/:

Ինչպիսի՜ զգացողություն... Իր «ամենաների» շարքով իմ աշակերտն այնպես զինաթափեց ինձ, որ հաջորդ դասաժամին, երբ հերթական անգամ նա շրջվեց դեպի հետ, ուշադիր նայեցի նրան ու չկարողացա ոչինչ ասել: Այս անգամ արդեն ես էլ էի ժպտում իմ կենսուրախ ու ժպտացող աշակերտին:

http://usarmenianews.com/am-n-7142.html

08.12.2016

ԵՐԲ ԻՆՉ ՆԱՅՈՒՄ ԵՔ, ԵՍ ԻՆՉ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՄ

Երբեմն հանդիպում ենք աշակերտների, ովքեր ինչ-ինչ պատճառներով ներքաշված են, ինքնամփոփ, տագնապալից վիճակում: Դասը պատասխանելիս այդպիսի աշակերտները կարող են կաշկանդվել, կարկամել, կարմրել, ընդհատել խոսքը, նրանք լարված են լինում, վախ են զգում խոսելիս: Այսպիսի աշակերտները վստահ են, որ բոլորի ուշադրությունը ուղղված է իրենց, և այն կրում է բացասական բնույթ: Որոշ երեխաների մոտ տագնապալի վիճակը ամրապնդվում է ուսուցչի անարդար, ոչ նրբանկատ վերաբերմունքով, և դպրոցականի մոտ այն դրսևորվում է ուսումնական գործընթացում բարձր անհանգստությամբ, վատ գնահատական ստանալու սպասումներով:

12-րդ դասարանում եմ...Ինքս էլ զարմանում եմ, թե ինչու նրան ամեն անգամ դաս հարցնելիս մի ինչ-որ անհանգստություն եմ ապրում: Եվ ահա ոչ այնքան համարձակորեն այդ հեզիկ կերպարի մեջ ամփոփված աշակերտուհուն դաս եմ հարցնում: Այնքան փխրուն է նա, որ ոչ մի անգամ նույնիսկ չեմ ուզում ընդհատել, երբ հարց եմ ուղղում, ինքս էլ անհանգիստ եմ՝ տեսնես նա կկորցնի՞ իրեն, թե՞ կկարողանա պատասխանել: Երբ նայում եմ նրան, նա լռում է, մի քիչ հետո ընդհատված խոսքը նորից թև է առնում, և նորից սերտած տողերը հասանելի են դառնում ինձ, ու ես ամեն անգամ համոզվում եմ, որ այս երկչոտ բնավորությամբ և գեղեցկությամբ օծված աղջնակը դաս է սովորել: Երբեմն նրան հիշեցնում եմ, որ մի քիչ բարձրացնի ձայնը, երբեմն հասկացնում եմ, որ ինչ-որ վախվորած եմ տեսնում նրան, ուրեմն՝ ազատ զգա իրեն...Եվ ամեն անգամ իմ դիտողությունից հետո մեղմության քողով պատված մի երկչոտ ժպիտ է խաղում դեմքին:

Այդ օրն էլ այդպես էր: Գրատախտակին գրված նախադասության մեջ ընդգծված տեսա ենթական և ստորոգյալը: Ճիշտ էր ընգգծումը, բայց դա մի ակնթարթ տևեց, իմ նկատելուն պես՝ նա ջնջեց «սիրում եմ» բայի տակ կավիճով տարված երկու գծերը: Զարմացած նայում եմ, կավիճը նորից մոտեցնում է բառին ու նորից հետ տանում...Ինձ անհասկանալի այս երևույթը վերջապես պարզվում է նրա անկեղծությամբ. «**Երբ ինձ նայում եք, ես ինձ կորցնում եմ ու սխալներ գործում»:**

Կատակում եմ, փորձում շտկել իրավիճակը, ուրեմն այլևս չեմ նայի, և մեկ ուրիշից եմ դաս հարցնում, որպեսզի նա չկորցնի իրեն: Չտեսնե-

լու եմ տալիս նրան, նույնիսկ առաջարկում, երբ վերջացնի, գնա նստի իր տեղում: Ես էլ եմ փխրուն դառնում այդ պահին, և հետո, շատ հետո՝ համարյա դասի ավարտին, նայում եմ նրա գրած նախադասության ընդգծված անդամներին: Նա ուղղում է սխալները, որոնք այնքան շատ էին, և ես այս անգամ ուզում եմ թեթևակի անցնել այդ սխալների կողքով, որ հանկարծ նա չկորցնի իրեն:

Ես ամիսներ անց նրա համար դարձա սիրելի ուսուցչուհի… Ուրեմն ի՞նչ, մենք չպետք է թույլ տանք, որ երեխան մշտապես զգա իր անլիարժեքությունն ու անինքնավստահությունը: Այն մեծապես պայմանավորված է երեխայի անհատական առանձնահատկություններով, սակայն դրա առաջացմանը նպաստում են նաև ուսուցիչների բարձր պահանջներն ու սպասելիքները:

Իսկ աշակերտին նման վիճակից հանելու համար պետք է նրա նկատմամբ ինքնահարգանք ձևավորել, բացահայտել տվյալ աշակերտի ուժեղ կողմերը, նպաստել, որ ինքը գիտակցի սեփական սխալները, մշտական հավատ և վստահության ցուցաբերել նրա նկատմամբ՝ դրանով իսկ բարձրացնելով նրա ինքնագնահատականը:

http://usarmenianews.com/am-n-7167.html

09.12.2016

ԱՆԿԵՂԾ ԼԻՆԵԼԸ ԴԺՎԱՐ ԳՈՐԾ Է, ԲԱՅՑ ՀԱՏՈՒԿ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Ինքնախոստովանությա՞ն, թե՞ անկեղծության դասաժամ էր իրենց դասղեկի հետ, ու ես առանձին-առանձին լսում եմ 7-րդ ա դասարանի աշակերտներին: Իմ հարցին, թե ինչպիսին են իրենք՝ որպես դպրոցական, անկաշկանդ արձագանքեցին: Երբ հարցրի, թե յուրաքանչյուր աշակերտ ինչ զգացողություն է ապրում կամ ինչ ապրումներ կունենա, եթե նրա խոսքը, ասված խելացի միտքը տեղադրվի հանրության համար տեսանելի հարթակում, նրանք անմիջապես անկեղծացան:

Հակոբյան Մանե: «Որքան գիտեմ, ես համեստ եմ, առայսօր դեռ չեմ լսել, որ իմ վարքից որևէ մեկը բողոքեր: Դաստիարակությունս գալիս է ծնողներիցս, ես նրանցից դեռ շատ բան ունեմ սովորելու: Վերջերս իմ շարադրությունը երբ հրապարակվել էր և հանրությանը տեսանելի դարձել, անչափ ուրախացա: Մայրս Հայաստան էր գնացել, երկու օրից վերադարձավ, այդ անակնկալից նա այնքան էր ուրախացել, որ հուզվեց ու սկսեց արտասվել: Եվ որքա՜ն հպարտացա ես, երբ դասղեկս այդ հրապարակած նյութը տեղադրեց նաև դասարանի պատի թերթում»:

Մանուկյան Արմինե: «Երբեմն ես էլ եմ չարություն անում: Լինում են դեպքեր, նորմալ չեմ պատրաստվում դասերին, բայց գիտեմ, որ մեծանալով կփոխվեմ, կդառնամ կարգապահ: Մի անգամ ես էլ երևացել եմ բոլորին, երբ ուսուցչուհիս գրեց իմ մասին: Այդ օրը մեկ ուրիշ ուսուցչի դասաժամ խանգարել էի, չէի լսել նրա դիտողությունը, դասղեկս ինձ «պատժեց», հաջորդ օրը ես զգացել էի իմ սխալը, եկա դպրոց, ձեռքիս վարդեր կային, դասղեկիս նվիրեցի»:

Հակոբջանյան Լյուբա: «Ես՝ որպես աշակերտուհի, չեմ կարող ինձ

այնպես նկարագրել, ինչպես ուսուցչուհիս: Փորձում եմ պահել ինձ աշակերտուհուն վայել, դասերին լինել ուշադիր, լավ սովորել, լսել ուսուցիչներիս, լինել կարգապահ: Համեմատած անցած տարիներին՝ հիմա ավելի կարգապահ եմ, ավելի լավ եմ սովորում, ուզում եմ ավելի խելոքանալ: Երբևէ իմ մտքերը չեն հայտնվել որևէ կայքում, որ տեսանելի լինեն շատերին, բայց չեմ էլ կարողանում նկարագրել, թե ինչ երջանկություն կապրեի, եթե իմ գրածը կարդային ու հավանեին ուրիշները: Երանի թե մի օր էլ իմ ծնողները հպարտանային ինձանով»:

Մկրտչյան Անի: «Որպես աշակերտուհի՝ ջանասեր եմ և ուզում եմ շատ նպատակներ իրականացնել, բայց մի քիչ ծույլ եմ: Հանրության առջև այդ տարածքում երբևէ չեմ երևացել, բայց չեմ էլ կարող նկարագրել, թե ինչ ապրումներ կունենայի: Ես դեռ չեմ հանձնվում, որոշել եմ մի գեղեցիկ շարադրություն գրել, որպեսզի իմ մտքերը ուրիշ մարդիկ էլ կարդան: Երբ պատկերացնում եմ, որ հանկարծ մի օր իմ նկարն էլ կտեսնեմ տեղադրված, իմ խոսքերն էլ կկարդան ուրիշները, չեմ պատկերացնում, թե ինչ հպարտություն կապրեմ: Չեմ տխրում, իմ դասընկերների հաջողություններով ուրախանում եմ և համոզված եմ, որ մի օր էլ ես կերևամ»:

Նայում եմ այս փոքրիկ արցախուհիների խմբանկարին, ես էլ պատկերացնում, թե ինչ զգացողություն կունենան, երբ իրենք երևան հանրությանն այս տարածական աշխարհում: Որքա՜ն եմ սիրում, երբ այսքան մաքուր, անկեղծ ու շիտակ են նրանք, և հիշում եմ հայտնի խոսքը, որ անկեղծությունը ճշմարտության մայրն է, բայց դժվար գործ է, և այն հատուկ է միայն ազնիվ մարդկանց, այդ թվում՝ երեխաներին, մաքուր ու անբիծ այդ պարզ հոգիներին:

http://usarmenianews.com/am-n-7220.html

09.12.2016

ԻՆՉ ԹՎՈՒՄ Է՝ ՈՐԲ Է ԱՅՆ ՀԱՅԸ, ՈՎ ՀԵՌՈՒ Է ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ՀՈՂԻՑ

Շարունակվում են իմ աշակերտների արձագանքները Սփյուռքի «Հայերն այսօր» պարբերականի «Դու ի՞նչ ես անում Ղարաբաղի համար» համահայկական նախաձեռնությանը: Յուրաքանչյուրի հոգում անկեղծ զգացողությամբ սիրո ու անկնածանքի խոսքեր կան հող հայրենիի հանդեպ, սեր, որ նրանց պահում է այս արկերից ճաքճքած հողում: Տողերի մեջ ամփոփված այդ սերը կարծես արձագանքում է հեռուներում գտնվող հայության կարոտին, որ անչափելի է, կսկիծով լի:

«Ես շատ հպարտ եմ, որ ապրում եմ Արցախում, հպարտ եմ, որ հայ եմ՝ Նոյի թոռը, այն սուրբ հողի ծնունդը, որտեղից սկսվեց մարդկության երթը: Ինձ թվում է՝ որբ է այն հայը, ով հեռու է իր հարազատ հողից: Օտարությունը թախիծ է, կարոտ ու տառապանք, իսկ ես ուժեղ եմ, երջանիկ, որովհետև իմ հայրենիքում եմ: Երբեմն ինձ հարց եմ տալիս, թե ինչ եմ անում ես իմ երկրի համար: Ասեմ, որ առայժմ ես ապրում եմ կռվախնձոր դարձած մեր հողի վրա, որ թշնամուց հեռու է ընդամենը մի քանի կիլոմետր: Թվում է՝ ես դրանով ոչ մի օգուտ չեմ տալիս իմ հայրենիքին, բայց արի ու տես, որ ես, ապրելով այստեղ, հույս եմ տալիս սահմանին կանգնած զինվորին: Ապագայում իմ ամենամեծ երազանքը և նաև կյանքիս նպատակն է՝ իմ երկիրը զարգացած տեսնել: Ես և իմ սերնդակիցները պարտավոր ենք ապրել ու աշխատել Արցախում, շենացնել այն, հպարտանալ ու գնահատել մեր բոլոր նվաճումները և միշտ հիշել, թե ինչպիսի ճանապարհ է անցել բազմաչարչար իմ ժողովուրդը»:

Իննա Բաղրյան՝ 12-րդ հումանիտար դասարանի աշակերտուհի: Նա անսահման հպարտ է, որ սովորում է Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում և նպատակ ունի իր գիտելիքներով ու կարողություններով ապագայում նպաստելու հարազատ ժողովրդի զարգացմանն ու հզորացմանը: **«Իմ ընկերների հետ կառուցելու եմ մեր հրաշք**

երկիրը, նրա ապագան: Լսելու եմ նրա սրտի ջերմ թրթռոցը, մուրճերի զնգոցին խառնված համակարգիչների կտկտոցը, եկեղեցական զանգերի սրբասուրբ ղողանջները, քարերին ծաղկած շատրվանների մրմունջը, արևի տաքուկ համբույրից շիկնող մրգերի հյութեղ շշուկը:

Տե՛ր Աստված, Արցախն իմն է, իմը…Իմն են նորաբաց ակոսի զգլխիչ բույրը, զմրուխտ այգիների փափուկ սոսափը, արծաթահեր մատյանների ազնվաշող գրերը, հնձաններից արցունք-արցունք գլորվող անապակ կաթիլների բուրմունքը, ողջ Արցախ աշխարհը: Ես և իմ սերնդակիցներն ենք այս ամենի տերը, մեզանից է կախված Արցախի ապագան ու հզորությունը: Ասում են, երբ մարդ հանդիպում է դժվարությունների ու փորձությունների, այդ ժամանակ էլ մեծանում է: Քառօրյա պատերազմը մեզ համար և՛ փորձություն էր, և՛ դժվարություն, քանզի այն մեզ ստիպեց գնահատել հայրենիքի ու հարազատ տան քաղցրությունը: Իմ գիտակցության մեջ հիմա «հարազատ հող» և «հարազատ հայրենիք» արտահայտություններն ավելի լայն իմաստ ունեն, ինչպես մայրը: Մոր նման քաղցր է այն հողը, որի վրա հիմա ես քայլում եմ և ապրում: Արցախն իմն է, ու ես պարտավոր եմ պայքարել նրա անկախության համար»:

Հայացքս հառում եմ բոլոր աշակերտներին...Արցախում ապրելու և արարելու հաստատակամ մի վճիռ դրոշմված է նրանց դեմքերին, և ես հպարտ եմ ու հավատում եմ, որ այս սերունդը արյամբ ներկված մեր հողի վրա բոլորիս համար պիտի կառուցի ազատ ու անկախ մի գողտրիկ աշխարհ:

http://hayernaysor.am/archives/225008

10.12.2016

ՆՐԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՂԹԱՆ ՇԱՏ ԵՐԿԱՐ Է...

Նա իմ աշակերտուհին է՝ 12-րդ հումանիտար դասարանում սովորող Լիլիթ Հովսեփյանը: Ինձ հետ անկեղծ է, շիտակ, ու ես սիրում եմ նրա ազնվությունը, որ երբեմն տանում է նրան համարձակության: Անցած օրն էր, նա ինձ հարցրեց, թե ուսուցչուհիս ի՞նչ կցանկանար իրեն… Անմիջապես մտքիս եկավ ընդամենը երկու բառ՝ մեծ սեր… Բոլոր բարեմաղթանքները տարբեր առիթներով ասված էին, այդ գիտեինք երկուսս էլ, բայց այդ մեկն այն էր, որ նրա սրտից էր խոսում… Նրա հայացքը ինձ գամվեց, և ինձ թվաց՝ մենք իրար հասկացանք:

Ես երբեմն մտքերով նրա հետ եմ, և նրա սրտի զարկերն եմ լսում, նրա խոսքերն էլ հուզումնառատ են, որ երբեմն նրանց արձագանքն էլ լսելի են դառնում ինձ. «**Երջանի՞կ եմ ես…Թերևս սա այն հարցն է, որի պատասխանը չեմ կարողանում տալ: Ինչո՞ւ…Որովհետև մեր կյանքի ամենաերջանիկ պահերին անգամ, որքան էլ տարօրինակ հնչի, զգում ենք, որ ինչ-որ բան պակաս է, կիսատ, թերի, երջանկության զգացողությունն ամբողջական չէ, ավելին ենք ուզում, իսկ ի՞նչ, ինքներս էլ չգիտենք: Եվ ինչո՞ւ կյանքի իմաստի շուրջ սկսում ենք լրջորեն խորհել, երբ կանգնած ենք ընտրության ճամփաբաժանին, երբ չգիտենք՝ ուր գնալ, ինչ անել, երբ կյանքդ լի է բազմաթիվ հիասթափություններով: Ինչպե՞ս գտնել ու գնալ ճիշտ ճանապարհով, հանդիպել մեզ համար կարևոր մի մարդու, ձեռք բերել կյանքի փորձ, իմաստություն՝ երբեք չկորցնելով համն ու հոտը մեր առավոտների, անվերջ ուրախանալ, երջանիկ լինել: Իսկ երջանիկ մարդն ո՞վ է…**

Վերջ: Ես խճճվեցի հարցերի ծուղակում, կարծես պարտվում եմ ինքս ինձանից, նորից ինձ թվում է, խաբում եմ ինձ: Բայց ո՛չ: Եթե անգամ ես զրկված լինեմ ուրախանալու և ինչ-որ բան ստեղծելու հնարավորությունից, միևնույն է, կգտնեմ իմ մեջ ուժ՝ հարված տալու ծնունդ առնող հուսահատությանը, կկարողանամ դիմանալ ամեն մի փորձու-

թյան, կկարողանամ լուծում տալ նույնիսկ անլուծելի թվացող խնդիրներին: Ես համարում եմ, որ սա հաղթող մարդու խոսքեր են, իսկ հաղթողներին չեն դատում, ուրեմն ես հաղթող եմ»:

Իմ հաղթող աշակերտուհու՝ հայրենիքին նվիրած տողերը հպարտությամբ են լցնում հոգիս. «**Արցախն իմ մեջ է, արյանս ու մարմնիս մեջ, իմ մայրիկի աչքերում, հայերեն աղոթքիս մեջ, իմ հանապազօրյա հացի մեջ է: Այս բարեբեր հողի քաղցրահամ պտուղն է ինձ սնում, ես իմ նահրյան երկրի սրտից եմ պոկված: Որտեղ էլ լինեմ, իմ սիրտը այս լեռներում է, այս երկնքի տակ: Պայծառ է իմ հայրենի երկիրը, ջերմ է նրա արևը, ու այդ ջերմությունից սիրտս բոցավառվում է սիրով: Այո՛, իմ հայրենիքը ես եմ, իմ երազանքները, իմ ուրախությունները, իմ տխրությունները, իմ անցյալը, իմ ներկան, իմ ընտանիքը, իմ ընկերները, բոլորն այստեղ են: Իմ հայրենիքը իմ անունն է, իմ ազգանունը և ամբողջ կենսագրությունս»:**

Նրա մտորումների շղթան շատ երկար է, այնտեղ երևում եմ նաև ես՝ իր ուսուցչուհին, որ փորձում եմ նրա հոգին հասկանալ. «Միայն լուռ հետևելով նրա արտաբերած յուրաքանչյուր խոսքին ու խորհուրդներին՝ չես կարող չոգեշնչվել վեհ գաղափարներով, չես կարող զերծ մնալ հուզական խոր ու հարուստ ներաշխարհից: Ամենօրյա իր արդար աշխատանքով կրթել է բազմաթիվ սերունդներ, և դեռ քանի՞ սերունդներ կդառնան հայի անունը կրող արժանի զավակներ: Հիշողությանս մեջ առանձնահատուկ ձևով միշտ ամուր կպահեմ ուսուցչուհուս բոլոր խոսքերը»:

http://usarmenianews.com/am-n-7252.html

11.12.2016

ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՆԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՒՅՆԸ

Զգոնության կո՞չ է սա, թե՞ անցյալի հիշողությունների անմահացում, որ սաստող ձայնով հուշում է 12-րդ հումանիտար դասարանում սովորող իմ աշակերտուհին՝ Անգելինա Անդրյանը. **«Զինվո՛ր ս, դու ինձ պաշտպանի՛ր, ես՝ քեզ, բայց մի՛ մոռացիր գույնը պատերազմի...»:**

Մի՞թե սահմանին մոտ ապրողներիս համար պատերազմի գույնը դեռ չի խամրել: Ո՞րն է պատերազմի գույնը... Այն, որ մայրերը սև՞ են հագնում, գուցե այն սարսափը, որ մեր հոգո՞ւմ ենք կրում, կամ այն բոլոր ավերածությունները, որ ահեղագոչ բարձրաձայնում են, թե ամենևին պետք չէ մոռանալ պատերազմի գույնը…Բայց ասում են՝ պատերազմը հոտ ունի նաև, սարսափելի տհաճ հոտ, որ շուրջբոլորը խեղդամահ է անում ամեն ինչ…Եվ պատերազմի գույնը տեսած ու այդ գարշահոտը զգացած աշակերտուհիս ահազանգի խոսքով պիտի հիշեցներ ամենքիս, որ չնայած պատերազմի հոտը չի զգացվում, բայց զգոն լինենք… Նաև գոհունակություն կա նրա խոսքերում, որ երկինքը հուսահատորեն փափուկ ձյուն է մաղում, գուցե դա՞ է պատճառը, որ պատերազմի հոտը չի զգացվում:

«Ամեն օր վախը սրտումդ փակում ես աչքերդ ու աղոթում վաղվա համար, աղոթում ես սահմանը պահողների կյանքի համար: Դժվար է, որովհետև գիտակցում ես, որ միգուցե վաղը պետք է զենք վերցնես ու երկիրդ պահես, ուսուցիչներիդ ու ծնողներիդ հետ կանգնես զինվորական շարքում, և դա պարտք չպետք է կոչել, այլ՝ կամք: Սև է պատերազմը, որ բազում կորուստներ ունեցողների ու որբացած մանուկների հիշողությունն է, մայրական տառապանք:

Մեկ րոպե լռությունն այնքա՜ն խոսուն է դարձել… Կողքիս ամեն օր անմահ հերոսների ոգիների մենությունն է աղաղակում: Չկա այս աշխարհում ավելի բարձր սրբություն, քան մեր հերոսների հիշատակը: Նրանք կերտեցին փառավոր Արցախս, իմ այսօրը, իմ ներկան…Իսկ ես ի՞նչ եմ անում սերնդի վաղվա օրվա համար… Ոչի՛նչ, ոչ մի բան չեմ

անում կարծես: Ապրում եմ աշխարհի տարբեր երկրների մարդկանց նման, բայց բոլորի մոտ չկա իմ մեկ օրվա ապրած սարսափը: Ես չեմ սնվում այդ սարսափով, ես չեմ վախենում այն ամենից, ինչ միմիայն իմ երկրում է ակնկալվում: Չեմ փախչում շատերի նման, ապրում եմ իմ աղքատիկ քաղաքում, հայոց հողի վրա, իմ տանը՝ իմ զինվորի թիկունքում, և թող նա իմանա, որ ինքն էլ պաշտպան ունի, աջակցող»:

Փակում եմ տետրը իմ աշակերտուհու, ավարտում շարվածքն այս տպագիր տողերի, բայց հոգումս լսելի է արձագանքն այն ձեռագիր խոսքերի. «**Ես ամեն անգամ ապրում եմ իմ մեկ օրով, երբ կողքիս անմահ հերոսների ոգիների մենությունն է աղաղակում: Եվ ինչքա՜ն լավ է, որ այս մի գիշերն էլ անցավ, նորից ուրախ եմ, որ առավոտը բարի էր ու շատ խաղաղ, և այդ օրը ես չտեսա այն սև գույնը և չզգացի այն տհաճ հոտը պատերազմի»:**

http://usarmenianews.com/am-n-7266.html

12.12.2016

ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿ՝ ԴԵՌԱՀԱՍ ԴՊՐՈՑԱԿԱՆԻՆ

Նամակս հղում եմ քեզ, իմ նախկին աշակերտուհի՛ Էդիտա Գասպարյան: Ների՛ր ինձ, սիրելի՛ս, բառերի պակաս եմ զգում, բայց նաև առաջին անգամ եմ հրապարակավ նամակ ուղարկում: Ինչո՞ւ եմ հուզվում, որ մեծարում ես մանկավարժի՞ս, մի բան, որ բազմիցս լսել եմ…Բայց այս մեկն ուրիշ է, ինչպե՞ս կարող եմ քո համար աշխարհի ութերորդ հրաշալիքը լինել…Սա վեր է ամեն ինչից, և ես գրում եմ այս տողերն ու ամաչում: Մեծարանքի սահմաններն անչափելի ես դարձրել ու այդ անսահմանության մեջ ուզում եմ գտնել ինձ, բառերն էլ ինձ նման են, կուչ են գալիս, ու այդ անդին ու անեզր տարածքում բառեր եմ փնտրում, որ արձագանքեմ խոսքերիդ:

Ընդամենը երկու տարի դասավանդեցի քեզ, սեպտեմբերին իմացա, որ տեղափոխվել ես գյուղական դպրոց: Հեռվից հեռու էի քեզ տեսնում այս տարածական հարթակում՝ երբեմն ընդունելով ողջույնիդ խոսքերը: Ինչո՞ւ ինձ թվաց, որ այն օրը դու շատ անհանգիստ ես, զգացի, որ կարոտ ունես հոգումդ, սրտի անհանգիստ տրոփյուններ, և իմ արձագանքով փորձում էի հանգստացնել հոգուդ տվայտանքը: Կարոտդ իմը դարձրիր, ու ես օրեր առաջ ապրում էի քո տառապանքով, մտովի սփոփում էի քեզ, զրուցում մեղմ ու հանգիստ… Եվ իզուր չէր, որ անմիջապես քեզ առաջարկեցի գրել կարոտի մասին, կարոտ սիրո, կարոտ հայրենիքի…

Մտովի տեսնում էի քեզ՝ 12-րդ դասարանում սովորող աշակերտուհուդ: Ուշադիր հայացքդ հառել էիր ինձ, բայց երբ ուշքի եկա, դու արդեն չկայիր, իսկ խոսքերդ մնացին ափիս մեջ. «**Սիրտս լցված է մշուշով, և թույլ է ու տկար: Դուրսը հիմա ցուրտ է, հոգիս՝ ալեկոծված: Չէի կարող հզոր լինել և այդքան ուժգին պայքարել: Ասես մոլորված եմ, հոգնած ու մենավոր…Հիմա հարազատ է դարձել ինձ աշունը…**»

Հանկարծակիի եկա, երբ երեկ ստացա նամակդ, ինձ թվաց՝ ինչ-որ բան այն չէ, բայց կարդացի տողերդ, խաղաղվեցի. «**Քարև Ձեզ, իմ սի-**

ռելի՛ ուսուցչուհի: Ինչպե՞ս եք: Գիտե՞ք՝ այս օրերին մենք շարադրություն պիտի գրեինք, թե ուսուցիչներից ով է մեր ոգեշնչման աղբյուրը, և ես իսկույն Ձեզ հիշեցի: Աչքերիս առջև անմիջապես Ձեր պատկերը հայտնվեց, Ձեր գանգուր, մուգ կարմիր ու կարճ մազերը, Ձեր հաստ շրթունքները, Ձեր խնամված եղունգները և Ձեր էլեգանտ կեցվածքը: Եվ հենց Ձեր մասին էլ գրեցի շարադրությունս, քանի որ Դուք եք իմ ոգեշնչման աղբյուրը, իմ շատ սիրելի՛ ուսուցչուհի: Ես կարոտում եմ Ձեզ»:

Գիտե՞ս՝ հայելու մեջ նայեցի ինձ, որ տեսնեմ քո նկարագրած դիմանկարը, հայացս սահեց մատներիս վրայով, փորձեցի նաև տեսնել կեցվածքս, որ պիտի հարիր լինի ուսուցչուհուս: Ու նորից կարդացի տողերդ. «**Նրան բնութագրելու համար ինձ պետք չեն պերճաշուք բառեր կամ շքեղ մտքեր: Նա իր գեղեցկությամբ, իր բարությամբ, իր գրագիտությամբ այնքան պարզ է ու հասարակ, որ բառեր չեմ գտնում նրան բնութագրելու: Նա ինձ սովորեցրեց, որ պետք չէ կյանքում կորցրածի համար ափսոսալ, որ պետք է ուժեղ լինել և յուրաքանչյուր բարդ իրավիճակում կարողանալ ոտքի կանգնել: Նա սովորեցրեց, որ լիարժեք սերը լինում է փոխադարձ, ինչի համար շնորհակալ եմ նրան: Ինչքա՜ն բան գիտի նա: Նա նույնիսկ կարող է նայել իմ աչքերին և իսկույն ասել, թե ինչ գիտեմ կամ ինչ եմ զգում ես: Ինձ միշտ թվացել է, որ աշխարհում այնպիսի հարց չկա, որ նա այդ հարցի պատասխանը չիմանա: Նա իր հմայքով և իր գեղեցկությամբ աշխարհի ութերորդ հրաշալիքն է ինձ համար»:**

Այս տողերում գտա քեզ՝ իմ նախկին աշակերտուհուն, կարևորը, որ գտա քեզ….Այստեղ ես գտա նաև ինձ՝ «ամենակարողիս», որ խոսքերդ դարձրել էին ինձ ութերորդ հրաշալիք: Ինչ լավ է, որ քո խոսքերով ես ամեն ինչ գիտեմ, «ամենագետ եմ»: Ես ժպտում եմ և ինձ պարգևած այս ամենաների շարքում ուզում եմ սովորել ամեն ինչ, և երանի թե աշխարհի բոլոր հարցերի պատասխանները ես էլ իմանայի: Հմայի՞չ եմ ես, ուրեմն սիրով գրկում եմ քեզ՝ գեղեցկուհուդ, որ այդ հմայքը տարածվի ամենուր, նաև շնորհակալ եմ քեզ՝ ինձ ուղղված ամենաների և մտերմաբար ուսուցչուհուդ պարգևած այս հրաշալի զգացողության համար: Բայց ինչքա՜ն լավ է, որ նորից գտա քեզ…

Քո սիրելի ուսուցչուհի՝ Նատաշա Պողոսյան

http://usarmenianews.com/am-n-7297.html

13.12.2016

ԱՅԼԵՎՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏՈՎ ՏՈՆԱԾԱՌ ԶԱՐԴԱՐԵՆՔ

Մենք երկուսով ենք՝ ես ու թոռնիկս՝ Նարեկը: Նա երրորդ դասարանում է սովորում: Մենք զրուցում ենք… Հեռուներից նրա գալիք Նոր տարին արդեն շնորհավորել են, և նա ուրախ է, շատ շնորհակալ: Մենք խոսում ենք բարի մարդկանց մասին, որ երբեմն բարությունը սահմաններ չի ճանաչում: Այս տարի մենք տոնածառը դեռ չենք զարդարել, բայց ուզում եմ իմանալ՝ Ամանորի տարեմուտին Արցախի երեխաներն ի՞նչ են ուզում: Ու նրա հարցումները մեկ ժպիտներ են բերում ինձ, մեկ՝ հոգիս ծվատող տառապանք:

«Արդեն շնորհավորում են իմ Նոր տարին, ես ուրախանում եմ, բայց նաև՝ ամաչում, ինչո՞ւ… Ձմեռ պապիկին ես նամակ եմ գրում, իմ ընկերները՝ նույնպես, բայց ինչո՞ւ դպրոցում բոլորին հարցրին, թե ինչ կցանկանայինք ու առաջարկեցին գրել նամակ: Մեր միջոցառումներում տղաներս զինվորական հագուստով ենք, մեր երգերը զինվորների մասին են, անցած տարի ես զինվորական համազգեստով զարդարեցի իմ տոնածառը: Բայց ինչո՞ւ...»:

Հետադարձ հայացք եմ ձգում անցած օրերին, այն անցած Նոր տարուն, որտեղ Արցախի երեխաները զինվորական համազգեստով են տոնածառ զարդարում, իսկ ես տխրում եմ: Լույս մանուկները տոնածառի մեջ լույսեր են փնտրում, խաղաղ օրեր...Կանաչ տերևների մեջ մի նոր ճանապարհ եմ ցույց տալիս, հրավառ մի կյանք՝ սպասումով լեցուն: Տոնածառի խաղալիքների մեջ ճերմակն են ընտրում՝ լույս-լուսավորը, երազանքների եզերքին կանգնած՝ կապույտ խաղալիքն են փնտրում, որ խաղաղ կյանքի հեքիաթը պատմեն: Նոր տարվա գալստյան օրերն են հաշվում, երազանքների ամրոց կառուցում, հնչող զանգերի ղողանջների մեջ հույսեր են փնտրում, ծիծաղկոտ օրեր: Շատ բան չեն ուզում մեր մանուկները՝ Ձմեռ պապիկից հայրենական տան հավերժությունը, տոնածառի շուրջ շուրջպարի բռնած՝ ամբողջ աշխարհից

անամպ երկնքի մի փոքրիկ կտոր, անհոգ մանկություն:

Ու ես ընթերցում եմ այն փոքրիկ նամակը, որ մեր բալիկը գրել էր Չմեռ պապիկին: Սա Արցախի երեխաների մեծագույն ցանկությունն է, որ թևեր առած պիտի հասնի ամենուր: Ճերմակ աղավնիների տեսքով պիտի գա այս Նոր տարին, կապույտ երկնքի անծայրության մեջ խաղաղությունը պիտի թևածի, նրանց աղերսը՝ Աստծուն ուղղված, պիտ արձագանքի համայն աշխարհում, սահմանից եկող կրակոցներին պիտ պատնեշ դառնան նրանց երգերը...

«Թանկագի՛ն Չմեռ պապ, ամեն տարի ամանորյա գիշերը մեր կյանքում փոքրիկ հրաշք է կատարվում: Հեքիաթը մտնում է մեր կյանքը, և այդ ժամանակ էլ կատարվում է բոլոր երեխաներիս ցանկությունը, որի մասին երազում ենք ամբողջ տարին: Այդ երջանկությունը դու ես բերում, Չմե՛ռ պապ: Այս տարի ես էլ մտածելու բան ունեի: Երազում էի, որ ունենամ iphone 7 հեռախոս, բայց հետո հասկացա, որ այն ինձ համար կարող են գնել իմ ծնողները, գուցե ոչ հիմա, հետո...Բայց կա մի շատ կարևոր հրաշք, որ իմ հարազատները չեն կարող կատարել: Չեմ ուզում պատերազմ լինի...Չեմ ուզում մեր տունը թողնեմ, ուրիշ տեղ գնամ...Ամիսներ առաջ այն ի՞նչ դղրդողներ էին, որ մենք լսեցինք... Տնեցիներով մտանք մեր շենքի նկուղը… Տատիկս լուռ էր, անհանգիստ, մայրիկս էր մեզ հուսադրում…

Չմե՛ռ պապ, ես գիտեմ, որ դու ունես կախարդական գավազան: Ուզում եմ այնպես վախեցնես մեր թշնամիներին, որ նրանք մոռանան մեր սահմանները ու մեզ հանգիստ թողնեն: Ես գիտեմ, որ դու շատ բարի ես և շատ ես սիրում մեզ՝ երեխաներիս: Ես հավատում եմ քեզ և խնդրում՝ կատարես այդ հրաշքը, գիտեմ, որ դու դրանով կերջանկացնես մեր երկրի բոլոր երեխաներին, ու այսուհետ մենք զինվորական համազգեստով տոնածառ չենք զարդարի:

Քեզ շատ սիրող՝ Նարեկ Բեջանյան»:

http://usarmenianews.com/am-n-7325.html

15.12.2016

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՅՐՈՒՄ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Ա դեռահաս արցախուհու ընդվզում էր, ու ես սարսռում եմ այս տողերից. **«Շատացել է թիվն այն մարդկանց, ովքեր վերջին տարիներին լքում են հայրենիքը, սակայն ավելի շատ ինձ մտահոգում են նրանք, ովքեր լքում են հային: Սիրում եմ մատնաչափ երկիրս, և դատապարտում եմ քեզ, ո՜վ դավաճան: Որքան էլ փորձեմ փնտրել արդարացում, հնար չկա, հոգիս խավարի հետ է մարտնչում, երբ մտածում եմ, որ թողել ես հող հայրենին, քո երկիրը հարազատ: Անարժա՛ն, քեզ ժպիտներով լեցուն կյանք պարգևելու համար ազգդ է մարտնչել, իսկ դու, արհամարհելով մեր թափած արյունը, առանց հետադարձ հայացք ձգելու, անցար թշնամու կողմը: Խղճում եմ քեզ, որովհետև այդ ո՞վ պիտի քո նմանին իր երկրում թագավոր հռչակի: Որդիդ ու թոռդ կամաչեն քո անունը տալուց անգամ, նույնիսկ ես եմ ամաչում, որ դու հայ ես կոչվել, անիծվես դու, որ նախընտրեցիր թշնամուդ՝ նրան բարեկամ համարելով քեզ»** /Անդրյան Անգելինա, 12-րդ դասարան/:

Եվ դավաճան Վասակ Սյունու կերպարը զուգահեռվեց իմ աշակերտների մտորումներին: Նորից ու նորից դարերի խորքից վերհիշեցինք հասարակ անուն դարձած Վասակին, որ իր փառասիրության պատճառով զոհաբերեց երկու որդիներին և կնոջը: Նա էլ իր ժամանակ երկար և դառնորեն մտածել է. «Ուրեմն ես դավաճա՞ն եմ: Հայրենիքի դավաճա՞ն…»:

Երբեմն հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններն էլ մտնում են դասարան, միահյուսվում դասանյութին, քննարկվում որպես բոլորիս մտահոգող հարց: Ես իմ աշակերտներին զգուշացնում եմ այս տարածական աշխարհի վտանգներից հեռու մնալ, որ առանց հարցումի կարող են ուղեղներ քանդել: Անգիտության թե միամտության արդյունք կարող է լինել կատարած սխալը, իսկ այն ուղղելու համար

երբեմն դժվար է լինում հետդարձի ճանապարհը: Մենք չենք ուզում լսել, չենք էլ ուզում հավատալ, բայց ցավալի է, որ ամբողջ մամուլն ու տարածական հարթակը ողողված է այս օրերին դավաճանության մասին մեկնաբանություններով:

«**Ես ամաչում եմ, որ իմ ազգում ծնվում են դավաճաններ**»,- սա միտք էր, որ հնչեց բարձրաձայն, այն բոլորիս սրտում ծխաց անհանգիստ, աղաղակ դարձավ, հայի մի շատ մանր տեսակի դեմ ուղղված զայրույթի ճիչ… Սա այն է, որ մարդուն տանում է դեպի ապականություն, երբ մարդը հեռանում է իր ժողովրդից, այրում վերադարձի կամուրջները և հավետ կորցնում հայրենիքին կապող բոլոր ճանապարհները: Ո՞ւմ էր ուղղված խոսքը՝ Վասակի՞ն, թե՞ մեր օրերի ազգադավներին, դա չէր կարևորը…Սա սերնդի բարձրակոչ պոռթկումն էր, որ միասնություն է ուզում, հավաքական ուժ, անցյալի փառապանծ էջերի անմահացում, նոր օրերի հերոսների անցած ու գալիք օրերի տարեգրության հավերժացում:

http://usarmenianews.com/am-n-7392.html

16.12.2016

ԴԱՎԱՃԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԲԱՐՁՐ ԱՐԺԵՔՆԵՐ ԿՐԵԼ...

Ինչո՞ւ իմ խոսքը հակադարձվեց, երբ ասացի, որ մենք սերմանում ենք բարոյական բարձրագույն արժեքներ, իսկ այդ արժեքները դեպքից դեպք դրսևորվող երևույթներ չեն, դրանք հայ մարդու հոգու մեջ են, որ ուղեկցում են նրան ողջ գիտակցական կյանքում: Համամի՞տ չէին նրանք ինձ հետ, թե՞ վերջին օրերի դեպքերն էին առիթ հանդիսացել, որ խոսքս պետք է հակադարձվեր աշակերտներից մեկի դժգոհությամբ, որ մի՞թե բարոյական բարձր արժեքները հատուկ են հայրենիքի դավաճաններին:

«Աստվա՛ծ իմ...»,-ինչո՞ւ հնչեցրի միանգամից այս երկու բառը, այն էլ՝ բարձրաձայն… Իրավիճակը հարթեցնելու միջո՞ց էր, թե՞ ամաչում էի, որ ազգիս մեջ հայտնվում են նմանները…Սա փրկությո՞ւն էր, որ արտաբերեցի միանգամից, թե՞ սերնդին ուղղված զգոնության կոչ, չարիքներից հեռու մնալու վերին բարձրյալին ուղղված աղերս և ամուր կամք դրսևորելու հակում…

«Աստվա՛ծ իմ...», բայց սա արտահայտություն է, որ ամեն օր հնչում է շատերիս հոգուց: Երկու բառ, որ հնչեցնում ենք մեր հոգու կապանքներից ազատվելու համար, բարձրակոչ ճիչ, որ հնչում է մեզանից անկախ: Դա անձնական ցավ է և ազգի ցնցում, դա մանկան ճիչ է և մահվան բոթ…Այն կարող է հնչել ուրախության թե տխրության ցանկացած պահի, արտահայտություն, որ կարող է ասել Աստծուն հավատացող կամ գուցե և չհավատացող որևէ մեկը:

Տարիներ առաջ ինձ էլ շատերի նման թվում էր, թե առերես պետք է հանդիպեմ Աստծուն, որ հավատամ նրա գոյությանը, բայց օրեօր համոզվում և փորձում եմ հոգուս մեջ փնտրել նրան ու տեսնում եմ, որ Աստված ամենուր է՝ մեր ներսում, մեր հոգու անհունության մեջ, նա մեր մտքի սլացքի հետ է, մեր թևերի ազատ ճախրանքում, մեր սրտի տրոփյունի հետ, ամե՜ն-ամենուր...

Ու ամեն օր ես հնչեցնում եմ ազգիս համար այդ «Աստված իմ»-ը, մի խոսք, որ ուզում եմ լսելի դարձնել դրանով մեր համառ կամքը, մեր ազատ ապրելու իրավունքը, մեր ազնիվ ու մաքուր անցնելիք ճամփան… Եվ որքա՜ն եմ ուզում, որ նա մտնի նաև ազգադավների հոգին, ու բարոյական այն բարձր արժեքները հասանելի լինեն նրանց, ու մենք չամաչենք, որ մեր ազգում էլ դավաճաններ կան:

Եվ նորից հիշեցնում են իմ աշակերտներին, որ մանկավարժությունը մարդու մեջ ազնիվ որակներ է դաստիարակում, և հուսադրվում եմ նրանով, որ նրանք ազնիվ արժեքներ են ձեռք բերում, ու մտովի կրկնում եմ հայտնի տողերը. «Նյութը, որի մասին կխոսի ուսուցիչը, կպահանջի դերասանություն: Դերասանությունն արվեստ է, բայց խաբող է: Ուսուցչությունն էլ արվեստ է, բայց խաբող չէ»:

http://usarmenianews.com/am-n-7406.html

18.12.2016

ԱՆԴԱՄԱՏՈՄՍ, ՈՐ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է ՄԱՆԿԱՎԱՐԺԻՍ

Զափազանց մեծ էր անակնկալը, երբ այսօր ԱՄՆ-ի Հայ գրողների միության վարչության անդամ և «Վերնատուն» պարբերականի խմբագիր Դանիել Դավիթն ինձ տեղեկացրեց, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների ՀԳՄ հայաստանյան խմբակցության անդամ եմ: Սա մի նոր հաճելի զգացում է, նաև պարտավորեցնող, որի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում այդ վարչությանը՝ նախագահ Վազգեն Վանատուրի գլխավորությամբ, բոլոր այն արժանավորներին, ովքեր հարմար գտան ինձ ներկայացնելու այդ պատվին:

Այսօրվա իմ հեռախոսազրույցը՝ ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի հետ, դպրոցական կյանքը ներկայացնող իմ հրատարակվելիք գրքի մասին էր, բայց ինչո՞ւ չհամարձակվեցի նրան հայտնել այս լուրը: Ամաչո՞ւմ էի, որ մի սովորական ուսուցչուհու ամենօրյա շարադրվող մտքերն ուշադրության են արժանացել Սփյուռքում, և նա ներկայացել է այդ գնահատանքին: Դուցե իմ շրջապատում ավելի արժանավորնե՞րը կան, որ լռության մատնեցի այդ փաստը՝ չնայած 2013-ին մանկավարժիս մեթոդական ձեռնարկն էր հրատարակվել՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորությամբ և նրանց ֆինանսական օժանդակությամբ, և որպես մանկավարժական փորձի փոխանակություն՝ բաժանվել էր Արցախի դպրոցներին: Իսկ իմ հաջորդ երկու գրքերի նյութերն այս օրերին հանձնված են մեր նախարարությանը, և այսօր իմացա, որ դրանք շուտով կերաշխավորվեն հրատարակության համար:

Հիշեցի նաև, որ այս վերջերս 11-րդ դասարանում իմ աշակերտներից մեկը հանկարծ հարցրեց. «Պարզվում է՝ ես վերջապես իրական գրողի եմ տեսնում, Դուք գրո՞ղ եք, տիկի՛ն Պողոսյան»: Ես նրան հակադարձեցի. «Ի՞նչ գրողի մասին է խոսքը, ես ուսուցչուհի եմ, ընդամենը ձեր՝ աշակերտներիդ մասին եմ գրում, մեր սահմանամերձ դպրոցից...»:

Եվ ես, ի տես բոլոր աշակերտների, նրան շարունակեցի բացատրել, որ գրողները նրանք են, ում ուսումնասիրում ենք դպրոցական դասագրքերով, նաև հրաշալի գրողներ կան, որ դասագրքերում չկան, ունենք ժամանակակից արժանավոր գրողներ նաև, որ գրքեր ունեն հրատարակած, նրանք ստեղծագործում են արձակ կամ չափածո...Ու ես

նրանց ներկայացա որպես մի ուսուցչուհի, ով ամերիկյան հայկական «USArmenianews.com» լրատվական կայքի այն գողտրիկ բաժնում, որ «Մանկավարժի անկյուն» է կոչվում, և երբեմն ՀՀ Սփյուռքի «Հայերն այսօր» պարբերականում անմահացնում է իր տողերով ընդամենը նրանց դպրոցական կյանքը:

Այսօր ինքնաբերաբար մտովի հիշեցի նաև անցյալ դարձած իմ հուզախառով օրերը: Կրթության բաժնի հայտնած հանկարծակի լուրը՝ վաստակավոր մանկավարժի կոչմանն արժանանալու մասին, տեղում քարացրել էր ինձ: Պահի տակ մի ակնթարթում հետադարձ հայացք ձգեցի իմ մանկավարժական աշխատանքային գործունեությանը: Որքանո՞վ եմ արժանի ես այդ կոչմանը: Երկար ժամանակ ուշքի չէի գալիս, սարսռում էր հոգիս, մի անսովոր դող սողոսկել էր ներսս, այդ բարձր գնահատանքի առջև ուզում էի ծնկի գալ: Բոլորից աննկատ թաքցրի հուզմունքս, սա ի՞նչ է, չափազանց մեծ և պարտավորեցնող գնահատանք, և մատներս ինքնաբերաբար շոշափեցին Արցախի ԿԳ նախարարության հեռախոսների մի քանի համարներ... Զգացի, որ մյուս կողմից լսվող ձայնը կամաց-կամաց հանդարտեցնում է հոգուս ալեկոծությունը:

Օրեր անցան, հրավիրվեցի հարցազրույցի Արցախի հանրային հեռուստատեսությամբ: Հուզախառն էր հոգիս… Ուղիղ եթերով արցախցիներին ներկայացրի նաև իմ ապրումները... Թեթևացած հոգոց քաշեցի՝ շնորհավորանքներից խանդավառված:

Այսօր էլ, այդ գնահատանքից դեռ ուշքի չեկած, հանդարտվեց հոգիս՝ այս տարածական աշխարհի՝ ինձ հարազատ դարձած անձանց շնորհավորանքներից: Մնում է ասել, որ գնահատանքի է արժանի հայկական սփյուռքի ազգանվեր գործունեությունն օտար ափերում, իսկ ես՝ Արցախի ուսուցչուհիս, հոգուս խորքում երախտապարտ եմ, որ հայապահպանության գործի մեծ առաքելության ճանապարհին՝ յուրաքանչյուրս, ազնիվ ներդրում կատարելով, մեր երկրի հայակերտման սրբազան գործին ենք նվիրաբերվում:

http://usarmenianews.com/am-n-7421.html

Հ. Գ. **Ամիսներ հետո ինքնակամ հրաժարվեցի այդ անդամատոմսից, չկարողացա «գրողի» հետ հարմարվել, առավելապես երբ տեսանելի դարձավ մանկավարժիս, թե այդ գրողական աշխարհն ինչպիսի արագությամբ է ընդլայնում իր շրջանակները՝ արժեզրկելով նույնիսկ ժամանակակից շատ գրողների հստակ աշխատանքը:**

20.12.2016

ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԴԱՌՆԱԼ ՀԱՅՏՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ

Երազանք, որ նրան ուղեկցում է արդեն քանի՞ տարի. «**Ես դեռ 5-րդ դասարանից որոշել էի, նաև գիտեի, որ դերասանուհի եմ դառնալու, որևէ կասկած չկա դրանում: Տարիքս փոքր էր, երբեք մտքովս չէր անցնում, թե ինչ դերում կարող էի լինել: Հիմա առիթից առիթ դպրոցական միջոցառումներում դերակատարություն սիրով եմ անում, փորձում եմ տարբեր կերպարներ՝ դա լինի մուրացող աղջիկ, հիվանդ, հարուստ թե պաշտոնավոր: Ամենահետաքրքրիրն այն է, որ երբևէ թատրոնում չեմ եղել, բայց երբ հավաքվում ենք, ամեն անգամ այդ միջավայրում բարձրաձայնում եմ, որ ես դերասանուհի եմ դառնալու»:**

Լիլիթ Հովսեփյան... 12-րդ հումանիտար դասարանում սովորող աշակերտուհի... Անցած ամիսների հիշողությանս մեջ երևում է նա Բաքվի և Սումգայիթի եղերական հիշատակի օրերին: Երբ կարդաց արցախցի արձակագիր Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» վեպը, ինձ փոխանցեց գիրքը, դրա հետ նաև՝ թղթին հանձնած մի քանի տողեր. «**Գիրքը կարդացի սրտի անհանգիստ տրոփյունով: Ինչքա՜ն գեղեցիկ սիրո պատմություն է, կներե՜ս, սի՜րտ իմ, չէի ուզում քեզ նեղացնել, չէի մտածում, որ այդքան ուժգին ու խորը կարձագանքես Լեոյի և Ռենայի սիրո ողբերգությանը: Այս պահից մտորում եմ՝ երանի՜ թե դառնայի հայտնի դերասանուհի, ֆիլմ նկարահանվեր, Ռենայի դերում լինեի, ու այն տարածվեր աշխարհեաշխարհ»:**

Եվ մեր զրույցում երևում է այս սիրունատես աղջիկը, որ ազատ է ու կենսախինդ, մտորումներով հարուստ. «**Կյանքը մի թատերաբեմ է, և յուրաքանչյուրս մի դերասան ենք՝ յուրօրինակ տենչանքներով ու ձգտումներով, ապրում ենք՝ խաղալով մեզ բաժին ընկած լավ կամ վատ դերերը: Ես գիտեմ մի բան, որ դերասանը, եթե դարձավ դեր ասող, ապա նրան ոչ ոք չի նայի, դա լինի թատրոնում թե կինոյում: Այդ դերը**

պետք է զգաս, պետք է ներսդ ցավի, այլապես չի ստեղծվի այդ կերպարը: Հոգով ու սրտով, ցավով պետք է ծննդաբերել այդ դերը, այլապես պարտված կզգաս քեզ ցանկացած դերում: Պետք է գտնես դերի բանալին, հենց գտար, կհայտնվես ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին:

Ես արցախցի եմ, սիրում եմ իմ երկիրը, ապրում եմ Մարտակերտում, և հպարտ եմ, որ հայուհի եմ: Ասում են՝ երազանքների մասին չեն խոսում, քանի որ բարձրաձայնելու դեպքում դրանք չեն կատարվում, իսկ ես բարձրաձայնում եմ՝ երազում եմ դառնալ դերասանուհի: Տարիներ հետո երբ վերադառնամ իմ ծննդավայր, բոլորը կհպարտանան, որ ինձ ճանաչել են, որ ես ավարտել եմ այս դպրոցը: Բայց ունեմ նաև այլ երազանքներ՝ ունենալ աշխատանքային առաջընթաց և երջանիկ ընտանիք, շրջագայել աշխարհով մեկ, տեսնել ամեն ինչ...Գուցե այդպես նաև կկարողանամ օգնել իմ երկրի բարելավմանը, իսկ ես շատ եմ սիրում իմ Արցախը...Շատերը կասեն, որ ճիշտ չեմ ընտրել իմ մասնագիտությունը, ճիշտ է, շրջապատի կարծիքը կարևոր է, սակայն ես ունեմ իմ սկզբունքները, որի վրա պետք է հենվեմ ու չհիասթափվեմ: Ասում են՝ ոչ թե մարդն է ընտրում իր մասնագիտությունը, այլ մասնագիտությունը՝ մարդուն: Իմ դեպքում շատ պարզ է՝ ես կդառնամ հայտնի դերասանուհի»:

Հաստատակամ է նա, շատ վճռական, և ես ուզում եմ, որ նա իրականացնի իր երազանքը, բայց որքա՜ն կցանկանայի՝ մի նոր որակ բերեր այդ արվեստին...Որ երբեք հայրենի հիշատակները չմոռացվեին, այն սուրբ մասունքները չիմաստազրկվեին, աղոթքն ու լեզուն չաղավաղվեին, սովորույթներն ու ավանդությունները տեղի չտային, ու այդ արվեստը դառնար զուտ հայկական, հայերենով շնչող, ջերմությամբ օծված, մաքուր ու անաղարտ մի սուրբ տաճար:

http://usarmenianews.com/am-n-7456.html

21.12.2016

ԱՅԴ ՕՐՎԱՆԻՑ ՍԻՐԵՑԻ ԱՅՆ ՈՉ ՄԱՀԱԲԵՐ ԾՈՒԽԸ, ՈՐ ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԵԿԻՑՆ Է

Աչքերս սրբելով և աշակերտների՝ արցունքներից թրջված ու նրանց բացուխուփ անող աչքերին նայելով՝ բացատրում էի, որ փայտի վառարաններից հետ տվող ծուխը մեզ համար երանավետ պիտի համարենք՝ համեմատած այն մեկի հետ, որ մահաբեր է...

Ու հիշում եմ, երբ հրետակոծությունից ամբողջ գետինը օդ էր բարձրացել, հողախառն մշուշով պատված շրջապատում ոչինչ չէի տեսնում, աղիողորմ փոքրիկ դստերս էի փնտրում… Առաջ մեկնած ձեռքերս հոդապատ օդն էին շոշափում, իսկ ոտքերս տեղում ետ ու առաջ էին գնում, որպեսզի հասկանամ՝ կարողանո՞ւմ եմ շարժվել, թե՞... Բայց որքա՜ն ուրախ էի, որ դեռ կանք, կենդանի ենք... Ու այդ օրվանից սկսեցի սիրել այդ ծուխը, այն ոչ մահաբեր ծխապատ մշուշը, որ տարիներ շարունակ դպրոցական կյանքի ուղեկիցն է մեր...

Այս օրերին էլ երբեմն պատահում է, որ արտաքին ազդակները խաթարում են մեր դասերը: Այդ պահին մոռանում ես բոպեների մեջ տեղավորված բոլոր անելիքներդ: Մեղմաբար օրորվող քամին, որ բնականաբար բնության գեղեցիկ արարումներից մեկն է, երբեմն այս ձմռան օրերին մեզ համար դառնում է «արհավիրք», որ խափանում է դասերը: Այդ պահին բնությունն իր տարերքի մեջ է լինում՝ չիմանալով, որ դասարաններում դրված փայտի վառարաններից ծուխը հետ է տալիս դրսի օդի մի փոքր տատանումից անգամ: Ամբողջ դասարանով մեկ տարածվում է ծուխը, աչքերդ, ուզես թե չուզես, արցունքոտվում են, շուրջդ ծխե մշուշաքողով է պատվում, հայացքիդ առջև կորցնում ես աշակերտներիդ, մոռանում, թե ինչի մասին էիր խոսում: Այդ ժամանակ գրողի ծանր կյանքի նկարագրությունը զուգահեռվում է քո այդ պահի մշուշապատ դպրոցական կյանքին:

Ծխացող փայտերը վառարանից հանելուց հետո բացված պատուհաններից սառը օդն է մարմինդ գրկում: Դողդողացող ձեռքերով աչքերիդ արցունքներն ես սրբում՝ մտածելով, թե սրանք էլ ժամանակ գտան հոգուդ հետ խաղալու: Ամենազարմանալին այն է, որ այդ պահին մտածում ես՝ չհասցրի աշակերտներին դաս հարցնել, և ոչ էլ ես կարողացա նոր դաս հանձնարարել: Երկընտրանքի մեջ ես ընկնում՝ բնությո՞ւնն է մեղավորը, որի բնական շարժը չես կարող կանգնեցնել, բայց ոչ էլ դրա

մասին կարող ես գրել դասամատյանում, գուցե ե՞ս եմ մեղավորը՝ դասավանդող ուսուցչուհիս, որ այդ օրվա իմ դասը չկարողացա վարել:

Բայց ներքուստ հանդարտվում ես, ի՜նչ լավ է, երբ վերջին րոպեներին հասցրիր մի նոր դաս տալ նրանց, որ սիրեն ծուխը, այն ծուխը, որ լացացնում է իրենց, ծուխ, որից շնչահեղձ ես լինում, բայց դրանից հետո գիտես, որ դու կենդանի ես...

Երկու պատերազմ տեսած Մարտակերտում ասում են, որ մեր դպրոցն էլ պիտի վերանորոգվի, հուսանք, որ տարիների խոստումները վերջապես իրականություն կդառնան: Գուցե նաև անցյալում մնան այն բացասական երևույթները, որոնք երբեմն խանգարում են մեր դասագործընթացի նորմալ անցկացմանը, հուսանք, որ դրանից հետո գուցե մենք չսիրենք այլևս այդ մխապատ ծուխը:

http://usarmenianews.com/am-n-7474.html

22.12.2016

ԱՅԴ ԴԱՍԻՆ ԻՄ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՁԵՌՔԵՐԻ ՈՒ ՈՏՔԵՐԻ ՄԱՏՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐ ԷԻՆ

Այս վերջերս պատահաբար հանդիպեցի նրա մայրիկին: Նա ամոթխած էր ու այդ ամոթխածությամբ էլ հարցրեց իմ որպիսությունը, նույնպիսի ամաչկոտությամբ էլ տեղեկացավ դստեր մասին, ու իմ արձագանքը եզրափակվեց առերես նրան հակադարձվող ժպիտով: Բայց ինչո՞ւ, նրան տեսնելով, ինքս էլ հուզվեցի, կարծես ցանկացա ինչ-որ բան ասել, բայց ստիպված զսպեցի ինձ: Այդ պահին իմ մտապատկերում կանգնած էր նա՝ այն համեստ, սիրունիկ աղջնակը, ում այժմ էլ դասավանդում եմ ես:

Այդ օրն աշակերտուհիս դասաժամին իր ձեռքն էր նկարել, որ մատներ չուներ: Նա արտասվեց, համարյա ամբողջ դասաժամին սփոփում էի նրան՝ հաշմանդամների մասին իմ իրական և երևակայական պատմություններով: Դասանյութից շեղվել էի արդեն: Իմ հերոսները ձեռքերի ու ոտքերի մատներ չունեցող երեխաներ էին, որ դժբախտ պատահարի հետևանքով էին այդ վիճակում հայտնվել կամ ծնվել էին հենց այդպես: Այդ իրական հերոսներից ոմանք ամուսնացած էին արդեն, առողջ երեխաներ ունեին, իսկ ես նախապատերազմյան տարիների նրանց մանկությունից էի պատմում:

Նա սրբում էր արցունքները, մի պահ լսողությունը լարած՝ լսում ինձ, նորից հակվում նստարանին և լուռ արտասվում: Դասամիջոցին մոտեցավ, հարցական հայացքը հառեց ինձ. «Այն մեկը, ում մասին պատմում էիք, նրա ոտքերի մատնե՞րն էլ չկային»: Գլխով հաստատեցի, ապա ավելացրի. «Նա ընդհանրապես մատներ չուներ, նա էլ քեզ նման գեղեցիկ էր, հիմա ամուսնացած է և ունի հիանալի ընտանիք»: Թեթևացած հոգոց քաշեց, ապա ժպտաց, իսկ ես շարունակում եմ. «Նրան բոլորը սիրում էին, ինչպես մենք ենք քեզ սիրում»:

Հոգումս ծանրացած ցավը խորն էր, հազիվ կարողացա արհեստական ժպիտ խաղացնել դեմքիս...Ոտքեներ անց իմ ձեռքին հայտնվեց սովորական տետրի մի թերթ, ձեռքի ափ էր նկարված, մեջտեղում գրված էր՝ աջ ձեռք, մատներ չկային, մատների տեղերում գրված էին՝ բութմատ, ցուցամատ, միջնամատ, մատնեմատ, ճկույթ:

Կարծես փախչում եմ դասարանից, հոգուս ալեկոծությունը չեմ ուզում տեսանելի դարձնել: Նորից նայում եմ թերթին, ապա շրջում

մյուս էջը, այստեղ նորից ձեռք, բայց մատներ կային, և ափի մեջ գրված՝ ձախ ձեռք...Ամբողջ օրը նրա ձախ ձեռքով նկարած «ձեռքերն» էի թերթում, աջ ձեռք՝ առանց մատների և ձախ ձեռք, որ մատներ ուներ:

Օրեր հետո նա դասամիջոցին շատ ուրախ ինձ ժպտաց: Նույնիսկ դասարանի դուռը բացեց և մի կողմ քաշվեց, որ ես առաջինը մտնեմ դասարան: Զգացի նաև, որ նախկին նեղվածությունը չկա, դաս պատմելիս ազատ ու անկաշկանդ էր: Երկրորդ դասաժամին նույն դասարանում էի: Մինչ դասարան մտնելը բարձրաձայն աղմուկ-աղաղակ էր լսվում, նայում եմ ավագին, ապա նրա օգնականին, կարծես սպառված, հուսահատությամբ ինձ են նայում: Հարցնում եմ, թե ովքեր էին աղմկողները, ձեն-ձուն չկա, միայն մի ձեռք եմ տեսնում բարձրացված, մի աջ ձեռք, շատ հպարտ այդ ձեռքը վերևից նայում էր բոլորին, մի հպարտ աջ ձեռք, որ մատներ չուներ:

Բոլորը քարացած են, իսկ ես տեսնում եմ իմ աշակերտուհուն՝ գլխահակ, իսկ ձախ ձեռքը՝ իր առջև դրված համակարգչի ստեղնաշարին: Մի քանի ակնթարթ, և ահա նա կանգնում է: «Ես էլ էի աղմկում», -լսում եմ նրա ձայնը, մյուսները զարմացած նայում են նրան... Ի պատասխան այդ շվարած հայացքների՝ նա կարծես իրեն արդարացնում է. «Բայց չէ՞ որ ես էլ էի խոսում»:

Հիացած նայում եմ նրան, ապա բարձրաձայնում հպարտությամբ. «Դու գիտե՞ս, որ մենք քեզ շատ ենք սիրում, այդ վեր բարձրացված ձեռքով շատ գեղեցիկ էիր...»: Ամբողջ դասարանի հաստատական վանկարկումներն եմ լսում: Նա շատ ուրախ էր, բոլորս էլ ժպտում էինք նրան: Ու հիշում եմ օրեր առաջվա իմ աշակերտուհուն, որ մի ամբողջ դասաժամ արտասվել էր նեղվածությունից, որ իր կողքին չեն ուզում նստել: Եվ իմ մտապատկերում երևում էր նա՝ իր աջ ձեռքը թաքցնելիս...

Այդ օրվանից, ամեն անգամ այդ դասարան մտնելով, ինքնաբերաբար հայացքս հառում եմ այդ աշակերտուհուն…Նրա կերպարն իմ աչքին ավելի է վեհացել:

http://usarmenianews.com/am-n-7495.html

24.12.2016

ՆՐԱՆՑ ՇՈՒՐԹԵՐՈՎ ԴԻՄԱԴԱՐՁ ԴԱՌՆԱՆՔ ԱՇԽԱՐՀԻ ՉԱՐԻՔՆԵՐԻՆ

Ծիածանվածերազանքներ ունեմ, այն հավաքում եմ, որ բաժանեմ բոլոր երեխաներին: Արդեն զարդարված տոնածառ ունեն նրանք, բայց հույսի և սպասումի թրթիռներ կան լույսերի առկայծումների մեջ, և արարումների ու խաղաղ կյանքի հավատ կա այդ լույսերում:

Մեծ դասամիջոց է, քայլերս ինքնաբերաբար ինձ տանում եմ դեպի 3-րդ ա դասարանը: Ծնողներ կան հավաքված, մանկավարժներ, փոքրիկ տոնածառ, ու գեղեցկատես երեխաներ՝ տոնական տրամադրությամբ, երգը շուրթերին, Ձմեռ պապիկին սպասելիս. «...Ձմե՛ռ պապի, քեզ սպասում ենք անհամբեր, Մենք գիտենք ամեն տարի մեզ բերում ես նվերներ: Գույնզգույն վառվող լույսեր, տոնածառ, շատ բարիքներ, Ե՛վ երգող խաղալիքներ, և՛ փայլող նոր տիկնիկներ...»:

Ու հանկարծ հարազատ մանկական ձայն է հնչում, կարծես չեմ ուզում թոռնիկիս համար տեսանելի դառնալ, որ հանկարծ չշփոթվի, բայց տողերն ինձ քաշում են դեպի այն ազատ տարածքը, որ մի քանի ծնողներ ետ են քաշվում, որպեսզի ինձ համար էլ տեսանելի լինեն երեխաները: Նարեկն ինձ չի նկատում, բայց մտորումների մեջ եմ՝ որքա՜ն լուրջ է նա, շատ համեստ ու բնական իր կեցվածքով, շրջապատված համադասարանցի այն ճերմակ հրեշտակներ դարձած սիրուն աղջնակներով, իսկ նրանց մեջտեղում իրենց դասվարն է՝ Լիանա Ստեփանյանը, որ նույնպիսի սրտատրոփ հուզումներով լսում է այս փոքրիկներին, նաև անհանգստանում, որ հանկարծ չշփոթվեն: Արցախ աշխարհի փոքրիկ մանուկներն են նրանք, որ խաղաղություն են բարձրաձայնում, մի խաղաղ երկինք, լույս ժպիտներով մի անհոգ կյանք:

Թոռնիկիս ոտանավորի տողերը հնչում են շատ բարձր, և ահա նա նկատում է ինձ, դեմքին ժպիտ է երևում, ձայնը ավելի հնչեղ է դառնում, մի նոր սրտահույզ ոգեշնչումով նա բարձրաձայնում է բոլորի սպասումների մասին. «Դրսում ձյուն է ու ձմեռ, Դահլիճում մեծ տոնածառ, Շուրջը ուրախ մանուկներ, Ծառի լույսեր կան պայծառ, Արտասանում, երգում են մանուկները խելացի, Որ հայրենի մեր երկրում ոչ մի մանուկ չլացի...»:

Ես տպագիր շարում եմ այս տողերը, թոռնիկս հիշեցնում է ինձ, որ երբ մայրիկին նկատել է, ինքնաբերաբար ձեռքը օդում թափահարել է ուրախությամբ: Ապա նա ինձ առաջարկում է այն սիրուն աղջնակի՝ իր համադասարանցու՝ Մոնիկա Բալասանյանի տողերն էլ գրեմ այստեղ. «Վաղ առավոտյան, երբ որ արթնացա, Տոնածառի տակ մի կապոց տեսա, Ձմեռ պապիկն էր ինձ համար բերել, Իմ Նոր տարին շնորհավորել: Այնպե՜ս եմ ուզում Ձմեռ պապիկին բարձրաձայն ասել՝ շնորհակալություն: Բայց համարն եմ փնտրում, գրքում չեմ գտնում»:

Ես ուզում եմ եզրափակել միտքս, բայց Նարեկից ստանում եմ մի նոր առաջարկություն, որ այս տողերն անպայման պիտի գրել, և հանկարծ հնչեցնում է բարձրաձայն. «Իմ մա՛յր հայրենիք, սիրում եմ ես քեզ, Սիրում եմ հոգով, սիրում եմ սրտով, Սիրում եմ՝ ինչպես հարազատ մորն իմ, Ու եթե հանկարծ թշնամին վայրագ հարձակվի վրադ, Իմ կյանքը կտամ, իմ շունչը կտամ, Իմ Մարտակե՛րտ, օտարին քեզ չեմ տա»:

Ես նրան բացատրում եմ, որ այս տողերը կգրեմ մեկ ուրիշ անգամ, իսկ նա շատ հաստատակամ է, որ այն միշտ պետք է ասել, այն էլ շատ բարձր, որ լսեն բոլորը: Մի պահ հուզվում եմ, Արցախ աշխարհի բոլոր լույսերն եմ ուզում գրկել և այդ լույսերի մեջ՝ բոլոր երեխաներին, որ նրանց շուրթերով դիմադարձ դառնամ աշխարհի չարիքներին:

http://usarmenianews.com/am-n-7549.html

25.12.2016

ՆՈՐ ՏԱՐԻ, ՆՈՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ, ԲԱՅՑ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՆՈՐ Է ՄԵՐ ԱՄԵՆ ՄԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ

Ամանորի շեմին ենք, յուրաքանչյուրը յուրովի մի հետադարձ հայացք է ձգում իր անցած տարվան, որտեղ լավ ու վատ ապրումներ կան, կատարված կամ չիրականացված երազանքներ, նոր աշխարհ եկող մանկան ճիչեր կամ անդառնալի կորուստներ, երանության ու անհոգության պահեր կամ հուսալքության անձկալի օրեր, որ անցյալ են դառնում:

Նոր տարի, նոր սպասումներ, նոր հույզեր, ամեն ինչ նոր է, երբ տարին փակում ենք և դիմավորում մի Նոր տարի…Բայց սահմանամերձ բնակավայր Մարտակերտում ապրողներս շատ լավ գիտակցում ենք, որ մեզ համար նոր է մեր ամեն մի լուսաբացը, այդ նորը մեզ համար երբեք չի հնանում, ինչպես կորստյան ցավը:

Երբեմն ասում են՝ այդ համաստեղություններին հավատալն էլ ավելորդ է… Իհարկե, հավատալս ո՞րն է, թե ինչ-որ աքաղաղ մեզ համար կարող է ավետաբեր դառնալ…Բայց ինչո՞ւ 92-ի Կապիկի տարի ապրածներս, որ Արցախյան պատերազմ տեսանք, նույնպիսի անհանգիստ ապրումներ ունեցանք նաև 2016-ի Կապիկի տարում, որ մեզ համար նորից մի աղետ բերեց, ինչ-որ անսովոր «Քառօրյա պատերազմ» անվամբ: Եվ ինչո՞ւ քառօրյա, երբ այդ քառօրյայից հետո օրեր շարունակ մի ամբողջ ապրիլ բնակավայրս մեկընդմեջ հրետակոծության տակ էր, բնակիչների ստվար մասը՝ տարհանված, մի փոքր մասն էլ՝ պատսպարված խոնավ նկուղներում:

Ապրում ենք լավ ու վատ օրերի միջնակետում, ապրելու և չապրելու հետ զուգահեռված, ապրելու կարոտը մեր հոգում, ինչպես շատ-շատերը, որ Աստծուն են ապավինում իրենց ապրելու համար: Մեզ էլ կարոտը տանում է դեպի Նոր տարին, մենք էլ մտնում ենք խանութները, որ ապրենք այս նորով, որ մենք էլ դատարկաձեռն դուրս գանք այնտեղից՝ հայացքներս հառած մեր գնումներին, որ այնքան թանկ են ու կարծես՝ պարտադրված: Մենք էլ տոնածառի շքեղ լույսերով հուսավառվում ենք, նոր լույսեր փնտրում, բայց երբեք այն հեռվից եկող մահաբեր լույսերը չենք մոռանում: Մեր երեխաներն էլ նվերներ են ստանում, ուրախանում, բայց նաև լրջանում, երբ հեռվից ահեղադղորդ ձայների արձագանքներն են լսում:

Ինձ համար նոր է դառնում իմ ամենօրյա դասը, երբ խաղաղ է այդ օրը: Նոր է դառնում բակում խաղացող երեխաների աղմուկ-աղաղակը, որին կարոտում էի այն ապրիլյան օրերի՝ դատարկված բնակավայրիս շրջապատի լռության մեջ: Ինձ թվում է՝ երեխաների այդ աղմուկն էլ նոր է, ու այլևս չեմ դժգոհում նրանց ձայներից, որ երբեմն լսում եմ պատուհանիս տակ: Ինձ համար նոր է դառնում առավոտվա այն փոքրիկ ցողը, որ բռանս մեջ կամաց տարուբերում եմ և ուրախանում, որ այս փոքրիկ հրաշքով ապրելու բերկրանքն ունեցա…Վերևից փաթիլվող ձյան ճերմակությունն էլ նոր է ինձ համար, երբ վայելում եմ այն օդի սառնության մեջ: Եվ այսպես նոր է դառնում ամեն ինչ, նույնիսկ մարդիկ, երբ այստեղ ապրում են՝ երբեմն հարբած իրենց նորովի ապրելու կամքից:

http://usarmenianews.com/am-n-7560.html

26.12.2016

ՄԵՐ ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵ՞ՐՆ ԷԻՆ ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼ, ԹԵ՞ ՉՄԵՌ ՊԱՊԸ

Ինչո՞ւ այսօր հետաքրքրությամբ գնացի այնտեղ՝ դպրոցի առաջին հարկը՝ բազմաժխոր ձայների ուղղությամբ: Ու այդ բազմազանության մեջ հանկարծ միջանցքում տեսնում եմ թոռնիկիս՝ արցունքախառն աչքերով, հոնգուր-հոնգուր արտասվելիս…Այլևս չէր ուզում սպասել իր հերթին, նա հոգնել էր…Ես մի աթոռ եմ բերում, որ նստի՝ երկար կանգնելուց հոգնած ոտքերին հանգստություն տալու համար, նաև հորդորում եմ: Նայում եմ շրջապատում կանգնած փոքրերին ու մեծահասակներին, այնտեղ ծնողներ կան, ուսուցիչներ, կարծես ուզում եմ արդարանալ, որ երեխան հոգնել է ու արտասվում է, էլ չի կարողանում կանգնել:

Այս փոքրիկներն օրեր առաջ նամակներ էին գրել Ձմեռ պապիկին: Բազմազան էին նրանց գրած նամակները, յուրաքանչյուրը յուրովի տարբեր, բայց նրանց ցանկությունների կողքին խաղաղության երազանքն էր թևածում: Երեխաներ կային հավաքված, որ սրտատրոփ, հետաքրքրությամբ սպասում էին իրենց նվերներին, որ Ձմեռ պապին էր բերել:

Բայց նրանց մեջ արցունքոտված աչքեր տեսա, զսպված հեկեկոցներ, նաև ուրախալի, ցնծալից կանչեր, հիացմունքից ժպտացող հայացքներ…Հեծանիվներ կային, դրանց կողքին ուրախությունից թռչկոտող երեխաներ, խոշոր տուփեր կային փաթեթավորված ու բազմազան, հետաքրքրությունից վառվող մանկական աչքեր… Ցավոք, և երեխաներ կային վիատված՝ ձեռքներին հյութեր ու շոկոլադե փոքրիկ սալիկներ կամ ինչ-որ գրքույկներ և ոչինչ չասող մանր խաղալիքներ:

Տարբեր հովանավորների կողմից Հայաստանից բերված այդ նվերներն առձեռն բաժանվում էին փոքրիկ հասցեատերերին, իսկ նրանք սահմանամերձ Մարտակերտի երկու դպրոցների 1-5-րդ դասարանների աշակերտներն էին, որ նկարվում էին այնտեղից եկած Ձմեռ պապիկի հետ և ստանում իրենց նվերը:

Ինչո՞ւ տարանջատվեցին այսօր մեր երեխաները…Ինչո՞ւ նրանք տեսակավորվեցին, երբ բոլորն էլ սահմանին մոտ են ապրում: Թոռնիկս արցունքները սրբեց, վերցրեց իրեն ուղարկված այն խաղալիքը՝ բիլիարդի փակ տուփը…Նա ոչինչ չէր ուզել Ձմեռ պապիկից, միայն՝ Արցախին խաղաղություն… Չնայած այդ խաղալիքից ուներ, նա ուրախ էր, չէ՞ որ այն Ձմեռ պապին էր բերել, և շնորհակալություն հայտնեց նրանց, ես՝ նույնպես…

Բայց ինչո՞ւ եմ ամաչում, երբ ծնողներից մեկի բարձրաձայն դժգոհությունն եմ լսում, որ պետք չէր իր երեխան նամակ գրեր Ձմեռ պապիկին, ու նա այդքան շատ տարբերեր երեխաներին: Կարծես ուզում եմ փախչել շատ-շատերի դժգոհ հայացքներից, բացատրում եմ նույնիսկ, որ տարբեր են հովանավորները, նրանք են ուղարկել….Բայց երեխաներին ինչպե՞ս բացատրես, երբ նույնիսկ չգիտեն այդ բառի իմաստը: Ու հովանավորները, որ այս երեխաների համար երևի բարի մարդիկ են եղել, հանկարծ տարբերակվում են…Այո՛, նրանք էլ տեսակավորվում են, բայց ոմանց մոտ կասկածներ կային, իսկ գուցե Ձմեռ պապի՞կն էր մեղավոր, որ հանդուրժել էր, որպեսզի այս փոքրիկներին տարբերակեն:

http://usarmenianews.com/am-n-7583.html

27.12.2016

ՈՐ ՀԻՄԱ ԳՆԵՄ, ՈՒՏԵԼՈՒ ԵՆՔ, ՀԵՏՈ՝ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԿԱՌՆԵՄ

Բոլորս էլ սիրում ենք Նոր տարվա շքեղությունը, որ փորձում ենք տալ մեր տոնական սեղաններին: Այն փայլող տոնածառին էլ ամեն տարի այս օրերին ուզում ենք նոր խաղալիքներ ավելացնել, որ նոր լույսերով հուսավառվենք:

Խանութում եմ: Իմ տեսադաշտում հայտնված ացելուները երիտասարդ ամուսիններ էին՝ փոքրիկ երեխայի հետ: Որոշ գնումներ կատարված էին, բայց նկատեցի ամուսնու ձեռքի ուղղվածությանը, որ կնոջը ցույց էր տալիս սառնարանում շարված երշիկների տեսականին: Կինը սաստեց նրան. «Որ հիմա գնեմ, ուտելու ենք, հետո՝ վերջին օրը կառնեմ…»: Երեխան էլ ձեռքը մեկնեց ինչ-որ քաղցրավենիքի: Մայրը կամաց ձեռքին խփեց՝ մի ուրիշ անգամ...

Ես ականատես եմ այսօր նաև մի գոյատևող թոշակառու կնոջ շատ համեստ նախատոնական գնումներին: Մի քանի մթերքներ, բայց ամենից՝ քիչ-քիչ... Պարզվեց՝ այլ վճարումներ ուներ նաև՝ դեռ լույսի վարձ կար, գազի ու ջրի, ինչպես ինքն ասաց, իսկ հեռախոսն էլ անպայման չէ, որ միացնեն…Բայց այս կինը իր հաշվարկների մեջ հիշե՞ց, թե հաջորդ ամսում ինչպես է գոյատևելու դատարկ գրպանով: Նաև արձագանքն եմ լսում այս օրերին մեր ուսուցչուհիներից մեկի դժգոհության, թե մյուս տարի աշխատանքը պարտադրված չի թողնի՝ տարիքային կենսաթոշակի անցնելու համար:

Բայց ամեն տարի նախատոնական օրերին հիշում եմ այս դեպքը: Նախագահական ընտրությունների նախօրեին դպրոցի բակում հանդիպում էր նախագահի թեկնածուներից մեկի հետ: Հանկարծ մի մեծահասակ մարդ խոսք խնդրեց, թե շատ քիչ թոշակ է ստանում, ապրելու հնարավորություն չունի, իսկ թեկնածուն ասաց՝ գնա՛ կարտոֆիլ ցանի՛ր, որ կարողանաս ապրել: Պատասխանը չուշացավ՝ ջուր չկա…Այդ թեկնածուն քմծիծաղ տվեց, իսկ հավաքվածներս քարացած սպասում էինք նրա արձագանքին: Ու հանկարծ հնչեց ձայնը. «Իսկապես հնարավոր չէ այդ գումարով ապրել, բայց դու ապրում ես, ուրեմն շարունակի՛ր նույն ձևով ապրել»:

Այս տարիների ընթացքում նա և շատ-շատերը շարունակեցին ապ-

րել, որովհետև գիտեին գոյատևելու ձևը, բայց ինչո՞ւ եմ ամեն տարի հիշում այդ խոսքերը Նոր տարվա շեմին: Երբեմն այն մյուսին հեռուստատեսությամբ եմ տեսնում՝ճոխ ապրելակերպով, և հիշում այն քմծիծաղը: Այդ հիշողությամբ էլ ես ուզում եմ գնումներ կատարել, բայց նաև բարձրաձայնում եմ, որ այնքան թանկ են, չենք էլ համարձակվում ինչ-որ բան գնել:

«Որ հիմա գնեմ, ուտելու ենք, հետո՝ վերջին օրը կառնեմ…»,-նորից արձագանքն եմ լսում այն կնոջ խոսքերի ու վերցնում եմ ընդամենը մի քանի մթերքներ և վճարում այնքան, որքան թոշակառուի ստանալիք ամենամսյա գումարն է, բայց դեռ ինչքա՜ն գնումներ պիտի կատարենք Ամանորյա տոնական, նույնիսկ ոչ այնքան ճոխ սեղանի համար:

http://usarmenianews.com/am-n-7603.html

28.12.2016

ՎԱՌՈՒՄ ԵՄ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ, ՈՐ ԼՍԵՄ ՀՈԳՈՒՍ ՁԱՅՆԸ

Ամենաերազելի ու երջանիկ զգացողությունն եմ ապրում, երբ շրջապատի հանդարտության մեջ Նոր տարվա տոնական օրը ուզում եմ նշել սահմանամերձ բնակավայրիս ոչ այնքան շատ հարմարավետ իմ բնակարանում և այս օրերին վառում եմ տոնածառի լույսերը, որ լսեմ հոգուս ձայնը:

Այնտեղ խաղաղ լուսաբաց է, հարազատ ու ծանոթ դեմքեր…Այդ լույսերում իմ ամբողջ օրն է, նաև առավոտյան դպրոց գնալու ճանապարհին պատահական կողքիս կանգնած մեքենան ու նրա երիտասարդ վարորդը: Զինվորական համազգեստով է նա, ողջունում եմ և հարցնում որպիությունը նախատոնական օրերին: Նա չի աշխատում, բայց հանգիստ խոսում է, որ Մարտակերտը շատ է սիրում, ուրիշ տեղ չի կարողանում ապրել:

Զարմանալի չէ, որ նա զինվորական համազգեստով է, բայց անսովոր չէ նաև այստեղ չաշխատելը, երբ աշխատատեղ չկա: Հողին կառչած լինելու համար հիացմունք եմ արտահայտում, բայց նաև հասկանում եմ նրան, գոնե շատ լավ է, որ մայր ունի կողքին, ով աշխատում է…Մեքենայից իջնելիս նրան շնորհակալություն եմ հայտնում, բայց առանձնահատուկ ակնածանքս նրա ուրիշ տեղ ապրել չկարողանալու համար էր, որի մասին բարձրաձայնում եմ, և ես ուրախ եմ, որ նա ուրիշ տեղ չի կարողանում ապրել:

Տոնածառի լույսերի առկայծումներում մտորումներս ինձ տանում են դեպի մեր հարևան թշնամի երկիրը: Երևի նրանք էլ կցանկանան Նոր տարի նշել, հանգիստ օրեր վայելել, ու այդ իսկ զգացողությամբ այստեղ բոլորս ապրում ենք նախատոնական տրամադրություն՝ անկախ նրանից, թե որքանով բախտ կվիճակվի մեզ վայելելու Ամանորի բերկրալից օրերը:

Նայում եմ տոնածառի լույսերին և ուզում եմ լսել հոգուս ձայնը, որ լույսերի մեջ է, բայց երբեմն խլացուցիչ դղրդոց է լսվում հեռուներից, մոտենում եմ պատուհանին, որի ապակիներն են զնգզնգում, ինձ թվում է՝ մի նոր հրանման լույս է շողում հեռվում, որ սարսուռ է բերում հոգուս: Ու երգ եմ դարձնում տոնածառի լույսը, որը մաքուր է, ազնիվ, կողքիս է այն, ուզում եմ գրկել, որ նրանով կարողանամ դիմադարձել այն ավեր բերող հրանման լույսերին:

Երբ հանգցնում եմ լույսերը տոնածառի, տխուր է նա, ինչպես տունը՝ առանց լույսի...Եվ մտովի բոլոր տոնածառերի լույսերն եմ վառում, որ լույսերի այդ վառ օվկիանոսում երբևէ չտեսնենք այն հրանման լույսը, որ իր հետ սարսուռ է բերում: Տոնածառի կանաչ տերևներին եմ նայում, և լուսահորդ ու մաքրամաքուր մի նոր զմրուխտյա ճանապարհ եմ տեսնում... Ուրեմն՝ վառենք տոնածառերի ավետաբեր բոլոր լույսերը, որ կարողանանք հակադարձել այն մահաբեր լույսերին:

http://usarmenianews.com/am-n-7622.html

29.12.2016

2016-ԻՆ ՄԵՆՔ ՀԱՍԿԱՑԱՆՔ ՄԵՐ ԱՊՐԵԼՈՒ ԳԻՆԸ

Շնորհավորում եմ բոլորիս Նոր տարին և Սուրբ ծնունդը՝ մեր անձնական ու անանձնական իղձերի իրականացման 2017 թվականը, որի գալստյանն այս օրերին լավագույն սպասելիքներով սրտի անհանգիստ թրթիռներ ենք ապրում, իսկ դրանք երբեմն կատարվում են, երբեմն՝ մնում անկատար: Այս օրերին էլ իմ երազանքները չեն սահմանափակվում սեփական ցանկություններիս իրականացման հույսերով: Երազանքներս միշտ էլ լայնածավալ են եղել, անսահմանության մեջ, բայց երբեմն փորձել եմ տարվա հաջողությունները տեսնել նաև սեփական ձեռքբերումներում:

Ամեն մի տարեմուտի հետադարձ հայացք ենք ձգում մեր անցած օրերին, ու 2016-ը Արցախի պատմության մեջ մի նոր ողբերգական օրերի տարեգրություն է դառնում՝ մեր զոհերի անմահության ճանապարհով, այդ օրերին մեր ապրած ցավալի ու տառապալից խռովքով: Եվ ինչպիսի՞ն էր այդ տարին, երբ Մարտակերտ սահմանամերձ բնակավայրս էլ հրետակոծվել էր այդ ապրիլյան չարաղետ օրերին:

Այդ տարին սովորեցրեց մեզ հասկանալու ապրելու գինը, այն իր մեջ մի նոր մարդ ծնեց, որ համառորեն կառչեց իր հողից, որ փրկի այն: Այդ տարին մեր մեջ մի նոր սեր ծնեց, այդ սերը սահմանին կանգնած զինվորի, մեզ ծանոթ թե անծանոթ այն բոլոր կամավորների հանդեպ էր, որ հող հայրենին փրկեցին: Այդ տարին ամբողջ հայությանը մերձեցրեց մեզ, պատերազմ տանող երկրիս մի փոքր հատվածի հետ, իսկ այդ չար աղետը իր բերած ավերածություններով, մանավանդ մարդկային կորուստներով ու բարոյական փլուզումներով մեզ համար այդ օրերին ստեղծեց մի ահեղ սպառնալիք:

Բայց 2016-ն իր մեջ նաև մի նոր կարոտ ծնեց: Դա կարոտ էր ապրած խաղաղ օրերի հանդեպ, կարոտ՝ կորցրած ժպիտի համար, կարոտ՝ շրջապատի աղմուկ-աղաղակի, բոլոր մարդկանց նկատմամբ… Այդ օրերին ես էլ զգացի, որ դպրոցի ճամփան էլ կարոտում եմ, իմ առջև նստած աշակերտներին և ինչքա՜ն շատ բան կար կարոտելու…Ես կարոտում էի իմ խաղաղ օրերի գրիչը, կարոտում էի այն բացված գրքերը, այն մատյանը, որ ձեռքիս մտնում էի դասարան: Այդ տարին մեզ սովորեցրեց, որ ուրիշ տեղ չենք կարող ապրել… Պատերազմը մեզ պոկեց մեր խաղաղ աշխատանքից, իր հետ բերեց ավերածություններ, մենք փրկություն գտանք այդ հողի վրա մի ուրիշ անկյունում, բայց նորից վերադարձանք, հող հայրենիի կանչով նորից եկանք, որ լսենք հրետակոծությունից ճաքճքած հողի հառաչանքը: Այդ տարին մեզ սովորեցրեց չխոսել մեր անձնական նպատակների ու բազմաթիվ երազանքների մասին, երբ բոլորիս ցանկությունը խաղաղ երկինքն է, մեր երեխաների անհոգ մանկությունը, հայոց երկրի հզորությունը, համայն հայության միասնությունը…

http://hayernaysor.am/archives/227613

30.12.2016

ԹԱԽԾԱԽԱՌՆ ԵՆ ԱՄԱՆՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐՍ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆ

Ո՞վ է հայի սերուցքը, ես ուզում եմ շնորհավորել հայի սերուցք համարվող այն բոլոր մարդկանց տոնը, ում ձեռքերում է մեր բախտը, նրանց, ովքեր կարողանում են այս երկիրը իրենց ձեռքերի ափերի վրա պահել՝ դողալով, երբեմն սարսուռ ապրելով, որ հանկարծ չկորցնեն այն: Շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր մաքառել գիտեն ու հայրենիք են պաշտպանում իրենց անձնվիրությամբ, բոլոր նրանց, ում համար այս աշխարհը խիստ նեղ է, բայց կարողանում են գոյատևել: Շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր շենացնում են այս աշխարհը իրենց հալալ աշխատանքով, կարողանում ապրեցնել շրջապատին, ստեղծում բարիքներ… Բոլոր նրանց, ովքեր սրտանց ծիծաղել գիտեն մաքուր խղճով, նրանց, որոնց ժպիտը քողարկված ծուղակ չէ, դեմքերին՝ դիմակ: Ես շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր կարողանում են դիմակայել իրենց հարազատների կորստին, բոլոր բոլորին՝ սկսած այն փոքրիկ նորածին մանուկից մինչև զառամյալ, մինչ այն ձեռքերը օգնության համար մեկնած մուրացողները, որոնք կողքով անցնելիս ձեռքս ինքնաբերաբար դեպի գրպանս է գնում:

Ուզում եմ շնորհավորել բոլորին, բայց անհանգիստ ապրումներս ինձ տանում են դեպի հայրենյաց սահմանները: Ամանորի և Սուրբ Ծննդի տոնական օրերի նախօրեին անգամ սահմանին կանգնած հայ զինվորի զոհաբերությամբ է ամրագրվում մեր բոլորի խաղաղությունը: Այս պահին էլ մեր սիրտը հայոց սահմաններում է, որտեղ զինվորն է կանգնած: Մեր սիրտը ամենուր է, որտեղ հայությունն է, այդ սիրտը լայն հորիզոն է, ուր մարդկությունն է: Բայց այնտեղ զինվոր տղաների կորուստ ունենք, գաղափարի զինվորներ են զոհվել: Ու խոնարհումով դեպ նրանց թարմ հիշատակը՝ սահմամերձ բնակավայրի ուսուցչուհիս Նոր տարվա առթիվ ցանկանում է հայոց աշխարհին խաղաղություն:

Շնորհավորանքներս Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայությանը, ակնածանքս սահմանին մոտ ապրողներին՝ իմ հարազատներին, հեռու և մոտիկ իմ բոլոր մտերիմներին, մեր բոլոր ուսուցիչներին և աշակերտներին, բոլոր նրանց, ովքեր կարողանում են դիմանալ տարբեր փորձությունների, բոլոր նրանց, ովքեր Արցախի հետ էին ու կան մեր լավ ու վատ օրերին: Շնորհավորում եմ օտարության մեջ՝ հայրենի-

քից հեռու ապրող ամբողջ հայությանը, բոլոր իմ ճանաչած անձանց, իմ հարազատներին, որոնց կարոտով եմ ապրում այստեղ, բոլոր նրանց, ովքեր հասցրել են նաև ինձ հարազատ դառնալ:

Առանձնահատուկ շնորհավորանքներս Լոս Անջելեսի հայկական «USArmenianews.com» լրատվական կայքի խմբագրակազմին, ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այսօր» պարբերականի աշխատողներին, բոլոր նրանց, ովքեր իմ հոդվածներին տեղ են տվել այս մեկ տարվա ընթացքում, որպեսզի մանկավարժիս համար մի անցած կյանք անմահանա: Շնորհավորում եմ այս տարածական աշխարհի ընկերական այն հիանալի միջավայրին, որով շրջապատված եմ ես: Ամբողջ տարվա ընթացքում անսովորն ու տեսանելին ինձ համար մանկավարժիս երևալն էր այս հրաշալի մթնոլորտում: Ինձ ասպարեզ էր պետք, լսարան, որտեղ կարող էի արտահայտվել, մի միջավայր, որտեղ կարող էի կարծիք արտահայտել կամ լսել: Իմ փնտրտուքների մեջ ես այստեղ նույնիսկ գտա ինձ, այստեղ ես տեսա հրաշալի դեմքեր, առանձնահատուկ կերպարներ, որ իրական են՝ ինձանից և՛ հեռու, և՛ մոտիկ:

Այս տարածական հեռավորությունն ինձ մերձեցրեց մարդկանց, որոնց կարիքն ունեի, այս միջավայրում ի տես բոլորի՝ երևաց սահմանամերձ Մարտակերտ բնակավայրս, այնտեղ ապրող ուսուցչուհիս՝ իր ուրախ և տխուր հույզերով, այստեղ երևաց իմ դպրոցը՝ իր աշակերտների ստեղծագործական մտորումներով:

Շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր հնարավորություն տվեցին, որ ապրենք մի նոր կյանքով, որը գեղեցիկ է, գնահատված, ուշադրության կենտրոնում, բոլոր նրանց, ովքեր թույլ տվեցին նորից մեր թևերը տարածելու, որպեսզի մեր մտքերը կամաց-կամաց մեզանից հեռանան և զգանք, որ մի նոր կյանքով ենք ապրում և ցանկանում այդ կյանքով ապրեցնել նաև ուրիշներին:

Շնորհավորանքներս թախծախառն են ու բազմազան, երազկոտ են դրանք և իրական, որ երփներանգվում եմ կամ գունատվում, հուսավառում են կամ դողդողում, արտասվախառն են դառնում կամ ծիծաղկոտ, բայց լուսավոր է դառնում իմ շնորհավորանքը, երբ խաղաղ կյանքի սեր կա նրա մեջ, բոլորիս համար՝ մեծ երջանկություն:

http://usarmenianews.com/am-n-7661.html

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտքի խոսք. «Մանկավարժի օրագրին» հընթացս 3
Ուսուցիչը սերնդափոխության ճանապարհին 5
Երբ հայրենասիրությունը դառնում է ոգեղեն զգացում 6
Ծովահեններն արյուն են թափել գանձերի համար,
իսկ ես՝ առանց արյուն թափելու, գտել եմ իմ գանձին 7
Մայրը հարցնում է, թե ի՞նչ գրեմ սահմանում զոհված
տղայիս գերեզմանաքարին 9
Շնորհակալական խոսք՝ Կալիֆորնիայի Սակրամենտո
մայրաքաղաքում հրատարակվող «Մռավ սար» թերթի խմբագրին 11
Այլևս չեմ ուզում իմ առջև նստած երեխաները հայրիկներ կորցնեն 12
Բայց չէ՞ որ դպրոցական արձակուրդները հանգստանալու համար են 15
Իմ կյանքի ամենահրաշալի ծննդյան տարեդարձը 17
Ամեն օր լուսաբացս դիմավորում եմ կրակոցների ձայնով 19
Արցախի երեխաները զինվորական համազգեստով են
տոնածառ զարդարում, իսկ ես տխրում եմ 21
Ամանորի իմ շնորհավորանքները գունավոր են 22
Ես ամաչում եմ և չեմ ամաչում այսպես ապրելուց 23
Ամուր գրկում եմ օրերը խաղաղ 24
Մենք ծիծաղում էինք՝ ես ու նա, բայց ծիծաղս ցավոտ էր 25
Ապրել ենք ուզում առանց զոհերի, թո՛ւյլ տվեք ապրենք 26
Այդ դասաժամին ինձ մեծացած եմ զգում 28
Հայրենի հրավեր... շնորհավորում եմ երաժշտական
նոր տեսահոլովակի ծնունդը 29
Որովհետև ես անգրագետ եմ 31
Ես սիրում եմ այս նորը, որ կյանք է կոչվում, և անունն է՝ սեր 33
Մայրիկս ասում է՝ արի՛ դաս սովորի՛ր, իսկ ես չեմ հասցնում 35
Մի պատահաբար դուրս թռած «Հե՜ ջան» 36
Ինձ այս աշխարհում ամեն ինչ հետաքրքրում է 38
Աշակերտական ինքնախոստովանություններ 39
Իմ «խելքի եկած» աշակերտուհու ինքնախոստովանությունը 41
Հետպատերազմյան տարիների իմ մանկավարժական
գործունեության 20 տարին 42
Սա իմ անցնելիք ճանապարհն է, և ես սիրում եմ այն 44
Այս տարածքում գտնվելու իմ մեկ տարին 45

Սիրո և վստահության անուշաբույր ծաղիկները Ձեզ 46
Իմ մայրենի բարբառը ձոնում եմ բնաշխարհիս 47
Հեռուստասերիալներում լեզվական աղավաղումնե՞ր, թե՞
մեր խոսակցությանը համահունչ արտահայտություններ 51
Դուք այնքան եք մեծարել իմ հայրիկին, ես արդեն
հավատում եմ, որ նա կա ու մի օր կգա 56
Մանկավարժական սիրո և վստահության ուժը 57
Ես երեկ անկարգ էի, դասղեկս բարկացավ 58
Ինձ անբավարար նշանակե՛ք 59
Նոր երգ Արցախի հյութեղ բարբառով 60
Ուսուցչուհի՛, ես սիրում եմ ձեզ 61
Բարձրակարգ ուսուցչուհիս 63
Ձեր շնորհիվ ես շատ եմ փոխվել 65
Կապույտ երազանքներ 67
Սահմանի մոտ սերունդը անդառնալի կորուստների
հիշողությամբ է դաստիարակվում 69
Մի քանի խոսք՝ հեռավոր ափերում ապրող իմ հայրենակիցներին 71
Սահմանի մոտ հրետանային կրակոցներ են, իսկ սահմանից
ոչ շատ հեռու դպրոցի աշակերտներն են երգում 74
Հիացմունք պարգևող այս գիրքը միշտ մտքիս մեջ կմնա 76
Մի փոքրիկ արձակ, որ միշտ ինձ հետ է 78
Ես այդ օրը մտովի հոլովում էի բառը,
որ ինձ համար դառնում էր զինվոր 83
Սահմանամերձ դպրոցի մանկավարժիս անհանգիստ խոհերը 85
Ապրիլի 2-ի առավոտվա իմ գրառումը 88
Գնդակոծված բնակավայրիս ավերակներն ինձ կանչում են 89
Այս օրերին մեր մեջ խոսում է հողի ձայնը 90
Վերջապես Մարտակերտում ենք, մեր գնդակոծված
սահմանամերձ բնակավայրում 91
Հրետակոծված Մարտակերտում եմ՝ ապրիլի 2-ի
սարսափելի օրվա հիշողությամբ 92
Սա մի փոքրիկ հայրենիք է, առանց նրան չենք կարող ապրել 95
Մեր դպրոցականներն էլ պատերազմ տեսան 97
Ներկայի անորոշության մեջ գալիքում լույսեր եմ փնտրում 99
Արդյո՞ք Մարտակերտում մեր դպրոցը գործում է 100
Գովասանագիր, որի վրա պատերազմի հետքեր կան… 101

Խաղաղ օրերի ինչքա՜ն լավ բաներ կան, որ կարոտում ենք 103
Անիծվի պատերազմը, որ մեր հոգում էլ այսքան
ավերածություններ բերեց 105
Գեղեցիկ է այս աստվածային կյանքը, երբ խաղաղ է երկինքը 107
Մենք ընդամենը ապրել ենք ուզում 109
Մարտակերտը մեր բնակավայրն է, այստեղ մեր տունն է …..... 111
Իմ բնակավայրի խաղաղ օրերն եմ կարոտում 113
Ես ուզում եմ վերջանա այս պատերազմը,
որ անցնեմ իմ նոր կերպարին 114
«Երդում» 116
Մեր խաղաղ օրերին վարդերի ժպիտներ կային, բայց չէինք նկատում .. 117
Ես ինձ եմ հավատում ու սահմանում կանգնած հայ զինվորին 118
Ու այսպես անվերջ կժպտանք միմյանց, միայն թե լինենք 120
Գաղափարի զինվորն անպարտելի է 122
Շտապում է զինվորական համազգեստ հագնել 125
Մեր դպրոցի աշակերտն է երգում. «Կա՛նգ առ, պատերա՛զմ» 128
Տուն վերադարձե՛ք, արկեր չեն պայթի երկնքում լազուր 130
Տարագիր հայուհու տարեդարձ, որ իմաստավորվել,
դարձել էր հայրենիք 132
Անհայտ կորած զինվորի հիշատակին 134
Զրույց անհայտ կորած զինվորի հետ 138
Վերջին զանգ Մարտակերտում 142
Ես հայուհի եմ, ուժս ժառանգած մեր հայ տղերքից 144
Ուսուցչի կյանքում միշտ էլ առաջնային պիտի լինի «սովորելը» 146
Մանկավարժությունն ինձ համար արվեստ է 148
Հոգու սնունդ է իմ Մարտակերտը 149
Արցախն իմ լուսատու աստղն է 151
Իմ մանկավարժությունն ինձ սովորեցրել է հարմարվել աշակերտին 153
Ինքնակամ կխոցեմ իմ վախի սիրտը 156
Սովորենք ծնողների նկատմամբ տարբերակված
մոտեցում ցուցաբերել 158
Որքան էլ զարմանալի լինի, սա է իմ անունը 161
Մի՛ պղտորեք մեր վիրավոր հոգիները 163
Ես չեմ ուզում արցախցին թողնի իր բնակավայրը 164
Դեռ այն օրերին էի արտասվել ուզում, որ հոգիս թեթևանար 166
Ամեն օր հայրենի եզերքի խաղաղ ու

հաղթական հեռուներն են ուրվագծվում 168
Ես երազում եմ խաղաղված հոգի 170
Այն աշխարհը, որտեղ ես կուզեի ապրել 171
Սահմանին մոտ լինելով՝ խաղաղ լուսաբացներն
ավելի ես արժևորում 172
Մենք միշտ էլ ունենք մանկավարժի տեսակի խնդիր 173
Մանկավարժական գործունեության անձնագիրս իմ փորձն է 175
Ես սիրում եմ քեզ, իմ հայրենի երկի՛ր Հայաստան 178
Թեստային սխալ համակա՞րգ, թե՞ ճշտի ու սխալի պայքար 180
Դե՛ ասա՛, տիկի՛ն Պողոսյան, ինչպե՞ս չատեմ բարբարոս թուրքին 182
Մի՛ թողեք այն հայրենիքը, որտեղ մի կտոր արև ունեք 184
Մարդ պետք է ապրի իր հայրենիքում 185
Ես քարտեզագրության նոր կանոններ կհորինեի 187
Այս հողում ես ազատ եմ ու ինքնիշխան 188
Ժպտացող բնության գրկում ժպտացող հող եմ ուզում 190
Այդ օրը նրա շուրթերով հայոց աշխարհն էր բարբառում 191
Մեր հողը միշտ էլ արտասվել է ցավից 193
Արցախի խաղաղությունը մայր Հայաստանի խաղաղ
լուսաբացներով է ամրագրվում 194
Իմ աշակերտը շուն էր պահում, որ ուղարկի բանակ 195
Հայրը գնաց դիրքեր, այդպես էլ հետ չեկավ 197
Նորից զոհ ունենք, մի նոր տառապանք 199
Ես հպարտ եմ, որ հայուհի եմ, և սիրտս էլ զարկում է հայերեն 200
Նրանց շնորհիվ եմ ապրում այս հողի վրա 202
Տառապանքդ փորձ ունի, բայց ոչ հայը հայի դեմ 204
«Ողբամ զքեզ, հայո՛ց աշխարհ…» 206
Երբեմն մենախոսում եմ ու նորից գալիս իրականություն 207
Ծննդյան օրվա անակնկալ 209
Երազում եմ մի կյանք, որտեղ ես էլ վաղվա օր ունեմ 212
Հեռավոր ափերից եկած մի անսովոր անակնկալ 214
Միշտ էլ ուսուցչից վարվելակերպ է պահանջվում 216
Երանի ձեզ, որ Ամերիկայում եք ապրում 218
Երանի՜ թե բոլորս այսպես սիրենք միմյանց 220
Ամերիկայում ապրող մի թանկագին Նա 222
Զինվորի ձեռքից համտեսած տանձը 224
Մանկավարժի մտահոգություն 226

Մենք շուտով կդասավանդենք պատերազմ տեսած աշակերտներին 228
Հայոց երկրի զինվոր տղաները միշտ մեզ հետ 230
Այստեղ կերտվում է մանկավարժի մի նոր կենսագրություն 232
Գլխահակ կանգնած էր նա՝ ծաղիկները ձեռքին 234
Սեպտեմբերի 1-ը մեզ համար մի նոր աղոթք կդառնա 235
Չեմ ուզում հայը հեռանա հայրենիքից 236
Գեղեցիկ նախաձեռնություն 238
Մտորումներ գիտելիքի և դպրության օրվա առթիվ 240
Շնորհավոր անկախության տոն 243
Հանդիպման վայրում մի սուրբ հուշարձան 244
Հիշողությանս մեջ կմնա անցած ուսումնական տարվա
7-րդ բ դասարանը 246
Դպրոցականի կողմից սիրո առեղծվածի
մի յուրահատուկ բացատրություն 248
Բարև ախպե՛ր, ինչպե՞ս ես… 250
Թող խաղաղ օրերի արշալույսներին մայրամուտներն է՛լ այցի չգան 252
Ես եմ Արցախը 254
Իմ ցանկությունն է՝ լինեմ զինվորի կողքին,
ծառայեմ հայոց բանակում 256
Մտահոգվում եմ, երբ սերունդն է տխրում 258
Ես մտքերով այն սարսափելի օրվա հետ եմ 260
ՀՀ արդարադատության նախարար դառնալու աշակերտիս փափագը .. 262
«Սպանված աղավնին» նորօրյա աշակերտության ընկալումներում ... 264
Հե՜յ, Հայաստա՛ն, լսո՞ւմ ես նռան ճաքելու ձայնը,
կռունկներիդ տունդարձի աղաղակները... 266
Այն կապույտ, շքեղ կազմով գիրքը 268
Տոնդ շնորհավո՛ր, Հայաստա՛ն աշխարհ 270
Ապրե՞լ եք ուզում՝ արդարությունը գիտելի՛ք դարձրեք 272
Քրիստոնեությունն առաջինն ընդունելու իրողությունը
պետք է ուղերձ լինի աշխարհին 274
Անհայրենիք մարդն անթև թռչուն է 276
«Հեռացող եզերքի» ազդեցիկ ուժը 278
Մի՛ նեղացրեք իրար 280
Աշակերտուհուս երկփեղկված մտորումները 282
Այն օրերին ինչքա՜ն շատ զգացինք ապրելու գինը 284
Անցյալում մնացած մանկություն 285

Միջավա՞յրն է մեղավոր, թե՞ մենք …. 287
Ո՞վ է ուսուցիչը 289
Ուսուցչի մասին խոսելը շատ բարդ է 291
Ուսուցի՛չ, մե՛ծ անուն 293
Նա ուզում էր ապրել... 295
Կանչում է նրան արցախական մի եղեմական բույր 296
Բարձունքում՝ մի փոքրիկ եկեղեցի,
ներքևում՝ ծառայող զինվորներ 298
Զինվոր, մի բառ, որ միշտ ուզում ենք մեծատառով գրել 301
Թղթին չհանձնված հայրենյաց մի դաս 303
Ազգիս ցավը տանեմ …. 305
Մի՛ հեռացեք հայրենիքից 307
Ես ցանկանում եմ դառնալ նախագահ:
Այո՛, հենց իմ արցախի նախագահը …. 309
Հաղթանակած աղջիկը 311
Պատրաստ եմ զենք բռնել, և դա կապ չունի
իմ մարդասիրության հետ 314
Անանուն նամակում հանգրվանած զգացմունք 316
Ինչպե՞ս հեռանա ինքն իրենից 318
Դպրոցական սիրո մի պատմություն 320
Կյանքի մի գիրք և կորցրած մի սեր 322
Հայրենասիրության դաս նահատակ ազատամարտիկի
ծննդյան օրը 324
Մի տխուր «բեմադրություն», որ ծննդյան օր է ավետում 326
Անանուն մի նամակ. «Ուշացա՛ծ իմ սեր» 328
Փոքր սրտում չտեղավորվող դպրոցական մեծ սերը 330
Ե՛վ սիրելն ունի սահման, և՛ ներելը 332
Չուղարկված նամակ 334
Անակնկալ, որ չէի սպասում 336
Հոգի կեղեքող տանջանքներ …. 338
Իրիկնային աղջամուղջի տխրության գույնը 340
Ուսուցիչը պետք է զգուշանա, որ «վատի» պիտակը
չդրոշմվի իր վրա 342
Սովորելը միայն աշակերտի համար չէ, սովորենք,
որ կարողանանք սովորեցնել 344
Որպեսզի ուսուցչին լսեն, նա պետք է հասկանա աշակերտներին 346

Նրանք հայոց լեզվի սեր են գովերգում 348
Պարզվում է՝ Արցախ երկրիս հոգսը նաև
մեր փոքրիկների հոգու վրա է ծանրացած 350
Քննարկման թեման՝ դպրոցական սեր 352
Գրքի քննարկում, որ մի նոր կյանքի դպրոց էր ուսուցանում 354
«Աշնանային ցրտերի» մեղադրվող կերպարը 356
Խոհերս հանձնում եմ թղթին 358
Ես նորից դպրոցականների հետ եմ. ուրեմն շուրջս խաղաղ է 360
Դուք չե՞ք նկատել՝ հրաշալի մի բառ այդ չարագործ
«պատերազմ» բառի մեջ 363
Ամեն օր Աստծուց խնդրում ենք, որ պատերազմ չլինի 365
Ես ատում եմ պատերազմը 367
Մանկավարժական հաղորդակցումն ու վարվեցողությունը՝
առանցքային որակներ 369
Երանի՜ թե այդ դասաժամին Ձեզ որևէ մեկը կանչեր 371
Ինչո՞ւ խուսափել ուսուցչին ուղղված հարցերից 373
Տղամարդն արժե այնքան, որքան իր խոսքը 374
Տնային գրավոր աշխատանքը չպետք է
տառապանք դառնա աշակերտի համար 376
Զգոնության կոչ՝ ուղղված համայն հայությանը 378
Զգույշ քայլենք մանկավարժի ճանապարհով 380
Որքա՜ն կցանկանայի, որ մի օր էլ ես երևայի այդ կայքում 382
Հայ զինվորներն այս փոքր երկրի մեծ թագավորներն են 384
Ուզում եմ հայտնի երգչուհի դառնալ 386
Նաև այսպիսին է նորօրյա դպրոցականը.
«Տիկի՛ն Պողոսյան, այսօր շատ գեղեցիկ եք» 388
Այդ օրվա անմեղ-մեղավոր երկու աշակերտուհի 390
Հիշողությանս մեջ մի ազնիվ տղա 392
Պատկերացնում եմ, որ դարձել եմ համացանցի աստղ 394
Ակնածանքի և շնորհավորանքի խոսք
«USArmenianews.com» լրատվական կայքին 396
Դպրոցականների շնորհավորանքի խոսք 398
Ես քո ամեն մի քարին նոր քար կդնեմ 400
Ո՞վ է ասում, որ աշակերտը բոլոր ուսուցիչներին պետք է
նույն հայացքով նայի 402
Տարվա մեջ մի օր, երբ նրանցից ես ամաչում եմ 403

Հեռուներում տարագիր հայերի կարոտի երգն է հնչում 405
Ուսուցիչը պետք է մտնի աշակերտի ներաշխարհը 407
Մի՛ նեղացրեք ուսուցչին 409
Երբ ինձ նայում եք, ես ինձ կորցնում եմ 411
Անկեղծ լինելը դժվար գործ է, բայց հատուկ է երեխաներին 413
Ինձ թվում է՝ որբ է այն հայը, ով հեռու է իր հարազատ հողից 415
Նրա մտորումների շղթան շատ երկար է... 417
Չպետք է մոռանալ պատերազմի գույնը 419
Պատասխան նամակ՝ դեռահաս դպրոցականին 421
Այլևս չեմ ուզում զինվորական համազգեստով
տոնածառ զարդարենք 423
Դատապարտում եմ նրանց, ովքեր այրում են
վերադարձի կամուրջները 425
Դավաճանը չի կարող բարձր արժեքներ կրել... 427
Անդամատոմս, որ պարտավորեցնում է մանկավարժիս 428
Ես ուզում եմ դառնալ հայտնի դերասանուհի 430
Այդ օրվանից սիրեցի այն ոչ մահաբեր ծուխը,
որ մեր դպրոցական կյանքի ուղեկիցն է 432
Այդ դասին իմ հերոսները ձեռքերի ու ոտքերի
մատներ չունեցող երեխաներ էին 434
Նրանց շուրթերով դիմադարձ դառնանք աշխարհի չարիքներին 436
Նոր տարի, նոր սպասումներ, բայց մեզ համար
նոր է մեր ամեն մի լուսաբացը 438
Մեր փոքրիկներին հովանավորնե՞րն էին տեսակավորել,
թե՞ Ձմեռ պապը 440
Որ հիմա գնեմ, ուտելու ենք, հետո՝ վերջին օրը կառնեմ 442
Վառում եմ տոնածառի լույսերը, որ լսեմ հոգուս ձայնը 444
2016-ին մենք հասկացանք մեր ապրելու գինը 445
Թախծախառն են Ամանորի շնորհավորանքներս և բազմազան 446

ՆԱՏԱՇԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳԻՐ

ՄԱՍ 1

Խմբագիր՝	Լուսինե Ղարախանյան
Սրբագրիչ՝	Մարինա Ավանեսյան
Համակարգչային շարվածքը՝	
Էջադրումը՝	Թամար Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝	Մարինե Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 28.5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2017